



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
✓ 380

1999



91(075)

20

ՀԱՄԱՌՕՏ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ի ՊԷՏՍ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴԱՍՈՒՅ ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆԱՅ ԱԶԳԻԱ

ԳՐԵԱՑ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳՈՒՍՏԵԱՆՍԻ

ՌԻՍՈՒՑԻԶ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ



ԹԷՌԴՈՍԻԱ,

ի Տպարանի Խաշիպեան Ռաւաճնարանի Հայրոց

1865 = ՌՅԺԴ.

729

Շատ քաղաքաց բնակիչներուն թիւն ալ դրինք, որչափ որ կարելի էր ստոյգ աղբիւրներէ առնելով. վասն զի անով կարելի է նաեւ քաղաքաց իրարմէ որչափ մեծ կամ փոքր եղածին վերայ գաղափար մի ունենալ: Ուզելով միանգամայն մեր այս մատենիս աւելի յարգ տալ ազգայնոց առջեւ, պատշաճ համարեցանք երեսելի քաղաքաց, եւս եւ քանի մի շէնքերու փոքրիկ պատկերներովը զարդարել զսա:

Իսկ Աշխարհագրութեան ըստ ոմանց *Բնակասն* եւ *Ուսումնակասն* կոչուած մասերէն այնչափ միայն դրինք նախագիտելեաց մեջ, որչափ որ ամենահարկաւոր էր քաղաքական Աշխարհագրութիւնս հասկընալու համար:

Հայաստանի աշխարհագրութեան վերայ ճիշդ եւ նորագոյն տեղեկութիւններ չուրեմնալով ըստ բաւականին, մանաւանդ Օսմանեան Հայաստանի վերայ, բաւական համարեցանք Հ. Ղ. Ալիշանեանի *Տեղագիր Հայոց Մեծաց* կոչուած գործէն համառօտաբար քաղել մեր հայրենեաց վերայ եղած տեղեկութիւնները, սակաւ անգամ միայն խոտորելով անտի:

Կմնայ մեզ այս եւս ասել որ առաջիկայ գործոյս ձեռք զարկինք մասնաւորապէս Խաչիպեան Ռ. սումնարանի աշակերտաց աշխարհագրական գիտութիւնը դիւրացընելու համար, որոց ձեռքը գտնուած դասագրքերն խիստ համառօտ էին, եւ մեջի տեղեկութիւններն արդէն փոփոխուած կամ թերի՝ այժմեան ժամանակիս նայելով. որով եւ հարկ կլինէր իւրաքանչիւր դասին յաւելուածներ ու փոփոխութիւններ անել: Յուսամք թէ ազգիս ուրիշ ուսումնարաններն, եւս եւ մասնաւոր անձինք՝ ոչ սակաւ օգուտ կըբաղեն մեր այս աշխատութենէն:



Ն Ա Խ Ա Գ Ի Տ Ե Լ Ի Ք.

Երկիրս, որոյ վերայ մեք կրնակիմք՝ գնտաձեւ մարմին մի է, ցամաքով եւ ջրով ձեւացած : Երկիրս 24 ժամուան մեջ ինքն իւր վերայ կղառնայ երեսակայեալ ուղիղ գծի մի վերայ որ կեդրոնէն կանցնի, եւ *սուսեցք* կկոչուի . այս գծին երկու ծայրերը կկոչուին *բևեւոք*, որով զի՞ծն եւս շատ անգամ *գիծ բևեւոաց* կանուանի :

ԵՐԿՐԱԳՈՒՆՏ. — Երկրագունտ կրսուի երկրիս ձեւը ցուցընող գունտը, որոյ վերայ նկարուած են ցամաքներն ու ջրերը՝ իւրեանց բաժանմունքներովն ու անուններովը :

ԾԱԳՔ ԵՐԿՐԻ. — Երկրիս այլ եւ այլ կողմերուն դիրքը զիտնայու կամ գնտա մեկմեկէ դիւրաւ որոշելու համար, տշխարհագեօք չորս գլխաւոր կետ որոշեր եւ անուաներ են *ծագք երկրի*. եւ են Արեւելք, Արեւմուտք, Հիւսիս,

Հարաւ : Արեւելքն այն կէտն է ուստի այնպէս կերեւի թէ
առաւօտը արեւը կելնէ . Արեւմուտքն այն կէտն է ուր
այնպէս կերեւի թէ երեկոյին արեւը կմտնէ , եւ արեւելքին
հակառակ կողմն է . Հարաւն այն կէտն է որ մեր ղիմացը
կրնկնի , երբ մեր ձախ ձեռքն արեւելքի տամք , եւ աջը
արեւմտքին . Հիւսիսն հարաւին հակառակ կողմն է , այս-
ինքն երբ դէպ իհիւսիս դառնամք՝ հարաւը մեր ետեւը
կմնայ :

ԿՈՂՄՆԱԿԱՆ ՄԱԳՔ ԵՐԿՐԻ . — Չորս գլխաւոր ծագաց մեջ-
տեղերը կան նաեւ ուրիշ չորս ծագք , որ կողմնակաւ
ծագք կըսուին , եւ են՝ հիւսիսային արեւելք՝ հիւսիսին
եւ արեւելքին մեջտեղ . հիւսիսային արեւմուտք՝ հիւսիսին
եւ արեւմտքին մեջտեղ . հարաւային արեւելք՝ հարաւին
եւ արեւելքին մեջտեղ . հարաւային արեւմուտք՝ հա-
րաւին եւ արեւմտքին մեջտեղ :

ՇՐՋԱՆԱԿ ԵՐԿՐԱԳՆՏԻ . — Երկրագնտին վերայ այլ եւ
այլ երեւակալեալ շրջանակներ կան քաշուած՝ արեւուն
օրական եւ տարեկան շրջանին վերաբերեալ . այս շրջ-
ջանակներէն ոմանք մեծ կըսուին , եւ ոմանք փոքր :
Մեծ շրջանակները նոքա են որ երկրիս կեդրոնէն անց-
նելով՝ հարկաւ երկիրս երկու հաւասար կտոր կրածնեն ,
եւ այս երկուքն են՝ Հասարակած եւ Միջօրեակաւ գիծ
կամ Միջօրեայ : Փոքր շրջանակներն երկրիս կեդրոնէն
չեն անցնիր , որով եւ երկիրս երկու անհասարակ կտոր
կրածանեն . եւ են՝ Երկու արեւադարձք , եւ Երկու քեւե-
ռային շրջակակք :

ՀԱՍԱՐԱԿԱԾ . — Հասարակածը կամ Գիշերահասարի
գիծն՝ այն շրջանակն է որ երկու բևեռներէն հասար
հեռաորութեամբ քաշուած է, եւ գունտը երկու հասար
մասն կրածանէ . հիւսիսային կողմինը կկոչուի *հիւսիսայ-
ին կիսագունտ*, հարաւային կողմինը՝ *հարաւային կի-
սագունտ* : — Երբոր արեւը իւր տարեկան շրջանով այս
շրջանակիս վերայ ուղղահայեաց կգարնէ (տարին երկու
անգամ՝ մարտի 9-ին եւ սեպտեմբերի 11-ին) բոլոր աշ-
խարհ գիշերն ու ցորեկը հասար կլինի :

ՄԻՉՕՐԵԱՅ . — Միջօրեայն այն շրջանակն է որ երկու
բևեռներէն անցնելով՝ գունտը երկու հասար մասն կը-
րածանէ . *արեւելեան կիսագունտ* եւ *արեւմտեան կիսա-
գունտ* : Երբոր արեւը իւր օրական շարժմամբը միջօրեա-
կանին վերայ կհասնի, հիւսիսային բևեռէն մինչեւ հա-
րաւայինը այս շրջանակիս տակ եղած տեղերուն կես օր
կլինի . նոյն միջօրին կես գիշեր է այն տեղերուն որ մի-
ջօրեականին միւս կեսին վերայ կընկնին : Երկրիս ձր եւ
իցէ տեղէն կարելի է միջօրեական մի քաշել . բայց այս
այլ եւ այլ միջօրեականներուն մեջէն մեկը *գլխաւոր մի-
ջօրեական* կկոչուի, եւ անտի կջափուի միւսերուն եւս
հեռաորութիւնը :

ԱՍՏԻՃԱՆՔ . — Ո՛ր եւ իցէ շրջանակի 360-երորդ մասն
աստիճան կկոչուի . աստիճանը 60 մասն կրածանուի,
եւ մասնը 60 մանրամասն : Աստիճանները փոքր զրոյով
կնշանակուին, մասնը մեկ շեշտով, մանրամասնը երկու
շեշտով, օրինակի համար այսպէս $54^{\circ} 49' 32''$:

ԼԱՅՆՈՒԹԻՒՆ. — Աշխարհագրութեան մեջ շայնուշիւն ասելով կհասկըցուի տեղւոյ մի հասարակածէն ունեցած հեռաւորութիւնը : Երկու տեսակ է լայնութիւնը . *հիւսիսային*՝ որ հասարակածէն կսկսի եւ մինչեւ հիւսիսային բևեռ կերբայ՝ 90 աստիճան , եւ *հարաւային*՝ որ նոյնպէս հասարակածէն կսկսի եւ մինչեւ հարաւային բևեռ կերբայ՝ դարձեալ 90 աստիճան :

ԵՐԱՅՆՈՒԹԻՒՆ. — Երկայնութիւն ասելով կհասկըցուի թէ մէկ տեղ մի որչափ հեռու է գլխաւոր միջօրեականէն : Երկայնութիւնը երկու տեսակ է . *արեւելեան*՝ որ գլխաւոր միջօրեականէն սկսեալ դեպի արեւելք կերբայ 180°, եւ *արեւմտեան*՝ որ դեպի արեւմուտք կերբայ , նոյնպէս 180° : Առաջին ժամանակներն ամէն ազգերն միարանած էին գլխաւոր միջօրեականը Ֆերոյ կամ Երկարի կղզիէն անցընել , որ Քանարեան կղզեաց մէկն է՝ Ափրիկէի արեւմրտակողմը . իսկ այժմ քանի մի տարի կայ որ իւրաքանչիւր ազգ իւր գլխաւոր քաղաքէն կամ երեսելի մէկ տեղէն կանցընէ գլխաւոր միջօրեականն . ինչպէս Գաղղիացիք Փարիզու ղիտանոցէն , Անգղիացիք Կրիմիցէն , հայերէն աշխարհացոյցներու վերայ եւս՝ Մասիս լեռնէն :

ԱՐԵՒԱԴԱՐՁՆԵՐ. — Արեւադարձները հասարակածէն 23° եւ կէս հեռաւորութեամբ երկու փոքր շրջանակներ են , հասարակածին զուգահեռական . մէկը հիւսիսային կիսագրնտին մեջ որ կկոչուի *Արեւադարձ Խեցգետնի* , միւսը հարաւայինին մեջ , *Արեւադարձ Այծեղջեր* : Յունիսի 10-ին արեւը իւր տարեկան շրջանովը Խեցգետնի արեւադարձին

կհասնի . այն ժամանակ ամառնային արեակայք կլինի մեզ , եւ տարուան ամենէն երկայն օրը կունենամք : Գեկտեմբերի 10-ին արեւը յարեւադարձ այժեղօր կհասնի . այն ժամանակ ձմեռնային արեակայք կունենամք , եւ տարուան ամենէն կարճ օրը :

ԲԵԻՆՈՒԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿՔ . — Երկու բեւեռներէն 23° եւ կես հեռաւորութեամբ մեկ մեկ շրջանակ կայ քաշուած երկրագնտին վերայ , որ *Բեւեռային շրջանակը* կկոչուին . սոքա բեւեռներուն անուամբը կկոչուին . հիւսիսային կիսագնտին մեջինը՝ *Բեւեռային շրջանակ Արջային* , իսկ հարաւային կիսագնտինը՝ *Բեւեռային շրջանակ Հակարջային* :

ՕՐՈՒԱՆ ԵՐԿԱՅՆՈՒԹԻՒՆ . — Երկրիս վերայ միայն հասարակածին տակը գիշերն ու ցորեկը հաւասար են իրարու տարուան ամէն օրերը . իսկ հասարակածէն ճրջափ որ մեկը դեպ իհիւսիս կամ դեպ իհարաւ երթայ , այնչափ տարուան ամենէն երկայն օրերը աւելի կտեսնն : Այս ամենէն երկայն օրերուն մեկմեկէ ունեցած տարբերութիւնն Աշխարհագրութեան մեջ ըստ ոմանց *քաժիւն* եւ ըստ այլոց *կլիմայ* կկոչուի : Հասարակածէն մինչեւ յայնուրեքան 8° դեպի հիւսիս կամ դեպի հարաւ , ամենէն երկայն օրը կես ժամ աւելի կտեսն քան թէ հասարակածին տակ . ուրիշորդ աստիճանէն մինչեւ 16° , ամենէն երկայն օրը առաջինէն դարձեալ կես ժամ աւելի կտեսն : Գնեմք այստեղ կարգաւ յայնուրեքան այն աստիճաններն , յորս օրուան երկայնութիւնը առաջինէն մեկ ժամ աւելի է :

Լայնութիւն Տիւսիսային կամ հարաւային .	Ամենէն երկայն օր (*).	Լայնութիւն Տիւսիսային կամ հարաւային .	Ամենէն երկայն օր .
0° ... 0'. (**)	12 ժամ.	61° ... 16'.	19 ժամ.
16 ... 43.	13 ,,	63 20.	20 ,,
30 ... 46.	14 ,,	64 48.	21 ,,
41 ... 21.	15 ,,	65 46.	22 ,,
48 ... 59.	16 ,,	66 20.	23 ,,
54 ... 28.	17 ,,	66 32.	24 ,,
58 ... 25.	18 ,,		

Այս պատկերես կիմացուի որ 66 եւ կես աստիճանէն , այսինքն բեւեռային շրջանակներէն անդին ամենէն երկայն օրը 24 ժամէն աւելի է . որ է ասել թէ մեր օրերուն նայելով՝ ամբողջ շաբաթներ եւ ամիսներ կտեսնես ցորեկը՝ բեւեռային շրջանակաց եւ բեւեռներուն մեջտեղի երկիրները . իսկ բեւեռներուն տակը վեց ամիս ցորեկ է եւ վեց ամիս գիշեր , որով տարուան մեջ միայն մեկ գիշեր ու մեկ ցորեկ ունին :

ԱԼԻՄԱՅ ԵՒ ԳՕՏԻ . — Տարուան ջորս եղանակներն երկրիս այլ եւ այլ կողմերուն մեջ իրարմէ տարբեր են . եղանակաց այս տարբերութիւնը կիմաց կամ օր կկոչուի : Աշխարհագրութեան մեջ գօտի ասելով կհասկացուի երկ-

(*) Յունիսի 10-ին շիւտիսային կիսադիւրիս մէջ . իսկ հարաւայինին մէջ Դեկտեմբերի 9-ին :

(**) Որ է հասարակածը :

րիս չորս դին քաշուած երեւակայեալ գօտի մի կամ շրջանակ : Իւրաքանչիւր գօտուոյն տակ կլիմայն ընդհանրապէս մի եւ նոյն է : Երկրագնտին վերայ հինգ գօտի կայ . *մէկ այրեցեալ գօտի*՝ երկու արեւադարձից մեջտեղի երկիրները . *երկու քարեխառն գօտիք*՝ արեւադարձներէն մինչեւ բեւեռային շրջանակները . *երկու ցրտային գօտիք*՝ բեւեռային շրջանակներէն մինչեւ բեւեռները :

Այրեցեալ գօտուոյն տակն օդը տաք է, եւ ձմեռ ամենեւին չլինիր այնտեղ, որով եւ բուսաբերութիւնը զարմանալի կերպով առատ է : Բարեխառն գօտիներուն տակ տարին չորս եղանակ կրաժանութի, որք են *գարուն*, *ամառ*, *աշուն* եւ *ձմեռ* : Ցրտային գօտիներուն տակ օդը սաստիկ ցուրտ է, եւ ձմեռն ինն կամ տասն ամիս կտեսնէ . այս պատճառաւ սակաւ բոյսեր կան այս գօտիներու մեջ, եւ մասնաւորապէս այնպիսի ծառեր որ ձմեռուան ցրտին կղիմանան :

Այրեցեալ գօտուոյն բնակչաց գոյնն ընդհանրապէս բուխ է . նոքա տղետ եւ ծոյլ մարդիկ են, եւ խեղճ ու տձեւ տնակներու մեջ կապրին, շատերն եւս բախտաւական ժողովուրդներ են : Բարեխառն գօտիներու տակ աշխարհիս ամենէն զեղեցիկ, սրամիտ, խելացի եւ ճարտար մարդիկը կրնակին . որով եւ հին ժամանակներէ իվեր մեծամեծ եւ երեսելի ազգերն այս գօտիներուս տակ կգտնուին : Ցրտային գօտեաց բնակիչքը սակաւարիւ են, գուարբ բնութիւն ունին, բայց տղետ եւ աղքատ մարդիկ են, եւ որսորդութեամբ ու ձկնորսութեամբ կապրին :

ԱՇԽԱՐՀԱՅՈՅՑՔ. — Աշխարհացոյց կրսուի երկրագնտին մեկ մեծ կամ փոքր մասին նկարագրութիւնն : Համարտարած աշխարհացոյց կկոչուի ամբողջ երկրագնտի նկարագրութիւնը՝ մակարդակ երեսի մի վերայ : Ատլաս կկոչուի երկրիս այլ եւ այլ մասանց աշխարհացոյցներու հաւաքումը : Աշխարհացոյցներու վերայ արեւելքը աջ կողմն է, արեւմուտքը ձախ կողմը, հիւսիսը վերի կողմն է, հարաւը վարի կողմը :

ՋՈՒՐ ԵՒ ՅԱՄԱՔ.

ՋՐՈՅՆ ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ԱՆՈՒՆՆԵՐԸ. — Ովկիանոս կկոչուի այն աղի ջրոյ տարածութիւնն որ երկրագնտիս մեծագոյն մասը բռնած է : Ծով կրսուին Ովկիանոսի ցամաքներուն մեջ մտած այլ եւ այլ կտորները : Նեղուցը ծովուն այն նեղ կտորն է որ երկու ցամաքի մեջ մնացած է եւ երկու ծով կամ մի եւ նոյն ծովու կտորներ իրարու հետ կմիացրնէ . նեղուցը կրսուի նաեւ *ակցք*, *ջրակցք*, *փասիտը*, եւ այլն : Ծոց կրսուի ծովուն այն կտորն որ դեպ իցամաք մտած է . աւելի փոքրները կկոչուին *գոգ*, *խորշ*, եւ այլն : Նաւահանգիստը փոքր ծոց մի է կամ խորշ, ուր նաւերը հովերուն սաստկութենէն ապահով կկենան :

ՅԱՄԱՔԻՆ ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ԱՆՈՒՆՆԵՐԸ. — Աշխարհագրութեան մեջ *ցամաք* ասելով կիմացուի երկրի ընդարձակ տարածութիւն մի՝ ուր կարելի է ծայրէ ծայր քայել՝ առանց ծովէ անցնելու : *Կղզի* կրսուի այն ցամաք երկիրն որոյ չորս դին ծով պատած է, եւ ցամաքէն շատ աւելի

փոքր է : *Խոշմբ կղզեաց* կըսուին շատ մի իրարու մօտ եղած կղզիներ՝ միատեղ առնուած : *Արշիպեղացոս* կըսուին իրարու մօտ եղած այլ եւ այլ խումբք կղզեաց : *Թերակղզին* այն ցամաք երկիրն է, որոյ չորս դին ծով պատած, եւ միայն մեկ կողմէն ուրիշ ցամաքի հետ միացած է : *Պարսկոց* կըսուի այն լեզուի նման նեղ ցամաքն որ բերակղզի մի ցամաքի հետ կմիացընէ :

ԳԵՏ, ԼԻՃ, ԶՐԱՆՅՑ. — *Գետ* կըսուի այն ջրոյ մեծ ընթացքն որ ծովը կբափի, եւ սովորաբար մեծամեծ նաւեր կարող են քայել վերան : *Գետակն* այն ջրոյ ընթացքն է որ ուրիշ գետի մեջ կբափի. գետակին աւելի փոքրերը *վտակ*, *սոռ*, *սոռակ* կկոչուին : *Հեղեղ* կամ *Հեղեղատ* կըսուի այն գետակն որ սաստիկ արագութեամբ կվազէ, եւ սովորաբար ամառը կցամքի : *Սահակք* կկոչուի ջրոյ ընթացքի մի բարձր տեղէ վար ընկածը. եթէ գետ մի շատ բարձր տեղէ յանկարծ վար ընկնի, *ջրվեժ* կկոչուի : Գետի մի *աղբիւրն* այն տեղն է ուր որ կբոխի. իսկ *բերակն* այն տեղն է՝ ուր որ ծով եւ կամ ուրիշ գետ կբափի : *Բազուկ* կամ *նիւղ* կըսուի ջրոյ այն ընթացքն որ ուրիշ ջրոյ ընթացքին մեջ կբափի : Երկու ջրոյ ընթացից իրարու խառնուած տեղը *Գետախառնունք* կկոչուի : Գետի մի *աչակողմեան ափունքն* այն եզերքն է որ մեր աջ դին կմնայ՝ երբ մեր երեսը դեպ ինորա բերանը դարձընեմք. միւս եզերքն ալ *ձախակողմեան ափն* է : *Լիճ* կըսուի ընդարձակ ջրոյ մի տարածութիւնն որ չորս կողմէն ցամաքով պատած է. երբեմն լճի մեջէն գետեր կբոխին կամ

մեջը կրափին : Լիճն երե մեծ տարածութիւն չունի , շնակ
կկոչուի : Ծովակ կըսուի ծովէն ձեւացած լիճ մի : Զը-
րակցքը այն առուակն է զոր մարդիկ փորելով շինած
են՝ երկու ջուր իրարու հետ միացնելու համար :

ԼԵՐԻՆՔ . — Երկրիս երեսը դեպ ի վեր ցցուած տե-
ղուանքը շեն կըսուին , երբոր գէթ 300 մերրէն աւելի
բարձրութիւն ունին . երե 300 մերրէն պակաս է բարձ-
րութիւնը , շենակ կամ ըրուր կկոչուի : Լերան վերի ծայ-
րը գագաթն կկոչուի . իսկ վարի կողմն , ուստի լեռը բար-
ձրանալ կսկսի , ոտն կամ ստորոտ : Թուռք կըսուին
ծովեզերքն եղած աւազակոյտ բլուրները : Շարք լերանց
կըսուին շատ մի լեռներ իրարու հետ միացած , այնպէս
որ կարծես թէ ամենքը մէկ լեռ կձեւացընեն : Երկու լե-
րանց մեջ եղած ընդարձակ դաշտը հովիտ կկոչուի . երե
փոքր լինի դաշտը՝ ձոր կանուանի . իսկ երե երկու լե-
րանց մեջ նեղ ճանապարհ մի միայն մնայ , կիրճ կըսուի :
Լեռներու բարձրութիւնը ծովերուն երեսէն կհափուի ուղ-
ղահայեաց գծով : Գրուխ կամ Հրուանդակը դեպ իծով
երկնցած լեռն է . երե հրուանդանը շատ բարձր չէ , սար
կկոչուի : Լերանց ծայրը եղած տափարակ դաշտը քարձրա-
ւանդակ կամ շենակադաշտակ կըսուի : Հրարուխ կըսուին
այն լեռներն , որոց մեջէն կրակ եւ խանձող կամ լաւա
կելնէ :

ԴԱՇՏ , ԱՆԱՊԱՏ , ՈՎԱՍԻՍ . — Դաշտ կըսուին երկրիս
վերայի տափարակ եւ բարեբեր կտորները : Անապատ
կկոչուին այն դաշտերն որ աւազուտ , անջուր եւ անբեր

են : Շատ տեղ անապատներու մեջ բարեբեր եւ ջրաբեր կտորներ կգտնուին որ *Ուխտիս* կամ *Ուստէյ* կկոչուին :

ԲՆԱԿԻԶՔ ԵՐԿՐԻ ԵՒ ՅԵՂՔ ՄԱՐԴԿԱՆ . — Աշխարհիս վերայ ապրող մարդկանց հասանական քիւն է 1,283,000,000 : Սոքա ամենքը միայն մեկ սեռ կկազմեն , եւ վեց ցեղ բաժնուած են : Երեք գլխաւոր ցեղերն են . Ա , *Սպիտակ* կամ *Կոսկասայիւն* . սոցա մարմնոյ գոյնն սպիտակ է , մազերը բարակ , երեսը ձուածեւ , եւ իրենք աշխարհիս ամենեւ սրամիտ եւ խելացի մարդիկն են , եւ կրնակին Եւրոպա , Ասիոյ հիւսիսային արեւմտակողմն եւ Ափրիկէի հիւսիսակողմը : Բ , *Դեղիւն* կամ *Մոդոլեան ցեղ* . սոցա մարմինը դեղնագոյն է կամ ձիթագոյն , մազերը սեւ եւ կարծր , գլուխը գրեթէ քառակուսի . այս ցեղս Ասիոյ արեւելակողմը կրնակի : Գ , *Սևաւ ցեղ* , որոց մարմինը սեւ է , մազերը գանգուր , գլուխը նեղ , քիթը տափակ , շրթունքը մեծ , եւ ճակատին անկիւնը սուր . այս ցեղս Ափրիկէ կրնակի : Միւս երեք ցեղերն առաջիններէն շատ մեծ տարբերութիւններ չունին , եւ շատ մօտ են սպիտակ եւ մանաւանդ դեղին ցեղերուն , եւ են . Դ , *Աւստրալիոյ սևաւ ցեղն* որ աշխարհիս ամենեւն տգետ եւ կոշտ ցեղն է ' Նոր Հոլանտայի եւ Փափուասիայի մեջ : Ե , *Փոլինեզիացի* կամ *Մալայեցի ցեղ* , որ սեաւ ցեղերու մեջ ամենեւն խելացին է , կրնակի Մատակասքար , Մալաքա , Մալեսիա եւ Փոլինեսիա : Զ , *Պղնձագոյն ցեղ* ' որ են Ամերիկայի վայրենիները :

ԿՐՕՆՔ.

Աշխարհիս վերայ չորս գլխաւոր կրօնք կայ, որ են .
Քրիստոնէութիւն, Հրեութիւն, Մահմետականութիւն
եւ *Կուսպաշտութիւն* : Սոցա մեջէն ճշմարիտ Աստուծոյ
պաշտօնը սովբեցընողը Քրիստոնէութիւնն է միայն, եւ
այս կրօնքս ընդունող ազգերը միայն յառաջ գնացին
գիտութեամբք, քաղաքակրթութեամբ եւ մարդավարու-
թեամբ :

Քրիստոնէութիւնը երեք մեծ ճիւղ կրածանի . Ա, Ա-
րեւելեան եկեղեցի, որոյ գլխաւոր ճիւղերն են դաւա-
նութիւն Յունաց, Հայոց եւ Ասորւոց . Բ, Արեւմտեան
եկեղեցի կամ հռոմեակաւանութիւն կամ պապականու-
թիւն, որոյ գլուխն է Պապն Հռոմայ . Գ, *Նորադասերու-
թիւն* կամ *Բողոքականութիւն*, որ ժՁ դարուն սկիզբնե-
րը հռոմեական եկեղեցիէն զատուեցաւ եւ բազմաթիւ ճիւ-
ղեր կրածանուի, բայց գլխաւորներն են *Լութերականու-
թիւն* եւ *Կալվինականութիւն* :

Հրեութիւնը՝ Աստուծոյ Մովսէս մարգարէին ձեռքով
Հրէից տուած կրօնքն է . նոցա օրինաց գիրքը Հին Կր-
տակարանն է, եւ Մեսիայի գալստեան կսպասեն :

Մահմետականութիւնը հաստատողն է Մահմետ, Քրիս-
տոսի 622 թուականին, Հրէից եւ Քրիստոնէից օրէնքներէն
խառն կրօնք մի . սոցա օրինաց գիրքն է Դուրանը : Երկու
ճիւղ կրածանուի մահմետականութիւնը . *սիւննի* կամ *օ-
րիկաւոր*, եւ *շիի* կամ *հեթանոսաժող* :

Կոապաշտութիւնը շատ ճիւղեր կրածանուի, որոց գլխաւորներն են. *Պրահմակաւնուշիւն*, որ կհաստայ մեկ գերագոյն անշարժ եակի կամ Աստուծոյ, որ այլ երեք աստուածոց միջնորդութեամբք ամեն բան կկատարէ. այն երեք աստուածներն են *Պրահմա*, *Վիշնու*, *Շիւիա* :

Պուշտակաւնուշիւն, որ նոյնպէս գերագոյն Աստուծոյ մի կհաստայ՝ *Պուշտա* կոչուած, եւ կարծէ թէ մեծամեծ ոգիք աշխարհիս վերայ մարմին առած են, որոց առաջինն է *Տալայլամա*՝ նոցա կրօնքին գլխաւորը :

Կոնփուկիոսի կամ Քոնփուցեի կրօնն որ կսորվեցընէ բնութիւնը պաշտել : *Սիւերոյի* կրօնն, որ մեկ գերագոյն աստուած մի կղաւանի, եւ ուրիշ փոքրագոյն աստուածներ : *Աստղասպաշտուշիւն*, *Կեկեղանասպաշտուշիւն* եւ *տարրասպաշտուշիւն*. այս երկու յետինքս ամենեւն ցած եւ գարշելի կրօնքն են :

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ .

Քաղաքակիրք ազգաց հաստատած այլ եւ այլ տեսակ կառավարութիւններն են . Ա., *Միապետուշիւն*, այսինքն այն՝ յորում տերութեան կառավարութիւնն մեկ մարդու յանձնուած է. միապետութիւնն *ազատ* կկոչուի, երբ ինքնակալին իշխանութիւնն անջափ եւ անսահման է. *սահմանադրական* կկոչուի, երբ ինքնակալն ինքնիշխան չէ, այլ օրենսդիր ժողով մի ունի, եւ տերութեան սահմանադրութենէն դուրս բան չկրնար գործել : Բ, *Հասա-*

ըսկապետութիւն կկոչուի այն տերութիւնն որ ժողով-
ներու ձեռքով եւ կամ ժողովրդեան ընտրած մարդկանց
ձեռքով կկառավարուի: Հասարակապետութիւնը *ազնուա-*
պետութիւն կկոչուի՝ երբ տերութեան կառավարութիւնն
ազնուականաց ձեռքն է. եւ *նախկապետութիւն* կկոչուի,
երբ իշխանութեան հասնողներն աւելի հասարակ ժողո-
վրդէն ելած մարդիկ են: *Դաշնակցութիւն* կկոչուի այլ
եւ այլ տերութեանց միաբանիլն՝ հասարակաց պաշտպա-
նութեան համար:



ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ.

Քաղաքական աշխարհագրութեան վախճանն է սովրեցընել երկրիս այլ եւ այլ մասանց անուաները, բաժանմունքը, դիրքը, բնութիւնը, բնդարձակութիւնը, բնակիչքը, կառավարութեան կերպերը, քաղաքները, բերքը, ազգաց եւ ժողովրդոց կրօնքն ու սովորութիւնները, հանդերձ ուրիշ հարկաւոր տեղեկութիւններով:

Երկրիս շրջապատն է 4,000 բիւրմերը, կամ զրեթէ 37,500 վերսք (*):

Շառաւիղն, այսինքն երկրիս երեսէն մինչեւ կեղրոնը, կամ մեջ տեղի կէտը, 636 բիւրմերը կամ 5966 վերսք: Մակերեւոյթը կամ բոլոր երեսն է 5,090,904 բիւրմերը քառակուսի:

Երկրիս մակերեւութին չորս մասին մեկը ցամաք է, երեքը ջուր. այսինքն 1,290,800 բիւրմերը քառակուսի ցամաք, եւ 3,800,000 բիւրմերը քառակուսի՝ ջուր:

(*) Աշխարհագրութեանս մէջ մեթրական չափը դորժած եցինք, մէկ մը անոր համար որ այս չափս երկրիս մեծութեան հետ վերաբերութիւն ունի, եւ երկրորդ՝ բիւրմերն ընտրեցինք անոր համար որ ուսանողք իւրեանց աչքին առջեւը փոքր թուեր ունենալով, թէ դիւրաւ միտք կառնուն, եւ թէ այլ եւ այլ երկիրներու մէկ մէկէ որչափ մեծ կամ փոքր եղածն աւելի լաւ կըմբռնեն:

Երկրիս ցամաք կտորները հինգ մասն կրածանուին ,
որ են . *Եւրոպա* , *Ասիա* , *Ափրիկէ* , *Ամերիկա* եւ *Ռվկիա-*
նիա : Եւրոպան , Ասիան եւ Ափրիկէն աշխարհիս ամենէն
մեծ ցամաքը կկազմեն , որ կկոչուի *Հիւն ցամաք* : Ամերի-
կան *Նոր ցամաքը* կկազմէ : Ռվկիանիոյ մեջ ալ աշխար-
հիս երրորդ ցամաքը կայ , Նոր Հոլանտան կամ Աստրա-
լիան՝ որ կկոչուի *Հարաւային ցամաք* :

Երկրիս վերայի ջրերն հինգ ովկիանոս կրածանուին՝
որ են . *Սառուցեալ ովկիանոս Արջային* կամ *Հիւսիսային*
ծով՝ որ արջային բեւեռը կպատէ , եւ Եւրոպայի , Ասիոյ եւ
Ամերիկայի հիւսիսակողմն է : *Սառուցեալ ովկիանոս Հա-*
կարջային կամ *Հարաւային Սառուցեալ ծով*՝ որ Հակար-
ջային բեւեռը կպատէ եւ մեջը մարդաբնակ երկիր ամե-
նեւին չկայ : *Մեծ* կամ *Խաղաղակաւն ովկիանոս*՝ որ Ասիոյ
եւ Ամերիկայի մեջտեղը կտարածուի , եւ Ռվկիանիոյ բոլոր
երկիրները կպատէ : *Ատլանտեան ովկիանոս*՝ որ կտա-
րածուի մեկ կողմանէ Եւրոպայի եւ Ափրիկէի մեջ , եւ
միւս կողմանէ Ամերիկայի մեջ : *Հնդկաց ովկիանոսն*՝ որ
կտարածուի Ասիոյ հարաւակողմն՝ Ափրիկէի , Ասիոյ եւ
Ռվկիանիոյ մեջտեղ :

Մեծ եւ Սալանտեան ովկիանոսներն երեք երեք մասն
կրածանուին . Խեցզետնի արեւադարձին հիւսիսակողմն
կկոչուի *Հիւսիսային Մեծ* եւ *Հիւսիսային Ատլանտեան*
Ռվկիանոս . երկու արեւադարձից մեջտեղը՝ *Մեծ Ռվկիա-*
նոս եւ *Ատլանտեան Ռվկիանոս* հասարակածի : Այժեղջեր
արեւադարձի հարաւակողմն եղած կտորները կկոչուին

հարաւային Մեծ Ովկիանոս եւ հարաւային Ատլանտեան
Ովկիանոս : Ոմանք Հնդկաց ովկիանոսը Մեծ Ովկիանոսի
մասն կհամարին , որով եւ Հնդկաց ծով կանուանեն զնա :

Հիւսիսային Սառուցեալ Ովկիանոսէն երեք մասնաւոր
ծով կձեւանայ , որ են . Սպիտակ ծով՝ Եւրոպայի հիւսիսա-
կողմը , Քարայի ծով՝ Ասիոյ հիւսիսակողմը , եւ Բեռնոսային
ծով՝ Ամերիկայի հիւսիսակողմը :

Հարաւային Սառուցեալ Ովկիանոսէն մասնաւոր ծով
չձեւանար :

Մեծ Ովկիանոսէն վեց ծով կձեւանայ , վեցն ալ Ասիոյ
արեւելակողմն . Պերսեկայ ծով , Օխորսքի ծով , Ճափոնի
ծով , Դեղին կամ Քորեայի ծով , Կապոյտ կամ Արեւելեան
ծով եւ Զինաց ծով :

Ատլանտեան Ովկիանոսէն տասը ծով կձեւանայ , որոց
հինգն Եւրոպայի մեջ են եւ հինգն Ամերիկայի արեւելակողմն .
Եւրոպայիններն են Պաշքիկ ծով , Հիւսիսային ծով , Իռլան-
տայի ծով , Լամանչ ծովն եւ Միջերկրական ծովն , որ աշ-
խարհիս ամենէն մեծ ներքին ծովն է , եւ ուրիշ մասնաւոր
ծովեր եւս կձեւացրնէ : Ամերիկայիններն են Պաֆիէի ծով ,
Հուտարի ծով , Եսքիմացոց ծով , Մեխիքոյի ծով եւ
Անթիլեան ծով :

Հնդկաց Ովկիանոսէն երեք ծով կձեւանայ՝ որ են Պեկ-
կարայի ծով , Արաբիոյ ծով կամ Էօմէի ծոց , եւ Կարմիր
ծով կամ Արաբիոյ ծոց :



729

ԱՌՍԶԻՆ ՄԱՍՆ ԱՇԽԱՐՀԻ.

Ե Ի Ր Ո Պ Ա.

Եւրոպան աշխարհիս հինգ մասերուն ամենէն փոքրն է. բայց բնակչացը ճարտարամտութեան, քաղաքակրթութեան եւ բազմաթիւ գաղթականութեամբք աշխարհիս միւս մասերուն վրայ ունեցած իշխանութեանը կողմանէ՝ իրաւամբ առաջին մասն աշխարհի կհամարուի:

Եւրոպան կտարածուի հիւսիսային լայնութեան 36 աստիճանէն մինչեւ 71⁰, եւ արեւմտեան երկայնութեան 12 աստիճանէն մինչեւ արեւելեան երկայնութեան 62⁰, իրաց բոլորով կղզիները:

Եւրոպայի սահմաններն են հիւսիսէն՝ Արջային Սառուցեալ Ովկիանոս, արեւելքէն՝ Ասիա, յորմէ կրածանուի Ռարալ լեռներով, Ռարալ գետով, Կասպից՝ Սեաւ եւ Արշիպեղազոս ծովերով, եւ Կովկաս լեռներով. հարաւէն՝ Միջերկրական ծով, արեւմուտքէն՝ Ատլանտեան Ովկիանոս:

Տարածութիւնն է 95,500 բիւրմերը քառակուսի:

Եւրոպան մեծ բերակղզի մի է՝ արեւելեան կողմէն Ասիոյ հետ միացած, եւ բազմաթիւ ծոցեր ու բերակղզիներ ունի: Երկիրն ընդհանրապէս լեռնոտ է, միայն արեւելեան կողմն ընդարձակածաւալ դաշտեր ունի:

Եւրոպան 16 աշխարհ կամ երկիր կրածանուի, որոց չորսն հիւսիսակողմն, եօթը մեջտեղերն եւ հինգը հարաւակողմն : Հիւսիսայիններն են Եւրոպական Ռուսիա, Բրիտանական կղզիք, Տանիմարքա եւ Շուետ : Մեջտեղիներն են Գաղղիա, Պելճիա, Հոլանտա, Զուիցերի, Բրուսիա, Աւստրիա, եւ Գերմանական Դաշնակցութիւն : Հարաւայիններն են Փորրուգալ, Սպանիա, Իտալիա, եւ Եւրոպական Տաճկաստան եւ Յունաստան :

ԾՈՎ.Ք. — Եւրոպան տասնեւվեց ծով ունի, որոց երեքը մեծ են եւ 13-ը փոքր :

Երեք մեծերն են. *Սառուցեալ Ովկիանոս*, *Ատլանտեան Ովկիանոս* եւ *Միջերկրական ծով* : Փոքրներն են. *Սպիտակ ծով*՝ որ Սառուցեալ Ովկիանոսէն կձեւանայ, *Պարթիկ ծով*, *Հիւսիսային ծով*, եւ *Լամանշ* եւ *Իոնանտայի ծով*՝ որ Ատլանտեան Ովկիանոսէն կձեւանան. *Սիկիլիոյ ծով*, *Ադրիական ծով*, *Յոնիական ծով*, *Արշիպելագոս*, *Մարմարա*, *Սևուր ծով* եւ *Ազախուր ծով*՝ որ Միջերկրականէն կձեւանան. եւս եւ *Կասպից ծովն* որ աշխարհիս ամենէն մեծ լիճն է, եւ միայն մեծութեանը համար ծով կասուի :

ԾՈՅ.Ք. — Եւրոպան 15 ծոց ունի, որոց երեքը մեծ են, 12-ը փոքր : Երեք մեծերն են. *Պրևեան ծոց* եւ *Ֆինլանտիոյ ծոց*, Պարթիկ ծովէն ձեւացած. եւ *Կասքունի ծոց* կամ *Պիւքայի ծով*, որ Ատլանտեան Ովկիանոսէն կը ձեւանայ : Փոքրներն են. *Ռիկայի կամ Լիվոնիոյ ծոց*՝ որ Պարթիկ ծովէն կձեւանայ. *Զուխտերգէ*, *Մըրրէի* եւ

Ֆոքրի ծոցերն՝ որ Հիւսիսային ծովն կձեւանան : Միջերկրական ծովն կձեւանան Վաշկեցիայի, Լիոնի եւ Ճեւոնիայի ծոցերը . Ադրիական ծովն կձեւանան Վեկեալոյ եւ Թրեստի ծոցերն . Յունիական ծովն կձեւանան Թարա՛նոյի կամ Տարեւտոնի ծոց եւ Լեփաւնոյի ծոց . Արշիպեղագոսէն կձեւանայ Թեսաղոնիկեայ կամ Սեղաւնիկի ծոցը :

ՆԵՂՈՒՅՔ. — Եւրոպան 17 գլխաւոր նեղուցներ ունի, որ են . Սքակերաք, Քարեկար, Սոււնտ, Մեծ Պեշք եւ Փոքր Պեշք, Շուետի եւ Տանիմարքայի մեջտեղ, որ Պալքիկ ծովն Հիւսիսային ծովուն հետ կմիացրնեն . Վայկաց, Ռուսիոյ հիւսիսակողմն՝ որով Սառուցեալ ովկիանոսին երկու մասերն իրարու հետ կմիանան . Քաշի ակցքն՝ Անգղիոյ եւ Քաղղիոյ մեջտեղ, որ Հիւսիսային ծովն Լամանշ ծովուն հետ կմիացրնէ . Սուրբ Գեորգայ ջրակցք եւ Հիւսիսային ջրակցք՝ որ Իռլանտայի ծովն Ատլանտեան ովկիանոսի հետ կմիացրնեն . Ճիպրաշքար, Սպանիոյ եւ Ափրիկէի մեջտեղ՝ որ Ատլանտեան ովկիանոսը Միջերկրականին հետ կմիացրնէ . Պոնիֆաչիոյ, Քորսիքա եւ Սարտեւիա կղզիներու մեջտեղ . Մեսինայի փարոսն, Իտալիոյ հարաւային ծայրը, որ Սիկիլիոյ ծովն Յունիականին հետ կմիացրնէ . Օքրաւրի ջրակցքն՝ որ Ադրիական ծովն Յունիական ծովուն հետ կմիացրնէ, Իտալիոյ եւ Տաճկաստանի մեջտեղ . Նեկրոսիոնը՝ Արշիպեղագոսին մեջ . Կալիֆիոյի (Կելիպօլոս) կամ Դարդաւեան նեղուց կամ Չաւազգաւշէաի, որ Արշիպեղագոսը Մարմարայի հետ կմիացրնէ .

Կոստանդնուպօլսոյ Վրասիրն՝ որ Մարմարան Սեա ծովուն հետ կմիացընէ . Ենիգաշէի կամ Կերչի նեղուցն՝ որ Սեա ծովն Ազախու ծովուն հետ կմիացընէ :

ԿՂԶԻՔ . — Եւրոպայի գլխաւոր կղզիներն եւ կղզեաց խումբերն են . Սառուցեալ ովկիանոսին մէջ՝ Սիիցպերկ , Նոր Զեմլեա , Վայկաց , Քաշկուշեւ եւ Լոֆոտէն կղզիք . Պալքիկ ծովուն մէջ՝ Աշանտ , Տակոյ , Էգեշ , Կորչանտ , Օշանտ , Ռուկէն , Պոռնհոլմ , Լաշանտ , Ֆալսքեր , Զեշանտ եւ Ֆիոնիա . Հիւսիսային ծովուն մէջ՝ Թեքսեշ եւ Զեշանտ կղզիք : Ատլանտեան ովկիանոսի մէջ՝ Մեծն Բրիտանիա , Իռլանտա , Իսլանտա , Ֆերէօր , Շէ՛րլընտ , Որկանդեան , Հերրիդեան եւ Սորշիսկեան կղզիք . Իտլանտայի ծովուն մէջ՝ Մէն եւ Էնկլիշ . Լամանշի մէջ՝ Ճեքսեշ եւ Կեոնըսեշ . Միջերկրականին մէջ՝ Քորսիքա , Սարտենիա , Սիկիլիա , Քանտիա կամ Կրետէ , Բալեարեան կղզիք , Լիպարեան կղզիք , Էլպա եւ Մալթա . Ադրիական ծովուն մէջ՝ Լիւրիկեան կղզիք . Յունիական ծովուն մէջ՝ Յունիական կղզիք . Արշիպեղագոսի մէջ՝ Եւքեա կամ Նեկրոսիոնք , Լեմնոս , Կիւկլադայք կամ Բոչոր կղզիք , եւ Արեւմտեան Սպորադք :

ԹԵՐԱԿՂԶԻՔ . — Եւրոպան վեց թերակղզի ունի , որոց երեքը մեծ եւ երեքը փոքր . մեծերն են Սկանդինաւիա կամ Շուեա եւ Նորվեկիա , Սպանիա եւ Փորթուգալ երկուսը միատեղ , եւ Իտալիա . փոքրներն են՝ Եւրպանտ Տանիմարքայի մէջ , Մոռա կամ Պեղոսպոնէս՝ Յունաստանի մէջ , եւ Խրիմ Ռուսիոյ հարաւակողմն :

ԳԼՈՒԽՔ . — Եւրոպայի նշանաւոր Գլուխներն են. *Գլ. հիւս-
սիսոյ*՝ Շուետի հիւսիսակողմն , *Լիւնտ*՝ Նորվեկիոյ հարաւա-
կողմն , *Սքալեք*՝ Եուրլանտի հիւսիսակողմն , *Քլիբր*՝ Իու-
լանտայի հարաւակողմն , *Լէնտսէնտ* եւ *Լիզըրտ*՝ Բրիտա-
նիոյ հարաւային արեւելակողմն , *Հակ* կամ *Հոկ*՝ Գաղղիոյ
հիւսիսային արեւմտակողմն , *Որքեկալ* եւ *Ֆիւնիսքեր*՝ Սպա-
նիոյ հիւսիսային արեւմտակողմն , *Սուրք Վիլլեկիոս*՝
Փորթուգալի հարաւային արեւմտակողմն , *Թրաֆալկար*՝
Սպանիոյ հարաւային արեւմտակողմն , *Սուրք Մարտիկոս*՝
Սպանիոյ արեւելակողմն , *Քորս*՝ Քորսիքա կղզւոյն հիւսի-
սակողմն , *Թեշտա*՝ Սարտենիոյ հարաւակողմն , *Փաս-
սարոյ*՝ Սիկիլիոյ հարաւակողմն , *Սիարրիվեկոյ*՝ Իտա-
լիոյ հարաւակողմն , եւ *Մարտիակ*՝ Մոռայի հարաւա-
կողմն :

ՊԱՐԱՆՈՅՔ . — Եւրոպան միայն երկու պարանոց ունի ,
որ են . *Կորկորուի* պարանոցն որ Մոռան Յունաստանի
միւս կտորին հետ կկապէ , եւ *Փերեքուի* կամ *Օրգափուի*
պարանոցն , որ Խրիմը Ռուսիոյ հետ կմիացընէ :

ԼԻՃՔ . — Եւրոպան 25 անուանի լճեր ունի , որ են .
Վեկեր , *Վեքեր* եւ *Մեշտոն*՝ Շուետի մեջ . *Սալմա* , *Օնե-
կա* , *Լատոկա* , *Փեյփուս* , *Իլմեն* եւ *Սպիտակ* կամ *Պեկոյէ*՝
Ռուսիոյ մեջ . *Նեօշարէլի* , *ձեկեւայի լիճ* , *Լուչեոնայի*
կամ *Չորից գաւառաց լիճ* , *Յուրիխի լիճ* , *Քոստանցայի*
լիճ՝ Չուիցերիոյ մեջ . *Նայզիտէլ* եւ *Պարսոն*՝ Աւստրիոյ
մեջ . *Մանորէ* կամ *Մեծ լիճ* , *Լուկաւոյի* , *Քումոյի* , *Կար-
տայի* , *Քումաքքիոյի* , *Փերուճիոյ* կամ *Տրասիւմեկի* , *Պոլ-*

Տեւրեղ եւ *Քուչյան*՝ Սեաւ ծովը կրափին . *Տուն*՝ Ազախու ծովը կրափի . *Վոյկա* եւ *Ուրաշ*՝ Կասպից ծովը կրափին :

ԲԵՐԲ. — Եւրոպան առատ հանքեր ունի երկաթի, կապարի, անագի, հանքային ածխոյ, աղի եւ սնդկի : Ռուսիոյ արեւելակողմն կգտնուի աղամանդ, ոսկի եւ փլաքին : Եւրոպայի գլխաւոր բոյսերն են ցորեն, վարսակ, գարի, գետնախնձոր, կանեփ . հիւսիսային կողմերը մեծամեծ անտառներ կգտնուին՝ որոց փայտերը նաւ շինելու կգործածուին . մեջտեղերն եւ հարաւային կողմը ունի զինի . հարաւային կողմը բրինձ, եգիպտացորեն, ձիթենի, նարինջ, լեմոն, բուզ եւ տեղ տեղ նաւ . բամբակ եւ շաքարենի : Վնասակար կենդանիները սակաւ են Եւրոպայի մեջ . իսկ օգտակարները մարդկանց ճարտարութեամբը զարմանալի կերպով բազմացած են :

ԲՆԱՊԻՉԲ. — Եւրոպայի բնակչաց թիւն է 275 միլիոն , զոր ըստ իւրեանց խօսած լեզուին կարելի է ինն ցեղ բաժնել . սոցա երեք գլխաւոր ցեղերն են ,

Հատինական ցեղ , որոյ մեջ կհամարուին լատիներենէ յառաջ եկած լեզուներ խօսող ազգերն , ինչպէս Իտալացիք , Գաղղիացիք , Սպանիացիք , Փորբուգացիք եւ Մոլտովալաքները :

Տեւտոնեան կամ *Գերմանական ցեղ* , որոյ մեջ են գերմաներենէ յառաջ եկած լեզուներ խօսող ազգերն , ինչպէս Գերմանացիք , Շուեաք , Տանիմարքացիք , Հոլանտացիք եւ Անգղիացիք :

Սլաւեան ցեղ , որոյ մեջ կհամարուին Ռուսք , Պոլո-

նիացիք կամ Լենք, Պոհեմիացիք կամ Չենք, Բուլղարք, Սերուիացիք եւ Լիւրիկեցիք :

Միւս վեց փոքր ցեղերն են . Յոյն, Թուրք կամ Տանիկ կամ Թարար, յորում կհամարուին եւ Օսմանցիք, Մանառ կամ Հուլեգարացի, Ֆիւնիսիացի՝ Ռուսիոյ եւ Շուեսի հիւսիսակողմը, Կեղտ՝ Կալչեսի երկիրը, Սկովտիոյ, Իռլանտայի եւ Գաղղիոյ Պրըքայն գաւառին մեջ, Պասք՝ Պիրենեան լեռներուն մեջ :

Այս ինն ցեղերէ դուրս կան ուրիշ ցեղեր եւս Եւրոպայի այլ եւ այլ երկիրներու մեջ ցրուած, ինչպէս Հայք, Հըրեայք, Չինկեանէներն, եւ այլն :

ԿՐՕՆՔ. — Հրէից կրօնքն է Մովսիսական օրէնքն կամ Հրէութիւն . Թարարք եւ Օսմանցիք մահմետական են . Ռուսիոյ եւ Շուեսի հիւսիսակողմը քանի մի կռապաշտ ազգեր կգտնուին . մնացեալ ազգերը քրիստոնէայ են : Եւրոպայի արեւելակողմը, այսինքն Ռուսաստան՝ Յունաստան եւ Տաճկաստանի մեջ շատ ազգեր, արեւելեան եկեղեցւոյ դաւանութիւնն ունին : Եւրոպայի հիւսիսակողմը տիրած է բողոքականութիւնը, իսկ հարաւային կողմերը՝ հռոմեականութիւն :

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ. — Եւրոպայի գրեթէ ամեն տերութիւնքն ժառանգական միապետութիւն են . ոմանք սահմանադրական, եւ ոմանք ազատ : Եւրոպայի մեջ 47 անկախ տերութիւնք կան, այսինքն

Ճ ժառանգական միապետութիւնք, որոց չորսը կայսերութիւն կկոչուին, եւ են, Ռուսիա, Գաղղիա, Աստ-

րիա եւ Տաճկաստան . 14 բազաւորութիւն , որ են Միացեալ
բազաւորութիւն Մեծին Բրիտանիոյ եւ Իռլանտայի , Միա-
ցեալ բազաւորութիւն Շուետի եւ Նորվեկիոյ , Տանիմարքա ,
Պելճիա , Հոլանտա , Հանովր , Բրուսիա , Սաքսոնիա , Պա-
ւերա , Վիրքեմպերկ , Փորթուգալ , Սպանիա , Իտալիա ,
Յունաստան . մեկ կայսրընտրութիւն՝ Հեսսեն-Քասել ԻԳեր-
մանիա , 6 արշիդքսութիւնք կամ մեծ դքսութիւնք , որ են .
Պատեն , Հեսսեն Տարմշթատ , Սաքս Վեյմար , Մեքլեմ-
պուրկ Շվերին , Մեքլեմպուրկ Սրբելից , Օլտենպուրկ .
7 դքսութիւնք , եւ 9 իշխանութիւնք : *Մեկ շնորակակ
միապետութիւն* , որ է Պապին տերութիւնը :

Զորս ազատ քաղաքք . (Տես ի Գերմանիա):

Մեկ դաշնակցական հասարակապետութիւն , Զուի-
ցերին , որոյ իւրաքանչիւր գաւառն առանձին հասարակա-
պետութիւն է :

Գերմանիոյ ամենայն տերութիւնքն դաշնակցութիւն մի
կկազմեն :

Եւրոպայի մեջ հինգ փոքր տերութիւնք կան , որ այլ
տերութեանց հովանաւորութեան տակ են , եւ են . Սերուիոյ
իշխանութիւնն եւ Միացեալ իշխանութիւնքն Մոլտաւիա
եւ Վալաքիա , որ Օսմանցոց հարկատու են , եւ Եւրոպայի
միւս տերութեանց պաշտպանութեան տակ . Մոնաքոյի իշ-
խանութիւնը՝ Գաղղիոյ պաշտպանութեան տակ . Սան Մա-
րինոյ հասարակապետութիւնն՝ Պապին հովանաւորութեան
տակ . Անտորեան հասարակապետութիւն՝ Պիրենեան լե-
րանց մեջ՝ Գաղղիոյ պաշտպանութեան տակ :

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՌՈՒՍԻԱ.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — Հին ժամանակներն այս երկրիս հարաւակողմը միայն ծանօթ էր, եւ կկոչուէր *Սարմատիա* եւ *Սկիւթիա*: Հինգերորդ դարուն մեջ Սլաւեան մեծ ազգին մեկ ցեղը նովկորտ եւ Քիւս քաղաքները շինեցին, եւ հասարակապետական կառավարութեամբ գնացին մինչեւ իններորդ դարն, յորում 862-ին իւրեանց վերայ իշխան դրին Ինկրիոյ *Ռիւրիք* իշխանը, եւ անտի սկսաւ այժմու Ռուսաց ազգն եւ տերութիւնը: Սորա յաջորդները շատ անգամ պատերազմ ունեցան Սեաւ ծովու վերայ Յունաց կայսերութեան հետ. վլատիմիր Ա. 989-ին քրիստոնեայ եղաւ ազգովը միատեղ եւ *Մեծ* կոչուեցաւ. բայց մեռնելու ժամանակ տերութիւնը իւր տասներկու որդւոցը մեջ բաժանելով՝ շատ խռովութեանց պատճառ տուաւ: Սորա մեծ որդին Եարոսլաւ Ա. գեղեցիկ օրէնքներ բողոք Ռուսաց: Անտի մինչեւ Եուրի Բ (1054-էն մինչեւ 1250) նշանաւոր բան չկայ Ռուսաց պատմութեան մեջ, վասն զի բազաւորագոնք տերութիւնն իրարու ձեռքէ առնուլ ջանալով՝ շատ շփոթութեանց պատճառ եղան, մինչեւ որ Թաթարք յարձակեցան Ռուսիոյ վերայ, եւ Եուրի Բ բազաւորը պատերազմի մեջ սպաննեցին:

Թաթարաց արշաւանքէն մինչեւ Իւան Գ Վասիլիեւիչ երեւելի բան մի չպատմուիր. այս Իւան Գ, — որ 1505-ին մեռաւ, — չարաչար յաղթեց Մողոլաց, նոցա տերութիւնը կործանեց, եւ բոլորովին ազատեց իւր հայրենիքը նոցա

ձեռքէն : Սորա բոռն Իւան Գ Խազանի եւ Աժտերխանի տիրեց , Սիպիբը նուաճեց , Լեհաց , Շուետաց եւ Թարարաց հետ շատ պատերազմներ արաւ , եւ 1584-ին կրօնաւորութեամբ մեռաւ : Սորա որդւոյն Ֆեոտորին ժամանակ Խազախք ազատեցին Սիպիբը , բայց Ռուսք դարձեալ նուաճեցին : Ֆեոտոր անորդի մեռնելով՝ Ռիւրիքի ցեղը վերջացաւ , որով եւ յաջորդութեան համար դարձեալ սկսան խռովութիւնները տերութեան մեջ , եւ այն շփոթութեանց ժամանակ Լեհք եւ Շուետք Ռուսիան ոտնակոխ կանկին : Ռուսք վտանգը տեսնելով միարանեցան եւ Միքայիլ Ռոմանովը բազաւոր դրին , որ Շուետաց եւ Լեհաց ձեռքէն ազատեց երկիրն , եւ մեռաւ 1645-ին . նորա որդին Ալեքս՝ Լեհաց ձեռքէն շատ քաղաքներ առնելէն յետոյ՝ ետեւէ եղաւ տերութիւնը ծաղկեցընելու : Ֆեոտոր Գ նորա որդին հօրն օրինակին հետեւելով՝ տերութիւնը շատ բարեկարգեց , նորանէ յետոյ քանի մի տարի բազաւոր նըստաւ եղբայրն Իւան Ե , այնուհետեւ փոքր եղբայրը Պետրոս Ա , որ Ռուսիոյ ամենէն մեծ բազաւորն եղաւ , եւ յորմէ սկսաւ Ռուսաց տերութեան մեծութիւնն ու զօրութիւնը : Տասնեւհինգ տարեկան հասակէն անպարտելի արիութեամբ եւ անդրդուելի հաստատամտութեամբ՝ տերութեան մեջ ծագած խռովութիւնները հանդարտեցուց , Ռուսիոյ մեջ արուեստներն ու զիտութիւնները ծաղկեցուց , զօրքը բարեկարգեց , Փեթրպուրկ քաղաքը շինեց եւ արօռն այնտեղ փոխադրեց , Շուետաց Կարոյոս ժԲ հռչակաւոր բազաւորին ծովու եւ ցամաքի վերայ յաղթեց , Օսմա-

նեանց հետ զարնուեցաւ եւ հաշտութիւն արաւ, եւ ամենայն կերպով տերութիւնը մեծցընելէն ու բարեկարգելէն յետոյ, 1725-ին մեռաւ Պետրոս որ ամենայն ազգաց առջեւ իրաւամբ արժանի եղաւ *Մեծ* կոչուելու: Մեծն Պետրոս բազաւորական իշխանութիւնն աւելի մեծցընելով՝ *Կայսր* անունն առաւ: Իրեն յաջորդեց կինը Կատարինէ Ա., որ երկու տարի բազաւորելէն յետոյ, տեղն անցաւ Մեծին Պետրոսի բոռը Պետրոս Բ, որ 16 տարեկան հասակին մեռաւ, եւ բազունի նստաւ Կատարինէի աղջիկն Աննա: Աննայէն յետոյ նստան հետզհետե Իւան, եւ Եղիսաբեք՝ Մեծին Պետրոսի աղջիկն որ քանի մի անգամ յաղքեց Շուեստաց եւ Բրուսիացոց: Եղիսաբեքին յաջորդեց 1762-ին իւր Աննա քրոջ որդին Պետրոս Գ, որ սակաւ ժամանակէն մեռաւ եւ տեղն անցաւ իւր կինը հռչակաւոր Կատարինէ Բ: Սա Մեծին Պետրոսի ճանապարհը բռնելով՝ տերութիւնը շատ բարեկարգեց եւ ընդարձակեց. 1774-ին Օսմանեանց ձեռքէն առաւ Սեաս ծովուն եզերքը, Պոսկ գետէն մինչեւ Տնեսքեր եղած երկիրները. 1783-ին Խրիմու, եւ Քուսպանի քով եղած երկիրներուն տիրեց, եւ 1793-ին Լեհաստանի մեծ մասին տեր եղաւ:

Կատարինէի յաջորդը Պօղոս Ա., Սուվորով զօրավարն Իտալիա յուղարկեց շատ զօրքով՝ որ քանի մի անգամ մեծամեծ յաղթութիւններ արաւ Գաղղիացոց վերայ. Պօղոսի որդին եւ յաջորդն Աղեքսանդր Ա. ոչ միայն իւր ազգին սիրելի եղաւ իւր ազնիւ բնաւորութեամբն ու հաստատած բարեկարգ օրենքներովը, այլ նաեւ բոլոր Եւրո-

սրայի ազգաց . վասն զի Նափուլեոն կայսրը բոլոր Եւրոպան տակն ու վերայ անելէն յետոյ , երբոր Մոսկուայի պատե- ջազմէն առանց զօրքի ետ դարձաւ , Աղեքսանդր Ա իբրեւ ազատարար Եւրոպիոյ ընդունուեցաւ ամենայն տեղ , նոյն իսկ Փարիզ (1814-ին) , ուր Գաղղիացւոց առաջուան բա- զաւորութիւնը հաստատեց : Աղեքսանդր Ա իւր տէրութեան մէջ արուեստներն ու գիտութիւնները ծաղկեցուց , տիրեց Վրաստանի (1801-ին) , Ֆինլանտիոյ (1810-ին) , Յամա- նեանց ձեռքէն Պետսարապիան առաւ 1812-ին , եւ 1825-ին մեռնելով՝ տեղն անցաւ եղբայրը Նիկողայոս Ա , որ իւր նախորդին նման տէրութիւնը բարեկարգեց եւ ընդար- ձակեց , Պարսից ձեռքէն Հայաստանի մէկ մասն առաւ (1828-ին) , Յամանեանց չարաչար յաղթելով՝ ստիպեց զի- բենք Յունաց ազատութիւնը ճանչնալ , 1830-ին Լեհաց ապստամբութիւնը նուաճեց , եւ 1854-ին Խրրոյրզաց երկրին տիրեց . 1853-ին երբոր դարձեալ պատերազմ բացուեցաւ Ռուսաց եւ Օսմանեանց մէջ , Եւրոպացիք Ռուսիոյ սաստիկ մեծնալէն վախնալով՝ Օսմանեանց օգնութեան վազեցին . եւ երբոր Գաղղիացիք եւ Անգղիացիք Սեւասթոփոլը պա- շարել էին , մեռաւ Նիկողայոս Ա 1855-ին : Տեղն անցաւ որդին ԱՂԵՔՍԱՆԴՐ Բ , այժմու Վեհափառ կայսրը , որ Խրիմու պատերազմը վերջացրնելով՝ տէրութիւնը խաղա- դեցուց , եւ այնուհետեւ բոլոր ոյժը դարձրնելով ժողո- վրդեան երջանկութեանն եւ տէրութեանը բարեկարգու- քեանը , մինչեւ ցայժմ կրագաւորէ արդար եւ իմաստուն կառավարութեամբ : Այս Կայսեր ժամանակ 1858-ին Ռուսք

տիրեցին Չինոս մեջ ընդարձակ երկրի մի մինչեւ Սմուր գետը :

Եւրոպական Ռուսիան կտարածուի Եւրոպայի հիւսիսային արեւելակողմն , արեւելեան երկայնութեան 16 աստիճանէն (Լեհաստանի արեւմտեան ծայրը) , մինչեւ 63⁰ (Քարա գետակը) , եւ հիւսիսային լայնութեան 43 եւ կէս աստիճանէն (Թերեք գետը կովկասու հիւսիսակողմը) մինչեւ 69⁰ (Ռուսիական Լափոնիոյ հիւսիսակողմը) , եւ սահմանն է հիւսիսէն Արջային Սառուցեալ ովկիանոս , արեւելքէն Քարա գետակն , Ռւրալ Լեռինք , Ռւրալ գետ եւ Կասպից ծով ' որովք կգատուի Ասիական Ռուսիայէն . հարաւէն կովկաս լեռինք ' որովք կգատուի նոյնպէս Ասիական Ռուսաստանէն , եւ Սեաւ ծով . արեւմտքէն Մոլտաւիա , Աւստրիա , Բրուսիա , Պալքիկ ծով եւ Շուետ :

Տարածութիւնն է 53,000 բիւրմերք քառակուսի , ամբողջ Գաղղիոյ տասնին չափ . իսկ կայսերութեանս բոլոր երկիրները միատեղ , աշխարհիս վրայի բոլոր ցամաք երկրին եօրը մասին մեկը կձեւացընեն , եւ բոլոր աշխարհիս մակերեսութին քսանեւեցերորդ մասը :

Եւրոպական Ռուսիան ուրը մեծ մասն կամ նահանգ կրածանուի , որ են . Ա , Մեծ Ռուսք . Բ , Փոքր Ռուսք . Գ , Պալքիական գաւառք . Դ , Արեւմտեան Ռուսիա . Ե , Հարաւային կամ Նոր Ռուսիա . Զ , Արեւելեան Ռուսիա . Է , Մեծ իշխանութիւն Ֆինլանտիոյ . եւ Ը , Թագաւորութիւն Լեհաստանի : Բոան Ռուսաստանն , այսինքրն Ֆինլանտիոյ եւ Լեհաստանի երկիրներէն զատ առա-

ջին վեց նահանգներն , այժմ 48 կուսակալութիւն եւ երկու
գաւառ կրածանուի , Ֆինլանտիան ուրը կուսակալութիւն ,
եւ Լեհաստանը հինգ :

Երկիրը ' մեջտեղերը եւ հիւսիսակողմը դաշտային եւ
արեւելեան եւ հարաւային կողմերը լեռնոտ : Արեւելա-
կողմը Սառուցեալ ովկիանոսի եւ Կասպից ծովուն մեջ-
տեղերը կրարձրանան Ուրալ լեռինքն որ Եւրոպան Ա-
սիայէն կզատեն . սոցա ամենէն բարձր գլուխը 2,000 մեթ-
րէն աւելի չէ : Հարաւային արեւելակողմը Սեաւ ծովուն
եզերքէն մինչեւ Կասպից ծովուն եզերքը կտարածուին
Կովկաս բարձրադիր լեռանց գօտիներն ' որ նոյնպէս բը-
նական սահման են Եւրոպայի եւ Ասիոյ մեջ , եւ որոց եր-
կայնութիւնն է 120 բիւրմեքր կամ իբր 1200 վերսթ . սոցա
բարձրագոյն ծայրն է Էլպրուզ (5,637 մեքր) : Արեւմտա-
կողմը Կարպաթ լեռանց ճիւղերը կտարածուին , գլխաւո-
րապէս Փոտոլիա , Վոլինիա եւ Պեսարապիա գաւառաց
մեջ : Խրիմ թերակղզւոյն մեջ են Խրիմու կամ Տաւրիկեան
լեռինք : Հիւսիսակողմը Պալքիկ ծովուն եւ Ուրալ լեռանց
մեջտեղ բարձրադիր դաշտեր կամ մանր լեռներ կգտնուին :
Այս ամէն լեռներուս մեջ մնացած Եւրոպական Ռուսիոյ
մեծագոյն մասն ընդարձակածաւալ դաշտ մի է միայն :

Հողն ընդհանրապէս բարեբեր է , մանաւանդ մեջտեղե-
րը , արեւմտակողմը , եւ Տներեր ու Վոլկա գետերուն մեջ-
տեղ , իսկ հարաւակողմը ' Խրիմն ու Պեսարապիան . բայց
շատ տեղ *արեւի* կամ խոպան կոչուած դաշտեր կան որ
անբեր են , կամ միայն սակաւարոյս արօտներ կկազմեն .

այս խոսքաններս կգտնուին գլխաւորապէս Սեաւ ծովուն եզերքը, Տներեր եւ Ռարալ գետերու մեջտեղ, եւ Սառուցեալ ովկիանոսի մօտ Փեջորայի քովերը: Ռուսիան բազմաթիւ մեծամեծ լճեր ունի, որ Եւրոպայի ամենէն մեծերն են. ամենէն շատ լճերը Ֆինլանտիոյ մեջ են. նմանապէս շատ տեղ ընդարձակ ճահիճներով ծածկած է, որոց ամենէն մեծերն են *Փիւսք ճահիճները*: Միւսք կուսակալութեան հարստակողմը:

Ռուսիան Եւրոպայի հիւսիսային ծայրէն մինչեւ հարաւայինը տարածուած լինելով՝ տեսակ տեսակ օղ ունի: Կլիմային նայելով կարելի է Ռուսիան չորս գօտի բաժանել. Ա. *Յեւեռային գօտի*, ովկիանոսէն մինչեւ լայնութեան 67°. այս գօտւոյս օդը սաստիկ ցուրտ է, հողը բարերեր, բայց անմշակելի. բնակիչքը սակաւաթիւ են եւ որսորդութեամբ ու ձկնորսութեամբ կապրին: Բ. *Հիւսիսային գօտի*, 67 աստիճանէն մինչեւ 60°. այս գօտւոյս մեջ օդը դարձեալ սաստիկ ցուրտ է, հոկտեմբերի մեջերէն մինչեւ մայիսի վերջերը բոլոր ջրերը սառած են, բայց ամառը տաք կլինի: Գ. *Միջին գօտի*, 60 աստիճանէն մինչեւ 50°. այս գօտւոյս օդը բարեխառն է, բայց նոյն լայնութիւնն ունեցող այլ երկիրներու նայելով՝ ընդհանրապէս աւելի ցուրտ. այս գօտիս Ռուսիոյ ամենէն բարերերն ու բազմամարդն է: Դ. *Հարաւային գօտի*, 50 աստիճանէն մինչեւ 44°, Խրիմու ծայրը. այս գօտւոյս օդը բարեխառն ու զուարճալի է, եւ տեղ տեղ նաեւ տաք, ինչպէս Խրիմու շատ տեղերը. բայց հողն ամեն տեղ բարերեր չէ:

Երոսպական Ռուսիան բազմաթիւ մեծամեծ գետեր եւ գետակներ ունի, որոց գլխաւորներն են իւրեանց երկայնութեան կարգաւ, Վոլկա՝ 430 մղոն գերմանական կամ 3000 վերսթ, Երոսպայի ամենէն մեծ գետը. Տնկեր՝ 240 մղոն. Ուրալ՝ 230 մ. Տոնի՝ 195 մ. Տուրկու՝ 160 մ. Փելչորա՝ 150 մ. Տուկու կամ Տուրկու հարաւային՝ 140 մ. Վիսարա՝ 130 մ. Նեմեն՝ 115 մ. Տնկեր՝ 110 մ. յետոյ կուգան Գուպան, Գամա, Թերեք, Պուկ, Մեզեն, Օսենկա եւ Նեւա :

Վոլկայի նշանաւոր ճիւղերն են. աջակողմէն՝ Օրա, Սուրա եւ Սուխալա. իսկ ձախակողմէն ամենէն մեծ գետակն է Գամա : Տոնի գլխաւոր ճիւղերն են Տոնեց, Վորոնեժ, Խոյիեր, Մետովետիցա եւ Մանիչ : Տներերի ճիւղերն են Պերեգինա, Փրիպիեք, Սոժ, Տեսու, Սուչա, Փսևոլ եւ Վորսքա : Փրուք՝ որ Դանուբի մեկ ճիւղն է : Տուինայի բազուկներ են Վիչևկա, Փիլևկա եւ Վալա :

Գլխաւոր լճերն են՝ Կասպից ծովէն յետոյ, Լատուկա, Օսենկա, Իլմեն, Փեյիուռա, Պերոյե կամ Սպիտակ, եւ այլն :

Ռուսիան Երոսպայի ամեն բոյսերն ունի, ցրտային գօտոյն ճոզած ծառերէն եւ բուսերէն սկսեալ մինչեւ Սպանիոյ եւ Իտալիոյ բոյսերը. հիւսիսային գօտիէն դեպ իհարաւ իջնելով՝ կգտնուին բնդարձակ արօտներ եւ անտառներ, յետոյ գարի, վուշ, կանեփ, ցորեն, պտղատու ծառեր, այգիներ, եգիպտացորեն, եւ Խրիմու հարաւային ծայրը հաւա նուշ, լեմոն, նարինջ, թուզ, եւ տաք երկիրներու այլ բոյսեր : Հանքերու կողմանէ շատ

հարուստ է Ռուսիան . ունի՝ մանաւանդ Ռուսիանց մեջ՝ առատ երկար , պղինձ , արծաթ , փլաքին , ոսկի եւ այլ մետաղներ եւ բազմատեսակ քարեր , եւս եւ աղամանդ : Կենդանեաց մեջ անուանի են հարաւակողմը ձին , ուղտը , եւ Խրիմու պարարտադմակ ոջխարները . Պեսսարապիոյ եւ մանաւանդ Լեհաստանի մեջ ամեն տեսակ ազնիւ բնտանի կենդանիներ կան : Հիւսիսակողմը շատ վայրի կենդանիք կգտնուին , ինչպէս արջ , աղուես , գայլ , եւ այլն , որոց մորթը մեծ հարստութեան աղբիւր է բնակչաց . նմանապէս հիւսիսային այժեամն որ բնակչաց զբլխաւոր կերակուրն է : Ռուսիոյ ամենայն ծովերէն , լճերէն եւ գետերէն տեսակ տեսակ եւ առատ ձուկ կելնէ :

Եւրոպական Ռուսիոյ բնակիչն է 63,473,000 այլ եւ այլ ազգեր՝ տարբեր իրարմէ թէ կրօնքով , թէ լեզուով եւ թէ սովորութեամբք : Գլխաւոր ազգերն են . 45,000,000 Ռուսք՝ որ տիրող ազգն է եւ ամենէն բազմաթիւը . սոցա կրօնքը յունաղաւանութիւն է , եւ տերութեան ամենայն կողմը տարածուած են : Ռուսք երեք գլխաւոր ճիւղ կբաժանուին , որ են . *Մեծ Ռուսք*՝ տերութեան մեջտեղերը , *Փոքր Ռուսք*՝ առաջնոյն հարաւակողմը , եւ *Սպիտակ Ռուսք*՝ արեւմտեան զաւառաց մեջ , գլխաւորապէս Վիբեպսքի եւ Մոնիլեի կուսակալութեանց մեջ . *Լեհք* իբր 4 միլիոն հոռմեաղաւանք , կբնակին Լեհաստանի մեջ եւ մօտակայ զաւառները . *Սերուիացիք* եւ *Բուշդարք* իբր 100 հազար յունաղաւանք՝ Հարաւային Ռուսիա եւ գլխաւորապէս Պեսսարապիոյ մեջ ցրուած . *Լիթուանիացիք* իբր երկու մի-

լիոն՝ հոռմեադաւանք եւ յունադաւանք, եւ կրնակին Աեհաստանի հիւսիսակողմն եւ մօտակայ գաւառները . *Գերմանացիք* եւ *Շուեուք* իբր 600 հազար նորադանդք, գրլխաւորապէս ի Ֆինլանտիա եւ Պալթիական գաւառները . *Հրեայք* իբր 2 միլիոն գլխաւորապէս արեւմտեան գաւառներն եւ ի Աեհաստան . *Հայք* իբր 30 հազար հայադաւանք եւ սակաւարիւ հոռմեականք՝ ի նոր Ռուսիա . *Մարտաւիացիք* իբր 400 հազար յունադաւանք՝ ի Պեսսարապիա . *Յոյնք* իբր 70,000 յունադաւանք՝ ի նոր Ռուսիա . *Չինկեանէք* իբր 100 հազար՝ մահմետականք, գլխաւորապէս ի նոր Ռուսիա . *Ֆինք* իբր 4 միլիոն, ըստ մեծի մասին ի Ֆինլանտիա . *Սաւնոյեուք կարճահասակք*՝ Արխանկէյի կուսակալութեան մեջ . *Լափոնէք*՝ նոյնպէս կարճահասակք՝ Ֆինլանտիոյ հիւսիսակողմը . այլ եւ այլ Թաթար ազգեր՝ ի նոր եւ յԱրեւելեան Ռուսիա : Բաց յայսցանէ կան նաեւ ամենայն կողմերը Գաղղիացիք, Անգղիացիք, Հոլանտացիք, Իտալացիք եւ այլ եւրոպական ազգեր : Իսկ կովկասու ժողովուրդներն Ասիական Ռուսիոյ մեջ կղնեմք :

Թէեւ իւրաքանչիւր ազգ եւ ժողովուրդ իւր առանձին լեզուն ունի, սակայն հասարակաց եւ Տերութեան լեզուն է ռուսերէն, որ սլաւեան լեզուէ ձեւացած է :

Ուսմունքն եւ գիտութիւնք ծաղկած են Ռուսիոյ մեջ, եւ օր ըստ օրէ ծաղկելու վերայ են : Ճարտարութեան կողմանէ եւս երեւելի է Ռուսաստան . կաշիի գործարանաց կողմանէ վաղուց առաջինն է Եւրոպայի մեջ : Վաճառա-

կանութիւնը բերքերուն առատութեանը համար շատ բանուկ է . ցամաքային վաճառականութեան դիրութեանը համար Ռուսիոյ ծովերն եւ գետերը իրարու հետ բազմաթիւ ջրանցքներով միացած են . իսկ երկաթուղիները հետզհետեւ աւելնալու վերայ են : Պատրաստ երկաթուղիներն են . Փեթրպուրկէն Մոսքուա , Փեթրպուրկէն Յարսքոյէ Սելոյ , Վարշաւէն Բրաքով , Փեթրպուրկէն Վարշա , Փեթրպուրկէն Պեռլին : Նոր շինուելիքներն կամ արդէն սկսեալներն են . Քուրսքէն Պալթիկ ծովու Լիպաւ նաւահանգիստը , Մոսքուայէն Նիժնի Նովկորոտ , Մոսքուայէն Խրիմ , Օտեսսայէն Բիելա , եւ այլն :

Տերութեան կառավարութիւնն է միապետութիւն ժառանգական . արու ժառանգ երէ ջլինի , կանայք տերութիւնը կժառանգեն :

Ա. ՄԵԾ ՌՈՒՍՔ .

1. ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՄՈՍԳՈՒՍ . (*)

Այս կուսակալութիւնս եւրոպական Ռուսիոյ զրեթէ մեջտեղը կընկնի . 1,300,000 բնակիչ ունի . զլիսաւոր գետերն են Մոսքուա եւ Օքա . երկիրը ճախճախոտ է , եւ թեպէտ

(*) Թէեւ Եւրոպական Ռուսիոյ երկրին , բնակչացը եւ բերոցը վերայ ընդհանուր տեղեկութիւն դրինք , սակայն հարկ համարեցինք իւրաքանչիւր կուսակալութեան վերայ եւս քանի մի տեղեկութիւնք աւելցընել , վասն զի այս դաւառներու շատերն Եւրոպայի միւս քանի մի տէրութիւններէն աւելի ընդարձակ են :

շատ բարերեր չէ, սակայն ըստ բառականին ցորեն եւ այլ հարկաւոր բոյսեր կրօսցրնէ. ճարտարութեան մէջ շատ յառաջադեմ է, եւ բոլոր Ռուսիոյ առաջինն է. 1,200-ի չափ գործարաններ ունի, գլխաւորապէս մետաքսեղէն, բրդեղէն գործուածներու, կաշիի, ջուխայի, եւ այլն, որոց մէջ 400 հազարէն աւելի գործաւորք կաշխատին :

ՄՈՍԿՈՒԱ (*) (370,000 բն.) համանուն վտակի վերայ, 1328-էն մինչեւ 1703 տերութեան մայրաքաղաքն, ծաղկեալ եւ բոլոր կայսերութեան ամենէն ճարտար քաղաքն է, եւ ցամաքային վաճառականութեան կեդրոնը : Շէնքերուն մէջ նշանաւոր է *Քրեմլ պաշտոնը* կամ *դղեակը*, մայր եկեղեցին՝ ուր կօծուին Ինքնակալք Ռուսաց, եւ յորում է Երոսլայի ամենէն մեծ զանգակը, կայսերական պալատը, զինուորանոցը, վաճառանոցը, եւ այլն : Բազմաթիւ ուսումնական տեղերուն մէջ անուանի է համալսարանն՝ հիմնեալ ի 1755, որ բոլոր Ռուսիոյ առաջինն է, եւ ուրիշ բարձրր զիտութեանց վարժարաններ, յորս նշանաւոր է նաեւ մերագնեայ Լազարեան Իշխանաց հիմնած ճեմարանն արեւելեան լեզուաց : Այս քաղաքս 1813-ին Գաղղիացոց պատերազմին ժամանակ այրեցաւ, բայց յետոյ աւելի զեղնցիկ շինուեցաւ :

ՔՈԼՈՄԵԱ (14,000 բն.) Օքայի վերայ, ճարտար եւ վաճառաշահ :

(*) Իւրաքանչիւր կուսակալութեան մէջ տուաջին դրուած քաղաքն աթուանիստ է այն դաւառին կուսակալին :

ՍԵՐՓՈՒԽՈՎ, (15,000 ըն.) կտաւի եւ բամբակեղենի գործարաններովն անուանի :

ՏՄԻԹՐՈՎ, (7,000 ըն.) ճարտար քաղաք :

ԹՐՕՅՅՔԱՅԱ (Սերկիեւ) Տմիբրովի մօտ, Մոսքուայէն 68 վերսք հեռու հռչակաւոր վանք Երրորդութեան, յորում կայ Սրբոյն Սարգսի գերեզմանը :

2. ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՍՄՈԼԵՆՍԻ .

Մոսքուայի արեւմտակողմը, 1,700,000 ընակիչ ունի . գլխաւոր գետերն են *Տնիքեր*, *Տուևա* եւ *Տեւևա* . երկրին մեկ մասը միայն բարերեր է, մնացածն անբեր եւ անմրշակելի . բայց փայտի մեծ վաճառականութիւն ունի, եւ բազմաթիւ նաւակներ կշինուին մեջը :

ՍՄՈԼԵՆՍԻ (9,000 ըն.) Տները գետոյն վերայ ամուր, վաճառաշահ եւ Ռուսիոյ շատ հին քաղաքներէն մեկը : 1812-ին մեծ պատերազմ եղաւ այստեղ Ռուսաց եւ Գաղղիացւոց մեջ :

ՊԷԼՈՅ (3,000 ըն.) ցորենի մեծ առուտուր ունի :

ՎԵԱՉՄԱ (10,000 ըն.) ամուր քաղաք համանուն գետակի վերայ :

3. ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԹՈՒԵՐ .

Սմոլենսքի հիւսիսակողմը, 1,000,000 ընակիչ ունի . գլխաւոր գետերն են *Վոլկա* եւ *Թուևրցա* . երկիրը շատ բարերեր չէ, բայց առատ ցորեն կրուսցրնէ . ճարտարութեան մեջ վերջի տարիներս յառաջ գնաց, իսկ վաճառա-

կանութիւնը շատ բանուկ է. գլխաւոր վաճառքն է ցորենն, կանեփ, կտաւ, կաշի, մորթեր, բնտանի կենդանիք, եւ այլն :

ԹՈՒԵՐ (13,000 բն.) Թուերցային Վոլկայի հետ խառնուած տեղը, հին, գեղեցիկ եւ շատ վաճառաշահ քաղաք :

ՌԺԵԻ (13,500 բն.) Վոլկայի վերայ ցորենի մեծ համարանոց :

ՎԻՇՆԻ ՎՈԼՈՉՈՒՅ (8,000 բն.) շատ վաճառաշահ քաղաք՝ Վիշնիվոյցքա ջրանցքին վերայ :

ԹՈՐՅՈՒՅ (10,000 բն.) Թուերցայի վերայ, հին եւ ճարտար քաղաք, կաշիի գործարաններ ունի :

ՕՍԹԱՇՔՈՎ (9,000 բն.) լճի մի քով ճարտար քաղաք, գէնքի եւ երկաթեղենի գործարաններ ունի :

4. ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՓՄՔՈՎ .

Թուերի եւ Սմոլենսքի արեւմտակողմը, 900,000 բնակիչ ունի . երկիրը ժողովուրդը կերակրելու չափ բարեբեր չէ, բայց ունի ազնիւ վուշ, եւ բնակիչքն ընդհանրապէս քարահատութեան կպարապին եւ տեսակ տեսակ փայտեղէն նիւթեր կպատրաստեն : Վուշի մեծ առուտուր կանե մօտակայ գաւառաց հետ :

ՓՄՔՈՎ (16.000 բն.) Փէյփուս լճին մօտ, շատ հին քաղաք եւ վաճառաշահ :

5. ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՆՈՎԿՈՐՈՏ .

Փսքովի եւ Թուերի հիւսիսակողմը, 1,000,000 բնակիչ

ունի . գլխաւոր գետերն են Վոլկա՝ ուստի եւ կսկսի , Վոլ-
խով . եւ այլն . լճեր շատ ունի , ինչպէս Իլմեն եւ Պերյոյ .
երկիրը թեւ քարերեր է , սակայն ցրտի պատճառաւ ան-
մշակելի . ճարտարութեան եւ վաճառականութեան մեջ
շատ լառաջադէմ չէ :

ՆՈՎՎՈՐՈՏ (13,000 քն .) Վոլխով գետոյն Իլմեն լճէն ե-
լած տեղը , երբեմն Ռիւրիքի արոռանիստ էր , եւ այնու-
հետեւ մեծ եւ վաճառաշահ քաղաք , որ իբր 400 հազար
քնակիջ ունէր . այժմ ընկած է , եւ վաճառականութիւնը
նշանաւոր չէ :

ՎԱՆՏԱՅ , համանուն լճի վերայ , զանգակի ձուլարան-
ներ ունի :

ՈՒՍԹԻԻԺՆԱ ԺԵԼԵՉՈՓՈՒՄՔԱՅԱ , կուսակալութեանս ա-
մենէն վաճառաշահ քաղաքն է :

6. ԿՈՒՍՍԿԱՆՈՒԹԻԻՆ ՕԼՈՆԵՅ .

Նովկորոտի հիւսիսակողմը , 400,000 քնակիջ ունի .
գլխաւոր գետն է Սուխո որ Յնեկա լճէն Լատոկա կքափի .
երկիրը տեղ տեղ ճախճախուտ է . միւս տեղերը թեպէտ
քարերեր , բայց ցրտութեան պատճառաւ անմշակելի է , եւ
մեծամեծ անտառներ ունի : Բնակիչքն ընդհանրապէս
փայտեղէն զործուածքներու եւ որսորդութեան կպարա-
պին . անտառաց մեջ ունի կզնաքիս , սեւա աղուէս ,
աքիս , եւ այլն . գետերէն եւ լճերէն առատ ձուկ կելնէ .
ունի նաեւ մարմարիտն , կրանիք , եւ այլ տեսակ տեսակ
քարեր :

ՓԵԹՐՈՉԱՎՈՏՍԻՔ (10,000 քն.) մետաղի ձուլարաններ ունի :

7. ԿՈՒՍՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԱՐԹԱՆԿԷԼ .

Սպիտակ եւ Սառուցեալ ծովերուն եզերքը . տարածութիւնն է 9,000 քիւրմերք քառակուսի . 350,000 քնակիջ ունի , Ռոսս , Լափոն եւ Սամոյետ . գլխաւոր գետերն են *Փեչորա* , *Տուխնա* , *Վիչեկտա* , *Սուխունա* , *Օնեկա* , *Մեզեն* , եւ այլն . երկիրը սաստիկ ցրտութենէն անմշակելի է , սակայն մեծամեծ անտառներ ունի , որոց պատուական փայտերն եւ անտի շինուած նիւթերը մեծ հարստութեան աղբիւր են գաւառիս . կենդանեաց մեջ ունի արջ , գայլ , կզնաքիս , աղուես , աքիս , ծովու հորթ , ծովաձի , սպիտակ արջ , եւ այլն . ծովերէն եւ գետերէն բազմատեսակ եւ առատ ձուկ կելնէ :

ԱՐԹԱՆԿԷԼ (15,000 քն.) Տուխնայի բերանը , շատ վաճառաշահ քաղաք եւ գինուորական նաւահանգիստ : — Այս քաղաքս յունիսի 10-ին օրուան երկայնութիւնն է 21 ժամ , իսկ դեկտեմբերի 9-ին 4 ժամ միայն :

ՄԵՉԷՆ եւ ՕՆԵԿԱ , համանուն գետերու վերայ , վաճառաշահ քաղաքներ :

8. ԿՈՒՍՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՎՈԼՈԿՏԱ .

Արխանկելի հարաւային արեւելակողմը , մեկ միլիոնի չափ բնակիջ ունի . գլխաւոր գետերն են *Փեչորա* , *Սուխունա* , *Վիչեկտա* եւ *Վոլոկտա* . երկիրը դաշտային է , միայն արեւելակողմը լեռնոտ . հիւսիսակողմը կտարա-

ծուի Փեչորայի խոտանը . հողն անբեր է եւ օղն ցօւրտ . ունի երկաքի եւ պղնձի հանքեր , որ միակ հարստութիւն են այս ընդարձակածաւալ կուսակալութեանս :

ՎՈԼՈԿՏԱ (14,000 բն.) համանուն գետոյն վերայ , եւ

ՎԵԼԻՔԻ ՌԻՍԹԻԿ (8,000 բն.) սահմանակից քաղաքք

եւ վաճառաշահք :

9. ԿՈՒՍՍԱԿԱԼՈՒԹԻԻՆ ՔՈՍԹՐՈՄԱ .

Վոլոկտայի հարաւակողմը , 1,200,000 բնակիչ ունի . գլխաւոր գետն է *Վոլկա* հանդերձ քանի մի աջակողմեան բազուկներով . երկիրը բեպետ բարեր է , բայց բուսաբերութիւնը նշանաւոր չէ . միայն մեծամեծ անտառներ ունի եւ առատ վուշ . ճարտարութեան մեջ ըստ բաւականին յառաջադէմ է . գլխաւոր վաճառքն է կտաւ , վուշ եւ բազմատեսակ պատուական փայտեր :

ՔՈՍԹՐՈՄԱ (15,000 բն.) համանուն գետակին եւ Վոլկայի միացած տեղը , ճարտար քաղաք . կտաւի եւ կաշիի գործարաններ ունի : Սորա մօտ է Փլէս գիւղաքաղաքը որ նոյնպէս կտաւի գործարաններ ունի եւ մեծ տօնավաճառ :

ԿԱԼԻՉ (6,000 բն.) համանուն լճին քով , կաշիի շատ գործարաններ ունի :

10. ԿՈՒՍՍԱԿԱԼՈՒԹԻԻՆ ԵՍՐՈՍԼԱԻ .

Քոսքրոմայի արեւմտակողմը , 1,200,000 բնակիչ ունի . գլխաւոր գետերն են *Վոլկա* , *Թուերցա* եւ *Սուռա* . երկիրը շատ բարեր է , միայն վուշ ունի առատ եւ ազնիւ . ճարտարութիւնն ու վաճառականութիւնը ծաղկած են ,

բազմաթիւ գործարաններ ունի՝ մանաւանդ վշեղեն կտաւ-ներու :

ԵԱՐՈՍԼԱԻ (27,000 բն.) Վոլկայի վերայ, շատ ճարտար եւ վաճառաշահ քաղաք, կտաւի մեծամեծ գործարաններ ունի :

ՈՒԿԼԻՉ (10,000 բն.) ճարտար քաղաք :

ՌԻՊԻՆՍԻ (8,500 բն.) Վոլկայի վերայ, ցորենի մեծ վաճառականութիւն ունի :

11. ԿՈՒՍՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՎԼԱՏԻՄԻՐ .

Եարոսլաւի եւ Քոսթրոմայի հարաւակողմը, 1,400,000 բնակիչ ունի. գլխաւոր գետերն են *Օքա* եւ *Քլեազնա*. Երկիրը բարեբեր է, բայց եւ շատ անտառներ ունի եւ բազմաթիւ լճեր ու ճահիճներ. վաճառականութեան եւ մանաւանդ ճարտարութեան մեջ շատ լաւաջաղեմ է. իւրաքանչիւր քաղաքի մեջ բազմաթիւ գործարաններ ունի, գլխաւորապէս բամբակեղեն գործուածներու :

ՎԼԱՏԻՄԻՐ (13,000 բն.) Երբեմն համանուն մեծ իշխանութեան մայրաքաղաքն էր, այժմ շատ ճարտար եւ վաճառաշահ. կտաւի եւ բամբակեղենի մեծամեծ գործարաններ ունի :

ՍՈՒՉՏԱԼ (6,000 բն.) կտաւի գործարաններ ունի :

ՇՈՒՅԱ (9,000 բն.) բամբակեղենի երեսելի գործարաններ ունի :

ՄՈՒՐՈՄ (11,000 բն.) կտաւեղենի մեծամեծ գործարաններ ունի :

ՓԵՐԷԵԱՍԼԱԻԼ ԶԱԼԵՍՔԻ (5,000 ըն.), ԻԻՐԵԷՎ ՓՈԼՍՔԻ
ԵՆ ԱԼԵՔՍԱՆՏՐՈՎ, բամբակեղենի եւ կտաւի գործարան-
ներ ունին :

12. ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՆԻԺՆԻ ՆՈՎԿՈՐՈՏ .

Վլատիմիրի արեւելակողմը, 1,500,000 ընակիչ ունի .
գլխաւոր գետերն են Վոլկա, Օքա եւ Սուչա . երկիրը
հարաւակողմը բարեբեր է, իսկ հիւսիսակողմը ճախճա-
խուտ, աւազուտ եւ անտառային . վաճառականութիւնը
շատ բանուկ է, եւ ճարտարութեան մեջ յառաջադեմ է .
ունի ջուխայի, ջուանի, կաշիի, երկաթեղենի եւ օճառի
գործարաններ :

ՆԻԺՆԻ ՆՈՎԿՈՐՈՏ (36,000 ըն.) Վոլկայի եւ Օքայի
խառնուրդը, շատ ճարտար եւ վաճառաշահ քաղաք, եւ
անուանի տօնավաճառ ունի՝ որ բոլոր Ռուսիոյ առաջինն
է, եւ կտեսէ յուլիսի 25-էն մինչեւ օգոստոսի 25 :

ՄԱՔԱՐԵԻ, մինչեւ 1817 այստեղ կլինէր Նիժնի Նովկո-
րոտի մեծ տօնավաճառը . ունի գործարաններ :

ԱՐԶԱՄԱՍ (10,000 ըն.) բազմաբիւ գործարաններ ունի
կաշիի եւ կտաւի :

13. ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՌԵԱԶԱՆ .

Մուքուայի արեւելակողմը, 1,400,000 ընակիչ ունի .
գլխաւոր գետերն են Օքա եւ Տոն . երկիրը բարեբեր է եւ
ընդարձակ պարարտարոյս արօտներ ունի, մանաւանդ գե-
տերուն եզերքն, որով շատ բնտանի կենդանիք կմեծցը-

ներն գաւառիս մեջ, մասնաւորապէս ազնիւ ձի եւ ոչխար. ճարտարութեան մեջ եւս յառաջադէմ է գաւառս, եւ ունի չուխայի, բամբակեղենի, կաշիի, ապակիի եւ այլ բաներու գործարաններ :

ՌԵԱԶԱՆ (21,000 ըն.) Օքայի վերայ ճարտար եւ վաճառաշահ . չուխայի, կտաւի եւ ապակիի գործարաններ ունի, եւ ցորենի մեծ վաճառականութիւն :

ՍՓԱՍՔ (4,500 ըն.) Օքայի վերայ, հայելիի եւ չուխայի գործարաններ ունի :

ՔԱՍԻՄՈՎ (9,500 ըն.) եւ ԵԿՈՐԵԻՍՔ (5,500 ըն.) ապակիի եւ կաշիի գործարաններ ունին :

14. ԿՈՒՍՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԹՈՒԼԱ.

Ռեազանի հարաւային արեւմտակողմը, 1,250,000 ըրնակիջ ունի . գլխաւոր գետերն են *Տոն*, *Օքա* եւ *Ուֆա* . երկիրը բարեր է, առատ ցորեն կրուսցընէ, եւ ունի մեծամեծ արօտներ եւ անտառներ, բազմաթիւ օգտակար կենդանիք՝ յորս նշանաւոր է մեղուն : ճարտարութեան կողմանէ բաւական յառաջացեալ է գաւառս . ունի բազմաթիւ գործարաններ, մանաւանդ մետաղեղենի, չուխայի եւ շաքարի :

ԹՈՒԼԱ (50,000 ըն.) Օքայի մեկ ճիւղին վերայ՝ շատ ճարտար եւ վաճառաշահ քաղաք, գէնքի եւ ամեն տեսակ մետաղեղենի գործարաններ ունի :

ՊԵԼԵԻ (7,500 ըն.) Օքայի վերայ, ճրագի գործարաններ ունի :

ԵՓԻՖԱՆ , Տոն գետոյն վերայ . սորա մօտ մեծ իշխանն Տմիբրի Իւանովիչ Թարարաց յաղթեց 1380-ին .

ԵՖՐԵՄՈՎ , (10,000 բն.) Տոնի մեկ ճիւղին վերայ հարուստ քաղաք , շաքարի գործարաններ ունի :

15. ԿՈՒՍՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՔԱՆՈՒԿԱ .

Թուլայի արեւմտակողմը , 1,200,000 բնակիչ ունի . գրւխաւոր գետերն են *Օքա* , *Ուկրա* , *Ժիզուրա* , եւ *Փրորփա* . երկիրը թեւ աւազուտ , բայց լաւ ոռոգուած լինելով՝ բարեբեր է , անտառներ ունի եւ կրօսցընէ ցորեն եւ այլ օգտակար բոյսեր . նմանապէս երկարի հանք ունի . վաճառականութիւնն եւ մանաւանդ ճարտարութիւնը շատ յառաջացեալ է , եւ ունի ջուխայի եւ մետաղի գործարաններ :

ՔԱՆՈՒԿԱ (31,000 բն.) Օքայի վերայ ճարտար եւ վաճառաշահ . ճրագի , կաշիի եւ շաքարի գործարաններ ունի , եւ Պալքիկ ծովու նաւահանգստից հետ մեծ վաճառականութիւն :

ԺԻՋՏԲԱ , համանուն վտակի վերայ երկաթեղենի , ապակիի , շաքարի եւ ջուխայի մեծամեծ գործարաններ ունի քովերը :

ՔՈՉԵԼՈՒՅ (8,000 բն.) կտաւի գործարաններովն անուանի :

ՍՈՒԹԻՆԻՋԻ (8,000 բն.) վերնոյն մօտ մեծ համբարանոց ճրագուի եւ կանեփի եղի :

ՄԱՍԱԼՍԻ , ջուխայի բազմաթիւ գործարաններովն երեսելի :

ՊՈՐՈՎԱՍՔ (9,000 բն.) ցորենի, փայտի եւ անասնոց մեծ վաճառականութիւն կանէ .

ՄԱԼՈՆԵԱՐՈՍԼԱՎԵՅ, անուանի է 1812-ին պատերազմովը Ռուսաց եւ Գաղղիացոց մեջ :

16. ԿՈՒՍՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՅՐԷԼ .

Քաղաքայի եւ Թուրայի հարաւակողմը, 1,500,000 բրնակիջ ունի . զլիսաւոր գետերն են *Տոն*, *Օքա* եւ *Տեւոն* . երկիրը բարեբեր է եւ առատութեամբ կրուսցընէ ցորեն, կանեփ, տեսակ տեսակ հասարակ պտուղներ եւ այլ օգտակար բոյսեր, որոց մեկ մասը մինչեւ հեռաւոր գաւառներ կյուղարկուին, եւ անով մեծ վաճառականութիւն կանեն բնակիջք . ճարտարութիւնը բաւական լառաջացեալ է :

ՅՐԷԼ (35,000 բն.) Օքայի վերայ բանուկ նաւահանգիստ, ցորենի եւ կանեփի մեծ վաճառականութիւն կանէ :

ՄՅԵՆՍՔ (12,000 բն.) Օքայի մեկ ճիւղին վերայ վաճառաշահ քաղաք, կաշիի մեծ գործարաններ ունի :

ԵԼԷՅ (23,000 բն.) եւ ԼԻՎՆԻ (10,000 բն.) ցորենի մեծ տուրեւառ ունին :

ԹՐՈՒՊԶԵՒՍՔ . սորա կանեփի գործարանները Ռուսիոյ առաջինն են :

17. ԿՈՒՍՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՔՈՒՐՍՔ .

Օրելի հարաւակողմը, 1,700,000 բնակիջ ունի . զլիսաւոր գետերն են *Սեմ*, *Փսեոյ*, *Վորսքա*, *Տոնեց* եւ *Օսքոյ* . երկիրն ըստ մեծի մասին բարեբեր է, եւ կրուսցընէ ցո-

րեն, կանեփ, տեսակ տեսակ պտուղներ, եւ այլն. ճարտարութեան կողմանէ ըստ բաւականին յառաջացեալ է, ունի բազմաթիւ գործարաններ, եւ վաճառականութիւնը բանուկ է :

ՔՈՒՐՍԻ (40,000 բն.) Սեմ գետակի վերայ ճարտար եւ վաճառաշահ, ճրագի եւ կաշիի գործարաններ ունի, եւ անասնոց մեծ առուտուր կանէ :

ՓՈՒԹԻՎԼ (6,000 բն.) շատ հին քաղաք, շաքարի զրտարաններ ունի :

ՊԵԼՎՈՐՈՏ (12,000 բն.) Տոնեցի մօտ, ճարտար եւ կուսակալութեանս ամենէն գեղեցիկ քաղաքը :

ՕՊՈՅԵԱՆ (5,000 բն.) եւ Հին ՕՍԲՈՒ (7,000 բն.) վաճառաշահ քաղաքներ :

18. ԿՈՒՍՍԿԱԼՈՒԹԻԻՆ ՎՈՐՈՆԷՅԺ .

Քուրսքի արեւելակողմը, 1,650,000 բնակիչ ունի. գրլխաւոր գետերն են *Տոն*, *Խոփեր*, եւ *Վորսնեժ*. Երկիրը բարերեր է եւ կրօսցրնէ առատ ցորեն, կանեփ, ճակընդեղ, տեսակ տեսակ պտուղներ, եւ այլն. ճարտարութեան եւ վաճառականութեան կողմանէ բաւական յառաջացեալ է :

ՎՈՐՈՆԷՅԺ (37,000 բն.) համանուն գետակի վերայ որ Տոնի մեկ ճիւղն է, հին քաղաք. ջուխայի, ճրագի եւ շաքարի գործարաններ ունի եւ շատ մեծ վաճառականութիւն կանէ : Մեծին Պետրոսի ժամանակ շատ երեսելի էր քաղաքս :

ՕՍԹՐՈՎՈՅՍՔ (7,000 քն.) ճարտար քաղաք, եւ կոստա-
կայութեանս ամենէն գեղեցիկը :

19. ԿՈՒՍՍԱՍԼՈՒԹԻԻՆ ԹԱՄՊՈՎ .

Վորոնեժի հիւսիսակողմը, 1,750,000 քնակիջ ունի,
գլխաւոր գետերն են Օքա, Յնա, Մոքշա եւ Վորոնա .
երկրին հիւսիսակողմը շատ բարեբեր չէ, իսկ հարաւա-
կողմը բարեբեր է, եւ կրուսցընէ առատ ցորեն, կանեփ
եւ այլ օգտակար բոյսեր . ունի պարարտարոյս արօտներ
որով բազմաքիւ ընտանի կենդանիք կպահուին . ճարտա-
րութեան կողմանէ ըստ բաւականին յառաջացեալ է :

ԹԱՄՊՈՎ (21,000 քն.) վաճառաշահ քաղաք, չուխայի
գործարաններ ունի :

ՄՈՐՇԱՆՍՔ (12,000 քն.), ՇԱՅՔ (6,000 քն.) եւ ԵԼԱԹՄԱ
(6,500 քն.) ճարտար եւ վաճառաշահ քաղաքներ :

Բ. ՓՈՔՐ ՌՈՒՍՔ

20. ԿՈՒՍՍԱՍԼՈՒԹԻԻՆ ՔԻԵՒ .

Տներ եւ Պուկ գետերու մեջտեղ, 1,800,000 քնակիջ
ունի . գլխաւոր գետն է Տեկեր . երկրին հիւսիսակողմն
անտառային է եւ ճախճախուտ, իսկ հարաւակողմը շատ
բարեբեր, եւ առատութեամբ կրուսցընէ ցորեն, գարի,
կանեփ, ճակնդեղ, տեսակ տեսակ պտուղներ, ծխախոտ,
եւ պարարտարոյս արօտներ ունի, որով բազմաքիւ ըն-

տանի կենդանիք կկերակրուին . գաւառիս մեջէն առատ մեղր եւ մեղրամով կելնէ :

ՔԻԵՒ (62,000 բն.) Տներերի վերայ ամուր , ծաղկած , ճարտար եւ վաճառաշահ . Ռուսաստանի ամենէն հին քաղաքն է , եւ Մոսքուայէն յառաջ Տերուքեան մայրաքաղաքն էր : Նշանաւոր տեղերն են համալսարանը , կղերիկոսական ճեմարանը , գետոյն վերայի կամուրջը , եւ ամենէն երեսելի է Քիււսքօ-Փեշերսքիյ վանքն , յորում իբր 120 սրբոց նշխարները կպահուին , որով եւ Ռուսաց սրբազան քաղաքն համարուած է Քիււ եւ մեծ ուխտատեղի . ճարտարութեան կողմանէ եւս շատ երեսելի է , բազմաթիւ գործարաններ ունի եւ անուանի տօնավաճառ :

ՔԱՆԵՒ (6,000 բն.) ջուխայի , կաշիի եւ շաքարի գործարաններովն անուանի :

ՉԵՐՔԱՍՔ (12,000 բն.) եւ ՉԻԿԵՐԻՆ (7,000 բն.) Տներերի մեկ ճիւղին վերայ , ճարտար քաղաքներ են եւ շաքարի գտարաններ ունին . վերջինը Տներերի Խազախաց գլխաւոր քաղաքն է :

ՎԱՍԻԼՔՈՎ (10,000 բն.) շատ վաճառաշահ քաղաք . սորա մօտ է Պելոցերքով որ երեք տօնավաճառ ունի , շատ գործարաններ , եւ ցորենի մեծ համբարանոց է :

ՊԵՐՏԻՉԵՒ (50,000 բն.) Վոլինիա կուսակալութեան մօտ , որոյ եւ մասն կհամարուէր , Քիււի կուսակալութեան առաջին վաճառաշահ քաղաքն է եւ բոլոր Ռուսիոյ առաջիններէն մեկը :

21. ԿՈՒՍՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՓՈԼԹԱԻԱ .

Քրնի հիւսիսային արեւելակողմը , 1,900,000 բնակիչ ունի . գլխաւոր գետերն են *Տեւերեր* , *Սուշա* , *Փսիոյ* եւ *Վօրսքլա* . երկիրը շատ բարեբեր է եւ գրեթէ միշտ ժողովրդեան հարկաւոր եղածէն աւելի ցորեն կրուսցընէ եւ այլ օգտակար բոյսեր . ունի նաեւ մեծամեծ պարարտարոյս արօտներ , որով բնակիչքը բազմաբիւ ընտանի կենդանիք կմեծցընեն , մանաւանդ ձի . ճարտարութիւնն ըստ բաւականին ծաղկեալ է :

ՓՈԼԹԱԻԱ (20,000 բն.) շատ վաճառաշահ , եւ անուանի տօնավաճառ ունի . երեսելի եղաւ քաղաքս 1709-ին պատերազմովն , յորում Մեծն Պետրոս Շուեաի Կարոյոս ԺԲ քաղաւորին յաղթեց :

ՔՐԵՄԵՆՉՈՒԿ (20,000 բն.) ճարտար եւ վաճառաշահ , համբարանոց է քաղաքս Խրիմէն եկած աղին եւ հարաւակողմը տարուած փայտերուն :

ՌՈՄԷՆ (5,000 բն.) շատ վաճառաշահ քաղաք :

ՓԵՐԷՅԵԱՍԼԱԻՎ (7,000 բն.) երեսելի է 1654-ին դաշնադրութեամբն , որով Փոքր Ռուսիան միացաւ տերութեանս հետ :

22. ԿՈՒՍՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՉԵՌՆԻԿՈՎ .

Քիւի եւ Փոյրաւայի հիւսիսակողմը , 1,500,000 բնակիչ ունի . գլխաւոր գետերն են *Տեւերեր* , *Տեւնա* եւ *Սեմ* . երկրին հիւսիսակողմը շատ բարեբեր է , իսկ հարաւա-

կողմը բարեբեր է եւ առատ ցորեն կրուսցրնէ. մեծամեծ արօտներուն մեջ բազմաբիւ անասունք կմեծցրնեն, յորս երեսելի են ձին, ոչխարն եւ խոզը. ճարտարութեան մեջ յառաջադեմ չէ:

ՉԵՌՆԻԿՈՎ (4,000 բն.) Տեսնա գետակի վերայ, վաճառաշահ, եւ Ռուսիոյ շատ հին քաղաքներէն մէկը:

ՓԵԺԻՆ (16,000 բն.) վաճառաշահ քաղաք. գլխաւոր վաճառքն է ծխախոտ, որ քովերէն կելնէ:

ՆՈՎՎՈՐՈՏ ՍԵԻԷՐՍԻ (5,000 բն.) Տեսնայի վերայ հին քաղաք, երբեմն համանուն իշխանութեան արոճանիստն էր:

ՍԹԱՐՈՏՈՒՊ (7,000 բն.) քովերջ չուխայի եւ շաքարի գործարաններ ունի:

ՄՎԼԻՆ (7,000 բն.) կուսակալութեանս ամենէն հիւսիսային քաղաքը, ճրագի եւ շաքարի գտարաններ ունի:

ՎՂՈՒԽՈՎ (8,000 բն.) երբեմն արոճանիստ էր Փոքր Ռուսաց իշխանին, ցորենի առեւտուր ունի:

ՔՐՈՒԵՎԵՅ (6,000 բն.) մեծ տօնավաճառ ունի:

23. ԿՈՒՍՍԱԿԱՂՈՒԹԻՒՆ ԽՍՐԻՍՎ.

Քուրսքի հարաւակողմը, 1,500,000 բնակիչ ունի. գլխաւոր գետերն են *Տոնեց*, *Վորսքլա*, *Փսիոյ* եւ *Օսքոյ*. Երկիրը շատ բարեբեր է եւ բնակչաց հարկաւոր եղածէն աւելի ցորեն կրուսցրնէ. անտառ սակաւ ունի, բայց մեծամեծ արօտները շատ են, որով բնակիչք շատ բնտանի կենդանիք կպահեն. ճարտարութեան եւ վաճառականութեան կողմանէ շատ յառաջադեմ է, բազմաբիւ գործա-

րաններ ունի, մանաւանդ ճրագի; շաքարի, ջուխայի եւ կաշիի:

ԽԱՐՔՈՎ (30,000 բն.) Տոնեցի երեք ճիւղերուն վերայ. Մոսքոսայի, Քիեւի, Օտեսայի, եւ Թայդանի մեջտեղերը լինելով՝ շատ վաճառաշահ եւ երեսելի քաղաք. անուանի համալսարան ունի եւ չորս մեծ տոնավաճառներ:

ԻԶԻՒՄ (7,500 բն.) Տոնեցի վերայ, տախտակի մեծ առուտուր ունի:

ՍԹԱՐՈՊԵԼՍԻ (6,000 բն.) Տոնի մեկ ճիւղին վերայ, նըշանաւոր քաղաք:

ՍՈՒՄԻ (12,000 բն.) ճարտար եւ վաճառաշահ. բազմաբիւ գործարաններ ունի:

ԼԵՊԵՏԻՆ (10,000 բն.) եւ ԱԽԹԻՐՔԱ (13,000 բն.) ճարտար եւ նշանաւոր քաղաքներ:

Գ. ՊԱԼԹԻԱԿԱՆ ԳԱԻԱՌՔ

24. ԿՈՒՍՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՓԵԹՐՊՈՒՐԿ.

Նովկորոտի արեւմտակողմը, 1,000,000 բնակիչ ունի. գլխաւոր գետն է Նեչա, որ Լատոկա լճէն Ֆինլանտիոյ ծոցը կրափի. երկիրը ցրտութեան պատճառաւ բարեբեր չէ, բայց կայսերութեան մայրաքաղաքն այս գաւառիս մեջ լինելով՝ վաճառականութիւնը, ճարտարութիւնն ու գիտութիւնք վերջին աստիճանի ծաղկած են:

ՓԵԹՐՊՈՒՐԿ (500,000 բն.) Նեւայի վերայ Ֆինլանտիոյ

ճոցոյն մօտ . Մեծն Պետրոս շինեց այս քաղաքս 1703-ին . տերութեան մայրաքաղաք . ամեն բանի կողմանէ Ռուսիոյ առաջին քաղաքն է , իսկ բազմամարդութեան , ճարտարութեան , զիտութեանց , վաճառականութեան եւ մանաւանդ զեղեցկութեան կողմանէ Եւրոպայի առաջիններէն մեկն է . ունի բազմաքիւ մեծակառոյց եւ հոյակապ շէնքեր , որոց նշանաւորներն են Սրբոյն Իսահակայ եկեղեցին , կալսերական պալատը , Խազանի Սուրբ Սատուածածնի եկեղեցին ' Հռոմայ Սրբոյն Պետրոսի ձեռովը շինած . համալսարանը , սակարանը , ծովապետի պալատը , Աղեքսանդրի Առաջնոյն սիւնը , Սմոլնոյ վանքը եւ կալսերական գրատունը : Մեծամեծ եւ զեղեցիկ հրապարակներ ունի , որոց զլիաւորներն են Ս . Իսահակայ , Մեծին Պետրոսի , ծովապետի եւ կալսերական պալատներուն հրապարակները . Մեծին Պետրոսի հրապարակին մեջ է նոյն կալսեր հրակայածեւ սղնձե արձանը ' ձիու վերայ հեծած . զեղեցիկ են եւ կրանիքէ փառաւոր զետախունքը : Ռատամնարանաց եւ ուսումնական տեղեաց զլիաւորներն են համալսարանը , զեղարուեստից ' զիտութեանց եւ բժշկականութեան ճեմարանները , եւ այլ բազմաքիւ բարձր զիտութեանց վարժարաններ , դիտարան , բանգարան բնական պատմութեան , նմանապէս արեւելեան ' ասիական եւ այլ բանգարաններ , բուսաբանական պարտեզ , եւ այլն : Նշանաւոր է քաղաքս նաեւ իւր փողոցներուն լայնութեամբն ու ուղղութեամբը : Քաղաքին քովերը բազմաքիւ կալսերական եւ առանձնական ամարանոցներ կզբտ-

նուին գեղեցիկ պարտեզներով եւ շատրուաններով, յորս նշանաւոր ե Յարսքոյէ Սելօ կայսերական ամարանոցը :
ՔՐՈՆՇԹԱՏ, Ֆինլանտիոյ ծոցոյն Քոթլին կղզւոյն մեջ, բոլոր կայսերութեան առաջին ամուր բերդաքաղաքն եւ եւ զինուորական ու վաճառաշահ նաւահանգիստը :

25. ԿՈՒՍՍԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՍԹՈՆԻԱ.

Ֆինլանտեան ծոցոյն հարաւակողմը, 350,000 բնակիչ ունի . նշանաւոր գետն եւ *Նարվա* որ Փէյփուս լճէն Ֆինլանտիոյ ծոցը կրափի . երկիրը բեռն ամեն տեղ բարերեր չէ, սակայն ժողովրդեան պէտք եղածէն աւելի ցորեն կրթուսցընէ . ունի եւ մեծամեծ արօտներ, որով բնակիչքը բազմաքիւ ընտանի կենդանիք կմեծցընեն . յորս ամենէն նշանաւորներն են չորս տեսակ ազնիւ ոչխարները . բընակչաց մեկ մասը ձկնորսութեան կպարապի որ հարրստութեան մեծ աղբիւր ե զաւառիս :

ՌԵԻԷԼ (20,000 բն.) Ֆինլանտիոյ ծոցոյն վերայ ամուր բերդաքաղաք եւ զինուորական ու վաճառաշահ նաւահանգիստ :

26. ԿՈՒՍՍԿԱՆՈՒԹԻՒՆ ԼԻՎՈՆԻԱ.

Եսթոնիոյ հարաւակողմը, 880,000 բնակիչ ունի . զըլխաւոր գետն եւ *Տուրա* . երկիրը բեռն բարերեր չէ, բայց ժողովրդեան պէտք եղածին չափ ցորեն կրթուսցընէ . այս զաւառիս մեջ եւս շատ ընտանի կենդանիք կպահուին, բայց լաւ տեսակ չեն, միայն մեկ տեսակ ձի եւ ոչխար ունի որ ազնիւ են :

ՌԻԿԱ (70,000 ըն.) Տումայի բերանի մօտ, Ռուսիոյ ամուր բերդերէն մէկն է եւ Փերրպուրկէն յետոյ ամենէն բանակ նաւահանգիստը :

ՏԵՐՓԹ կամ ՏՈՐՓԱԹ (13,000 ըն.) համալսարանովն անուանի է :

ՓԵՌՆՈՎ (6,000 ըն.) Ռիկայի ցոծոյն վերայ վաճառաշահ նաւահանգիստ :

27. ԿՈՒՍՍԿԱԼՈՒԹԻՒՆ ՔՈՒՐԼԱՆՏԻԱ .

Լիվոնիոյ ծոցոյն եւ կուսակալութեան հարաւակողմը, 650,000 ընակիչ ունի . զլիսաւոր գետն է *Տուկա* . Երկիրը Լիվոնիայէն բարերեր է, այնպէս որ ժողովրդեան հարկաւոր եղածէն աւելի ցորեն կրուսցրնէ . ընտանի կենդանիք դարձեալ շատ են այս գաւառիս մէջ, բայց լաւ տեսակէն միայն ձի ունի՝ որ ուժին կողմանէ նշանաւոր է, եւ երեք տեսակ ազնիւ ոչխար :

ՄԻԹԹԱԻԱ (17,000 ըն.) երբեմն Բուրլանտիոյ դքսերուն արոտանիստ քաղաքն էր :

ԼԻՊԱԻԱ, Պայրիկ ծովուն վերայ վաճառաշահ նաւահանգիստ :

Դ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ՌՈՒՍԻԱ

28. ԿՈՒՍՍԿԱԼՈՒԹԻՒՆ ՓՈՏՈՒԼԻԱ .

Քիւնի հարաւային արեւմտակողմը, 1,700,000 ընակիչ ունի . զլիսաւոր գետերն են *Տեկսրեր* եւ *Պուկ* . Երկիրը շատ բարերեր է եւ լեռնային, եւ առատութեամբ կրուս-

ցրնէ շատ տեսակ ընտիր ցորեն , գարի , կանեփ , վուշ , ճակնդեղ , եգիպտացորեն , ձմերուկ , սեխ եւ ամէն տեսակ հասարակ սլտուղներ եւ խաղող . ճարտարութեան մեջ յառաջադէմ չի :

ՔԱՄԵՆԻՑ ՓՈՏՈՂՍՔ (18,000 բն.) ամուր քաղաք . Լեհաց ձեռքն եղած ժամանակը շատ երեսելի էր , վասն զի մեծ պատուար էր Լեհաստանի ընդդէմ Օսմանեանց : Ժամանակով շատ մերագնեայք կային քաղաքիս մեջ :

ՄՈՂԻԼԵԻ (9,000 բն.) Տնեսերի վերայ , շաքարի գտարաններ ունի :

29. ԿՈՒՍՍԱԿԱԼՈՒԹԻԻՆ ՎՈԼԻՆԻԱ.

Փոտոլիոյ հիւսիսակողմը , 1,500,000 բնակիչ ունի . երկրին հիւսիսակողմը ճախճախուտ է եւ անտառային , իսկ հարաւակողմը շատ բարերեր է եւ առատութեամբ կրուսցրնէ ցորեն , գարի , կանեփ , բազմատեսակ սլտուղներ եւ այլ օգտակար բոյսեր . ունի եւ մեծամեծ անտառներ , որոց փայտը բնակիչք շէնքերու կգործածեն եւ կամ տեսակ տեսակ ձիւքեր կհանեն անտի . անտառաց մեջ կը գտնուին նաեւ բազմաբիւ արջեր , գայլեր եւ ուրիշ գազաններ . ունի եւ շատ ընտանի կենդանիք , երկարի հանքեր եւ տեսակ տեսակ քարեր . վաճառականութիւնն ու ճարտարութիւնը շատ ծաղկած են :

ԺԻԹՈՄԻՐ (28,000 բն.) Տներերի մեկ ճիւղին վերայ , շաքարի եւ բամբակեղենի գործարաններ ունի . վաճառականութիւնը տկար է :

ՆՈՎԱԲԱՏ ՎՈՂԻՆՍՔ (6,000 բն.) չուխայի , ապակիի եւ
խեցեղէն ամաններու գործարաններ ունի :

ՕՍԹՐՈԿ (9,000 բն.) չուխայի շատ գործարաններ ունի :

ՔՐԵՄԵՆԵՅ (8,500 բն.) դիրքը շատ գեղեցիկ է :

30. ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԿՐՈՏՆՈՅ .

Վոլինիոյ հիւսիսային արեւմտակողմը , 950,000 բնա-
կիչ ունի . գլխաւոր գետն է *Նեմկն* . երկիրը բարեբեր է
եւ շատ տեղ բլուրներ ունի . բնակիչքն ընդհանրապէս
երկրագործութեան եւ անասնադարմանութեան կալարա-
պին . ունի նաեւ քանի մի հանքեր եւ քարահատներ .
այս զաւառիս մեջ կգտնուի վայրի ցուլ կամ պիսոն կո-
չուած ահաւոր կենդանին :

ԿՐՈՏՆՈՅ (15,000 բն.) Նեմենի վերայ , երբեմն արուա-
նիստ Ստեփանոս Պաթորիի եւ մայրաքաղաք Լիթուանիոյ .
ճարտար եւ վաճառաշահ :

ՊՐԵՍԹ ԼԻԹՈՎՍՔ (17,000 բն.) ամուր բերդաքաղաք :

ՊԵԼՈՍԹՈՒՔ (11,000 բն.) քովերը բրդեղենի բազմաթիւ
գործարաններ կան :

31. ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՔՈՎՆՈՅ .

Քուրլանտիոյ հարաւակողմը , 900,000 բնակիչ ունի .
գլխաւոր գետերն են *Նեմկն* եւ *Վիլնա* . երկիրը բարեբեր
է , եւ բնակչաց պէտք եղածէն աւելի ցորեն կրուսցընէ .
ունի նաեւ առատ վուշ , մեղր , անտառներ եւ հանքային
ածուխ :

ՔՈՎՆՈՅ (20,000 ըն.) վաճառաշահ քաղաք, 1812-ի
պատերազմին ժամանակը նշանաւոր :

32. ԿՈՒՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՎԻԼՆԱ .

Կրտսնոյի հիւսիսակողմը, 900,000 ընակիչ ունի . զըլ-
խաւոր գետերն են *Նեմեն* եւ *Վիլնա* . երկիրը բարեբեր է,
բայց մեկ մասը ճահիճներով եւ անտառներով ծածկած լի-
նելով՝ ժողովրդեան պետք եղածին չափ ցորեն չբուսցը-
ներ . ունի առատ եւ ազնիւ վուշ եւ կանեփ . բնակչաց
մեկ մասը ձկնորսութեան կալարապին :

ՎԻԼՆԱ (45,000 ըն.) ճարտար եւ շատ վաճառաշահ .
չուխայի բազմաթիւ գործարաններ ունի :

ԹՐՈՒԹԻ, երբեմն արոռանիստ էր Լեհաստանի բազաւո-
րաց :

33. ԿՈՒՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՎԻԹԵՊՍԻ .

Փսքովի հարաւակողմը, 900,000 ընակիչ ունի . զլիա-
ւոր գետն է *Տուկա*, եւ բազմաթիւ լճեր ու ճահիճներ ու-
նի . երկիրն ըստ բաւականին ցորեն չբուսցըներ, եւ շատ
անգամ ձմեռն անասնոց հիւանդութիւնք կալատանին . քա-
նի մի տեղ վուշ եւ կանեփ կբուսնի :

ՎԻԹԵՊՍԻ (20,000 ըն.) Տունայի վերայ Ռուսիոյ հին
քաղաքներէն մեկն ու վաճառաշահ :

ՓՈՂՈՅԻ (12,000 ըն.) եւ ՏՐԻՍԱ, 1812-ին պատերազմ-
ներովն անուանի :

ՏԻՆԱՊՈՒՐԿ (11,000 ըն.) շատ ամուր բերդաքաղաք :

34. ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՄՈՀԻԼԵՒ .

Վիթեպսքի հարաւային արեւելակողմը , 950,000 բնակիչ ունի . գլխաւոր գետերն են *Տնէքեր* եւ *Սոժ* . երկիրը Վիթեպսքէն աւելի բարեբեր է , բայց հարաւակողմը ճախճախուտ :

ՄՈՀԻԼԵՒ (23,000 բն .) Տնէքերի վերայ , շատ վաճառաշահ քաղաք եւ արոռանիստ ուսւս եւ հոռմեական արքեպիսկոպոսաց :

ԿՈՄԷԼ (10,000 բն .) շատ վաճառաշահ քաղաք :

ԿՈՐԲԻ , երկրագործութեան շատ երեւելի ուսումնարան ունի :

35. ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՄԻՆՍԻ .

Կրտանոյի արեւելակողմը , 1,200,000 բնակիչ ունի . գլխաւոր գետերն են *Տնէքեր* , *Փրիփեր* եւ *Պերեզինա* . երկրին հարաւակողմը Փրիփերէն ձեւացած ընդարձակ ճահիճներով ծածկուած է ' որ *Փինսք* կկոչուին . մնացած տեղերը շատ բարեբեր է , բեպետ շատ անտառներ եւս ունի . օդը առողջ չէ . անտառաց փայտերով մեծ վաճառականութիւն կանէ :

ՄԻՆՍԻ (25,000 բն .) Պերեզինայի մեկ ճիւղին վերայ , ճարտար եւ վաճառաշահ :

ՊՈՊՐՈՒՅՍԻ (17,000 բն .) Պերեզինայի վերայ շատ ամուր բերդաքաղաք :

ՓԻՆՍԻ (10,000 բն .) կաշիի գործարաններովն անուանի :

Ե. ՀԱՐԱԻԱՅԻՆ ԿԱՄ ՆՈՐ ՌՈՒՍԻԱ

36. ՆԱՀԱՆԳ ՊԵՍԱՐԱՊԻԱ.

Փոստոյիոյ հարաւակողմը՝ Տնեսքեր եւ Փրուք գետերու մեջտեղ, 700,000 բնակիչ ունի. գլխաւոր գետերն երկու վերոյիշեալներն են. երկիրը շատ տեղ դաշտային է, եւ տեղ տեղ լեռնոտ, բայց ամենայն կողմանց հողը շատ բարեբեր է, միայն հարաւակողմը ճախճախուտ է եւ աւազուտ. ողբ ձմեռը ցուրտ է, ամառը շատ տաք: Երկիրն առատութեամբ կրօսցընէ տեսակ տեսակ ազնիւ ցորեն, գարի, գետնախնձոր, եգիպտացորեն. բայց բնակիչքն երկրագործութենէ աւելի անասուն մեծցընելու հոգ կտանին, ինչպէս ձի, կով, ոչխար, խոզ, եղ եւ գոմէշ, որոց մեծ մասն Աւստրիա կտանին կժախեն: Պտղոց մեջ ունի բազմատեսակ խնձորներ, որոց ամենէն ընտիր տեսակն է *տումնէշը* կոչուածը՝ սալոր, ընկոյզ եւ այլ հասարակ պտուղներ, որոց մեծ մասը հիւսիսային գաւառները կրյուղարկուին, եւ ամենէն երեսելին է գանազան տեսակ խաղողը, մանաւանդ Ագքիրմանի քովերը, որոյ զինին մինչեւ Մոսքուա կտարուի. ծխախոտը տարուէ տարի կշատնայ: Երեսելի է գաւառս նաեւ իւր առատ ձուկերովն ու ճահիճներէն ելած աղովը. ճարտարութեան մեջ յառաջադեմ չէ, բայց վաճառականութիւնը շատ բանուկ է:

ՔԻՇՆԵԻ (63,000 բն.) Պըք գետակին վերայ գուարճալի պարտեզներով պատած մեծ եւ շատ վաճառաշահ քաղաք. գլխաւոր վաճառքն է տեսակ տեսակ ազնիւ պտուղներ եւ

մանաւանդ չորցուցած սայոր . քովերը ծծմբային աղբիւրներ կան : Մինչեւ 1857 արոռ. եր առաջնորդի Հայոց Նախիջեանի եւ Պեսարապիոյ :

ԱԳՔԻՐՄԱՆ (20,000 բն.) Տնեսերէն ձեւացած խորշին վերայ , Պեսարապիոյ ամենէն վաճառաշահ քաղաքն է , եւ գինիի մեծ վաճառականութիւն ունի , վասն զի բազմաբիւ այգիներով պատած է :

ՊԵՆՏԵՐ (15,000 բն.) Տնեսերի վերայ ամուր քաղաք . անուանի եղաւ Շուեաի Կարոյոս ԺԲ բազաւորին երեք տարի այստեղ բնակելովը ' Փոլսաւայի պատերազմէն յետոյ :

ՊԸԼՅ (7,000 բն.) բազմամարդ գաւառի մեջ վաճառաշահ քաղաք :

ՀՈԹԻՆ (13,000 բն.) Տնեսերի վերայ ամուր քաղաք եւ վաճառաշահ :

ՀՆԶԵՇՏ , բարերեր եւ գեղեցկազիր աւան մեծ , կալուած Յովհաննէս Մուրատ Մանուկ Պէյ մերազնեայ իշխանաւորին . ունի գեղեցկաշէն եւ հոյակապ ամարանոց :

37. ԿՈՒՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՔԵՐՍՈՆ.

Պեսարապիոյ արեւելակողմը ' Սեաւ ծովուն եզերքը , 850,000 բնակիչ ունի . գլխաւոր գետերն են *Տնէրեր* , *Պուչ* , *Տնէսրեր* եւ *Ինկուչ* . երկրին հիւսիսակողմը բարերեր է եւ Պեսարապիոյ բերքերն ունի ընդհանրապէս , իսկ հարաւակողմն անբեր է . բնակիչքն ըստ մեծի մասին երկրագործութեան կպարապին , եւ մանաւանդ անասուն մեծցրնելու . վաճառականութիւնը շատ բանուկ է ,

արուեստք եւ գիտութիւնք եւս ծաղկած են երեք մեծ քաղաքացր մեջ :

ՔԵՐՍՈՆ (33,000 բն.) Տներերի բերանեն 30 վերսք հեռու. Սեաւ ծովուն վերայ ամուր քաղաք եւ գինուորական ու շատ վաճառաշահ նաւահանգիստ. Օտեսայի շինութիւնն յառաջ բոլոր Սեաւ ծովուն առաջին նաւահանգիստն էր : Մեծ համբարանոց է նաւ շէնք շինելու փայտերու :

ՆԻՔՈԼԱՅԵՒ (44,000 բն.) Պուկի եւ Ինկուլի խառնուած տեղը , ամուր քաղաք , գինուորական նաւահանգիստ եւ մեծ նաւարան :

ՕՏԵՍՍԱ (100,000 բն.) Սեաւ ծովուն *Հօնա պէյ* կոչուած ծոցոյն վերայ , գաւառիս առաջին քաղաքն է , եւ բոլոր կայսերութեան մեծ , գեղեցիկ , ծաղկեալ եւ վաճառաշահներէն մեկը : Օտեսսան անցեալ դարու վերջերը զիւղ մի էր . բայց յետոյ քաղաք դառնալով եւ ազատ նաւահանգիստ ունենալով՝ սակաւ ժամանակի մեջ Սեաւ ծովու առաջին քաղաք , եւ բոլոր Եւրոպայի շատ վաճառաշահ նաւահանգիստներէն մեկը դարձաւ : Գիտութեանց եւ ճարտարութեան մեջ ալ շատ յառաջադէմ է . ունի բազմաբիւ գործարաններ մետաքսեղենի , օճառի եւ այլն . ուսումնական տեղերուն մեջ նշանաւոր է Ռիշլիեօ լիկեօնը որ համալսարանի աստիճան առաւ . բազմաբիւ գեղեցիկ շէնքերուն մեջ նշանաւոր է մայր եկեղեցին :

38. ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻԻՆ ԵՎՍՏԵՐԻՆՈՍԼԱԻ .

Քերսոնի հիւսիսային արեւելակողմը , 800,000 բնակիչ

ունի . գլխաւոր գետերն են *Տնէքեր* եւ *Տոն* . երկիրը քարերէր է ընդհանրապէս , մանաւանդ հիւսիսակողմը , եւ կրօսցընէ ցորեն , հասարակ պտուղներ եւ այլ օգտաւիար բոյսեր . ունի նաեւ բազմաթիւ ընտանի կենդանիք , մանաւանդ լաւ տեսակ ոչխար . անտառը սակաւ է , բայց Պախմուքի քովերն եւ այլ տեղեր հանքային ածուխ կգրտնուի . բնակիչքն ըստ մեծի մասին երկրագործութեան եւ խաշնադարմանութեան կպարապին . վաճառականութիւնը բանուկ է :

ԵՎԱՏԵՐԻՆՈՍԼԱԻ (13,000 բն.) Տներերի վերայ վաճառաշահ . այս քաղաքս Կատարինէ Բ կայսրուհւոյն հրամանաւը շինուեցաւ 1784-ին :

ՌՈՍՏՈՎ (32,000 բն.) Տունի վերայ շատ վաճառաշահ քաղաք . գլխաւոր համբարանոց հիւսիսային բերոց որ Ազախու եւ Սեաւ ծովերու նաւահանգիստները կտարուին :

ՆԱԽԻՋԵՒԱՆ (13,500 բն.) Տոն գետոյն վերայ վաճառաշահ , հարուստ եւ գեղեցիկ . բնակիչքն ամենքը Հայ են , որ Խրիմէն գաղթելով՝ շինեցին քաղաքս 1780-ին Կատարինէ երկրորդին հրամանաւ , եւ շատ ազատութիւններ ունին : Նախիջիւանի մօտ հայարնակ գիւղեր են *Չալքըր* , *Թուխտի* , *Մեծ Սաշա* , *Փոքր Սաշա* , եւ *Նեւվիրայ* :

ԱԶՈՎ , Տոնի վերայ փոքրիկ քաղաք . սորա տեղն էր հին ժամանակները Յունաց Տանայիս քաղաքը :

ԹԱՅՂԱՆ կամ **ԹԱԿԱՆՐՈՎ** (18,000 բն.) Ազախու ծովուն վերայ շատ վաճառաշահ նաւահանգիստ եւ գեղեցիկ քաղաք . այս տեղ մեռաւ Աղեքսանդր Ա կայսրը 1825-ին նոյ-

եմբերի 19-ին : Անգղիացիք եւ Գաղղիացիք ումբակոծեցին քաղաքս 1855-ին :

ՄԱՐԻՈՒՓՈՒ կամ ՄԱՐԻԱՄՓՈՒ (7,000 բն.) Ազախու ծովուն վերայ լաւ նաւահանգիստ . այս քաղաքս Խրիմեցի Յոյնք շինեցին 1779-ին . իսկ 1855-ին Անգղիացւոցմէ եւ Գաղղիացւոցմէ ումբակոծուելով՝ մեծ մասն այրեցաւ :

ՊԱՐՄՈՒԹ (8,000 բն.) հարուստ ածխահանքովն անուանի :

39. ԿՈՒՍՍԱԿԱՆՔԻՆ ՏԱՒԻՍԱ, ԿԱՄ ԽՐԻՄ.

Եկատերինոսլաւի հարաւակողմը Սեաւ եւ Ազախու ծովերու եզերքը , 400 հազար բնակիչ ունի . գլխաւոր գետերն են *Տեկեր* եւ *Սաղղըր* . երկու որոշ մասեր ունի գաւառս . *Խրիմ քերակղզի* եւ *Յամաքայի* մասը . երկրորդին երկիրը ճախճախուտ է եւ անբեր , այնու ամենայնիւ առատ ցորեն ունի . իսկ Խրիմը շատ բարեբեր է , եւ Ռուսիոյ հարաւային ծայրը լինելով՝ օդն առողջ , զուարճալի՝ բայց փոփոխական : Սեւաստոփոլի ծոցէն լերանց գօտի մի կձգուի ծովեզերքը մինչեւ Թեոդոսիոյ ծայրը , որոց ամենէն՝ բարձր գլուխն է Չատրրտաղ : Խրիմը շատ տեսակ ազնիւ պտուղներ կրուսցընէ , ինչպէս տանձ , խնձոր , կեռաս , սալոր , ծիրան , դեղձ , նուշ , բուզ , ձիթենի , խաղող , եւ այլն . այս պտուղներուս մեծ մասը Մոսքուայէն եկած վաճառականք կգնեն , Ռուսիոյ հիւսիսակողմերը կտանին . անուանի է գաւառս նաեւ ձկներու եւ աղի առատութեամբը . ճարտարութիւնը տկար է , իսկ վաճառականութիւնն ըստ բաւականին բանուկ :

ՍԻՄՅԵՐՈՓՈՒ ԿԱՄ ԱԳՄԷԶԻՏ (26,000 ըն.) Սալդրի վերայ Խրիմու վաճառականութեան կեդրոնն եւ գլխաւոր քաղաքը :

ՊԱՂԶԷՍԱՐԱՅ (12,000 ըն.) Սիմֆերոպոլի հարաւակողմը, բարձրադիր եւ նեղ հովտի մեջ, երբեմն Խրիմու թաքար խաներուն արուանիստն էր. նշանաւոր է խաներուն պալատը զուարճալի պարտեզներով պատած :

ՍԵՒԱՍԹՈՓՈՒ ԿԱՄ ԱԳԵԱՌ (8,000 ըն.) Սեւա ծովուն վերայ շատ ամուր բերդաքաղաք էր, եւ Սեւա ծովուն վերայ Ռուսաց կայսերութեան առաջին զինուորական նաւահանգիստը. 1855-ին Գաղղիացւոց եւ Անգղիացւոց սաստիկ պաշարմանը երկար ժամանակ դիմանալէն լետոյ, բոլորովին կործանեցաւ. այժմ նորէն շինուելու եւ ծաղկելու հետ է : Սեւասթոպոլի մօտ է ԻՆՔԻՐՄԱՆ, որոյ տեղն էր հին ժամանակը *Կոկնոս* քաղաքն, եւ լետոյ *Քերսոնես* կամ *Քարսուզն*, ուր մեծ իշխանն Վլատիմիր Ա. քրիստոնէութիւնն ընդունեցաւ : Ինքիրման երեսելի եղաւ 1854-ին պատերազմովը : Սեւասթոպոլի հարաւակողմն է ՊԱՂԳՂԱԻԱ փոքր քաղաքն, ուր եղաւ 1855-ին պատերազմը : Կարծիք կայ թէ սորա մօտ ծովուն քով եղած լինի հին ժամանակները Անահտայ նոջակաւոր մենեանը :

ԹԷՌՆՈՍԻԱ կամ ՔԵՖԷ (8,500 ըն.) Սեւա ծովուն վերայ լաւ նաւահանգիստ. ԺԳ դարուն մեջ ճենովացւոց ձեռքով շատ մեծցաւ եւ ծաղկեցաւ. Անիէն եկած մերազնեայ րազմաբիւ գաղթականներն եւս առաւել պայծառացուցին քողաքս վաճառականութեամբ եւ րազմաբիւ եկեղեցիներ

րով, այնպէս որ մինչեւ Փոքր կոստանդնուպօլիս կոչուելու արժանի եղեր էր. քայց այժմ ընկած է : 1858-էն ի վեր Առաջնորդարան է քաղաքս Նախիջեւանի եւ Պեսարապիոյ Հայոց : Այս տեղ է Խալիպեան Ռոսումնարանն ազգիս Հայոց, հանդերձ Տպարանաւ, Գրասենեկաւ եւ Վերժանութեան Թանգարանաւ :

ԽԱՐԱՍՈՒ (ՊԱԶԱՐ), համանուն գետակի վերայ վաճառաշահ քաղաք, եւ առաջնորդարան հռովմեական Հայոց : Ռախտատեղի է մեր ազգին սորա մօտ եղած Սուրբ Փշրկի վանքը :

ՍՈՒՏԱՂ, ծովու մօտ, անուանի է գինիովն եւ այգիներովը :

ՀԻՆ ԽԻՄ, Թեոդոսիոյ մօտ հայարնակ փոքրիկ քաղաք, ողբ շատ զուարճալի եւ երկիրը բարեբեր. քովերը լերան մի վերայ է Սուրբ Նշան կամ Սուրբ Խաչ կոչուած Հայոց հին վանքն որ մեծ ռախտատեղի է մեր ազգին :

ԵԱԼԹԱ, Խրիմու հարաւային ծայրը՝ լերանց ստորուոր փոքրիկ քաղաք. ողբ շատ զուարճալի եւ երկիրը շատ բարեբեր լինելուն, ամառը բազմաքիւ օտարականներով կլեցուի : Բովերը շատ զուարճալի ծովահայեաց տեղերունի եւ գեղեցկաշէն ամարանոցներ, յորս երեսելի են նորաշէն կայսերական ամարանոցն *խլիւսաթա*, եւ Վորոնցով իշխանինը՝ *Աշուփքա* կոչուած տեղը :

ԵՒՊԱՏՈՐԻԱ կամ ԿԻՉԼԵԻ (5,000 բն.) Մեծին Մինըրդատայ Եպատորի շինած քաղաք, Սեաւ ծովուն վերայ նաւահանգիստ :

ՊԵՐՏԵԱՆՍԵ (9,000 բն.) նորաշէն քաղաք, լաւ նաւահանգիստ ունի :

ՄԵԼԻՔՈՓՈԼ, փոքրիկ քաղաք վաճառաշահ :

ՓԵՐԵՔՈՓ կամ ՕՐԳԱՓՈՒ կամ ՕՐՊԱԶԱՐ (7,000 բն.) համանուն պարանոցին մօտ վաճառաշահ :

ԿԵՐԶ (12,000 բն.) Ենիգայէի նեղուցին վերայ գեղեցիկ քաղաք եւ վաճառաշահ նաւահանգիստ : Սորա քով էր հին ժամանակը Պանտիկապոն, յորում մեռաւ Մեծըն Միհրդատ. անուանի է քաղաքիս հնուքեանց բանգարանը :

ԵՆԻԳԱԼԷ, համանուն նեղուցին վերայ ամուր բերդ եւ նաւահանգիստ :

40. ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԵՐԿԻՐ ԽԱԶԱԽԱՅ ՏՈՆԻ.

Տոնի Խազախաց գինուորական երկիրն ընդարձակ գաւառ մի է Վորոնեժի արեւելակողմը մինչեւ Ազախու ծովուն եզերքը. իբր 700,000 բնակիչ ունի. գլխաւոր գետերն են *Sule*, *Sulleg*, *Խուֆեք*, *Մետուելտիցա* եւ *Մանիչ*. Երկրին արեւելակողմը լեռնոտ է, արեւմտակողմը դաշտային. եւ բեպեռ շատ բարեբեր չէ, սակայն ժողովրդեան պէտք եղածէն աւելի ցորեն կրուսցընէ. ունի նաեւ գարի, վուշ, գետնախնձոր եւ ամէն հասարակ պտուղներըն եւ խաղող. բնակիչքը շատ ընտանի կենդանիք եւս կմեծցընեն, յորս երեսելի է ձին : Խազախք պատերազմաւեր են, եւ ժամանակաւ ինքնիշխան հեթմաններու կամ արամաններու կհնազանդէին. յետոյ ինքնակամ Լեհաց

պաշտպանութեան տակ մտան , եւ ապա Ռուսաց , եւ նո-
ցա սովորութիւններն ընդունած են : Այժմ եւս մասնաւոր
կառավարութիւն ունին զինուորական , բեպեա զլիսաւոր
կառավարողը կամ զօրավարը Ռուսաց տերութիւնը կնշա-
նակէ : Ռուսաց բեթերնբաց ձիաւոր զօրքը Խազախք են :

ՆՈՎՈՉԵՐՔԱՍՔ (17,000 բն.) Տոնի մեկ ճիւղին վերայ ,
զինուորական նշանաւոր քաղաք : Միւս նշանաւոր քա-
ղաքները կամ զիւղաքաղաքներն են .

ԱԳՍԱՅ , վաճառաշահ :

ՈՒՐԻՒՓԻՆՍՔԱՅԱ , տօնավաճառ ունի :

ՅԻՄԼԵԱՆՍՔԱՅԱ , գինիովն անուանի :

ՔԱԶԱԼԻՆՍՔԱՅԱ , նաւահանգիստ :

41. ԿՈՒՍՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՍԹԱԻՐՈՓՈՒ , ԿՍՄ ԿՈՎԿԱՍ .

Տոնի իւրազախաց հարաւային արեւելակողմը , Սեւա ծո-
վէն մինչեւ Կասպից ծովը . 200,000 բնակիչ ունի . զլիսա-
ւոր զեւտերն են Մանիչ , Քուչպան , Քոււմա , Թերեք եւ
Եկորչիք . երկիրն ընդհանրապէս դաշտային է , շատ տեղ
անրեր , մանաւանդ հիւսիսակողմը . միայն հարաւակողմն
եւ մեջտեղերը լեռնոտ է . ունի ցորեն , գարի , բրինձ եւ
այլ հասարակ բոյսեր եւ պտուղներ եւ ընտանի կենդա-
նիք : Հիւսիսակողմը Խաւմուխք կրնակին , իսկ արեւմտա-
կողմը՝ Սեւա ծովու Խազախաց երկիրն է :

ՍԹԱԻՐՈՓՈՒ (17,000 բն.) Եկորչիք վտակին մօտ . Կով-
կասու կուսակալութեան այժմուս զլիսաւոր քաղաքն է :

ՄՈՉՏՈՔ (3,000 բն.) Թերեքի վերայ , կաշիի գործա-

բաններ ունի . անուանի է Տարիելի անցքովը ' Կովկաս լե-
րանց մեջ , որով Թիֆլիզու հետ հաղորդակցութիւն ունի :

ՂՂԼԱՐ (10,000 բն.) Թերեքի վերայ , շատ վաճառաշահ
քաղաք եւ ամուր . բնակիչքն ըստ մեծի մասին Հայ եւ
Յոյն են :

ՓԵԱԹԻԿՈՐՄՔ (7,000 բն.) Հանքային ջրերովն անուանի :

ԵՔԱԹԵՐԻՆՈՏԱՐ (8,500 բն.) Բուպանի վերայ , Սեա-
ծովու Խազախաց գլխաւոր քաղաքը . Կատարինէ երկրոր-
դին ժամանակ մեծցաւ , որոյ եւ անունն առաւ :

ԵՅՍՔ (17,000 բն.) Ազախու ծովուն վերայ 1848-ին
շինուած , վաճառաշահ նաւահանգիստ :

ԹԱՄԱՆ , համանուն կղզւոյն մեջ , Կերջի դիմաց :

Չ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ՌՈՒՍԻԱ .

42. ԿՈՒՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԺՏԷՐԻԱՆ .

Տոնի Խազախաց երկրին արեւելակողմը . 300 հազար
բնակիչ ունի . գլխաւոր գետերն են *Վոլկա* , *Ուրալ* եւ *Էժ-
դէն* . երկիրն ընդհանրապէս դաշտային է , միայն արեւ-
մտակողմն եւ հիւսիսային ծայրը լեռնոտ , մեծ մասը ճախ-
ճախուտ եւ խոպան . այսու ամենայնիւ տեսակ տեսակ
պտուղներ ունի եւ այլ օգտակար բոյսեր : Հարաւակողմը
Խալմուխք կրնակին , իսկ հիւսիսակողմը Խըրդըզք ' որոց
գլխաւոր պարապմունքն է անասուն մեծցրնել : Երբեմն
պօրան կոչուած վնասակար քամին կփչէ որ շատ կո-
տորածներ կանէ գաւառիս մեջ :

ԱԺՏԻՐՈԱՆ (35,000 ըն.) Վոլկայի բերանը զինուորական եւ շատ վաճառաշահ նաւահանգիստ, եւ Ռուսիոյ համար գլխաւոր կեդրոն ասիական վաճառուց: Երբեմն Աժտերխանի բարար խաներուն մայրաքաղաքն էր: Արքեպիսկոպոսանիստ է Ռուսաց եւ Հայոց:

43. ԿՈՒՍՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՍԱՐԱԹՈՎ.

Աժտերխանու հիւսիսային արեւմտակողմը . 1,500,000 ընակիչ ունի . գլխաւոր գետերն են Վոլկա եւ Էոզէն . երկիրը մեջտեղերը լեռնոտ է, իսկ արեւմտեան եւ արեւելեան կողմերը դաշտային, ըստ մեծի մասին բարերեր եւ առատութեամբ կրօսցընէ ցորեն եւ բազմատեսակ հասարակ պտուղներ . ունի նաեւ բազմաթիւ ընտանի կենդանիք՝ մանաւանդ հիւսիսակողմը, եւ աղի ճահիճներ, յորոց շատ աղ կելնէ: Հարաւակողմն որ ընդհանրապէս անբեր է՝ Խալմուխք կրնակին թափառական . Կատարինէ Բ շատ գերմանացի գաղթականութիւններ հաստատած է կուսակալութեանս մեջ: Վաճառականութիւնը շատ բանուկ է:

ՍԱՐԱԹՈՎ (61,000 ըն.) Վոլկայի վերայ մեծ եւ շատ վաճառաշահ քաղաք:

ՔԱՄԻՇԻՆ (10,000 ըն.) Վոլկայի վերայ վաճառաշահ քաղաք:

ՅԱՐԻՏԻՆ (7,000 ըն.) Վոլկայի քով, պարտեզներովն անուանի:

ՏՈՒՊՈՎՔԱ, վերինին մօտ Վոլկայի վերայ, Ռուսիոյ շատ զաւառաց հետ մեծ առեւտուր ունի:

ԽՈՒԱԼԻՆՍՔ (13,000 ըն.) եւ ՎՈԼՍՔ (23,000 ըն.) երկուսն եւս Վոլկայի վերայ, մեծ վաճառականութիւն ունին՝ մանաւանդ ցորենի :

44. ԿՈՒՍՍԿԱԼՈՒԹԻՒՆ ՓԵՆՁԱ.

Սարաբովի հիւսիսային արեւմտակողմը . 1,100,000 ըրնակիչ ունի . գլխաւոր գետերն են Սուրա եւ Մոքչա . երկիրը լեռնոտ եւ դաշտային է, եւ բեպետ ընդհանրապէս բարեբեր՝ սակայն ժողովուրդը կերակրելու չափ ցորեն չբուսցրներ . ընտանի կենդանիք սակաւաբիւ են . ճարտարութիւնն ըստ բաւականին ծաղկեալ է, եւ վաճառականութիւնը բանուկ :

ՓԵՆՁԱ (24,000 ըն.) Սուրայի վերայ, վաճառաշահ քաղաք . մօտերն երեւելի բուսարանական պարտեզ ունի :

ՄՈՔՇԱՆՍՔ (10,000 ըն.) Տորենի մեծ առուտուր ունի :

ՔՐԱՍՆՈՍԼՈՊՈՏՍՔ (6,000 ըն.) Երկաթի ձուլարաններ ունի :

45. ԿՈՒՍՍԿԱԼՈՒԹԻՒՆ ՍԱՄԱՐԱ.

Սարաբովի հիւսիսային արեւելակողմը . 900 հազար ընակիչ ունի . գլխաւոր գետերն են Վոլկա եւ Սաւարա . երկիրը բարեբեր է եւ կրուսցրնէ առատ ցորեն եւ այլ օգտակար տունկեր . ընտանի կենդանիք բազմաբիւ են՝ մանաւանդ հարաւակողմը, յորս երեւելի է ոչխարը . վաճառականութիւնը շատ բանուկ է :

ՍԱՄԱՐԱ (24,000 ըն.) Համանուն գետակին Վոլկայի

մեջ քափած տեղը , շատ վաճառաշահ քաղաք , եւ Ռուսիոյ մեջ ցորենի առաջին համրարանոց կհամարուի : Սամարայի մօտ ցորենի մեծ համրարանոցներ են նաեւ *Մաշկա* , *Եքսթերիկսքայա* , *Պաշաքովա* , *Եքսթերիկչրաք* եւ *Փերովսքայա* :

ՊՈՒԿՈՒՐՈՒՍԼԱՆ (5,000 բն.) Սամարայի վերայ . սորա մօտ է Սերկեսք քաղաքն որ ծծմբային ախտաբոյժ ջրեմովն անուանի է :

46. ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՍԻՄՊԻՐՍԻ .

Սարաքովի հիւսիսակողմը . 1,300,000 բնակիչ ունի . գլխաւոր գետերն են *Վոլկա* եւ *Սուրա* . երկիրը շատ բարեբեր է եւ հարուստ . բնակիչքը մեծաւ մասամբ երկրագործութեան կապրապին եւ բազմաբիւ ընտանի կենդանիք կմեծցրնեն , յորս նշանաւոր է ոչխարը . վաճառականութիւնն եւս շատ բանուկ է :

ՍԻՄՊԻՐՍԻ (27,000 բն.) Վոլկայի վերայ վաճառաշահ քաղաք , ցորենի մեծ առեւտուր ունի եւ ջուխայի գործարաններ :

ՍԷՆԿԻԼԷՅ եւ **ՍԻԶՐԱՆ** (17,000 բն.) Վոլկայի վերայ վաճառաշահ քաղաքներ եւ ջուխայի գործարաններ ունին :

ՔՈՐՍՈՒՆ եւ **ԱԼԱԹԻՐ** (8,000 բն.) Սուրայի վերայ , վաճառաշահ քաղաքներ :

47. ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԽԱԶԱՆ .

Սիմպիրսքի հիւսիսակողմը . 1,400,000 բնակիչ ունի ,

մեծ մասը բարար ցեղէ . գլխաւոր գետերն են Վոլկա
եւ Քամա . երկիրը՝ տեղ տեղ լեռնոտ՝ հարաւա-
կողմը միայն բարերէր է . կրուսցընէ առատ ցորեն եւ
այլ օգտակար բոյսեր . ունի անտառներ , երկաթի , պղնձի
եւ ալարաստրի հանքեր , եւ ընտանի կենդանիք . ճար-
տարութեան կողմանէ եւս նշանաւոր է , եւ վաճառակա-
նութիւնը շատ բանուկ :

ԽԱԶԱՆ (56,000) Քաղանքա գետակին Վոլկայի մեջ բա-
փած տեղը . Ռուսիոյ ծաղկեալ , վաճառաշահ եւ ճարտար
քաղաքներէն մեկը . Վոլկայի վերայ երկրորդը անուկ նա-
ւակայքն է . բազմաթիւ գործարաններ ունի կաշիի , ճրա-
գի , ջուխայի . ուսումնական տեղեաց մեջ անուանի է հա-
մալտարանն եւ եկեղեցական շէմարանը :

48. ԿՈՒՍՍԿԱՆՈՒԹԻՒՆ ՎԵԱԹՔԱ .

Խաղանի հիւսիսակողմը . 1,600,000 բնակիչ ունի . գրչ-
խաւոր գետերն են Քամա եւ Վեարքա . երկիրը բարերէր
է , բայց հիւսիսակողմը ցուրտ լինելով՝ բնակչաց պետք
եղածին չափ ցորեն հազիւ կրուսցընէ սովորաբար . ունի
մեծամեծ անտառներ պատուական փայտերու , եւ երկա-
թի , պղնձի եւ ածուխի հանքեր :

ՎԵԱԹՔԱ (15,000 բն .) ՕՐԼՈՎ եւ ՍԼԱՊՈՏՍՔՈՅ . երեքն
եւս Վեարքա գետակին վերայ , վաճառաշահ քաղաքներ :

ԵԼԱՊՈՒԿԱ (5,000 բն .) եւ ՍԱՐԱՓՈՒՎ (7,000 բն .) եր-
կուսն եւս Քամայի վերայ :

49. ԿՈՒՍՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՓԵՐՄ.

Վեաքքայի հիւսիսային արեւելակողմը . 1,500,000 բրնակիջ ունի . գլխաւոր գետերն են Քամա եւ Փեչորա , եւ այլ բազմաթիւ գետակներ . երկիրը շատ տեղ լեռնոտ է . Ուրալ լեռինքը մեջտեղերը կրնկնին ' որով կուսակալութեանս մէկ կտորն Ասիոյ մասն է . ցրտութեան պատճառաւ հողն անմշակելի է շատ տեղ ' թեւ բարերեր . լեռանց մեջ ունի քուարց , բիրեղ , սուտակն , յասպիս , ակն դահանակ , ակատ , կրանիք , օսկի , արծար , պղինձ , փլաթին , մագնիս , մանկանեղ , երկաթ եւ այլ պատուական քարեր եւ մետաղներ , եւս եւ աղամանղ :

ՓԵՐՄ (9,000 բն.) Քամայի վերայ վաճառաշահ քաղաք :

ՔՈՒՆԿՈՒՐ (10,000 բն.) կաշիի գործարաններ ունի :

ԵՔԱԹԵՐԻՆՊՈՒՐԿ (17,000 բն.) Մեծին Պետրոսի շինած քաղաք , անուանի է իւր օսկեղենի եւ արծաթեղենի բազմաթիւ գործարաններովը :

50. ԿՈՒՍՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՅՐԷՆՊՈՒՐԿ.

Փերմի հարաւակողմը . 1,600,000 բնակիջ ունի . գլխաւոր գետերն են Ուրալ , Քամա , Ուֆա եւ Պեչոյ . երկիրը մեծաւ մասամբ լեռնոտ եւ անբեր . լեռներուն մեջ կգրտնուին Փերմի ամեն պատուական քարերն եւ մետաղները , բաց յայնմանէ ունի մեծամեծ քարահատք եւ աղահանք :

ՈՒՅԱ (13,000 բն.) Համանուն գետակի վերայ , կուսակալութեանս այժմոս գլխաւոր քաղաքը :

ԹՐՈՅԻՅԲ , Ուֆայի վերայ , միջին Ասիոյ հետ մեծ վա-

ճանապարհանորթիւն ունի :

ՕՐԷՆՊՈՒՐԿ (13,000 բն.) ամուր բերդաքաղաք :

Է. ՄԵԾ ԻՇԽԱՆՈՒԹԻԻՆ ՖԻՆԼԱՆՏԻՈՅ .

Համանուն ծոցոյն հիւսիսակողմը . 1,650,000 բնակիչ ունի , Ֆինք , Գերմանացիք , Ռուսք , եւ այլն . երկիրը քաղմարիւ ու մեծամեծ ճահիճներով եւ լճերով ծածկած է . գլխաւոր գետերն են *Թոռնեկա* եւ *Ուլեա* . իսկ գլխաւոր լճերն են *Հատոկա*՝ սահմանը , *Ուլեա* , *Ենարա* , *Քուլլա-չեզի* , *Սաննա* եւ այլն : Հողը ցրտութեան պատճառաւ անմշակելի , բայց մեծամեծ անտառներ ունի , եւ պղնձի , երկաթի , կրանիքի եւ այլ մետաղներու առատ հանքեր . ծովեզերքն եւ լճերն առատ ձուկ կելնէ , եւ քաղմարիւ բնտանի կենդանիք կմեծցընեն բնակիչքը :

ԷԵԼՍԻՆԿՖՈՐՍ (17,000 բն.) Ֆինլանտեան ծոցոյն վերայ , Ֆինլանտիոյ մայրաքաղաքն եւ Նիւլանտ կուսակալութեան գլխաւոր քաղաքը , վաճառաշահ նաւահանգիստ . ունի համալսարան մի եւ ամուր բերդ (Սուխպորկ) :

ԹՈՌՆԷԱ , համանուն գետոյն բերանը , փոքրիկ քաղաք :

ՈՒԼԷԱՊՈՐԿ (6,000 բն.) Ուլեայի բերանը , համանուն կուսակալութեան գլխաւոր քաղաքը , վաճառաշահ :

ՎԱՋԱ (3,000 բն.) Պորնեան ծոցոյն վերայ նաւահանգիստ եւ համանուն կուսակալութեան գլխաւոր քաղաքը :

ԱՊՈՅ (15,000 բն.) Ապոպեոնպորկ կուսակալութեան գլխաւոր քաղաքն եւ Պալթիկ ծովու վերայ շատ վաճառաշահ նաւահանգիստ :

ՎԻՊՈՐԿ (5,000 ըն.) Ֆինլանտեան ծոցոյն վերայ համանուն կուսակալութեան գլխաւոր քաղաքն եւ վաճառաշահ նաւահանգիստ : Այս տեղ 1790-ին Ռուսք Շուետաց նաւատորմիդը խորտակեցին :

ՍԱՆՔԹ-ՄԻԽԷԼ եւ ՔՈՒՑՓԻՈՅ, Ֆինլանտիոյ ներսերը, համանուն կուսակալութեանց գլխաւոր քաղաքներն են :

Ը. ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԼԵՂԱՍՏԱՆԻ.

Սահմանն է հիւսիսէն եւ արեւմտքէն Բրուսիա, արեւելքէն Կրոտնոյ եւ Վոլինիա, հարաւէն Կալիցիա : Տարածութիւնն է 1260 բիւրմերը քառակուսի. բնակիչն է 4,500,000 մեծաւ մասամբ Լեհացի կամ Պոլոնիացի հոռմեադաւան : Գլխաւոր գետերն են Նարեւ, Նեմէն, Վիստա, Վարքա, Պուկ, եւ այլն : Երկիրն ընդհանրապէս դաշտային, բարեբեր եւ անտառային, եւ մեծամեծ պարտարոյս արօտներ ունի : Վայրի կենդանեաց մեջ ունի բազմաբիւ վայրենի ձիեր, պիսոն, գոմէշ, արջ, եւ այլն : Հանքերու մեջ ունի երկաթ, սղինձ, ածուխ, մարմարիոն եւ աղ : Ճարտարութիւնն ու վաճառականութիւնը շատ յառաջացեալ չեն :

Լեհաստանը, որ երբեմն հզօր բազաւորութիւն էր, 1772-ին եւ յետոյ 1795-ին սահմանակից երեք տերութեանց մեջ բաժանուեցաւ, եւ մեծագոյն մասը Ռուսաց ընկաւ. բայց Նափոյեոն ազատ տերութիւն մի ձեւացուց գայն. 1815-ին առանձին սահմանադրութեամբ բազաւորութիւն եղաւ, որոյ բազաւորն էր Ռուսաց Կայսրը. 1830-ին Լեհք

ետեւե եղան ազգային ազատութիւնը ձեռք ձգել, բայց յաջորդ տարին նուաճուեցան եւ անով շատ ազատութիւններ կորուսին . 1863-ին սկիզբը դարձեալ ապստամբեցան ազգովին , բայց եւ նորէն նուաճուեցան :

50. ԿՈՒՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՎԱՐՇԱԻ.

ՎԱՐՇԱԻ (161,000 բն.) Վիսթլա գետոյն վերայ, Լեհաստանի թագաւորութեան մայրաքաղաքն, բոլոր Ռուսիոյ երրորդ քաղաքն եւ բազմամարդութեան կողմանէ, իսկ գեղեցկութեան կողմանէ՝ երկրորդը . արուեստից եւ գիտութեանց մեջ եւս Ռուսիոյ առաջիններէն մեկն է, եւ վաճառականութիւնը շատ բանուկ : Ունի անառիկ միջնաբերդ մի, բազմաթիւ գեղեցիկ եկեղեցիներ եւ սրայատներ, եւ քովերը զուարճալի ամարանոցներ :

ՔԱԼԻՇ (12,000 բն.) Փրոսնա գետակի վերայ, ճարտար եւ վաճառաշահ քաղաք : Այս տեղ 1706-ին Ռուսք Շուետաց յաղթեցին, եւ 1813-ին Ռուսիոյ կայսրն եւ Բրուսիոյ թագաւորը միաբանեցան Նափոլեոնի դեմ :

ՉԵՆՍԹՈՒՈՎՈՅ (9,000 բն.) Վարրալի վերայ, հռոմեականաց վանք մի ունի սարսպապատ :

51. ԿՈՒՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՌԱՏՈՄ.

ՌԱՏՈՄ (9,000 բն.) Յորենի մեծ վաճառականութիւն ունի :

ՔԵԼՅԷ, երկարե գործուածքներու գործարաններ ունի :

52. ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԼԻՒՊԼԻՆ.

ԼԻՒՊԼԻՆ (18,000 ըն.) Պիսքրիցա գետակի վերայ, Վարշաւեն յետոյ Լեհաստանի ամենէն երեւելի քաղաքը, ամուր եւ շատ վաճառաշահ. շէնքերուն մէջ նշանաւոր է պալատը: ԻԻԱՆԿՈՐՈՏ, Վիսքրլայի վերայ, եւ ԶԱՄԱՍԹԷ, նշանաւոր քաղաքներ:

53. ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՓԼՈՅՔ.

ՓԼՈՅՔ (12,000 ըն.) Վիսքրլայի վերայ, սորա մօտ է Նովոկեորկեւսք ամուր բերդաքաղաքը:

ՓՈՒԼԹՈՒՍՔ եւ ՕՍԹՐՈԼԵՆՔԱ, նշանաւոր եղան 1831-ին Ռուսաց եւ Լեհաց մէջ եղած պատերազմներովը:

54. ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԱԻԿՈՒՍԹՈՎՈՅ.

ՍՈՒՎԱԼՔԻ (12,000 ըն.) կուսակալութեանս գլխաւոր քաղաքը:

ԱԻԿՈՒՍԹՈՎՈՅ (9,000 ըն.) համանուն ջրանցքին քով, տօնավաճառն անուանի է:

ԿՂԶԻՔ.


Եւրոպայի մէջ Ռուսաց իշխանութեան տակ եղած կրղզիներն են, Սառուցեալ Ովկիանոսին մէջ՝ Սփիցպերկ խումբը Շուետի հիւսիսակողմը, զրեք լայնութեան 80 աստիճանին տակ. օղը սաստիկ ցուրտ է եւ ամառը կարճատեւ. բայց բազմաբիւ մեծամեծ ծովային եւ ցամաքային կենդանիք ունենալով՝ Եւրոպացւոց նաւերը մինչեւ

այն ամայի երկիրները կերթան . գլխաւոր կենդանիքն են կետ , ծովու հորթ , նարուալ , սպիտակ արջ , կապույտ աղուես , եւ այլն : *Նոր Զեմլեա* , նոյնպէս ընդարձակ երկիր , բայց օդը սաստիկ ցուրտ եղածէն անբնակելի . *Վայկուց* եւ *Քալկուշեւ* կղզիք : Պայթիկ ծովուն մէջ *Ալանտ* , *Տակոյ* , *Վորմս* , *Էզեշ* , եւ այլ մանր կղզիք :

ԿԱԼՈՒԱԾՔ ԹՈՒՍԱՅ ԱՐՏԱՔՈՅ ԵՒՐՈՊԱՅ .

Ասիոյ մէջ՝ *Ասիական Ռուսիա* , այսինքն Սիպիր եւ Կովկասու փոխարքայութիւն :

Ամերիկայի մէջ , *Ռուսաց Ամերիկա* , որ է հիւսիսային արեւմտեան ծայրն հանդերձ քովի կղզիներով :



ՇՈՒԵՏ .

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ .— Շուետի երկիրը նախ Սկանդինաւեանք բնակեցան , յետոյ Սուեոնք կամ Սուիոնք եւ Գոթացիք . մինչեւ ժՄ . դարը շատ մանր բազաւորութիւններ կրածանուեր . 1001-ին Ոլոֆ Սքոթքոնուակ Շուետի բազաւորութիւնը հիմնեց եւ քրիստոնեայ եղաւ . 1161-ին Կարոյոս Է Շուետի հետ միացուց Գոթացւոց բազաւորութիւնը , եւ առաջին բազաւոր կոչուեցաւ . Շուետաց եւ Գոթացւոց : 1397-ին Քալմարի դաշնադրութեամբը Շուետի բազաւորութիւնը Տանիմարքայի Մարգարիտա բազուհւոյն անցաւ , որով շատ պատերազմներ ծագեցան

երկու ազգաց մեջ, մինչեւ որ Կուսքաւ Վազա 1521-ին ազատեց Շուեաղ Տանիմարքացոց ձեռքէն : Վազայի ցեղէն երեսելի բազաւոր նստան Կուսքաւ Ստոյֆ 1611-ին, յետոյ Կարոյոս ժԲ անուանի բազաւորը 1697-ին : Նորուեկիան 936-էն ի վեր առանձին բազաւորութիւն էր, Քալմարի դաշնադրութեամբը Տանիմարքայի հետ միացաւ . 1814-ին Տանիմարքայէն զատուեցաւ եւ Շուեաղի հետ միացաւ, որոյ բազաւոր դրուեցաւ Պեռնաստոր գաղղիացի զօրավարը, բայց եւ այնպէս Նորուեկիան իւր առանձին սահմանադրութիւնն ու օրէնքները պահեց : Շուեաղի այժմու բազաւորն է Կարոյոս ժԵ՝ Պեռնաստորի ցեղէն :

Շուեաղի սահմանն է հիւսիսէն՝ Արջային Սառուցեալ ովկիանոս, արեւելքէն՝ Ռուսիա եւ Պալքիկ ծով, հարաւէն՝ Պալքիկ եւ Հիւսիսային ծովերը, արեւմուքէն՝ Սալանտեան ովկիանոս :

Տարածութիւնն է 7,630 բիւրմերը քառակուսի :

Շուեաղը չորս գլխաւոր մասն կրածանուի . բուն Շուեաղ՝ արեւելակողմը, Նորալանտ՝ հիւսիսակողմը, Կորիա կամ Գորացոց երկիր՝ հարաւակողմը, եւ Նորուեկիա՝ արեւմտակողմը :

Շուեաղը դաշտային է, միայն արեւմտակողմը լեռնոտ . իսկ Նորուեկիան սաստիկ լեռնոտ է : Գլխաւոր լեռներն են Քէօլէ կամ Սկաւնդիւնաւեան Արպեայը, որ Նորուեկիան Շուեաղէն կրածանեն եւ որոց բարձրագոյններն են Տոֆրիւն լերինք :

Շուետը բազմաթիւ լճեր , ճահիճներ եւ ծովակներ ունի .
գլխաւոր լճերն են *Վեկեր* , *Վերեր* եւ *Մեղառն* :

Շուետի մեջ բազմաթիւ գետեր կան , բայց շատ նշանա-
ւոր չեն . գլխաւորներն են *Թոռնեա* , *Լուշեա* , *Փիթեա* ,
Անկերման , *Տաշ*՝ որ Պոթնեան ծոցը կթափին . *Մորաշա*՝
որ Վերեր լճէն կելնէ եւ Պալքիկ ծովը կթափի . *Կերա*՝ որ
Վեներ լճէն կելնէ եւ Հիւսիսային ծովը կթափի . *Քշարա*՝
որ Վեներ լիճը կթափի . *Կրովե*՝ որ Նորուեկիոյ ամենա-
մեծ գետն է , Սքակերրաք կթափի :

Յղը հարաւային կողմերը շատ ցուրտ չէ . իսկ հիւսի-
սային ծայրն ու լեռները յաւերժական ձիւնով ծածկած են :

Հողն ընդհանրապէս քարոտ է եւ աւազուտ . միայն
Պալքիկ ծովուն եզերքն ու հարաւային կողմերը բարեբեր
է . լեռներուն մեջ մեծամեծ անտառներ ունի բարձրաբերձ
ծառերու :

Գլխաւոր բերքն է ոսկի , արծաթ , պղինձ , հանքային
ածուխ , եւ մանաւանդ երկաթ , տեսակ տեսակ քարեր եւ
նաւ շինելու առատ փայտ . կենդանեաց մեջ ունի արջ ,
աղուես , գայլ եւ ազնիւ մորթ ունեցող կենդանիք . նմա-
նապէս այժեամն , սկիւռ եւ նապաստակ . ծովերէն առատ
ձուկ կելնէ :

Բնակիչն է 5,100,000 . կրօնքն է լուտերականութիւն .
լեզուն՝ գերմաներենի մեկ տեսակը :

Ճարտարութիւնն ու գիտութիւնք տակաւին ետ մնացած
են . իսկ մետաղներու , փայտերու , մորթերու եւ ձուկի
վաճառականութիւնը շատ բանուկ է :

Տերութեան կառավարութիւնն է սահմանադրական միապետութիւն . նորուեկիան առանձին օրէնքներ ունի՝ բեպետեա մի եւ նոյն թագաւորի իշխանութեան տակ :

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔԻՔ.

ՍԹՈՔԶՈԼՄ (90,000 թն.) Մելաոն լճին մէջ երկու թերակղզիի եւ թազմաթիւ կղզիներու վերայ շինած՝ Շուետի մայրաքաղաքն է, եւ դրից կողմանէ Եւրոպայի գեղեցիկ քաղաքներէն մեկը . ունի թազմաթիւ գեղեցիկ շէնքեր, երեսելի ուսումնարաններ եւ լաւ նաւահանգիստ :

ՈՒՓՍԵԼԱ (10,000 թն.) Անուանի համալսարան ունի, որ Լիննեոս դասատու եղած է. հարուստ գրատուն, տնկաբանութեան պարտեզ, որ Եւրոպայի երեսելիներէն մեկն է, դիտարան եւ գեղեցիկ մայր եկեղեցի : Շուետի նախագահ արքեպիսկոպոսն այստեղ կենտի :

ՏԱՆԵՄՈՐԱ, փոքրիկ քաղաք . սորա մօտ է Շուետի ամենէն հարուստ երկաթահանքը :

ՖԱԼՈՒՆ (5,000 թն.) հին Տալեքարլիա գաւառին մէջ, Շուետի ամենէն մեծ պղնձահանքն ունի :

ՍԱԼԱ կամ ՍԱԼՊԵՐԿ, մեծ արծաթահանք ունի :

ՔԱՐԼՍՔՐՈՆԱ (15,000 թն.) Շուետի առաջին զինուորական նաւահանգիստն ու Եւրոպայի շատ ամուրներէն մեկը :

ԿԵԻԼԷ (10,000 թն.) Պորնեան ծոցոյն վերայ վաճառաշահ նաւահանգիստ :

ՔԱԼՄԱՐ (6,000 թն.) այս քաղաքս եղաւ 1397-ին երեսելի դաշնադրութիւնը :

ԿՈԹԵՄՊՈՒՐԿ (30,000 ըն.) բանուկ նաւահանգիստ, վաճառականութեան կողմանէ Շուետի երկրորդ քաղաքն է:

ՔՐԻՍՏԻԱՆԻԱ (40,000 ըն.) Նորուեկիոյ մայրաքաղաքն է, համանուն խորշին վերայ շատ բանուկ նաւահանգիստ ունի, եւ անուանի համալսարան. Նորուեկիոյ ազգային խորհրդարանն այստեղ կնստի:

ՖՐԻՏՐԻՀՇԹԱԹ եւ ՔՐԻՍՏԻԱՆՍԱՆՏ, Սքակերրաքի վերայ նաւահանգիստներ:

ՊԵՐԿԷՆ (23,000 ըն.) Հիւսիսային ծովուն վերայ վաճառաշահ նաւահանգիստ:

ՏՐՈՆԹՀԷՅՄ (15,000 ըն.) Նորուեկիոյ քաղաւորներն այստեղ կօծուեին:

ՔՈՆԿՍՊԷՐԿ, մեծ արծաթահանք ունի:


ՎԱՐՏՂՈՒՍ, համանուն կղզւոյն մեջ, աշխարհիս ամենէն հիւսիսակողմի ամուր քաղաքն ու նաւահանգիստն է:

Կ Ղ Զ Ի Ք.

Շուետի կղզիներն են. Սառուցեալ ովկիանոսի մեջ *Լոֆոտէն* քաղմաթիւ կղզիներն, որոց մօտ է *Մալսրրէմ* յորձանքը, *Թրուսէն* կղզիք՝ որոց մեկն է *Մակերէօ* կղզին Հիւսիսային գլխով, եւ Նորուեկիոյ ծովեզերքն եղած հազարաւոր կղզիները. Պալքիկ ծովուն մեջ՝ *Էլլանտ* եւ *Կորլանտ*:

ԿԱԼՈՒԱԾՔ ԾՈՒԵՏԱՑ.

Շուետք Եւրոպայէն դուրս միայն Սուրբ Բարբուղիմէոս կղզին ունին որ Փոքր Անթիլեանց մեկն է՝ Ամերիկայի մեջ:



ՏԱՆԻՄԱՐՔԱ.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ, — Հին ժամանակները Կիմ-
բրացիք կրնակեին Տանիմարքայի մեջ, որով երկիրն եւս
Կիմբրեան Քերսոնես (քերակղզի) կոչուեցաւ. յետոյ *Եռք*
կամ *Գոր* եւ *Անգլ* կոչուած ազգերը բնակեցան մեջը :
Տասներորդ դարուն մեջ սկսաւ այս երկիրս ծանօթանալ,
երբոր *Հերոլտ* կամ *Հարալտ* քագաւորը քրիստոնեայ եղաւ :
Այն ժամանակներն եր որ Տանիմարքացիք *Նորմանուացի*
կամ *հիւսիսային մարդիկ* անուամբ սկսան իւրեանց ար-
շաւանքներովը մերձակայ երկիրներուն վերայ սարսափ
ձգել : Իններորդ եւ մետասաներորդ դարերուն մեջ Տանի-
մարքացիք Անգլիոյ տիրեցին, բայց ժԲ դարուն մեջ Գեր-
մանիոյ քագաւորաց իշխանութեան տակ մտան : Երբոր
Գերմանացւոց լուծը բօրափեցին, 1397-ին Քալմարի հրո-
ջակաւոր դաշնադրութեամբը Մարգարիտա քագուհին Տա-
նիմարքայի, Շուետի եւ Նորուեկիոյ տէր ճանաչուեցաւ :
Կուսրաւ Վազա 1525-ին Շուետի մեկ մասը քակեց այն
միաբանութենէն, եւ 1814-ին Նորուեկիան եւս Շուետի
անցաւ, այնպէսով Տանիմարքան առանձին քագաւորու-
թիւն մնաց : Այժմու քագաւորողն է Քրիստիանոս Թ, որ
արժուր նստաւ 1863-ին վերջերը :

Տանիմարքայի սահմանն է հիւսիսէն՝ *Սքալերրարք*, ա-
րեւելքէն՝ *Քարեկար* եւ Պալքիկ ծով, հարաւէն՝ Գերմանիա,
արեւմտքէն՝ Հիւսիսային ծով :

Տարածութիւնն է 560 բիւրակեր քառակուսի :

Տանիմարքան երեք գլխաւոր մասն կրածանուի . ա) Բուն Տանիմարքա՝ որոյ մեջ կհամարուին Պալքիկ ծովուն մեջ ունեցած կղզիներն ու *Եւարլանա* բերակղզին . բ) *Շիւտաիկ*, *Հոլլրէյն* եւ *Կաւենդորիկ* դքսութիւններն՝ որ Գերմանական դաշնակցութեան մասն են , Եւրլանաի հարաւակողմը (*). գ) *Ֆերկոր* եւ *Իսլանտայ* կղզիք :

Երկիրն ընդհանրապէս դաշտաշին է եւ ճանիւններով չի . Եւրլանաի հարաւակողմը , *Հոլլրէյն* եւ *Պալքիկ* ծովուն կղզիները բարեբեր են եւ լաւ մշակուած : Հոլլրէյնի մեջ ընդարձակ արօտներ կան , ուր բնակիչքն ազնիւ տնտակեզներ եւ ձիեր կմեծցընեն :

Իսլանտան լեռնոտ է եւ բազմաբիւ հրաբուխներ ունի , որոց գլխաւորն է *Հեքլա* . ունի նաեւ բազմաբիւ տաք ջրերու աղբիւրներ որ *Կէյզեր* կկոչուին , եւ որոց ամենեկն մեծն երբեմն մինչեւ 50 մերք բարձրութեամբ վեր կցայտնցընէ ջուրը : Իսլանտայի օդը ցուրտ է , եւ երկիրը ոչ ծառ կրուսցընէ ոչ ցորեն , այլ միայն արօտ եւ գետնախնձոր :

Տանիմարքայի օդը բարեխառն է :

Գլխաւոր գետերն են *Էլպու* եւ *Էլյտէր* :

(*) Այս դքսութեանցս համար կուլ ծաղեցաւ Պերմանիայ տէրութեանց եւ Տանիմարքայի սոր թագաւորին մէջ . եւ թէպէտ կարելի չէ տակաւին դիտնալ թէ արդեօք Քրիստիանոս Եններորդի ձեռքը պիտի մտնն թէ ոչ , սակայն մեր տաւջուան պէս Տանիմարքայի մտնն կհամարիմք այս դատաւանքը :

Գլխաւոր բերքն է ազնիւ ձի, եզ, ոջխար եւ այլ ընտանի կենդանիք եւ առատ ձուկ՝ մանաւանդ *րիւկա* կոչուածը : Հանքերու մեջ միայն աղ ունի :

Բնակիչն է 2,600,000 . սոցա լեզուն է գերմաներենին մէկ տեսակը . կրօնքը լուտերականութիւն :

Ուսմունքն ու գիտութիւնքը շատ ծաղկած են Տանիմարքացւոց մեջ, վաճառականութիւնը շատ բանուկ է . ճարտարութիւնը թեւ շատ յառաջացեալ չէ, սակայն եւ այնպէս անուանի են չուխայի եւ յախճապակի գործարանները, ժամացոյցներն, ոսկիէ գործուածքներն, եւ այլն : Տանիմարքացւոց գլխաւոր պարապմունքն է երկրագործութիւն, կենդանի մեծցրնել եւ մանաւանդ ձկնորսութիւն :

Տերութեան կառավարութիւնն է սահմանադրական միապետութիւն :

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔԻՔ.

ՔՈՓԷՆՀԱՎ (140,000 բն.) Տանիմարքայի մայրաքաղաքն է *Ջեչսնտ* եւ *Սմակեր* կղզիներու վերայ, ամուր պարբսպով պատած . գիտութեանց եւ ճարտարութեան կողմանէ Եւրոպայի երեսելի քաղաքներէն մէկն է . *Սուևա* նեղուցին վերայ գեղեցիկ եւ ապահով նաւահանգիստ ունի, եւ համալսարանն անուանի է :

ԱԼԹՈՆԱ (30,000 բն.) Էլպայի աջակողմը, շատ վաճառաշահ քաղաք :

ՎԼԻԻՔՇԹԱԹ (7,000 բն.) Հոլշթեյնի դքսութեան գլխաւոր քաղաքը :

ՔԻԼ (15,000 թն.) վաճառաշահ նաւահանգիստ . ունի
եւ համալսարան մի :

ԱԱԼՊՈՐԿ եւ ՅԼԷՆՍՊՈՐԿ , նաւահանգիստներ :

ՎԻՊՈՐԿ , Եռօրյանտի մեջտեղերը :

ՇԼԵՍՈՒԻԿ (12,000 թն.) ճարտար եւ վաճառաշահ , համ-
անուն դքսութեան գլխաւոր քաղաքը :

ՀԵԼՍԻՆԿԷՅՐ (8,000 թն.) Սոււտի վերայ վաճառաշահ
նաւահանգիստ :

Տանիմարքացոց ձեռքն եղած կղզիներն են , Պալթիկ
ծովուն մեջ՝ *Զեչանտ* , *Ֆիոնիա* , *Պոռնհուլմ* , *Լաչանտ* ,
Ֆարսեր . Ատլանտեան ովկիանոսին մեջ *Իսչանտա* եւ
Ֆերեօր կղզիները :

ԿԱԼՈՒԱՅՔ ՏԱՆԻՄԱՐՔԱՑԻՈՑ .

Ամերիկայի մեջ՝ *Կրեօնչանտ* , եւ Փոքր Անթիլեանց մեջ՝
Սուրբ Խաչ , *Սուրբ Թովմաս* եւ *Սուրբ Յովնանեկա* կղզիք :

Իսկ Ասիոյ եւ Ափրիկէի մեջ ունեցած գաղթականու-
թիւններն Անգղիացոց ծախեցին :



ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԿՂԶԻՔ .

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ . — Անգղիան հին ժամանակ-
ները *Բրիտանիա* կկոչուէր , Սկովտիան՝ *Կալեդոնիա* , եւ
Իռլանտան՝ *Հիրենիա* : Հռոմայեցիք Քրիստոսէ յետոյ ա-
ռաջին դարուն մեջ բոլորովին տիրեցին այս երկրիս . հին-

գերորդ դարուն մեջ երբոր Հռոմայեցիք տկարանալով բողոքին Բրիտանիան, Բրիտանացիք Սկովտիոյ *Պիկտ* կոչուած ազգէն նեղութիւն կրելով՝ *Սեզլ* եւ *Սաքսոն* ազգերը Գերմանիայէն օգնութեան կանչեցին, որ եկան բոլոր երկրին տիրեցին եւ եօթը բազաւորութիւն հաստատեցին մեջը : Բրիտանացիք Անգլոսաքսոնաց ձեռքէն ազատ մնալու համար, արեւմտեան կողմի լեռները փախան որ այժմ *Կալլէսի* կամ *Ուէշսի* երկիր կկոչուի . մեկ մասն եւս Գաղղիոյ հիւսիսային արեւմտակողմն անցան, եւ այն երկիրը Բրիտանիա կոչեցին : Իններորդ դարուն սկիզբներն եօթը բազաւորութիւնները միացան մեկ բազաւորութիւն կազմեցին : Մետասաներորդ դարուն մեջ Գաղղիայէն ելած *Նորմանացիք* Գուլիելմոսի առաջնորդութեամբ Անգլիոյ տիրեցին :

Իռլանտան 1172-ին սկսաւ Անգլիացոց իշխանութեան տակ մտնել . Կալլէսի երկիրը 1283-ին Անգլիոյ հետ միացաւ, եւ այն ժամանակէն Անգլիոյ բազաւորութեան ժառանգը *Կալլէսի իշխան* պատուանունն ունի : 1603-ին Սկովտիոյ Յակոբ Սթուարթ բազաւորն Անգլիոյ արոճն ելաւ, անով Սկովտիան եւս Անգլիոյ հետ միացաւ : 1649-ին բազաւորութիւնը վերցաւ, եւ 1660-ին նորէն հաստատուեցան Սթուարթեանք, մինչեւ որ 1688-ին դարձեալ ընկան, եւ Օրանմի դոքսը Գուլիելմոս Գ Անգլիոյ բազաւոր նշատաւ : *Օրանմի* ցեղն եւս ընկնեցէն լեառոյ *Հաւնովրի* ցեղն արոճը ելաւ, յորմէ Անգլիան հինգ բազաւոր ունեցաւ, որոց վերջինն է այժմու Վիկտորիա բազաւորն որ 1837-էն

իվեր կրագատորէ : Այժմ երկու մեծ կղզիները քովի մանր կղզիներով միատեղ կկոչուին *Միացեալ քաղաւորութիւն* Մեծին Բրիտանիոյ եւ Իռլանտայի, որ աշխարհիս ամեն մասերուն մեջ ընդարձակ եւ հարուստ երկիրներ ունի :

Բրիտանական կղզիներն Եւրոպայի հիւսիսային արեւմտակողմը կընկնին, Ատլանտեան ովկիանոսով եւ Հիւսիսային ու Լամանշ ծովերով պատած :

Տարածութիւնն է 3,100 քիւրմերը քառակուսի :

Բրիտանական կղզիներն հինգ գլխաւոր մասն կրածանուին . *քուէ Անգղիա*՝ որ 40 կոմսութենէ կձեւանայ, *Կալէսի իշխանութիւնն*՝ որ 12 կոմսութիւն կրածանուի, *Սկոթլանտ*՝ որ 33 կոմսութենէ ձեւացած է, *Իռլանտա*՝ որ 32 կոմսութիւն ունի, եւ փոքր կղզիք :

Անգղիան դաշտային երկիր է . միայն արեւմտեան եւ հիւսիսային կողմերը փոքր լեռներ ունի . Սկոթլանտ լեռնոտ է եւ բազմաթիւ լճեր ունի . իսկ Իռլանտան տափարակ դաշտ մի է՝ չորս կողմէն լեռներով պատած, եւ բազմաթիւ լճեր, լճակներ եւ ճահիճներ ունի . հիւսիսային արեւելակողմը ծովուն մեջ կերկննայ *Սար Հսկայից* կոչուած լեռն որ իրարու վերայ դիզած պազալթեան սիւներէ ձեւացած է եւ գարմանայի երեւոյթ ունի : Հերբիդեան, Որկանդեան եւ Շեքլքնտ կղզիներն ընդհանրապէս լեռնոտ եւ ապուածուտ են :

Բրիտանիան եւ Իռլանտան բազմաթիւ գետեր եւ գետակներ ունին, որոց գլխաւորներն իրարու հետ միանալով՝ լայն բերնով մի ծովը կրափին՝ *ծոց* կամ *խորշ* մի

ձեռացրնելով : Մեկ երկիր չկայ որ Բրիտանական կղզեաց պէս լաւ նաւահանգիստներ ունենայ թէ ծովեզերքն եւ թէ գետափուսքը :

Գլխաւոր ծոցերն եւ խորշերն են , *Ուուշ* , *Ֆորթ* , *Թէյ* եւ *Մըրրէ* ' Հիւսիսային ծովէն ձեռացած . Պրիսթլի ջրանցքը , *Բարտիկեն* եւ *Սոյուէյ* ' Ատլանտեան ովկիանոսէն եւ Իռլանտայի ծովէն ձեռացած :

Բրիտանական կղզեաց գետերը թէեւ երկայն ընթացք չունին , բայց խոր են եւ նաւարկելի . գլխաւորներն են *Թեմզ* կամ *Թամիզ* ' որ ամենէն մեծն է , *Հըմպրը* ' որ *Թրէնթ* եւ *Փոքր Ուզ* գետերէ կձեռանայ , Հիւսիսային ծով կթափին . Ատլանտեան ովկիանոս թափուողներն են *Սեյլենն* եւ *Շէնչն* ' որ Իռլանտայի ամենէն մեծ գետն է . Իռլանտայի ծովը կթափի *Մերսէյ* :

Հողը բարեբեր է եւ լաւ մշակուած , բայց ժողովրդեան բազմութիւնը կերակրելու չափ բերք չբուսցրներ :

Օդը ցուրտ է եւ խոնաւ ' բայց առողջ , եւ ստեպ մառախուղ կլինի :

Բրիտանիան հարուստ հանքեր ունի ածխի , երկաթի , կապարի , անագի եւ պղնձի : Այս երկիրներուս մեջ պարտաբոյս արօտներ կգտնուին , առատ ցորեն , բայց խաղողն յառաջ չգար : Իռլանտայի մեջ գետնախնձորն աղքատ եւ բազմաթիւ ժողովրդեան միակ կերակուրն է : Ընտանի կենդանիներն ազնիւ են եւ մեծ , մանաւանդ ձին որ բոլոր Եւրոպայի մեջ առաջին ազնիւ տեսակն է . թէեւ անտառը սակաւ է Բրիտանական կղզեաց մեջ , բայց ունի

բազմաթիւ որսի կենդանիք . իններորդ դարէն իվեր գայլ
ամենեւին չգտնուիր մեջը :

Բնակիչն է 29,000,000 Անգղիացի , ծանրակաց , հնա-
րագետ , գործունեայ , վայելչալիւս եւ ընդհանրապէս բար-
ձրահասակ մարդիկ : Կրօնքն է Բրիտանիոյ մեջ բողոքակա-
նութիւն , իսկ Իռլանտայի մեջ հռոմեակաւանութիւն : Լե-
զունն է անգղիարէն , որ կեղտաց , Սաքսոններու եւ Լատի-
նացւոց լեզուներէն յառաջ եկած է :

Վաճառականութիւնն Անգղիացւոց մեջ այնպէս բանուկ
է որ նոցա նման դեռ մեկ ազգի մեջ եղած չէ . ճարտա-
րութիւնն վերջին կատարելութեան հասած է : Անգղիացիք
իւրեանց անհամար նաւերովն ու շոգենաւերով աշխարհիս
ամեն ծովերը բռնած են , եւ ամենայն տեղ կտանին կվա-
ճառեն հանքային ածուխ , բամբակ , բրդէ , մետաքսէ եւ
վշէ բազմատեսակ եւ ազնիւ գործուածքներ , բանուած մե-
տաղներ , մեքենաներ , եւ այլն : Անգղիացւոց պողպատն
ամենէն ընտիրն է :

Անգղիան բազմաթիւ եւ գեղեցիկ ջրանցքներ ունի որ
գետերն իրարու կամ ծովերու հետ կմիացընեն ' վաճառա-
կանութիւնը դիւրացընելու համար . նմանապէս ամեն կող-
մերն երկաթուղիներ կան որ վաճառաշահ քաղաքներն
իրարու հետ կմիացընեն :

Գիտութիւններն եւս շատ յառաջ գնացած են Բրիտա-
նական կղզեաց մեջ , այնպէս որ ամենայն կողմանէ Անգղի-
ացիք աշխարհիս առաջին կարգի ազգերէն մեկը լինելն

զատ, վաճառականութեան եւ ծովային զօրութեան կողմանէ միւս ամեն ազգերէն զերազանց են :

Տերութեան կառավարութիւնն է սահմանադրական միակետութիւն :

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՔ.

ԱՆՔՂԻՍ. ԵՒ ԵՐԿԻՐ ԿԱԼԼԷՍԻ.

ԼՈՆՏՈՆ կամ ԼՇՆՏՐՆ կամ ԼՈՆՏՐԱ (2,800,000 բն.) Թեմզ գետոյն վերայ, Բրիտանական կղզեաց մայրաքաղաքն եւ բոլոր աշխարհիս ամենէն ընդարձակ, բազմամարդ, վաճառաշահ եւ բանուկ նաւահանգիստ ունեցող քաղաքն է : Լոնտրան երեք մասն բաժանուած է. Սիրի՝ որ քաղաքին ամենահին մասն է եւ վաճառականութեան տեղն է. Վեսթմինսթըր՝ գետոյն ձախակողմը Լոնտրայի ամենէն գեղեցիկ մասն է, եւ այստեղ կրնակին պալատականք եւ ազնուականք. եւ Սաութհորք՝ գետոյն աջակողմը, գործարանաց եւ ձեռագործներու տեղն է : Նշանաւոր շէնքերն են Սուրբ Պօղոս ընդարձակ եւ փառաւոր մայր եկեղեցին որ բողոքականաց ամենէն մեծ տաճարն է աշխարհիս վերայ, Վեսթմինսթըր եկեղեցին յորում կրաղուին բազաւորազունք եւ երեսելի մարդիկ. Սուրբ Ստեփանոս, Լոնտրայի աշտարակը, Սեն Ճէյմս կամ Սուրբ Յակոբ բազաւորական պալատը, Խորհրդարանի պալատը, եւ այլ բազմաթիւ պալատներ եւ գեղեցիկ շէնքեր, հրապարակներ, յիշատակարաններ, եւ այլն : Գետոյն վերայ ինն հոյակապ

կամուրջներ, ձգուած են, եւ գետոյն տակէն գետնափոր ճանապարհ մի կայ՝ մէկ եզերքէն միւսն անցնելու՝ որ *Թընել* կկոչուի: Նաւահանգստին մեջ երբեմն հազար նաւէն աւելի կտեսնուի: Գիտութեանց եւ ճարտարութեան կողմանէ եւս աշխարհիս առաջին քաղաքներէն մէկն է: Սնուանի են մանաւանդ մետաքսեղէն գործուածքները: Ունի բազմաքիւ բարձր գիտութեանց ուսումնարաններ, համալսարան, ամէն տեսակ ռուսումնական եւ մարդասիրական ընկերութիւններ, բազմաքիւ հնութեանց բանգարաններ, հարուստ մատենադարան, պարտեզ տնկարանութեան, եւ այլն, եւ այլն:

ԿՐԻՆՈՒԻՉ կամ **ԿՐԻՆԻՉ** (60,000 բն.) Լոնտրայի մօտ, աստեղարաշխական դիտարանը շատ երեսելի է:

ԼԵՎՐՓՈՒԼ (443,000 բն.) Մերսէյ գետոյն բերանը, Լոնտրայէն յետոյ աշխարհիս ամենէն վաճառաշահ քաղաքն է. անուանի են շոգեշարժ մեքենաներու գործարաններն ու շոգենաւերը. բուսարանական պարտեզն Անգղիոյ ամենէն երեսելին է:

ՄԷՆՉՍԹԵՐ (400,000 բն.) Անգղիոյ առաջին քաղաքն է ձեռագործներու կողմանէ, եւ բամբակեղենի մեծ վաճառականութիւն ունի: Այս քաղաքիս մեջ հայազգի վաճառականք եւս կան որ ունին այժմ նորաշէն եկեղեցի:

ՊՐԻՍԹԵՐԼ (155,000 բն.) համանուն ծոցոյն վերայ շատ բանուկ նաւահանգիստ ունի, եւ շատ ճարտար եւ վաճառաշահ քաղաք է. ունի համալսարան մի, եւ քովերը հանքային տաք ջրեր կգտնուին:

ՊԸՐՄԻՆԿԷՄ (295,000 ըն.) մեծ եւ շատ ճարտար քաղաք, բազմաթիւ ջրանցքներով եւ երկաթուղիներով միւս գլխաւոր քաղաքաց հետ կմիանայ. գէնքի եւ ամենայն տեսակ մետաղեայ գործուածքներու կողմանէ Անգղիոյ առաջին քաղաքն է :

ՆԻԻՔԱՍԼ (75,000 ըն.) քովերն եւրոպայի ամենէն մեծ ածխահանքն ունի, որով եւ ածուխի մեծ վաճառականութիւն կանէ :

ՍԸՆՏԸՐԼԷՆՏ (58,000 ըն.) եւ ՀՈՒԼ (52,000 ըն.) Հիւսիսային ծովուն վերայ շատ վաճառաշահ նաւահանգիստներ :

ՆՈՐՈՒԻԶ կամ ՆՈՐԻՆ (63,000 ըն.) բրդե գործուածքներն անուանի են. ունի գեղեցիկ մայր եկեղեցի :

ՕՔՍՖՈՐՏ (30,000 ըն.) եւ ՔԷՄՊՐԻՃ (25,000 ըն.) շատ անուանի համալսարաններ ունին :

ՔԷՆԹԸՐՊԸՐԻ (15,000 ըն.) երբեմն մեծ եւ երեսելի քաղաք էր. գեղեցիկ մայր եկեղեցի ունի, եւ Բրիտանիոյ նախագահ արքեպիսկոպոսն այս քաղաքս կնստի :

ՏՈՒՎՐ (25,000 ըն.) ՊՐԱՅԹԸՆ (50,000 ըն.) եւ ՍՈՒԹԱՄՓԹԸՆ (28,000 ըն.), Լամանշ ծովուն վերայ բանուկ նաւահանգիստներ են : Ելեկտրական հեռագիր մի կայ ծովու տակէն *Տուլր* եւ *Քալէ* քաղաքներուն մեջ, որով Փարիզը Լոնտոնի հետ կմիանայ :

ՓՈՐԹՍՄՈՒԹ կամ ՓՈՐԹՄԱԻԹ (64,000 ըն.) եւ ՓԼԻՄՈՒԹ (80,000 ըն.) ամուր բերդաքաղաքներ եւ գինուորական մեծ նաւահանգիստներ Լամանշի վերայ : Փլիմութի հարաւակողմը Էտտիսբոնի փարոսը կայ շինուած ալիքներու մեջ :

ՇԷՖՖԻԼՏ (85,000 ըն.) ճարտար քաղաք, պողպատե գործուածքներովն անուանի :

ՊՈԼԹԸՆ (100,000 ըն.), ՀԷԼԻՖԱՅՍ (110,000 ըն.) եւ ԼԻՏՍ (180,000 ըն.) մեծամեծ քաղաքներ, բրդէ եւ բամբակէ գործուածքներով անուանի :

ԵՈՐՔ (38,000 ըն.) ընկած քաղաք. մայր եկեղեցին գեղեցիկ է :

ՊԱԹ (70,000 ըն.) հանքային ջրերովն անուանի :

ՆՈԹԻՆԿԷՄ (54,000 ըն.) գեղեցիկ քաղաք. անուանի են բամբակեղեն եւ մետաքսեղեն գործուածքները :

ԼԷՅՍԹԸՐ (50,000 ըն.) բրդի գուրպաներու մեծ գործարաններ ունի :

ՎԻՆՏՁՈՐ (10,000 ըն.) փոքրիկ՝ բայց զուարճալի քաղաք թեմզ գետոյն վերայ, ամարանոց էՍնգղիոյ բազաւորաց :

Ս Կ Ո Վ Տ Ի Ա.

ԷՏԻՄՊՈՒԼԿ (168,000 ըն.) Ֆորթի ծոցոյն մօտ Սկովտիոյ մայրաքաղաքն է, շատ ճարտար եւ վաճառաշահ . անուանի է համալսարանը :

ՎԷՍՔՈՅ (394,000 ըն.) Սկովտիոյ ամենէն մեծ եւ ճարտար քաղաքն է, ունի համալսարան մի .

ԿՐԻՆԸՔ (36,000 ըն.), թեյ ծոցին վերայ, եւ ԷՊԸՐՏԻՆ (70,000 ըն.) բանուկ եւ վաճառաշահ նաւահանգիստներ :

ԼԷՅԹ (30,000 րն.) Ֆորթի ծոցոյն վերայ, Էտիմպուրկի նաւահանգիստն է:

Ի Ռ Լ Ա Ն Տ Ա .

ՏՈՒՊԼԻՆ կամ ՏԸՊԼԻՆ (250,000 րն.) Իռլանտայի մայրաքաղաքն է, շատ ճարտար եւ վաճառաշահ, ունի ընդարձակ նաւահանգիստ, անուանի է համալսարանը:

ՊԷԼՖԷՍԹ (56,000 րն.) գեղեցիկ քաղաք եւ վաճառաշահ նաւահանգիստ:

ԼԸՆՏԸՆՏԷՐԻ (20,000 րն.) եւ ԿՈԼՈՒԷՅ (36,000 րն.), վաճառաշահ նաւահանգիստներ:

ԼԻՄԵՐԻՔ (70,000 րն.) Շենքն գետոյն վերայ մեծ եւ գեղեցիկ քաղաք եւ շատ վաճառաշահ նաւահանգիստ:

ՔՈՐՔ (100,000 րն.) մեծութեան, ճարտարութեան եւ վաճառականութեան կողմանէ Իռլանտայի երկրորդ քաղաքն է. նաւահանգիստը Եւրոպայի գեղեցիկներէն մէկն է:

Փ Ո Ք Ր Կ Ղ Զ Ի Ք .

Լամանշ ծովուն մեջ *Ուայր*, *ձերսէյ*, *Կեռնըսէյ* եւ *Օրիւնի*. Ովկիանոսի մեջ *Սորլիւնկեան կղզիք*, անազի հանքերովն անուանի, *Որկադեան*, *Հերրիդեան* եւ *Շերլընտ կղզիք*. Իռլանտայի ծովուն մեջ *Մեն* եւ *Էնկլըսի*. Հիւսիսս յին ծովուն մեջ *Հելկոտլանտ*. Միջերկրականի մեջ *Մայրա*: Ճիպրալըսը բերդն Անգղիացւոց ձեռքն է Սպանիոյ հարաւային ծայրը:

ԿԱԼՈՒԱԾՔ ԱՆԳՂԻԱՅԻՈՑ.

Ասիոյ մեջ . *Ատէն*՝ Արաբիոյ ծովեզերքը , *Փէրիւմ* կղզին՝ Պապիւմանտեպի նեղուցին մեջ . Հնդկաստանի մեծագոյն մասը . *Սէյլան* կղզին , Հնդկաչինոս մեկ մասը , *Հոնկոնկ* կղզին՝ Չինոս մեջ :

Ափրիկէի մեջ . *Սենեկաւսիոյ* գաղթականութիւնը , *Սիւերա Լեոնէ* ծովեզրն եւ *Ոսկւոյ* ծովեզերին մեկ մասը՝ Հիւսիսային Կուինեոյ մեջ , *Ֆլենսանտոյ* Փոյ , *Համբարձման* եւ *Սուրբ Հեղինէ* կղզիները , *Բարեյուտոյ Գլխոյն* գաղթականութիւնը , *Փորթ Նաբալ* , *Սէյլեւեան* կղզիք եւ *Մօրիկ* կղզին :

Ամերիկայի մեջ . Ա, հիւսիսային անգղիական Ամերիկա՝ այսինքն Նոր երկիր , *Պրըրուն* գլխոյ կղզիք , Եղուարդ իշխանի կղզիք , Նոր Սկոտիա , Նոր Պրունսուիք , *Քաւնտա*՝ Հուտսընի ծովեզերքը եւ *Արչային երկիրք* : Բ, Արեւմտեան Հնդկաստան , այսինքն *Պերմուտեանք* , *Լուրայեանք* , *Եամայիքա* , Փոքր Անքիլեանց մեծ մասը , անգղիական *Կուիանա* եւ *Պաշիգի* գաղթականութիւնը : Գ, *Ֆարլլենտ* կղզիք կամ *Երկիր Հրոյ* :

Ովկիանիոյ մեջ . *Հասյուան* կղզին , Նոր Հոլանտայի ծովեզերքին մեծ մասը , *Թաւանիա* , Նոր *Չիլանտա* եւ *Ֆիճի* կղզիք :

Այս բոլոր երկիրներուս մեջ Անգղիացիք իւրեանց իշխանութեան տակ ունին իբր 300,000,000 բնակիչ , որով Չինաստանէն յետոյ աշխարհիս ամենէն բազմամարդ տերութիւնն է Անգղիան :



Գ Ա Ղ Ղ Ի Ա .

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — Շատ հին ժամանակները
Կեղտ ազգը կրնակեր Գաղղիոյ մէջ, ուստի յառաջ եկած
են հին Գաղղիացիք : Քրիստոսէ 50 տարի յառաջ Յուլիոս
Կեսար Հռոմայեցին բոլոր Գաղղիոյ տիրեց : Հինգերորդ
դարուն մէջ Գաղղիան այլ եւ այլ բարբարոս ազգերէ
ոտնակոխ եղաւ, որոց մէջէն *Վիսիգորք* հարաւային կող-
մերը բազաւորութիւն մի հաստատեցին, եւ *Պուրկիկեանք*
արեւելակողմը բնակեցան : *Փրակկք* Գերմանիայէն ելած
Գաղղիա արշաւեցին, եւ սոցա *Կլովիս* բազաւորը Մերո-
վեան ցեղէն՝ բոլոր Գաղղիոյ տիրեց եւ քրիստոնեայ եղաւ
500-ին ժամանակները : Կլովիսին յաջորդները բոյլ եւ
տկար բազաւորներ եղան, անոր համար *Պեպկեոս* Կար-
ճահասակ արքունի հազարապետը Գաղղիոյ բազաւոր նըս-
տաւ 752-ին, որով սկսաւ *Կարլովկեան* ցեղին բազա-
ւորութիւնը : Պեպկեոսին որդին *Մեծն Կարոլոս* տիրեց
Իտալիոյ, *Գերմանիոյ* եւ *Սպանիոյ* մէջ մինչեւ *Էսթրոյ*
գետը, եւ Հռովմայ մէջ կայսր արեւմտից օծուեցաւ 800-ին :
Սորա յաջորդաց ժամանակ խոռվութիւններ ելնելով՝
Գերմանիան եւ Իտալիան զատուեցան Գաղղիայէն . 987-ին

Հուլիսն Քափեք՝ Քափեքեան ցեղին բազաւորութիւնն սկսաւ, որ մինչեւ մեր օրերը հասաւ :

Հնգետասաներորդ դարուն սկիզբներն Անգղիացիք զըրեք բոլոր Գաղղիոյ տիրած էին. բայց Յովհաննէս Տարք աղջիկն ազատեց իւր հայրենիքը : Տրսնտուա Ա. 1515-ին Գաղղիոյ մեջ սկսաւ գիտութիւններն ու գեղարուեստները ծաղկեցընել. բայց Պերիկլէսի եւ Օգոստոսի փառաց մասնակից լինելու պատիւը Մեծին Լուդովիկոսի պահուած էր, որ 72 տարուան բազաւորութեանը ժամանակ (1643—1715) մեծամեծ յաղթութիւններ անելէն զատ՝ Գաղղիոյ մեջ մեծ պաշտպանութիւն արաւ գեղարուեստից, գիտութեանց եւ գիտնական անձանց, այնպէս որ նորա բազաւորութիւնը Գաղղիացոց մատենագրութեան ոսկեղարն եղաւ : 1789-ին մեծ յեղափոխութիւնն սկսաւ Գաղղիոյ մեջ, բազաւորութիւնը վերցաւ եւ հասարակապետութիւն հաստատուեցաւ. Պոնափարք զինուորն իւր քաջութեամբն եւ մանաւանդ պատերազմական մեծ հանձարովն մեծ զօրապետի աստիճանն հասաւ եւ մինչեւ առաջին հիւպատոս դրուեցաւ. 1804-ին հասարակապետութիւնը վերուց եւ կայսր նստաւ՝ անունը Նափոլէոն Ա. դնելով : Տասնեամեկ տարուան կայսերութեանը ժամանակ բոլոր Եւրոպան սարսափեցընելէն յետոյ, վերջապէս զաշնակիցք ստիպեցին զինքն որ աթոռէն հրաժարի, եւ 1815-ին նորէն բազաւորութիւն հաստատուեցաւ Գաղղիոյ մեջ. 1848-ին Գաղղիացիք վերուցին բազաւորութիւնն ու հասարակապետութիւն հաստատեցին, մինչեւ որ Լուի Նափոլէոն

զաներեցր 1852-ին կայսր դրոեցաւ *Նախորհուն Գ* անուամբ որ մինչեւ ցայսօր կրագաւորէ : Այս կայսեր ժամանակ Գաղղիոյ հետ միացաւ *Սաւոյա* երկիրն եւ *Նիցցա* քաղաքն՝ Իտալիոյ մէջ :

Գաղղիոյ սահմանն է հիւսիսէն *Լամանչ* ծովը , *Քաշէի* նեղուցն եւ *Պելնիա* . արեւելքէն Գերմանական դաշնակցութիւն , *Ղուիցերի* եւ *Իտալիա* . հարաւէն Միջերկրական ծով եւ *Սպանիա* . արեւմտքէն *Ատլանտեան* ովկիանոս :

Տարածութիւնն է 5,475 բիւրմերը քառակուսի :

Գաղղիան մինչեւ 1790 տարին երեսուներեք գաւառ կամ կուսակալութիւն կրածանուէր , այժմ 89 բաժին բաժանուած է , եւ իւրաքանչիւրը մէջի գետոյն , լեռան , կամ այլ յատկութեան մի անունն ունի :

Երեսուներեք գաւառքն մայրաքաղաքով եւ այժմու բաժիններով ստրա են .

Թ.	ԳԱԻԱՌՔ.	ՄԱՅՐԱՔԱՂԱՔ.	Բ Ա Ժ Ի Ն Ք .
	6 Հիւսիսակողմն.		17 Հիւսիսակողմն.
1.	Նորմանտիա.	Ռուան.	1 Ստորին Սեն, 2 Էօր, 3 Քալվատոս, 4 Մանշ,
2.	Փիքարտիա.	Ամիեն.	5 Օոն :
3.	Արրուա.	Աուա.	6 Սոմ :
4.	Ֆլանտր.	Լիլ.	7 Փա տը Քալե, կամ Քալեի անցք :
5.	Գաղղիոյ կղզի.	Փարիզ.	8 Նոռ. (Հիւսիս) :
6.	Շամփայն.	Թրուա.	9 Սեն, 10 Սեն եւ Ռուազ, 11 Սեն եւ Մառն, 12 Էնն, 13 Ռուազ :
7.	Լորեն.	Նանսի.	14 Չալ, 15 Վերին Մառն, 16 Մառն, 17 Աուտեն :
8.	Ալյազիա.	Սքրասպուրկ.	18 Արեւելակողմն. 18 Մեօրթ, 19 Վոմ, 20 Մեօզ, 21 Մոզել : 22 Ստորին Հուենոս, 23 Վերին Հուենոս :

9.	Ֆրանշքոնքե.	Պրզանսոն.	24 Տու, 25 Վերին Սօն, 26 Ժիւրա :
10.	Պուրկոյն.	Տիժոն.	27 Բոր աօր, 28 Իօն, 29 Սօն եւ Լուառ, 30 Էն :
11.	Լիոնե.	Լիոն.	31 Ռոն, 32 Լուառ :
12.	Տօֆինե.	Կրքնոպլ.	33 Իզեր, 34 Տրոմ, 35 Վերին Ալպեայք :
	6 Հարաւակողմն.		23 Հարաւակողմն.
13.	Փոովանս.	Էս.	36 Ստորին Ալպեայք, 37 Վառ, 38 Բերանք Ռոնի :
14.	Լանկտոք.	Թուլուգ.	29 Վերին Կարոն, 40 Թառն, 41 Օտ, 42 Էրոյ, 43 Կար, 44 Լոզեր, 45 Վերին Լուառ, 46 Առտեշ :
15.	Ռուսիլիոն.	Փերփինեան.	47 Արեւելեան Պիրենեանք :
16.	Կոմսոքիւն Ֆուա.	Ֆուա.	48 Արիեժ :
17.	Պեառն.	Փոյ.	49 Ստորին Պիրենեանք :
18.	Կիլեն եւ Կասքօյն.	Պորտոյ.	50 Ժիրոնտ, 51 Տորաօյն, 52 Լոր եւ Կարոն, 53 Լոր, 54 Ասերոն, 55 Թառն եւ Կարոն, 56 Լաւա, 57 Ժեր, 58 Վերին Պիրենեանք :

6 Արեւմտակողմն.	13 Արեւմտակողմն.
19. Անթրոնի եւ Ան- կուսումն.	Սենք եւ Անկուսումն.
20. Փուարոս.	Փուարիկ.
21. Օնիս.	Լառոշեկ.
22. Պրրբայն.	Ռեն.
23. Անժոս.	Անժոն.
24. Մեն եւ Փերշ.	Լըման.
8 Մեջտեղերն.	13 Մեջտեղերն.
25. Օռլեանէ.	72 Լոնարե, 73 Լոնառ. եւ Շեր, 74 Եօր եւ Լոնառ.:
26. Նիվեոնէ.	75 Նիվեր:
27. Պուրպուրէ.	76 Ալլիէ:
28. Օվեոն.	77 Փիլիլի տը Տոմ, 78 Բանբալ:
60 Վիեն, 61 Երկոս Սեվր, 62 Վանոն:	
63 Ստորին Շարան:	
64 Իլ եւ Վիլեն, 65 Ստորին Լոնառ, 66 Մոր- պիան, 67 Ֆինիսեր, 68 Հիւսիսային ափուսեր:	
69 Մեն եւ Լոնառ.:	
70 Սարր, 71 Մայեն:	

29.	Լիմուզեն.	Լիմոժ.	79 Վերին վիեն, 80 Բորեզ :
30.	Մարշ.	Կերե.	81 Բրեոզ :
31.	Պերրի.	Պուրժ.	82 Շեր, 83 Էնար :
32.	Թուրեն.	Թուր.	84 Էնար եւ Լուառ. :
	<i>1 Նովու մեջ.</i>		<i>1 Նովու մեջ.</i>
33.	Բորսիբա.	Պասիա.	85 Բորսիբա :
	1790-են մինչեւ. ցայժմ երեք զաւառք աւելցան Գաղղիոյ, որ են նոր բաժիններով.		
1.	Կոմսոքիւն Աւի-նիոնի.	Աւինիոն.	86 Վոքլիսգ :
2.	Սալոյա.	Շամպերի.	87 Սալոյա, 88 Վերին Սալուա :
3.	Կոմսոքիւն Նից-գալի.	Նիցցա կամ Նիս.	89 Նովեգերեայ Ալպեայք :

Գաղղիոյ մեջտեղերը , հարաւակողմն եւ արեւելակողմը լեռնոտ է , մնացած կողմերն ընդհանրապէս դաշտային : Գլխաւոր լերինքն են . *Պիրենեանք*՝ որոց այլ եւ այլ ճիւղերն են *Օվիոն* եւ *Սեվիե* , եւ *Ալպեանք*՝ որոց այլ եւ այլ ճիւղերն են *ժիւրա* , *Վօժ* եւ *Արտեև Լերինք* :

Գաղղիան բազմաբիւ գետեր ունի որ գրեթէ չորս կողմը պատող ծովերը կրափին . գլխաւորներն են *Ռոն* կամ *Հոտդալոս*՝ որ Միջերկրական ծովը կրափի . *Սօն* եւ *Տիրալաւս*՝ Ռոն գետը կրափին . *Հոնոս* , *Մեօզ* եւ *Էսքոյ* , Հիւսիսային ծովը կրափին . *Մոզել*՝ Հոնոս գետը կրափի . *Սեւ*՝ Լամանշ ծովը կրափի . *Ռուզ* եւ *Մառն*՝ Սեւ գետը կրափին . *Լուառ* եւ *ժիրոնա*՝ որ Կարոն եւ Տորտօյն գետերէ կձեւանայ , *Շարաւեր* եւ *Ատուր* Ատլանտեան ովկիանօսը կրափին :

Հողը բարեբեր է եւ շատ լաւ մշակուած . միայն Կասթոնի ծոցոյն քովերը տեղ տեղ անբեր աւազուտ է : Օղը բարեխառն է եւ առողջ , մանաւանդ մեջտեղերն ու հարաւակողմը :

Գաղղիան ոսկի , արծար եւ պղինձ սակաւ ունի . իսկ աղ , ածուխ , երկար , կապար , շինուքեան քարեր , մարմարիոն , կրանիք շատ կգտնուի մեջը . շատ են նաեւ հանքային ջրերը : Բուսոց մեջ բարեխառն երկիրներու սովորական պտուղներն եւ տունկերն ունի . գլխաւորապէս գետնախնձոր , ցորեն , եգիպտացորեն , խաղող՝ որոյ գինին (շամփայն , պորտօյ , եւ այլն) աշխարհիս ամենէն լաւ

գինիները կհամարուին . ճակնդեղ՝ յորմէ շատ շաքար կը-
հանուի , ծխախոտ , վուշ , եւ այլն . հարաւակողմն ունի
աւելի ջերմութիւն ուզող բոյսեր , ինչպէս նարինջ , լեմոն ,
եւ մանաւանդ ձիբենի՝ որոյ ձէրն (Փոռվանս գաւառը)
աշխարհիս ամենէն ընտիրն է : Կենդանեաց մեջ ունի ազ-
նիւ տեսակ ձի եւ եզ՝ մանաւանդ հիւսիսակողմը , ոչխար ,
ջորի եւ այլ ընտանի կենդանիք . նմանապէս մեղու՝ որոյ
մեղրն անուանի է , եւ շերամ . վայրի կենդանեաց մեջ ու-
նի արջ , վայրի այծ , գայլ , աղուես , սկիւռ , եւ այլն :

Գաղղիոյ բնակիչն է 37,000,000 Գաղղիացի՝ անխոնջ ,
հնարագետ , աշխույժ , գութարբամիտ , եւ աշխարհիս ամե-
նէն քաղաքավար մարդիկը : Կրօնքն է հռոմեակաւան , որոց
բնիկ եկեղեցին ազատ է պապական իշխանութենէ , որով
եւ առանձին անուամբ գաղղիական եկեղեցի կկոչուի .
միայն 2,000,000 բողոքական եւ այլ կրօնքէ մարդիկ կան
Գաղղիոյ մեջ : Լեզուն է գաղղիարէն , որ հին գաղղիարէնէ
եւ լատիներէնէ յառաջ եկած է . եւ բեպէտ շատ հարուստ
է , բայց վայելչութեանն ու գեղեցկութեանը համար այժմ
աւերութեանց դիւանագիտական լեզուն դարձած է , եւ ամեն
տեղ տարածուած :

Ճարտարութեան կողմանէ աշխարհիս մեջ միայն Ան-
գղիացիք վեր են Գաղղիացւոցմէ . իսկ այն ձեռագործներու
մեջ՝ յորս աւելի ճարտարամտութիւն հարկաւոր է քան թէ
արուեստ , Գաղղիացիք քան զամեն ազգերը գերազանց են :
Գաղղիացիք շատ երեսելի են մետաքսեղէն գործուածքներ ,
ազնիւ ցփսի (շալ) , կերպաս , նորեւուկ զգեստեղէններ ,

բնայուծական դեղեր, յախճապակ, հայելի, ոսկիե գործուածքներ եւ ժամացոյց շինելու կողմանէ :

Լաւ ճանապարհներ, նաւարկելի գետեր եւ ջրանցքներ, որ այն գետերն իրարու կամ ծովերու հետ կմխացընեն, եւ բազմաթիւ երկաթուղիներ, շատ կղիւրացընեն Գաղղիոյ ներքին վաճառականութիւնն, որ աշխարհիս վերայ միայն Անգղիոյ եւ Միացեալ նահանգաց վաճառականութենէն վար է: Ծովային վաճառականութեան համար ունի բազմաթիւ լաւ նաւահանգիստներ: Գաղղիոյ երկաթուղիները մեկ կողմանէ Փարիզէն մինչեւ գլխաւոր նաւահանգիստները կերբան, եւ միւս կողմանէ Պելճիոյ, Գերմանիոյ, Զուիցերիի, Իտալիոյ եւ Սպանիոյ երկաթուղիներուն հետ կմխանան: Գլխաւոր ջրանցքներն են. *Յոլէանի* ջրանցքն որ *Սեն* եւ *Լուան* գետերը կմխացընէ, *Հոննոսը* Հոողանոսի հետ միացընող ջրանցքը, *Միջին ջրանցք*՝ որ *Սոն* գետը Լուանին հետ կմխացընէ, *Լանկոսքի* կամ *Հարաւային ջրանցք*՝ որ ամենէն գեղեցիկն է՝ Կարոն գետը Միջերկրական ծովուն հետ կմխացընէ:


Գիտութեանց եւ կրթութեան կողմանէ առաջին կարգին են Գաղղիացիք աշխարհիս մեջ. բոլոր Գաղղիոյ մեջ մեծ եւ փոքր ուսումնարանաց թիւը 40,000-էն աւելի է. Փարիզու Համալսարանն աշխարհիս մեջ առաջինն է, ուստի կելնեն ամենայն տեսակ քաջ վարժապետներ: Փարիզու համալսարանն ու վարժարանները ամէն ազգէ օտարականք կգտնուին:

Տէրութեան կառավարութիւնն է սահմանադրական մի-
ապետութիւն , երկու խորհրդարանով , որ են Ծերակոյտն
ու Օրենսդիր ժողովը :

ԳԼԽԱԽՈՐ ՔԱՂԱՔԻՔ.


ՀԻՒՍԻՍ ԱՅԻՆ ԳԱՂՂԻՍ.

ՓԱՐԵԶ (1,500,000 րն.) Սեն գետոյն վերայ Գաղղիոյ
մայրաքաղաքն է , եւ գիտութեանց եւ ճարտարութեան
կեդրոնը . Լոնտրայէն յետոյ եւրոպայի ամենէն ընդարձակ
եւ բազմամարդն , եւ Հռոմէն յետոյ ամենէն աւելի գեղե-
ցիկ շէնքեր եւ մեծակառուց յիշատակարաններ ունեցող
քաղաքն է : Շէնքերու մեջ նշանաւորներն են *Թիւշիլլոթի* ,
Լուվր եւ *Լիւքսամպուշ* պալատները , *գիւնուորական ակ-*



Զինուորական Անկեանոցը.

Կեղակոցը, Օրեղ տը վիղ, Վանտոմի սիւնը, Յաղրա-
կան կամարն Աստեղ, Սակարանը (պուրս), եւ այլն . ե-




Վանտոմի սիւնը.



Յաղրական կամարն Աստեղ.


Կեղեցիաց մեջ Սուրբ Աստուածածին (Նորր Տաճ) մայր եկեղեցին, Պանթեոն կամ Սուրբ Գեևոփափե, Մագրադենա-



Եկեղեցի մագրադենացոյն.

ցի, Ս .Սուրբիկիոս, Զինուորական անկեղանոցի եկեղեցին՝ յորում կայ Մեծին Նափույեոնի գերեզմանը : Ամենէն գեղեցիկ փողոցներն են ներքին ծառափողոցները (*պուրջար*), *Եղիւսեան* դարաստը որ *Թիւշիչուի* պալատէն մինչեւ յաղքական կամարը կերթայ՝ լայն, ուղղագիծ եւ ծառագարդ . *Ռիփալի* փողոցն եւ *Սեւասրուփոլի* ծառափողոցը : Զուարճութեան տեղեր են Փարիզու քով *Վեկուէի* եւ *Պուշոյնի* անտառները, եւ բազմաբիւ հասարակաց պարտեզներ, մասնաւորապէս մեծամեծ պալատներու քովերը : Ուսումնարանաց եւ ուսումնական տեղեաց գլխաւորներն են

Լուսի քանդարանն պատկերաց , արձանաց եւ այլ հր-
նութեանց , կայսերական գրատունն ' որ աշխարհիս ամե-
նահարուստներէն մէկն է , բնական պատմութեան քան-
դարանը , համալսարանը , Գաղղիոյ ուսումնարանը , Գեղ-
արուեստից ձեմարանը , արուեստից պանարանը , բուսա-



ձեմարան Գեղարուեստից .


բանութեան պարտեզը ' որ Եւրոպայի առաջիններէն մե-
կըն է : Փարիզու մեջ երեսելի են ազգի ազգի գործարան-
ները ' մանաւանդ ազնիւ կերպասի , ժամացուցի եւ ոսկե-
ղէն գործուածներու . տպագրութեան եւ գրավաճառութեան
կողմանէ առաջինն է աշխարհիս մեջ : Փարիզու մեջ շատ
գեղեցիկ հրապարակներ կան . նշանաւոր է նաեւ զի-
նուորական դպրոցին զիմացն Արեսեան ընդարձակ դաշտը ,
որ զինուորք կրթութիւն կանեն : Սէն գետոյն վերայ

բազմաթիւ ճարտարարուեստ կամուրջներ կան ձգուած :
Փարիզն ամուր եւ բարձր պարսպով պատած է, պարիսպ-
ներէն դուրս ալ չորս բուրբը 16 ամբողջով պաշտպանուած :
Այս քաղաքս մեռաւ մեր վերջին բազաւորը Լեոն 2
1393-ին : — Այս տեղ է Մուրատեան Վարժարանը :

Փարիզու մօտ երեւելի տեղերն են .

Սէն Տընի (14,000 բն.), որոյ եկեղեցւոյն մեջ կրա-
դուին Քաղղիոյ բազաւորք , յորում է եւ մեր Լեոն 2
բազաւորին գերեզմանը :

Վերսալ (30,000 բն.) գեղեցիկ պալատ ունի որ բան-
գարան է, եւ սքանչելի պարտեզ գեղեցիկ շատրուաններով :




Վերսալ.

Սէն Քլոտ (4,000 բն.) գեղեցիկ պալատովն ու պար-
տիզովն անուանի :

Սեֆր (4,000 բն.) Եւրոպայի ամենէն բնտիր յախճապակի գործուածքներն այստեղ կշինուին :

ՌՌԻԱՆ (103,000 բն.) Սեն գետոյն վերայ շատ ճարտար եւ վաճառաշահ քաղաք, եւ նաւահանգիստը շատ բանուկ է : Հայրենիք է քաղաքս մեծանուն Քոռնէյլ բանաստեղծին, եւ այստեղ Անգղիացիք 1431-ին այրեցին Յովհաննա Տարք դիւցազնուհին :



Ռուան.

ԼԸԶԱԻՐ (64,000 բն.) Սեն գետոյն բերանը, շատ վաճառաշահ նաւահանգիստ :

ՔԱՆ (41,000 բն.) անուանի է վաճառաշահութեամբը եւ ուսումնական տեղերովը :

ՇԷՐՊՈՒՐ (28,000 բն.) ամուր եւ զինուորական մեծ նաւահանգիստ :


ԱՄԻԷՆ (56,000 բն.) Սոմ գետոյն վերայ ճարտար եւ վաճառաշահ քաղաք . մեծակառուց եւ գեղեցիկ մայր եկեղեցի ունի :

ԱՌԱՍ (26,000 բն.) ամուր , ճարտար եւ վաճառաշահ :

ՊՈՒԼՅՆ (30,000 բն.) շատ բանուկ նաւահանգիստ :

ՔԱԼԷ (12,000 բն.) Տուվրին դիմաց , համանուն նեղուցին ամենեն նեղ տեղը լինելով՝ շատ վաճառաշահ եւ բանուկ նաւահանգիստ , եւ ամուր քաղաք :

ԼԻԼ (78,000 բն.) Եւրոպայի շատ ամուր քաղաքներէն մեկը . անուանի են բամբակե եւ բրդե գործուածները :



Լիլ.

ՏՈՆՔԵՐՔ (29,000 բն.) վաճառաշահ նաւահանգիստ :

ՔԱՄՊՐԷ (21,000 բն.) ձեռագործներն անուանի են . այս քաղաքս արքեպիսկոպոս նստաւ Ֆենըլոն :

ՖՈՆԹԷՆՊԼՈՅ (10,000 րն.) փոքրիկ՝ բայց գեղեցիկ քաղաք . անուանի է բազառորական պալատը :

ՇԱԹՈԹԻԵՐԻ (5,000 րն.) հայրենիք ԼաՖոնթեն մեծ առականությամբ . անասնոց տոնավաճառ ունի :

ՍԷՆ ՔԱՆԹԷՆ (27,000 րն.) Սոմ գետոյն վերայ ճարտար եւ վաճառաշահ :

ԹՐՈՒԱ (33,000 րն.) ճարտար եւ վաճառաշահ . զինին (*շամիայն*) անուանի է :

ՌԷՆՍ (51,000 րն.) զինիի եւ բրդե գործուածներու մեծ վաճառականութիւն կանէ . գեղեցիկ մայր եկեղեցի ունի , ուր Գաղղիոյ բազառորները կօծուին :


ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳԱՂՂԻՍ.

ՆԱՆՍԻ (48,000 րն.) Գաղղիոյ շատ գեղեցիկ քաղաքներէն մեկը :

ՄԷՍ (65,000 րն.) Մոզէյ գետոյն վերայ ամուր , ճարտար եւ վաճառաշահ :

ՍԹՐԱՍՊՈՒՐԿ (77,000 րն.) Հռենոսի մօտ , ճարտարութեան , զիտութեանց եւ վաճառականութեան կողմանէ Գաղղիոյ երեսելի քաղաքներէն մեկն է , շէնքերու մեջ նըշանաւոր է մայր եկեղեցին գեղեցկութեամբ , բարձրութեամբ եւ զարմանալի ժամացուցովը : Այս քաղաքս Յովհաննէս Կուրբեմպերկ տպագրութիւնը հնարեց 1436-ին :

ՔՈԼՄԱՐ (21,000 րն.) երբեմն Գերմանիոյ ազատ քաղաքներէն մեկն էր . այժմ երեսելի է ճարտարութեամբ ,



Սբրապուրկ.

ՄԻՒՂՈՒԶ (45,000 բն.) Գաղղիոյ շատ ճարտար քաղաքներէն մէկը . չորս կողմէն իջ գետով պատած է որ Հոննոսի մէկ ճիւղն է :

ՊԵՋԱՆՍԱՆ (43,000 բն.) հին եւ ամուր քաղաք , եւ ժայռի մի վերայ միջնաբերդ ունի . անուանի են ժամացոյցները :

ՏԻԺՈՆ (33,000 բն.) գեղեցիկ քաղաք , գիտութեանց եւ արուեստից մեջ յառաջադէմ . հայրենիք է քաղաքս Պոսիւէ մեծանուն արքեպիսկոպոսի :

ՄԱԲՈՆ (16,000 բն.) գինիի (*պուրկոյն*) մեծ վաճառականութիւն ունի :

ՂԻՈՆ (292,000 բն.) Ռոն եւ Սոն գետերու խառնուած տեղն , արուեստից , գիտութեանց եւ բազմամարդութեան

կողմանէ Գաղղիոյ երկրորդ քաղաքն է . իսկ մետաքսեղէն գործուածներու կողմանէ աշխարհիս առաջինն է :

ՍԷՆԹ ԷԹԻԷՆ (94,000 բն.) շատ ճարտար քաղաք , անուանի գործարաններ ունի . մետաքսեղէնի , բրդեղէնի եւ գէնքի :

ԿԲԸՆՈՊԼ (32,000 բն.) ամուր եւ ճարտար քաղաք :

ՎԻԷՆ (20,000 բն.) շատ հին քաղաք . ջուխայի գործարաններ ունի :

ՇԱՄՊԷՐԻ (18,000 բն.) Սափոյայի գլխաւոր քաղաքն է , որ 1860-ին Գաղղիոյ հետ միացաւ :

ՆԻՅՅԱ կամ ՆԻՍ (35,000 բն.) Միջերկրական ծովուն վերայ բանուկ նաւահանգիստ . օղոյն մաքրութեանը համար շատ օտարականք այստեղ կձմերեն . 1860-ին Գաղղիոյ հետ միացաւ :

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԳԱՂՂԻԱ.

ԹՈՒՂՈՆ (82,000 բն.) ամուր քաղաք եւ գինուորական մեծ նաւահանգիստ , որ Եւրոպայի ամենէն ընդարձակ եւ գեղեցիկներէն մէկն է :

ՄԱՐՍԻԼԻԱ կամ ՄԱՐՍԷՅԼ (233,000 բն.) Քրիստոսէ 600 տարի յառաջ շինած , Գաղղիոյ երրորդ քաղաքն է բազմամարդութեան կողմանէ . իսկ ծովային վաճառականութեան կողմանէ առաջին . Արևելքի հետ շատ մեծ վաճառականութիւն ունի , նաւահանգիստն ընդարձակ եւ ապահով , եւ Միջերկրականի առաջին վաճառաշահներէն մէկը . գիտութեանց եւ ճարտարութեան մեջ շատ յառաջադէմ է :

ԷՍ կամ ԷՔՍ (20,000 ըն.) հին քաղաք. անուանի է ձերն (փռոփանս), եւ հանքային ջրեր ունի :

ԱՌԼ (24,000 ըն.) հին քաղաք, հռոմայեցոցմէ մնացած շատ շէնքեր ունի, գլխաւորն է ամփիթեատրոնը՝ յորում 30,000 հանդիսատեսք կմեկնին :

ԱԻԻՆԻՈՆ (37,000 ըն.) երկար ժամանակ պապերուն իշխանութեան տակ էր. գեղեցիկ եւ ճարտար քաղաք. անուանի են մանաւանդ մետաքսէ գործուածները :

ԹՈՒԼՈՒՉ (103,000 ըն.) Կարոն գետոյն վերայ, Գաղղիոյ Սպանիոյ հետ ունեցած վաճառականութեան կեդրոնը եւ շատ ճարտար քաղաք. հրագինուց գործաբաններ ունի :

ՄՈՆՓԵԼԻԷ (49,000 ըն.) Միջերկրական ծովուն մօտ, օդը շատ առողջ է. զինիի եւ օղիի մեծ վաճառականութիւն ունի. անուանի է այս քաղաքիս բժշկական պարտեզն որ բոլոր եւրոպա հռչակուած է :

ՆԻՄ (54,000 ըն.) հին քաղաք, հռոմայեցոցմէ մնացած շատ շէնքեր ունի. այժմ ճարտար եւ վաճառաշահ :

ՓԵՐՓԻՆԵԱՆ (23,000 ըն.) ամուր քաղաք, զինիի մեծ վաճառականութիւն ունի :

ՊՈՐՏՈՅ (149,000 ըն.) Կարոն գետոյն վերայ, Գաղղիոյ մեծ՝ գեղեցիկ եւ վաճառաշահ քաղաքներէն մեկը. շատ բանուկ եւ գեղեցիկ նաւահանգիստ ունի, եւ բոլոր աշխարհիս հետ զինիի (սորստոյ) մեծ վաճառականութիւն կանէ :

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԳԱՂՂԻՍ.

ԼԱՌՈՇԷԼ (16,000 ըն.) ամուր քաղաք եւ բանուկ նա-
ւահանգիստ :

ՌՈՇՅՈՒ (28,000 ըն.) ամուր բերդաքաղաք եւ զինուո-
րական նաւահանգիստ :

ԱՆԿՈՒԼԷՄ (22,000 ըն.) հին քաղաք . թղթի գործա-
րաններն անուանի են :

ՔՈՆԵԱՔ (5,000 ըն.) հայրենիք Ֆրանսուա Առաջնոյն .
անուանի է օղին :

ՓՈՒԱԹԻԷ (30,000 ըն.) զիտութեանց մեջ ծաղկած քա-
ղաք , գեղեցիկ մայր եկեղեցի ունի :

ՍԱՊԼ ՏՈԼՈՆ , նաւահանգիստ , եւ լուացուելու երեսելի
տեղ :

ՌԷՆ (45,000 ըն.) ճարտար եւ վաճառաշահ քաղաք :

ՆԱՆԹ (108,000 ըն.) Լուառ գետոյն վերայ մեծ եւ գե-
ղեցիկ քաղաք , վաճառաշահ եւ բանուկ նաւահանգիստ :

ԼՈՐԻԱՆ (28,000 ըն.) գեղեցիկ զինուորական նաւա-
հանգիստ , անուանի է նաւարանը :

ՊՐԵՍԹ (65,000 ըն.) ամուր քաղաք եւ Եւրոպայի ա-
մենէն գեղեցիկ զինուորական նաւահանգիստը . այս տա-
րի սկսաւ շատ մեծնալ եւ ծաղկիլ :

ԱՆԺԷ (50,000 ըն.) շատ վաճառաշահ քաղաք :

ԼԵՄԱՆ (34,000 ըն.) գեղեցիկ է մայր եկեղեցին :

ՄԻՋԻՆ ԳԱՂՂԻԱ.

ՅՈՒԼԷԱՆ (46,000 ըն.) շաքարի, զինուոյ եւ քացախի մեծ վաճառականութիւն ունի. մայր եկեղեցին անուանի է գեղեցկութեամբը :

ՇԱՐԹՐ (18,000 ըն.) ցորենի մեծ առուտուր ունի, մայր եկեղեցին անուանի է :

ՔԼԷՐՄՈՆ ՅԵՐՐԱՆ (38,000 ըն.) գեղեցիկ դիրք ունի եւ վաճառաշահ քաղաք :

ԼԻՄՈԺ (46,000 ըն.) բրդի եւ յախճապակե զործուածներն անուանի են :

ՊՈՒՐԺ (26,000 ըն.) հին քաղաք, շատ գեղեցիկ շէնքեր ունի, յորս երեսելի է մայր եկեղեցին :

ԹՈՒՌ (38,000 ըն.) Լուստ գետոյն վերայ բանուկ նաւահանգիստ. ունի գեղեցիկ մայր եկեղեցի եւ գեղեցիկ կամուրջ մի գետոյն վերայ. սորա քովերը երկիրը շատ բարեբեր է եւ զուարճալի :

ԿՂՋԻՔ.

ՔՈՐՍԻՔԱ կղզւոյն 1768-ին տիրեցին Գաղղիացիք. հիսսիսէն հարաւ լերանց գօտի մի ունի. հողը բարեբեր է. ունի մեծամեծ անտառներ, ձէք, մարմարիոն, եւ այլն. ճարտարութեան կողմանէ ետ մնացած է : Գլխաւոր քաղաքն է ԱՅԱԶԶԻՈՅ (12,000 ըն.) ամուր եւ բանուկ նաւահանգիստ. այս քաղաքս ծնաւ Մեծն Նափոյեոն 1769-ին :

ՊԱՍԹԻԱ, ամուր նաւահանգիստ :

Գաղղիացւոց ձեռքն են նաեւ Գաղղիոյ արեւմտեան ծովեզերքն եղած մանր կղզիներն եւ Միջերկրականի մեջ Թուրքոնի մօտ գտնուած մանր կղզիները :

ԿԱԼՈՒԱԾՔԻ ԳԱՂՂԻԱՅԻՈՅ.

Ափրիկէի մեջ . Ալճէրի կամ Ալժէ կամ ձեզալի . Սենեկալի գաղթականութիւնը , Մայօր կղզին , Նոսիպէ կղզի , Ս. Մարիամ կղզի , Միււրեան կղզի :

Ասիոյ մեջ . Փոնտիշերի , Գարիքալ . Մահէ , Եանաօն եւ Զանտենոնակոր , Հնդկաստանի մեջ . իսկ Հնդկաչինոս մեջ Սայկօնկ :

Ամերիկայի մեջ . Մարքիսիկէ , Կուաութաւա , Մարի Կալանք , Տեզիքատա , Սենք կղզեաց փոքր խումբը , եւ Ս. Մարտինոսի հիւսիսակողմը , Գաղղիական Կուչիանա , եւ Նոր Երկրի մօտ՝ Ս. Պետրոս եւ Միքելոն կղզիները :

Ովկիանիոյ մեջ . Մարքիզեանք , նոր Կալեդոնիա . նմանապէս Գաղղիան սլաշտպան է Թայիքի եւ Կամպիէր կղզեաց :



Պ Ե Լ Ճ Ի Ա.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — Պելճիացիք (Բելզիացիք) Գերմանական ազգ մի էին, զորս շատ դժուարութեամբ նուաճեցին Հռովմայեցիք: Փրանկք Պելճիոյ մեջէն Գաղղիա մտան: Մեծին Կարոյոսի յաջորդաց ժամանակ (843-ին) այս երկիրս Լորարինգիոյ քաղաւորութեան նեւ միացաւ. Կարոյոս Յանդուգն՝ Պուրկոյնի նեւ միացուց Պելճիան, եւ Կարոյոս Հինգերորդ Սպանիական գաւառ մի արաւ զայն, որ յետոյ Աւստրիացուց անցաւ: 1792-ին Գաղղիացիք տիրեցին Պելճիոյ. բայց 1814-ին Հոլանտայի նեւ միացաւ եւ այնպէս հիմնեցաւ Ստորին Նահանգաց քաղաւորութիւնն. 1830-ին Պելճիացիք Հոլանտայէն զատուելով՝ առանձին քաղաւորութիւն կազմեցին եւ Սաքսո-Քոպուրկի ցեղէն քաղաւոր դրին Լեոփոյտ Ա, որ մինչեւ ցայժմ կրաղաւորեւ արդար եւ իմաստուն կառավարութեամբ:

Պելճիոյ սահմանն է հիւսիսէն Հոլանտա, արեւելքէն Գերմանիա, հարաւէն Գաղղիա, արեւմտքէն Հիւսիսային ծով:

Տարածութիւնն է 297 բիւրմերք քառակուսի:

Պելճիան 9 գաւառ կրածանուի:

Երկիրը դաշտային է, միայն հարաւակողմն փոքր բլուրներ ունի:

Հողը բարերեր է եւ լաւ մշակուած :

Օղն ընդհանրապէս ցուրտ է եւ խոնաւ , բայց շատ առողջարար :

Գլխաւոր գետերն են *Էսքոյ* եւ *Մեօզ* , որ Հիւսիսային ծով կբափին . *Տիլ* ' որ Էսքոյ կբափի :

Գլխաւոր բերքն է առատ ցորեն , վուշ , ծխախոտ , առատ հանքային ածուխ , երկաթ եւ մարմարիոն . բնտանի կենդանիներն ալ երեւելի են :

Բնակիչն է 4,600,000 . տերութեան եւ բնակչաց մեծ մասին լեզուն է գաղղիարէն . գեղացիք Ֆլաման եւ Վալոն լեզուները կխօսին որ գերմաներէնէ եւ գաղղիարէնէ ձեւացած լեզուներ են . կրօնքն է Հռոմէական :

Գիտութեանց , ճարտարութեան եւ վաճառականութեան կողմանէ Պելճիան շատ ծաղկած է . անուանի են մանաւանդ կտաւները , գորգերն , կաշին , երկաթի եւ պղնձի գործուածները , գինիքը , մեքենաները եւ այլն :

Գեղարուեստից կողմանէ յառաջադեմ է Պելճիան ' մանաւանդ նկարչութեան մեջ :

Տերութեան կառավարութիւնն է սահմանադրական միապետութիւն ժառանգական :

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔԻՔ .

ՊՐԻՒՍԷԼ (182,000 բն.) Տիլ գետոյն Սենն ճիւղոյն վերայ . տերութեան մայրաքաղաքն է , գեղեցիկ , վաճառաշահ եւ ճարտար . անուանի է մանաւանդ գրավաճառութեան կողմանէ , եւ ձեռագործաց մեջ շարերը (*տանրեղ*)

շատ երևելի են . ոսնի բազմաբիւ գեղեցիկ շէնքեր եւ եկեղեցիներ : Ուսումնարանաց մեջ նշանաւոր է համալսարանն ու գինուորական դպրոցը : — Այս քաղաքիս մօտ է հռչակաւոր *Վարկըրոյ* գիւղն ուր յաղթուեցաւ Նափոյեան Ա. 1815-ին :

ԱԱՆՏ (115,000 բն.) Էսքոյի վերայ , բամբակե գործուածքներու եւ շաքարի գործարաններու կողմանէ Պեկնիոյ առաջին քաղաքը . անուանի համալսարան ունի . շէնքերուն մեջ նշանաւոր է Կարոյոս Ե-ի պալատը , որ այս քաղաքս ծնաւ : — Միջին դարու մեջ շատ բազմամարդ , ճարտար , հարուստ եւ վաճառաշահ քաղաք էր :

ԱՆՎԵՐՍԱ կամ **ԱՆԹՈՒԵՐՊԻԱ** (100,000 բն.) Էսքոյ գետոյն վերայ , 300 տարի յառաջ աշխարհիս առաջին վաճառաշահ քաղաքն էր . այժմ եւս Եւրոպայի մեծ եւ վաճառաշահ նաւահանգիստներէն մեկն է . ամուր միջնաբերդ ունի , գեղեցիկ եւ քարձր մայր եկեղեցի , յորում կալահուի Ռուպենսի ամենէն գեղեցիկ պատկերը :

ԼԻԷԺ (80,000 բն.) Մեծ գետոյն վերայ , շատ ճարտար քաղաք է . ոսնի երևելի համալսարան . անուանի են զէնքի , մեքենայից եւ ջուխայի գործարանները : — Քովերը մեծ ածխահանք կայ :

ՊԵՒԻԺ (60,000 բն.) Հիւսիսային ծովուն մօտ , միջին դարուց մեջ շատ հարուստ քաղաք էր . այժմ եւս ծաղկած , ճարտար եւ վաճառաշահ է :

ԼՈՒՎԷՆ (31,000 բն.) Տիյ գետոյն վերայ , համալսարան ունի . անուանի է գարեջուրը :

ՄԱԼԻՆ (30,000 ըն.) ճարտար քաղաք, Պեչնիոյ միւս
երեսի քաղաքներուն վերայ երկաթուղւոյ ճիւղեր ունի .
անուանի է մայր եկեղեցին : Պեչնիոյ արքեպիսկոպոսն այս
քաղաքս կրնակի :

ՍՓԱ, Լիեժի մօտ, անուանի հանքային ջրեր ունի :

ՆԱՄՈՒՐ (25,000 ըն.) Մեծ գետոյն վերայ ամուր քա-
ղաք, գէնքի եւ դանակեղինի անուանի գործարաններ ունի :

ԹՈՒՌՆԷ (31,000 ըն.) էսքոյ գետոյն վերայ, գորգի գոր-
ծարաններն անուանի են :

ՕՍԹԷՆՏ (15,000 ըն.) վաճառաշահ նաւահանգիստ :



Հ Ո Ւ Ս Ն Տ Ա.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — Հոլանտան հին ժամա-
նակները Բատաւիա (Պարաւիա) կկոչուէր . Յուլիոս Կե-
սար տիրեց այս երկրիս . Մեծին Կարոյոսի ժամանակ
բնակիչքը քրիստոնեայ եղան, եւ Կարոյոս Հինգերորդի
ժամանակ Սպանիացւոց անցաւ Հոլանտան : ԺՁ դարուն
մէջ, երբոր բնակչաց մեծ մասը բողոքական դարձան,
Սպանիացիք սաստիկ հալածանք հանեցին նոցա դեմ,
Հոլանտացիք ալ ստիպուեցան Սպանիացւոց լուծը բօրա-
փել եւ ազատ տերութիւն մի հաստատեցին : — Այն ժա-
մանակն էր որ Հոլանտան ծաղկեցաւ, փառաւորուեցաւ
եւ աշխարհիս առաջին վաճառաշահ տերութիւնն եղաւ :
1792-ին Գաղղիացիք տիրեցին այս երկրիս եւ Բատաւեան

նասարակապետութիւնը կազմեցին. իսկ 1806-ին Նափոյեոն իւր եղբայրը քաղաւոր դրաւ այս երկրիս վերայ. 1814-ին Հոլանտան Պելճիոյ հետ միացաւ, եւ երկուքը միատեղ կոչուեցան քաղաւորութիւն Ստորին Նահանգաց կամ Նիտերլանտիոյ : 1830-ին Պելճիան զատուեցաւ Հոլանտայէն, որով սա առանձին քաղաւորութիւն մնաց : Հոլանտայի այժմու քաղաւորն է Գուլիելմոս Գ, որ արքոռը նստաւ 1849-ին :

Հոլանտայի սահմանն է հիւսիսէն եւ արեւմտքէն՝ Հիւսիսային ծով, արեւելքէն՝ Գերմանիա, հարաւէն՝ Պելճիա :

Տարածութիւնն է 360 բիւրմերը քառակուսի :

Հոլանտան 11 գաւառ կրաժանուի :

Երկիրը դաշտային է եւ ըստ մեծի մասին ծովու երեսէն ցած, անոր համար ձահիճներ շատ ունի, եւ ծովեզերքն ահագին բումբեր կան շինած. բայց Հոլանտացւոց ժրաջան աշխատութեամբն այն ձահիճներուն մեծ մասն այժմ ցամաքած են եւ պարարտ արօտներ դարձած :

Օդն ընդհանրապէս ցուրտ է եւ խոնաւ :

Գլխաւոր զետերն են *Հոկկոս*, *Էսքոյ*, *Մեոզ* եւ *Էմս* :


Գլխաւոր բերքն է հանքային ածուխ, ծխախոտ, եւ շատ տեսակ ծաղիկներ. բինկա ձուկը Հոլանտացւոց մեծ աղբիւր է հարստութեան. անուանի են Հոլանտայի պանիրն ու կարագը : — Չեռագործաց մեջ երեսելի են կտաւները, բուղբը, բաւիշն ու աղամանդեայ գործուածները :

Բնակիչն է 3,500,000. լեզուն գերմաներէն, կրօնքն ըստ մեծի մասին բողոքական :

Հոլանտայի ծովային վաճառականութիւնը շատ բանուկ է, քէ եւ առաջուան ժամանակներու ջափ ջկայ, երբ Հոլանտացիք առաջին ազգն էին ծովու վերայ : — Ճարտարութիւնն ու գիտութիւններն եւս շատ ծաղկած են Հոլանտայի մեջ :

ԳԼԽԱԻՈՐ ՔԱՂԱՔԻ.

ԱՄՍԹԵՐՏԱՄ (256,000 բն.) Հոլանտայի ամենէն մեծ քաղաքն է եւ առաջին նաւահանգիստը, Զիւխտերգի մօտ Ամսթէյ գետոյն վերայ, որ բազմաթիւ ջրանցքներով քաղաքը 90 կղզի կրածանէ, իրարու հետ 290 կամրջով միացած : Աղամանդեայ գործուածքներու մեծ գործարաններ ունի . վաճառականութեան կողմանէ Եւրոպայի առա-



Ամսթերտամ.

շին քաղաքներէն մէկն է : Ունի բազմաթիւ գեղեցիկ շէնքեր , յորս երեսելի է բազառորական սպայատը : Այս քաղաքիս մօտ է Սարտամ գիւղն , ուր Մեծն Պետրոս 1697-ին տասն ամիս կեցաւ . նաւ շինել սովբելու համար :

ՌՌԹԷՐՏԱՄ (90,000 ըն .) Մեծ գետոյն վերայ շատ ճարտար եւ վաճառաշահ քաղաք , եւ շատ բանուկ նաւահանգիստ ունի , ուր մեծամեծ նաւեր ալ կարող են զայլ :

ՀԱՅԱ կամ ՀԱԿԱ (60,000 ըն .) ծովու մօտ , Հոլանտայի մայրաքաղաքն է . դիրքը բարձր լինելուն՝ օղբ շատ առողջ է . գեղեցիկ շէնքեր ունի , եւ քովերը գուարճալի գիւղեր կան :

ԼԷՅՏԱ (38,000 ըն .) Հոկնոսի վերայ , գիտութեանց եւ արուեստից մեջ յառաջադէմ քաղաք . անուանի համալսարան ունի :

ՀԱՐԼԷՄ (24,000 ըն .) համանուն լճին քով , ճարտար , ծաղկած եւ վաճառաշահ . անուանի են մետաքսէ եւ բամբակէ գործուածքներն , եւ ծաղկանց հոսնտի մեծ վաճառականութիւն ունի :

ՌԻԹԵԷԹ (50,000 ըն .) Հոկնոսի վերայ , բաւիշի գործարաններ ունի , գեղեցիկ եւ անուանի քաղաք . ունի համալսարան մի :

ԿՐԷՆԵՆԿԷՆ (36,000 ըն .) ծովու մօտ վաճառաշահ քաղաք . անուանի համալսարան ունի :

ՆԻՄԷԿ (20,000 ըն .) ամուր եւ վաճառաշահ նաւահանգիստ :

ՄԱՅՍԹԻԷԹ , Մեծ գետոյն վերայ ամուր քաղաք , քովերը մեծ քարահատք ունի :


ԼՈՒՔՍԷՄՊՈՒՐԿ (15,000 րն.) Գերմանական դաշնակցութեան եւ բոլոր Եւրոպայի շատ ամուր քաղաքներէն մէկը . երբեմն երեսելի էր , այժմ ընկած :

ՊՈՒԱԼԸՏԻՒՔ կամ ՀԵՐՑՈՎԷՆՊՈՒՇ (25,000 րն.) Պրապանքի գլխաւոր քաղաքն է եւ ամուր . նմանապէս ամուր քաղաքներ են ՊՐԵՏԱ (15,000 րն.) եւ ՊԷՐԿՈՓՍՈՒՄ :

ԿԱԼՈՒԱԾՔ ՀՈՒԱՆՏԱՅԻՈՅ.

Ա. փրիկէի մէջ . Կուինեայի մէջ քանի մի վաճառատեղիք :
Ամերիկայի մէջ . Հոլանտական Կուշանա , եւ Անթիլիան կղզեաց մէջ Ս. Եւտարքոս , Գուրասայ , եւ Ս. Մարտինոսի հարաւակողմը :

Ովկիանիոյ մէջ . Ճաւա , եւ Սոււատրայի , Պոուեոյի եւ Չելեպեանց մէկ մէկ մասերը , Սոււպաւա , Թիւնոր , Մուշուքեանք , եւ Նոր Կուինեոյ մէջ գաղթականութիւն մի :



Չ Ո Ւ Ի Յ Ե Ր Ի.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — Այս երկիրս հին ժամանակն Հեղուևախա կկոչուէր. միջին դարուց մեջ Պուրկունիա յայնկոյս ժիւրայ անուամբ քաղաւորութիւն մի ձեւացաւ, եւ 1033-ին Գերմանիոյ կայսերութեան հետ միացաւ: ԺԳ դարուն սկիզբները շատ եկեղեցական մանր տերութիւններ բաժանուած էր, եւ Հապսպուրկեան ցեղը մեջն ընդարձակ կայուածներ ունէր: Գերմանիոյ կայսրն Ալբերտ Ա., Հապսպուրկեան ցեղէն, ուզեց բոլորովին տիրել Զուիցերիի, եւ Ունբերվալտէն, Շուից եւ Ուրի գաւառներուն վերայ բռնաւոր կուսակալներ դրաւ. ժողովուրդը ոտք ելաւ, եւ այն երեք գաւառներն Զուիցերիի դաշնակցութիւնն կազմեցին 1308-ին: Մինչեւ 1513 ուրիշ տասը գաւառք այն դաշնակցութեան մեջ մտան, եւ 1648-ին Վեսթֆալիոյ դաշնադրութեամբն Եւրոպայի տերութիւնք այն 13 գաւառաց անկախութիւնը ճանաչեցին: 1803-էն յետոյ ուրիշ գաւառներ ալ մտան դաշնակցութեան մեջ, եւ 1815-ին Վեննայի ժողովն երեք գաւառ ալ աւելցուց, որով ընդ ամենն եղան 22 գաւառք:

Զուիցերիի սահմանն է հիւսիսէն Գերմանիա, արեւելքէն Աւստրիա, հարաւէն Իտալիա եւ Գաղղիա, արեւմուտքէն Գաղղիա:

Տարածութիւնն է 384 բիւրմերը քառակուսի:

Երկիրը լեռնոտ է, որով եւ շատ մեծամեծ հովիտներ ունի : Լեռներուն ծայրը յաւերժական ձիւնով եւ սառույցներով ծածկած է, որ ամառը փոքր ինչ հալելով՝ անով բազմաքիւ լճեր եւ գետեր կձեւանան . այնպէս որ Զուիցերին շատ երեսելի է իւր դիրքերուն գեղեցկութեամբն ու պէսպիսութեամբը :

Յղը լեռներուն ծայրը ցուրտ է . իսկ հովիտներուն մեջ բարեխառն, զուարճալի եւ առողջ :

Հողը շատ բարեբեր է :

Գլխաւոր լեռներն են *Արպեանք*՝ արեսելակոմն, եւ *ժիւրա*՝ արեւմտակողմն : Զուիցերիի լեռանց ամենաբարձր գլուխն է *Մոնթե Ռոզա* կամ *Վարդի Լեւոն* :

Գլխաւոր լճերն են *ձեկելաքա*, *Քոստանցա*, *Նեօշարել*, *Լուչեոնա*, *Յուրիխ* . եւ հարաւային սահմանները՝ *Լուկանոյ* եւ *Մանորէ* :

Գլխաւոր գետերն են *Հոկեոս*՝ որ Քոստանցա լճէն կը բղխի, *Աար*՝ որ Հոենոս գետը կը քափի, *Ին*՝ որ Դանուր կը քափի, *Թեւսեկ* կամ *Թիջիկոյ*՝ որ Փոյ կը քափի, այլ եւ *Հոտյանոս* կամ *Ռոն* :

Զուիցերիի հովիտներուն մեջ առատութեամբ կը բուսնի ցորեն, շագանակ, խաղող եւ ուրիշ հասարակ պտուղներ . այլ ամենէն երեսելի են պարարտաբոյս արօտները : Կենդանեաց մեջ ունի բազմաքիւ ընտանի անասուններ, ինչպէս կով, եզ, ոչխար, այծ եւ *շամուռ* կոչուած այծեամբ . վայրի կենդանեաց մեջ ունի արջ, գայլ, եւ բոջնոց

մեջ արծիւ եւ անզղ : Հանքերու մեջ ալ ունի առատ երկաթ , կապար , պղինձ , բիւրեղ , եւ ծծումբ :

Բնակիչն է 2,500,000. քաջ , հայրենասէր , անխարդախ եւ հաւատարիմ մարդիկ : Սոցա 1,040,000-ը հռովմեական են եւ 2,460,000 կալուխնական :

Լեզուն հիւսիսակողմը եւ արեւելակողմը գերմաներէն է , արեւմտակողմը գաղղիարէն , իսկ հարաւակողմն իտալերէն :

Ուսմունքն ու գիտութիւններն ըստ բաւականին ծաղկած են Զուիցերացոց մեջ . ճարտարութեան կողմանէ շատ յառաջադէմ են . երեւելի են մանաւանդ ժամացոյցները , մետաքսեղէն եւ բամբակեղէն գործուածքներն ու պանիրը : Վաճառականութիւնը , որ շատ բանուկ է , եւս առաւել կծաղկի նորանոր ջրանցքներու եւ երկաթուղիներու շինուելովն :

Զուիցերին դաշնակցական հասարակապետութիւն է 22 գաւառաց (բէն իրօք 27 տերութիւնք են Զուիցերիի մեջ) . իւրաքանչիւր գաւառ առանձին հասարակապետութիւն է սեպհական օրէնքներով . միայն հասարակաց օգտին համար Պեռն քաղաքը ընդհանուր ժողով մի կգումարուի , յորում իւրաքանչիւր գաւառէն մեկ երեսփոխան միայն կգանուի :

ԳԼԽԱԻՈՐ ՔԱՂԱՔԲ .

ՀԵՆԵԻԱ կամ ՃԻՆԵԻՐԱ կամ ԿԷՆՖ (40,000 բն .) Զուիցերիի առաջին քաղաքն է բազմամարդութեան , ճարտար

րութեան, զիտութեանց եւ զեղեցկութեան կողմանէ. ձե-
նեա կամ Լեման լճոյն այն տեղն է, ուստի Հոռդանոս



Ճենեա .

զետր կրղխի : Ունի բազմաքիւ ուստամնական տեղեր . Ե-
րեւելի են այս քաղաքիս ժամացոյցներն ու ոսկւոյ եւ ա-
ղամանդի գործուածքները : Կալվին այս քաղաքս քարո-
զեց իւր աղանդը 1535-ին, ուր եւ մեռաւ :

ՊԷՌՆ (30,000 բն.) Մար զետոյն վերայ Զուիցերիի մայ-
րաքաղաքը կհամարուի՝ ազգային ընդհանուր ժողովը մեջը
զումարուելուն համար . ճարտար եւ վաճառաշահ քա-
ղաք, ունի համալսարան :

ՊԱԼ կամ ՊԱՋԷԼ (30,000 բն.) Հռեմոս զետոյն վերայ ,

ճարտար եւ Ջուիցերիի ամենէն վաճառաշահ քաղաքն .
ունի համայսարան :

ՅՈՒՐԻՍ (15,000 բն.) համանուն լճին հիւսիսակողմը .
ունի համայսարան , եւ մետաքսէ ազնիւ գործուածքներու
բազմաքիւ գործարաններովը շատ երեսելի է :

ԼՈՒՉԵՌՆԱ (10,000 բն.) համանուն լճին հիւսիսային
արեւմտեան կողմը , գիտութեանց մեջ ծաղկած :

ՖԲԻՊՈՒՐԿ (9,000 բն.) ունի մեծակառուց մայր եկեղեցի
եւ զեղեցիկ կամուրջ մի :

ՆԷՅՇԱԹԷԼ (7,000 բն.) համանուն լճին հիւսիսակողմն ,
անուանի է մայր եկեղեցին հնութեամբը :

ԼՕԶԱՆ (16,000 բն.) ճենեալի լճին մօտ ճարտար եւ
վաճառաշահ , եւ դրից զեղեցկութեանը համար՝ շատ օ-
տարականք այս քաղաքս կձմերեն :

ՍԻՈՆ (5,000 բն.) Հոողանոսի մօտ . այս քաղաքս տե-
սակ մի մարդիկ կան խուլ եւ համր , ապուշ եւ սակաւա-
կեաց :

ՍԷՆԿԱԼ (10,000 բն.) Քոստանցա լճին մօտ , ճարտար
քաղաք . Քերմանիոյ հետ մեծ առուտուր ունի : Անուա-
նի էր այս տեղ համանուն վանքն զոր հիմնեց 612-ին
Ս. Գալլոս Իռլանտացին :

ՊԱՏԷՆ , հանքային տաք ջրերովն անուանի :

ԱԼԹՈՐՅ , հայրենիք Գուլիէլմոս-Թէլ դիւցազին , որ իւր
հայրենիքն ազատեց բունաւորի մի ձեռքէն :

ԿՐԻՒՅԷՐ , Ֆրիպուրկի մօտ աւան մի . երեսելի է պա-
նիրը :

ՍԻՄՓԻՈՆ կամ ՍԷՄՓԼՈՆ, լեռներու մեջ ահաւոր ու զեղեցիկ տեսարաններ ունի : Սորա մօտ է Սուրբ Կորարտոս անուանի լեռն, եւ Ս. Բեռնարդոսի վանքին հռչակաւոր հիւրանոցն, որ Եւրոպայի ամենաբարձր բնակութեան տեղն է. երեսելի են նաեւ այս վանքիս շները :



Բ Բ Ո Ւ Ս Ի Ս.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — Գերմանացիք 1128-ին Հրեաստանի մեջ Տեւտոնեան ասպետաց զինուորական եւ կրօնական կարգը հաստատեցին. սոքա խաչակրութեանց վերջի ժամանակներն Ասիայէն քշուեցան, Գերմանիոյ մեջ մեծամեծ կալուածոց տէր եղան, եւ Եւրոպայի տէրութեանց կարգն անցան : Սուսերակիր ասպետաց կարգը, զոր 1264-ին ժամանակները Լիվոնիոյ եպիսկոպոս մի հիմներ էր, Տեւտոնեան ասպետաց կարգին հետ միացաւ, եւ այս երկու կարգերը միատեղ նուաճեցին եւ քրիստոնէութեան դարձուցին Բրուսիոյ բարբարոս եւ կռապաշտ ժողովուրդները, եւ այն երկրին տէր եղան : Հոճկնցոյլեռն ցեղէն իշխան մի 1417-ին Պրանտեպուրկի կայսրընտիր եղաւ. հարիւր տարի յետոյ նոյն ցեղէն իշխան մի Տեւտոնեան ասպետաց զլիաւորն էր. սա լութերականութիւնն ընդունելով՝ կարգուեցաւ, Բրուսիան աշխարհական իշխանութիւն արաւ, եւ ժառանգական դքսութիւն մի հաստա-

տեց՝ Լեհաստանի պաշտպանութեան տակ : 1618-էն յետոյ
Բրուսիան Պրանտեպուրկի կայսրընտրին անցաւ , բէեւ Լե-
հաց պաշտպանութեան տակ մնաց . 1657-ին Փրեղերիկոս
Գուլիէլմոս ազատեց զայն Լեհաց ձեռքէն :

Սուրա որդին՝ Փրեղերիկոս Ա. բազաւորի-անունն առաւ
1701-ին . Փրեղերիկոս Բ Մեծն 1742-ին տիրեց Շլեզիա գա-
ւառին , եւ իւր յաղթութեամբքը Եւրոպայի մեծամեծ տե-
րութեանց կարգն անցուց Բրուսիան :

Լեհաստանի բաժանման ժամանակ Բրուսիացիք տիրե-
ցին այժմու Բրուսիոյ արեւելակողմն եղած գաւառներուն :
Նախոյեանի ժամանակ Գաղղիացիք՝ Բրուսիացւոց ձեռքէն
շատ գաւառներ առին . բայց 1815-ին Վեննայի ժողովը
Բրուսիացւոց դարձուց բոլոր այն գաւառները , բաց յայն-
մանէ Հռենոս գետին քովի երկիրներն եւս Բրուսիոյ տը-
րուեցան : Բրուսիոյ այժմու բազաւորն է Գուլիէլմոս Ա ,
որ արտուր նստաւ 1861-ին :

Բրուսիոյ սահմանն է հիւսիսէն Պալքիկ ծով եւ Մեք-
լեմպուրկ , արեւելքէն Ռուսիա , հարաւէն Աւստրիա , ա-
րեւմտքէն Գերմանիա , Գաղղիա եւ Ստորին Նահանգք :

Տարածութիւնն է 2,760 բիւրմեքք քառակուսի :

Բրուսիան 10 գաւառ կրածանուի , որոց եօրը Գերմա-
նական դաշնակցութեան մէջն են , եւ երեքը դուրս :

Գերմանիայէն դուրս եղած երեք գաւառներն են . Ա-
րեւելեան Բրուսիա՝ զլիսաւոր քաղաք Քեօնիկապերկ , Ա-
րեւմտեան Բրուսիա՝ զլիս. քաղաք Տանցիկ , եւ Փոզնա-
նիա՝ զլիս. քաղաք Փոզնն : Գերմանական եօրն գաւառ-

ներն են , *Փովերանիա*՝ գլխ. քաղաք Սթեփին , *Պրանտկայուրկ*՝ գլխ. քաղաք Պեռլին , *Շիեզիա*՝ գլխ. քաղաք Պրեսլա , *քրուշսիական Սաքսանիա*՝ գլխ. քաղաք Մակտեպուրկ , *Վեամֆաշիա*՝ գլխ. քաղաք Միանսթեր , *Հոննուսևան գաւառ*՝ գլխ. քաղաք Բոյունիա , եւ *Հոնեկեցոյենե երկիրը*՝ Վիրթեմպերկի թագաւորութեան հարաւակողմն :

Բրուսիոյ երկիրն երկու առանձին կտորներէ կձեւանայ , որ Հաննովերի թագաւորութեամբ մեկ մեկէ զատուած են . արեւելեան կողմինն , որ աւելի մեծն է , ընդարձակածաւալ դաշտ մի է , հարաւակողմը լեռներով փակած . արեւմտեան կողմինը մեջտեղերը եւ հարաւակողմն լեռնոտ է :

Արեւելեան Բրուսիոյ մեջ թագմարիւ լճեր , ճահիճներ եւ անբեր դաշտեր կան . Պալթիկ ծովուն եզերքն աւազոտ է եւ շատ ծովակներ ունի :

Հողը հիւսիսային կողմերն անբեր է . իսկ հարաւայինն եւ արեւմտեան կողմերը շատ բարեբեր է :

Օղը բառեխոտն է , հիւսիսակողմը խոնաւ :

Գլխաւոր գետերն են . *Նեմեկե* , *Փրեկեկ* , *Վիսթրա* , *Օտեր*՝ որ Պալթիկ ծով կբափին . *Էրպա* , *Վեզեր* , *Էմա* , *Հոննու* եւ *Մեոզ*՝ որ Հիւսիսային ծով կբափին :

Գլխաւոր բերքն է երկաթ , պղինձ , հանքային ածուխ , եւ Պալթիկ ծովուն եզերքէն դեղին սաք . բուսոց մեջ ունի ցորեն եւ բոլոր հասարակ պտուղները . հոննոսեան գաւառաց մեջէն լաւ գինի կելնէ : Յարգի են նաեւ Բրուսիոյ ընտանի կենդանիները :

Բնակիչն է 17,700,000 ըստ մեծի մասին յուտերական ,
լեզուն գերմաներէն :

Ուսման եւ գիտութեանց մեջ շատ յառաջադէմ է Բրու-
սիան , եւ ունի երեւելի համալսարաններ : — Ճարտարու-
թեան կողմանէ եւս շատ յառաջ գնացած են Բրուսիացիք ,
մանաւանդ Հռենոսեան գաւառաց մեջ . անուանի է մե-
տաքսէ գործուածքները , կառքերը , մետաղեայ գոր-
ծուածքներն եւ այլն : — Վաճառականութիւնն եւս շատ
ծաղկած է գեղեցիկ ճանապարհներով եւ բազմաթիւ երկա-
թուղիներով եւ ջրանցքներով :

Տերութեան կառավարութիւնն է ժառանգական միա-
պետութիւն :

ԳԼԽԱԻՈՐ ՔԱՂԱՔԻ .

(ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՍՆ ԲՐՈՒՍԻՈՅ).

ՊԵՌԼԻՆ (450,000 բն.) Սփրեա գետակին վերայ Բրու-
սիոյ մայրաքաղաքն է . եւ Եւրոպայի գեղեցիկ եւ ծաղկած
քաղաքներէն մեկն է վաճառականութեան , ճարտարու-
թեան եւ ուսումնական տեղերու կողմանէ . ունի երեւելի
համալսարան , դիտարան եւ ուրիշ բազմաթիւ վարժա-
րաններ , գործարաններ եւ գեղեցիկ շէնքեր , որոց մեջ
նշանաւոր են բազաւորական պալատը , գինարանը , նոր
թանգարանը , թատրոնը եւ այլն : Յիշատակարանաց մեջ
նշանաւոր են Փրեդերիկոս Առաջնոյն պղնձէ արձանը ձիու
վերայ հեծած , Փրեդերիկոս Երկրորդին սիւնը՝ Տրայիանու
սիւնին ձեւով շինած : Ճարտարութեան կողմանէ վերջին



Պետլին .

կատարելութեան հասած է . անուանի են մանաւանդ յախճապակի եւ կառքի գործարաններն , եւ պողպատի եւ երկաթի գործուածները :

ՓՈՅՏԱՄ (44,000 բն .) երկրորդ բազաւորանիստ քաղաքն է , ունի գեղեցիկ եւ մեծամեծ պալատներ , եւ ուսումնական տեղեր : Այս քաղաքիս քովերն է Սան-Սուսի պալատը :

ՊՐԱՆՏԷՊՈՒՐԿ (16,000 բն .) հին քաղաք , յորմէ գաւառըն եւս անունն առաւ :

ՅՐԱՆՔՅՈՐԹ (25,000 բն .) Յտէր գետոյն վերայ , երեսելի տօնավաճառ ունի :

ՊՐԵՍԼԱԻ (129,000 բն .) Յտէր գետոյն վերայ , Շլեզիոյ գլխ . քաղաքն եւ Բրուսիոյ երրորդ բազաւորանիստ քաղաքն է . իսկ գիտութեանց , ճարտարութեան եւ գեղեցկու-

քեան կողմանէ Բրուսիոյ երկրորդն է. ունի երեւելի համայսարան եւ դիտարան :

ՔԷՅՆԻԿՍՊԷՐԿ (81,000 քն.) Փրեկէլ գետոյն վերայ , արեւելեան Բրուսիոյ գլխ. քաղաքն եւ տերութեան երկրորդ մայրաքաղաքը , ամուր եւ շատ վաճառաշահ . ունի համայսարան :

ՄԷՄԷԼ (18,000 քն.) Բրուսիոյ ամենէն հիւսիսային նաւահանգիստը :

ՖՐԱԻԷՆՊԷՐԿ (3,000 քն.) սորա մայր եկեղեցւոյն մեջ քաղուած է Կոպեռնիկոս :

ԹԻԼՍԻԹ , երեւելի է 1807-ին հաշտութեամբը :

ՏԱՆՅԻԿ (6,0000 քն.) Վիսքլա գետոյն բերանն արեւմըտեան Բրուսիոյ գլխ. քաղաքն ամուր եւ Բրուսիոյ առաջին նաւահանգիստը :

ԹՈՌՆ (10,000 քն.) հայրենիք Կոպեռնիկոսի :

ՓՈԶԷՆ (40,000 քն.) Վարքա գետակին վերայ , Փոզնանիա գաւառին գլխ. քաղաքն , երբեմն Լեհաստանի մայրաքաղաքն էր :

ՍԹԵԹԻՆ (64,000 քն.) Օտեր գետոյն բերանը Փոմերանիոյ գլխ. քաղաքն է , ամուր , շատ վաճառաշահ եւ Բրուսիոյ շատ բանուկ նաւահանգիստներէն մեկը :

ՍԹՐԱԼՍՈՒՆՏ (25,000 քն.) Ռուկէն կղզւոյն դիմացն ամուր եւ վաճառաշահ նաւահանգիստ :

ՄԱԿՏԵՊՈՒՐԿ (58,000 քն.) Էլպա գետոյն վերայ բրուսիական Սաքսոնիոյ գլխ. քաղաքն եւ շատ ամուր . այս քաղաքս Որոն Կուերիք շնչելոյց մեքենան հնարեց :

ՀԱԼԼԷ (30,000 րն.) մեծ աղահանք ունի, եւ համա-
լսարանը շատ երեսելի է :

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՄԱՍՆ ԲՐՈՒՍԻՈՅ.

ՄԻԻՆՍԹԷՐ (30,000 րն.) Վեսթֆալիոյ գլխաւոր քաղա-
քը գեղեցիկ եւ ծաղկած : Այս քաղաքս եղաւ 1648-ին
Վեսթֆալիոյ հռչակաւոր հաշտութիւնը :

ՔՈՒՆԻԱ (114,000 րն.) Հռենոս գետոյն վերայ, Հռե-
նոսեան գաւառին գլխ. քաղաքը, ամուր, շատ ճարտար,
վաճառաշահ, ծաղկած եւ գեղեցիկ. շէնքերու մեջ նշա-
նաւոր է մայր եկեղեցին փառաւոր եւ ընդարձակ, որ
1863-ին աւարտեցաւ : Այս քաղաքս շատ կշիւնուի *Քոլո-
նիայի ջուր* կոչուած ոգելից եւ հոտաւետ ջուրը : Հայրե-
նիք է քաղաքս Ռուպինս պատկերահանի :

ՍՈՒՆԿԷՆ (10,000 րն.) գէնքի մեծամեծ եւ երեսելի
գործարաններ ունի :

ՏԻՍԷՆՏՈՐՖ (32,000 րն.) Հռենոսի վերայ շատ գեղե-
ցիկ քաղաք, ծաղկած, ճարտար եւ վաճառաշահ :

ԷԼՊԷՐՖԷՐՏ (30,000 րն.) եւ ՊԱՐՄԷՆ (30,000 րն.) շատ
ճարտար եւ վաճառաշահ քաղաքներ, բազմաթիւ գործա-
րաններ ունին մետաքսէ, բրդէ եւ բամբակէ գործուածք-
ներու :

ՔՈՊԼԷՆՅ (20,000 րն.) Հռենոս եւ Մոզել գետերու խառ-
նուած տեղը, ամուր, ճարտար եւ վաճառաշահ. հռենո-
սեան գաւառին կուսակալը այս տեղ կնստի :

ՊՈՆ (15,000 ըն.) համալսարանը շատ երեսելի է :

ԷՍԼԱՇԱՓԷԼ կամ ԱՔՈՒԻՍԿՐԱՆԱ (56,000 ըն.) Մեծին Կարոյոսի տերութեան մայրաքաղաքը, ուր երկար ատեն նորա յաջորդները կօծուեին, առաջ շատ ասելի ծաղկած եւ բազմամարդ էր. այժմ երեսելի է մայր եկեղեցին հնութեամբը, եւ հանքային տաք ջրեր ունի :

ԹԲԵՒ կամ ՏՐԵՒԵՐԻ (16,000 ըն.) Մոզէլ գետոյն վերայ շատ հին քաղաք. նշանաւոր է մայր եկեղեցին, եւ երեսելի է Հռոմայեցւոց շինած բազմաքիւ շէնքերու մնացորդներովը :

Ա Ի Ս Տ Ր Ի Ա.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — Հունգարացիք կամ Մաճառք երկար ժամանակ արեւմտեան Եւրոպան ոտնակոխ անելէն յետոյ՝ հաստատուեցան վերջապէս հին ժամանակը *Պաննոնիա* կոչուած երկիրն եւ անունը դրին *Հունգարիա* կամ *Մանառուման* : Մեծն Որոն Գերմանիոյ կայսրը իններորդ դարու մէջ իւր տերութիւնը Մաճառաց յարձակմունքներէն պաշտպանելու համար, արեւելեան կողմը տերութիւն մի հաստատեց որ Էօսթերրայխ (Աւստրիա) կամ արեւելեան բազաւորութիւն կոչուեցաւ : Հռոզուլփոս Հապրսպուրկցին որ 1273-ին կայսր ընտրուեցաւ, իւր ցեղին ժառանգութիւն արաւ Աւստրիան, յորմէ 1438-էն ի վեր ընտրուեցան Գերմանիոյ կայսերք : Հռոզուլփոսի յաջորդ-

ները ժառանգութեամբ, խնամութեամբ եւ գնելով շատ երկիրներու տէր եղան : ՔՁ դարուն մեջ Կարոյոս Հինգերորդ գերմանական երկիրներէն զատ (Ալսացիա, Աստրիա, Սրիբիա, Քարինթիա, Թիրոլ եւ Պրիսկա)՝ ունէր նաեւ *Ֆրանշքոնրէ*, *Ստորին Նանանգք*, *Սպանիան*՝ Իտալիոյ մեջ ունեցած երկիրներովը, այսինքն *Միլանու գաւառը*, *Նեապոլիս*, *Սիկիլիա*, *Սարտենիա*. Իւր եղբայրն Ֆերտինանտ՝ նոյն միջոցին տէր եղաւ Պոնեմիոյ, Շլեզիոյ, Մաճառստանի եւ Խոռասրաց երկրին :

Կարոյոս Հինգերորդի հրաժարելէն յետոյ Հապսպուրկեան ցեղին երկիրները երկու բաժանուեցան . մէկ մասին վերայ տիրեց Փիլիպպոս Բ Սպանիոյ թագաւորը, եւ միւսին վերայ Ֆերտինանտ : Կարոյոս Ջ 1740-ին անորդի մեռնելով, Մարիամ Թերեզիա աղջիկն իւր երկիրներուն ժառանգ թողուց, որով սկսաւ *Լորենեան* Աստրիոյ ցեղը :

Աստրիոյ ցեղն Ալսացիա եւ Ֆրանշքոնրէ գաւառները ժե դարուն մեջ Գաղղիոյ թողուց, եւ 1763-ին Շլեզիոյ մեծ մասն՝ Բրուսիոյ . բայց Լեհաստանի բաժանման ժամանակ Կալիցիան Աստրիոյ անցաւ : Նափոյեռնի հետ ունեցած պատերազմներովն Աստրիան իւր երկիրներուն շատը կորոյս . 1815-ին հաշտութեամբը կորուսած երկիրներուն մեծ մասն ետ առաւ . բաց յայնմանէ Վենետիկը, Տալմացիան եւ Լոմպարտիան Աստրիոյ հետ միացան : 1846-ին Աստրիան Կալիցիոյ հետ միացուց Բրաքով ազատ քաղաքը : 1859-ին Փիեմոնթեացի եւ Գաղղիացիոց հետ ունեցած պատերազմէն յետոյ Լոմպարտիան կորոյս ,

եւ Իտալիոյ մեջ միայն Վենետիկը գաւառովը միատեղ մնաց սպժմու *Յրակց-եօղեֆ* անուանով կայսեր ձեռքը, որ 1849-են ի վեր կքաղաւորէ :

Աւստրիոյ սահմանն է հիւսիսէն՝ Սաքսոնիա եւ Բրոսսիա, արեւելքէն՝ Ռուսիա եւ Միացեալ իշխանութիւնք, հարաւէն՝ Տաճկաստան, Ադրիական ծով եւ Իտալիա, արեւմտքէն՝ Իտալիա, Զուիցերի եւ Պաւերա :

Տարածութիւնն է 6,500 քիւրմերը քառակուսի :

Աւստրիոյ երկիրներն երկու կրածանուին. Գերմանական Դաշնակցութեան մեջ եղածներն, եւ Գերմանական Դաշնակցութենէն դուրս եղածները :

Դաշնակցութեան մեջ եղած գաւառներն են .

Ա. Աւստրիա ,	գլխ.	քաղ.	Վեննա .
Բ. Թիրոլ ,	„	„	Ինսպրուք .
Գ. Քարինթիա ,	„	„	Քլակենֆուրք .
Դ. Քառնիոլ ,	„	„	Լայպախ .
Ե. Լիւրիկեան Ծովեզր ,	„	„	Թրիեստ .
Զ. Ստիրիա ,	„	„	Կրաց .
Է. Մորաւիա ,	„	„	Պրիւն .
Ը. Շլեզիա Աւստրիոյ	„	„	Թրոփիա .
Թ. Պոհնմիա ,	„	„	Փրակա :

Գերմ. Դաշնակցութեան մեջ չմտած երկիրներն են .

Ժ. Կալիցիա ,	Պլ. ք.	Լեմպերկ .
ԺԱ. Պոքրովինա ,	„ „	Չեռնովից .

ԺԲ. Հունգարիա ,	զլ. ք.	Պուտա , Փեշք .
ԺԳ. Թրանսիլուանիա ,	» »	Քլադեմպուրկ ,
ԺԴ. Թրմըշուարայ իշխ.	» »	Թրմըշուար .
ԺԵ. Խոռուարաց եւ Սքլա- ւոնաց երկիր	» »	Սկրամ .
ԺԶ. Զինուորական սահ.	» »	Փեքրովարատին .
ԺԷ. Տալմացիա ,	» »	Ծարա .
ԺԸ. Վենեցիա ,	» »	Վենետիկ :

Երկիրն ընդհանրապէս լեռնոտ է . միայն Մաճառքս-տանը , Կալիցիոյ հիւսիսակողմն ու Աստրիոյ մեկ մասը դաշտային են : Երկու լեռանց զօտի կայ Աստրիոյ կայսերութեան մեջ . *Կարպար*՝ արեւելեան եւ հիւսիսային կողմերը , որոյ այլ եւ այլ ճիւղերն են *Սուտէք* կամ *Ռիզենկայիրկէ* (հսկայից լեռինք) , Բրուսիոյ եւ Աստրիոյ մեջտեղ , *Մորաւեան լեռինք*՝ Մորաւիոյ մեջ , *Էրցկէպիրկէ*՝ Պոնեմիոյ մեջ , *Ալպեան լեռինք*՝ որոյ այլ եւ այլ ճիւղերն են *Հոլտեան Ալպեայք*՝ Թիրոլի մեջ , *Նորիկեան Ալպեայք*՝ Թիրոլի եւ Աստրիոյ մեջտեղերը , *Քառնիոլի Ալպեայք* , եւ այլն , որ կերբան Պալքան լեռանց հետ կմիանան :

Հողը շատ բարեբեր է եւ լաւ մշակուած . միայն Մաճառքստանի մեջ տեղ տեղ ճախճախուտ եւ աւազուտ է :

Օղը բարեխառն է :

Գլխաւոր գետերն են *Դաւուր*՝ ամենէն մեծն որ մեջտեղէն կանցնի , *Տեւարեր* , *Վիսրլա* , *Օտէր* եւ *Էրպա* :

Գլխաւոր գետակներն են . Մորաւա՝ որ էլպա կրափի ,
Ին , Էնս , Տրաւա , Սաւա , Թիւա՝ որ Գանուք գետը
կրափին :

Աստրիոյ մէջ շատ լճեր եւ ճահիճներ կան . գլխաւոր-
ներն են Նայգիտէլ (ըստ Մաճառաց Ֆերքոյ) եւ Պաշա-
թոն :

Գլխաւոր բերքն է Մաճառատանի մէջ առատ ոսկի ,
արծար , պղինձ , եւ շատ մը հանքային ջրեր . Բարինբիոյ
մէջ սնդիկ եւ կապար . Պոհեմիոյ մէջ անագ եւ պատուական
քարեր . Կալիցիոյ մէջ աղ . ամենայն տեղ երկաթ՝ բայց
ամենեւն աւելի Ստիրիոյ մէջ . նոյնպէս ամենայն տեղ հան-
քային ածուխ : Բոսոց մէջ Աստրիան ունի առատ ցորեն ,
վոշ , կանեփ , ծխախոտ . տեսակ տեսակ պտղատու ծա-
ռեր եւ մեծամեծ անտառներ . Մաճառատանի գինին
անուանի է : Կենդանեաց մէջ ունի ընտիր ձի , եզ , ոչխար
եւ խոզ :

Բնակիչն է իբր 35,000,000 , այլ եւ այլ ազգեր , տար-
բեր մեկմեկէ քէ լեզուով , քէ կրօնքով եւ քէ սովորու-
թեամբք : Սոքա չորս գլխաւոր ցեղ կրածանուին . Գեր-
մանացիք 8,000,000 , Իտալացիք 2,900,000 , Մաճառք
5,000,000 , Սլաւեանք 15,500,000 որ շատ ազգեր կրածա-
նուին՝ ինչպէս Պոհեմիացիք , Լեհք , Սլովաքք , Սքլա-
ւոնք , Տալմարք , Խոուարք , եւ այլն : Երեք միլիոնի
չափ Վալաքք Աստրիոյ արեւելեան հարաւակողմը ցրուած
են , որ առանձին լեզու ունին լատիներենէ լատաջ եկած :
Հրեայքն ու Բոշաները շատ են Աստրիոյ մէջ : Մաճառք

Մաճառատանի բնակչաց կեսն պակաս են, մնացածներն այլ եւ այլ ազգեր են. անոր համար տերութեան լեզու լատիներենն ընդունուած էր Մաճառաց բազաւորութեան ժամանակ: — Աստրիոյ արեւելեան կողմը բազմաթիւ մերազնեայք կան. յորոց միայն Սուջաւա քաղաքին Հայերն ազգային կրօնքն ու ծեսերն անփոփոխ պահած են: — Տերութեան եւ բնակչաց մեծ մասին՝ այսինքն իբր (25,000,000) կրօնքն է հռովմեականութիւն, 3 միլիոնի չափ բողոքականք, 3 միլիոն արեւելեան եկեղեցւոյ դաւանութիւն, մեկ միլիոնի չափ Հրեութիւն, եւ ուրիշ կրօնքեր:

Գիտութիւններն ու հասարակաց կրթութիւնը շատ ծաղկած են Աստրիոյ մեջ, մանաւանդ գերմանական գաւառաց մեջ: Ճարտարութեան կողմանէ շատ լառաջադէմ է Աստրիան. երեւելի են Պոնեմիոյ կտաւները, քղքերն եւ ապակին. Ստիրիոյ երկաթե եւ պողպատե գործուածքները. Վեննայի ոսկիե բանուածները, կառքերը եւ դաշնակները. Վենետկոյ հայելիները, օճառներն եւ փարակեն: — Վաճառականութիւնն եւս շատ բանուկ է, քե եւ գրեթէ ամբողջ ցամաքային տերութիւն է. ունի գեղեցիկ ջրանցքներ եւ երկաթուղիներ, որ օր ըստ օրե կրագմանան:

Տերութիւնն է չափաւորած միապետութիւն. միապետն ընդհանուր անուամբ Կայսր կկոչուի, բայց իւրաքանչիւր երկրի համար մասնաւոր պատուանուն ունի, ինչպէս որ կնշանակեմք:


ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔԻՔ .

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ԵՂԱԾ ԳԱՒԱՌՔ .

Ա. ԱՐՇԻԳՔՍՈՒԹԻՆ ԱՒՍՏՐԻՈՅ .

ՎԵՆՆԱ (476,000 բն.) Գանուր գետոյն վերայ , Աստ-
րիոյ արշիղքսութեան գլխաւոր քաղաքն եւ բոլոր կայ-
սերութեան մայրաքաղաքը , բազմամարդութեան կողմա-
նէ Եւրոպայի հինգերորդ քաղաքն է . իսկ գիտութեանց ,
արուեստից եւ ճարտարութեան կողմանէ՝ առաջիններէն
մէկն է . վաճառականութիւնն եւս շատ ծաղկած է : Բուն



Վեննա .

քաղաքն փոքրիկ է եւ գեղեցկութիւն մի չունի . բայց 34 արուարձանք ունի որ Վեննայի մասն կհամարուին , եւ ունին բազմաքիւ գեղեցիկ շէնքեր եւ հոյակապ պալատներ , որոց մեջ նշանաւոր է Ս. Ստեփանոս մայր եկեղեցին , որոյ աշտարակին բարձրութիւնն է 142 մեքր . ունի անուանի համալսարան եւ ուրիշ բազմաքիւ ուսումնական տեղեր : Այս քաղաքս եղաւ 1814-ին հռչակաւոր եւրոպական ժողովն , որ այժմու տերութեանց իւրաքանչիւրին սահմաններն որոշեց , թէ եւ մինչեւ ցայժմ փոքր ինչ փոփոխութիւն առաւ այն որոշմունքը : — Այս տեղ է Մխիթարեանց Պաշտպան Ս. Աստուածածնի անուանով վանքն ու տպարանը : — Վեննայի արուարձանաց մեջ նշանաւոր է *Շէնպրիւն* , որ ունի ընդարձակ կայսերական պալատ մի , եւ երեսելի բուսարանական պարտեզ :

ԼԻՆՅ (30,000 բն.) Գանուրի վերայ ամուր բերդաքաղաք , ծաղկած , ճարտար եւ վաճառաշահ . բազմաքիւ ուսումնարաններ ունի :

ՇԹԱՅԷՐ (10,000 բն.) Էնս գետակի վերայ , ունի երկաթեղենի երեսելի գործարաններ :

ՍԱԼՏՊՈՒՐԿ (16,000 բն.) Սալցա վտակի վերայ , գեղեցիկ մայր եկեղեցի ունի , եւ մեծ աղահանք :

Բ. ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ԹԻՐՈՒԻ .

Այս երկիրս սաստիկ լեռնոտ է . օղբ եւ բերքը Զուիցերիի նման է , որոյ սահմանակից է :

ԻՆՍՓՐՈՒՔ կամ ԻՆՍՊՐԻՒՔ (16,000 ըն.) Ին գետակի վերայ, վաճառաշահ քաղաք, ունի համալսարան մի :

ԹՐԵՆԹՈՅ (Տրիդենտոն) (10,000 ըն.) Ատիճե գետոյն վերայ, մետաքսեղենի գործարաններ ունի : Այստեղ եղաւ հոռմեականաց տասնեւիններորդ եւ վերջին ընդհանուր ժողովն 1545-էն մինչեւ 1563 :

ՊՐԷԿԷՆՅ, Կոստանցայի լճին վերայ, փոքրիկ քաղաք. անուանի զինի եւ մեծամեծ անտառներ ունի :

Գ. ԳՔՍՈՒԹԻՒՆ ՔԱՐԻՆԹԻՈՅ .

ՔԼԱԿԷՆՖՈՒՐԹ (15,000 ըն.) անուանի են մետաքսի գործարանները :

Գ. ԳՔՍՈՒԹԻՒՆ ՔԱՌՆԻՈԼԻ .

ԼԱՅՊԱԽ կամ ԼՈՒՊԻԱՆԱ (20,000 ըն.) Սառա գետակի մօտ, վաճառաշահ քաղաք, Լիւրիկէի բազաւորութեան մայրաքաղաքը :

Ե. ԼԻՒՐԻԿԵԱՆ ԾՈՎԷՋԻՐ .

ԹՐԻԵՍ (104,000 ըն.) Ալբիական ծովուն համանուն ծոցոյն վերայ, կայսերութեան առաջին բանուկ եւ զինուորական նաահանգիստը, ծաղկած եւ ճարտար :

ԻՍՏՐԻԱ, սնդիկի առատ հանքեր ունի :

ԿՈՐԻՑԻԱ կամ ԿԵՐՅ (10,000 ըն.) զինին անուանի է :

ԱՏԷԼՍՊԷՐԿ, երեսելի է քովի այրերովը :

ՓՈԼԱ, Իստրիա բերակղզւոյն մեջ գեղեցիկ նաւահան-
գիստ : Սորա քովերէն կելնէ այն աւազն յորմէ Վենետկոյ
հայելիները կշինուին :

Լիւրիկեան ծովեզրն եւ Քառինթոյ եւ Քառնիոյի դըք-
սութիւնները Լիւրիկէի բազաւորութիւնը կկազմեն :

Զ. ՍՏԻՐԻԱ .

ԿՐԱՅ (63,000 բն.) Մուր վտակի վերայ, ճարտար եւ
վաճառաշահ քաղաք, ունի համալսարան մի եւ պողպա-
տի գործարաններ :

Է. ՄԱՐԳԻՉՈՒԹԻՒՆ ՄՈՐԱԻՒՅ .

ՊՐԻՒՆ (58,000 բն.) ծաղկած եւ վաճառաշահ քաղաք,
անուանի է ջուխայի գործարաններովը : Այս քաղաքիս
մօտ է *Աւստերլից* զիւղն, ուր եղաւ երից կայսերաց պա-
տերազմը 1805-ին :

ՕԼՄԻՒՅ (20,000 բն.) Մարշ կամ Մորաւա գետակի վե-
րայ, ամուր բերդաքաղաք, ունի համալսարան :

Ը. ՇԼԵՋԻԱ .

ԹՐՈՓՓԱԻ (15,000 բն.) Աւստրիոյ իշխանութեան տակ
մնացած Շլեզիոյ փոքրիկ մասին գլխաւոր քաղաքն :

Թ. ԹԱԳՍԻՈՐՈՒԹԻՒՆ ՊՈՀԵՄԻՅ .

ՓՐԱԿԱ (142,000 բն.) Մոլտաւ գետակի վերայ, ամուր

քաղաք, գեղեցիկ, ծաղկած եւ վաճառաշահ. անուանի
համալսարան ունի :

ՔԱՐԼՍՊԱՏ, անուանի է հանքային տաք ջրերովը :

ԷԿԷՐ (10,000 ըն.) համանուն գետակի վերայ, վաճա-
ռաշահ քաղաք, անուանի է մօտերն եղած հանքային ջր-
բերուն համար :

ԴԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵՆԷ ԴՈՒՐՍ
ԵՂԱԾ ԳԱԻԱՌՔ .

Ժ. ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԿԱԼԻՑԻՈՅ .

ԼԷՄՊԷՐԿ կամ ԼԷՈՊՈԼԻՍ կամ ԻԼՎՈՎ, (70,000 ըն.) երբե-
մբն Կարմիր Ռուսիոյ գլխաւոր քաղաքն էր, մեծ եւ վաճա-
ռաշահ : — Մետասաներորդ դարուն մեջ Անիկն բազմաբի-
զադրականներ այս քաղաքս եկան բնակեցան. որոց
արքեպիսկոպոսարանը մինչեւ ցայժմ կայ. թէ՛ դարուն
սկիզբները ամենքը արեւմտեան եկեղեցւոյ հետ միանա-
լով՝ կամաց կամաց լեզունին մոռացան, որով եւ ազգու-
թիւններն եւս կորուսին. այժմ Լեհացի են :

ՎԵԼԻԻՉԲԱ, եւ ՊՈՂՆԻԱ, փոքրիկ քաղաքներ, բայց մեծ
հանքեր ունին աղի, մանաւանդ առաջինը :

ՊՐՈՏԻ (20,000 ըն.) վաճառաշահ քաղաք, բնակչաց
մեծագոյն մասն հրեայ է :

ՔՐԱՔՈՎ (41,000 րն) Լեհաստանի բազաւորութեան մայրաքաղաքն էր . 1815-էն մինչեւ 1846 ազատ հասարակապետութիւն էր : Վիսքլա գետոյն վերայ գեղեցիկ , ծաղկած եւ վաճառաշահ . սորա մայր եկեղեցւոյն մեջ թաղուած են Լեհաստանի բազաւորները :

ԳՔՍՈՒԹԻԻՆ ՊՈՒՔՈՎԻՆԱՅ .

ՉԵՌՆՈՎԻՅ (30,000 րն .) Փրութ գետոյն վերայ գեղեցիկ եւ ծաղկած :

ՍՈՒՉԱԻԱ , երբեմն Մոլտաւիոյ մայրաքաղաքն էր :

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻԻՆ ՀՈՒՆԳԱՐԻՈՅ .

ՊՈՒՏԱ կամ ՕՅԷՆ (55,000 րն .) Դանուբի աջակողմը , Մաճառստանի այժմու մայրաքաղաքը , աթոռ Պալատինի կամ փոխարքային Մաճառաց :

ՓԵՇԹ (131,000 րն .) Դանուբին ձախակողմը , Պուտայի դիմաց , որոյ հետ գեղեցիկ կարմրջով միացած է . Մաճառստանի ամենէն մեծ , բազմամարդ , ծաղկած , վաճառաշահ եւ ճարտար քաղաքն է . ունի համալսարան :

ՓՐԵՍՊՈՒՐԿ (43,000 րն .) Դանուբի ձախակողմը , Հունգարիոյ հին մայրաքաղաքն , ուր Աւստրիոյ կայսերք Մաճառաց բազաւոր կօծուէին :

ԷՐԼԱԻ կամ ԷԿԷՐ (24,000 րն .) եւ ԹՈՔԱՅ (6,000 րն .) գինիներն անուանի են , մանաւանդ երկրորդինը ' որ աշխարհիս ամենէն լաւ գինին կհամարուի :

ՇԵՄՆԻՑ (10,000 ըն.) եւ ՔՐԵՄՆԻՑ (6,000 ըն.) ոսկւոյ
եւ արծաթի հանքերովն երեսելի են :

ՔՈՄՈՐՆ (20,000 ըն.) Դանուբի մեկ կողմոյն մեջ, շատ
ամուր բերդաքաղաք :

ՇԹՈՒԼՎԱՅՍԷՄՊՈՒՐԿ (36,000 ըն.) վաճառաշահ . այս
քաղաքս կօծուեին եւ կբաղուեին Մաճառաց քաղաւոր-
ները :

ՏԵՊՐԵՅԻՆ (36,000 ըն.) Փեշքեն յետոյ Հունգարիոյ ա-
մենեն ճարտար եւ վաճառաշահ քաղաքը :

ՍԵԿԵՏԻՆ կամ ՍԻԿԵԹ (62,000 ըն.) Թայս զետակի վե-
րայ ամուր բերդաքաղաք, ճարտար եւ վաճառաշահ :

ԹԵՐԵԶԻԱՆՈՓՈԼ կամ ԹԵՐԵԶԻԷՆՇԹԱԹ (53,000 ըն.) ճար-
տար քաղաք :

ԿՐԱՆ (10,000 ըն.) Դանուբի վերայ, Հունգարիոյ նա-
խագահ արքեպիսկոպոսն այս քաղաքս կնստի . ունի զե-
ղեցիկ նորաշէն մայր եկեղեցի :

ՄՈՀԱԶ, Դանուբի վերայ ամուր բերդաքաղաք :

ՄԵՆԾ ԳՔՍՈՒԹԻՆ ԹՐԱՆՍԻԼՈՒԱՆԻՈՅ .

ՔԼԱԻԶԷՆՊՈՒՐԿ կամ ՔԼՈՒԹ (30,000 ըն.) 1861-էն ետքը
դարձեալ Թրանսիլուանիոյ զլխաւոր քաղաքն է :

ՔՐՈՆՇԹԱԹ կամ ՊՐԱՇՈՎ (26,000 ըն.) Թրանսիլվանիոյ
ամենեն վաճառաշահ քաղաքը :

ՀԵՐՄԱՆՇԹԱԹ կամ ՍԻՊԻՆ (20,000 ըն.) ճարտար քա-
ղաք :

ՔԱՐԼՍՊՈՒՐԿ (15,000 ըն.) ամուր բերդաքաղաք, ա-
նուանի է ոսկւոյ հարուստ հանքերովը :

ԿԵՌԼԱ, ձՈՒՐՏՈՎ, եւ ԵՂԻՍԱՖԵԹՈՒՊՈԼԻՍ կամ ԷՊԷՅՅՈԼ-
ՎՈՅ, կամ ՊԱՇՊԱԼՈՎ, ճարտար, վաճառաշահ եւ հայա-
բնակ քաղաքներ . մինչեւ 1849 Հայք առանձին արտօնու-
թեամբ շատ ազատութիւններ ունեին այս քաղաքներուս
մէջ : ԿԵՌԼԱ քաղաքը, որ եւ ՍԱՄՈՇՈՒՅՎԱՐ կամ ԱՐՄԷՆԻԷՆ-
ՇԹԱԹ կասուի, Հայք ծաղկեցուցին արուեստներով եւ վա-
ճառականութեամբ :

ՋԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՔ .

ՓԵԹՐՈՎԱՐԱՏԻՆ (15,000 ըն.) Դանուբի վերայ, շատ ա-
մուր բերդաքաղաք :

ՔԱՐԼՈՎԻՅ (10,000 ըն.) Դանուբի վերայ Երեսելի քա-
ղաք :

ՋԵՄԼԻՆ (15,000 ըն.) Դանուբի վերայ Պելկրատի դի-
մաց, ամուր եւ շատ վաճառաշահ քաղաք :

ԽՈՒՒԱԹԱՅ ԵՐԿԻՐ .

ԱԿՐԱՄ կամ ՋԱԿՐԱՊ (15,000 ըն.) Սաւա գետոյն մօտ
վաճառաշահ քաղաք :

ՏԱԼՄԱՅԻԱ .


ԾԱՐԱ կամ ՋԱՏՐԻԱ (8,000 ըն.) ամուր միջնաբերդ ու-
նի, եւ նաւահանգիստ :

- ՍԵՊԵՆԻՔՈՅ, սորա մօտ է Քերքայի զեղեցիկ ջրվեժը :
ՍՓԱԼԱԹՐՈՅ, սորա մօտ է Սալոնայի աւերակներն ուր
քաշուեցաւ Գիոկղետիանոս :
ՌԱԿՈՒԶԱ, համանուն հասարակապետութեան մայրա-
քաղաքն էր :
ՔԱԹԹԱՐՈՅ, նաւահանգիստ, Աստրիոյ ամենէն հարա-
ւային քաղաքը :

ԹԸՄԸՇՈՒՄԸ .

ԹԸՄԸՇՈՒՄԸ, (20,000 բն.) ամուր բերդաքաղաք :

(Վիճակ Վեներոյ . — Տես յԻտալիա .)



ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴՄՇՆԱԿՅՈՒԹԻՒՆ .

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ : — Գերմանիան ըստ գերմա-
նացւոց Տալլլանտ (երկիր Տեւտոնեանց), ընդարձակ եր-
կիր մի է, յորում հին ժամանակները շատ բարբարոս եւ
անգութ ազգեր կրնակէին : Իններորդ դարուն սկիզբը
Մեծն Կարոլոս տիրեց այս երկրիս, եւ նորա մահուանէն
յետոյ, 843-ին առանձին թագաւորութիւն եղաւ . երբոր
Մեծին Կարոլոսի ցեղը վերջացաւ Գերմանիոյ մեջ 911-ին,
թագաւորութիւնն ընտրողական եղաւ : Մեծն Որոն' Գեր-

մանիոյ քաղաւորը , տիրեց նաեւ Իտալիոյ , եւ Հոռմ քաղաքը կայսր օծուելով 969-ին ' գերմանացի հռոմեական կայսերութիւնը հիմնեց : Այս տերութիւնս երթալով ընդարձակեցաւ , Գաղղիոյ արեւելեան կողմերուն տիրեց , եւ Իտալիոյ մեջ մինչեւ Նեապօլիս քաղաքին մօտ հասաւ . քայց կայսրն իրօք դաշնակցութեան գլխաւորն էր միայն , եւ ոչ թէ տէր Գերմանիոյ . վասն զի այս երկրիս մեջ շատ տերութիւններ կային որ զրեթէ անկախ էին կայսրէն : Երկարատեւ խռովութիւններէ յետոյ եօթն իշխանք իւրեանց սեպհականեցին կայսր ընտրելու իրաւունքն եւ կոչուեցան *կայսրընտիրք* . սոքա 1273-ին կայսր ընտրեցին Ալսացիոյ իշխանը Հոռոլոլփոս Հապսպուրկցին , որ նախահայր եղաւ Աւստրիոյ ցեղին : Կայսերութիւնը ընդհանուր ժողով մի ունէր , եւ 9 շրջանակ կամ գաւառ կրքածանուէր . իւրաքանչիւր գաւառ առանձին ժողով ունէր :

Գերմանիոյ կայսերութիւնն այս կերպով կառավարուեցաւ մինչեւ այս դարուս սկիզբները . Նափոյեոն Ա երեք քաղաւորութիւն հաստատեց ՝ Գերմանիոյ մեջ , եւ Հոռնոսեան դաշնակցութիւնը , որոց պաշտպան կեցաւ ինքը : Ֆրանց Բ 1806-ին հրաժարեցաւ Գերմանիոյ կայսր կոչուելու պատուանունէն , եւ կոչուեցաւ Ֆրանց Ա , կայսր Աւստրիոյ : Վեննայի ժողովը 1815-ին հաստատեց Գերմանիոյ մեջ այժմուս դաշնակցութիւնը . միայն Վերքֆալիոյ քաղաւորութիւնը ջնջեց եւ Հաննովերը քաղաւորութիւն ձեւացուց :

Գերմանիոյ դաշնակցութեան սահմաններն են՝ հետն առնելով Աստրիոյ եւ Բրուսիոյ դաշնակցութեան մեջ ունեցած գաւառները՝ հիւսիսէն Հիւսիսային ծով, Եւրպանտ եւ Պալքիկ ծով. արեւելքէն արեւմտեան Բրուսիա, Փոզնանիա, Կալիցիա եւ Մաճառստան. հարաւէն Ադրիական ծով, Իտալիա եւ Զոսիցերի. արեւմտքէն Գաղղիա, Պելճիա եւ Հոլանտա :

Տարածութիւնն է 6,300 բիւրմերը քառակուսի :

Երկիրը հարաւակողմը սաստիկ լեռնոտ է, յորում Ալպեանց ճիւղերը կտարածուին. մեջտեղերը բարձրաւանդակներ ունի. իսկ հիւսիսակողմը դաշտային է եւ տեղ տեղ ճախճախուտ : Ծովեզերքը ցած է, եւ բազմաբիւրումքերով ու աւազարչուրներով պաշտպանուած է ծովուն ողողմանը դէմ :

Հողը շատ բարեբեր է եւ շատ լաւ մշակուած. միայն հիւսիսակողմը տեղ տեղ աւազուտ անբեր է :

Յոյր հարաւակողմը բարեխառն է կամ ցուրտ, ըստ լեռանց բարձրութեան, մեջտեղերը բարեխառն, իսկ հիւսիսակողմը ցուրտ եւ խոնաւ :

Գլխաւոր գետերն են. *Ռոէր*, *Էլպա*, *Վեզեր*, *Էմս*, *Հոեկոս* եւ *Դաեուր* :

Գլխաւոր բերքն է ցորեն, գարի, վոշ, կանեփ, ծխախոտ, եւ խաղող (մինչեւ լայնութեան 51⁰). լեռներուն մեծ մասն ընդարձակ անտառներով ծածկուած են : Հանքերու մեջ ունի առատ երկաթ, կապար, սղինձ եւ արծաթ. հանքային տաք ջրերը բազմաբիւր են Գերմանիոյ

մեջ : Կենդանեաց մեջ երեւելի են Գերմանիոյ ազնիւ ընտանի կենդանիները , մանաւանդ Մեքլենպուրկի ձին եւ Վեսթֆալիոյ խոզերը :

Բնակիչն է իբր 43,500,000 , որոց 37 միլիոնը գերմանական ցեղէ են , մնացածը սլաւեան ցեղէ՝ որ արեւելակողմը կրնակին : Աստրիան ու Փրուսիան գերմանական դաշնակցութեան մեջ 26,000,000 ժողովուրդ ունին , այնպէս որ Գերմանիոյ միւս տերութեանց բնակչաց թիւը կմնայ 17 միլիոն ու կէս : Կրօնքը հարաւակողմը հռոմեադաւան է , իսկ հիւսիսակողմը բողոքական : Գերմանացիք ժրաջան , աշխատասէր եւ հաստատամիտ մարդիկ լինելով՝ զիտութեանց եւ արուեստից մեջ շատ յառաջադէմ են , եւ ամեն բանի մեջ նորանոր գիտեր հնարած են :

Ճարտարութեան կողմանէ երեւելի են կտաւները , Սաքսոնիոյ յախճապակն , պողպատէ եւ երկաթէ գործուածքները , Սեաւ անտառին փայտէ ժամացոյցները , Նուրեմպերկի խաղալիքները եւ Լիփսիայի գրավաճառութիւնը :

Գերմանական դաշնակցութիւնը 1815-ին 40 մեկմեկէ անկախ , բայց իրարու դաշնակից տերութիւններէ կձեւանար , ոմանք մեծ եւ ոմանք փոքր . այժմ միայն 35 տերութիւն ունի Գերմանական դաշնակցութիւնը , որոյ ընդհանուր ժողովոյն տեղն է Ֆրանքֆորթ քաղաքը Մայն գետոյն վերայ . իւրաքանչիւր տերութիւն ըստ իւր մեծութեան մասնակից կլինի դաշնակցութեան ծախքերուն եւ զօրաց , եւ դարձեալ իւրաքանչիւր տերութիւն ըստ իւր

բազմամարդութեան երեսփոխաններ ունի ընդհանուր ժողովոյն մէջ : Տերութեանց մէջ եթէ վեճ մի բացուի , իրաւունք չունին իրարու դէմ պատերազմի ելնել , այլ Ֆրանքֆորթի ժողովը պիտի քննէ նոցա դատաստանը : Նմանապէս տերութիւն մի կարող չէ առանձին դաշնակցութիւն անել դրսի տերութեանց հետ :

Գերմանական դաշնակցութեան 35 տերութիւններն ասոնք են իւրեանց մայրաքաղաքաւր .

Տերութիւնքն որ մասամբ միայն կմտնեն դաշնակցութեան մէջ .

1. Աստրիոյ կայսերութեան գերմանական գաւառներն (տես Աստրիա) 13,000,000 բնակիչ :

2. Փրուսիոյ թագաւորութեան գերմանական գաւառները (տես ի Փրուսիա) 13,000,000 բն .

3. Տանիմարքայի թագաւորութեան գերմանական գաւառները (Հոլշթայն եւ Լաւեմպուրկ դքսութիւնները) 500,000 բն .

4. Ստորին նահանգաց թագաւորութեան գերմանական գաւառները (Լիմպուրկ եւ Լոքսեմպուրկ դքսութիւնքն) 180,000 բն .

Տերութիւնքն որ բոլորովին դաշնակցութեան մէջ են .

ԶՈՐՍ ԹԱԳԱՒԱՆՈՐՈՒԹԻՒՆՔ.

ՊԱՒԵՐԱ 4,600,000 բն., մայրաքաղաք Միւնխէն :

ՍԱՔՍՈՆԻԱ 2,200,000 բն., մայրաքաղաք Տրեգտա :

ՀԱՆՈՎԷՐ 2,000,000 բն., մայրաքաղաք Հաննովեր :

ՎԻՐԹԷՄՊԻՐԿ, 1,800,000 րն., մայրաքաղաք Շքուքկարտ :

ՎԵՑ ՄԵԾ ԴԻՍՈՒԹԻԻՆԻ.

ՊԱՏԻՆ, մայրաքաղաք Քարլսրուհե, 1,370,000 րն.

ՀԷՍՍԻՆ, մայրաքաղաք Տարմշթաթ, 850,000 րն.

ՍԱՔՍ ՎԱՅՄԱՐ, մայրաքաղաք Վայմար, 260,000 րն.

ՕԼՏԷՄՊՈՒՐԿ, մայրաքաղաք Օլտեմպուրկ, 280,000 րն.

ՄԷՔԼԷՄՊՈՒՐԿ ՇՎԵՐԻՆ, մայրաք. Շվերին, 530,000 րն.

— — ՍԹՐԵԼԻՑ, մայրաքաղաք Նայ-Սթրելից,
90,000 րնակիջ.

ՄԷԿ ԿԱՅՍՐԸՆՏՐՈՒԹԻՆ.

ՀԷՍՍԻՆ, մայրաքաղաք Քասել, 750,000 րն.

ԵՅԹԸ ԴԻՍՈՒԹԻՆԻ.

ՊՐՈՒՆՍՈՒԻՔ, մայրաքաղաք Պրունսուիք, 270,000 րն.

ՍԱՔՍ-ՔՈՊՈՒՐԿ-ԿՈԹԱ, մայրաքաղաք Կոթա, 150,000 րն.

ՆԱՍԱԻ, մայրաքաղաք Վիսպատեն, 400,000 րն.

ԱՆՀԱԼԹ-ՏԷՍԱԻ, մայրաքաղաք Տեսաա, 100,000 րն.

ԱՆՀԱԼԹ-ՊԷՆՆՊՈՒՐԿ, մայրաք. Պեննպուրկ, 50,000 րն.

Այս երկու դքսութիւններս Փրուսիական Սաքսոնիոյ
մէջ են :

ՍԱՔՍ-ԱԼԹԷՆՊՈՒՐԿ, 125,000 րնակիջ. մայրաքաղաք
Ալթենպուրկ, Սաքսոնիոյ թագաւորութեան արեւմտա-
կողմը :

ՍԱՔՍ-ՄԱՅՆԻՆԿԷՆ՝ Պաւերայի հիւսիսակողմը, մայրա-
քաղաք Մայնինկեն 160,000 րն.:

ՈՒԹ ԻՇԽԱՆՈՒԹԻԻՆՔ.

ԼԻՓԷ-ՏԷԹՄՈԼԹ, ՎԵՍՔՖԱՅԻՈՅ ԻԽԱԽԱԿՈՂՄՐ, մայրաքաղաք Տեքմուտ 100,000 ըն.

ԼԻՓԷ-ՇԱՄՊՈՒՐԿ, ՎԵՍՔՖԱՅԻՈՅ ԵՍ ՀԱՆՆՈՎԵՐԻ մեջտեղ, 28,000 ըն. մայրաքաղաք Պիքեպուրկ :

ՎԱԼՏԷՔ-ՓԻՐՄՈՆԹ, ԼԻՓԻԷ Տեքմուտի ԵՍ ՊՐՈՒՆՍՈՒԻՔԻ մեջտեղ, մայրաքաղաք Արուսեն 58,000 ըն.

ՌԱՅՍ-ՇԼԱՅՑ, մայրաքաղաք Շլայց, 75,000 ըն., ԵՍ

ՌԱՅՍ-ԿՐԱՅՑ, մայրաքաղաք Կրայց, ԵՐԿՈՒՍՆ ԵՍ ՊԱԿԵՐԱՅԻ ԵՍ ՍԱՔՍՈՆԻՈՅ մեջտեղերը . 35,000 ըն.

ՇՈՒԱՐՑՊՈՒՐԿ ԶՈՆՏԷՐՍՀԱԻԶԷՆ 60,000 ըն. փրուսիո երկրին մեջ, մայրաքաղաք Առնշթաթ :

ՇՈՒԱՐՑՊՈՒՐԿ ՌՈՒՏՈԼՇԹԱԹ, 70,000 ըն. Սաքս Վայմարի Իարաակողմը, մայրաքաղաք Ռուտուշթաթ :

ԼԻԹԷՆՇԹԱՅՆ, ՀՈՒՆՈՍԻ աջակողմը, Կոստանցայի լճին Իարաակողմը, մայրաքաղաք Լիխթենշթայն, 6,000 ըն.

ՄԷԿ ԼԱՆՏԿԻՐԱԻՈՒԹԻՆ.

ՀԷՍՍԷՆ ՀՈՄՊՈՒՐԿ, ՀԵՍՏԵՆ ղքսուրեան արեամտակողմը, մայրաքաղաք Հոմպուրկ 25,000 ըն.

ԶՈՐՍ ԱԶԱՏ ՔԱՂԱՔՔ ԿԱՄ ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԻՆՔ.

ՖՐԱՆՔՖՈՐԹ, Մայն գետոյն վերայ, 70,000 ըն.]

ՀԱՄՊՈՒՐԿ, 190,000 ըն.

ՊՐԵՄԱ, 75,000 ըն.

ԼԻԻՊԷՔ, 50,000 ըն.

Բաց ի չորս ազատ քաղաքներէն՝ Գերմանիոյ ամեն տե-
րութեանց կառավարութիւնն է սահմանադրական միասնե-
տութիւն ժառանգական :

Պ Ա Ի Ե Ր Ս.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ . — Հին ժամանակները Պա-
ւերան Հռովմայեցոց տիեզերական իշխանութեան տակ
էր , Բարբարոսաց արշաւանաց ժամանակ Բոյացիք Պոհե-
միայէն քշուելով՝ եկան այս երկիրս բնակեցան եւ ա-
նունը դրին Բոյարիա կամ Պոյարիա՝ որ յետոյ եղաւ Պա-
ւերա կամ Պառիերա : Մեծն Կարոյոս տիրեց այս երկրիս
եւ մեջը կոմսեր եւ դքսեր հաստատեց , յորոց ոմանք ետ-
քերը շատ զօրացան եւ մինչեւ Աստրիոյ ներսերն տի-
րեցին : Նախոյեռն Ա. 1806-ին Պաւերայի դքսին թագաւորի
անունը տալով՝ Հռենոսեան դաշնակցութեան մեջ մտցուց
զինքը . 1815-ին Վեննայի ժողովով հաստատուեցաւ այս
նոր թագաւորութիւնս , որ բուն Գերմանիոյ մեջ ամենէն
մեծն եւ թագամարդն է : Այժմու թագաւորողն է Լուտո-
վիկոս Բ. 1848-էն ի վեր :

Պաւերայի թագաւորութիւնը երկու որոշ մասերէ ձեւա-
ցած , է Վիրթեմպերկի թագաւորութեամբ եւ Պատենի մեծ
դքսութեամբ իրարմէ զատուած , եւ որոց մեծագունին սահ-
մանն է հիւսիսէն Սաքսոնիոյ թագաւորութիւն , Ռայս իշ-
խանութիւնները , Սաքս-Կորա , Սաքս-Մայնինկէն , Սաքս-
Վայմար եւ Հեսսէն-Քասել . արեւելքէն Աստրիա , հարա-

են Աստրիա եւ Ջուիցերի, արեւմտքեն Վիրթեմպերկ, Հեսսեն-Տարմշթաթ, Պատեն եւ Ֆրանքֆորթ :

Իսկ փոզրագոյն մասին սահմանն է հիւսիսէն Հեսսեն-Տարմշթաթ եւ Բրունսիա, արեւելքէն Պատեն, հարաւէն Գաղղիա եւ արեւմտքէն Հեսսեն-Հոմպուրկ եւ Բրունսիա :

Տարածութիւնն է 760 բիւրմէրր քառակուսի :

Բնակիչն է 4,600,000 : Տերութեան եւ բնակչաց մեծագոյն մասին կրօնքն է հռոմեական :

Պաւերան ութ գաւառ կրածանուի :

ԳԼԽԱՆՈՐ ՔԱՂԱՔԻՔ .

ՄԻՒՆԻՔ, ՄԻՒՆԻՔԷ կամ ՄՈՆԱՔՈՅ (137,000 բն.) Իզարի ձախակողմը, տերութեան մայրաքաղաքը եւ Գերմանիոյ գեղեցիկ քաղաքներէն մեկը . ունի բազմաթիւ բարձր զիտութեանց վարժարաններ՝ յորս երեւելի է համալսարանը որ Երոպայի առաջիններէն մեկն է . հարուստ գրատուն, դիտարան եւ բազմաթիւ բանգարաններ . շէնքերու մեջ նշանաւոր է բազառորական պալատը : Ճարտարութեան եւ վաճառականութեան կողմանէ եւս շատ յառաջադեմ է . երեւելի են դիտակներն, եւ մեծամեծ գործարաններ ունի գարեջրոյ :

ԱԻԿՍՊՈՒՐԿ կամ ԱԻԿՈՒՍԹԱ (43,000 բն.) երբեմն Գերմանիոյ ամենափարթամ քաղաքն էր . այժմ եւս բոլոր Գերմանիոյ առաջին կարգի ճարտար եւ վաճառաշահ քաղաքներէն մեկն է . ունի բազմաթիւ ուսումնարաններ եւ մարդասիրական ընկերութիւններ :

ՌԱԹԻՍՊՈՆԱ կամ ՌԷՎԷՆՍՊՈՒՐԿ (30,000 ըն.) Դանուբի ձախակողմը, երբեմն Գերմանիոյ կայսերութեան ընդհանուր ժողովոյն տեղն էր, վաճառաշահ քաղաք: Սորա մօտ լերան մի վերայ շինուած է վալհալլա մեծակառոյցնոր քանդարանը:

ՓԱՍԱԻ (15,000 ըն.) Դանուբ եւ Ին գետոց խառնուրդը, ամուր եւ վաճառաշահ քաղաք:

ԱՆՍՓԱԽ (16,000 ըն.) Ճարտարութեան կողմանէ երեւելի:

ՆՈՒՐԷՄՊԷՐԿ (60,000 ըն.) երբեմն Ասկապուրկի նման Գերմանիոյ առաջին քաղաքներէն մեկն էր. ունի բազմաթիւ գեղեցիկ շէնքեր, եւ տղայական խաղալիքներու մեծ առեւտուր: Այս քաղաքս հնարուեցաւ ծոցի ժամացոյցն-1500 թուականին:

ՊԱՅՐԱՅԻԹ (20,000 ըն.) ճարտար քաղաք:

ՊԱՄՊԷՐԿ (25,000 ըն.) բարերեր դաշտի մէջ Պաւերայի գեղեցիկ քաղաքներէն մեկը կհամարուի:

ՎԻՐՏՊՈՒՐԿ (36,000 ըն.) Մայն գետոյն վերայ, ունի համալսարան մի, եւ քովերէն ազնիւ գինի կելնէ. շէնքերուն մէջ երեւելի է բազաւորական ամարանոցը:

ՍՓԻՐ (10,000 ըն.) այս քաղաքս նորադանդից բողոքական (փրոթէսթանթ) անունը դրուեցաւ, 1529-ին եղած ժողովոյն դէմ բողոքողներուն համար:

ԼԱՆՏԱԻ (8,000 ըն.) Դաշնակցութեան ամուր բերդերէն մեկը:

ՍԱՔՍՈՆԻՍ.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ .— Բարրարոսաց արշաանաց ժամանակ գերմանական ցեղի երեսելի ազգերեն մեկն էին եւ Սաքսոնք, որ Բրիտանիոյ կղզւոյն մեծ մասին տիրելով՝ մեջը չորս թագաւորութիւն հիմնեցին : Գերմանիոյ մեջ մնացած Սաքսոնք տակաւին կռապաշտութեան եւ բարրարոսութեան մեջ էին Մեծին Կարոյոսի ժամանակ, որ զնաց ստիպեց զնոսա քրիստոնէութիւն ընդունել ու : Գերմանիոյ կայսերութեան ժամանակ Սաքսոնիան դքսերու ձեռքով կկառավարուէր : Ենայի պատերազմեն յետոյ 1806-ին Նափոլէոն Ա. Սաքսոնիոյ դքսին թագաւորի անունը տուաւ, զոր նա Վեննայի ժողովով եւս պահեց, միայն թէ երկիրներուն մեկ մասն առնուեցաւ ձեռքէն : Այժմու թագաւորն է Յովհաննէս Ա. որ արո՞ր նստաւ 1854-ին :

Սաքսոնիոյ թագաւորութեան սահմանն է հիւսիսէն Բրունսիա, արեւելքէն Բրունսիա եւ Աւստրիա, հարաւէն Աւստրիա եւ Պաւերա, արեւմտքէն Պաւերա, Ռայս իշխանութիւնները : Սաքս Վայմար, Սաքս Ալքենպուրկ եւ Բրունսիա :

Տարածութիւնն է 150 բիւրմէրր քառակուսի :

Բնակիչն է (2,200,000) մեծաւ մասամբ լութերական :

ԳԼԽԱԻՈՐ ՔԱՂԱՔՔ .

ՏՐԵԶՏԱ կամ ՏՐԷԶՆ (117,000 բն.) էլպա գետոյն վե-

րայ , տերութեան մայրաքաղաքը եւ Եւրոպայի գեղեցիկ քաղաքներէն մեկը . ունի բազմաթիւ հոյակապ պալատներ եւ գեղեցիկ շէնքեր , յորս նշանաւոր է չետոյն վերայի կամուրջն որ բոլոր Եւրոպայի գեղեցիկներէն մեկն է : Ճարտարութեան եւ գիտութեանց կողմանէ Գերմանիոյ առաջիններէն մեկն է . ունի բազմաթիւ երեսելի ճեմարաններ , վարժարաններ եւ քանդարաններ : Այս քաղաքիս մօտ Գաղղիացիք մեծ յաղթութիւն արին 1813-ին :

ՄԱՅՍԷՆ (10,000 բն.) Էլպա գետոյն վերայ Տրեգտայի մօտ . անուանի է յախճապակի հռչակաւոր գործարաններովը :

ԼԱՅՓՅԻՎ կամ ԼԻՓՍԻԱ (74,000 բն.) Գերմանիոյ ծաղկած , ճարտար եւ շատ վաճառաշահ քաղաքներէն մեկն է . ունի համալսարան եւ ուրիշ երեսելի վարժարաններ . գրավաճառութեան կողմանէ բոլոր Գերմանիոյ մեջ առաջինն է : Անուանի է այս քաղաքիս տօնավաճառն որ Գերմանիոյ ամենէն մեծն է եւ յորում բոլոր Եւրոպայէն վաճառականք կհաւաքուին : Հայրենիք Լայպնից իմաստասիրի : Այս քաղաքիս մօտ Գաղղիացիք սաստիկ յաղթուեցան 1813-ին :

ՇԷՄՆԻՅ (40,000 բն.) բրդեղենի , մետաքսեղենի եւ մանաւանդ բամբակեղենի երեսելի գործարաններ ունի բամբակեղէնը Սաքսոնիոյ առաջինն է եւ բոլոր Եւրոպա նշանաւոր :

ՖՐԱՅՊԷՐԿ (15,000 բն.) Էրցկեպիրկէ լեռանց մեջ արծաթի առատ հանքերովն անուանի է :

ՀԱՆՆՈՎԷՐ.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — Հաննովերի թագաւորութիւնը 1814-ին վեհնայի ժողովով հաստատուեցաւ՝ այլ եւ այլ զաւառներ միացրնելով, յորս երեսելի էր Պրուսսիաք կամ Պրանսնշուայկ, որոյ դքսերը 1714-են է վեր Անգղիոյ թագաւոր եղան. 1837-ին երբոր Գուլիելմոս Գ Անգղիոյ եւ Հաննովերի թագաւորը մեռաւ, իւր եղբոր աղջիկը վիկտորիա իշխեց միայն Անգղիոյ վերայ. իսկ Հաննովերի թագաւոր նստաւ Քրմպրրլէնտ դուքսն, որոյ որդին Գեորգ Ա. կոյր է ծնէ, կրթագաւորէ այժմ 1851-են է վեր :

Հաննովերի սահմանն է հիւսիսէն Հիւսիսային ծով եւ Տանիմարքա, արեւելքէն Մեքլեմպուրկ, Պրուսսիաք եւ Բրուսիա, հարաւէն Բրուսիա եւ հիւսիսէն Քասել, արեւմտքէն Հոլանտա :

Տարածութիւնն է 380 բիւրմերը քառակուսի :

Բնակիչն է իբր 2,000,000, մեծ մասը լուտերական :

ԳՎԽԱԻՈՐ ՔԱՂԱՔԻՔ.

ՀԱՆՆՈՎԷՐ (61,000) Լայնէ գետակի վերայ, տերութեան մայրաքաղաքն, ճարտար եւ վաճառաշահ : Այստեղ ծնած է Հերշել աստղաբաշխն, եւ Լայպնից փիլիսոփան այստեղ մեռաւ, ուր եւ յանուն նորա գեղեցիկ եւ բարձր կոթող տնկուած է :

ՀԻԼՏԷՍԱՅՄ (20,000 ըն.) ճարտարութեան կողմանէ անուանի :

ԿՈՐԹԻՆՅԱՆ կամ ԿԵԹԻՆՅԷՆ (18,000 բն.) ունի բազմաթիւ ուսումնական տեղեր, յորս շատ երեւելի է համալսարանը, եւ գրատունը Եւրոպայի ամենէն հարուստներէն մէկն է :

ՔԼԱՒՇԹԱԼ (10,000 բն.) Հայց լեռներու մեջ՝ կապարի, արծաթի, պղնձի եւ երկաթի առատ հանքեր ունի :

ԼՈՒՆԷՊՈՒՐԿ (18,000 բն.) նշանաւոր է աղի հանքերովը :

ՕՍՆԱՊՐԻԻՔ (15,000 բն.) ճարտար եւ վաճառաշահ, կտաւի գործարաններ ունի : Այս քաղաքս հաստատուեցաւ Վեսթֆալիոյ դաշնադրութիւնը :

ԷՄՊՏԷՆ (20,000 բն.) Տոլլար ծոցոյն վերայ Էմսի բերանին մօտ, տերութեանը առաջին վաճառաշահ նաւահանգիստը :

ՎԻՐԹԷՄՊԷՐԿ,

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — Կայսերութեան ժամանակ Վիրթեմպերկի իշխանը երբեմն դուքս էր եւ երբեմն կոմս . Փրեսպուրկի հաշտութեան ժամանակ 1805-ին Նափոյեոն Ա Վիրթեմպերկի իշխանին բազաւորի անունը տուաւ ի վարձատրութիւն նորա Գաղղիացոց արած օգնութեանը : Վեննայի ժողովն հաստատեց այս բազաւորութիւնս, որոյ բազաւորն է այժմ Կարոյոս Ա, եւ 1861-էն ի վեր կբազաւորէ :

Վիրթեմպերկի սահմանն է հիւսիսէն, արեւելքէն եւ հարաւէն Պաւերա, արեւմուտքէն Պատենի մեծ դքսութիւնը :

Տարածութիւնն է 196 բիւրմերք քառակուսի :

Բնակիչն է 1,800,000, մեծ մասը Լուտերական :

Այս երկրիս եւ Պատենի դքսութեան մեջ է հռչակաւոր
Սեա կոչուած անտառն (Շվարցվալտ) :

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔԻՔ .

ՇԹՈՒԹԿԱՐՏ (51,000 բն.) տերութեան մայրաքաղաքը .
գեղեցիկ , ծաղկած , ճարտար եւ վաճառաշահ . նշանա-
ւոր է գրատունը :

ԼՈՒՏՈՒԻԿՍՊՈՒՐԿ (15,000 բն.) երկրորդ քաղաքանիստ
քաղաք , ունի մեծակառուց արքունի ամարանոց :

ՀԱՅԼՊՐՈՆ (10,000 բն.) ճարտարութեան կողմանէ շատ
երեսելի է :

ՌԻԼՄ (20,000 բն.) Դանուբի վերայ ճարտար եւ վա-
ճառաշահ , դաշնակցութեան ամուր բերդերէն մէկն է .
տորա մայր եկեղեցին Գերմանիոյ ամենէն բարձրն է եւ
գեղեցիկներէն մէկը . Ուլմէն սկսեալ Դանուբը նաւարկելի է :

Պ Ա Տ Է Ն .

Պատենի մեծ դքսութիւնը սահմանակից է Գաղղիոյ ,
Ջուիցերիի եւ Պաւերայի . 1,370,000 բնակիչ ունի , մեծ
մասը հռովմեադասան :

ՔԱՐԼՍՐՈՒՀԷ (25,000 բն.) Հռենոսի մօտ , տերութեան
մայրաքաղաքն է նորաշէն եւ գեղեցիկ :

ՄԱՆՀԷՅՄ (26,000 բն.) երկրորդ իշխանանիստ քաղաք
Հռենոսի վերայ , գեղեցիկ , վաճառաշահ եւ շատ ճարտար .
անուանի են մանաւանդ *սկիւնմանէ* (*սիւմիլոր*) գործուածք-
ներն , որ եւ *սկի Մանհէյմի* կկոչուի . երբեմն Հռենոսի
պալատինին աթոռանիստն էր քաղաքս :

տինեան իշխանին չպալատին մնացորդները :

ունի երեսելի համալսարան . նշանաւոր են նաեւ Պալա-
ՀԱՅՏԷԼՊԷՐԿ (18,000 բն.) ճարտար եւ ծաղկած քաղաք ,
ՌԱՇԹԱԹ (8,000 բն.) երեսելի է 1714-ին հաշտութեամբն
եւ 1799-ին ժողովովը :

ՊԱՏԷՆ (5,000 բն.) փոքրիկ քաղաք , բայց դիրքը գե-
ղեցիկ լինելով եւ ծծմբային տաք ջրեր ունենալով՝ ամա-
ռը շատ օտարականք կժողովին մեջը :

ՔԻԼ , Հոենոսի մօտ Սքրասպուրկի դիմաց , երեսելի է
գետոյն վերայ ձգուած համանուն կամրջով :

ՖՐԻՊՈՒՐԿ կամ ՖՐԷՅՊՈՒՐԿ (16,000 բն.) ծաղկած քա-
ղաք , անուանի համալսարան ունի եւ ճարտարութեան
մեջ յառաջադեմ է :

ԿՈՍՏԱՆԴ կամ ԿՈՍՏԱՆՅԱ (8,000 բն.) Հոենոսի ձախա-
կողմը՝ համանուն լճին հարաւակողմը , այս տեղ եղաւ
Կոստանդեան ժողովն հռոմեականաց 1414—1418 :

ՀԷՍՍԷՆ ՏԱՐՄՇԹԱԹ .

Մեծ դքսութիւն . բնակիչն է 850,000, որոյ մեծ մասը
լուտերական :

ՏԱՐՄՇԹԱԹ (31,000 բն.) տերութեան մայրաքաղաքը ,
ծաղկած :

ՄԱՅՆՅ կամ ՄԱՅԱՆՍ կամ ՄԱԿՈՆՅԱ (37,000 բն.) Հոենոսի
վերայ դաշնակցութեան առաջին բերդաքաղաքն է . Հեսսե-
նի մեծ դքսութեան ամենէն երեսելին . երբեմն շատ ա-
ւելի մեծ եւ նշանաւոր էր : Հայրենիք է քաղաքս Կուր-

քեմպերկի որ տպագրութեան արուեստը գտաւ 1440-ին
Սքրասպուրկի մեջ :

ՎՈՐՄՍ (9,000 բն.) միջին դարու ժամանակները բազմամարդ եւ երեսելի էր , այժմ բնկած :

ՆԱՍԱԻ .

Նասաի մեծ դքսութեան բնակիչն է 400,000, որոց կեսը հռովմեական են , կեսը բողոքական :

ՎԻՍՊԱՏԷՆ (15,000 բն.) Մակոնցայի մօտ , տերութեան մայրաքաղաքն է , եւ բոլոր Եւրոպայի մեջ երեսելի է իւր հանքային տաք ջրերովը :

ԷՄՍ , նոյնպէս հանքային ջրերովն անուանի :

ՍԱՔՍ-ՎԱՅՄԱՐ .

ՎԱՅՄԱՐ (15,000 բն.) տերութեան մայրաքաղաքը . այս դարուս սկիզբները 'Գերմանիոյ Արքնք կոչուեցաւ.' մեծանուն բանաստեղծներու անոր մեջը բնակածին համար :

ԱՅԶԷՆԱՍ (12,000 բն.) փոքրիկ քաղաք , բայց զիտութիւնք շատ յարգի են մեջը :

ԵՆԱ (9,000 բն.) երեսելի է համալսարանը : Գաղղիացիք 1805-ին մեծ յաղթութիւն արին այս քաղաքիս մօտ Բրուսիացւոց դէմ :

ՄԷԲԼԷՄՊՈՒՐԿ ՇՎԷՐԻՆ .

ՇՎԷՐԻՆ (20,000 բն.) համանուն լճին վերայ Պալթիկ ծովուն մօտ , տերութեան մայրաքաղաքը :

ՌՈՍԹՈՒՐ (25,000 բն.) ունի համալսարան եւ բանուկ

նաւահանգիստ , եւ տերութեան ամենէն բազմամարդ
քաղաքն է :

ՊՐՈՒՆՍՈՒԻԻ.

ՊՐՈՒՆՍՈՒԻԻ կամ ՊՐԱՌՆՆՇՈՒԱՅԿ (40,000 բն.) տերու-
թեան մայրաքաղաքը , հիւսիսային Գերմանիոյ գեղեցիկ եւ
ծաղկած քաղաքներէն մէկը :

ՎՈՒՅԷՆՊԻԹԹԷՆ (10,000 բն.) հարուստ գրատուն ունի :

ՍԱՔՍ-ԲՈՊՈՒՐԿ-ԿՈԹԱ .


ԿՈԹԱ (18,000 բն.) փոքրիկ , բայց ճարտար եւ վաճա-
ռաշահ , եւ Գերմանիոյ շատ գեղեցիկ քաղաքներէն մէկը :
Անուանի է այս քաղաքիս Տարեգրութիւնը (Almanach de
Gotha) որ 1764-էն ի վեր կհրատարակուի :

ՔՈՊՈՒՐԿ (10,000 բն.) տերութեան մայրաքաղաքը :

ԱՂԱՏ ՔԱՂԱՔԻ .

ՖՐԱՆՔՖՈՐԹ (67,000 բն.) Մայն գետոյն վերայ , դաշ-
նակցութեան ընդհանուր ժողովոյն տեղը : Գերմանիոյ շատ
հին քաղաքներէն մէկն է , եւ ճարտարութեան , վաճա-
ռականութեան եւ գիտութեանց մեջ շատ յառաջադեմ է .
անուանի է մայր եկեղեցին , ուր կօծուէին Գերմանիոյ
կայսերք , եւ բանգարանն ուր կպահուին բոլոր կայսերաց
սլատկերքը : Հայրենիք է քաղաքս մեծանուն Կերէ բա-
նաստեղծին :

ՀԱՄՊՈՒՐԿ (175,000 բն.) Էլպա գետոյն աջակողմը շատ



Համպուրկ.

բանուկ նաւահանգիստ . վաճառականութեան կողմանէ բո-
լոր Գերմանիոյ առաջինն եւ եւրոպայի առաջիններէն մէկն :

ՊՐԵՄԱ կամ ՊՐԵՄԷՆ (60,000 բն.) վեզեր գետոյն վե-
րայ , Համպուրկէն յետոյ Գերմանիոյ ամենէն բանուկ եւ
երեսելի նաւահանգիստն է :

ԼԻԻՊԷՔ (26,000 բն.) շատ վաճառաշահ քաղաք եւ բա-
նուկ նաւահանգիստ :



ՓՈՐՔՈՒՊԵՏԱԼ.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ . — Փորքուգալը հին ժամանակները Լուսիտանիոյ մեկ մասն էր. մինչև ժԲ դարը Սպանիոյ հետ միացած էր, եւ նորա հետ միատեղ այլ եւ այլ ազգաց ձեռքն անցել էր. ամենէն յետոյ Սարակինոսաց կամ Մաւրիտանացոց ձեռքը. Հենրիկոս Պուրկոյնի դուքսը, որ Հուգոս Բափերի ցեղէն էր, Սպանիա անյնելով մեծամեծ ծառայութիւններ արաւ. Բասքիլիոյ Ալփոնս Զ քաղաւորին. նա ալ իրեն նուիրեց Մինեոյ եւ Թակոյ զետերու մեջ տեղն եղած երկիրներն՝ եւ զինքը Փորքոյի կամ Փորքուգալի կոմս անուանեց. եւ որոշուեցաւ որ Թակոյէն անդին Մաւրիտանացոց ձեռքէն ինչ երկիրներ որ առնու շենրիկոս, ինքնիշխան տեր լինի նոցա վերայ : Սորա որդին Ալփոնս Հենրիկէս 1139-ին մեծ յաղթութիւն մի անելով հինգ Մաւրիտանացի քաղաւորաց վերայ, զօրքը պատերազմին տեղը քաղաւոր անուանեցին զինքը, եւ Քորթեզներն, այսինքն խորհրդարանը, հաստատեցին այն ընտրութիւնը, եւ այնպեսով ձեւացաւ Փորքուգալի քաղաւորութիւնը եւ առանձին քաղաւորներ ունեցաւ մինչև 1580, յորում ամի Սպանիոյ քաղաւորը Փիլիպպոս Բ տիրեց Փորքուգալի. բայց 1640-ին Փորքուգալցիք Սպանիացոց լուծը բօրափեցին եւ իւրեանց քաղաւորական ցեղէն մեկը քաղաւորեցուցին :

Փորքուգալցիք շատ անուանի եղան ժԵ եւ ժԶ դարե-

րոյ մեջ արած ծովային ճանապարհորդութեամբքը . նոքա
գտան Ափրիկէի գրեթէ բոլոր ծովեզերքը , 1498-ին առա-
ջին անգամ Բարեյուսոյ գլոխն անցան , եւ այնպէսով
ծովային ճանապարհ մի հորդեցին Հնդկաստան երբայու :
Ափրիկէի եւ Ասիոյ մեջ մեծամեծ երկիրներու տէր եղան ,
ինչպէս նաեւ Ամերիկայի մեջ Պրագիլի հարուստ եւ ընդ-
արձակ աշխարհին : Փորթուգալք որ հարիւր տարիի չափ
(1481—1580) եւրոպայի առաջին վաճառաշահն եւ ծովու
վերայ զօրաւոր տերութիւնն եղաւ , այժմ ընկած է , եւ
իւր գաղբականութեանց շատը կորոյս , ինչպէս նաեւ Պր-
րագիլն ' որ այժմ ինքնագլոխ է : Այժմու բազաւորն է
Տոն Փետրոյ է , որ արողը նստաւ 1853-ին :

Փորթուգալի սահմանն է հիւսիսէն եւ արեւելքէն Սպա-
նիա , հարաւէն եւ արեւմտքէն Ատլանտեան ովկիանոս :

Տարածութիւնն է 950 բիւրմերը քառակուսի :

Երկիրը լեռնոտ է , եւ ունի գեղեցիկ ու շատ բարեբեր
հովիտներ :

Հողը շատ բարեբեր է , բայց ոչ լաւ մշակուած :

Օդը բարեխառն է եւ շատ առողջ . հովիտներուն մեջ
տաք է :

Գլխաւոր զեւերն են . Մինեոյ ' որ հիւսիսային սահմա-
նըն է , Տուերոյ , Մոնտեկոյ , Թակոյ , եւ Կուատիանա ' որ
հարաւային արեւելեան սահմանն է :

Փորթուգալի ամենէն բարձր լեռները Սիերա Տեսթրե-
լա զօտիին մեջ են ' որոց բարձրութիւնն է իբր 2,600 մերր :

Գլխաւոր բերքն է անուանի զինի, նարինջ, բուս, ձեթ եւ բուրդ: Հանքերու մեջ ունի ոսկի, արծաթ, անագ, կապար, երկաթ եւ հանքային ածուխ, բայց երեսէ ձգած են: Ծովէն շատ աղ կհանեն, եւ առատ ձուկ՝ մանաւանդ *սարտիկ* կոչուածը:

Բնակիչն է 3,600,000 կրօնքն է հռոմեադաւան. լեզուն սպաներէնին մէկ տեսակը:

Գիտութիւնքն, երկրագործութիւնն ու ձեռագործները շատ ետ մնացած են Փորթուգալի մեջ. ցամաքային վաճառականութիւնը շատ տկար է, ծովայինը փոքր ինչ ծաղկեալ է, այն ալ Անգղիացւոց ձեռքովը:

Տերութեան կառավարութիւնն է սահմանադրական միապետութիւն ժառանգական:

ԳԼԽԱԻՈՐ ՔԱՂԱՔԻ.

ԼԻՍՊՈՆԱ կամ ԼԻՍՊՈՍ (260,000 բն.) Թաւոյ գետոյն աջակողմը, տերութեան մայրաքաղաքն է, եւ բոլոր Եւրոպայի մեծ եւ սպառնով նաւահանգիստներէն եւ գեղեցիկ դիրք ունեցողներէն մէկն է. 1755-ին սարսափելի զետնաշարժով մի քաղաքին մեծագոյն մասը զետնին տակ անցաւ, յետոյ դարձեալ շինուեցաւ: Նշանաւոր է Ալքանթարայի ջրանցքը, յորմէ բոլոր քաղաքը ջուր կերթայ: — Գովերը երեսելի է Այուտա պալատն. եւ Պէյեմ վանքն որ շինուած է Վասքոյ տէ կամայի նաւ մտած տեղը: Հայրենիք է քաղաքս հռչակաւոր Քամօկնս բանաստեղծին:

ՓՈՐԹՈՅ կամ ՕՓՈՐԹՈՅ (100,000 ըն.) Տուերոյ գետոյն քերանին մօտ, Լիսպոնայէն յետոյ երկրին ամենէն վաճառաշահ, գեղեցիկ եւ հարուստ քաղաքն է. անուանի է զինին եւ զինի մեծ վաճառականութիւն ունի: Հին ժամանակը Փորթուս-Քալէ կկոչուէր, այնու բոլոր երկիրն եւս Փորթուգալ կոչեցաւ:

ՔՈՅԻՄՊՐԱ (18,000 ըն.) Մոնտեկոյ գետոյն վերայ, ճարտար եւ ծաղկած քաղաք, անուանի համալսարան ունի, որ միակ է բոլոր Փորթուգալի մեջ:

ՊՐԱԿԱՆՅԱ (8,000 ըն.) 1442-ին դքսութիւն եղաւ, յորմէ յառաջ եկած է այժմու քաղաւորական ցեղը:

ՍԷԹՈՒՊԱԼ (15,000 ըն.) գեղեցիկ եւ վաճառաշահ նաւահանգիստ. առատ զինի, նարինջ եւ աղ կելնէ քաղաքէս:

ՔԱԻԷՍ կամ ԽԱԻԷՍ (7,000 ըն.) Թամեկա գետակին վերայ ամուր քաղաք. անուանի են հանքային տաք ջրերն եւ Հոռովմայեցւոցմէ մնացած կամուրջն 18 կամարի վերայ:

ՊՐԱԿԱ (16,000 ըն.) հին քաղաք արքեպիսկոպոսանիստ:

ԼԱՄԷԿՈՅ (12,000 ըն.) Տուերոյի մօտ. այս տեղ 1144-ին ժողովեցան առաջին անգամ Քորթեզք կամ Օրէնսդիր ժողովն Փորթուգալայ:

ՎԻՍԷՂՈՒ (10,000 ըն.) փոքրիկ քաղաք, անուանի տօնավաճառ ունի:

ԷՒՈՐԱ (10,000 ըն.) հին քաղաք, Հոռովմայեցւոցմէ մնացած շատ շէնքեր ունի, յորս նշանաւոր է գեղեցիկ ջրանցքն՝ որ կասեն թէ Սերտորիոսի շինածն է:

ԵՂՈՒԱՍ (16,000 ըն.) Փորթուգալի ամենեկն ամուր քաղաքն է :

ՍԻՆԷՍ, փոքրիկ նաւահանգիստ, հայրենիք Վասկոյ տե Կամայի :


ՈՒՐԻՔ, Էլուասի մօտ, ուր Ալփոնս Հենրիկոս 1439-ին մեծ յաղթութիւն մի արաւ հինգ դաշնակից մարիտանացի բազաւորաց վերայ, եւ նոցա գլուխները իւր բազաւորական զրօշին վերայ դրաւ :

ԿԱԼՈՒԱԾՔ ՓՈՐԹՈՒԳԱԼԱՅ ԱՐՏԱՔՈՅ ԵՒՐՈՊԱՅ.

Ափրիկէի մեջ . Ասորեանք, Մատերա, Դալարի գըլխոյ կղզիք, Սենեկամպիոյ մեջ քանի մի վաճառատեղիք, Իշխանի եւ Սուրբ Թովմաս կղզիք, Անկոլա, Պենկերա եւ Մոզամպիք :

Ասիոյ մեջ . Կոա՝ գաւառովը միատեղ, Բիւճրաթի մեջ երկու վաճառատեղիք, եւ Մաքաոյ քաղաքը՝ Զինու մեջ :

Ովկիանիոյ մեջ . Թիմոր կղզւոյն մեջ գաղթականութիւն մի :



Ս Պ Ա Ն Ի Ա.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — Սպանիական բերակղզւոյն առաջին բնակիչքն Իբերեանք եղան . յետոյ քանի մի փինիկեցի գաղթականութիւններ հաստատուեցան մեջը . Կարքեղոնացիք տիրեցին բոլոր երկրին , նոցանէ յետոյ անցաւ Հռովմայեցոց ձեռքը : Հինգերորդ դարուն մեջ Սուեանք , Վանդալք եւ Այանք արշաւեցին Սպանիա , եւ 584-ին Վիսիգոթք մեծ ինքնակալութիւն մի հաստատեցին . 711-ին Արաբացիք կամ Մաւրիտանացիք կործանեցին եւ զայն եւ Քորտովայի ամիրապետութիւնն հիմնեցին՝ որ յետոյ շատ մի մահմետական բազաւորութիւններ բաժանուեցաւ : Քրիստոնեայք չկամելով մահմետականաց լուծին տակն ընկճիլ , Աստուրիոյ լեռները փախան ապաւինեցան , եւ ետեւէ ետեւ Լեոնի , Նաւարրայի , Քասթիլիոյ , Արակոնի եւ ուրիշ բազաւորութիւններ հիմնեցին . այն ժամանակ մահմետականաց եւ քրիստոնէից մեջ կռիւ մի բացուեցաւ որ 700 տարի տեւեց , եւ անով Մաւրիտանացիք տկարանալով՝ միայն Կրանատայի բազաւորութիւնը մնացել էր ձեռքերը : Քրիստոնեայ բազաւորութիւնքն իրարու հետ միանալով՝ միայն երկու տերութիւն կձեւացրնեն՝ որ են Քասթիլիոյ եւ Արակոնի բազաւորութիւնքն :

Արակոնի բազաւորը Փերտինանտ Կարոլիկ 1479-ին Քասթիլիոյ Իզապելլա բազուհւոյն հետ ամուսնանալով՝ բոլոր Սպանիան մէկ միապետութիւն եղաւ , վասն զի

1492-ին սոյն այս բազաւորս ջնջեց Մաւրիտանացոց ձեռքը մնացած Կրանատայի բազաւորութիւնն եւս : Նոյն տարին Քրիստափոր Գոյումպոս Սպանիոյ կողմանէ նոր Աշխարհը գտաւ, որոյ մեծ եւ հարուստ մասերուն տիրեցին Սպանիացիք . բայց այժմ միայն Գուալա եւ Փորթոյ Ռիքոյ կղզիները մնացին նոցա ձեռքն, եւ 1861-ին Սուրբ Գոմինիկոս կղզւոյն արեւելակողմն նորէն Սպանիոյ տրուեցաւ . բայց երկու տարի յետոյ մեծ ապստամբութիւն մի ելնելով կղզւոյս մեջ, հաւանական կերեւի որ դարձեալ կորսընեն Սպանիացիք այն երկիրը :

Փերտինանտի եւ Իզապելլայի Յովնաննա աղջկան Փիլիպպոս արշիդքսին հետ կարգուելով, որ Մաքսիմիլիանոս կայսեր որդին էր, 1506-ին Սպանիոյ արուր Աւստրիական ցեղ մի ելաւ : Կարոյոս Ե եւ Փիլիպպոս Բ բազաւորաց ժամանակ Սպանիան տէր լինելով եւ Ստորին հանգաց եւ Իտալիոյ մեծ մասին (իսկ Կարոյոսի ժամանակ եւ ամբողջ Գերմանիոյ), Եւրոպայի առաջին մեծ եւ զօրաւոր տերութիւնն էր . բայց այնուհետեւ սկսաւ ընկնիլ : Սպանիոյ մեջ աւստրիական ցեղը վերջացաւ 1700-ին, եւ տեղն անցաւ Գաղղիոյ բազաւորութեան Պորպոնեան ցեղը . բայց այս ցեղս Սպանիայէն դուրս Եւրոպայի մեջ ունեցած բոլոր երկիրները կորոյս : Այժմու բազաւորողն է Իզապելլա Բ բազուհին, որ արուր նստաւ 1833-ին, երեք տարեկան :

Սպանիոյ սահմանն է հիւսիսէն Կասքոնի ծոցն եւ

Գաղղիա , արեւելքէն Միջերկրական ծով , հարաւէն նոյն ծովը , ճիւղաւթար նեղուցն եւ Ատլանտեան ովկիանոս . արեւմտքէն Փորքուգալ եւ Ատլանտեան ովկիանոս :

Տարածութիւնն է 4,640 բիւրմերը քառակուսի :

Երկիրն ընդհանրապէս լեռնոտ է . գլխաւորապէս երեք լեռանց գօտի կանցնի Սպանիոյ երկրէն , որ են . Ա, Պիրենեանք , որ ամենէն մեծերն են , Գաղղիան Սպանիայէն կգատեն եւ կտարածուին Միջերկրական ծովէն մինչեւ Կասքոնի ծոցը . այս գօտիին ամենէն բարձր ծայրն է Ներու կամ Մալատերբա (3,400 մերը բարձր) . այս գօտիին մեկ ճիւղը Կասքոնի ծոցոյն ուղղութեամբը մինչեւ Օրբեկալ եւ Ֆինիսքեր գլուխները կտարածուին , եւ ընդհանուր անուամբ Կանտարբեան լեռինք կկոչուին , թէ եւ մասնաւոր անուն եւս ունին . Բ, Միջին գօտի կամ Կեղտիրեան լեռինք ' Տուերոյ եւ Թակոյ գետերու մեջտեղ կտարածուին ' դարձեալ այլ եւ այլ անուններով . Գ, Հարաւային գօտի կամ Բեռիկեան լեռինք , որոց գլխաւորն է Սիերա Մորենա . սորա *Չերոյ տէ Մուչնացին* կոչուած ծայրը Սպանիոյ ամենաբարձր լեռն է (3,555 մերը) . այս գօտւոյն մեկ ճիւղն է նաեւ Սիերա 'Նեւատա' որոյ հարաւային ծայրն է ճիւղաւթարի ժայռը :

Սպանիոյ հողը բարեբեր է . մեջտեղերը բարձր դաշտեր ունի , որ ընդհանրապէս անրեր են . Սպանիոյ ամենէն բարեբեր , գեղեցիկ , մշակուած եւ բազմամարդ կողմը արեւելեան մասն է :

Օղբ չոր եւ տաք է ընդհանրապէս, բայց դրիցը նայելով շատ տաք չէ՝ լերանց շատութեանը պատճառաւ. հարաւակողմը Ափրիկէն *սոչակոյ* կոչուած տապազին խորշակը կփչէ երբեմն, որ սոսկալի կոտորածներ կպատճառէ: Այսու ամենայնիւ շատ լերանց ծայրն յաւերժական ձիւնով ծածկուած է:

Գլխաւոր գետերն են. Մինեոյ, Տուերոյ, Թակոյ, Կուատիանա եւ Կուատալքիվիր՝ որ Ատլանտեան օվկիանոս կբափին. Սեկուրա, Եուքար կամ Խուքար եւ Էպրոյ՝ Միջերկրական ծով կբափին:

Մեծամեծ լճեր ամենեւին չունի Սպանիան՝ ամենէն նշանաւորն է Ալպուֆերա՝ Վալենցիա քաղաքին հարաւակողմը:

Գլխաւոր բերքն է Եւրոպայի տաք երկիրներու բոյսերը, ինչպէս ազնիւ գինի, նարինջ, լեմոն, նուռ, բուգ, արմաւ, ձիթենի, բրենի, կանաչ կաղնի՝ որոյ վերայ կապրի *քերմեզ* կամ *գըրմըզ* կոչուած որդն, յորմէ գեղեցիկ կարմիր գոյն կշինուի. հարաւակողմը կրուսնին նաեւ Ափրիկէի տունկեր, ինչպէս շաքարենի, բամբակենի, խաճուէ, լեղակ եւ այլն: Կենդանեաց մեջ Սպանիան ունի ազնիւ տեսակ ձի՝ Անտալուսիա գաւառին մեջ, *մերիկոս* կոչուած ոջխարներն որ բարակ եւ ազնիւ բուրդ ունին, եւ ուրիշ ընտանի եւ օգտակար կենդանիներ: Հանքերու մեջ ունի առատ ոսկի՝ մանաւանդ հին ժամանակները, արծաթ, սնդիկ՝ որ Եւրոպայի ամենէն

առատն է . պղինձ , կապար , երկաթ , եւ հանքային աղի
ամբողջ բլուրներ . քայց բոլոր այս հանքերս երեսէ ձը-
գած են ' Ամերիկայի գանուելէն յետոյ :

Բնակիչն է 16,000,000 , Սպանիացի կրօնասէր եւ սաս-
տիկ հայրենասէր մարդիկ : Սոքա խառնուրդ մի են Կեղ-
տաց , Հոռվմայեցւոց , Վիսիգոթաց եւ ուրիշ բարբարոս
ազգաց : Կրօնն է հռոմեակաւան . լեզուն յատիներէնէ եւ
արարերէնէ յառաջ եկած է :

Գիտութեանց , ճարտարութեան եւ ուսման շատ ան-
փոյթ են Սպանիացիք . ցամաքային վաճառականութիւնը
գրեթէ ոչինչ է Սպանիոյ մեջ ' ճանապարհաց գեշութեանը
պատճառաւ . միայն ծովայինը բանուկ է , այն ալ աւելի
օտարաց ձեռքով . ճարտարութիւնը այժմ ծաղկելու վե-
րայ է . ամենէն երեսելի ձեռագործներն են մետաքսեղէնք :

Տերութեան կառավարութիւնն է Սահմանադրական
միապետութիւն ժառանգական :

Սպանիան մինչեւ 1833 տասնեւհինգ նահանգ կամ քա-
ղաւորութիւն կրածանուէր . այն տարին սահմանադրու-
թեան հաստատուելովը բոլոր երկիրը 48 գաւառ բաժա-
նուեցաւ :

ԳԼԽԱԻՈՐ ՔԱՂԱՅՔ .

ՄԱՏՐԻՏ (475,000 բն.) Մանզանարես վտակին վերայ
անբեր դաշտի մեջ , տերութեան մայրաքաղաքն . ոսնի
բազմաբիւ ուսումնական տեղեր , համալսարան , եւ
գեղեցիկ շէնքեր . երեսելի են Փրատոյ կոչուած ճեմելիքը ,

Թուլետոյի գեղեցիկ կամուրջը , եւ թագաւորական պալատը որ Եւրոպայի գեղեցիկներէն մէկն է : Մատրիտի մօտերն անուանի են՝ *Էսքուրիալ* , մեծակառուց շէնք , միանգամայն պալատ եւ վանք , զոր շինեց Փիլիպպոս Բ ի յիշատակ Սեն-Քանքենի յաղթութեան զոր արին Սպանիացիք Գաղղիացւոց վերայ 1557-ին . այս տեղ կրաղուին Սպանիոյ թագաւորները :

ԱՐԱՆԽՈՒԷՋ , գեղեցիկ թագաւորական պալատ մի ունի զոր հիմնեց Կարոլոս Ե :

ԱԼՄԱՏԷՆ , սնդիկի առատ հանք ունի որ Եւրոպայի առաջինն է :

ԹՈՒԵՏՈՅ (20,000 բն.) երբեմն Սպանիոյ մայրաքաղաքըն էր եւ ամենէն մեծ եւ գեղեցիկ քաղաքը , ինչպէս կվրկայեն մեծակառուց շէնքերն եւ եկեղեցիները . սոցա մեջ նշանաւոր է գեղեցիկ մայր եկեղեցին որ յառաջ մզկիթ էր , եւ *ալքազար* կոչուած պալատը , ուր կրնակէին մարիտանացի թագաւորք : Այս քաղաքս կնստի Սպանիոյ նախագահ արքեպիսկոպոսը :

ՍԱՆԹԻԱԿՈՅ ՏԷ ԿՈՄՊՈՍՏԷԼԱ (30,000 բն.) անուանի ուխտատեղի է՝ Սրբոյն Յակոբայ առաքելոյ մարմինն այս տեղ եղածին համար . երեսելի է մայր եկեղեցին որ երկու վրայէ վերայ շինուած եկեղեցիներէ ձեւացած է . ունի եւ համալսարան :

ՔՈՐՈՆԵԱ (24,000 բն.) ամուր ու վաճառաշահ քաղաք եւ քանուկ նաւահանգիստ :

ՅԵՐՈՒ (16,000 ըն.) Սպանիոյ առաջին գինուորական նաւահանգիստն է :

ՊԻԼՊԱՈՅ (20,000 ըն.) ամուր քաղաք եւ վաճառաշահ , եւ Կասքոնի ծոցոյն վերայ բանուկ նաւահանգիստ . զըլխաւոր վաճառքն է բուրդ :

ՍԱՆ ՍԵՊԱՍԹԻԱՆ (15,000 ըն.) Կասքոնի ծոցոյն կղզիներէն մեկուն մեջ վաճառաշահ նաւահանգիստ եւ շատ ամուր բերդաքաղաք :

ՓԱՄՓԼՈՒՆԱ (20,000 ըն.) ամուր բերդաքաղաք :

ՍԱՐԱԿՈՍԱ (82,000 ըն.) Էպրոյի աջակողմը ճարտար եւ վաճառաշահ քաղաք . ունի համալսարան , եւ մայր եկեղեցին անուանի է : Երեսելի եղաւ քաղաքս 1809-ին տաստիկ դիմակալութեամբը Քաղղիացոց պաշարմանը :

ՍԱՆԹԱՆՏԷՐ (25,000 ըն.) Կասքոնի ծոցոյն վերայ վաճառաշահ նաւահանգիստ :

ՊՈՒՐԿՈՍ (15,000 ըն.) ունի համալսարան . հայրենիք է քաղաքս Սիտ քաջ ասպետին :

ՍՈՐԻԱ , հին ժամանակը սորա քովն էր Նումանտիա :

ՍԵԿՈՎԻԱ (18,000 ըն.) չուխայի գործարաններ ունի եւ բրդի մեծ վաճառականութիւն . Հոռմայեցոցմէ մնացած գեղեցիկ ջրմուղ մի ունի , եւ մարիտանացի բազաւորաց *աշքագար (էլ-գասր)* , այսինքն պալատ մի :

ՎԱԼԻԱՏՈՒԻՏ (25,000 ըն.) ծաղկած եւ երեսելի քաղաք , ունի համալսարան : Այս քաղաքս մեռաւ Քոլումպոս :

ԼԷՈՆ (10,000 ըն.) երբեմն համանուն բազաւորութեան

մայրաքաղաքն էր . սորա մայր եկեղեցին Սպանիոյ ամենէն գեղեցիկը կհամարուի :

ՍԱԼԱՄԱՆՔԱ (15,000 բն.) երբեմն շատ երեսելի քաղաք էր , ունի համալսարան :

ՄՈՒՐՅԻԱ (109,000 բն.) Սեկուրա գետոյն վերայ մեծ եւ ճարտար քաղաք , մետաքսեղենի գործարաններ ունի :

ԿԱՐԹԱԳԻՆԷ կամ ՔԱՐԹԱՂԷՆԱ (40,000 բն.) Միջերկրականի գեղեցիկ նաւահանգիստներէն մեկն է . Սպանիոյ երկրորդ զինուորական նաւահանգիստը : Այս քաղաքս Կարքեղոնացոց շինածն է :

ԱԼԻՔԱՆԹԷ (30,000 բն.) ամուր եւ զինուորական նաւահանգիստ , եւ տերութեան երրորդ վաճառաշահը . անուանի է զինին :

ՎԱԼԵՆՅԻԱ (70,000 բն.) սքանչելի դաշտի մեջ ծովու մօտ , ունի հարուստ մայր եկեղեցի եւ համալսարան , ծովու վերայ ալ բանուկ նաւահանգիստ . ճարտարութեան մեջ բաւական ծաղկած է :

ԹԱՐՐԱԿՈՆ (15,000 բն.) Միջերկրականի վերայ բանուկ նաւահանգիստ , վաճառաշահ եւ ամուր քաղաք :

ՌԷՈՒՍ (30,000 բն.) ծովու մօտ նորաշէն եւ ճարտարութեամբ ծաղկեալ քաղաք :

ԼԵՐԻՏԱ (16,000 բն.) ժայռի վերայ անառիկ բերդ ունի :

ՊԱՐՅԵԼՈՆԱ (252,000 բն.) Սպանիոյ ամուր , ճարտար , ծաղկեալ եւ բանուկ նաւահանգիստներէն մեկն է . վաճառականութեան կողմանէ Սպանիոյ երկրորդ քաղաքն է :

ՔԱՐՏՈՂԱ, Պարցելոնայի մօտ մեծ աղահանքովն անուանի է :

ԿՐԱՆԱՏԱ (100,000 ըն.) Սիերա Նեատա լերին ստորոտը, Մաւրիտանացոց ժամանակ շատ մեծ, երեւելի եւ ծաղկեալ քաղաք էր : Հին շէնքերու մեջ նշանաւոր է Աշհամրա կոչուած հրաշալի պալատը :

ՄԱԼԱԿԱ (113,000 ըն.) Միջերկրականի վերայ Սպանիոյ շատ բանուկ նաւահանգիստներէն մեկը . անուանի է զինին :

ՔԱՏԻՔՍ կամ ՔԱՏԻՉԷ (Կադէս 71,000 ըն.) շատ ամուր բերդաքաղաք՝ Լեոն կղզւոյն հիւսիսային ծայրը, հին ժամանակներէ ի վեր մեծ, երեւելի, զինուորական եւ վաճառաշահ, ապահով ու գեղեցկադիր նաւահանգիստ :

ՍԵՒԻԼԻԱ (152,000 ըն.) Կուատալքիվիբի վերայ, թեւ Մաւրիտանացոց ժամանակ ունեցած պայծառութիւնը չունի, բայց եւ այնպէս այժմ Սպանիոյ ամենէն ծաղկեալ եւ երեւելի քաղաքն է Մատրիտէն յետոյ . անուանի են մանաւանդ մետաքսէ գործուածքները : Ունի համալսարան գեղեցիկ մայր եկեղեցի, ալքազար, եւ Հոովմայեցոցմէ մնացած ջրմուղ : Հայրենիք է քաղաքս հռչակաւոր Մուրիլիոյ նկարչին :

ՔՈՐՏՈՎԱ (64,000 ըն.) Մաւրիտանացոց ժամանակ Սպանիոյ ամենէն մեծ, ծաղկեալ եւ գեղեցիկ քաղաքն էր, եւ արեւմտեան ամիրապետութեան մայրաքաղաքը : Մաւրիտանացոց մէ մնացած գեղեցիկ կամուրջ ունի Կուա-

տալքիվիր գետոյն վերայ . ունի շատ գեղեցիկ մայր ե-
կեղեցի որ յառաջ մզկիթ էր : Հայրենիք է քաղաքս արա-
բացի Ավերրոես իմաստնոյն :

ԱՏՐԱ , Միջերկրականի վերայ , կապարի հարուստ հան-
քեր ունի :

ՃԻՊՐԱԼԹԱՐ (20,000 բն.) համանուն նեղուցին վերայ ,
բանուկ նաւահանգիստ ունի , եւ 400 մեքր բարձրութեամբ
սեպացեալ ժայռի վերայ ամուր բերդ . 170%-են ի վեր Անգ-
ղիացոց ձեռքն է :

ԽԵՐԷՍ ՏԷ ԼԱ ՅՐՈՆԹԵՐԱ , Քատիքսի հիւսիսակողմը , զի-
նին շատ անուանի է :

ՌՈԹԱ , Ովկիանոսի վերայ Քատիքսի հիւսիսակողմը .
նոյնպէս զինին անուանի է :

ՓԱԼՈՍ , Ռոբայի հիւսիսակողմը նաւահանգիստ էր , ուս-
տի 1492-ին Քոլոմպոս ճանապարհ ելաւ Նոր Աշխարհը
գտնելու . այժմ աւերակ է :

ԲԱԼԷԱՐԵԱՆ ԿՂԶԻՔ .

ՓԱԼՄԱ (40,000 բն.) Մայորքա կղզւոյն գլխաւոր քա-
ղաքը , ամուր , ծաղկեալ եւ վաճառաշահ . ունի համալսա-
րան :


ՓՈՐԹ-ՄԱՀՈՆ (20,000 բն.) Մինորքա կղզւոյն մեջ , Մի-
ջերկրականի գեղեցիկ նաւահանգիստներէն մեկը : Կարծիք
կայ թէ Մազոն Կարքեղոնացին շինած լինի այս քաղաքս :

ԿԱԼՈՒԱԾՔԻ ՍՊԱՆԻԱՑԻՈՅ ԱՐՏԱՔՈՅ ԵՒՐՈՊԱՅ :

Ափրիկէի մեջ . *Քանարեան կղզիք*, *Սեպտէ*՝ քովի երկիրներովը եւ ուրիշ քանի մի վաճառատեղիք Մարոքի ծովեզերքը :

Ամերիկայի մեջ . *Քուչուա*, *Փորքոյ Ռիքոյ*, եւ (առ այժմ) *Սուրբ Դովինիկոս* կղզւոյն արեւելակողմը :

Ովկիանիոյ մեջ . *Փիլիպպեանք* եւ *Մարիանեանք* :



Ի Տ Ա Լ Ի Ա.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — Իտալիան Հռոմայեցւոց մե նուաճուելով, նոցա տիեզերական ինքնակալութեան կեդրո նըն եղաւ. երբոր 395-ին Հռոմայեցւոց տերութիւնն երկու րաժանեցաւ, Իտալիան Արեւմտեան կայսերութեան մասն եղաւ, որ 476-ին բարբարոս ազգերէն կործանեցաւ: Վար սուն տարիի ջափ Ոստրոգոթաց ձեռքը մնաց, յետոյ Ներ սես Հայկազն պատրիկի ձեռքով Յունաց Արեւելեան կայ սերութեան զաւառ եղաւ, եւ 15 տարի յետոյ Լոմպար տացւոց ձեռքն անցաւ:

Այն ժամանակէն կսկսի Իտալիոյ կտոր կտոր րաժա նուիլը: Հիւսիսային կողմը կձեւանայ Իտալիոյ րազաւորու րիւնն, որոյ մայրաքաղաքն էր Փաւիա. այս րազաւորութիւնս յառաջ Լոմպարտացւոց ձեռքն էր (568—774), յետոյ ան ցաւ Կարլովինկեան րազաւորաց Գաղղիոյ (774—888), յե տոյ այլ եւ այլ ազգաց ձեռքը (888—961), եւ Մեծին Ոթո նի ձեռքն անցնելով, Գերմանիոյ հետ միատեղ Գերմա նական հռովմայեցի կայսերութիւնը կազմեց 962-ին:

Այն ժամանակները քանի մի ինքնահաւան եւ րարձ րամիտ պապեր, ինչպէս Գրիգոր Է, Ադեքսանդր Գ եւ Ին նովկենտիոս Գ, ուզելով Եւրոպայի ամեն րազաւորաց վե րայ իշխանութիւն րանեցընել, րանադրանքն իւրեանց ահարկու զէնք առած՝ գերմանացի կայսերաց հետ մեծա մեծ կռիւներ ունեցան. այն կռուոյն ժամանակ Իտալիոյ

բազաւորութիւնը կքանդուի, եւ տեղը քանի մի հասարակապետութիւնք կկազմուին, որ իրարմէ աւելի կամ պակաս դիմանայէն յետոյ՝ մեկմեկ զօրաւոր ցեղերու իշխանութեանը տակ կընկնին: Երեք հասարակապետութիւնք, որ են Վենետիկ, Ճենովա եւ Լուքքա, մինչեւ անցեալ դարուն վերջերը դիմացան: Սոցա մեջէն առաջին երկուսը ծովային եւ վաճառաշահ մեծ տերութիւններ էին, որ մինչեւ Սեաւ ծովուն եզերքը շատ տեղերու տիրած էին:

Պապերուն աշխարհական իշխանութիւնը ուրերորդ դարուն մեջ սկսաւ: Սոքա Լոմպարտացոցմէ նեղութիւն քաշելով՝ Փրանկներն օգնութեան կկանչեն: Պապինոս Կարճահասակը Հռաւեննան եւ Պենտապօլիսը Լոմպարտացոց ձեռքէն կառնու եւ պապերուն կընծայէ . 774-ին Մեծն Կարոլոս նորանոր երկիրներ ալ կաւելցրնէ նոցա վերայ: Մետասաներորդ դարու մեջ Մարիլտէ կոմսունին ժառանգութեամբ պապին կքողու Պոլսենա լճին քովերն եղած երկիրները, որ Սրբոյն Պետրոսի կալուած կոչուեցան: Յետոյ ալ եւ ալ պատճառներով պապերը տեր եղան Բենեւենտի, եւ Գաղղիոյ մեջ Վընուսսէն կոմսութեան եւ Ափնիոնի:

Հարաւային Իտալիան եւ Սիկիլիան, որ յառաջ Յունաց ձեռքն էին եւ յետոյ Լոմպարտացոց եւ Ափրիկէն եկած Սարակինոսաց ձեռքն անցան, ԺՄ դարուն մեջ Նորմանտացի իշխաններէ նուաճուեցան, եւ բազաւորութիւն մի ձեւացաւ, որ խնամութեամբ Գերմանիոյ Սուապեան ցեղին

անցաւ, յետոյ Գաղղիացոց Անժուի տոհմին : Սիկիլեան Երեկաժամ կամ Երեկոյեան ժամերգութիւն կոչուած կոտորածէն յետոյ 1282-ին, Սիկիլիան Արակոնի թագաւորին անձնատուր եղաւ, եւ Անժուի տոհմը թագաւորեց միայն Նեապոլսոյ երկրին վերայ, որ շատ անգամ *Սիկիլիա յայսկոյս Փարոսի* կոչուեցաւ. աստի յառաջ եկած է *Երկուց Սիկիլեայց* անունը : Ալփոնսոս Քաջասիրտն թագաւոր Արակոնի եւ Սիկիլիոյ, 1442-ին տիրեց Նեապոլսոյ, բայց Սիկիլիոյ եւ Նեապոլսոյ Միացեալ թագաւորութիւնը միայն 1503-էն յետոյ Սպանիոյ մասն համարեցաւ :

Սաւոյայի երկրէն իշխանական տոհմ մի խնամութեամբ Ալպեանց ստորոտը քանի մի տեղերու տէր կլինի, եւ փառասիրութեամբ կնայի տէրութիւնն ընդարձակել : Սաւոյայի կոմսերը 1416-ին Դուքս կլինին, եւ ժՁ դարուն մէջ իւրեանց աթոռը Շամպերի քաղաքէն Թուրին կփոխադրեն :

Կարոլոս Ը, Լուդովիկոս ԺԲ եւ Ֆրանսուա Ա Գաղղիոյ թագաւորք ջանացին, բայց իզուր, Միլանու գաւառը Գաղղիոյ հետ միացընել. 1535-ին Կարոլոս Ե կայսրը այն գաւառը Սպանիոյ թագաւորութեան հետ միացուց : Ուրբեքքի հաշտութեամբ 1713-ին Միլանն Աստրիացոց տրուեցաւ, 1736-ին Նեապոլիսն անցաւ Սպանիոյ Պուրպունեանց մէկ ցեղին : Սաւոյայի դքսերը Սպանիոյ եւ Աստրիոյ յաջորդութեանց համար եղած կռիւէն իւրեանց օգուտ քաղելով՝ Միլանու գաւառին կեսին կտիրեն, եւ 1720-ին Սարտենիան նոցա ձեռքը կանցնի, որ

չորս հարիւր տարիէ ի վեր Սպանիացւոց իշխանութեան տակ էր . եւ այն ժամանակ բազաւորի անունը կառնուան : Իննեւտասներորդ դարուս սկիզբները Իտալիոյ բոլոր ցամաքային մասը Գաղղիացւոց ձեռքն անցաւ , եւ Նափուլէոն Ա. Իտալիոյ բազաւորութիւնը հիմնեց , որոյ մայրաքաղաքն էր Միլան : Նափուլէոնի ընկնելէն յետոյ , 1815-ին Վեննայի ժողովով Իտալիոյ հին իշխաններն իւրեանց տերութիւնները ձեռք ձգեցին : Միլանու գաւառն եւ Վենետիկը Լոմպարտովենետեան բազաւորութիւնը կազմեցին եւ Աւստրիոյ տրուեցան , որ Իտալիոյ մեջ առաջին մեծ տերութիւնն եղաւ :

Գաղղիացիք 1859-ին օգնեցին Փիեմոնթեցւոց որ հիւսիսային Իտալիան Աւստրիացւոց լուծեն ազատեն . Նափուլէոն Գ. Լոմպարտիա գաւառին տիրեց եւ Սարտենիոյ Վիկտոր Էմմանուէլ բազաւորին տուաւ զայն : Վիլյաֆրանքայի հաշտութեամբ (1859) Իտալիան դաշնակցութիւն մի պիտի կազմէր , որոյ նախագահը պիտի լինէր պապը . բայց Սարտենիոյ բազաւորն եւ շատ Իտալացիք կուգէին բոլոր Իտալիան միայն մեկ ' բայց զօրաւոր տերութիւն անել . 1860-ին Մոտենա , Ռոմանիա եւ Թոսքանա Փիեմոնթի հետ կմիանան . Սարտենիոյ բազաւորը բռնութեամբ կառնու պապին ձեռքէն Ռոմայրիա եւ Մարքա գաւառները , Նեապոլսոյ բազաւորին ձեռքէն ալ բոլոր ունեցած երկիրները , եւ 1861-ին մարտ ամսոյն մեջ Իտալիոյ բազաւոր կը կոչուի : Այժմ միայն Վենետիկ եւ Մանրուա մնաց Աւստրիացւոց ձեռքը , եւ քանի մի գաւառ պապին ձեռքը .

իսկ թէ սօքա ալ պիտի միանան Իտալիոյ թագաւորութեան հետ, երբ եւ ինչ կերպով, — առ այժմ յայտնի չէ :

Իտալիոյ սահմանն է հիւսիսէն Զոնիցերի եւ Աւստրիա, արեւելքէն Ադրիական եւ Յոնիական ծովերը, հարաւէն Միջերկրական ծով, արեւմտքէն Գաղղիա եւ Միջերկրական ծով :

Տարածութիւնն է, կղզիներով միատեղ, 2,780 բիւրմերը քառակուսի :

Իտալիան երեւելի է իւր դրփցը գեղեցկութեամբն եւ պէսպիսութեամբը. երկիրը հիւսիսակողմն եւ մեջտեղերը լեռնոտ է, միւս կողմերը տեղ տեղ լեռնոտ եւ տեղ տեղ դաշտային : Երկու լեռանց գօտի ունի Իտալիան. Ա, *Ալպեանք* որ հիւսիսակողմը կտարածուին, եւ որոց գլխաւոր լեռներն են *Մոնթե Պիա'նքոյ* (Սպիտակ լեռն), *Մոնթե Ռոզա* (Վարդի լեռն), եւ *Իզերան*. Բ, *Ապեննեանք*' որ Իտալիոյ մեջտեղէն կանցնին հիւսիսէն հարաւ' մինչեւ Մեսինայի նեղուցը, եւ որոց բարձրագոյն ծայրն է *Մոնթե Քոունոյ*' Նափուլիի երկիրը. Ապենեանց շարունակութիւնը կը համարուին նաեւ Սիկիլիոյ լեռներն' որոց ամենէն բարձրն է *Ետնա* հրաբուխը : — *Սպիտակ լեռն* Եւրոպայի ամենէն բարձր լեռն է, եւ բարձրութիւնն է ծովու երեսէն 4,795 մերը :

Իտալիոյ նոյր շատ բարեբեր է եւ լաւ ոռոգուած :

Յզը բարեխառն է, մաքուր եւ առողջ. բայց երբեմն Ափրիկէն *չիոքքոյ* կոչուած խորշակը կփչէ : Ծովեզերքը

քանի մի տեղ անառողջ է . իսկ հարաւակողմը՝ հրաբուխներու պատճառաւ՝ գետնաշարժն անպակաս է :

Իտալիան իւր դրիցը գեղեցկութեանը , հողոյն բարեբերութեանը եւ օդոյն բարեխառնութեան եւ մաքրութեանը համար՝ Եւրոպայի դրախտ կամ պարտեզ կկոչուի :

Իտալիան նեղ թերակղզի մի լինելով՝ երկու կողմը ծով եւ մեջտեղը լեռնոտ , երկայն ընթացք ունեցող գետեր չունի . գլխաւորներն են *Փոյ*՝ որ ամենէն մեծն է , *Իզոնցոյ* , *Թալիամեկերոյ* , *Փիաւէ* , *Պրենքա* , *Ատիմե* եւ *Պաքքիլիոնէ*՝ որ Ադրիական ծով կբափին . *Առնոյ* , *Տիրերիս* , որ երկրորդն է մեծութեան կողմանէ , եւ *Վոլքոնէնոն*՝ որ Միջերկրական ծով կբափին . *Պրանտանոյ* եւ *Ճիանեքքա*՝ որ Յոնիական ծով կբափին : — Փոյ գետը քափուող գետակաց մեջ շատ երևելի են *Թիլիոնոյ* , որ Սուրբ Կոթարտոս լեռնէն կբղխի եւ *Մանիորե* լճէն կանցնի , *Ատտա*՝ որ Քոմոյ լճէն կանցնի , *Թրեպիա* (Տրեբիա) , եւ *Միլեյիոյ* :

Իտալիան բազմաթիւ լճեր ունի , ամենքը իւրեանց դրից վայելչութեամբը նշանաւոր . գլխաւորներն են . *Մանիորե* , *Քոմոյ* , *Կարտա* , *Լուկալոնոյ* , *Փերոնէնիա* կամ *Տրասիմէն* , *Վուլսիլոնոյ* կամ *Պոլսիլոնոյ* , եւ *Չեչալոնոյ* կամ *Ֆուչիլոնոյ* :

Բերքն է առատ ցորեն , բրինձ , եգիպտացորեն , ձէք , գինի , լեմոն , նարինջ , բուգ , եւ այլն . իսկ հարաւային կողմերը , մանաւանդ Սիկիլիոյ մեջ , ունի նաեւ արմաւ , քոքոյ եւ ուրիշ սոցա նման աւելի տաքութիւն ուզող բոյսեր : Հանքերու կողմանէ նշանաւոր չէ Իտալիան . միայն

երկաթն առատ է Էյպա եւ Սարտենիա կղզեաց մեջ, եւ քարերու մեջ շատ երեւելի է Փարրարայի ազնիւ մարմարիոնը : — Կենդանեաց մեջ ունի Եւրոպայի ամեն ընտանի եւ օգտակար կենդանիները . առելի նշանատրներն են գոմէշը, մեղուսն եւ շերամը :

Բնակիչն է 24,700,000 Իտալացիք . կրօնքն է հռոմեականութիւն . լեզուն՝ իտալերէն, որ լատիներէնէ յառաջ եկած է եւ աշխարհիս գեղեցիկ եւ քաղցրահնչիւն լեզուներէն մեկն է :

Ճարտարութեան եւ մշտնապահութեան կողմանէ Իտալացիք Եւրոպայի առաջին ազգն էին միջին դարուց ժամանակ . իսկ այժմ ուրիշ ազգեր անցած են զնոսա, թէ եւ այժմ եւս ըստ բաւականին յառաջացեալ է Իտալիան . նշանատր են մանաւանդ մետաքսէ կերպասները, երկաթէ գործուածքները, ապակին, յախճապակին, եւայլն : Բայց Իտալացուց փառքն եւ պարծանքն այն է որ Եւրոպայի միւս ամեն ազգերէն կանուխ սկսաւ մեջերը քաղաքակրթութիւնը, մատենագրութիւնն եւ մանաւանդ գեղարուեստք . յորում քան զամեն ազգերը գերազանց մնացին Իտալացիք մինչեւ ցայժմ . որով գեղեցիկ ճարտարապետութեամբ շէնքերու, սքանչելի պատկերներու եւ արձաններու, եւ մեծանուն երգահանաց կողմանէ իրաւամբ առաջինն է Իտալիան :

Իտալիան մինչեւ 1859 տասը տերութիւն կրածանուէր, որ են իւրեանց մայրաքաղաքովը .


- Ա. Սարտեկիոյ կամ Փիււննիքի բազաւորութիւն , մայրաքաղաք Թուրիւն .
- Բ. Լոմպարտովեկեակեան բազաւորութիւն՝ որ Աւստրիացոց ձեռքն էր , մայրաքաղաք Միլան .
- Գ. Մոնաքոյի փոքրիկ իշխանութիւնը՝ Նիցցայի մօտ .
- Դ. Փարմայի դքսութիւն , մայրաքաղաք Փարմա .
- Ե. Մոտեկայի դքսութիւն , մայրաքաղաք Մոտեկա .
- Զ. Լուքքայի դքսութիւն . մայրաքաղաք Լուքքա .
- Է. Թուրանայի մեծ դքսութիւն , մայրաքաղաք Ֆիրենցա .
- Ը. Պապին երկիրներն , կամ Վիճակ Եկեղեցւոյ , մայրաքաղաք Հոռոմ .
- Թ. Սան Մարիկոյի փոքրիկ հասարակապետութիւնը՝ պապին երկիրներուն մեջ .
- Ժ. Նեապոլսոյ կամ Երկուց Սիկիլեայց բազաւորութիւն , մայրաքաղաք Նեապոլիս :

Այժմ 1861-էն ի վեր Իտալիան սահմանադրական միապետութիւն է , միայն Վենետիկոյ վիճակն Աւստրիացոց ձեռքն է , եւ Հոռոմը քովի երկիրներով պապին ձեռքը :

ՎԻՃԱԿ ԵԿԵՂԵՑԻՈՅ (690,000 քն.) .


ՀՈՌՄ (192,000 քն.) Տիրեր գետոյն վերայ , Եկեղեցւոյ վիճակին մայրաքաղաքն էւ արո՞ւ պապին կամ ընդհանուր քահանայապետին ամենայն հոռոմեականաց . Քրիստոսէ 753 տարի յառաջ հիմնած ; եւ Քրիստոսի ժամանակ

աշխարհիս ամենէն բազմամարդ, մեծ, ծաղկեալ եւ ամէն
բանի կողմանէ երեւելի քաղաքն էր: Այժմ եւս յիշատա-
կարանաց բազմութեանն եւ փառաւորութեանը կողմանէ
աշխարհիս առաջին քաղաքն է: Հին շէնքերու մեջ նշա-
նաւոր են մանաւանդ *Պաւերկոն* որ այժմ եկեղեցի է, *Կո-
շուկոն* մեծ ամփիթեատրոնին մնացորդներն, յորում 80,000
հանդիսատեսք կմեկնէին, Դիոկղետիանու բաղանիքը, Տի-
տոսի եւ Կոստանդիանու յաղթական կամարները, Անտո-



Հոռմ .

նինոսի եւ Տրայիանու սիւները, ջրմուղներն, եւ այլն :
36½ եկեղեցեացը մեջ ամենէն գեղեցիկ եւ երեւելիներն են
Սրբոյն Պետրոսի մեծակառոյց եւ փառաւոր տաճարն որ
բոլոր աշխարհիս ամենամեծ եւ ամենագեղեցիկ եկեղեցին
է, Լատերանու Սրբոյն Յովհաննու եկեղեցին, Սուրբ



Ս. Պետրոսի Տաճարը .

Մարիամ Աւագն եւ Սուրբ Պօղոս արտաքոյ պարսպաց .
Պալատներուն մեջ երեւելի են *Վատիկան*՝ ուր կրնակի
պապը , յորում է եւ քաղաքիս հարուստ գրատունն եւ
այս տեղ կպահուին շատ մեծանուն նկարչաց պատկեր-
ներն հանդերձ Ապօղոնի եւ Լատկոնի նրաշակերտ ար-
ձաններովն որ հին ժամանակի գեղեցիկ արձանագործու-
թեան յիշատակները մնացած են . նոր *Կապիտոլիոնը* ,
(Սուրբ Հրեշտակ կամ Սանթ-Սեննեջօ) պալատը կամ ամ-
րոցը , եւ այլն . Հռոմայ քովերն եւ նոյն իսկ մեջը բազ-
մաքիս գեղեցիկ եւ նշանաւոր ամարանոցներ կան : Գի-
տութեանց , ճարտարութեան եւ վաճառականութեան կող-
մանէ այժմ յետնեալ է Հռոմ . ունի համալսարան մի , եւ
անուանի են նկարչութեան վարժարանները :

Հոռմայ քովերը նշանաւոր տեղերն են .

Թի'վոլի' արեւելակողմը , ջրվեժներովն երեւելի .

Ֆրասքա'րի' հարաւային արեւելակողմն , հին ժամանակ *Տուսկուշոն* կկոչուեր . նշանաւոր են Կիկերոնի տան ասերակները :

ԶԻՎԻԹԱ ՎԵՔԻԱ (16,000 բն.) Միջերկրականին վերայ , Հոռմայ տերութեան առաջին վաճառաշահ եւ գինուորական նաւահանգիստը :

ՎԻՃԱԿ ՎԵՆԵՏԿՈՅ (2,400,000 բն.) .

ՎԵՆԵՏԻԿ (120,000 բն.) Պրենքայի բերանին մօտ Ադրիականի ծովակներուն մեջ ութսուն եւ ասելի կղզիներու վերայ շինած' որ բազմաթիւ կամուրջներով միմեանց հետ կմխանան , դիրքը շատ գեղեցիկ է եւ շատ ճարտար ու վաճառաշահ քաղաք . փողոցներն ըստ մեծի մասին ջրանցքներ են , յորում *կո'նտոլա* կոչուած նաւակներով կըքայեն : Նշանաւոր շէնքերն են *Սրբոյն Մարկոսի* եկեղեցին եւ հրապարակը , հին դքսերու (տոժերու) պալատը , գինուորանոցը , *Ռիա'լոյ* կամուրջը Մեծ (կրանտէ) ջրանցքին վերայ , եւ այլն . նշանաւոր է նաեւ ջորս հազարմերը (գրեթէ ջորս վերստ) երկայնութեամբ կամուրջն որով քաղաքը ցամաքի հետ կմխանայ : Այս քաղաքս 797-են մինչեւ 1799 հասարակապետութիւն էր եւ կկառավարուեր տոժերու ձեռքով , եւ իւր փառաւորութեան ժամանակ աշխարհիս առաջին ծովային եւ վաճառաշահ տերութիւնն

եր . 1799-ին Պոնափարրէ կործանեց այս տերութիւնս որ արդէն տկարացած էր : Վենետիկն երկար ժամանակ առաջին քաղաքն էր ապակի եւ հայելի շինելու կողմանէ , որ այժմ եւս երեւելի են : Ուսումնարանաց մեջ նշանաւոր են նկարչութեան վարժարանն , որ գոյներուն գեղեցկութեան համար երեւելի է : — Այս տեղ է Ռափայելեան վարժարանը : Նմանապէս Վենետիկոյ մօտ Սուրբ Ղազար կըղզին , յորում է Մխիթարեանց վանքը՝ գրատունն եւ տպարանը :

ՔԻՈ՛ՃՃԻԱ (25,000 բն .) նոյնպէս ծովու մեջ , վաճառաշահ նաւահանգիստ , երեւելի է մեջէն ելած աղովը :

ԹԻՆԻՒՉՈՅ (20,000 բն .) ճարտար եւ վաճառաշահ :

ՈՒ՛ՏԻՆԷ (23,000 բն .) ծաղկեալ եւ ճարտար քաղաք : Սորա մօտ է *Քամիոյ-Ֆո՛րմիոյ* զիւղը՝ 1797-ին եղած հաշտութեամբն անուանի :

ՊԵՂՈՒՆՈՅ (14,000 բն .) նշանաւոր քաղաք եւ վաճառաշահ :

ՎԻՉԵՆՅԱ (34,000 բն .) մետաքսի գործարաններովն անուանի : Հայրենիք Փալլատիոյ (Պալլադիոս) մեծանուն ճարտարապետին որ գեղեցիկ շէնքերով զարդարած է քաղաքս :

ՓԱՏՈՒԱ (50,000 բն .) Իտալիոյ շատ հին քաղաքներէն մէկը , ունի անուանի համալսարան , եւ գիտութեանց , ճարտարութեան եւ վաճառականութեան մեջ շատ յառաջադէմ է : Այս քաղաքս ծնած է Տիտոս Լիւիոս հռոմայեցի պատմիչը :

ՎԵՐՈՆԱ (60,000 ըն.) Ա'տիճե գետոյն քով շատ ամուր, վաճառաշահ եւ հին քաղաք: Հին շէնքերու բազմաթիւ մնացորդացը մեջ նշանաւոր է մեծ եւ գեղեցիկ ամփիքեատրոն, որ գրեթէ ամբողջ մնացած է: Այս քաղաքիս մօտ են Ա'րքոյի եւ Ռի'վոյի գեղերն որ երեսելի են Պոնափարքի յաղթութեամբքը 1796-ին եւ 1797-ին:

ՄԱՆԹՈՒԱ (30,000 ըն.) Լճի մի եւ Մինչիոյ գետնն ձեւացած ճահիճներուն մեջ շատ ամուր բերդաքաղաք, գեղեցիկ եւ ծաղկած: Այս քաղաքիս քովերը ծնած է հռչակաւորն Վիրգիլիոս' հռոմայեցւոց առաջին բանաստեղծը:

Վիլլաֆրանքա, փոքրիկ քաղաք, երեսելի է Աւստրիոյ եւ Գաղղիոյ կայսերաց մեջ եղած հաշտութեամբն 1859-ին:

Ատրիա կամ Ադրիա, Փոյ եւ Ատիճե գետերու մեջտեղ, այժմ 25 հազարմեքը հեռու այն ծովէն, որոյ իւր անունը տրուած է:

ԹԱԳԱԻՈՐՈՒԹԻԻՆ ԻՏԱԼԻՈՅ (21,700,000 ըն.)

ՓԻԵՄՈՆԹ (2,860,000 ըն.)

ԹՈՐԻՆՈՅ կամ ԹՈՒՐԻՆ (180,000 ըն.) Փոյ գետոյն վերայ, մինչեւ 1864 Իտալիոյ բազաւորութեան մայրաքաղաքն էր. շէնքերուն եւ փողոցներուն կանոնաւորութեամբքը բոլոր եւրոպայի շատ գեղեցիկ քաղաքներէն մէկն է. իսկ զիտութեանց, ճարտարութեան եւ վաճառականութեան կողմանէ Իտալիոյ առաջին կարգիներէն մէկն է. ունի անուանի համալսարան որ Իտալիոյ ամենէն երեսելին է, եւ ուրիշ բազմաթիւ

վարժարաններ եւ ուսումնական տեղեր . երեսելի ե նաեւ այս քաղաքիս եզիպտական հնուրեանց քանդարանն որ ամենէն հարուստն է եւրոպայի մեջ :

ՆՈՎԱՐԱ (20,000 բն.) ճարտար եւ վաճառաշահ քաղաք : Այս քաղաքիս մօտ յաղբուեցան Գաղղիացիք Զուիցերացւոցմէ 1513-ին , եւ Փիեմոնթեցիք Ասատրիացւոցմէ 1849-ին :

ԱԼԵՔՍԱՆԸՏԻԱ (54,000 բն.) շատ ամուր բերդաքաղաք , եւ վաճառաշահ : Սորա մօտ է *Մարե'նկոյ* գիւղն ուր Պոնափարբ մեծ յաղբուքիւն մի արաւ Ասատրիացւոց դէմ 1800-ին :

Մոնրեպէլոյ , երեսելի է Գաղղիացւոց յաղբուքեամբքը զոր արին Ասատրիացւոց դէմ 1800-ին եւ 1859-ին :

ԳԱԻԱՌ ԶԵՆՈՎԱՅԻ (643,000 բն.)

ՃԵՆՈՎԱ (120,000 բն.) Միջերկրականի համանուն ծոցոյն վերայ , ամփիբեատրոնի ձեռով շինուածին համար դիրքը շատ գեղեցիկ է . երբեմն մեծ եւ վաճառաշահ հասարակապետութիւն էր , վենետկոյ նման , որ բոլոր Միջերկրականին եւ Սեաւ ծովուն եզերքները բռնած էր . այժմ եւս Սարտենիոյ մեծ եւ ծաղկեալ քաղաքներէն մէկն է , եւրոպայի շատ ամուրներէն մէկն եւ Միջերկրականի ամենէն վաճառաշահ նաւահանգիստներէն մէկը : Ունի համալսարան եւ ուրիշ բազմաքիւ ուսումնական տեղեր , հոյակապ պալատներ , մեծակառուց եկեղեցիներ ' յորս նը-



ՃԵՆՈՎԱ.

շանաւոր է Սուրբ Բարբուղիսկոս, ուր կպահուի Քրիստոսի դաստառակը : Ճարտարութեան մեջ շատ յառաջադեմ է : Հայրենիք է քաղաքս հռչակաւոր Քրիստափոր Քոլոմպոսի :

ՍԱՒՈՆԱ (20,000 բն.) Ճենովայի ծոցոյն վերայ ամուր քաղաք, ճարտար եւ վաճառաշահ նաւահանգիստ :

ՍՓԷՏԻԱ (12,000 բն.) Միջերկրականի փոքրիկ ծոցի մի վերայ զեղագուարճ մեծ եւ անքոյր նաւահանգիստ ունի :

ԼՈՄՊԱՐՏԻԱ (3,000,000 բն.)

ՄԻԼԱՆ (220,000 բն.) մինչեւ 1859 Լոմպարտովենեական բազաւորութեան մայրաքաղաքն էր. եւ այժմ Իտա-

լիոյ մեծ , գեղեցիկ , ծաղկած եւ վաճառաշահ քաղաքներէն մեկն է . շէնքերու մեջ նշանաւոր է *Սրբոյն Ամբրոսիոսի* եկեղեցին որ մեծութեան գուցէ եւ գեղեցկութեան կողմանէ աշխարհիս երկրորդն է . *Սքաւայի* ընդարձակաշէն քատրոնն , եւ այլն : Ունի համալսարան մի եւ բազմաթիւ մարդասիրական եւ ուսումնական ընկերութիւններ . ճարտարութեան եւ վաճառականութեան կողմանէ շատ ծաղկեալ է . իսկ գրավաճառութեան կողմանէ Իտալիոյ առաջին քաղաքն է :

ՄՈՆՅԱ (20,000 բն.) ճարտար եւ վաճառաշահ քաղաք , երեւելի է *Սրբոյն Յովնաննու* եկեղեցին , ուր Լոմպարտացւոց բազաւորք կ'օժուէին եւ ուր պահուած է երկաթի Թագր ' Քրիստոսի խաչին մեկ գամովը շինած :

ՔՈՄՈՅ (20,000 բն.) համանուն լճին վերայ ճարտար եւ վաճառաշահ :

ՊԵՐՎԱՄՈՅ (35,000 բն.) ճարտար քաղաք , անուանի են մետաքսէ գործուածքները :

ՓԱԻԻՄ (25,000 բն.) Թիջինոյ գետոյն աջակողմն , երբեմն Լոմպարտացւոց բազաւորութեան մայրաքաղաքն էր . այժմ ծաղկեալ , ճարտար եւ վաճառաշահ քաղաք է , եւ անուանի է համալսարանը : Այս քաղաքիս մօտ 1525-ին Ֆրանսուա Ա. գերի բռնուեցաւ :

ՊԵՐՇԵԱ (34,000 բն.) ճարտար եւ ծաղկած քաղաք . անուանի են զէնքի եւ դանակի գործարանները :

ՔՐԵՄՈ՛ՆԱ (28,000 բն.) Փոյ գետոյն քով , անուանի են ջութակները :

Մանե'կրա, Թիջինոյի մօտ, անուանի է Գաղղիացոց
յաղքութեամբն 1859-ին :

Մարիևեա'նօ, Միլանու մօտ . Գաղղիացիք երկու յաղ-
քութիւն արած են այս տեղ . մեկ մի 1515-ին Զուիցերա-
ցոց դեմ , եւ մեկ մի Աստրիացոց դեմ 1859-ին :

Սոյֆերի'նոյ, Մինչիոյի մօտ, այս տեղ նափուէոն Գ
յաղքեց Աստրիացոց 1859-ին :

Քասա'նոյ, Միլանու մօտ Ատտա գետոյն վերայ . այս
տեղ Սուվորով մեծ յաղքութիւն մի արաւ Գաղղիացոց
դեմ 1799-ին :

ՀԻՆ ԴՔՍՈՒԹԻԻՆ ՓԱՐՄԱՅԻ (500,000 ԲՆ.)

ՓԱՐՄԱ (45,000 ԲՆ.) համանուն դքսութեան մայրաքա-
ղաքն էր, ճարտար, ծաղկեալ եւ վաճառաշահ . շէնքերու
մեջ երեսելի է թեատրոնն որ աշխարհիս ամենէն ընդար-
ձակն է :

ՓԻԱՉԵՆՅԱ (30,000 ԲՆ.) Փոյ գետոյն վերայ, ամուր
քաղաք եւ դիրքը շատ զուարճալի :

ՀԻՆ ԴՔՍՈՒԹԻԻՆ ՄՈՏԵՆԱՅԻ (600,000 ԲՆ.)

ՄՈ՛ՏԵՆԱ (31,000 ԲՆ.) համանուն դքսութեան մայրա-
քաղաքն էր . գեղեցիկ քաղաք, ունի համալսարան մի :

ՀԻՆ ՄԵԾ ԳՔՍՈՒԹԻԻՆ ԹՈՍՔԱՆԱՅԻ (1,800,000 ըն.)

ՖԻՈՐԵՆՅԱ (114,000 ըն.) Առնոյ գետոյն վերայ Թոսքանայի մեծ դքսութեան մայրաքաղաքն էր, մեծ, ծաղկեալ, ճարտար եւ գեղեցիկ. շէնքերու մեջ նշանաւորներն են Փլորենտեան բանգարանը որ ունի բազմաթիւ նկարներ, արձաններ եւ հնութիւններ. մեծ դքսին պալատը, մայր եկեղեցին, Մետիչեանց հրաշակերտ մատուռն եւ այլն : Այս քաղաքս Երոսպայի համար մատենագրութեան եւ գեղարուեստից օրօրոցն եղաւ. Մետիչի ցեղին ժամանակ : Այս քաղաքս ծնան Գալիլէոս, Մաքիավէլլի, Տանթե, Միքել Անճելոյ, եւ ուրիշ մեծանուն մարդիկ : Ճարտարութեան մեջ շատ յառաջադէմ է. երեսելի են մետաքսե գործուածքներն եւ յարդէ փեղոյրները :

ՓԻՂՍ (20,000 ըն.) Առնոյի բերանին մօտ, ծաղկած եւ գեղեցիկ քաղաք, երբեմն համանուն հզօր հասարակապետութեան մայրաքաղաքն էր. ունի անուանի համալսարան : Շէնքերու մեջ նշանաւոր է մայր եկեղեցին եւ ծուռ աշտարակը :

ԼԻՎՈ՛ՐՆՈՅ (80,000 ըն.) Միջերկրականի վերայ, Իտալիոյ շատ վաճառաշահ նաւահանգիստներէն մեկն է : — Ժամանակաւ շատ մերագնեայ վաճառականք եւս կուգային այս քաղաքս, ուր եւ տպարան մի հաստատել էին, եւ եկեղեցի մի ունեին որ այժմ հռովմեական Հայոց ձեռքն է :

ՍԻԼՆԱ (40,000 ըն.) երբեմն համանուն հզօր եւ հարուստ հասարակապետութեան մայրաքաղաքն էր. այժմ եւս գեղեցիկ եւ ծաղկեալ. ունի գեղեցիկ մայր եկեղեցի որ մեծանուն նկարչաց պատկերներով զարդարուած է, եւ համալսարան մի: Այս քաղաքիս լեզուն ամենէն մաքուր իտալերէնը կհամարուի:

ԱՐԷ՛ՅՅՈՅ (15,000 ըն.) հայրենիք Փերրարքա մեծանուն բանաստեղծին:

ՌՈՄԱՆԻԱ (1,000,000 ըն.)

ՅԵՐՐԱ՛ՐԱ (35,000 ըն.) ամուր միջնաբերդ ունի. շէնքերու մեջ նշանաւոր են դքսերու պալատն եւ թեատրոնը:

ՊՈԼՈ՛ՆԻԱ (75,000 ըն.) Հռոմայ տերութեան երկրորդ երեսելի քաղաքն էր, շատ ճարտար եւ վաճառաշահ, ունի համալսարան, պատկերաց մեծ բանգարան եւ բազմաթիւ գեղեցիկ շէնքեր: — Հայրենիք Կալվանի բնագիտին:

ՅԱՅԷ՛ՆՅԱ (20,000 ըն.) վաճառականութիւնը ծաղկած. կասեն թէ այս քաղաքս հնարուեցաւ հասարակ յախճապակին կամ *ֆայանսը*:

ՀՌԱԻԵ՛ՆՆԱ (25,000 ըն.) Աղբիական ծովու մօտ երբեմբն մեծ եւ երեսելի քաղաք, եւ արուանիստ շատ հռոմայեցի կայսերաց. իսկ այժմ ընկած. նշանաւոր է Տանթի գերեզմանն:

ԲԱՐՔԱ (900,000 ԲՆ.)

ՈՒՐՊԻՆՈՅ (15,000 ԲՆ.) հայրենիք Ռափայել մեծ նրկարջի :

ՓԵՂԱՐՈՅ (15,000 ԲՆ.) Աղբիականի վերայ նաւահանգիստ , հայրենիք Ռոսինի երգահանի :

ԱՆՔՈՆԱ (45,000 ԲՆ.) Աղբիական ծովու վաճառաշահ նաւահանգիստներէն մեկն է :

Լորէրրոյ , կասեն լատինացիք թէ այս տեղ փոխադրուեցաւ Նազարեքէն Սրբոյ Կուսին տունն , որով մեծ ուխտատեղի է :

ՈՒՄՊՐԻԱ (490,000 ԲՆ.)

ՓԵՐՈՒՃԻԱ (26,000 ԲՆ.) համանուն լճին հիւսիսակողմն , երբեմն մեծ եւ ծաղկած քաղաք . ունի համալսարան :

ԱՍՍԻՉԻ , Փերուճիայի արեւելակողմն , հայրենիք Ֆրանչիսկոսի Ասսիզացոյ , ուր եւ գերեզմանք կայ :

ԹԵՌԵԻ , հայրենիք Տակիտոս մեծ պատմարանի :

ՆԱՓՈԼԻԻ ԳԱԻԱՌԻՔ (7,000,000 ԲՆ.)

ՆԷԱՊՈԼԻՍ կամ ՆԱՓՈԼԻ (480,000 ԲՆ.) ծոցի մի վերայ Փոզիլիփոյ եւ Վեսուվ լեռանց մեջ ամփիքեատրոնի ձեւով շինած , դրից կողմանէ Եւրոպայի առաջին գեղեցիկներէն մեկն է , եւ մեծութեան ու բազմամարդութեան կողմանէ Իտալիոյ առաջինը . քաղաքին ներքին մասը Իտալիոյ միւս քաղաքաց գեղեցկութիւնը չունի , թէւ բազմա-

քի, պալատներ եւ եկեղեցիներ ունի : Գիտութեանց մեջ յառաջադեմ է քաղաքս . ունի բազմաքի, ուսումնական տեղեր եւ անուանի համալսարան մի : Ճարտարութեան կողմանէ եւս շատ յառաջ գնացած է . անուանի են մասնաւորապէս այս քաղաքիս զղմաճն (մաքարոնի) եւ օճառք : — Սորա վանքերէն մեկուն մեջ պահուած է Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի ցանկալի նշխարքն եւ չարչարանաց գործիքները , որոյ տօնը Նեապօլսեցիք ամեն տարի կկատարեն մեծահանդէս բափօրով :

Նեապօլսոյ քովերն էին Պոմպէա , Հերքուշսոնս եւ Ստարեա քաղաքներն որ Քրիստոսի 79 բուսականին Վեսուվի առաջին անգամ բռնկելովը մոխրի ու լաւայի տակ քաղուեցան . Պոմպէա քաղաքը գտնուեցաւ , եւ հարիւր տարիէ ի վեր մեջէն նետաքրքրական յիշատակներ կհանեն : Նեապօլսոյ քովերը շատ զուարճալի գեղեր եւ քաղաքներ կան , եւ համանուն ծոցոյն մեջ վայելչագեղ կըղզիներ ' ինչպէս Փրոչի'տա , Քափրեա եւ Իսքիա :

Ա՛ՔՈՒԻԼԱ (15,000 բն.) Ապրուցցօ գաւառին գլխաւոր քաղաքն է , երկիրը սաստիկ լեռնոտ :

ՅՈՃՃԻԱ (26,000 բն.) վաճառաշահ քաղաք :

ԼԷՉՉԷ (22,000 բն.) Ոթրանթի երկրին գլխաւոր քաղաքն եւ Իտալիոյ գեղեցիկներէն մեկը :

ՔԱՉԷ՛ՐԹԱ (24,000 բն.) Մշակելու (Թերրա տի Լավորօ) երկրին գլխաւոր քաղաքն որ Եւրոպայի շատ բարեբեր երկիրներէն մեկն է . ունի բազաւորական գեղեցիկ ամարանոց , եւ գինին շատ անուանի է :

ՍԱԼԵՆՆՈՅ (15,000 բն.) բժշկութեան վարժարանովն անուանի է. քովերը *Պետտոնէ* քաղաքին գեղեցիկ աներակները կան :

ՓՈԹԵՆՆՅԱ (12,000 բն.) լերանց մեջ, Պազիլիքաթ գաւառին գլխաւոր քաղաք :

ՔՈԶԵՆՅԱ (15,000 բն.) վաճառաշահ, Կալարրիոյ գլխաւոր քաղաքը :

ՊԻԻՆՆԵՅԻ (Բրունտուսիոն) ժամանակաւ մեծ եւ բանուկ նաւահանգիստ, իսկ այժմ անազով լցուած : — *Յրրանքո*, համանուն նեղուցին վերայ փոքր նաւահանգիստ : — *Թարա՛նքոյ* (Տարենտոն) համանուն ծոցոյն վերայ, երբեմն երեսելի, այժմ ընկած : — *Ռե՛նիոյ* (Հոնգիոն) Խալիոյ հարաւային ծայրը, նոյնպէս ընկած : — *Ամա՛լֆի*, երբեմն մեծ եւ հարուստ քաղաք : — *Սոռե՛նքոյ*, հայրենիք Թանսոյ մեծ բանաստեղծի :

Նեապոլսոյ ծոցոյն մեջ երեսելի են *Խաքիա* կղզին՝ որ հանքային տաք ջրեր ունի, եւ *Քալիքի* : — *Քասթելլամա՛րե*, հին Ստարիա քաղաքին տեղը, հանքային տաք ջրեր ունի, եւ բազմաքիւ ամարանոցներ : — *Փո՛րրիչի*, Վեսուվի ստորոտը, հին Հերքուլանոն քաղաքին վերայ շինած : — *Փուլցոլա*, հրաբխային հողերու մեծ վաճառականութիւն ունի : Նեապոլսոյ մօտերն են *Պալա* եւ *Կուլմա* քաղաքաց աներակները, *Սոլֆարալա* փոքր լեռն լորմէ շատ ծծումբ կելնէ, *Անիանոյ* լիճն՝ որոյ ջուրը միշտ եռացման մեջ է, *Շան* Այրը, *Փոզիլիպիոյ* լեռն որ մեկ կողմէն միւսը գետնափոր ճանապարհ ունի, *Վիր-*

գիշիտսի Դերեզմանն , եւ այլն : — Աւերաա , գոր Նորմանտացիք հիմնեցին ժՍ. դարու մեջ . — Կապուա , գոր Լոմպարտացիք շինեցին Թ. դարու մեջ՝ հին Կապուայի աւերակներով :

ԿԱՅԷ՛ԹԱ , ամուր քաղաք , ուր Նեապոլսոյ թագաւորը Ֆրանչիսկոս Բ երկար պաշարման մի դիմացաւ Փիեմոնթեցոց դեմ :

ԿՂՋԻՔ .

ՍԱՐՏԵ՛ՆԻԱ ԿԱՄ ՍԱՐԴԻՆԻԱ (570,000 քն .)

Այս կղզոյս հողը բարեբեր է , բայց անմշակ :

ՔԱ՛ՂԻԱՐԻ (30,000 քն .) համանուն ծոցոյն վերայ , կըղզոյս գլխաւոր քաղաքն է , ծաղկեալ եւ վաճառաշահ նաւահանգիստ :

ՍԱ՛ՍՍԱՐԻ (30,000 քն .) կղզոյս երկրորդ նշանաւոր քաղաքը :

ԷԼՊԱ (10,000 քն .)

Այս կղզիս Թոսքանայի եւ Քորսիքայի մեջտեղերը կրնկնի . անուանի է երկաթի մեծ հանքովն , եւ Նափոյեոն Ա. ուաջնոյն տասն ամիս մեջը բնակելովը :

ՍԻԿԻԼԻԱ (2,200,000 քն .)

Սիկիլիան աշխարհիս բազմամարդ եւ բարեբեր կըղ-

գիներէն մէկն է. հարաւային Եւրոպայի եւ հիւսիսային Ափրիկէի ամեն թերթերն ունի : Այս կղզւոյս մեջ երեք հրաբուխ կայ, որով գետնաշարժ շատ կպատահի մեջը :

ՓԱԼԷ՛ՐՄՈՅ (180,000 բն.) խորշի մի վերայ, կղզւոյս մայրաքաղաքն է եւ Իտալիոյ բազաւորութեան երկրորդ վաճառաշահ նաւահանգիստ : Դիրքը շատ գեղեցիկ է, ունի բազմաթիւ ուսումնական տեղեր եւ գեղեցիկ շէնքեր :

ՄԵՍԻ՛ՆԱ (94,000 բն.) համանուն նեղուցի վերայ, գեղեցիկ, ապահով, եւ գինուորական մեծ նաւահանգիստ . վաճառականութեան եւ գիտութեանց կողմանէ եւս նշանաւոր է :

ԹՐԱ՛ՓԱՆԻ (26,000 բն.) հին *Դրեպանէ* քաղաքն է, վաճառաշահ նաւահանգիստ :

ՃԻՐՃԻ՛ՆԹԻ (16,000 բն.) քովերը հին Ակրագանտ քաղաքին հրաշակերտ շինուածոց աւերակները կան :

ՔԱԼԹԱՆԻՉԵԹԹԱ (16,000 բն.) անուանի է ծծումբի նըշանաւոր հանքերովը :

ՔԱԹԱՆԱ (64,000 բն.) Ետնայի մօտ գեղեցիկ քաղաք եւ վաճառաշահ . հին շինուածոց աւերակներ ունի : Այս քաղաքս շատ անգամ լաւայով ծածկեցաւ կամ վնասուեցաւ :

ՍԻՐԱԿՈՒՍԱ (18,000 բն.) այս քաղաքս որ երբեմն այնչափ մեծ էր եւ հռչակաւոր, այժմ մէկ փոքրիկ քաղը միայն մնացած է : Իւր աւերակաց մեջ նշանաւոր է վիմափոր բէատրոնն եւ *Ականջն Դիոնիսեայ* որ քարահանքի մի կամարն է . *Արեքուսայ* գերահռչակ աղբիւրն այժմ անշուք բան է նոր քաղաքին մեջ :


ՄԱՐՍԱՂԱ (24,000 ըն.) անուանի գինի ունի :

ԼԻՊԱՐԵԱՆՔ.

Սոքա Սիկիլիոյ հիւսիսակողմը մանր կղզիներ են՝ ըստ մեծի մասին հրաբուխներով դուրս ելած : Սոցա գլխաւորին անունն է *Լիպարի*՝ համանուն քաղաքով :

ՄԱԼԹԱ (100,000 ըն.)

Այս կղզիս, որ պատերազմական զարմանալի դիրք ունի, Անգղիացոց ձեռքն է. երկիրն անբեր եւ ապառաժուտ, բայց վերան բուսարեր հողով ծածկած է, զոր ըստ մեծի մասին Սիկիլիայէն բերած են : Գլխաւոր քաղաքն է ՎԱԼԷ՛ԹԹԱ կամ ԼԱՎԱԼԷ՛Թ (35,000 ըն.) որ Եւրոպայի առաջին կարգի ամուրներէն մեկն է, եւ երկու մեծամեծ եւ լաւ նաւահանգիստներ ունի :



ԵՒՐՈՊԱԿԱՆ ՏԱՃԿԱՍՏԱՆ.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — Հին ժամանակները այժմու *Saukhautian* կոչուած երկրին մեջ շատ ազգեր կրնակին, ինչպէս՝ Ադրիական ծովուն եզերքը Լիւրիկեցիք, Գանուրի ճիւղաակողմը (այժմու Մոլտաւիա եւ Վալաքիա երկիրները) Սկիւրացիք, Գանուրի հարաւակողմը Մեսիա գաւառին մեջ՝ Գետացիք, Հեմոս կամ Պալզան լեռանց հարաւակողմն՝ Թրակացիք, սոցա երկրին ալ հարաւակողմը կրնակին Մակեդոնացիք, Թեսաղացիք եւ Եպիւացիք : — Հռոմայեցիք հետզհետե տիրեցին այս բոլոր երկիրներուս, որ երկար ժամանակ նոցա ձեռքը մնացին : Երբոր Հռոմայեցեոց ինքնակալութիւնն երկու բաժանուեցաւ, այս երկիրներուս մեծ մասն արեւելեան կայսերութիւնը կազմեցին, զորս յոյն կայսերք չկարողացան պաշտպանել Բարբարոսաց արշաւանաց դեմ. Բուլղարք Մեսիա գաւառը բնակեցան, եւ շատ սլաւեան ազգեր, ինչպէս Խրուարք, Պոսնիացիք, Սերուիացիք եւ Գարատացիք Լիւրիկէի մեջ եւ Գանուրի քովերն հաստատուեցան :

Զորբորդ խաջակրութեան ժամանակ Գաղղիացիք կոստանդնուպոլսոյ տիրեցին եւ մեջը լատին կայսերութիւն մի հաստատեցին, որ 52 տարի դիմանալէն յետոյ, 1261-ին դարձեալ Յունաց ձեռքն անցաւ : Բայց հարիւր տարի

յետոյ Օսմանցիք, թաքարստանեն ելած, որ արեւմտեան Ասիոյ շատ տեղերուն տիրել էին, եւրոպա անցան եւ Աղբիանուպօլսոյ տիրեցին: Մեհմեմետ Բ Օսմանցւոց թագաւորն 1453-ին տիրեց նաեւ Կոստանդնուպօլսոյ, եւ այնպեսով վերջացաւ Արեւելեան կայսերութիւնը:

Օսմանցիք արագ արագ յաղթութեամբք իւրեանց տերութիւնն ընդարձակեցին Աղբիական ծովուն եզերքներէն մինչեւ Ազախու ծովը. քանի մի անգամ Մաճառստան արշաւեցին, վենետկեցւոց ձեռքէն Մոռան, Քանտիան եւ Արշիպեղազոսի կղզիներն առին, եւրոպայի բոլոր քրիստոնեայ տերութիւնները զողացուցին, բայց Տոն-Փոռան Աստրիացին Լեփանթոյի ծոցոյն մեջ եւ Սոպկեսքի Լեհացին վեննայի քով Օսմանցւոց յաղթելով՝ նոցա աշխարհակայութիւնքն արգիլեցին:

Օսմանցւոց տերութիւնն փառաց եւ զօրութեան ծայրն հասնելէն յետոյ, շուտով սկսաւ տկարանալ: Ռուսք մինչեւ Սեաւ ծովն եւ Փրութ գետը Տաճկաց ձեռքն եղած երկիրներուն տիրեցին. Սերուիան, Վալաքիան եւ Մոլտաւիան առանձին կառավարութիւն ունեցան բոլորովին անկախ Օսմանցւոց տերութենէն, եւ Յունաստանն իւր ազատութիւնը գտաւ: Մահմուտ Բ, որ 1808-էն մինչեւ 1839 թագաւորեց, ետեւե եղաւ իւր ազգը կրթել եւրոպական քաղաքականութեամբ. նորա որդին Ապտիւլ Մեճիտ (1839—1861) հօրն օրինակին հետեւեցաւ, եւ սորա եղբայրն եւ յաջորդը որ 1861-էն ի վեր կրթագաւորե, այն իւր նախորդաց զովելի գործն յառաջ կտանի:

Եւրոպական Տաճկաստանի սահմանն է, հետն առնելով Սերուխան եւ Միացեալ իշխանութիւնքը, հիւսիսէն Մաճառաստան, Թրանսիլուանիա եւ Պեսարապիա . արեւելքէն՝ Պեսարապիա, Սեաւ ծով, Կոստանդնուպօլսոյ նեղուցը, Մարմարա ծով, Չանազգալէսի նեղուցն եւ Արշիպեղազոս, հարաւէն՝ Արշիպեղազոս, Յունաստան, եւ Յունիական ծով . արեւմտքէն Ադրիական ծով եւ Լիւրիկէ :

Տարածութիւնն է 5,220 բիւրմերք քառակուսի :

Երկիրն ընդհանրապէս լեռնոտ է, բայց եւ մեծամեծ դաշտեր եւ հովիտներ ունի : Երկու գլխաւոր շարք լեռանց կայ Եւրոպական Տաճկաստանի մէջ . *Կարպարք*՝ Միացեալ իշխանութեանց մէջ, եւ *Պալգան* լեռինք՝ որ Սեաւ ծովէն մինչեւ Ադրիականը կտարածուին . սոցա այլ եւ այլ ճիւղերը մինչեւ ի Յունաստան կհասնին, եւ բարձրագոյն ծայրն է Ողիւմպոս ի Թեսաղիա (2972 մերք) : — Պալգան լեռինքը Լիւրիկէի կողմերը *Տիւարեան* լեռինք կկոչուին :

Հողը շատ բարեբեր է, բայց ոչ լաւ մշակուած :

Գլխաւոր գետերն են . *Դանուբ*՝ որ Տաճկաստանը նախ Աստրիայէն կգատէ, լետոյ Միացեալ իշխանութիւնները, եւ ետքը բերանով Սեաւ ծով կբափի, որոց ամենէն նշանաւորն է *Սուշիկնայի բերանը* : Սորա աջակողմեան ճիւղերն են *Սաւա*՝ որ Աստրիան Տաճկաստանէն կգատէ, *Մորաւա* եւ *Իսքէր* . իսկ ձախակողմեան գլխաւոր ճիւղերն են *Օլբ* կամ *Ալուրա*՝ որ վալաքիայէն կանցնի, *Սե-*

ընթացք՝ որ Մոլտաւիայէն կանցնի . եւ Փրուք՝ որ Մոլտաւիան Պեսարապիայէն կրածնէ : Գանուրէն յետոյ Տաճկաստանի երկրորդ մեծ գետն է Մարիցա՝ որ Արշիպեղազոս կրաւոսի . նոյն ծովը կրաւիին նաեւ Գարասուռ եւ Վարտար : Աղբիական ծովը կրաւիին Տրիև , եւ Պոչաևա կամ Մորաւա :

Գլխաւոր լճերն են Սկիւտար կամ Շքոտրա եւ Օխրիտա :

Օղը Պալզան լեռներուն հիւսիսակողմն եղած երկիրներու մեջ բարեխառն է եւ երբեմն ցուրտ . իսկ հարաւակողմը գուարճալի եւ ընդհանրապէս տաք :

Գլխաւոր բերքն է ցորեն , եգիպտացորեն , բրինձ , գինի , ծխախոտ , բամբակ , եւ եւրոպայի ամեն տեսակ պտուղներն , ազնիւ եւ առատ : Կենդանեաց մեջ ունի ազնիւ տեսակ ոչխարներ եւ այծեր , եւ ուրիշ ընտանի կենդանիներ , ինչպէս նաեւ շատ մեղու եւ շերամ . Կարպար լեռանց մեջ կգտնուին նաեւ վայրի գազաններ , ինչպէս գայլ , աղուէս , արջ , եւ այլն : Հանքերու կողմանէ Տաճկաստանն հարուստ է , եւ ունի ոսկի , արծաթ , երկաթ , կապար , աղ եւ հանքային ջրեր . բայց ըստ մեծի մասին երեսի վերայ մնացած են բոլոր այս հանքերս :

Բնակիչն է 16,500,000 : Սոցա մեջէն միայն 1,200,000-ը Օսմանցիք են՝ որ տիրող ազգն է . մնացած ժողովուրդներն են Սլաւեանք՝ այսինքն Սերուիացիք , Բուլղարք , Պոսնիացիք , Խոուարք եւ Գաղմատք՝ իբր 7 միլիոն . Մոլտովալաքք՝ որ լատիներենէ յառաջ եկած լեզու մի կխօսին , եւ գլխաւորապէս Տրայիանոսի գաղթականներէն

իջած են , իբր 4 միլիոն . Այգանիացիք կամ Առնաուտք՝ 4,500,000 . Յոյնք մեկ միլիոն . Հայք 400,000 , եւ այլն . — Լեզուն տաճկերէն է , որ արարերէն , պարսկերէն եւ քարերէն լեզուներով խառն է , եւ Արեւելքի գեղեցիկ եւ քաղցրահնչիւններէն մեկն է : — Օսմանցիք , ինչպէս նաեւ ուրիշ մահմետական ազգեր , Արարացոց գրերը կգործածեն , որ Ասիացի ազգաց շատին գրերուն նման աջէն դեպի ձախ կգրուին :

Տերութեան եւ Օսմանեանց կրօնքն է մահմետականութիւն , Էօմերի հետեւողք , կամ Սիւննի (օրինաւոր) . բաց յՕսմանեանց միւս ազգացմէ եւս շատ մարդիկ մահմետական են , այնպէս որ Եւրոպայի Տաճկաստանի բոլոր մահմետականաց թիւն է 4,500,000 . Յունադասանք են իբր 10 միլիոն . Հայադասանք իբր 400,000 . Հռոմեականք ամեն ազգերէ՝ իբր մեկ միլիոն :

Արուեստից եւ գիտութեանց կողմանէ , Եւրոպացոց նայելով , տակաւին ետ մնացած է Տաճկաստանը . այսու ամենայնիւ երեւելի են գորգերը , կաշին , հասարակ կտաւներն , եւ մանաւանդ գէնքերը : Վաճառականութիւնը բոլորովին Հայոց , Յունաց եւ Հրէից ձեռքը բողած է :

Տերութեան կառավարութիւնն է ազատ միապետութիւն . կայսրն , որ *Վատիշահ* կամ *սուլթան* կկոչուի , գլուխ է միանգամայն մահմետական կրօնքի :

Տերութեան գլխաւոր պաշտօնեաներն են . *Մեծ Միշք-թիւն* կամ *Շէյխ-իւլ-Իսլամ* , մեծ դատաւոր եւ քահանայապետ , նախագահ ժողովոյն *իւլեմայից* , կամ հաւատոյ եւ

օրինաց վարդապետներուն . *Սատրազամ* կամ *Մեծ Վիզիրն*՝ որոյ յանձնուած է քաղաքական եւ գինուորական կառավարութիւնը . *գաւիտուտակի յաշակն*՝ որոյ յանձնուած է բոլոր նաւական գօրութիւնը . *սերասքեր* կամ *սպարապետ* , որ պատերազմի ժամանակ բանակի հրամանատարութիւնն ունի , եւ այլն : Գաւառաց կոսակալները *յաշակ* կկոչուին . սօքա , ի նշան իւրեանց իշխանութիւնը , ձիու *ագի* կամ *բուշ* տանել կուտային առջեաներէն . երեք բուռն ունեցող փաշաներն ամենէն մեծ իշխանութիւն ունեցողներն են : Տերութեան Խորհրդարանը *Տիւրան* (Գիւան) կկոչուի , եւ արքունիքը՝ *Բարձրագոյն Դուռն* կամ *Օսմանեակ Դուռն* : Տաճկաստանի մահմետական ջեղած ժողովուրդները միով անուամբ *բայա* կկոչուին Օսմանցիներէն :

Եւրոպական Տաճկաստանը , ըստ այժմու քաղաքական կառավարութեան 15 նահանգ կբաժանուի , Գանութեան իշխանութիւնքն եւս հաշուելով . իւրաքանչիւր նահանգ այլ այլ եւ այլ գաւառ կբաժանուի : Մեք ըստ իւրաքանչիւր երկրին հին անուանը 9 մաս կբաժանեմք Տաճկաստանն , այսինքն *Ռումէլի* կամ *Թրակիա* , *Պուշղարիա* , *Թեասաղիա* , *Արպակիա* , *Պոսնիա* , *Կղզիք* . երեք հարկատու գաւառք՝ որ են *Սերուիա* , *Վարաքիա* , եւ *Մուտաշիա* :

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՔ .

Ա. ՌՈՒՄԷԼԻ (4,000,000 ըն.)

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ կամ ՍՏԱՄՊՈԼ (630,000 ըն.) արուարձաններովը միատեղ (ըստ ոմանց 800,000) համանուն նեղուցին վերայ , Օսմանեան ինքնակայութեան մայրաքաղաքը , եւ արոռ. Հայոց եւ Յունաց Պատրիարքներու . Եւրոպայի մեծ , բազմամարդ , ընդարձակ եւ վաճառաշահ քաղաքներէն մէկն է . իսկ զրից գեղեցկութեանը կողմանէ աշխարհիս մեջ իրեն հաւասարը չունի : Այս քաղաքս Մեծն Կոստանդիանոս շինել տուաւ հին Բիւզանդիոնի տեղն , եւ 330-ին արոռ.ը Հռոմէն այս տեղ փոխադրեց : Մեհեմեթ Բ 1453-ին տիրեց քաղաքիս , եւ այնուհետեւ Օսմանեանց արոռ.անխտն եղաւ : Բուն քաղաքն Հռոմայ պէս եօրը բլուրներու վերայ շինած է , եւ եռանկիւնածեւ է . այս եռանկեան հիւսակողմն նեղուցին մէկ կտորը դեպ ի ներս մտած է , որոյ լայնութիւնն է 4,000 մերր (զրեքէ մէկ վերսք) , եւ երկայնութիւնը 8,600 մերր (ուքը վերսք) եւ Եւրոպայի ամենէն գեղեցիկ եւ ապահով նաւահանգիստը կձեւացրնէ , որ 1200 մեծ նաւէն աւելի կառնու : Եռանկեան հարաւակողմը Մարմարայի ծովն է . իսկ արեւմտակողմը ցամաքի դին է , եւ երկիրը պարբսպով , խրամներով եւ աշտարակներով պաշտպանուած է : Նաւահանգստին անդիի կողմն են Կաշարս կամ Ղաշա-



Կոստանդնուպօլիս .

րիս՝ քաղ վաճառականաց , եւ Փերսա կամ Պէշողու՝ յորում կրնակին քրիստոնեայ թագաւորութեանց ղեսպաններն , եւ քաղաքիս ամենէն գեղեցիկ քաղն է , այնպէս որ այժմ Քիւչիւք Փարիզ կանուանի բնակիչներէն : Թէեւ ծովու վրայէն գեղեցիկ եւ հիանալի տեսք ունի քաղաքս , սակայն ներսէն մեկ գեղեցկութիւն մի չունի՝ փողոցներուն անկանոնութեանն ու տներուն տձեւութեանը պատճառաւ : Երեք հարիւր յիսունի չափ մզկիթ կան քաղաքիս մեջ , յորս ամենէն գեղեցիկ եւ երեսելիներն են Այա Սոֆիա՝ որ երբեմն եկեղեցի էր , եւ Սուլդան Ահմետի մզկիթը : — Կան նաեւ հոյակապ թագաւորական պալատներ եւ ուրիշ մեծակառուց շէնքեր : — Կոստանդնուպօլսոյ

տներն ըստ մեծի մասին փայտաշէն լինելով՝ մեծամեծ հրդեհներ շատ կպատահին մեջը . 1863-ին աշնան ժամանակները նաւահանգստին մօտ եղած կայսերական հին պալատն այրեցաւ, որ քաղաքիս մեծ եւ երեսելիներէն մէկն էր : Այս քաղաքիս մեջ եւ քովի արուարձաններն ու գիւղերը իբր 200,000 Հայք կրնակին, որով Կոստանդնուպօլիսն աշխարհիս ամենէն մեծ հայաբնակ քաղաքը կլինի . սոքա ունին բազմաթիւ եկեղեցիներ, տպարաններ, օրագիրներ, յիսունի ջափ դպրոցներ եւ ուսումնարաններ, մեծ հիւանդանոց, եւ ուրիշ ազգասիրական ձեռնարկութիւններ՝ մանաւանդ *յՅրբագիւղ*, *ի Խասգիւղ*, *ի Պաշատ*, *ի Սամարիա*, *ի Գոււնգափու*, յորում է եւ *Մայր Եկեղեցիէ*, եւ այլն . եւ 1861-ին Օսմանեան տերութենէն արտօնութիւն ընդունեցան՝ ազգային առանձին Սահմանադրութեամբ ազատօրէն կառավարուելու : Կ.-Պօլսոյ Պատրիարքը Տաճկաստանի Հայոց հայրապետաց մեջ ամենէն աւելի մեծ բեմ ունեցողն է . որովհետեւ իւր իշխանութիւնը կտարածուի բոլոր Օսմանեան ինքնակալութեան երկիրներուն վերայ, բաց ի Երուսաղէմէն, Սիսէն եւ Ադրամարէն՝ որ առանձին պատրիարք կամ կարուղիկոս ունին :

ԱԴՐԻԱՆՈՒՊՕԼԻՍ կամ ԷՏԻՐՆԷ (130,000 բն.) Մարիցա գետոյն վերայ, պարսպապատ, ունի եւ միջնաբերդ մի . Կոստանդնուպօլսէն յառաջ Օսմանեանց մայրաքաղաք էր, եւ այժմ Տաճկաստանի երկրորդ արօտանիստ եւ երեսելի քաղաքն է . ունի բազմաթիւ գեղեցիկ շէնքեր, յորս անուանի է Սուլդան Սէլիմի մզկիթն որ մահմետականաց

ամենէն գեղեցիկ տաճարն է աշխարհիս վերայ : Վաճառա-
կանութեան եւ ճարտարութեան մեջ շատ երեսելի է . նշա-
նաւոր են մանաւանդ *վարդի իւղն* եւ *կարմիր ներկերը* :
— Արո՞ւ Հայոց Առաջնորդի : — Անուանի է 1829-ին հաշ-
տութեամբն Ռուսաց եւ Տաճկաց մեջ :

ՍԵԼԱՆԻԿ կամ ՍԱԼՈՆԻԿ (Թեսաղոնիկէ) (80,000 բն.)
համանուն խորշին վերայ հին Մակեդոնիոյ երկրին մեջ ,
Եւրոպական Տաճկաստանի երկրորդ վաճառաշահ նաւա-
հանգիստը . ճարտարութիւնն եւս քառական ծաղկեալ է :
Բնակչաց մեծագոյն մասն Հրեայք են , եւ ունին երեսելի
վարժարան մի :

ԿԷԼԻՊՕԼՈՒ կամ ԿԱԼԻՓՈԼԻ (20,000 բն.) Դարդանեան
նեղուցին հիւսիսակողմն , Եւրոպայի եւ Ասիոյ ծովեզերքն
ամուր բերդ ունի , եւ գինուորական նաւահանգիստ է :

ՖԻԼԻՊԷ կամ ՓԻԼԻՊՊՈՒՊՕԼԻՍ (45,000 բն.) Մարիցայի
քով , վաճառաշահ եւ շատ ճարտար քաղաք . քովերէն
ազնիւ գինի կելնէ :

ՍԵԼԻՄՆԻԱ կամ ԻՍԼԷՄԵԷ (24,000 բն.) տօնավաճառն
անուանի է : Մօտերն է *Տեմիր գափուշ* որ Պալզան լե-
րանց գլխաւոր պահակներէն մեկն է :

ՌՈՏՈՍԹՈՅ կամ ԹԷՐՅՈՒՐ ՏԱՂԻ , ԹԷՔԻՐՏԱՂ (30,000 բն.)
Մարմարայի վերայ վաճառաշահ նաւահանգիստ :

ՏԻՄԵՔՈՒՔԱ (16,000 բն.) Մարիցայի վերայ միջնաբերդ
ունի , ուր բնակեցաւ Կարոլոս ԺԲ : Անուանի ուխտատեղի
է մեր ազգին քաղաքիս մօտերն եղած Սուրբ Գեորգայ
վանքը :

ՍԵՐԷՍ (30,000 քն.) Մակեդոնիոյ երկիրը՝ զուարճալի եւ քարերեր դաշտի մեջ, ճարտար քաղաք, եւ բամբակի մեծ վաճառականութիւն ունի : — Սորա հարաւակողմն է Բաղկիսեան բերակղզին, որոյ ծայրն է ԱԹՈՍ (*Այնօրօզ*) լեռը :

ԵՆԻՃԷ Վարտար, գիւղաքաղաք, ազնիւ ծխախոտովն անուանի է : Սորա մօտ են Պելայի աւերակները, ուր ծնաւ Մեծն Աղեքսանդր :

ԻԻՍԿԻԻՊ (18,000 քն.) վաճառաշահ քաղաք, անուանի է կաշին :

Բ. ՊՈՒԼՂԱՐԻԱ (4,000,000 քն.)

ՍՈՖԻԱ (50,000 քն.) ճարտար եւ վաճառաշահ քաղաք, քովերը հանքային տաք ջրեր կան :

ՎԻՏԻՆ (26,000 քն.) Դանուբի վերայ շատ ամուր բերդաքաղաք :

ՆԻԿՈՊՈԼԻՍ կամ ՆԻՔՈՓՈԼԻ (15,000 քն.) Դանուբի վերայ . այս տեղ մեծ յաղթութիւն արին Օսմանեանք Մաճառաց վերայ 1395-ին :

ՇՈՒՄԵԻ կամ ՇՈՒՄԼԱ (35,000 քն.) Պալզան լեռանց ստորոտը, շատ ամուր բերդաքաղաք :

ՎԱՌՆԱ (25,000 քն.) ամուր քաղաք, եւ Սեաւ ծովու վերայ Օսմանցւոց առաջին վաճառաշահ նաւահանգիստը :

ՍԻԼԻՍՏՐԷ (25,000 քն.) Դանուբի վերայ շատ ամուր քաղաք, ուր շատ անգամ պատերազմ ունեցան Ռուսք Օսմանցւոց հետ, եւ վերջին անգամն եղաւ 1854-ին :

Գաշնարճրդ, Սիլիստրի հարաակողմն, ուր եղաւ
1774-ին դաշնադրութիւնն Ռուսաց եւ Օսմանեանց մեջ :

ՌՈՒՍՃՈՒԳ (30,000 բն.) եւ ՇԻՇԹՈՎ (20,000 բն.) Դա-
նուրի վերայ վաճառաշահ քաղաքներ :

Գ. ԹԵՍԱՂԻԱ (820,000 բն.)

ԱՐԻՍՍԱ կամ ԵՆԻՇԷՀԻՐ (30,000 բն.) գաւառիս գլխա-
ւոր քաղաքն է, վաճառաշահ :

ԶԱԹԱԼՃԱ կամ ՖԱՐՍԱ (Փարսալիա) փոքրիկ քաղաք .
սորա մօտ եղաւ փարսալեան մեծ պատերազմն, յորում
Պոմպէոս Կեսարէն յաղթուեցաւ :

Թեսաղիոյ մեջ է հռչակաւոր *Ողիւնցոս* լեռը՝ բնակա-
րան ղից, եւ նորա մօտ է *Տեմպէա*՝ Մուսայից զբախտը :

Գ. ԱԼՊԱՆԻԱ (680,000 բն.)

ԵԱՆԻՆԱ կամ ԵԱՆԵԱ (40,000 բն.) համանուն լճին վե-
րայ, ամուր եւ վաճառաշահ քաղաք . աստի էր հռչակա-
ւոր Տեփեռեյէնի Ալի փաշան որ զօրացուց եւ ծաղկեցուց
քաղաքս այս դարուս սկիզբները :

ՕԻՐԻՏԱ, համանուն լճին վերայ, հայրենիք Յուստի-
նիանոս կայսեր :

ՇԻՈՏԻՐԱ կամ ՍԿԻՏԱՐ (20,000 բն.) համանուն լճին քով,
ամուր եւ վաճառաշահ :

ՏՈՒՐԱՅՅՈՅ կամ ՏԻՐԱՃ (10,000 բն.) ամուր քաղաք եւ
բանուկ նաւահանգիստ Աղբիականի վերայ :

ԶԵԹԻՆԵԷ կամ ԶԵՌՆԱԿՈՐԱ, գլխաւոր քաղաք *Մանրե-
նեկրոյ* կամ *Գարատաղ* կոչուած ինքնիշխան փոքրիկ եր-
կրին, անուանի եղաւ քաղաքս 1862-ին պատերազմովը :

Ե. ՊՈՍՆԻԱ (1,400,000 քն.)

ՊՈՍՆԱ ՍԷՐԱՅ կամ ՍԷՐԱՅԷՎՈՅ (60,000 քն.) ամուր
բերդաքաղաք եւ վաճառաշահ :

ԹՐԱՒՆԻՔ (10,000 քն.) ԶՎՈՌՆԻՔ (12,000 քն.), ՊԱՆԵԱ-
ԼՈՒԳԱ (15,000 քն.), փոքր՝ բայց ամուր քաղաքներ :

ՄՈՍԹԱՐ, (13,000 քն.) *Հերսեկ* կամ *Հերսեկովինա* գա-
ւառին գլխաւոր քաղաքն է, եւ անուանի է Հռոմայեցւոցմէ
մնացած մեծակառոյց կամրջի մի ակերակներովը՝ *Նարեկե-
րա* գետակի վերայ :

Զ. ԿՂԶԻՔ (600,000 քն.)

ՔԱՆՏԻԱ կամ ԿԻՐԻՏ (հին ժամանակները Կրետե), որ
արեւելքէն արեւմուտք լերանց պար մի ունի, առատու-
թեամբ կրուսցընէ ամեն տեսակ պտուղ եւ բոյս՝ մանա-
ւանդ ձիթենի : Այս կղզին երկար ժամանակ Վենետկեցւոց
ձեռքն էր, 1669-ին Օսմանցիք առին զայն նոցա ձեռքէն :
Գլխաւոր քաղաքն է ՔԱՆՏԻԱ (15,000 քն.) որ ունի փոք-
րիկ նաւահանգիստ. երեւելի եղաւ քաղաքս քսան տա-
րի պատերազմի եւ 29 ամիս Օսմանեանց սաստիկ պաշար-
մանը դիմանալովը : ՔԱՆԷ (10,000 քն.) կղզւոյս ամենէն
լաւ նաւահանգիստն է :

ԹԱՍՈՍ կամ ԹԱՇՕՁ, Մակեդոնիոյ ծովեզերքին մօտ,
հին ժամանակները գինին անուանի էր :

ՍԱՄՈԹՐԱԿԷ կամ ՍԷՄԷՆՏՐԷՔ, որ քանի մի գիւղեր ունի
եւ բազմաթիւ աւերակներ :

ԻՄՊՐՈՅ, բարերեր կղզի :

ԼԵՄՆՈՍ կամ ՍՏԱԼԻՄԷՆԷ կամ ԻԼԻՄՆԻ, նոյնպէս բարե-
բերութեամբն անուանի :

ԴՅՆՈՒԲԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻԻՆՔ.

Սերուխա, Վալաքիա եւ Մոլտաւիա, որ Դանու-
բեան իշխանութիւնք կկոչուին, ինքնիշխան կառավարու-
թիւն ունին, միայն թէ հարկատու են Օսմանեանց, եւ
1856-էն ի վեր Եւրոպայի տերութեանց պաշտպանութեանը
տակ են : Մոլտաւիոյ եւ Վալաքիոյ մէջ Օսմանեանք ա-
մենեւին զօրք չունին . իսկ Սերուիոյ մէջ Պելկրատի միջ-
նաբերը կայ : Սերուիան ժառանգական իշխանութիւն է
այժմ . 1858-ին Փարիզու մէջ պատգամաւորաց ժողով մի
գումարեցաւ, յորում Մոլտաւիոյ եւ Վալաքիոյ միացեալ
իշխանութեանց համար կեդրոնական խորհրդարան հաս-
տատուեցաւ, եւ իւրաքանչիւր իշխանութեան համար
օրէնսդիր ժողով մի, որ մեկ մեկ իշխան պիտի ընտրէին
մինչ ի մահ տերութիւնը կառավարելու . 1859-ին երկու
ժողովներն եւս նոյն անձն իշխան ընտրեցին, որ 1862-ին
արո՞ւր միայն Պուքրէշ ղնելով՝ երկու իշխանութիւնքը
բոլորովին միացուց :

Այս իշխանութեանց երկիրը շատ բարերեր է, ու առատութեամբ կրօնացրնէ ամեն հասարակ պտուղներն եւ տունկերը : Մոլտաւիան եւ Վալաքիան մեծամեծ անտառներ ունին լաւ փայտերու, եւ բազմաթիւ ընտանի կենդանիներ :

ԳԼԽԱԻՈՐ ՔԱՂԱՔԻ.

ՍԵՐՈՒԻԱ (1,000,000 բն.)

ՊԵԼԿՐԱՏ (30,000 բն.) Դանուբ եւ Սաւա գետերու խառնուած տեղը, Աստրիոյ սահմանազուխը, Տաճկաստանի առաջին ամուր բերդաքաղաքն է, եւ շատ վաճառաշահ : Մորա միջնաբերդն Օսմանցւոց ձեռքն է :

ՍԵՄԷՆՏՐԻԱ (15,000 բն.) Դանուբ եւ Մորաւա գետերու խառնուած տեղը, ամուր բերդաքաղաք :

ՔՐԱԿՈՒՅԷՎԱՅ, իշխանանիստ քաղաքն է :

ՎԱԼԱՔԻԱ (2,500,000 բն.)

ՊՈՒՔՐԷՇ (140,000 բն.) այժմ միացեալ իշխանութեանց մայրաքաղաքն է, մեծ, վաճառաշահ, ծաղկեալ, եւ հետզհետեւ գեղեցկանալու վերայ է : — Անուանի է 1812-ին հաշտութեամբն, որով Պեսարապիան Ռուսաց տրուեցաւ :

ԻՊՐԱՅԻԼ (15,000 բն.) Դանուբի վերայ ամուր բերդ եւ նաւահանգիստ :

ՀՈՒՐՀՈՎ, կամ ԵՐԿԷՅ (10,000 ըն.) Դանուբի վերայ
Ռուսճուգի դիմաց, նաւահանգիստ :

ՄՈՂՏԱԻԻԱ (1,500,000 ըն.)

ԵԱՇ (70,000 ըն.) մինչեւ 1862 իշխանութեանս մայրա-
քաղաքն էր, մեծ եւ վաճառաշահ . բայց այժմ ընկնելու
վերայ է :

ՊԹԹՈՒՇԱՆ (28,000 ըն.) վաճառաշահ քաղաք եւ հայա-
րնակ . օրե օր ծաղկելու հետ է :

ԿԱԼԱՅ (26,000 ըն.) Դանուբի վերայ շատ բանուկ նա-
ւահանգիստ ունի :

ԻՍՄԱՅԻԼ (25,000 ըն.) Դանուբի մեկ ճիւղին վերայ ա-
մուր բերդ . մինչեւ 1856 Ռուսաց ձեռքն էր :

ՌՈՄԱՆ (10,000 ըն.) վաճառաշահ քաղաք :

ՊԱՔՈՎ (9,000 ըն.) դիրքը գուարճալի . Հայք ունին
քաղաքիս մեջ նորաշէն գեղեցիկ եկեղեցի :

Օրնա, բոլոր աշխարհիս մեծ աղահանքերէն մեկն է :

ԿԱԼՈՒԱԾՔ ՕՍՄԱՆԵԱՆՅ ԱՐՏԱՔՈՅ ԵՒՐՈՊԱՅ .

Ասիոյ մեջ, Փոքր Ասիա, Եփրատ եւ Տիգրիս գետերու
եզերքն եղած Երկիրները, Ասորիք, եւ Արարիոյ քանի
մի տերութիւնքը :

Ափրիկէի մեջ, Եգիպտոսի փոխարքայութիւնն եւ նորա
իշխանութեան տակն եղած Երկիրները (Նուպիա, Բորսո-

Քան եւ Տարփուր), Թարասպրուսի փաշայութիւնն եւ Թու-
նուզի պէյութիւնը:



Յ Ո Ւ Ն Ա Ս Տ Ա Ն .

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ . — Հին ժամանակը Յունաս-
տանի մեջ կրնակէին *Հեղեկք* կամ *Յոյնք*, որ այլ եւ այլ
մանր տերութիւններ բաժանուած էին . սոքա անուանի
եղան իւրեանց քաջութեամբն եւ հայրենասիրութեամբը,
եւ մանաւանդ զիտութեանց, արուեստից եւ գեղարուես-
տից մեջ արած մեծամեծ եւ գարմանալի յառաջադիմու-
թեամբը: Բայց երբոր օտար ազգաց յաղթելով գեղձան
եւ հարստացան, անմիարանութեան հոգին մտաւ մեջերը,
եւ Մակեդոնացիք կարողացան շատ անգամ տիրել Յու-
նաստանի, մինչեւ որ Հռոմայեցիք Քրիստոսէ 150 տարի
յառաջ իւրեանց տերութեան գաւառներէն մեկն արին
Յունաստանը:

Երբոր 395-ին Հռոմայ ինքնակալութիւնն երկու բաժա-
նուեցաւ, արեւելեան մասն անգգալի կերպով Յունաց
ձեռքն անցաւ, եւ կոչուեցաւ *Յունաց* կամ *Հռոմոնց*
կայսերութիւն: Օսմանցիք 1453-ին կործանեցին այն կայ-
սերութիւնն, եւ քանի մի տարի յետոյ Յունաստանի տի-
րեցին . եւ թեպէտ ժԵ դարուն վերջերն առին զայն Վե-
նետկեցիք Օսմանեանց ձեռքէն, բայց երեսուն տարիէն
յետոյ հարկադրեցան ետ տալ:

Յոյնք Տաճկաց տուած նեղութեանցը ջղիմանալով՝ 1821-ին ապստամբեցան, եւ հինգ վեց տարի Օսմանեանց անհամար զօրացը սաստկութեամբ դեմ դնելէն յետոյ, Ռուսք, Գաղղիացիք եւ Անգղիացիք Նաւարինի քով Օսմանեանց նաւատորմիդը բոլորովին խորտակեցին 1827-ին, եւ այնուհետեւ եւս Ռուսք Եւրոպայի կողմէն մինչեւ Արիանուպօլիս հասնելով, Ասիոյ կողմէն ալ Հայաստանէն յառաջ երթալով, Օսմանեանք նեղը մտած հաշտութիւն խնդրեցին 1830-ին, եւ Յունաստանի ինքնիշխանութիւնը ճանչցան: Յունաց թագաւոր դրուեցաւ 1833-ին Պաւերայի թագաւորին որդին Ռթոն, որ 1862-ին արուեն ձգուեցաւ, եւ 1863-ին տեղն ընտրուեցաւ Տանիմարքայի այժմու թագաւորին որդին Գեորգ Ա: Այս առթով Յունիական կրղզիք, որ 1815-էն ի վեր հասարակապետական վարչութիւն ունէին Անգղիոյ պաշտպանութեան տակ, 1864-ին սկիզբները Յունաստանի թագաւորութեան հետ միացան:

Յունաստանի սահմանն է հիւսիսէն Տաճկաստան, արեւելքէն Արշիպեղազոս, հարաւէն Միջերկրական ծով, արեւմտքէն Յունիական ծով:

Տարածութիւնն է 424 բիւրմերը քառակուսի:

Յունաստանի երկրին ծովեզերքը բազմաթիւ ծոցեր, խորշեր եւ թերակղզիներ կան. իսկ ցամաքի ներսերն ընդհանրապէս լեռնոտ է. հիւսիսային կողմէն *Տիւարլուս* եւ *Պալգան* լեռները կերկրննան մինչեւ Մոռայի ամեն կողմերը, եւ ընդհանուր անուամբ *Հելլենական սլար* լեռանց կկոչուին. սոցա բարձրագոյն ծայրերն են *Կուխուս*

(2,512 մերր) եւ *Լիաքուրա*՝ որ հին անուամբ Պատնաս կկոչուի (2,460 մերր) : Կերեւի թէ Յունաստանի կղզիներն յառաջ ցամաքին հետ միացած էին, եւ յետոյ հրաբուխներով ծովուն տակն անցնելով՝ միայն բարձրագոյն լեռանց գլուխները ջրէն դուրս մնացել են :

Յունաստանը բազմաթիւ գետեր ունի որ երկայն ընթացք չունին եւ ընդհանրապէս նաւարկելի չեն : Իսկ լճերուն մեջ ամենէն մեծն եւ երեսելին է *Թուխաշիս* (Կոպայիս) :

Հողը շատ բարեբեր է՝ մանաւանդ կղզեաց մեջ :

Օղն առողջ, զուարճալի եւ բարեխառն . միայն քանի մի ճախճախուտ տեղերը առողջ չէ :

Քլիսաւոր բերքն է հարաւային Իտալիոյ եւ Սիկիլիոյ ամեն բոյսերը . զլիսաւորապէս բամբակ, մետաքս, մեղր, մում, աղ, սպունգ եւ այլն : — Հանքերու կողմանէ հարուստ է Յունաստանն, բայց նայուած չէին մինչեւ ցայժմ . անուանի է Պարոսի ազնիւ մարմարիոնն : Իսկ ընտանի կենդանեաց մեջ ամենէն շատերն են ոչխար եւ այծ :

Բնակիչն է 4,400,000 . լեզուն հոռմերէն, որ հին յունարենի աշխարհարան է . կրօնքն է յունադաւան, միայն Յոնիական կղզեաց բնակիչքն (246,000 հոգի) հռոմեական են :

Արուեստից, զիտութեանց եւ գեղարուեստից կողմանէ հին ժամանակներն Յունաստան մայր եւ դայեակ եղաբոլոր աշխարհի . Օսմանեանց տիրապետութեան ժամանակ բոլորովին ընկաւ : Այժմ օրէ օր կժաղկին դարձեալ


գիտութիւնք, ճարտարութիւնն եւ մանաւանդ վաճառա-
կանութիւնը :

Տէրութեան կառավարութիւնն է սահմանադրական միա-
պետութիւն ժողովրդական :

Յունաստանն ըստ քաղաքական վարչութեան 10 գա-
ւառ կրածանուի . իսկ աշխարհագրորէն երեք մասն կրա-
ծանենք . *հիւսիսային Յունաստան, Մոտա եւ Կղզիք :*

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՅՈՒՆԱՍՏԱՆ .

ԱԹԷՆՔ (45,000 բն.) տէրութեան մայրաքաղաքը, ճին
ժամանակն հզօր, բազմամարդ, եւ աշխարհիս առաջին
ժողկեայ քաղաքն էր . Յամանեանց ձեռքն եղած ժամա-
նակ շատ ընկած էր, այժմ օրե օր կժողկի : Հին շէնքերու



Աթէնք .

մնացորդաց մեջ երեսելիներն են Ակրոպոլիս կամ միջնաբերդը, Պարթենոն կամ տաճար Աթենասայ, Թեսեոսի տաճարն, եւ այլն : Աթենքի նաւահանգիստն է Պիրեոն : Ուսումնարանաց մեջ նշանաւորն է համալսարանն, յորում եւրոպայի եւ Ասիոյ Տաճկաստանէն շատ յոյն պատանիք կժողովին :

ԼԻԻԱՏԻԱ (7, 000 բն.) Կոպայիս լճին մօտ՝ հին Բեովտիոյ մեջ :

ԼԵՓԱՆԹՈՅ կամ ՆԱԻՊԱԿՏԷ (4,000 բն.) համանուն ծոցոյն վերայ ամուր նաւահանգիստ. այս քաղաքիս մօտ եւրոպացիք ջարաջար յաղբեցին Օսմանեանց 1571-ին :

ՄԻՍՈԼՈՒՆԿԻ (5,000 բն.) այս տեղ մեռաւ Լորտ Պայրըն անգղիացի մեծանուն բանաստեղծն 1824-ին : Անուանի եղաւ քաղաքս 1825-ին եւ 1826-ին Օսմանեանց սաստկութեամբ դէմ դնելովը :

ԹԻԻԱ (3,000 բն.) հին Թերեիս տեղն աննշան քաղաք :

ՋԷՅԹՈՒՆ (4,000 բն.) փոքրիկ քաղաք. սորա մօտ է հռչակաւոր Թերմոպիլէի կիրճը :

Մ Ո Ռ Ա.

ՆԱԻՓԼԻԱ կամ ԱՆԱՊՕԼՈՒ (8,000 բն.) համանուն ծոցոյն վերայ ամուր քաղաք եւ նաւահանգիստ :

ՓԱԹՐԱՍ կամ ՊԱՏՐԱՍ (10,000 բն.) համանուն ծոցոյն վերայ ամուր քաղաք եւ վաճառաշահ նաւահանգիստ :

ԹՐԻՓՈԼԻՑԱ (9,000 բն.) բերակղզւոյն մեջտեղերն հին

Մանտիկեայի տեղն , Օսմանեանց ժամանակ Մոռայի մայրաքաղաքն էր :

ԿՈՐՈՆ (6,000 բն.) համանուն ծոցոյն վերայ ամուր քաղաք եւ նաւահանգիստ :

ԿՈՐՆԹՈՍ (4,000 բն.) համանուն պարանոցի մօտ , երբեմն մեծ , գեղեցիկ եւ երեսելի քաղաք . այժմ բոլորովին ընկած : Հին շէնքերու մեծակառուցց մնացորդացը մեջ նըշանաւոր են միջնաբերդն (Ակրոկորնթոս) եւ ամփիթէատրոնը :

ՄԻՍԻԹՐԱ (4,000 բն.) հին Սպարտայի մօտ , փոքրիկ քաղաք :

ՄԱՆԷՄՊԱԶԻԱ կամ *Նաւիլիա Մարուազիոյ* , փոքրիկ կղզիի մի մեջ որ կամրջով ցամաքի հետ միացած է , քովերը շատ ազնիւ գինի ունի :

Մոտոն կամ *Մերոն* , Կորոնի արեւմտակողմը՝ նաւահանգիստ : Այս տեղ նախ հաստատեր էր Մխիթար վարդապետն իւր վանքը :

ՆԱԻԱՐԻՆ (5,000 բն.) Մոտոնի հիւսիսակողմը , լաւ նաւահանգիստ : Այս տեղ 1827-ին Ռուսք , Գաղղիացիք եւ Անգղիացիք Օսմանեանց նաւատորմիդն խորտակեցին :

ԿՂԶԻՔ.

ՆԵԿՐՈՓՈՆԹԷ կամ ԵԻԲԷԱ կամ ԷՅՐԻՊՈԶ , երկայնաձեւ եւ բարերեր կղզի , հիւսիսային Յունաստանէն նեղ անցքով մի զատուած է , որոյ ամենէն նեղ տեղն այժմ կա-

մութջ մի կայ ձգուած , որ կղզին ցամաքի հետ կմիացը-
նէ : — Գլխաւոր քաղաքն է *Նեկրոփոնէ* :

Նեկրոփոնի հիւսիսակողմը քանի մի մանր կղզիք
կան , որոց գլխաւորն է *Սքիրոյ* :

Արեւքի ծոցոյն մէջ , *Եգիւս* եւ *Քոչուրի* , որ հին *Սա-
դամիւս* կղզին է , ուր նաւական պատերազմով Թեմիս-
տոկոկս յաղթեց Քսերքսեսի 480-ին Քրիստոսէ յառաջ :

Արեւքի եւ Նաւփլիոյ ծոցերու մէջ՝ *Փորոս* , որ տերու-
քեան զինուորական նաւահանգիստն է :

ՀԻՏՐԱ կամ ՉԱՄԼԸՃԱ , բնակիչքն Արշիպեղագոսի ամե-
նէն աներկիւղ նաւավարներն են . մէջը համանուն քաղա-
քը կայ 18,000 բնակչօք եւ լաւ նաւահանգստով , որ Օսմա-
նեանց դեմ եղած պատերազմին ժամանակ երեւելի եղաւ :

Կիւկրադայց կամ *Բորոյ կղզեաց* մէջ նշանաւորներն են
Թիւնէ եւ *Միքոնի* , *Սիրա* կամ *Շիրա*՝ ծաղկեալ կղզի . սո-
րա համանուն քաղաքը (15,000 բն.) շատ լաւ նաւահան-
գիստ ունի եւ Յունաստանի ամենէն վաճառաշահ քաղա-
քն է . *Նաքսոս*՝ որ Կիւկրադայց մէջ ամենէն մեծն է ,
առատ զինի կրերէ . *Պարոս*՝ մարմարիոնովն երեւելի , եւ
Անտիպարոս՝ իւր այրովը հռչակաւոր . *Սանթորիւն*՝ որ
հին ժամանակ *Թերա* կկոչուեր , եւ *Միլոյ* . սոքա հրաբը-
խային կղզիներ են :

ՅՈՆԻԱԿԱՆ ԿՂԶԻՔ . *Քորֆու* , համանուն գլխաւոր քա-
ղաքով՝ գեղեցիկ նաւահանգիստ ունի , եւ մինչեւ 1864
ամուր քաղաք էր եւ հասարակապետութեան մայրաքա-
ղաքն . *Փաքչա* կամ *Փաքսոյ*՝ որ եօթն կղզեաց ամե-

նեն փոքրն է . *Սակրա Մարտա*՝ որ հին ժամանակ *Հեշ-
կադա* կկոչուէր . *Թեաքի* կամ *Իրակէ*՝ հայրենիք Ողի-
սեասի . *Քեփաշունիա*՝ որ Յոնիական կղզեաց ամենէն մե-
ծըն է . *Չակրա*՝ որ կղզեացս ամենէն բարերերն է , ունի
համանուն մայրաքաղաք , որ հասարակապետութեանս ա-
մենէն մեծ եւ գեղեցիկ քաղաքն էր . *Չերիկոյ*՝ որ հին
ժամանակ *Կիբերա* կկոչուէր , Մոռայի հարաւակողմը
կրնկնի , լեռնոտ եւ անբեր կղզի :



ԵՐԿՐՈՐԳ ՄԱՍՆ ԱՇԽԱՐՀԻ.

Ա Ս Ի Ա.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻԲ.

Ասիան աշխարհիս հինգ մասերուն ամենեն ընդարձակըն ու րազմամարդն է, եւ հին ժամանակն ամենեն ծաղկեալ ու վաճառաշահն է. հզօր պետութիւններ ունեցողն էր. Ասիոյ մեջ ստեղծուեցաւ մարդկութեան նախահայրն Ադամ, եւ դարձեալ Ասիան մարդկային ազգին երկրորդ խանձարուրքն եղաւ ջրհեղեղէն յետոյ: Բայց այժմ առաջին մեծութենէն ընկած է, ուսմանց եւ զիտութեանց մեջ ետ մնացած է, եւ միայն վաճառականութիւնը միշտ ծաղկած:

Ասիան կտարածուի հիւսիսային լայնութեան 1 աստիճանէն մինչեւ 76° , եւ արեւելեան երկայնութեան 23 աստիճանէն մինչեւ արեւմտեան երկայնութեան 172° :

Ասիոյ սահմաններն են հիւսիսէն Արշալին Սառուցեալ ովկիանոս, արեւելքէն Մեծ ովկիանոս կամ Խաղաղական ծով, հարաւէն Հնդկաց ովկիանոս եւ Չինաց ծով, արեւմտքէն Կարմիր ծով եւ Սիւեզի պարանոց՝ որովք կգատուի Ափրիկէն, եւ Միջերկրական ծով, Արշիպեղազոս, Մարմարա, Սեաւ ծով, Կովկաս լեռինք, Կասպից ծով, Ռարալ գետ, Ռարալ լեռինք եւ Քարա գետն՝ որովք կգատուի Եւրոպայէն :

Տարածութիւնն է 415,570 բիւրմերը քառակուսի, Եւրոպայի գրեթէ չորս եւ կես մեծութեանը չափ :

Ասիան Եւրոպայի նման բազմաբիւ ծովեր եւ ծոցեր ունի . հիւսիսակողմն ընդարձակածաւալ դաշտ մի կտարածուի որ Ռարալ լեռներով Եւրոպայի դաշտերէն կգատուի . մեջտեղերը՝ արեւելքէն արեւմուտք՝ լեռանց զօտիներ կան ձգուած, իսկ հարաւակողմն երեք մեծամեծ բերակղզիներով կաւարտի :

Ասիան տասներեւեկ գլխաւոր աշխարհ կամ երկիր կը բաժանի, որոց մէկն հիւսիսակողմն է, *Սիպիը* կամ *Ասիական Ռուսիա* . երկուսն արեւմտակողմն, *Ասիական Տանկաստան* եւ *Արաբիա* . չորսը մեջտեղերը, *Պարսկաստան*, *Թուրքաստան*, *Պէրուչիաստան* եւ *Աֆղանիստան* . երկուսն արեւելակողմն, *Չին* եւ *Ճապոն* . եւ երկուսն հարաւակողմն, *Հնդկաստան* եւ *Հնդկաչին* :

ԾՈՎ.Ք. — Ասիան տասներեւեք գլխաւոր ծովեր ունի, որոց 4-ը մեծ են եւ 14-ը փոքրագոյն : Մեծերն են . *Արշալին Սառուցեալ ովկիանոս*, *Մեծ ովկիանոս*, *Հնդ-*

կաց ովկիանոս եւ Միջերկրական ծով : Փոքրներն են .
Քարայի ծով եւ Սիպիւրի ծով , որ Սառուցեալ ովկիանոսէն
կձեանան . Պերինկայ ծով , Օխորսքի ծով , Ճափոնի
ծով , Դեղին կամ Քորէայի ծով , Կայոյտ կամ Արեւե-
ղեան ծով եւ Չինաց ծով ' որ Մեծ ովկիանոսէն կձեա-
նան . Պենկայայի ծով , Արարիոյ ծով կամ Էօմէնի ծոց ,
եւ Կարմիր ծով կամ Արարիոյ ծոց , որ Հնդկաց ովկիա-
նոսէն կձեանան . Արշիպեղազոս , Մարմարա եւ Սեաւ
ծով ' որ Միջերկրականէն կձեանան :

ՄՈՅՔ . — Ասիան տասը գլխաւոր ծոց ունի , որ են .
Օպի ' Սառուցեալ ովկիանոսէն ձեացած . Անատիոյ ' Պե-
րինկայ ծովէն ձեացած . Փենժիկա ' Օխորսքի ծովէն ձե-
ացած . Լիւսո-րունկ եւ Փելչիշի ' Դեղին ծովէն ձեացած .
Թունքիկ եւ Սիւալ ' Չինաց ծովէն ձեացած . Մանասար '
Հնդկաստանի հարաւային ծայրը . Պարսկային ծոց ' Ա-
րարիոյ ծովէն ձեացած . Ատենի ծոց ' Հնդկաց ծովէն
ձեացած :

ՆԵՂՈՒՑՔ . — Ասիան տասնեամեկ գլխաւոր նեղուց ու-
նի , որ են . Վուսիոյ կամ Կոստանդնուպօլսոյ նեղուց '
որ Սեաւ ծովը Մարմարայի հետ կմիացրնէ . Դարդանեան
նեղուց կամ Չանազգաշէսի ' Մարմարան Արշիպեղազոսի
հետ կմիացրնէ . Պապիւշ-մանտեպ ' որով Կարմիր ծովն
Հնդկաց ովկիանոսի հետ կմիանայ , Արարիոյ հարաւակող-
մը . Հիւրմիւզի նեղուց ' որով Պարսկային ծոցն Արարիոյ
ծովուն հետ կմիանայ . Փաշք ' որ Մանասարի ծոցը Պեն-
կայայի ծովուն հետ կմիացրնէ . Մարաքքայի նեղուց ' ո-

րով Հնդկաց ծովը Մեծ ովկիանոսին հետ կմիանայ . *Ֆորմոզայի* ջրանցքն կամ *Ֆորքալան*՝ Ֆորեայի ծովը Չինաց ծովուն հետ կմիացրնէ . *Ֆորեայի* նեղուց՝ որ համանուն ծովը ճափոնի ծովուն հետ կմիացրնէ . *Թարարատանի* անցքն կամ *Թարաքայի* նեղուցն եւ *Լափերուզի* նեղուցըն՝ որ ճափոնի ծովն Օխոքսքի ծովուն հետ կմիացրնեն . եւ *Պերիկլայ* նեղուցն որ համանուն ծովը Սառուցեայ ովկիանոսի հետ կմիացրնէ :

ԿՂԶԻՔ . — Ասիոյ գլխաւոր կղզիներն եւ կղզեաց խումբերն են . *Նոր Սիպիւրի* արշիպելագոսք՝ Սառուցեայ ովկիանոսի մէջ . *Ֆորքիլեան* կղզիք՝ Օխոքսքի ծովուն եւ Մեծ ովկիանոսի մէջտեղերը . *Սախալեան* կամ *Թարաքայ*՝ որ համանուն նեղուցով ցամաքէն զատուած է . *Ճափոնի* կղզիք՝ համանուն ծովուն եւ Մեծ ովկիանոսի մէջտեղ . *Լիււ-քիււ* կղզիք՝ Մեծ ովկիանոսի մէջ ճափոնի հարաւակողմը . *Ֆորմոզա* , *Մաքաս* , *Հոնկըսկ* եւ *Հայնան*՝ Չինու ծովուն մէջ . *Անտաման* եւ *Նիքոպար*՝ Պենկալայի ծովուն մէջ . *Սէյլան* , *Մալտիվեանք* եւ *Լաքլետիվեանք*՝ Հնդկաց ովկիանոսի մէջ . *Պանդէյն*՝ Պարսկային ծոցոյն մէջ . *Կիպրոս* եւ *Հոտոս*՝ Միջերկրականի մէջ . արեւելեան *Սպորադք*՝ Արշիպելագոսի մէջ . *Մարմարա*՝ համանուն ծովուն մէջ :

ԹԵՐԱԿՂԶԻՔ . — Ասիան ուրը բերակղզի ունի , որոց չորսը մեծ եւ չորսը փոքր : Զորս մեծերն են . *Փոքր Ասիա* կամ *Անատոլու*՝ Ասիական Տաճկաստանի արեւմտակողմը , *Արարիա* , *Հնդկաստան* եւ *Հնդկաչին* : Փոքրնե-

ըրև են *Քամչաքքա*՝ Սիպիւրի արեւելակողմը, *Քորեա*՝
Զինու արեւելակողմը, *Մաշաքքա*՝ Հնդկաչինու հարաւայ-
ին ծայրն, եւ *Քիւճրաք*՝ Հնդկաստանի արեւմտակողմը :
ՀՐՈՒԱՆԳԱՆՔ. — Ասիոյ գլխաւոր հրուանդաններն են .
Պասիւշմանտեպ եւ *Ռասէշկաք*՝ Արարիոյ հարաւակողմը .
Քոմորիւն՝ Հնդկաստանի հարաւակողմը . *Ռումանիա*՝
Հնդկաչինու հարաւակողմը . *Նիկրէ* կամ *Նիկրայիլ*՝ Հրնդ-
կաչինու արեւմտակողմն . *Գրուխ Արեւելեան* եւ *Գրուխ*
Հիւսիսային կամ *Սեւերոսիւսարուչնոյ*՝ Սիպիւրի եզերքը .
Պասպա - սյունուն՝ Ասիական Տաճկաստանի արեւմտա-
կողմը :

ԼԵՐԻՆՔ. — Ասիան տասնեւինն լերանց զօտի ունի ,
որ են . *Ուրալ* եւ *Կովկաս*՝ որ Ասիան եւրոպայէն կրաժա-
նեն . *Ալքալ* եւ *Սրանալոյ*՝ Սիպիւրի եւ Զինու մեջտեղը .
Քիւնկիսան՝ Զինու արեւելակողմը . *Թիանշան* կամ *Երկ-*
նային Լերինք, եւ *Քուէնշուն*՝ Զինու արեւմտակողմը .
Հիւտուքուչ՝ Աֆղանիստանի , Թուրքաստանի , Զինու եւ
Հնդկաստանի մեջտեղերը . *Պոշուր* կամ *Պոշոր*՝ Զինու եւ
Թուրքաստանի մեջտեղ . *Յունկիլինկ*՝ Թուրքաստանի մեջ .
Հիմալայա՝ որ աշխարհիս ամենէն բարձր լեռներն են՝
Զինու եւ Հնդկաստանի մեջտեղ (*). *Կարդուաց* լերինք՝

(*) Հիմալայա կնշանակէ բնակութիւն ձեան : Սոցա մէջ , ըստ
նորադոյն տեղեկութեանց , Եւերեստ լերին բարձրութիւնն է
ծովու երեսէն 8,830 մեթր . յետոյ կուգան Քիչինճինկա որ 8,592

Հայաստանի մեջ . *Տորոս* եւ *Լիբանան*՝ Տաճկաստանի մեջ .
Էրարեո՝ Արարիոյ մեջտեղերը . *Էրուէնո*՝ Պարսկաստա-
նի մեջ . *Կար*՝ որ Հնդկաստանի արեւելեան եւ արեւմը-
տեան ծովեզերքը կտարածուին մինչեւ Քոմորին գլոխը .
Վիւտհիս՝ նոյնպէս Հնդկաստանի մեջ , արեւելքէն արեւ-
մուտք . *Մոկ*՝ Հնդկաչինոս մեջ :

Ասիոյ հռչակաւոր լեռներն են . *Մասիս* կամ *Արարատ*՝
Հայաստանի լեռանց մեջ . *Թարոր* եւ *Կարմեղոս*՝ Լիբա-
նանու պարին մեջ . *Սիւս* եւ *Քորեք*՝ Արարիոյ հիւսիսայ-
ին արեւմտակողմն , եւ *Սարե Ադամայ*՝ Սեյլան կղզւոյն
մեջ :

ՀՐԱՅՈՒԹՅՈՒՆ . — Ասիոյ մեջ շատ հրաբուխներ կգտնուին ,
գլխաւորապէս Չինոս Թիանշան լեռանց մեջ , ճափոնի
կղզիները , Քուրիլեան կղզիները , Քամչարքա , եւս եւ Հայ-
աստանի մեջ . բայց նշանաւոր չեն եւ մեծ մասը մարած են :

ԼԻՃՅՈՒՆ . — Ասիոյ գլխաւոր լճերն են . *Մեոկալ ծով* կամ
Ասիարտեան՝ Հրեաստանի մեջ . *Վանայ ծով* , *Աււսեայ*
ծովակ եւ *Որմեայ լիճ*՝ Հայաստանի մեջ . *Կասպից ծով*՝
Եւրոպայի եւ Ասիոյ մեջտեղ . *Արալ լիճն*՝ որ մինչեւ ցայ-
ժրմ աշխարհիս երկրորդ մեծ լիճն է՝ Թուրքաստանի եւ
Ռուսիոյ մեջտեղ . *Ջերբան*՝ Պարսկաստանի արեւելակող-
մը . *Պալքաշինուք* եւ *Պայքալ*՝ Սիպիւրի հարաւակողմը .
Ծայգանկ՝ Չինոս հիւսիսակողմը . *Խուխուկուք* (*Կասպոյտ*

մեթր բարձր է, եւ Տաւադակիւրի կամ Սպիտակ Լեւոն , որ 8,176
մեթր բարձր է :

շիճ), Թուռնկրթն եւ Ֆուշյանկ' Չինու մեջ . Փաշրէ' Թի-
պէրի մեջ, Հիմալայա լեռանց հիւսիսակողմը :

ԳԵՏՔ. — Ասիոյ գլխաւոր գետերն են . Օպի, Ենիսէյ
եւ Լենա որ Սիպիրեն կանցնին եւ Սառոսցեայ ովկիանոս
կրափուին . Ամուր կամ Սախալեան' Չինու եւ Սիպիրի
մեջտեղէն կանցնի եւ Օխոթսքի ծով կրափի . Հօանկ-Հօ
կամ Դեղիս գետ' որ Դեղին ծով կրափի . Քեանկ կամ
Եանկէքեանկ' որ Չինու ամենէն մեծ գետն է, Արեւելեան
ծով կրափի . Մէյ-Քանկ կամ Քամուրն եւ Մէյ-Եամ'
Հնդկաստանէն կանցնին եւ Չինաց ծով կրափին . Սաշուէն'
Իրաւատի, Պրանմախուրրա, Գանգես, Կոտաւերի,
Քիւսուս եւ Քաւերի' Պենկալայի ծով կրափին . Ենր-
պուտտա եւ Ինդու կամ Սիւն' Արաբիոյ ծովը կրա-
փին եւ Հնդկաստանէն կանցնին . Եփրատ եւ Տիգրիս'
որ Հայաստանէն կրդխին, իրարու միանալով Շաղիւշա-
րեայ կկոչուին եւ Պարսկային ծոց կրափին . Երասխ եւ
Կուր որ նոյնպէս Հայաստանէն կանցնին, եւ Ուրալ'
որ Կասպից ծով կրափին . Ճիհուն կամ Ամու տերեւ
եւ Սիհուն կամ Սըրտէրեւ' Թուրքաստանէն կանցնին եւ
Արալ լիճը կրափին, Ալիս կամ Գըզըլ ըրմազ, Իրիս կամ
Եշիլ ըրմազ' Տանկաստանէն կանցնին եւ Սեա ծով կը-
րափին . Որուն' Միջերկրական ծով կրափի :

ՕԴ. — Ասիան Արջային բեւեռէն մինչեւ հասարակած
տարածուած լինելով' աշխարհիս ամեն տեսակ օդն ունի .
հիւսիսակողմը սաստիկ ցուրտ է, մեջտեղերը բարե-
խառն . իսկ հարաւակողմը սաստիկ տաք :

ՀՈՂ. — Հողը հիւսիսակողմը սաստիկ ցրտութեան պատճառաւ անբեր է, մեջտեղերն եւ մանաւանդ հարաւակողմը սաստիկ բարեբեր. միայն Չինոս, Արաբիոյ, Թուրքաստանի եւ Պարսկաստանի մեկմեկ մասերն եւ ուրիշ տեղեր մեծամեծ անապատներ կգտնուին :

ԲԵՐՔ. — Ասիան ունի առատ ոսկի, փշաքին, մագնիս, արծաթ, պղինձ, անագ եւ ուրիշ մետաղներ, եւս եւ պատուական քարեր եւ աղամանդ : Բուսաբերութիւնն առատ է, եւ ըստ օդոյն՝ ցուրտ երկիրներու բոյսերէն սկսեալ մինչեւ ամենէն առելի տաքութիւն ուզող տունկերն ունի, որոց առելի նշանաւորներն են չայ, գինի ծառն (յորմէ վեռնի կամ շաք կոչուած խեժը կելնէ), լեղակ, բամբակ, շաքարենի, մելասկ, խամուէ, իւղային բոյսեր, եւ այլն : Կենդանեաց մեջ ամեն տեսակ ընտանի եւ վայրի կենդանիքն ունի. ամենէն երեսելիներն եւ օգտակարներն են Սիպիրի աքիսներն եւ սամոյրները, Քաշմիրի, Թիպերի եւ Անկիւրիոյ այծերը, Հնդկաստանի փղերը, Արաբիոյ ձիերն ու գոմէշները, ուղտը, սիրամարզը, փասիանը, մարգարտաբեր խեցեմորթն, եւ այլն :

ԲՆԱԿԻՉՔ. — Ասիոյ բնակչաց բիւն է իբր 700 միլիոն, որոց մեկ մասը Կովկասեան ցեղէ են եւ արեւմտակողմը կրնակին. մեկ մասը դեղին կամ մողոյեան ցեղէ՝ որ արեւելակողմը կրնակին. եւ մեկ փոքր մասը մալայեցի ցեղէ՝ որ Հնդկաչինոս հարաւակողմը կրնակին :


ԿՐԾՆՔ. — Ասիոյ մեջ ամեն կրօնք կգտնուի. Հրեայք իբր 600,000, եւ քրիստոնեայք իբր 6 միլիոն. Հայք, Յոյնք

եւ ուրիշ արեւելեան քրիստոնեայք կրեակին յըստ մեծի մասին] Տաճկաստանի եւ Ռուսաստանի մեջ . բողոքականք կգտնուին Անգղիացոց երկիրներու մեջ , իսկ հռոմեականք՝ գրեթէ ամենայն տեղ , թեւ սակաւաթիւ , եւս եւ Չինու մեջ : Մահմետականութիւնը տիրած է Արարիոյ , Տաճկաստանի , Թուրքաստանի , Պարսկաստանի , Աֆղանիստանի , Հնդկաստանի քանի մի տեղերու եւ Մալաքքա թերակղզոյն մեջ : Հնդկաստանի բնակչաց մեծ մասին կրօնքն է պրահմականութիւն . պուտոյականութիւնն Ասիոյ մեծագոյն մասին կրօնն է , այսինքն Հնդկաչինու , Սեյլան կղզոյն , Թիպերի , Չինու , Ճափոնի , եւ Մանչու եւ Մոնղոյ կոչուած Թարարաց : Հնդկաստանի եւ Պարսկաստանի մեջ մինչեւ ցայժմ կրակապաշտք կան : Քանի մի բարբարոս ժողովուրդներ , Ասիոյ ամենայն կողմերը ցրուած , տակաւին զարշելի եւ բանձր տարրապաշտութեան մեջ են :

ԼԵՁՈՒՔ . — Ասիոյ գլխաւոր լեզուներն են . արաբերէն , պարսկերէն , տաճկերէն , հայերէն , հնդկերէն , պենկալերէն , չինարէն , ճափոններէն , մանչուերէն եւ մոնղոլերէն : Ասիոյ մեջ քանի մի մեռեալ , այսինքն չխօսուած լեզուներ կան , որ իբրեւ սրբազան կամ կրօնական լեզու կպահուին . ինչպէս հին արաբերէնն՝ մահմետական ժողովրդոց մեջ . հին հայերէնն կամ զբարաուր (որ այժմ միւս հին լեզուներէն շատ աւելի տարածուած եւ ծանօթ է) . սանսքրիթ՝ Հնդկաց պրահմաններուն ծանօթ . զենտ՝ կրակապաշտից մեջ պահուած . երրայեցերէնն՝ Հրեից բարունի-

ներուն ծանօթ . եւ փալի՛ Հնդկաչինու պուտտականաց
մեջ պահուած :

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ . — Ասիոյ զրեք ամենայն տերութիւնքն
ազատ եւ բռնաւորական միապետութիւն են . բազաւորաց
առջին երկրպագութեամբ ելնելու է , եւ նոցա հետ խօսե-
լու ժամանակ ծնկի վերայ կենալու է : Այս բազաւորներէս
եւ իշխաններէս շատերը , ըստ հաճոյից անձանց՝ իւրեանց
հպատակաց ստացուածքը կզրաւեն , եւ կեանքի եւս կը-
զրկեն զնոսա :



ԱՍԻՍԿՈՆ ՌՈՒՍԻԱ.

Ասիական Ռուսիան երկու զատ զատ եւ մեծամեծ մասերէ կձեւանայ, որ են Սիպիր կամ Սիպերիա եւ Կովկասեան փոխարքայութիւն. այս երկու որոշ մասերս Աշխարհագրութեանս մեջ առանձին կղնեմք :

Ա. Ս Ի Պ Ի Ր .

Սիպիրը կտարածուի արեւելեան երկայնութեան 49 աստիճանէն (որ է Ուրալ գետն) մինչեւ արեւմտեան երկայնութեան 173 աստիճանը (Պերինկայ նեղուց), եւ հիւսիսային լայնութեան 43 աստիճանէն (Խըրղըզաց երկրին հարաակողմն) մինչեւ 77° (Պլուխ Հիւսիսային) . սահմանն է հիւսիսէն Արջային Սառուցեալ ովկիանոս, արեւելքէն Պերինկայ նեղուցն եւ ծովն եւ Յիսոբսքի ծով, հարաւէն Չինաստան եւ Թուրքաստան, արեւմտքէն Եւրոպական Ռուսիա :

Տարածութիւնն է 138,600 բիւրմերը քառակուսի, որ է ամբողջ Եւրոպայի գրեթէ մէկ եւ կեսին չափ :

Սիպիրը երկու մաս կբաժանուի . Արեւելեան եւ Արեւմտեան . այս երկու մասերն եւս չորս կուսակալութիւն կբաժանուին, որ են . Թոպուսք, Թումսք, Ենիսեյսք եւ Իրքուսք, եւ վեց նահանգ՝ որ են . Սեմիփալարիւսք, Նահանգ Խըրղըզացն Սիպիրի, Եաքուսք, ծովեզերեայ

Նահանգ արևելեան Սիպիթի, Նահանգ Ամուր գետոյ,
եւ Նահանգ Անդրապաշեան կամ Տաուրիա :

Երկիրը տեղ տեղ լեռնոտ է եւ շատ տեղ դաշտային :
Գլխաւոր լերինքն են . Աղբայ (լեռան ոսկոյ), որ երկու
գլխաւոր ճիւղ կրածանուի . բուն Աղբայ լերինք եւ Սայ-
եանեան Աղբայք, Արևելեան Սիպիթի կամ Տաուրոշա-
մուքեան լերինք, Սրանոյջ եւ Ուրաշ լերինք : Այս լեռ-
ներես դուրս մնացած երկիրները մեծամեծ դաշտեր են :

Սիպիրը մեծամեծ գետեր ունի, որոց գլխաւորներն են .
Օպի (518 բիւրմերը կամ 5,000 վերսը երկայնութեամբ),
Ենիսեյ (554 բ. մ), Լենա (448 բ. մ), Խարաւկա
(70 բ. մ), Անայար (400 բ. մ), Օլենեօք (200 բ. մ),
Եանա, Ինտիկիրքա (150 բ. մ), Քոլիմա (110 բ. մ),
որ Սառուցեալ ովկիանոս կրափին . Ամուր կամ Սախա-
լեան (430 բ. մ), Օխոբսքի ծով կրափի, եւ սանման է
այժմ Ռուսաց եւ Չինաց ինքնակալութեանց . Ուրաշ՝ որ
կասպից ծով կրափի : Այս գետերես չորսն՝ այսինքն Օպի,
Ենիսեյ, Լենա եւ Ամուր, վոյկայեն շատ աւելի երկայն
ընթացք ունին :

Օպիի գլխաւոր ճիւղերն են, Սասուա, Թում, Չուլիմ,
Քէր եւ Իրքիշ (200 բ. մ), որ ամենէն մեծն է : Ենիսեյի
գլխաւոր գետակներն են . Ապաքան, Անկարա, Փոտքա-
մենեայա կամ Միջին Թուրկուզքա, եւ Ստորին Թուր-
կուզքա : Լենայի գլխաւոր բազուկներն են . Վիրիմ, Օ-
լեքմա, Արտան եւ Վիլիւյ : Իրքիշի գլխաւոր ճիւղերն են .
Իշիմ եւ Թոպուլ :

Սիպիրը հիասթափողմբ Սառուցեալ ովկիանոսի սահմանակից լինելուն, եւ հարաւակողմբ մեծամեծ լեռներ ունենալուն, օղբ սաստիկ ցուրտ է. միայն հարաւակողմբ մինչեւ լայնութեան 50⁰ տեղ տեղ բարեխառն :

Սիպիրն երեք տեսակ երկիրներ ունի՝ հողոյն նայելով. հիասթափողմբ, բէւ բարերեր, սակայն ցրտութեան պատճառաւ մամուռէ զատ բան չբուսցրներ, եւ ըստ մեծի մասին սառուցեալ ճահիճներով ծածկուած է. մեջտեղերը շատ տեղ անբեր անապատ է, կամ սակաւարոյս արօտներ միայն ունի. իսկ հարաւակողմբ շատ տեղ մեծամեծ անտառներ ունի եւ զանազան տեսակ բոյսեր :

Սիպիրը բուսոց մեջ ունի եղեւին, սիպիրեան մայր, նոճի, կուենի եւ այլ մեծամեծ ծառեր. յետոյ զինի, սին եւ այլ ծառաբուսիք. վարսակ, գարի, գետնախնձոր, եւ այլն : Կենդանեաց մեջ ունի եղջերու, եղնիկ, սամոյր, սպիտակ աքիս, ջրշուն, սեւ աղուէս, սպիտակ եւ սեւաարջ, միլիոնաւոր սկիւռներ, նապաստակ, եւ բազմատեսակ բուջուաններ : Հանքերու մեջ ունի ոսկի, արծաթ, փլաքին, պղինձ, տեսակ տեսակ քարեր, եւ այլ մետաղներ ու հանքեր :

Բնակիչն է՝ Խըրդըզաց երկիրն եւս հետն առնելով՝ 5,300,000, այլ եւ այլ ազգեր, որոց զլիաւորքն են. Խըրդըզը՝ բարար ցեղէ, անհանդարտ, նենգամիտ եւ աւազակարարոյ. սոցա զլիաւոր պարապմունքն է կենդանի դարմանել, մասնաւորապէս ոչխար եւ ձի, եւ կրնակին Կասպից ծովուն, Արալ լճին, Վոլկայի եւ Իրքիշի մեջտե-

դերն ընկած խոսպան երկիրները . *Վսկուչք*՝ որ կրնակին Ռարայ լերանց երկու կողմն՝ Քամայեն մինչեւ Սասուա եղած երկիրները . *Օսրեաքք*՝ որ կրնակին ստորին Օպիի քովերը . *Սամոյետք*՝ որ կրնակին Մեզեն եւ Խարանկա գետոց մեջ ընկած երկիրները . *Քամչատագիք*՝ Քամչարքա թերակղզւոյն մեջ . *Եաքուքք*՝ որ կրնակին Ալտան , Լենա եւ Ինտիկիրքա գետերու քով . *Թուսկուզք*՝ որ կրնակին Թուսկուզքայի , Յիտրսքի ծովու , Չինաստանի , Պաշքայ լճի եւ Սաուսցեայ ովկիանոսի մեջ ընկած երկիրները . *Մոդոլք*՝ որ կրնակին Իրքուքսքի կուսակալութեան մեջ՝ Պաշքայի , Լենայի եւ Սնկարայի աղբիւրներուն քովերը , եւ Օպիի եւ Իրթիշի քովերը . *Ռուսք*՝ որ իբրեւ տիրող ազգ՝ Սիպիրի ամենայն կողմերը կգտնուին : Այս ժողովրդոց մեծագոյն մասը բաժառական կեանք կանցընեն՝ ինչպէս մասնաւորապէս Մոդոլք եւ Խրրղըզք :

ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԹՈՊՈՒՍՔԻ .

Այս կուսակալութիւնս ամբողջ հրուսիոյ հինգին չափ է . Ռարայ լերանց արեւելակողմը կընկնի՝ Խրրղըզաց երկրեն մինչեւ Սաուսցեայ ովկիանոս , եւ ինն գաւառ կրածանուի : Թոպուսքի երկրին հարաւակողմը զընթե խոսպան է , բայց եւ այնպէս ունի բազմատեսակ պտուղներ եւ պարտաբոյս արօտներ . անտի դեպ ի հիւսիս երբայով՝ մեջտեղերը մեծամեծ անտառներ ունի , յորոց պատուական փայտեր կնանուին . անտի եւս դեպ ի հիւսիս երբայով՝ անտառները կնուագին , ծառերը կփոքրնան , մինչեւ այն-

պիսի երկիր մի կհասնի , յորում միայն մամուռ կրուսնի :
Մեծամեծ գետերու մեջէն առատ եւ զանազան տեսակ ձու-
կեր կեցնեն :

ԹՈՊՈՂՍՔ (16,000 բն.) Իրքիշի եւ Թոպուլի խառնուրդը ,
համանուն գաւառին զլխաւոր քաղաքն է , փայտակերտ
տներով՝ բայց գեղեցիկ եւ վաճառաշահ . զլխաւոր վա-
ճառքն է ձուկ :

ՕՄՍՔ (20,000 բն.) Իրքիշի վերայ , համանուն գաւա-
ռին զլխաւոր քաղաքն է եւ Թոպուսքի կուսակալութեան
մայրաքաղաքը կհամարուի . արոռ արեւմտեան Սիպիրի
ընդհանուր կուսակալին , Սիպիրի Խազախաց արամանին ,
եւ Սիպիրի Խըրդըզաց զինուորական կուսակալին . վաճա-
ռականութիւնը շատ բանուկ է .

ՊԵՐԵՋՈՎ (1,000 բն.) Յալի վերայ , համանուն գաւա-
ռին զլխաւոր քաղաքն է :

ԹՈՒՐԻՆՍՔ (3,700 բն.) Թուրայի վերայ , որ Թոպուլի մեկ
ձիւղն է , համանուն գաւառին զլխաւոր քաղաքը :

ԹԻԻՄԷՆ (11,000 բն.) Թուրայի վերայ , համանուն գա-
ւառին զլխաւոր քաղաքն է , երբեմն Թաքար խաներու ա-
րոռանիստ . Սիպիրի եւ Եւրոպական Ռուսիոյ վաճառա-
կանութեան զլխաւոր տեղն է :

ԹԱԲԱ (5,000 բն.) Իրքիշի վերայ , համանուն գաւառին
զլխաւոր քաղաքն է , եւ շատ վաճառաշահ :

ԻՇԻՄ (2,500 բն.) հանանուն գետակի վերայ , Իշիմսք
գաւառին զլխաւոր քաղաքն է , վաճառաշահ եւ երեւելի
տօնավաճառ ունի :

ՓԵԹՐՈՓԱԽԼՈՎՍՔ (4,000 ըն.) Իշիմ վտակի վերայ, միջին Ասիոյ հետ մեծ վաճառականութիւն ունի :

ԵԱԼՈՒՌՈՒՐՈՎՍՔ (3,000 ըն.) Թոպուլի վերայ, համանուն գաւառին գլխաւոր քաղաքը :

ՔՈՒՐԿԱՆՍՔ (3,000 ըն.) Թոպուլի վերայ, համանուն գաւառին գլխաւոր ու վաճառաշահ քաղաքը :

ԿՈՒՍՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԹՈՄՍՔԻ.

Թոպուլսքի հարաւային արեւելակողմը կրնկնի եւ վեց գաւառ կրաժանուի. հիւսիսակողմի երկիրը մամուապատ է, մեջտեղերը բարեբեր. հիւսիսային արեւելակողմը բափառական ժողովուրդներ կրնակին որ ձկնորսութեամբ եւ որսորդութեամբ կապրին. հարաւային արեւելակողմը՝ որ ընդհանրապէս խոպան է, բնակիչք կենդանիներ կղարմանեն. իսկ հարաւային արեւմտակողմն Ալբայ լեռանց մեջ ընդհանրապէս հանքերու կպարապին մարդիկ : Ճարտարութեան մեջ տեղ տեղ ըստ բաւականին յառաջացեալ է :

ԹՈՄՍՔ (20,000 ըն.) Թոմ գետակի վերայ, համանուն գաւառին գլխաւոր քաղաքն ու կուսակալութեանս մայրաքաղաքը. Սիպիրի ամենէն հարուստ քաղաքն է, եւ շատ վաճառաշահ :

ՔԱՅԻՆՍՔ (2,500 ըն.) Յմի վերայ, որ Իրրիշի մեկ ճիւղն է, համանուն գաւառին գլխաւոր քաղաք :

ՊԱՌՆԱՌԻԼ (10,000 ըն.) Յպիի վերայ, համանուն գաւառին գլխաւոր քաղաքն է, եւ Ալբայ լեռներէն ելած մետաղներուն գլխաւոր կայարան :

ՊԻՅՍՔ (3,000 րն.) Պիա վտակի վերայ, համանուն գաւառին զլխաւոր քաղաքն է :

ՔՈՒԶՆԵՅՔ (2,000 րն.) Թումի վերայ, համանուն գաւառին զլխաւոր ու ամուր քաղաքն է :

ՔՈՒՎԱՆ (2,500 րն.) Օպիի մօտ, համանուն գաւառին զլխաւոր քաղաքն է, մեծ գործարան ունի քանդակագործութեան :

ԶՄԵՅԻՆՈՎՈՐՍՔ (15,000 րն.) Քոլիվանի մօտ, արծաթի մեծ ձուլարաններ ունի :

ՆՍՀԱՆԳ ՍԵՄԻՓԱԼԱԹԻՆՍՔԻ

Թումսքի հարաւակողմը Պալքաշ լճին քովերը կրնկնի . երկրին բարեբերութեանը եւ օղին բարեխառնութեանը համար՝ Սիպիդի Իռաշիա կկոչուի . երկիրը տեղ տեղ լեռնոտ է, եւ մեծամեծ լճեր ունի՝ ինչպէս Սլաքուշ եւ Իսիքուշ, եւ լեռներէն բազմաթիւ զետեր ու վտակներ կրղխին, արծաթի, ոսկւոյ եւ այլ մետաղաց հանքեր ունի, եւ Զինաստանի ու Թորքաստանի հետ մեծ վաճառականութիւն կանէ : Բնակչաց զլխաւոր պարապմունքն է կենդանիք մեծցրնել : Այս նահանգս չորս գաւառ կրաժանուի :

ՍԵՄԻՓԱԼԱԹԻՆՍՔ (7,000 րն.) Իրքիշի վերայ ամուր բերդաքաղաք, նահանգիս եւ համանուն գաւառին զլխաւոր քաղաքն է :

ՈՒՍԹՔԱՄԵՆՈՎՈՐՍՔ (2,300 րն.) Իրքիշի վերայ ամուր բերդաքաղաք :

ՆԱՀԱՆԳ ԽՆԴՐԱԳՆԱՅՆ ՍԻՊԻՐԻ .

Սեմիփալարինսքի արեամտակողմը , մեծագոյն մասնանրեր է եւ խոպան . բնակիչքն ընդհանուր պարապմունք մի ջունին , բախտական կպտրտին , եւ ոմանք կենդանիք կղարմանեն ' մանաւանդ ոչխար եւ ձի : Նահանգիս հարաւակողմն է Պաշքաշ լիճը : Նշանաւոր քաղաք ջունի :

ԿՈՒՍՍԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՆԻՍԷՅՍԻ .

Թոպուլսքի եւ Թոմսքի արեւելակողմն , ամբողջ Եւրոպայի քառորդին ջափ է . հինգ գաւառ կրաժանուի , որք հարաւակողմն են , վասն զի հիւսիսակողմն անբնակ եւ ամայի է :

ԵՆԻՍԷՅՍԻ (5,000 բն .) Ենիսէյի վերայ , համանուն գաւառին գլխաւոր քաղաքը , վաճառաշահ , եւ նշանաւոր տօնավաճառ ունի :

ԲԲԱՍՆՈՅԵԱՐՍԻ (6,500 բն .) Ենիսէի վերայ , կուսակալութեանս եւ համանուն գաւառին գլխաւոր քաղաքը , Սիպիրի ամենէն բարեբեր երկիրներէն մեկուն մեջ է , եւ վաճառաշահ :

ՄԵՆՈՒՍԻՆՍԻ (2,000 բն .) Ենիսէի վերայ համանուն գաւառին գլխաւոր քաղաքն է , քովերը բարեբեր տեղեր ունի :

ԵԱԶԻՆՍԻ (2,300 բն .) համանուն գաւառին գլխաւոր քաղաքն է , Զինաց հետ մեծ առուտուր ունի :

ԲԱՆՍԻ (2,000 բն .) համանուն գաւառին գլխաւոր քաղաքը :

ՆԱՀԱՆԳ ԵԱՔՈՒԹՄՔԻ .

Ենիսեյսքի արեւելակողմը, Եւրոպայի կեսին չափ է, բայց Սիպիրի ամենեն անբեր եւ ամայի մասը լինելուն՝ սակաւամարդ է : Այս նահանգս հինգ գաւառ կրաժանուի :

ԵԱՔՈՒԹՄՔ (3,000 քմ.) Լենայի վերայ համանուն նահանգին եւ գաւառին գլխաւոր քաղաքն է, եւ արեւելեան Սիպիրեն եկած մորբերու գլխաւոր վաճառատեղին :

Այս նահանգիս արեւելակողմը Սառուցեալ ովկիանոսի եւ Պերինկայ ծովու եզերքը կրնկնի *Չուքոք* ազգին երկիրը, որ անբեր ամայի է եւ սաստիկ ցուրտ :

ԾՈՎԵՋԵՐԵԱՅ ՆԱՀԱՆԳ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՍԻՊԻՐԻ .

Այս նահանգիս մեջ կհամարուին Օխոքսքի ծովուն եզերքն եղած երկիրներն եւ Քամջարքա բերակղզին, եւ չորս գաւառ կրաժանուի :

Քամջարքա բերակղզին, որոյ մեծութիւնը Բրոսիոյ երեքին չափ է, անբեր երկիր է եւ ցուրտ . միայն Քամջարքա գետոյն քով կրուանի՞ գարի, գետնախնձոր, վարսակ, եւ այլ սոցա նման ցրտութեան դիմացող բոյսեր :

ՓԵԹՐՈՓԱԻԼՈՎՄՔ, բերակղզւոյս գլխաւոր քաղաքն է, արեւելեան ծովեզերքը :

ՕԽՈՒԹՄՔ, համանուն ծովուն եւ Օխոք գետոյն խառնուրդը, նաւահանգիստ է, ունի զինարան եւ նաւուղղութեան դպրոց :

ՓՈՐԹ ԱՅԵԱՆ , նոր քաղաք , բայց Յխորսքեն լաւ նաւահանգիստ ունեցածին համար օրէ օր կմեծնայ եւ կծաղկի :

Ռուսիոյ ձեռքն է այժմ եւ ԱՍԽԱԼԵԱՆ կղզին որ կկոչուի նաեւ *Չոքա* , *Թարաքայ* , *Քրաֆրօ* , եւ *Օքօ-Եսսոյ* , անբեր եւ ցուրտ , բայց ունի առատ քարահատք եւ այլ հանքեր :

ՆԱՀԱՆԳ ՍՄՈՒՐ ԳԵՏՈՅ .

Այս նահանգս կրնկնի Ամուր գետոյն ձախակողմը մինչեւ ծով , որոյ տիրեցին Ռուսք 1858-ին : Երկիրը բարեբեր է , ունի մեծամեծ անտառներ , եւ օղբ բարեխառն է . գետերն առատ եւ լաւ ձուկեր կելնեն :

ՊԼԱԿՈՎ,ԵՇՉԷՆՍԻ, Ամուրի վերայ , նահանգիս գլխաւոր քաղաքն է :

ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԻՐԻՈՒԹՍԻՒՆ .

Այս կուսակալութիւնս կրնկնի Պայքայի հիւսիսային եւ արեւմտեան կողմերը . Աւստրիոյ մեծութիւնն ունի եւ հինգ զաւառ կրածանուի :

ԻՐԻՈՒԹՍԻՒՆ (20,000 բն.) Անկարայի վերայ , համանուն կուսակալութեան եւ զաւառին գլխաւոր քաղաքն , եւ արո՞ ընդհանուր կուսակալին Արեւելեան Սիպիրի . ունի զեղեցիկ մայր եկեղեցի , վարժարան , գրատուն , հանքարանական բանգարան , եւ այլն : Կեղրոն է քաղաքս արեւելեան Ասիոյ Փերրպուրկի հետ ունեցած վաճառականութեան , եւ չայի մեծ առուտութիւն կանէ :

ՆԱՀԱՆԳ ԱՆԴՐՊԱՅՔԱԼԵԱՆ կամ ՏԱՌԻՐԻԱ.

Պայքալի հարաւային արեւելակողմը, բարերեր, լեռնոտ եւ անտառային երկիր. ունի երկաթ, պղինձ, քարեր, եւս եւ ոսկի՝ Գեահրայի քովերն, եւ այլ հանքեր. կենդանեաց մեջ ունի բազմաթիւ ոջխար, ձի, եւ այլն. միայն տեղ տեղ անբեր կամ խոպան է երկիրը :

ԶԻԹԱ (3,000 բն.) այժմ նահանգիս գլխաւոր քաղաքն է :

ՀԻՆ ՆԵՐԶԻՆՍՔ, բարերեր հովտի մի մեջ, ջորս կողմէն լեռներով պատած :

ՄԵԾ ՆԵՐԶԻՆՍՔ (5,000 բն.) երկաթի, պղնձի եւ մանաւանդ արծաթի մեծ հանքեր ունի. կանոնաւոր շէնքերով է քաղաքս, եւ արծաթի ձուլարաններ ունի :

ՍԵԷԻՆՎԻՆՍՔ, Սելէնկայի վերայ ամուր բերդ, սղի հանքեր ունի :

ԹՐՅԻՑՔՈՍԱԻՍՔ (4,000 բն.) ամուր բերդաքաղաք եւ վաճառաշահ :

ՔԵՆԱՀԹԱ, Սելէնկայի վերայ Զինու սահմանագլուխը, փոքրիկ քաղաք, Ռուսիոյ եւ Զինաստանի վաճառականութեան գլխաւոր տեղն է :

Բ. ԿՈՎԿԱՍԵԱՆ ՓՈԽԱՐՔԱՅՈՒԹԻԻՆ .

Կովկասեան փոխարքայութիւնը կամ Կովկասային գա-

առք, կտարածուի արեւելեան երկայնութեան $3\frac{1}{4}$ աստի-
ճանէն, (Թաման բերակղզին ենիգայէի նեղուցին մօտ),
մինչեւ 48° (Ափշերոն բերակղզին Կասպից ծովուն մեջ),
եւ հիւսիսային լայնութեան $38^{\circ} 47'$ -էն (Երասխ' Հայաս-
տանի մեջ), մինչեւ $45^{\circ} 25'$ (Քոսպանի հիւսիսակողմն) :
Սահմանն է հիւսիսէն՝ Սեաւ ծովու զինուորական երկիրն
եւ Սքարոփոյի կուսակալութիւնն, արեւելքէն Կասպից
ծով, հարաւէն Պարսկաստան եւ Օսմանեան Հայաստան,
արեւմտքէն Ասիական Տաճկաստան եւ Սեաւ ծով :

Տարածութիւնն է 2,646 բիւրմէքր քառակուսի, Գաղ-
ղիոյ գրեթէ կեսին չափ :

Կովկասեան փոխարքայութիւնը չորս կուսակալութիւն
կրածանուի, որ են . *Թիֆլիզ*, *Քուրայիս*, *Երևւան* եւ
Շամախի կամ *Պաքու* . եւ երեք նահանգ, որ են . *Նահանգ*
Քուրյան գետոյ, *Նահանգ Թերեք* գետոյ եւ *Տաղստան* :
Թէեւ ըստ այժմու կառավարութեան այս կերպով բաժա-
նուած են Կովկասեան գաւառք, սակայն տակաւին իւրա-
քանչիւրն իւր առաջին անունը պահած է, ինչպէս *Չեր-*
քեզ, *Ապագա*, *Իմերեք*, *Կուրիեղ*, *Ռուսաց Հայաստան*,
Վրաստան, *Շիրուան*, *Տաղստան*, եւ այլն :

Կովկասու գաւառքն երկու ծով ունին՝ Սեաւ եւ Կաս-
պից ծովերը : Եզերքը նշանաւոր չեն . երկու փոքր բերա-
կղզիներ ունի, որ են *Թաման*' արեւմտակողմն, եւ *Ափ-*
շերոն' արեւելակողմը : Սեաւ ծովու մեջ ամենեւին կղզի

չունի, իսկ Կասպից ծովուն մեջ կան մանր կղզիք . ծոցեր եւս չունի, այլ մանր խորշեր միայն :

Երկիրն ընդհանրապէս սաստիկ լեռնոտ է . հիւսիսակողմը Սեաւ ծովուն եզերքէն մինչեւ Կասպից ծովուն մօտ կրարձրանան *Կովկաս* կամ *Կաւկաս* լեռինքն, որ հազար վերսք երկայնութիւն ունին, եւ որոց բարձրագոյն ծայրերն են, *Էշպրուզ*՝ յաւերժական ձիւնով ծածկուած՝ Մնկուելի եւ Փոքր Ապագայի մեջտեղերը, Թիֆլիզու հիւսիսային արեւմտակողմն, որոյ բարձրութիւնն է 5,637 մերր : Այս մեծ շարքէս բազմաբիւ ձիւղեր կտարածուին դեպ ի հիւսիս եւ գլխաւորապէս դեպ ի հարաւ . սոցա մեջ ամենէն նշանաւորքն են Հայաստանի բարձրաւանդակներն եւ լեռները ձեւացրնող գօտիներ՝ որոց մեջ ամենէն երեւելի լեռինքն են . *Մեծ Մասիս*՝ որոյ բարձրութիւնն է 5,280 մերր . *Փոքր Մասիս*՝ 4,001 մերր բարձր . *Արակեզ* կամ *Արագած*՝ 4,225 մերր : Կովկասեան գաւառաց մեջ դաշտային երկիրը սակաւ է, եւ այն դաշտերն անգամ ըստ մեծի մասին բարձր լեռնադաշտակներ են :

Գլխաւոր գետերն են . *Քուչպան*, *Թերեք* եւ *Քուճա*՝ Կովկաս լեռանց հիւսիսակողմն, եւ *Ռիոն* կամ *Փասիս*՝ որ Սեաւ ծով կբափին . *Կուչր* կամ *Կիւրոս*, որ Օսմանեան Հայաստանէն կբղխի եւ Կասպից ծով կբափի : Կուր գետոյն գլխաւոր գետակներն են *Արագան* եւ *Երասիս*, որ սահման է Ռուսաց եւ Պարսից տերութեանց մեջ :

Յզր բարձր լեռանց վերայ ցօւրտ է, Կովկաս լեռանց հիւսիսակողմն եւ Հայաստանի լեռնադաշտակները բարե-

խառն , մնացեալ տեղերը տաք , բայց ամենայն կողմերն
եւս առողջ . միայն տեղ տեղ , մանաւանդ ծովեզերքն '
անառողջ է :

Հողը շատ բարեբեր է եւ առատութեամբ կրօնացընէ
ցորեն , գարի , եգիպտացորեն , խաղող ' որ ազնիւ զինի
կուտայ , տանձ , խնձոր , դեղձ , ծիրան , նարինջ , լեմոն ,
բուգ , նուշ , ձիթենի , բուր , միով բանիւ Եւրոպայի ամեն
կողմերուն բերքերն ունի ազնիւ եւ առատ : Անտառաց
մեջ ունի եղեւին , կաղնի , նոճի եւ այլ յաղբանդամ եւ
օգտակար ծառեր : — Կենդանեաց մեջ ունի ամեն ընտա-
նի անասուններ , մանաւանդ Հայաստանի կողմերը , ինչ-
պէս ձի , կով , եզ , ոչխար , այծ , եւ այլն . վայրի կենդա-
նեաց մեջ ունի գայլ , արջ , աղուես , շնագայլ , աքիս եւ
այլն . օգտակար կենդանեաց մեջ նշանաւոր են նաեւ մե-
դուն եւ շերամը , բռնոց մեջ ունի փասխան , կաքաւ , եւ
ամեն տեսակ հասարակ բռնուններ :

Բնակիչն է իրր 2,400,000. տասնէն աւելի զանազան ազ-
գեր , ինչպէս Վրացի , Հայ , Չերքեզ , Օս , Ապխազ , Լեզկի ,
Թաթար , եւ այլն : Այս ազգաց մեջ , ինչպէս նաեւ բոլոր
աշխարհիս ազգացը մեջ , ամենէն զեղեցիկ մարդիկը կհա-
մարուին Չերքեզք : Բաց ի Հայոց եւ ի Վրաց , որ արեւե-
լեան քրիստոնեայ են , Կովկասու միւս ամեն ազգերը մահ-
մետական են կամ խառն դաւանանք մի ունին :

Ճարտարութիւնը , ուսմունք եւ զիտութիւնք օրէ օր
ծաղկելու վրայ են ' մանաւանդ Վրաստանի եւ Հայաս-

տանի կողմերը : Բնակչաց զլխաւոր պարապմունքն է երկրագործութիւն եւ կենդանիք մեծցընել :

ԿՈՒՍՍ.ԿԱԼՈՒԹԻՒՆ ԹԻՖԼԻՉՈՒՆ .

Այս կուսակալութիւնս , որոյ մեջ է Վրաստանի մեծագոյն մասը , Կուր գետոյն Ալագանի հետ խառնուած տեղերը կտարածուի ' Կովկաս լեռանց հարաւակողմը , եւ հինգ զաւառ կրաժանուի : Երկիրն ընդհանրապէս դաշտային է , միայն սահմանները լեռնոտ : Բնակչաց մեծագոյն մասը Վրացիք են ' վայելչադեմ , հիւրասէր եւ զբոսասէր մարդիկ , որոց զլխաւոր պարապմունքն է երկրագործութիւն եւ ձեռագործք . մնացածը Հայ , Թաթար , Պարսիկ , եւ ամենեւն սակաւր Ռուս :

ԹԻՖԼԻՉ կամ ՏՓԹԻՍ (60,000 բն.) Կուր գետոյն վերայ , արձուանիստ Կովկասեան Փոխարքային , եւ մինչեւ 1802 մայրաքաղաք Վրաստանի բազաւորութեան . գեղեցկութեան կողմանէ Ասիոյ երեսելի քաղաքներէն մեկն է , վաճառականութիւնը բանուկ , եւ ճարտարութեան ու զիտութեանց մեջ թր ըստ թրէ կծաղկի : — Բնակչաց կեսն աւելին Հայ են , որով Ռուսիոյ ամենեւն աւելի հայաբնակ քաղաքն է Թիֆլիզ : Անուանի է քաղաքս նաեւ իւր ախտարոյժ հանքային տաք ջրերովը : — Այս տեղ է Ներսիսեան Հոգեւոր Գալրոցը զոր հիմնեց բարեյիշատակ Ներսէս Ե Կարուղիկոսը :

ՄՅԻՆԹԱ , Թիֆլիզու մօտ Արակոսայի վերայ , որ Կուրի մեկ ճիւղն է , շատ հին քաղաք , մինչեւ Ե դարը Վրաց

բազաւորութեան արտօանխատն էր . այժմ փոքրիկ գիւղա-
քաղաք է :

ԿՈՐԻ (5,000 բն.) գեղեցիկ դիրք ունի եւ վաճառաշահ
քաղաք :

ԹԵԼԱԻ՝ Կախերու գաւառին մէջ , եւ ՍՂՆԱԽ , առատ
եւ ազնիւ գինիովն եւ մետաքսովն անուանի են :

Նոր *Զաքարաշա* , լիբանց ստորոտը ամուր բերդ :

Թիֆլիզու գաւառին միւս երեսելի տեղերը , որպէս նաեւ
Գանձակայ բոլոր գաւառը տեսի Հայաստան :

ԿՈՒՍՍ, ԿԱԼՈՒԹԻՒՆ ՔՈՒԹԱՅԻՍԻ .

Թիֆլիզու կուսակալութեան արեւմտակողմը , Ռիոն եւ
Կուր գետերու եւ Սեաւ ծովու եզերքը , հինգ գաւառ կը-
րածանուի , եւ սորա մէջ են ժամանակաւ *Իմերէք* , *Կու-
րիէլ* , *Մնկոէլ* եւ *Սպազա* կոչուած երկիրներն , ինչպէս
նաեւ Հայաստանի մէկ մասը : Երկիրն ընդհանրապէս լեռ-
նոտ է , մանաւանդ հիւսիսակողմը :

ՔՈՒԹԱՅԻՍ (4,000 բն.) Ռիոն գետոյն վերայ ամուր բերդ
ունի . երբեմն Իմերէքի մայրաքաղաքն էր , այժմ նշանա-
ւոր է վաճառականութեամբը եւ քովի երկիրներուն գեղե-
ցիկ ու գուարճալի դիրքովն ու բարեբերութեամբը :

ՓՈԹԻ (4,000 բն.) Ռիոնի բերանը բանուկ նաւահան-
գիստ , բայց ամառն օդն անառողջ :

ՌԷՏՈՒԹԳԱԼԷ , Փոքրի հիւսիսակողմը նաւահանգիստ :

Իսկ Ախլցխայի գաւառն եւ Երեսանու կուսակալութիւնը
տեսի Հայաստան :

ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՇԱՄԱԽՈՅ .

Շամախայ կամ Պաքուի կուսակալութիւնը Թիֆլիզու հարաւային արեւելակողմը կընկնի՝ Կուր եւ Երասխ գետերու եւ Կասպից ծովու քովերը . սորա մեջ են առաջուան Շիրուան , Պաքու եւ Գարապաղ կոչուած գաւառները , եւ Հայաստանի Փայտակարան նահանգը :

ՊԱՔՈՒ (8,000 բն .) Կասպից ծովուն վերայ ամուր բերդ ունի եւ վաճառաշահ նաւահանգիստ . ունի նաեւ հարիւրի ջափ նաւթի ջրհորներ , եւ քովերը կրակապաշտ Պարսիկք կգտնուին տակաւին :

ՀԻՆ ՇԱՄԱԽԻ , լերանց մեջ ամուր բերդ , մետաքսի եւ բամբակի գործարանաց կողմանէ Կովկասեան գաւառաց առաջին քաղաքն է .

ՆՈՐ ՇԱՄԱԽԻ (20,000 բն .) Ազսու գետակի վերայ ամուր բերդաքաղաք :

ՆՈՒԽԻ (17,000 բն .) Ալազանի մեկ ճիւղին վերայ , նըշանաւոր է մետաքսագործութեամբը :

ԼԵՆՔՈՐԱՆ , Կասպից ծովուն վերայ նաւահանգիստ , ծծմբային տաք ջրեր ունի :

Գարապաղի գաւառը տես ի Հայաստան :

ՆԱՀԱՆԳ ՏԱՂԱՏԱՆԻ .

Շամախայ հիւսիսակողմը Կասպից ծովուն եզերքը . երկիրը լեռնոտ է . այն լեռներէն կըղիսին Սամուր , Գոյ-

առւ , Սուշագ եւ ուրիշ բազմաթիւ գետեր ու գետակներ որ Կասպից ծով կրափին . օղը լեռներուն վերայ ցուրտ է , իսկ լեռանց ստորուրբ բարեխառն եւ զուարճալի : Բնակիչքը Լեզկիք են , որ Կովկասային ժողովրդոց ամենէն քաջերը կհամարուին , քանի մի ցեղ կրածանուին եւ ազատ իշխաններով կկառավարուին , միայն հարկատու են Ռուսաց տերութեան :

ԴԱՐԲԱՆԴ կամ ՏԷՐՊԷՆՏ (13,000 բն.) ըստ Տաճկաց Տեմիր գաիու , Կասպից ծովուն վերայ , հին Ադուանից , եւ յետոյ համանուն խանութեան մայրաքաղաքն էր . վաճառաշահ նաւահանգիստ ունի : Հռչակաւոր եղաւ քաղաքս իւր ամրութեամբն եւ մեծ պարսպովն որ կհասներ մինչեւ Կովկաս լեռանց մէկ անցքն . այս անցքն է որ կկոչուի Դուռն Երկարի , Դուռն Ադուանից կամ Հոնաց , Դուռնը կամ Պահակ ճորայ , Դուռն Կազրից , եւ որ շատ երեսելի եղած է' մանաւանդ մեր պատմութեան մեջ :

ՓԵԹՐՈՎՍԻ , Կասպից ծովուն վերայ ամուր բերդ :

ՔՈՒՊԱ (10,000 բն.) համանուն խանութեան մայրաքաղաքն էր :

ԹԱՐՔՈՒ (9,000 բն.) Կասպից ծովուն մօտ վաճառաշահ քաղաք :

ԷՆՏԷՐԻ (12,000 բն.) վաճառաշահ քաղաք :

ՆԱՀԱՆԳ ԹԷՐԷՔ ԳԵՏՈՅ .

Այս երկիրս Կովկաս լեռանց եւ Թերեք գետոյ մեջտեղը կրնկնի . բազմաթիւ գետակներ ու վտակներ ունի . երկի-

ըր շատ լեռնոտ է, եւ մեջը բնակող ազգերն են Չերքեզք, Չեչենք, Օսք, Լեզկիք եւ այլ բարբարոս ու պատերազմասէր ազգեր, որ երկար ժամանակ Ռուսաց տերութեան դեմ պատերազմեցան : Նշանաւոր քաղաք տակաւին չունի, բայց ունի բազմաթիւ ամուր բերդեր, յորս նշանաւոր է ՎԼԱՏԻՎԱԻՎԱՍ :

ՆԱՀԱՆԳ ՔՈՒՊԱՆ ԳԵՏՈՅ .

Այս նահանգս Սեաւ ծովու եւ Քուսպան գետոյ մեջտեղը կրնկնի՝ դարձեալ բազմաթիւ գետակներ ու վտակներ ունի, եւ երկիրը նոյնպէս շատ լեռնոտ է՝ մանաւանդ մեջտեղերը . մեջը բնակող գլխաւոր ազգն են Չերքեզք, քաջ եւ պատերազմող մարդիկ եւ աշխարհիս ամենէն գեղեցիկները : Սոքա երկար ժամանակ Ռուսաց տերութեան դեմ կռուելէն յետոյ, վերջապէս 1863-ին նուաճուեցան, եւ մեծ մասն ելան Տաճկաստան անցան :

Այս երկրիս նշանաւոր քաղաքները Սեաւ ծովուն եզերքն են, ամենքն ամուր բերդաքաղաքներ եւ բանուկ նաւահանգիստներ, ինչպէս ՍՈՒՌԻՄԳԱԼԷ, ՊՈՄՊԱՐԱ, ՓԻՅՈՒՆՏԱ, ԿՈՍՏԱՆԴԻՆՈՎՍՔ, ԱՆԱՓԱ, ՅՈՒՃՈՒԳԳԱԼԷ կամ ՆՈՎՈՒՍԻՅՍՔ, եւ այլն :



ԱՍԻԱԿԱՆ ՏԱՃԿԱՍՏԱՆ.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — Այժմու ասիական Տաճկաստանի մեջ են Հայաստան, Փոքր Ասիա, Ասորիք, Փիւնիկե, Պաղեստին, Միջագետք, Բարեկաստան եւ Ասորեստան կոչուած հին ու անուանի երկիրները, որոց ոմանք մեծ եւ հզօր պետութիւններ էին. զրեք բոլոր այս երկիրներուս վերայ տիրեցին հետզհետեւ Ասորեստանցիք, Բարեկացիք (մինչեւ 560 նախ քան զԲրիտոս), Պարսիկները (մինչեւ 323), Մակեդոնացիք, Ասորիք, Հայք՝ Տիգրան Բ-ի ժամանակ, եւ ամենկն յետոյ Հռոմայեցիք՝ մինչեւ եփրատ գետը: Միջին դարուց ժամանակներն այս երկիրներս արեւելեան կայսերաց ձեռքն անցան Արաբացոց, Սելճուգեան Թուրքաց, եւ ԺԴ դարուն սկիզբները Օսմանեան Թուրքաց՝ որ մինչեւ ցայժմ պահեցին:

Ասիական Տաճկաստանի սահմանն է հիւսիսէն Սեան ծով եւ Ռուսիա, արեւելքէն Ռուսիա եւ Պարսկաստան, հարաւէն Արաբիա, արեւմտքէն Միջերկրական, Արշիպեղազոս եւ Մարմարա ծովերը:

Տարածութիւնն է իբր 20,000 բիւրմերը քառակուսի:

Ասիական Տաճկաստանն ըստ քաղաքական բաժանման տասնեւեօթն *էյալէք* կամ կուսակալութիւն բաժանուած է. իսկ աշխարհագրորէն եօրը մասն, որ են. Փոքր Ասիա կամ Անատօլու, Հայաստան, Քիւրտիստան, Էլնէզիրէ կամ Միջագետք, Իրագ Արեւի, Ասորիք եւ Կղզիք:

Երկիրն ընդարձակութեանը համեմատ տեսակ տեսակ է. Հայաստանն ըստ մեծի մասին լեռնոտ է եւ ունի բազմաթիւ գետեր, մեծամեծ լճեր եւ շատ բարեբեր հովիտներ. Փոքր Ասիան ընդհանրապէս դաշտային է, միայն արեւելակողմը լեռնոտ, եւ շատ բարեբեր է՝ մանաւանդ ծովեզերքը. ունի բազմաթիւ լճեր եւ գետեր. Ասորւոց երկիրը մեջտեղերը հիւսիսէն հարաւ լեռնոտ է, եւ այն լեռներէն դեպ ի արեւմուտք մինչեւ Միջերկրական ծով բարեբեր հովիտներ ու դաշտեր ունի, իսկ արեւելակողմը մեծ անապատ մի է. Միջագետքը դաշտային է եւ շատ բարեբեր, միայն տեղ տեղ անապատներ ունի: Արշիպեղագոսի եզերքը բազմաթիւ խորշեր, թերակղզիներ եւ կղզիներ կան. իսկ Ասորւոց երկրին ծովեզերքը գրեթէ ուղիղ գիծ մի է:

Օղը բարձրաւանդակներու եւ լեռներու վերայ բարեխառն է, եւ տեղ տեղ նաեւ ցուրտ. իսկ հովիտներու մեջ եւ դաշտային երկիրները՝ տաք. սակայն ամենայն տեղ ընդհանրապէս չոր եւ առողջարար:

Գլխաւոր լեռներն են *Կորդուաց* լեռինք՝ Հայաստանի մեջ, *Տորոս*, *Անտիտորոս*, *Լիբանան* եւ *Լիբանաներ* կամ *Անտիլիբանան*՝ Փոքր Ասիոյ եւ Ասորւոց երկրին մեջ:

Գլխաւոր գետերն են. *Եփրատ* եւ *Տիգրիս*, որ Ասիական Տաճկաստանի ամենէն մեծերն են, Հայաստանէն կրբղխին, եւ Իրազ Արեւիլի մեջ միանալով՝ *Շադիւշարէս* կկոչուին, եւ Պարսկային ծոց կբափին. Այլս կամ *Գըզըշ շրմագ*, *Իրիս* կամ *Եշիշ շրմագ*՝ որ Փոքր Ասիան կո-

ուղեն եւ Սեւո ծով կրափին . *Որսնա*՝ որ Ասորոց երկրեն կանցնի եւ Միջերկրական ծով կրափի Կիպրոսի դիմաց . *Յորդանան* որ Լիբանան լեռներէ կբղխի՝ Տիրերեայ կամ Գեննեսարեքայ լճին մեջէն կանցնի եւ Մեռեայ ծով կրափի :

Նշանաւոր լճերն են . *Վանայ ծով*՝ Հայաստանի մեջ , *Մեռեայ ծով*՝ Հրեաստանի մեջ , եւ *Թուրքա*՝ Փոքր Ասիոյ մեջ :

Բերքն է եւրոպայի տաք երկիրներու բոլոր պտուղներն եւ բոյսերն առատ եւ ազնիւ , ինչպէս նարինջ , լեմոն , ձիթենի , բուբ , դափնի , բամբակ , ծխախոտ եւ այլն , եւ տեսակ տեսակ ցորեն եւ այլ օգտակար տունկեր : Թէ եւ երկիրը բարեբեր է , բայց մշակութիւնը սակաւ է ասիական Տաճկաստանի մեջ : — Կենդանեաց մեջ նշանաւոր են Անկիւրիոյ այծերն եւ կատուները՝ որոց մազըն երկայն է եւ մետաքսի պէս բարակ , ուղտը , զոմեշը , ազնիւ տեսակ ձի՝ մանաւանդ ի Հայաստան , եւ էշ . երեսելի են նաեւ մետաքսագործ շերամն եւ մեղուն : — Հանքերը շատ հարուստ են Ասիոյ Տաճկաստանի մեջ , մանաւանդ ի Հայաստան , բայց անգործ մնացած . ունի ոսկի , արծաթ , երկաթ , կապար , ամենէն առատն ազնիւ պղինձ ի Փոքր Ասիա , զանազան տեսակ քարեր եւ աղ :

Բնակիչն է իբր 17,000,000 այլ եւ այլ ցեղէ եւ կրօնքէ . սոցա 10 միլիոնը Օսմանցի են , երկու միլիոնը Հայ ,

մեկ միլիոն Յոյն, մեկ միլիոն Արարացի, մեկ միլիոն Քիւրտ, եւ այլն : Լիբանանու մեջ երկու իրարու թշնամի փոքր ժողովուրդներ կբնակին . Տիրազիներն՝ որ մահմետական են, եւ Մարոնիտք՝ որ հռոմեական են : Ընդ ամենը երեք միլիոնի չափ քրիստոնեայք կան Ասիոյ Տաճկաստանի մեջ, որոց մեծագոյն մասն արեւելեան եկեղեցւոյ դաւանութիւնն ունին :


Այս երկրիս քանի մի ժողովուրդներն եւ ազգերը բոլորովին հպատակ չեն Օսմանեան ինքնակալին . Սամոս կրդուոյն բնակիչքը, Քիւրտերը, Տիրազիներն եւ Մարոնիտները միայն հարկատու են : Արարացի բափառական ցեղերը, Թիւրքմեններն եւ Զեյթունի Հայերն անկախ են Օսմանեան ինքնակալութենէն :

Պիտութեանց մեջ շատ ետ մնացած է ասիական Տաճկաստանը . արուեստից կողմանէ փոքր ինչ յառաջացեալ է . անուանի են մետաքսեղէնները, գորգերը, այծի բրդէ շինուած հիւսուածքները, կաշին, տեսակ տեսակ իւղեր եւ երկաթեղէն ու պղնձեղէն գործուածքները, մանաւանդ բրերը : Թէ ցամաքային եւ թէ ծովային վաճառականութիւնը շատ բանուկ է :

Ա. ՓՈՔՐ ԱՍԻԱ.

ԶՄԻՒՆԻԱ կամ ԻԶՄԻՐ (150,000 բն .) համանուն ծոցոյն վերայ, Ասիոյ Տաճկաստանի ամենէն զեղեցիկ, ծաղկած եւ վաճառաշահ քաղաքն է, եւ Եւրոպացւոց Տաճկաստանի հետ արած վաճառականութեան կեդրոնը . նաւահան-

գիտոր բոլոր Միջերկրականի շատ բանուկներն մեկն է :
Զմիւռնիան Ասիոյ շատ հին քաղաքներն մեկն է , որով-
հետեւ կկարծուի թէ Հոմերոս այստեղ ծնած լինի , եւ հին



Զմիւռնիա.

ժամանակներէ ի վեր միշտ անուանի է : — Այս քաղաքիս
մեջ կան 5000-ի ջափ մերագնեայք որ գեղեցիկ ազգասի-
րութեամբ օր ըստ օրէ յառաջ կերբան , ուսումնարաններ ,
տպարաններ եւ ազգային ընկերութիւններ հաստատելով :
Այս քաղաքս սկսած է հրատարակուիլ մեր ազգին առա-
ջին լրագիրն *Արշարոյս Արարատեան* :

Մարմարա եւ Արշիպեղագոս ծովերուն եզերքը նշանա-
ւոր տեղերն են .

Իսկիւտար , Կոստանդնուպօլսոյ դիմաց , որոյ եւ
մասն կհամարուի :

Կիւզգիկոն, Մարմարա ծովուն հարաւակողմն՝ այժմ
աւերակ: Կիւզգիկոնի հարաւակողմն էր գերահռչակ հին
Տրոյիս կամ *Տրոփադա* քաղաքը:

Պերգամոն, հին ժամանակ անուանի էր, եւ մայրաքա-
ղաք էր համանուն քաղաւորութեան. այստեղ հնարուե-
ցաւ մագաղաքը:

ՄԱՆԻՍԱ կամ ՄԱԳՆԵՍԻԱ (40,000 բն.) քաղմամարդ եւ
շատ վաճառաշահ քաղաք. անուանի է քրքումը (*գաֆրուն*):

ԿԻԻԶԷԼԶԻՍԱՐ կամ ԱՅՏԶՆԶԻՍԱՐ (30,000 բն.) վաճառա-
շահ քաղաք:

ՍԱՐԹԻ կամ ՍԱՐԴԻԿԷ, Զմիւռնիոյ արեւելակողմն, հին
ժամանակ Լիւդացոց մայրաքաղաքն էր. հայրենիք Կրե-
սոսի:

Զմիւռնիոյ հարաւակողմը *Այսսուշուզ* գիւղին քով կան
գերահռչակ *Եփեսոսի* աւերակներն, յորում անուանի էր
Արտեմեայ հրաշակերտ տաճարն. այստեղ եղաւ Եփեսոսի
սուրբ ժողովը:

ՊՐՈՒՍԱ (100,000 բն.) Հին ժամանակ Բիւթանիոյ քա-
ղաւորութեան մայրաքաղաքն էր, յետոյ երկար ժամանակ
Օսմանեանց մայրաքաղաքն եղաւ. այժմ՝ Տաճկաստանի
առաջին քաղաքներէն մէկն է վաճառականութեան եւ
գեղեցկութեան կողմանէ. գլխաւոր վաճառքն է գորգեր
եւ մետաքսեայ կերպասներ: Անուանի են քաղաքիս մօ-
տերն եղած ախտաբոյժ հանքային ջրերը:

ԻԶՆԻԲ կամ ՆԻԿԻԱ (5,000 բն.) հին ժամանակն անուա-
նի եւ մեծ քաղաք, այժմ բնկած. այստեղ եղաւ Նիկիոյ

սուրբ ժողովն 325-ին :

ԵԶՆԻՄԻՏ կամ ՆԻԿՈՄԻԴԻԱ (15,000 բն.) Բիսթանիոյ հին մայրաքաղաքը . անուանի քաղաք էր , այժմ ընկած :

ՊՕԼՈՒ (5,000 բն.) վաճառաշահ քաղաք , ունի բերդ մի :

ՊԻԼԷՃԻՔ (4,000 բն.) մետաքսի գործարաններովն անուանի :

ՔԷՅՕԹԱԼԵԱ կամ ԿՈՒՏԻՆԱ (70,000 բն.) Ասիոյ Տաճկաստանի նշանաւոր քաղաքներէն մեկը . արու ե համանուն կուսակալութեան փաշային . վաճառականութեան եւ ճարտարութեան կողմանէ յառաջադէմ չէ :

ԳԱՐԱԼԻՍԱՐ կամ ԱՅԻՈՆ ԳԱՐԱԼԻՍԱՐ (50,000 բն.) ամուր բերդաքաղաք . անուանի ե աֆիոնը :

ԱՆԿԻՐԻԱ կամ ԷՆԿԻՐԻԻ (35,000 բն.) ամուր բերդաքաղաք , հին ժամանակ Գաղատիոյ մայրաքաղաքն էր . անուանի են զինին , մեղրն եւ մանաւանդ այժերուն բուրդը՝ որով ազնիւ ցփսիներ (*սոֆ*) կշինուին . հին շէնքերու մնացորդաց մեջ նշանաւոր է Յզոստոսի փառաւոր տաճարը : — Այս քաղաքիս մօտ 1402-ին Լենկթիմուր մեծ պատերազմով Սամանեանց յաղթեց եւ Սուլդան Պայեզիտը գերի բռնեց :

ՄԱՐՍՈՒԱՆ , հայարեակ փոքրիկ քաղաք . նշանաւոր է մեծ եւ գեղեցիկ եկեղեցին Հայոց որ 1835-ին շինեցաւ :

ԹՈՍԻԱ (20,000 բն.) ճարտարութեան մեջ յառաջադէմ քաղաք :

ՋԱՖՐԱՆՊՕԼՈՒ (15, 000 բն.) քրքումի մեծ վաճառականութիւն ունի :

ՔԱՍԹԷՄՈՒՆԻ (40,000 բն.) մեծ եւ վաճառաշահ քաղաք:

ԱՄԱՍԻԱ (26,000 բն.) Եշիլ ըրմագ գետոյն վերայ, հին ժամանակ Երկրորդ Հայոց երեսելի քաղաքներէն մէկն էր: Մինրդատ զարդարեր էր զայն գեղեցիկ շէնքերով, որոց մնացորդները մինչեւ ցայժմ կան. անուանի է մետաքսը: Այս քաղաքս ծնաւ Ստրարոն մեծանուն յոյն աշխարհագիրը:

ԵՒԴՈՎԻԱ կամ ԹՈԳԱԹ (100,000 բն.) մեծ եւ վաճառաշահ քաղաք. անուանի են պղնձահանքն եւ պղնձէ բանուածքներն ու մետաքսեղէնը:

ՍԵՖԱՍՏԻԱ կամ ՍԸԻԱԶ (30,000 բն.) հին ժամանակ Երկրորդ Հայոց մայրաքաղաքն էր. այժմ անուանի է պղնձահանքն, եւ արոռ եւ փաշայի:

ՂՈՆԻԱ կամ ԻԿՈՆԻՈՆ (30,000 բն.) Գարամանի երկրին զլիսաւոր քաղաքն է եւ վաճառաշահ. անուանի են ղեղին սեկը կամ մարոքինն եւ գորգերը:

ՄԱԼԱԹԻԱ կամ ՄԵԼԻՏԻՆԷ (15,000 բն.) Ասիոյ հին քաղաքներէն մէկը, Երրորդ Հայոց զլիսաւոր քաղաքներէն մէկն էր, եւ ըստ ոմանց յօտարազգի պատմչաց՝ երբեմն բոլոր Հայաստանի մայրաքաղաք. Ժ եւ ԺԱ դարերու մեջ շատ ծաղկեցաւ վաճառականութեամբ:

ՇԱՊԻՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ, Թոզաթի արեսելակողմը, վաճառաշահ քաղաք, ունի ամուր բերդ:

ՍԱՄՈՒՍԱՏ, ՇԱՄՇԱՏ կամ ՍԱՄՈՍՏԻԱ, Եփրատայ մօտ, եր-

բեմն երեւելի քաղաք, այժմ աննշան : Հայք շատ անգամ պատերազմեցան այս տեղ Հոռմայեցւոց հետ :

ԱՐԱՅԿԵՐ (8,000 բն.) եփրատայ մօտ գեղեցիկ եւ բարեբեր երկրի մեջ . բնակչաց մեծագոյն մասն Հայ են :

ԱԿՆ կամ ԷԿԻՆ, փոքրիկ քաղաք՝ զոր Հայք շինեցին, եւ այժմ ճարտարութեամբ եւ վաճառականութեամբ կժաղկի : Ակնայ քովերը շատ հայաբնակ գիւղեր կան :

ԿԵՍԱՐԻԱ կամ ՂԱՅՍԷՐԻ (30,000 բն.) հին Կապադովկիոյ մայրաքաղաքը, մեր Արամ նահապետին շինածն է, եւ Առաջին Հայոց զլխաւոր քաղաքն եղաւ . հին ժամանակ մեծ եւ անուանի քաղաք էր, այժմ երեւելի է վաճառականութեամբը :

ՄԱՐԱՇ կամ ԳԵՐՄԱՆԻԿ (20,000 բն.) երբեմն մեր Ռուբինեան բազաւորաց ձեռքն էր . այժմ արո՞ւ է փաշայի եւ անուանի է վաճառականութեամբը . Ամանոս լեռան վերայ ամուր բերդ ունի :

ԱՅՆԹԱՊ կամ ԱՆԹԱՊ (20,000 բն.) ճարտարութեամբ կժաղկի . բնակչաց կեսն Հայ են :

Մարաշու հիւսիսային արեւմտակողմն է ԶԷՅԹՈՒՆ գաւառն որ լեռնային վիճակ մի է, ուր կորովի եւ ազատասեր Հայեր կբնակին՝ ազատ Յամանեան տերութենէն, որ շատ անգամ Մարաշի փաշային զօրքերը կտորեցին ու վանեցին իւրեանց երկրէն, ինչպէս նաեւ 1862-ին : Զէյթունցոց զլխաւոր պարապմունքն է երկրագործութիւն եւ երկաքաղործութիւն որ իւրեանց երկրէն կհանեն եւ

մերձակայ գաւառները կտանին կծախեն : Գլխաւոր քաղաքն է ԶԷՅԹՈՒՆ :

Զէյրունի հիւսիսային արեւմտակողմն է ՀԱՃԻՆ. լեռնային վիճակը դարձեալ Հայերու ձեռք, որ ինքնակամ Խօզան-օղլուի պաշտպանութեան տակ մտած են : Հաճինցիք Զէյրունցիներէն բազմաքիւ են, եւ երկիրներն ալ նոցանէ մեծ է :

Մարաշի քովերն է *Զամանդի* կամ *Ծամնդաւ*, որ երբեմն նշանաւոր էր, եւ զոր Յոյնք Գազիկ բազաւորին տուին՝ նորա երկիրներուն տիրելէն յետոյ :

ԿԻՒՄԻՒՇԻԱՆԷ (8,000 բն.) լերանց մեջ, արծաթի, կապարի եւ սղնձի հանքերովն անուանի :

ՏՐԱՊԵԶՈՆ (50,000 բն.) հին եւ ամուր քաղաք, եւ Սեաւ ծովու վերայ ժամանեան տերութեան առաջին վաճառաշահ նաւահանգիստը : Երկար ժամանակ Յունաց կայսերաց մէկ ճիւղն այստեղ նստաւ :

ԲԻՐԵՍՈՒՆ կամ ԿԵՌԱՍՈՍ (4,000 բն.) Սեաւ ծովու վերայ վաճառաշահ նաւահանգիստ եւ ամուր քաղաք : Մեծին Միհրդատայ որդին Փառնակ՝ գեղեցիկ շէնքերով զարդարեք էր քաղաքս, որով եւ կկոչուէր *Փառնակիս* :

ՍԻՆՈՊ (10,000 բն.) հին Պափղագոնիոյ մեջ, Սեաւ ծովու վերայ վաճառաշահ նաւահանգիստ : Այս քաղաքս ծնաւ Դիոզինէս Շնական ըսուած փիլիսոփան :

ԷՐԷՎԼԻ կամ ՀԵՐԱՎԼԵԱ, Պապա պուռնու հրուանդանին մօտ հին եւ նշանաւոր քաղաք :

ՍԱՄՍՈՆ (5,000 ըն.) Սեա. ծովու վերայ վաճառաշահ նաւահանգիստ:

ՍԱԹԱԼԻԱ կամ ԱՏԱԼԻԱ (10,000 ըն.) Միջերկրականի վերայ վաճառաշահ քաղաք. հին հոյակապ շէնքերու աւերակներ ունի:

ՏԱՐՍՈՆ կամ ԹԱՐՍՈՒՍ կամ ԹԱՐՍԻՍ, եւ ըստ ոմանց ԹԱՐՇԻՇ (10,000 ըն.) հին եւ անուանի քաղաք, գիտութեանց եւ վաճառականութեան մեջ յառաջադէմ, Կիւղնոս գետոյն վերայ՝ ուր Մեծն Աղեքսանդր մահուանէ ազատեցաւ եւ Փրեղերիկոս Պարպարոսսա խղղուեցաւ: Հայրենիք է քաղաքս Պոզոս առաքելոյն, որով *Տարսոնեան յիող* կոչուեցաւ, եւ մեր Ներսէս Լամբրոնացին այս տեղ արքեպիսկոպոս նստաւ:

ԼԱՄԲՐՈՆ, ամուր բերդ, ուր ծնաւ Ներսէս Լամբրոնացի մեր հոգեշունչ հայրապետը:

ԱՏԱՆԱ (15,000 ըն.) Սարոս գետոյն վերայ վաճառաշահ քաղաք եւ արոռ. փաշայի, Ռուբինեանց ժամանակ երեւելի էր:

ՍԻՍ (5,000 ըն.) Ռուբինեանց մայրաքաղաքն էր, այժմ մեծ մասն աւերակ. արոռ. Սսոյ կարուղիկոսի Հայոց:

ԱՆԱՐՉԱԲԱՅ կամ ԱՆԱԻԱՐՉԱ, Սսոյ հարաւակողմն հին եւ անուանի քաղաք էր, այժմ աւերակ: Հայրենիք Գրիգորի Անաւարզեցւոյ:

ԲԱՐՉՐԲԵՐԴ, ըստ նոր հնչման *Պերսպերք*, ամուր բերդաքաղաք, ըայց անբնակ: Հայրենիք Վարդան վարդապետի:

ՀՈՌՄԿԼԱ կամ ՌՈՒՄԳԱԼԷ, Եփրատ գետոյն մօտ ամուր բերդ էր. երկար ժամանակ այստեղ նստան մեր ընդհանուր կաթողիկոսք, յորս ամենէն երեսելին է Ներսէս Շնորհալի, որոյ եւ գերեզմանն այստեղ է:

Գ. ՄԻՋԱԳԵՏԻ (*).

ՄԾԲԻՆ կամ ՆԻՍԻՊ, շատ հին քաղաք, Արշակունեաց թագաւորութեան սկիզբը Հայաստանի մայրաքաղաքն էր: Այս քաղաքս արքեպիսկոպոս նստաւ Սուրբն Յակոբ Մծբրնայ՝ մեր Լուսաւորչի քեռորդին. այժմ շատ ընկած է: Սորա մօտ 1839-ին Օսմանեանք չարաչար յաղթուեցան յեգիպտացւոց:

ՄԷՐՏԻՆ (20,000 բն.) ամուր բերդաքաղաք եւ վաճառաշահ:

ՄՈՒՍՈՒԼ (60,000 բն.) Տիգրիսի քով մեծ եւ վաճառաշահ քաղաք եւ արոռ կուսակալի. անուանի են բամբակե գործուածքներն որ քաղաքիս անուամբը *մուսլիս* կկոչուին: — Մուսուլի մօտ է *Նունիս* գիւղն, որոյ քովերըն են գերահռչակ *Նինուէ* քաղաքին աւերակները՝ Տիգրիսի մօտ:

ԵԴԵՍԻԱ կամ ՌԻՌԶԱ (55,000 բն.) մեր Արգար թագաւորին նորոգած եւ արոռանիստ քաղաքը, անուանի է

(*) Հայաստանը եւ Քիւրտիստանը տես ի Հայաստան:

վաճառականութեամբը : Այս քաղաքիս մօտ էր *Խառանկամ Ուր*՝ հայրենիք Արրահամ նահապետին . նմանապես այս քաղաքիս քովերն յաղբուեցաւ եւ սպանուեցաւ Կրասոս Հայոց եւ Պարթեաց զօրքերէն :

Ե. ԻՐԱԳ ԱՐԷՊԻ.

ՊԱՂՏԱՏ (100,000 բն.) Տիգրիսի վերայ, Ասիոյ Տաճկաստանի մեծ եւ շատ վաճառաշահ քաղաքներէն մէկը :

ՊԱՍՐԱ (60,000 բն.) Շաղիւյարեալ գետոյն աջակողմը, շատ վաճառաշահ քաղաք, բայց օդն անատողջ :

Այժմու Պաղտատ քաղաքին մօտ Եփրատ գետոյն քով հրաշակերտ ԲԱԲԵԼՈՆԻ քանի մի աւերակները կան Հիլլէ գիւղին մէջ : Բարեւոնի մօտ Սելեւկոս *Սելեւկիա* անուանի քաղաքը շինեց . յետոյ Պարթեւք Սելեւկիան բողոցին եւ քովը ՏԻԶԲՈՆ կամ ԿՏԵՍԻՓՈՆ քաղաքը շինեցին եւ շէնցուցին . Արարացիք Տիգրոնը բողոցին եւ քովը հին ՊԱՂՏԱՏ քաղաքը շինեցին որ միջին դարուց մէջ բոլոր աշխարհիս առաջին քաղաքն եղաւ գիտութեանց, գեղեցկութեան եւ հարստութեան կողմանէ :

ՄԷՇԷԷՏ ԱԼԻ եւ ՄԷՇԷԷՏ ՀԻԻՍԷՅԻՆ, Այլի եւ Հիւսէյին մանմետական աղանդաւորաց գերեզմաններովն անուանի :

ՔԻԻՖԻ կամ ՔՈՒՖԱ, Արարացւոց ժամանակ գիտութեանց մէջ յառաջադեմ, այժմ աւերակ :

ԽՈՒՌՆԱ (6,000 բն.) Եփրատայ եւ Տիգրիսի գետախառնուանքը, վաճառաշահ քաղաք :

Զ. ԱՍՈՐԻՔ.

Ասորոց երկրին մեջ Տաճիկ, Հայ, Հրեայ եւ ուրիշ ազգերէ գատ կան նաեւ. *Էնսարի* կամ *Նուսարի* կոչուած հեթանոս ազգը, *Մարունիտք*՝ քրիստոնեայ, *Տիւրքի*՝ իսառն կրօնք, *Թիւրքմէն*՝ վրանարնակ, *Քիւրտ*, *Պետեվի Արարացիք*, *Եզիտի*՝ հեթանոս եւ դիւապաշտ եւ անհաշտ թշնամի Տաճկաց, *Սէքիզ պըշըգ*՝ կենդանապաշտ, եւ այլն :

ՀԱԼԻՊ կամ ԲԵՐԻԱ (125,000 բն.) հին քաղաք եւ Տաճկաստանի առաջիններէն մեկը՝ մեծութեան, ճարտարութեան եւ վաճառականութեան կողմանէ. 1822-ին մեծ մասը զետնաշարժով կործանեցաւ :

ԱՆՏԻՈՔ կամ ԱՆԹԱՔԻԱ (10,000 բն.) Որոնտի վերայ, երբեմն 700,000 բնակիչ ուներ եւ Ասիոյ առաջին կարգի քաղաքներէն մեկն էր. այժմ շատ ընկած է :

ԻՍԲԷՆՏԷՐՈՒՆ կամ ՓՈՔՐ ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ, Միջերկրականի վերայ շատ վաճառաշահ նաւահանգիստ, բայց օդն անատոզ :

ԼԱԹԱՔԻԱ կամ ԼԱԻՈՒԻԿԻԱ (6,000 բն.) գոարճալի երկրի մեջ, Միջերկրականի վերայ վաճառաշահ նաւահանգիստ ունի :

ՀԷՄՍ կամ ԵՄԵՍԱ (20,000 բն.) վաճառաշահ քաղաք, անուանի էր հին ժամանակները սորա մեջ Արեգական տաճարը :

ՀԱՄԱ (40,000 բն.) մեծ եւ վաճառաշահ քաղաք :

ԹԱՐԱՊՈԼԻՍ կամ ԹՐԻՓՈԼԻ կամ ՏՐԱՊՈԼԻՍ (16,000 բն.) վաճառականութեամբը նշանաւոր :

ԴԱՄԱՍՅՈՍ կամ ՇԱՄ (200,000 բն.) աշխարհիս շատ հին քաղաքներէն մեկը, եւ հին ժամանակներէ մինչեւ ցայժմ միշտ մեծ եւ անուանի. զեղեցիկ եւ զուարճալի զիրք ունի. նշանաւոր են այս քաղաքիս բրդէ եւ քամքակէ գործուածքներն որ *դամասկեան* կկոչուին. ճարտարութեան կողմանէ շատ յառաջադէմ է: Նշանաւոր են այս քաղաքիս մեջ ու քովերն եղած քրիստոնէից կոտորածները 1860-ին:

ՊԷՅՐՈՒԹ կամ ԲԻԻՐԻՏՈՆ (12,000 բն.) անուանի քաղաք եւ Ասորոց երկրին առաջին վաճառաշահ նաւահանգիստը:

ՍԱՅՏԱ, հին *Սիդոն* քաղաքին քովերը՝ վաճառաշահ:


ՍՈՒՐ կամ ԾՈՒՐ, հին ՏԻՐՈՍ քաղաքն է որ երբեմն աշխարհիս առաջին վաճառաշահ եւ հարուստ քաղաքն էր:

ԱՔՔԵԱ կամ ՊՏՂՈՄԱՅԻՍ, հին ժամանակները եւ այժմ եւս անուանի քաղաք. ամուր բերդ, եւ Ասորոց երկրին վաճառաշահ նաւահանգիստներէն մեկն է, Կարմեղոս լեռան մօտ:

ՊԱԱԼՊԷՔ, ՉԵՂԻՈՒՊՕԼԻՍ կամ ԱՐԵԳ ՔԱՂԱՔ, հին ժամանակները զեղեցիկ եւ հրաշակերտ քաղաք, այժմ բոլորովին աւերակ է եւ մեծակառոյց տաճարներու եւ այլ շէնքերու մնացորդներ ունի:

ՊԱԼՄԻՐԱ կամ ԹԱՏՄՈՐ, Ասորոց անապատին մեջ՝ Սողոմոնի շինած քաղաքն է, երբեմն մեծ եւ հարուստ. Արեղիանոս կայսրն աւերակ դարձուց, եւ մնացորդները մինչեւ ցայժմ կեցած են աւազի վերայ:

ՆՐՈՒՍԱՂԷՄ (30,000 բն.) Պաղեստինու կամ Հրեաստանի մայրաքաղաքը, հին ժամանակ մեծ, բազմամարդ, ծաղկած եւ երեսելի քաղաք էր, այժմ ընկած . միայն մեծ ուխտատեղի եւ ամենայն քրիստոնէից՝ Քրիստոսի Տեառն մերոյ սուրբ գերեզմանին եւ ուրիշ տնօրինական տեղերուն համար : Շենքերու մեջ նշանաւոր է սուրբ գերեզմանին վերայ շինած տաճարն , յորում Հռոմեականք, Հայք եւ Յոյնք միայն իրաւունք ունին պատարագ մատուցանելու . գեղեցիկ է եւ Էօմերի մզկիթը՝ Սողոմոնի տաճարին տեղը շինած : Արո՛ւ եւ քաղաքս Հայ , Յոյն եւ Հռոմեական Պատրիարքաց : — Երուսաղեմի մօտերն են *Չիքեկեաց* լեռը , *Գերսելմանի* , *Բերսանիա* , *Երիքով* , *Բերդեհեմ* , ծովեզերքն ալ Գալիլիա երկրին մէջ՝ *Կանա* , *Կափառնատում* ,



Երուսաղեմ.

Գեներալներ, նազարեր, եւ այլն, որ Քրիստոսի ժամանակ անուանի եղան, եւ երբեմն քաղաքներ եւ գիւղաքաղաքներ էին, այժմ կամ զեղ են եւ կամ միայն անունները մնացած են :

ՆԱՊԼՈՒՍԱ կամ Սիւրքիմ, անուանի քաղաք :

ԳԱԶԱ, նաւահանգիստ :

ԵԱՅԱ կամ ՅՈՊՊԷ, բանուկ նաւահանգիստ եւ շատ հին քաղաք :

Է. ԿՂԶԻՔ.

ՄԱՐՄԱՐԱ, համանուն ծովու մեջ, մարմարիոնն անուանի է :

ԹԵՆԵՏՈՍ, Չանազգալեսի նեղուցին մօտ :

ՄԻՏԻԼԷ, որ հին ժամանակ Լեսրոս կկոչուէր, առատ գինի եւ ձիբենի ունի :

ՔԻՈՍ կամ ՍԱԳԸԶ ԱՏԱՍԸ, երբեմն Արշիպեղագոսի կրղզեաց ամենէն ծաղկեալն էր, բայց 1822-ին Յամանեանց դէմ ապստամբելով՝ աւերեցաւ եւ անմարդացաւ. անուանի է մշկահոտ գինին :

ՍԱՄՈՍ, շատ բարերեր կղզի :

ՊԱՏՄՈՍ, ուր Յովհաննէս Աւետարանիչը Յայտնութեան գիրքը գրեց :

ՀՌՈՒՌՈՍ, հին ժամանակն անուանի էր հարստութեամբը, ծովային զօրութեամբը, քաղաքակրթութեամբն եւ

Ապողոնի հսկայածեւ. արձանովն . իսկ միջին դարուց ժամանակ՝ Սրբոյն Յովհաննու ասպետաց այնտեղ բնակելովը երեւելի եղաւ : Սուլդան Սիւլեյման տիրեց կղզւոյս 1523-ին :

ԿԻՊՐՈՍ, անուանի է զինին . 1191-ին Հռիփարտոս Առիւծասիրտն տիրեց կղզւոյս, 240 տարի Լուսինեան ցեղի քաղաւորաց իշխանութեան տակ մնաց, յետոյ Վենետկեացոց անցաւ, սոցա ձեռքէն ալ Օսմանցիք առին զայն 1571-ին : Բնակիչն է իբր 100,000. զլիսաւոր քաղաքն է *Նիկոսիա* կամ *Լեւքոշեա* :



ՀԱՅԱՍՏԱՆ.

Հայաստանը կամ Մեծ Հայքը, պանծալի եւ ցանկալի երկիր մեր հայրենեաց, որ իւր գեղատեսիլ վայրացը, բազմատեսակ դրիցը, բազմաբխ լեռանցն եւ գետոց ու լճերու բազմութեանը համար *Արեւելեան Զուխերի* կոչուած է ժամանակիս մեծանուն աշխարհագիրներէն ու ճանապարհորդներէն, հին աշխարհի զրեթէ մեջտեղն է . կտարածուի հիւսիսային լայնութեան $36^{\circ},40'$ -էն (Ռեվանտըզ լեռինք որ Կորդուաց մեկ ճիւղն է), մինչեւ $41^{\circ},50'$ (Ախլցխայի հիւսիսակողմերը), եւ արեւելեան երկայնութեան 36° -էն (Եփրատ գետը Սամուսատայ քովերը) մինչեւ 47° (Սալեան, Կասպից ծովուն եզիրքը) : Սահմաններն են հիւսիսէն Սեաւ ծով, Կուրիկէ, Իմերեթ, Վրաս-

տան եւ Շիրուան . արեւելքէն Կասպից ծով եւ Պարսկային Քիւրտիստան . հարաւէն Քիւրտիստան եւ Միջագետք . արեւմտքէն Փոքր Ասիա՝ յորմէ կգատուի եփրատ գետով՝ մինչեւ Ակն , եւ անտի Տօրոս լեռանց մէկ ճիւղովը մինչեւ Սեաս ծով :

Տարածութիւնն է իբր 4,400 բիւրմեքր քառակուսի , այսինքն Գաղղիոյ հինգ մասին չորսին չափ . իսկ Փոքր Հայքն եւ Կիլիկիան եւս երե հետն առնումք , Հայաստանի տարածութիւնը Գաղղիոյ չափ եւ աւելի եւս կլինի :

Հայկազանց բազաւորութեան ժամանակ Հայաստանի ինչ քաղաքական բաժանմունք ունեցածն որոշ կերպով յայտնի չէ . Արշակունեաց ժամանակ տերութիւնը տասնեւհինգ նահանգ կամ նախարարութիւն կրածանուէր , որ են . *Բարձր Հայք* , *Զորրորդ Հայք* կամ *Ծովսաց աշխարհ* , *Աղձնիք* , *Տուրուքերան* , *Մոկք* , *Կորնայք* , *Պարսկահայք* , *Վասպուրական* , *Սիւնիք* , *Արցախ* , *Փայտակարան* , *Ուտի* , *Գուգարք* , *Տայք* եւ *Այրարատ* : Այս 15 նահանգներս այլ 190 գաւառ կրածանուէին : Իսկ այժմ Հայաստանը երեք ազգաց ձեռքը լինելով՝ երեք գլխաւոր մասն կրածանուի , որ են . *Ռուսաց Հայաստան* , *Պարսից Հայաստան* եւ *Օսմանեան Հայաստան* : Իւրաքանչիւր տիրող ազգ իւր մասն այլ եւ այլ գաւառներ բաժանած է , ինչպէս որ յետոյ կտեսնեմք :

Հայաստանի երկիրն ընդարձակածառայ լեռնադաշտակ մի է , որ հազար մեքրէ մինչեւ 3,000 մեքր բարձրութիւն

ունի ծովու երեսէն : Այս լեռնաղաշտակիս մեջ շատ տեղ
բարձրաբերձ լեռներ եւ լեռանց շարքեր կտեսնուին :
Հայաստանը երկու մեծամեծ լեռանց շարքերու մեջ մնա-
ցած է , որ են հիւսիսային արեւելակողմը *Կովկաս* լեռինք ,
եւ հարաւային արեւմտակողմը *Տօրոս* լեռինք . իսկ Հայ-
աստանի լեռները կարելի է այս երկու զօտիներու շա-
րունակութիւն համարել , որ Հայաստանի ամեն կողմերը
կտարածուին այլ եւ այլ ճիւղերով :

Գլխաւոր լեռինքն են . ՄԱՍԻՍ տիեզերահոջակ լեռը
Հայաստանի մեջտեղերը Ռուսաց մասին մեջ , ըստ Եւրո-
պացւոց *Արարատ* , եւ ըստ Օսմանեանց *Աղլր տաղ* , որ
5281 մեքր բարձրութիւն ունի ծովու երեսէն . Հայաս-
տանի լեռանց մեջ ամենէն բարձրն է եւ յաւերժական
ձիւնով ծածկած . Մասիսն առանձին լեռ է ընդարձակ
լեռնաղաշտի վերայ բարձրացած , եւ երկու կատար
ունի , որ կկոչուին *Մեծ Մասիս* եւ *Փոքր Մա-
սիս* (4001 մեքր) : *Արագած* , Արարատեան լեռանց մեկը ,
որ 4300 մեքր բարձրութիւն ունի եւ Ռուսաց մասին մեջն
է . *Խաչաքար* կամ *Վարսամբէկ*՝ Խաղտեաց (ճեմիլ տա-
ղը) լեռանց մեջ՝ որ իբր 4,000 մեքր բարձրութիւն ունի ,
եւ Օսմանեանց մասին մեջն է , Սեւ ծովուն մօտերը : *Կա-
պոյտ* լեռն (Կեօք տաղ) Օսմանեանց մասին մեջ՝ Կար-
սի հարաւակողմն , իբր 3500 մեքր բարձրութիւն ունի .
Շուշար լեռինք՝ Վանայ ծովուն հիւսիսային արեւմտա-
կողմն , *Գեղամայ* կամ *Գեղայ* լեռինք (Ագտաղ)՝ Սեւա-
նայ լիճը սլատող լեռանց մեջ՝ 3730 մեքր բարձր : *Մու-*

րով՝ 3750 մեքր բարձր՝ Գանձակի արեւմտակողմը : *Զիարէր տաղ*, Դիզափայտի լերանց մեջ, Մասեաց արեւելակողմը : *Կասպուռնիկ* կամ *Գալիուքնաղ*, Հին Նախիջեանի արեւելակողմը, 2916 մեքր : *Սեւեղան*, Պարսից մասին մեջ Դավրիժու արեւելակողմը՝ 3970 մեքր : *Սեպուհ* կամ *Գոհա-նամ*՝ Օսմանեան մասին մեջ, Երզնկայի արեւմտակողմը : *Պինկեօլ*՝ Էրզրումի հարաւակողմը իբր 3200 մեքր : *Ծաղկաց լեւոն* կամ *Աղա տաղ*, Մասեաց արեւմտակողմը, որոյ բարձրութիւնն է իբր 3500 մեքր. սորա հիւսիսակողմըն է *Նոյատ* լեռը : *Սիփան տաղ*՝ Վանայ ծովուն հիւսիսակողմը, յաւերժական ձիւնով ծածկած. քերես Մասիսէն յետոյ Հայաստանի ամենէն բարձր լեռը : *Վարագ* բարձր լեռը, Վանայ ծովուն արեւելակողմը : *Գրգուռ* կամ *Ներքուրայ* լեռ, Վանայ ծովուն արեւմտակողմը : *Կորդուաց* լեռինքն այժմ Գիւրտերու ձեռք լինելով անձանօք մնացած են, բայց կերեսի քէ մեջը մինչեւ 4500 մեքր բարձրութիւն ունեցող լեռ. կայ : Նմանապէս Որմեայ լճին արեւմտակողմը բարձրաբերձ լեռներ կան, յորս *Ճաւուր տաղ* լերան համար կկարծուի քէ Մասիսի բարձրութիւնն ունենայ կամ անկէ փոքր ինչ ցած լինի : *Սիւհենտ* կամ *Սոհուհեղ*՝ Դավրիժու հարաւակողմը, իբր 3000 մեքր բարձրութեամբ, եւ սորա արեւմտակողմը *Տեմիր-տաղ*, որոյ բարձրութիւնն է 3750 մեքր : Սոհուհեղ լեռը քէ եւ Հայաստանէն դուրս է, բայց նորա ճիւղերը Հայոց սահմանները տարածուածին համար յիշեցինք այս տեղ :

Հայաստանի դաշտային կտորներն են. ձորոխի եզեր-

քը, Ախլցխայի, Երզրումի, Երզնկայի քովերը, Այրարատեան ընդարձակ դաշտերը, Արածանի գետոյն եզերքը, վանայ ծովուն արեւելեան եւ հարաւային կողմերը, Հայոց Միջագետաց հարաւակողմը, Աղուանից երկրին կողմերը, եւ այլն : Բայց, ինչպէս որ ասացինք, այս ամեն դաշտերս իրարմէ աւելի կամ պակաս բարձրութեամբ լեռնադաշտակներ են : Հայաստանի երկրին ամենէն ցած կողմերն են Միջագետաց մեջ, եւ սակայն այն եւս ծովու երեսէն 620 մեթրէն աւելի ցած չէ :

Հայաստանի հողն ընդհանրապէս շատ բարեբեր է, մանաւանդ հովիտներն ու լեռնադաշտակները . իսկ լեռանց ծայրը սաստիկ ցրտութեան պատճառաւ անբեր : Անապատ կոչուելու եւ կամ ճահիճներով ծածկուած երկիր զրեբէ ամենեւին չկայ Հայաստանի մեջ : Տեղ տեղ, մանաւանդ քանի մի լեռանց վերայ հողը կրային է եւ աղային : Հայաստանի լեռանց մեծ մասը ժամանակաւ հրաբուխ եղած են, ինչպէս որ յայտնի է նոցա զազաթներուն եւ կողերուն ճեղքուած եղածէն, եւ շատ տեղ վրաները խանձողի կամ լաւայի նիւթեր զտնուածէն : Այս հրաբուխներուն մեջ կերեւի թէ ամենէն մեծը Արագածն էր, որովհետեւ նորա կողերը միւս լեռներէն աւելի ճեղքերունին : Երկու Մասիսներն ալ նոյն կազմուածքն ունին, եւ Մեծ Մասիսն արդէն 1840-ին յայտնի արաւ որ ժամանակաւ հրաբուխ եղած է :

Հայաստանը Եւրոպայի հարաւակողմն ընկած երկիր-

ներու լայնութիւնն ունենայով՝ օդը շատ առողջարար է, եւ ամառը շատ գուարճայի. բայց ծովու երեսէն շատ բարձր եղածին համար՝ ձմեռը սաստիկ է: Յղոյն շատ առողջարար եղածն է պատճառ որ Հայաստանցիք զօրաւոր կազմուածք կուսենան:

Հայաստանի լեռներէն բազմաքիւ գետեր ու գետակներ կրղխին որ իւր չորս դին եղած ծովերն եւ կամ մեջի լճերը կրափին. միայն Միջերկրական ծովը բուն Հայաստանէն գետ չբափիր: Գլխաւոր գետերն են. *Եփրատ*՝ Արեւմտեան Ասիոյ ամենէն մեծ գետը, որ երկու ճիւղերէ ձեւացած է. *քուէ Եփրատ* կամ *Գարաւուն* որ Սպեր գաւառին լեռներէն կրղխի, Էրզրումի հիւսիսակողմը, դէպ ի հարաւային արեւմուտք կրնբանայ մինչեւ Ակն, անտի կղաւնայ դէպ ի հարաւ եւ կրածանէ Մեծ Հայքը Փոքր Հայքէն. Խարբերդի հիւսիսային արեւմտակողմը կրնդունի երկրորդ ճիւղն որ է *Արեւելեան Եփրատ* կամ Արածանի, ըստ նոր կոչման *Մուրատ*, որ Ծաղկաց լեռնէն կրղխի եւ դէպ ի արեւմուտք կվազէ: Եփրատ գետը Արածանի գետոյն հետ միանալէն յետոյ, Սամուսատ քաղաքէն վար Հայաստանի սահմաններէն կհեռանայ, եւ դէպ ի հարաւային արեւելք շտկուելով՝ Խուռնա քաղաքին քովերը Տիգրիսի հետ կխառնուի, եւ երկուսը միատեղ կկոչուին *Շաղիւղարեւ*, որ Պասրայի մօտ այլ եւ այլ բերաններով Պարսկային ծոց կբափի. *Տիգրիս* կամ *Շաղ*, որ Սիւանմատէն լեռներէն կրղխի, դէպ ի հարաւ կվազէ եւ Եփրա-

տայ հետ կմխանայ . *Կուշր*՝ որոյ աղբիւրն է Կարսի հիւսիսակողմն , նախ դեպ ի հիւսիս կընթանայ , կմտնէ Վըրաստան , յետոյ կղառնայ դեպ ի արեւելք եւ հարաւային արեւելք , Կասպից ծովուն մօտերը Երասխը մեջն ընդունելով՝ ծովը կբափի շատ բերաններով . *Երասխ*՝ որ Պինկոյ լեռանց հիւսիսակողմէն կրղխի , նախ դեպ ի հիւսիսային արեւելք կընթանայ , յետոյ դեպ ի արեւելք , Մասիսի հիւսիսային կողմէն կշտկուի դեպ ի հարաւային արեւելք , յետոյ դարձեալ հիւսիսային արեւելք մինչեւ Կուրգետը . *Ճորոխ* կամ *Ծորոխ* , որ Սպերի լեռներէն կրղխի , եւ ընդհանրապէս դեպ ի հիւսիս ընթանալով՝ Պարումի մօտ Սեաւ ծով կբափի :

Եփրատայ գլխաւոր բազուկն է Հայաստանի մեջ՝ ձախակողմէն *Պինկոչուն* : Տիգրիսի գլխաւոր բազուկներն են Հայաստանի մեջ , *Պարմաւուն* , *Բաղիշուն* գետ , *Սևրա* կամ *Պոհրաւ*՝ որ Տիգրիսի արեւելեան ճիւղը կհամարուի , եւ *Զապ*՝ որոյ աղբիւրը Հայաստանի մեջ է : Երասխայ գլխաւոր ճիւղերն են . *Ախուրեան* կամ *Արփաչայ* , *Մեծաւօր* , *Հրազդաւ* կամ *Զակի* , *Տղմուտ* , *Կոտոր* կամ *Կարմիր* , *Տերեւ՝յի քուն* , եւ այլն : Ճորոխի գլխաւոր բազուկներն են՝ ձախակողմէն *Սարմաւուն* , իսկ աջակողմէն *Թորքուն* , *Օլբի* , *Արտաւուն* , եւ *Անարա* :

Հայաստանը երեք մեծ լիճ ունի որ են . *Վանայ* , կամ *Բզնունեաց* ծով , *Սևաւայ* կամ *Գեղամայ* ծով , եւ *Որմնայ* ծովակ . սոցա մեջ բազմաքիւ գետեր եւ գետակներ

կրափին, այս երեք մեծ լճերէս զատ՝ շատ մանր լճեր
եւս կան, որոց գլխաւորներն են. *Չըրտըր* կամ *Հիւսի-*
ասլին ծովակ՝ Կարսի հիւսիսակողմը. *Փառաւան*, *Չըլտը-*
րի մօտ. *Արփա կէօշ*՝ յօրմէ կըղխի Ախուրեան գետը,
Ախալքալաքի արեւելակողմը. *Պալըղը*, Մասիսի արեւ-
մտակողմը. *Նագուկ լին*, Վանայ ծովուն հիւսիսային արեւմտակողմը.
Հառչակ, Վանայ արեւելակողմը. *Կէօշ-*
նիւք կամ *Ծովք*, Խարբերդի հարաւակողմը:

Հայաստանը բուսաբերութեան կողմանէ շատ երեւելի
է՝ օդոյն բարեխառնութեանը, հողոյն բարեբերութեանը եւ
ջրոց առատութեանը համար. միայն քէ ձմեռուան սաստ-
կութեանը պաճառաւ՝ եւրոպայի տաք երկիրներու քոյսե-
րը չունի ամեն տեղ, եւ շատ տեղ անտառը սակաւ է: Ան-
տառաց մեջ եւրոպայի գրեթէ ամեն տեսակ փայտերն ու-
նի: Հայաստանի միւս քոյսերն աւ ամեն տեսակ հասա-
րակ պտուղները ազնիւ եւ առատ են, որոց մեջ բուն Հայ-
աստանի բոյս կհանարուի ծիրանը. ունի նաեւ ազնիւ եւ ա-
ռատ ցորեն, խաղող՝ մանաւանդ հարաւակողմերը, նուռ,
քրենի, շատ կողմերը բամբակ, ծխախոտ, գխտոր. արեւե-
լակողմը բրինձ. Ադուանից կողմերը ձիթենի եւ բզենի,
եւ այլն. նշանաւոր են նաեւ Հայաստանի բազմատեսակ
եւ առատ գեղեցիկ ծաղիկները, յորս երեւելի է *աղբրաց*
արիւն կոչուած գեղատեսիլ ծաղիկը, բազմաթիւ արմատի-
քրն որ դեղերու կգործածուին, *լուշտակ*՝ որոյ արմատը
մարդու կնմանի, խաշնդեղը, գազպեն՝ որ տեսակ մի մա-
նանայ է, որդան կարմիրը տուող բոյսը, յօրմէ գեղեցիկ

ծիրանի ներկ կշինուի . իսկ պարարտարոյս արօտներ ամեն կողմը կգտնուին , եւս եւ լեռներու վերայ : Հանքերու մեջ ունի տեսակ տեսակ քարեր , առատ աղ , մարմարիտն , սորփիւր , բիւրեղ , հայկառ (քիւրմենի) . մետաղաց մեջ երկաթն եւ պղինձն առատ է , ունի նաեւ կապար , ոսկի , արծար , մագնիս , բայց երեսէ ձգուած են : — Կենդանեաց մեջ ունի բազմատեսակ բռչուններ , ինչպէս մեծամեծ կարապներ , վայրի սագեր ու բաղեր , լորամարգի , կաքառ , փասիան , մեծամեծ աղաւնիներ , տատրակ , արագիլ , կրոունկ , եւ այլն : Վայրի կենդանեաց մեջ ունի բազմաբիւորսի կենդանիներ , ինչպէս եղնիկ , այծեամն , վայրի խոզ , եւ այլն . ունի նաեւ վագր , ինձ , բորենի , արջ , գայլ , աղուես , բայց առիւծը սակաւ է : Ընտանի կենդանիները խիստ շատ են Հայաստանի մեջ . սոցա մեջ ալ նժոյգ ձին երեսելի է գեղեցկութեամբն եւ ուժովը , եւ պարարտաղմակ ոչխարները : Լճերէն եւ գետերէն շատ տեսակ ձկներ կը հանուին : Նշանաւոր է նաեւ Հայաստանի մեղուն՝ որ առատ եւ բնտիր մեղը կուտայ շատ տեղ , եւ շերամն՝ յորմէ առատ մետաքս կշինուի : Վնասակար կենդանեաց մեջ ունի մեծամեծ կարիճներ , բազմատեսակ օձեր՝ որ ամառը կարգէ դուրս կշատնան , եւ մժեղ :

Հին ժամանակները Հայաստանի բնակիչքը մեր Հայկ նահապետին սերունդներն էին . յետոյ՝ մանաւանդ Արշակունեաց ժամանակ , հետզհետէ գերութեամբ կամ գաղթելով եկան Հայաստան հաստատուեցան Փոխգացիք , Կապաղովկացիք , Սկիւրացիք , Մարք , Քաղդէացիք , Ասո-

րեստանցիք, Չինք, Հրեայք, Պարսեք, Հնդիկք, Բուլ-
ղարք, Ալանք, Վրացիք, Յոյնք, եւ այլն : Սոքա յառաջ
խրեանց ազգութիւնն ու կրօնքը պահեցին . բայց յետոյ
ամենքը Հայոց լեզուն, սովորութիւնքն եւ կրօնքն ընդու-
նեցան, եւ այնպէս ձեւացաւ այժմու հայ ազգը : Հայաս-
տանի առողջ օղոյն, բարեբեր հողոյն, եւ բնակչացը ան-
աշխարհակալ բարուցը պատճառաւ, Հայք շատ բազմա-
ցան Հայաստանի մեջ, այնպէս որ Հայաստանի հին ժամա-
նակի բարեշինութեանը, քաղաքաց եւ գիւղից բազմութեա-
նը նայելով՝ 25 միլիոնի չափ բնակիչ պէտք է ունեցած
լինի մեր հայրենիքը . ասել է թէ այժմու Եւրոպայի բազմա-
մարդ երկիրներէն մեկուն պէս էր : Բայց Ե դարէն ի վեր, յո-
րում Արշակունեաց բազաւորութիւնը վերջացաւ, Հայերը
սկսան նուազիլ, մեկ մը օտար երկիրներ ցրուածներուն
պատճառաւ, եւ մեկ մը բազմախուռն պատերազմներով
ու սոսկալի դիպուածներով ջարդուածներուն պատճառաւ :
Այնուհետեւ օտարազգիք մտան տեղաւորուեցան ի Հայաս-
տան, ինչպէս Պարսիկք, Արարացիք, Թուրքք, Թարարք,
Ասորիք, Քիւրտք, Ռուսք, եւ այլն . եւ թեպէտ Հայաս-
տանէն ելած Հայերուն տեղ օտարազգիք եկան, այսու
ամենայնիւ նուազեցաւ մեր հայրենեաց բնակչաց թիւն,
այնպէս որ այժմ հազիւ թէ 5,000,000 մարդ կայ Հայաս-
տանի մեջ, սոցա մեջ ալ ըստ հաւանական կարծեաց,
մեկ միլիոնէն աւելին հազիւ Հայ են . մնացածները Քիւրա՝
իբր երկու միլիոն . Թուրքք, Թիւրքմէն, Թարար, Պար-
սիկք, սոքա ամենքը մահմետականք . Փարսիք կամ կր-

րակապաշտք, Ասորիք, եւ Քաղղեացիք՝ նեաորական, եգիտիք՝ արեւապաշտ եւ ղիւապաշտ, Արարացիք, Կովկասային ազգեր, Հրեայք, Գերմանացիք, Ռուսք, եւ ուրիշ եւրոպացի ազգեր, այլ սակաւաքիւ:

Ազգիս մեծագոյն մասն Հայաստանեն ղուրս աշխարհիս չորս ղին ցրուած եղածին համար, մինչեւ ցայժմ կարելի չեղաւ Հայոց գեթ հաւանական քիւն իմանալ. ոմանք երկու միլիոն միայն կհաշուեն մեր ազգին քիւր, այլք 3 միլիոն, ընդհանրապէս չորս միլիոն եւ ոմանք մինչեւ հինգ միլիոն. բայց աւելի հաւանականն է քե 4 միլիոն Հայ կայ աշխարհիս երեսը՝ այսպէս բաժնուած (*).

Ա. Տաճկաստան (Օսմանեան Հայաստան, Փոքր Ասիա, Ասորիք, Եգիպտոս, Ռումելի եւ Գանուբեան Իշխանութիւնք)	2,500,000
Բ. Ռուսիա (Ռուսաց Հայաստան, Վրաստան, Շիրուան, Տաղստան եւ Եւրոպական Ռուսիա)	1,200,000
Գ. Աւստրիա (Կալիցիա, Պոքովինա, Թրանսիլվանիա, Մաճառստան)	25,000
Դ. Պարսկաստան եւ Ատրպատական աշխարհ	150,000
Ե. Հնդկաստան եւ կղզիք Ովկիանիոյ	25,000
Զ. Այլ եւ այլ կողմեր ցրուած իբր	100,000
	4,000,000

(*) Տիւլորիէ, Մատեաց Աղաւնի 1855:

Մեր ազգը շատ հին ժամանակները արեւապաշտ եւ տարրապաշտ էր՝ Պարսից եւ ուրիշ մերձակայ ազգաց նրման . Արշակունեաց ժամանակ անզգայի կերպով Յունաց քաղմաստուածութիւնն ու կոապաշտութիւնը մտաւ Հայաստան . Քրիստոսի բուականին առաջին դարուն մեջ մեր Արգար քաղաւորը ազգին մեկ մասին հետ քրիստոնեայ եղաւ , բայց նորա յաջորդաց ժամանակ գրեթէ բոլորովին վերցաւ քրիստոնեութիւնն ու դարձեալ կոապաշտութիւնը տիրեց , մինչեւ որ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի քարոզութեամբը , Գ դարուն վերջերը Տրդատ քաղաւորն ազգովին քրիստոնեայ եղաւ , եւ այնուհետեւ Հայերը քրիստոնեութեան մեջ եւ Սրբոց Հարց լուսաւոր վարդապետութեանց մեջ հաստատ մնացին մինչեւ ցայժմ , թէ եւ շատ հալածանք եւ նեղութիւն կրեցին հաւատքի համար կրակապաշտ Պարսիկներէն եւ մահմետական ազգերէն : Ազգային եկեղեցւոյ գլխաւորն է Սրբոյն Գրիգորի օրինաւոր յաջորդն , այսինքն Էջմիածնի եպիսկոպոսապետն կամ Կարողիկոսն ամենայն Հայոց . նորանէ յետոյ կուգան Տաճկաստանի երկու եպիսկոպոսապետներն , այսինքն Երուսաղեմի եւ Կոստանդնուպօլսոյ Պատրիարքները : Կան նաեւ ուրիշ երկու կարողիկոսներ որ կնստին մեկը Սիս եւ միւսն Աղբամար . բայց սոցա թեմը շատ փոքր է : — Կան նաեւ 150,000-ի ջափ Հայեր որ վերջի ժամանակներս արեւմտեան եկեղեցւոյ հետ միացած են եւ Հռոմայ պապին իրաւասութեանը տակ են , անոր համար ալ կկոչուին Հռոմեական Հայք : Կզտնուին նաեւ Հայ — Հոռոմք

կամ յունադասան Հայք, մահմետական Հայք, բողոքական Հայք, բայց շատ սակաւաբիւ :

Հայոց լեզուն է Հայերէն աշխարհաբառ,՝ այսինքն հին հայերենի կամ գրաբառի աւրուածը կամ փոխուածը . սակայն աշխարհիս ամեն կողմը Հայք մի եւ նոյն լեզուն չեն խօսիր, այլ տարբեր տարբեր բարբառներ կամ գաւառական լեզուներ, որոց մեջ սովորաբար այն երկրին մեջ բնակող ազգաց լեզուէն բառեր կգտնուին : Այս այլ եւ այլ լեզուաց մեջ ամենէն ընտիրը կհամարուի առ այժմ Կոստանդնուպօլսոյ աշխարհաբառին մաքրուածը, զոր մերազնեայ գիտնականք կջանան օր ըստ օրէ մաքրել, պարզել եւ ըստ կարի գրաբառին մօտեցընել :

Ուսմունք եւ գիտութիւն տակաւին սակաւ է մեր ազգին մեջ՝ իւր ցրուեալ վիճակին պատճառաւ . սակայն եւ այնպէս Հայք միւս արեւելեան ազգերէն շատ աւելի յառաջադէմ են, բայց Հայաստանէն դուրս եղած երկիրները . իսկ Հայաստանի մեջ ուսմունքը եւ գիտութիւնը շատ ետմնացած է : Մեր ազգին համար յուսաւորութեան կեդրոններ են Զմիւռնիա, Կոստանդնուպօլիս, Վենետիկ, Մոսքուա, Փեթրպօրկ, Էջմիածին, Թիֆլիզ, Կալկարա, Փարիզ, Վեննա, Թեոդոսիա եւ ուրիշ շատ քաղաքներ, յորս ունեցեր ենք կամ ունիմք բարեկարգ վարժարաններ, ազգօգուտ օրագիրներ, բանօճ տպարաններ եւ ազգասիրական ընկերութիւններ : Այս վերջին երեսուն տարուանս մեջ մեր ազգին արած յառաջադիմութեանը

նայելով՝ տարակոյս չկայ որ գեղեցիկ ապագայ մի պատ-
րաստուած է մեր յաջորդաց :

Ճարտարութեան մեծ յարմարութիւն ունի մեր ազգը .
եւ ասոր ապացոյց են այլ եւ այլ կողմեր , մանաւանդ ի
Տաճկաստան գտնուած մեծամեծ արհեստաւորները . Հայ-
աստանի բնակչաց գլխաւոր պարապմունքն է երկրագոր-
ծութիւն . բայց քաղաքներու մեջ կգտնուին եւ բազմաբիւ-
արուեստաւորք՝ որ կշինեն երկաթե եւ պղնձե անօրներ ,
գէնքեր , տեսակ տեսակ կտաւներ , գորգեր , մետաքսեղէն-
ներ եւ այլն :

Բայց Հայոց ամենէն մեծ պարծանքն այս է այժմու ժա-
մանակներս որ աչքարաց , արբուն , անխարդախ եւ արդա-
րասեր վաճառականներ են , եւ ասոր համար է որ եւրո-
պայի շատ տերութիւնք Հայերն իւրեանց երկրին մեջ հրա-
ւիրած են՝ շատ արտօնութիւններ տալով նոցա որ վաճա-
ռականութիւնը ծաղկեցընեն : Հայաստանի մեջ վաճառա-
կանութիւնը միշտ բանուկ եղած է եւ է մինչեւ ցայսօր , դրի-
ցը եւ բերքերուն պատճառաւ : Հայաստանի վաճառաշահ
քաղաքներէն ելած կարաւաններ երբեւեկութիւն կանեն
Պարսկաստան , ուստի կուզան եւ Հնդկաստանի բերքերը ,
Փոքր Ասիա՝ եւրոպական վաճառքներու համար , Թիֆ-
լիզ՝ որ Կովկասեան երկիրներու ամենէն վաճառաշահ քա-
ղաքն է : Հայաստանի նաւական վաճառականութիւնն ըստ
բաւականին բանուկ է . Կուր գետոյն բերանէն Աժտերխա-
նի եւ Պարսկաստանի հետ վաճառականութիւն կանեն

Հայք, ճորտիսի վերայ Արդուինէն նաւեր կերթան Պարում եւ Տրապիզոն . իսկ Եփրատ եւ Տիգրիս գետերը Հայաստանէն դուրս միայն նաւարկելի են՝ բազմաթիւ սահանքներու պատճառաւ . վանայ ծովուն վերայ ալ նաւարկութիւն կլինի :

Ա. ՌՌԻՍՍՅ ՀՍՅՍՍՏԱՆ .

Հայաստանի այն կտորն որ Ռուսաց բաժին ընկած է, ըստ այժմու քաղաքական բաժանման խառնուած է Թիֆլիզու, Շամախուոյ եւ Քուբայիսի կուսակալութեանց հետ . միայն Երևանու ամբողջ կուսակալութիւնը բոլորովին Հայաստանի մէջ է :

ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԵՐԵՒԱՆՈՒ .

Երևանու կուսակալութեան մէջ են հին ժամանակի Գուգարք, Արարատ եւ Սիւնիք կոչուած աշխարհաց մեծագոյն մասն , եւ այժմ հինգ գաւառ կրածանուի , որ են Երևան , Կիւմրի , Հիւն Նախիջևան , Նոր Պայեղիտ եւ Որդուպատ . գլխաւոր գետերն են Երասխ , Ախուրեան եւ Զանկի : Այս կուսակալութեան մէջ են Սևանայ լիճը, եւ Մասիս , Արագած կամ Արակեօզ, եւ Արայի կամ Գառնը Խարրզ լեռները :

ԵՐԵՒԱՆ (20,000 բն.) Զանկի գետոյն ձախակողմը , մինչեւ 1828 Պարսկական Հայաստանի գլխաւոր քաղաքն էր , եւ այժմ 1841-էն իվեր արու է կուսակալին նահանգիս . ամուր բերդ ունի , եւ վաճառաշահ քաղաք է :

ԷՋՄԻԱՅԻՆ, Երեւանու արեւմտակողմը, մեծ ուխտատեղի եւ Արոտ կաթուղիկոսի ամենայն Հայոց: Երուանդ Ա. աջնոյն ժամանակ իբր 600 տարի Քրիստոսէ յառաջ՝ աւան մի էր *Վարդգէս* անուանով. Մեծին Խոսրովու հայրն Վաղարշ՝ այս աւանս մեծցուց եւ ամրացուց, եւ իւր անուամբը *Վաղարշապատ* անուանեց, որ արոտանիստ եղաւ մեր Արշակունի թագաւորաց շատերուն: Սուրբն Գրիգոր Լուսաւորիչ այս տեղ տեսաւ Քրիստոսի իջման տեսիլն՝ որով եւ կոչուեցաւ Էջմիածին, եւ այս տեղ հաստատուեցաւ մեր ազգին կաթուղիկոսական Արոտը: Մահմետական ազգաց Հայաստան արշաւած ժամանակ կաթուղիկոսք ելան Էջմիածնէն, եւ Ռուբինեանց ժամանակ Սիսկնատէին. 1441-ին դարձեալ Էջմիածին փոխադրեցան եւ այս տեղ մնացին մինչեւ ցայժմ, թէ եւ շատ նեղութիւններ կրեցին ժամանակ ժամանակ Պարսիկներէն: Նշանաւոր տեղերն են մայր եկեղեցին զոր շինեցին սուրբն Գրիգոր Լուսաւորիչ եւ Տրդատ, եւ թեպէտ յետոյ քանի մի անգամ նորոգուեցաւ, բայց իւր առաջուան ձեւովն ու մեծութեամբը մնաց, եւ որոյ մեջ կպահուին շատ սրբոց նշխարք եւ այլ քրիստոնեական յիշատակներ. այս տաճարիս քովն են կաթուղիկոսարանը կամ վեհարանը, Սիւննողոսը, հարուստ մատենադարանը, տպարանը, միարանից բնակարանքն եւ այլն: Սուրբ Հռիփսիմէ, զոր Գրիգոր Լուսաւորիչ շինեց Հռիփսիմեանց նահատակուած տեղը, եւ յետոյ քանի մի անգամ նորոգուեցաւ: Սուրբ Դայիանէ՝ զոր նոյնպէս Գրիգոր Լուսաւորիչ շինեց

Գայիանեանց նահատակուած տեղը : Էջմիածնի մօտերը կան նաև ուրիշ բազմաքիւ հին եւ երեսելի վանքեր ու եկեղեցիներ :

Էջմիածնի հիւսիսային արեւմտակողմն է *Օշակաւն* գեղը, ուր բաղուած է Սուրբն Մեսրոպ . Օշականի այ մօտ է *Աշտարակ* գիւղաքաղաքը :

Երեւանու հարաւակողմն Երասխայ մօտ է *Արտաշատ* քաղաքին տեղն որ շատ ժամանակ Հայաստանի մայրաքաղաքն էր, այժմ քանի մի աւերակներ միայն հազիւ մնացեր են : Արտաշատի հարաւակողմն Երասխայ եզերքն է *Խոր Վիրապն* ուր տասնըջորս տարի մնաց Սուրբ Գրիգոր Լուսաւորիչն, եւ այժմ վերան մատուռ մի կայ : Արտաշատու արեւելակողմն էր *Դուխն* մեծ քաղաքը, զոր շինեց մեր Խոսրով Բ թագաւորն, եւ Արարացոց Հայաստանի տիրած ժամանակները շատ մեծցաւ, ծաղկեցաւ, եւ ամրացաւ . իններորդ դարուն վերջերը գետնաշարժով կործանեցաւ, այժմ հետքն անգամ չմնաց, եւ տեղն իսկ յայտնի չէ : Երեւանու արեւելակողմն է նաև *Գեղարդայ* հռչակաւոր վանքը՝ լեռներու մէջ շինած :

ՍԱՐՏԱՐԱՊԱՏ, Էջմիածնի արեւելակողմը, նորաշէն ամուր բերդաքաղաք : Սարտարապատի հարաւակողմն էր *Արմաւիր*՝ Հայաստանի հին մայրաքաղաքը, որոյ հազիւ թէ քանի մի աւերակները մնացած են այժմ : Երասխի եւ Արփաչայի գետախառնունքը կան *Երուանդակերտ* եւ *Երուանդաշատ* քաղաքաց աւերակները, որոց մօտ էր

եւ *Բագարան* : Սարտարապատի քովերն են եւ *Կուաշ*՝ որ հին ժամանակ բերդ էր , եւ *Փարսի*՝ հայրենիք Ղազարայ Փարպեցւոյ :

Կողք , գիւղաքաղաք , ուր ծնաւ Եզնիկ . քովերը մեծ աղահանք ունի :

Երեսանու հարաւակողմն երեք ինքնակալութեանց սահմանագլուխը կրարձրանայ տիեզերահռչակն Մասիս , որոյ վարի կողմերն էր *Ակոռի* նշանաւոր գիւղն , ուր կկարծուի բէ Նոյ լայգի տնկեց . 1840-ին սոսկալի գետնաշարժ մի պատահեցաւ , լերան ծայրէն ապառաժ մի փրբաւ որ վար գլորած ժամանակ Ակոռիի մեծագոյն մասն աւերեց . երկրաշարժէն յետոյ Մասիս լեռը բռնկեցաւ եւ բերնէն քանձր մուխ , լաւա եւ քարեր քափելով՝ Ակոռիի մնացած տներն եւ բնակիչքը ջնջեց : Այժմ նոր Ակոռին սկսած է շինուիլ՝ հնոյն յիշատակաւր :

ՆՈՐ ՊԱՅԷԶԵՏ , Սեւանայ ծովուն հարաւային արեւմտակողմը , համանուն գաւառին գլխաւոր քաղաքը , նորաշէն եւ օր ըստ օրէ կձաղկի վաճառաշահութեամբ : Սեւանայ ծովուն մեջ կայ համանուն փոքրիկ կղզին , յորում հինգ եկեղեցիք ու Սեւանայ վանքը կգտնուին : Լճին չորս դին եւ փոքր ինչ հեռուները բարձրաբերձ ու երեսելի լեռներ պատած են , ինչպէս *Արայի* լեառն , *Շամիրամայ* լեառն , եւ այլն :

ՆԱԽԷԶԵԻԱՆ կամ ՆԱԽԶՈՒԱՆ (12,000 բն.) Երասխի մօտ համանուն գաւառին գլխաւոր քաղաքն , ամուր եւ շատ

վաճառաշահ . սա Ասիոյ ամենէն հին քաղաքն է , որովհետեւ կկարծուի թէ Նոյ նահապետին շինածը լինի : ԺԳ դարէն ի վեր շատ անգամ աներեցաւ Թաթարներէն , Պարսիկներէն եւ Օսմանցիներէն :

Խոք , գիւղաքաղաք , բնակչաց մեծ մասը Թաթար :

Գարասպաս , գիւղաքաղաք , բնակիչքը Թաթար են :

ԱՊՊԱՍԱՊԱՏ կամ ԱՍՏԱՊԱՏ , Երասխի ձախակողմը փոքրիկ քաղաք . ունի բերդ մի , եւ կարծիք կայ թէ այստեղ քաղուած լինին Վարդանանք : Այս քաղաքիս հարաւային արեւելակողմն Երասխայ վերայ է *հին Ջուղա* , որ Հայաստանի շատ ճարտար եւ վաճառաշահ քաղաքներէն մէկն էր . Շահ Աբրահ 1600-ին ժամանակները բնակիչքը բռնութեամբ Պարսկաստան քշեց , որով Ջուղան աներակ մնաց . բայց այժմ դարձեալ սկսան Հայք մեջը բնակիլ :

ՈՐՏՈՒՊԱՏ (5,000 բն .) Երասխի մօտ , համանուն գաւառին գլխաւոր քաղաքը , հին ժամանակի *Գոդրե* գաւառին մեջ , որոյ բնակիչքն անուանի էին իբրեւ բանաստեղծ : Այս քաղաքիս քովերէն սկսեալ Երասխայ ընթացքը կարագանայ :

ԱԳՈՒԼԻՍ , Որտուպատի հիւսիսակողմը , հայարնակ գիւղաքաղաք , որ երկու քաղ բաժնուած է , *Վերին* եւ *Ներքին Ագուլիս* : Ագուլիսի եւ Որտուպատի մեջտեղերն է *Վանանդ* նշանաւոր գիւղն , որոյ բնակիչքն այժմ մահմետական ազգեր են :

Կարչեւան կամ *Քարչեւան* , Երասխի վերայ գիւղաքաղաք :

Մեղրի, Կարջեանայ եւ Երասխի մօտ, երբեմն քաղաք, այժմ գիւղաքաղաք:

ԱԼԵՔՍԱՆՏՐՈՓՈԼ կամ ԿԻՄՐԻ (12,000 բն.) Ախուրեան գետոյն քով համանուն գաւառին գլխաւոր քաղաքը, 1834-ին շինուեցաւ, ամուր բերդաքաղաք եւ վանահանութեամբ ծաղկեալ. բնակիչքն ըստ մեծի մասին Հայ են:

ԳԱՆՉԱԿԱՅ ԳԱԻԱՌ

Այս երկիրս որ Սեւանայ ծովուն հիւսիսակողմը կրնկնի եւ ձեւացած է *Սիւնիք*, *Ուտի*, *Գուգարք* եւ *Արցախ* նահանգաց մեկմեկ մասերէն, շատ ժամանակ Հայոց իշխանութեան տակն էր. Ե դարէն յետոյ Աղուանք եկան եւ մեջը հաստատուեցան, յետոյ եկան Թարարք, Պարսիկք եւ վերջապէս Ռուսք, եւ այժմ Թիֆլիզու կուսակալութեան մեկ գաւառն է. գլխաւոր գետերն են *Կուր*, որ հիւսիսակողմերէն կանցնի, *Կուրակ* կամ *Քուրակ* չայ արեւելեան սահմանը, *Պոռչալու* կամ *Զորագետ*, հիւսիսային արեւմտակողմը:

ԳԱՆՉԱԿ կամ ԵՂԻՍԱՅԷԹՈՒՊՈԼԻՍ (11,000 բն.) Աղուանից երկրին գլխաւոր քաղաքն էր, եւ այժմ համանուն գաւառին գլխաւորը. ամուր բերդ ունի, եւ նշանաւոր է երկրին քարեքերութեամբը: Գանձակայ հիւսիսակողմն է *Շամքոր* կամ *Շամխոր* գիւղն որ երբեմն մեծ քաղաք էր, եւ նշանաւոր էր մեջը բարձր եւ գեղեցիկ սիւնն որ 1840-ին գետնաշարժով կործանեցաւ:

Գանձասար, այստեղ նստան Ադուանից վերջին կաթողիկոսները: Գանձակայ գաւառին մեջ էր *Թաղխաղ* քաղաքն որ մեր Արշակունի բազաւորաց ձմերոցն էր, եւ որոյ մօտ Մեծն Վարդան Պարսից զօրքերը ջարդեց *Լուսնաս* գետոյն քով. բայց այժմ տեղը յայտնի չէ:

Սեանայ լճին հիւսիսային արեւելակողմն էր ԿԱՊԱՆ, մեծ եւ ամուր քաղաքն որ ժՍ. դարու մեջ Սիւնեաց բազաւորաց մայրաքաղաքն էր:

ԳԱՐԱՊԱՂ.

Այս երկիրս, որ կկոչուի նաեւ *Շուշի*, եւ Երեւանու կուսակալութեան արեւելակողմը կրնկնի, ձեւացած է *Ուտի*, *Սիւնիք* եւ *Արցախ* նահանգաց մեկմեկ մասերովը. այժմ Շամախուոյ կուսակալութեան մեկ գաւառն է. գլխաւոր գետերն են *Կուր*, *Երասխ* եւ *Թերրէր*: Երկիրն արեւմտակողմը լեռնոտ է, անտառային եւ այգեւետ, յորմեկ ելած է իւր *Գարապաղ* անունը. իսկ արեւելեան մասը դաշտային է: Այս գաւառիս մեջ Շուշիի հիւսիսակողմն է *Մուրով* կամ *Մուռ* բարձր լեռը:

ՇՈՒՇԻ (15,000 բն.) Գարապաղի գլխաւոր քաղաքն է ժայռի վերայ շինուած, ամուր բերդաքաղաք. բնակիչքն Հայ եւ Թաքար:

Տարբէր կամ *Ստարբէր* երեսելի գիւղ, յորում է համանուն հոջակաւոր ճին վանքը: Ստարբի արեւելակողմն էր *Բազակայ* քաղ կոչուած Սիւնեաց ամուր եւ անառիկ միջնաբերդը:

Որոտն, Ստաթեւի հիւսիսակողմն, զիւղ որ Արշակունեաց ժամանակ ամրոց էր. հայրենիք է Յովհաննու Որոտնեցւոյն :

Զէշվա, Գարապաղի հիւսիսակողմը զիւղաքաղաք :

Կիւլիատան, Թերթերի հիւսիսակողմը պարսպապատ զիւղաքաղաք :

Շահպաղաք, զիւղաքաղաք, երբեմն նշանաւոր քաղաք էր :

Խիւտաֆէրիյն, Երասխայ վերայ մեծ եւ երեսելի կամուրջ մի ունի եւ քանի մի ամրոցներ :

Թէրթէր, զիւղաքաղաք համանուն գետոյն վերայ, որ հին ժամանակ *Տըրտուշ* կկոչուէր :

Պերտէ, զիւղաքաղաք, որոյ քովն են Աղուանից *Պարտաշ* հին մայրաքաղաքին աւերակները, որ մեծ եւ երեսելի քաղաք էր :

Գարապաղի արեւելակողմը *Լենկթիմուր* ջրանցք մի շինել տուած էր՝ Երասխայ ջուրը քաղաքաց մէջէն անցընելու համար. որ մինչեւ ցայժմ կայ :

Ս Ո Մ Խ Է Թ .

Սոմխէքը կամ *Սամցխէն* որ Թիֆլիզու գաւառին արեւմտակողմը կընկնի, այժմ Ախլցխայի գաւառն է՝ Քուրայիսի կուսակալութեան մէջ, եւ ձեւացած է *Գուզարք* նահանգին մէկ մասովը : Գլխաւոր գետն է *Կուր*, որ մէջէն կանցնի :

ԱԽԼՏԻՍԱ կամ ԱԽԱԼՏԻՍԻԷ (13,000 բն.) Կուր գետոյն մեկ ճիւղին վերայ ամուր բերդաքաղաք եւ շատ վաճառաշահ. դիրքը բարձր եղածեն ամառը տաք է եւ ձմեռը սաստիկ ցուրտ : Բնակչաց մեծագոյն մասն Հայ են :

Ազդար կամ *Ացխուշր*, Կուրի վերայ ամուր զինուաքաղաք եւ երբեմն նշանաւոր :

ԱԽԱԼՔԱԼԱՔ, ամուր քաղաք եւ վաճառաշահ :

Հայաստանի մասն է նաեւ Թիֆլիզու կուսակալութեան հարաւակողմն, որոյ մեջ նշանաւոր տեղերն են,

Շամշոյրոէ, հին եւ անուանի բերդ, զոր Լենկթիմուր եւ Ճինկիզխան կործանեցին . այժմ բոլորովին աներակ է, եւ Հայք նորա մօտերը շինեցին նոր *Շամշոյրոէ* գիւղը :

Սաւնահին եւ *Հադրատ*, հին եւ հռչակաւոր վանքեր, որոց մեջ շատ բազաւորագունք եւ երեսելի մարդիկ բաղուած են :

Խրամ գետոյն Կուրի հետ խառնուած տեղն է *Կարմիր կամուրջ* կոչուած մեծ եւ գեղեցիկ կամուրջը, զոր վրաց Ռոստոմ բազաւորը նորէն շինել տուաւ 1647-ին, եւ այժմ փոքր ինչ աներած է :

Օձուռն կամ *Ուզուռնար*. հայրենիք մեր Յովհան Օձնեցի հայրապետին :



Բ, ՕՍՄՆԱԵԱՆ ՀԱՅՍՍՏԱՆ.

Հայաստանի մեծագոյն մասն Օսմանեանց իշխանութեան տակ է, եւ ըստ այժմու քաղաքական բաժանման խառնուած է Փոքր Ասիոյ, Միջագետաց եւ Քիւրտիստանի հետ, եւ սովորաբար հինգ *նահանգ* կամ *փաշայութիւն* կրածանուի, որ են. *Էրզրում*, *Կարս*, *Պայեղիտ*, *Վան* եւ *Տիարպէքիք*: Եւ որովհետեւ այս նահանգներս ստեպ փոփոխութիւններ կառնուն, մեք ուրբ նահանգ կամ մասն կրածանեմք Օսմանեան ինքնակալութեան տակ եղած Հայաստանը, իւրաքանչիւրին իւր գլխաւոր քաղաքին անունը տալով. այս ուրբ նահանգներս են. *Կարս*, *Էրզրում*, *Մուշ*, *Պայեղիտ*, *Խարքերդ*, *Տիարպէքիք*, *Վան* եւ *Քիւրտիստան*:

Կ Ա Ր Ս .

Այս նահանգը, որ Էրզրումի Փաշային իշխանութեան տակն է, Երեւանու կուսակալութեան արեւմտակողմը կրնկնի, եւ ձեւացած է հին *Արարատեան* նահանգին արեւմտեան մասովը: Կարսի նահանգին մեջն է *Չըլտըրլիճն*, յորմէ համանուն գետակը կրղիսի որ *Կարսի* գետակին մեկ ճիւղն է. սա ալ *Արփաչայի* մեկ բազուկն է:

ԿԱՐՍ կամ ՂԱՐՍ (12,000 բն.) համանուն գետակի վերայ Շիրակայ դաշտին մեջ ամուր բերդաքաղաք եւ արոճաւանիս փաշային. հարիւր տարիի ջափ ինքնազրլուիս Հայ բազաւորաց մայրաքաղաքն եղաւ, եւ մեր Բագ-

բատունի բազառորաց ժամանակ շատ գեղեցիկ շենքերով
զարդարուեցաւ ժ եւ ժԱ դարերու մեջ : Շենքերուն մեջ նը-
շանաւոր է Արաս բազառորին 942-ին շինել տուած փա-
ռաւոր եկեղեցին որ այժմ մզկիթ է : 1853-ին Ռուսք տի-
րեցին քաղաքիս , եւ բերդերը կործանելով Յամանեանց
դարձուցին :

ԱՆԻ , Ախուրեան գետոյն աջակողմեան ափունքը կար-
սի արեւելակողմը , 964-էն ի վեր մեր Բագրատունի բա-
զառորաց մայրաքաղաքն եւ Հայաստանի քաղաքաց մեջ
ամենէն մեծ , ծաղկեալ , գեղեցիկ եւ փառաւորը , ինչպէս
կվկայեն մինչեւ ցայժմ մնացած կիսակործան տխուր ա-
ւերակները : Անին հարաւակողմէն Ախուրեան գետով պա-
տած է , իսկ հիւսիսակողմը կրկին աշտարակազարդ պա-
րիսպներով պաշտպանուած էր , որոց կիսականգուն ա-
ւերակները կեցած են : ժԱ դարուն մեջ Յոյնք մատնու-
թեամբ առին քաղաքս , եւ 20 տարի յետոյ Ալփասլանին
ձեռքն անցաւ : Բագրատունեաց բազառորութեան վերցուե-
լէն յետոյ Անեցիք հետզհետէ ցրուեցան շատ կողմեր ,
այնպէս որ ժԴ դարէն ի վեր Անին բոլորովին աւերակ եւ
անբնակ մնաց : Բազմաքիւ աւերակացն եւ կիսակործան
շենքերուն մեջ յիշատակի արժանի են բազառորական մե-
ծակառոյց սալատն եւ փառաւոր ընդարձակ մայր եկեղե-
ցին : Անուոյ մօտ է *Խօշալանք* կոչուած մեծագործ վան-
քը : Նոյնպէս հարաւակողմը կայ *Գարապաղ* զիւղն , որոյ
տեղն էր *Մրեն* քաղաքը . Մրենի մօտ է *Բագրան* զիւղն
որ հին ժամանակի մեծ եւ երեսելի *Բագարան* քաղաքն

է : Ախօրենի Երասխայ հետ խառնուած տեղը *Երուսա-
ղատ* քաղաքին քանի մի աւերակները կտեսնուին :

Ջրաշր, երբեմն արոռ. համանուն նահանգի փա-
շային, այժմ անշքացեալ :

Ջարիշատ, նշանաւոր գիւղաքաղաք :

Կաղզուան կամ *Գաղզման*, երբեմն քաղաք էր, այժմ
գիւղ, գուարճագեղ եւ բարեբեր երկրի մէջ : Կաղզուանայ
մօտերն են *Վարդիկներ* կամ *Վարդիկ հայր* հռչակաւոր
վանքն, եւ *Արտագերս* բերդաքաղաքին տեղը :

ԷՐՋՐՈՒՄ.

Էրզրումի կամ Կարնոյ նահանգն որ Հայաստանի ա-
մենէն մեծն եւ Օսմանեան ինքնակալութեան մեծերէն մե-
կըն է իշխանութեամբ եւ պատուով, Կարսի արեւելակող-
մը կտարածուի, եւ ձեւացած է ամբողջ *Բարձր Հայք* նա-
հանգով, եւ *Տայք*, *Գուգարք* ու *Տուրուքերան* նահան-
գաց մեկ մեկ մասերովը : Նշանաւոր գետերն են *Եփրատ*,
ձորոխ, *Երասխ* :

ԷՐՋՐՈՒՄ կամ ԹԵՈՂՈՍՈՒՊՕԼԻՍ, եւ ըստ հին անուան
ԿԱՐԻՆ (100,000 բն.), երկու հազար մեքր բարձրութիւն
ունեցող բարձրաւանդակի վերայ, ամուր բերդաքաղաք,
ճարտար եւ Ասիոյ Տաճկաստանի շատ վաճառաշահ քա-
ղաքներէն մեկը, եւ արոռ. մեծ փաշայի՝ որոյ իշխանու-
թեան տակ են Կարսի եւ Պայեգիտի փաշաները : Գրիցը
բարձրութեան համար ձմեռը սաստիկ է եւ երկարատեւ,

բայց ամառը շատ գոնարճալի: Այս քաղաքս Փոքրն Թեո-
դոս նորոգել տալով՝ իւր անունը դրաւ վերան, անոր հա-
մար ալ Արաբացիք կոչեցին զայն *Էրզիրոււմ* . որ ասել է
Հոռոմոց երկիր: Մեջը նշանաւոր շէնքերն են Հայոց Սուրբ
Աստուածածին նորաշէն մեծ եկեղեցին, Ուլուճամի մզկի-
քըն, եւ Նումուսնէի քեապէ մզկիթն՝ Մեքքէի քեապէին
ձեռովն ու մեծութեամբը: Անուանի են այս քաղաքիս
մետաքսէ, բամբակէ, պղնձէ եւ երկաթէ գործուածքներն
ու զէնքերը: Կարինի մօտերը բազմաթիւ վանքեր ու եկե-
ղեցիներ կան, յորս նշանաւոր է *Հնձուց* կամ *Կարմիր*
վանքը: Էրզրումի գաւառին միւս նշանաւոր տեղերն են .

Արժն, մեծ եւ բազմամարդ քաղաք էր, զոր Թաթարք
կործանեցին 1049-ին:

Գրզըլըիլիսէ, նշանաւոր քաղաք:

Արժարի եւ *Իշիճա* գեղերը, հանքային տաք ջրերովն
անուանի:

Սողուց, հանքային պաղ ջրեր ունի:

Թորրոււմ, համանուն գետակի վերայ ամուր գիւղա-
քաղաք:

Իսփիր կամ *Սպեր*, ճորոխի աջակողմը ամուր գիւղա-
քաղաք, ունի արծաթահանք, եւ հին ժամանակներն ոս-
կիի հանքերով երեսելի էր:

ՊԱՅՊՈՒՐԹ կամ ԲԱԲԵՐԴ (8,000 բն.) ճորոխի վերայ,
ղիրքը բարձր է, եւ քովի բլուրներէն մեկուն վերայ բերդ

ունի, գետոյն վերայ ալ չորս կամուրջ կայ ձգուած . անուանի են քաղաքիս գորգերը :

Համշէն, զիւղաքաղաք Խաչեքար լեռան քով :

ԱՐԴՈՒԻՆ (7,000 բն.) Ճորոխի վերայ, ճարտար եւ շատ վաճառաշահ քաղաք :

Օլրի, որ է *Ուխտեաց քաղաքն*, այժմ զիւղաքաղաք :

ԱՐՏԱՆՈՒՉ, ունի միջնաբերդ մի, եւ մեջը Վրացի շինութեանց շատ աներակներ կան :

ԱՐՏԱՀԱՆ, Կուրի ձախակողմն ամուր բերդաքաղաք էր, 1828-ին պարսիսպներն աներեցան . այժմ լեռան մի վերայ միջնաբերդ ունի :

ՀԱՍԱՆՂԱԼԱ կամ ՀԱՍԱՆԳԱԼԷ (5,000 բն.) համանուն վտակի վերայ, որոյ հին անունն է *Մուրց*, շատ ամուր բերդաքաղաք, հանքային տաք ջրերու աղբիւրներ ունի : Սորա մօտ Գրիգոր Մագիստրոսի շինած մեկ վանքը կայ, ուր եւ ինքը բաղուած է :

Քօիրիւքէօյ, Մուրցի երասխայ հետ խառնուած տեղւոյն մօտ, սորա քովերն էր ՎԱՂԱՐՇԱԽԱՆ . այժմ նշանաւոր է մեջի կարաւանատունն եւ երասխայ վերայ *Չօղաւի Քօիրիւսիւ* եօթնակամար մեծ կամուրջը :

Խորասան, երասխայ ձախակողմը, զիւղաքաղաք . սորա մօտ է *Մժկերտ* կամ *Մանագկերտ*, որ երբեմն եպիսկոպոսանիստ քաղաք էր :

ԵՐԶՆՊԱ կամ ԷՐԶԻՆՃԱՆ (15,000 բն.) երբեմն ԵՐԷՉ ա-

ան, նշանաւոր էր մեջի Անահտայ տաճարովն, յետոյ երեւելի եղաւ Գրիգոր Լուսաւորչին այս տեղ ջարջարուելովը: Սորա մօտ է *Սեպուհ* լեռը, որոյ քովերը բազմաքիւ վանքեր կան, եւ ոմանք Գրիգոր Լուսաւորչին շինածներն են, անոր համար մեծ ուխտատեղի է մեր ազգին. այն վանքերու մեջ աւելի երեւելիներն են *Շողակար* եւ *Մեծն Ներսէս*՝ կամ *Տիրաշէն*: Իսկ բուն լեռան վերայ երեւելի վանքերն են *Լուսաւորիչ*, ուր ճգնեցաւ եւ բաղուեցաւ Հայաստանեայցս առաքեալը, եւ *Մանեայ աշրք*՝ ճգնարան Մանէ կոստին: Երգնկալի մօտ է *Թիլն* աւանը՝ երբեմն Արեւասայ պատկերովն անուանի. այժմ երեւելի է Սրբոյն Արիստակեսի եւ Մեծին Ներսեսի այն տեղ բաղուածովը:

Սեպուհի արեւելակողմն է *Թորդակ*, որ Բարշամին կոոց մեհենովն անուանի էր, եւ յորում բաղուած են Գրիգոր Լուսաւորչի որդիքն եւ բոռունք:

Կամախ կամ *Անի* ամրոց, եփրատայ ձախակողմն, ամուր բերդ էր եւ մեհեաններովն անուանի, Արշակունի բազաւորաց զերեզմանատեղին եւ նոցա գանձարանն ու մեհենական գրուածները պահելու տեղ. ունի կիսակործան բերդ մի:

Մելիք-շէրիֆ, զիւղաքաղաք, որոյ տեղն էր *Արօրակ* կամ *Արաւրակացոց* քաղաք:

Հայաստանի եւ Փոքր Ասիոյ սահմանագլուխն էր հին ժամանակ *Սատաղ* կամ *Սատաղացոց* քաղաքը, որ այժմ աներակ է:

Խ Ա Ր Բ Ե Ր Գ .

Այս նահանգս Էրզրումի նահանգին հարաւային արեւմտակողմը կընկնի, եւ ձեւացած է *Չորրորդ Հայք* նահանգով՝ որ եւ *Ծովաց Աշխարհ*. բնակչաց մեծ մասը Քիւրտ է, գլխաւոր գետերն են *Եփրատ* եւ *Արածանի*. երկիրը շատ լեռնոտ է :

ԽԱՐԲԵՐԴ կամ ԽԱՐՊՈՒԹ, եւ ըստ հին Յունաց ԿԱՐԿԱՏԻՈՎԵՐՏ (7,000 բն.) լեռան մի վերայ շինած, շատ ամուր բերդաքաղաք եւ արոռ փաշայի :

Բաշու, Արածանոյ աջակողմը ամուր գիւղաքաղաք . կկարծուի թէ այս տեղ գտաւ Սուրբն Մեսրոպ Հայոց զըրերը :

Կապան կամ *Քէպանմատեն*, Եփրատայ մօտ, անուանի է երկաթի եւ արծաթի հանքերովը : Կապանի մօտ Եփրատայ վերայ նաւակամուրջ կայ :

Ծովք, համանուն լճին քով բերդ էր, յորում նստան մեր Գրիգոր Պահլաւունի եւ Ներսէս Շնորհալի կարողիկոսները՝ Հռոմկլայ հաստատուելէն յառաջ :

ՏԻԱՐՊԷՔԻՐ .

Այս նահանգս որ Խարբերդի հարաւակողմը կընկնի, ձեւացած է հին *Աղճնիք* նահանգով եւ *Ծովաց* աշխարհին մեկ մասովը . հիւսիսակողմը լեռնոտ է, եւ գլխաւոր գետերն են *Եփրատ*, *Տիգրիս* եւ *Պարմանու* :

ՏԻԱՐՊԷՔԻՐ կամ ԱՄԻՐ կամ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ (70,000 բն.)

Տիգրիս գետոյն վերայ , արոռ. փաշայի , Տիգրան Առաջնոյն
եւ ըստ ոմանց Տիգրան Երկրորդի շինածը . շատ վաճա-
ռաշան քաղաք եւ ամուր ու լայն պարսպով պատած , որ
72 աշտարակ ունի . բազմաբիւ նշանաւոր շէնքերուն մեջ
Երեւելի են *Ուշուհամի* մեծակառոյց մզկիթը , միջնաբերդն
ու փաշային պալատը :

ԱՐՂԱՐԱ կամ ԱՐՂՆԻ (5,000 բն.) լերան վերայ շի-
նած , ունի ամուր բերդ . սորա մօտերը մեծ պղնձա-
հանք կայ :

ԱՎԼ կամ ԷՎԻԼ , ունի բերդ , եւ Երեւելի Է մեջը
միակտուր քարե փոքրիկ եկեղեցին :

ՄՈՒՖԱՐՂԻՆ կամ ՆՓՐԿԵՐՏ , Երբեմն Երեւելի քաղաք ,
որ կկոչուեր նաեւ *Մարտիրոսաց քաղաք*՝ մեջը շատ
սրբոց մասունք հաւաքուածին համար . այժմ մեծ մասն
աւերակ է :

ՌԸՆՏԸՎԱՆ կամ ՌԷՏՈՒԱՆ (4,000 բն.) Պարմանու
գետակի վերայ , բնակչաց մեծ մասն Եզիտիք են :

Այս երկրիս հիւսիսակողմն է *Սասուն* լեռնոտ զաւառը ,
որոյ Հայ եւ Քիւրտ բնակիչքն ազատարարոյ են եւ քաջ ,
եւ ինքնագլուխ կկառավարուին : Գլխաւոր գիւղաքա-
ղաքն է *Սասուն* :

ՍՂՆԸԴ կամ ՍԵՐՏ , (5,000 բն.) Բարձր դաշտի մի
վերայ , ըստ ոմանց այս է Տիգրան Երկրորդի շինած քա-
ղաքը : Բնակչաց մեծագոյն մասը Քիւրտ են , որ բոլոր
այս կողմերուս վերայ ինքնագլուխ կտիրեն :

Մ Ո Ւ Շ .

Մուշի նահանգը կամ *Տարօնը*, որ Խարբերդի արեւելակողմը կրնկնի, ձեւացած է հին *Տարուքերանի* նահանգով . գլխաւոր գետն է *Արածանի* :

ՄՈՒՇ (8,000 բն.) Սիմ լեռան ստորոտը ունի միջնաբերդ մի . այժմ երեւելի է մօտերն եղած բազմաբիւ վանքերովն , որոց մեկն է եւ հռչակաւոր Սուրբ *Կարապետի* վանքն որ երբեմն *Իննակնեան* կամ *Գրակայ* վանք կկոչուէր եւ մեծ ուխտատեղի է մեր ազգին : — Մշոյ մօտերը նշանաւոր տեղեր են նաեւ *Խորնի* գիւղն , յորում ծնաւ մեր քերթողահայրն ու տիեզերահռչակ պատմարանը Մովսէս Խորենացի . *Խաւիկ* կամ *Հացիկ* , տեղի ծննդեան Սրբոյն Մեսրոպայ : Սուրբ Կարապետի մօտ է *Աշտիշատ* , յորում է Սրբոյն Սահակայ Պարբեւի գերեզմանը :

ԲԱՂԷՇ կակ ՊԵԹԼԻՁ (16,000 բն.) մեծ եւ երեւելի բերդ , Բիւրտերու ձեռքն , եւ վաճառաշահ քաղաք : Բաղիշու մօտերն անուանի են . *Ծակքար* , որ քարածայռի մի մեջէն փորած ճանապարհ ունի . *Ռահիփայ* , մեծ հովիտ , որոյ մեջ նշանաւոր է *Աղամէք* կամ *Աղամեկց Խան* կոչուած իջեւանն ' ընդարձակ եւ քարաշէն :

Խղար կամ *Ախղար* , վանայ ծովուն հիւսիսային արեւմտակողմն , շատ գեղեցիկ դիրք ունի . երբեմն մեծ եւ հարուստ քաղաք էր , ինչպէս կվկայեն մինչեւ ցայժմ մնացած մեծակառոյց եւ գեղեցիկ շինուածոց աւերակները . այժմ գիւղ է :

Խնու, գիւղաքաղաք, ամուր բերդ ունի :

ՄԱԼԱԶԿԵՐՏ կամ ՄԱՆԱԶԿԵՐՏ, ամուր պարիսպ ուներ եւ բերդ, որ այժմ փոքր ինչ աւերած են, բնակիչն ալ պակասած է :

ՊԱՅԷԶԻՏ.

Այս փոքր նահանգս, որ Մասիս լեռան հարաւային արեւմտակողմը կրնկնի, ձեւացած է *Տուրուքերանի* եւ *Այրարատայ* մեկ մեկ մասերովն, եւ չորս կողմէն բարձրաբերձ լեռներով պատած է :

ԹՈՓՐԱԳԳԱԼԷ, որ հին ժամանակ կկոչուէր *Վաղարշակերտ*, ամուր բերդաքաղաք :

Տիւտիւն, գիւղաքաղաք, ունի բերդ մի, եւ կերեւի թէ այստեղ էր հին ժամանակ *Զարիշատ* քաղաքը :

ՊԱՅԷԶԻՏ (10,000 բն.) ամուր բերդաքաղաք եւ վաճառաշահ :

ՎԱՆ.

Այս նահանգս կրնկնի Պայեգիտի հարաւակողմը, եւ ձեւացած է *Վասպուրականի* եւ *Մոկաց* աշխարհաց մեկ մեկ մասերովն. երկիրը շատ լեռնոտ է եւ բազմաթիւ բարձր լեռներ ունի, ինչպէս *Վարագ*, *Սիւխան*, *Արտու* եւ այլն : — 40-ի չափ գետակներ ու վտակներ ունի որ վանայ ծովը կրափին :

ՎԱՆ կամ ՇԱՄԻՐԱՄԱԿԵՐՏ (70,000 բն.), համանուն ծովակին արեւելակողմը, Շամիրամայ շինածն, որով Ասիոյ շատ հին քաղաքներէն մեկն է, ամուր պարիսպներով պատած, քովն ալ լեռան մի վերայ անմատչելի բերդ

ունի որ Շամիրամայ կանգնածն է, ինչպէս որ վրայի բեւեռագիր գրուածքներէն եւ կարծրութենէն յայտնի է. վաճառականութիւնը շատ բանուկ է: Նշանաւոր եղաւ քաղաքս 1861-ին: Քովերը գեղեցիկ եւ գուարճայի պարտեզներ եւ այգիներ կան: Վանայ հարաւակողմըն է *Արտամէտ* կամ *Արտիմէտ*, Արտաշես Երկրորդի գեղեցիկ ամարանոցն որ այժմ անշքացած է: — Վանայ արեւելակողմն է հռչակաւոր *Վարագայ* լեռն, որոյ վերայ բազմաքիւ վանքեր ու եկեղեցիներ կան:

Վանայ ծոգուն հարաւակողմը *Արտոս* բարձրադիր լեռան ստորոտն է *Ուռան*, որոյ մէկ վանքին մեջ են սրբոյն Եղիշէի նշխարքը: Ոստանի արեւելակողմն է *Նարեկայ* վանքն, յորում ճգնեցաւ սուրբն Գրիգոր Նարեկացի:

Արձկէ, Սիփան լեռան մօտ, երբեմն մեծ եւ նշանաւոր քաղաք, այժմ գիւղաքաղաք. ունի բերդ մի:

Արնէշ, համանուն գեաակի բերանն որ Վանայ ծով կրափի. երբեմն երեւելի, այժմ ընկած: Հիւսիսակողմը լերանց մեջ է *Մեծուխայ* վանքը:

Վանայ ծովուն մեջ չորս կղզի կայ այժմ. որ են *Աղփամար*, յորում ինքնագլուխ կարուղիկոս մի կնատի. նշանաւոր է մեջի Սուրբ Խաչ գեղեցկաշէն եկեղեցին. *Առտէր*՝ անբնակ կղզեակ. *Կտուչ*՝ յորում ճգնաւորք կրնակին. *Լիւ՛*՝ միասներէն աւելի մեծ, նոյնպէս բնակարան է ճգնաւորաց:

ՔԻԻՐՏԻՍՏԱՆ.

Այժմու Քիւրտիստանին միայն հիւսիսակողմն եւ արեւ-

մտակողմը Հայաստանի մեջ է, եւ ձեւացած է *Մոկաց* աշխարհին մեկ մասովն ու, *Կորդուաց* աշխարհովն, որոյ անունը պահած է. բնակչաց մեծագոյն մասը Քիւրտ են, աւագակարարոյ եւ ինքնագլուխ, անոր համար դժուարին է ճանապարհորդաց այս երկիրս մտնել; եւ այն պատճառաւ տակաւին անձանօք մնացած է Քիւրտիստանը. երկիրը շատ լեռնոտ է. գլխաւոր գետերն են *Տիգրիս* եւ *Ջալ*:

ՃԵԶԻՐԷ (3,000 բն.) Տիգրիսի վերայ, երբեմն նշանաւոր քաղաք, բայց 1836-ին Քիւրտերու պատերազմներովը անշքացաւ:

ԱՄԱՏԻԷ, Ջալի մօտ, նոյնպէս Քիւրտերու պատերազմներովն աներեցաւ:

ՃՈՒԼԱՄԵՐԿ, Ջալի վերայ, բնկած քաղաք:

ՊԱՐՍԻՑ ՀԱՅԱՍՏԱՆ.

Պարսիկք յառաջ Հայաստանի մեծագոյն մասին տէր էին. բայց յետոյ Օսմանեանք, եւ վերջի ժամանակներս (1828-ին) Ռուսք ընդարձակ երկիրներ առին նոցա ձեռքէն, այնպէս որ այժմ Հայաստանի փոքրիկ մասը մնացած է նոցա իշխանութեան տակ: Պարսից Հայաստանի մեջ են *Վասպուրականի* մեծագոյն մասը, *Կորդուաց*, երկրին մեկ մասը, ամբողջ *Պարսկահայքն* եւ *Ատրպատական* աշխարհն որ երբեմն Հայոց իշխանութեան տակ էր եւ Հայաստանի 15 նահանգներէն դուրս է. բայց որովհետեւ այս կողմէն մեր հայրենեաց սահմանն որոշեալ չէ,

Հայաստանի մեջ կղնեմք զայն : Պարսից Հայաստանն այժմ եօրը գաւառ կրածանի , որոց իւրաքանչիւրին գաւառապետը *խուսէ* կկոչուի : Երկիրը՝ Հայաստանի միւս մասերուն նման բարձրաւանդակ մի է , յորում շատ երկնաքերձ եւ ձիւնապատ լեռներ կբարձրանան , մանաւանդ Յամանեան Հայաստանի սահմանները , Կասպից ծովուն մօտերն եւ մեջտեղերը : Գլխաւոր գետն է *Երասխ*՝ հիւսիսային սահմանը : Այս երկրիս մեջ է *Որմեայ* ծովակը որ Հայաստանի երկրորդ մեծ լիճն է :

ՄԱՍՈՒ , Մասիս լեռան հարաւակողմը , ամուր բերդունի եւ ընդարձակ քարանձաւ . 1840-ին երկրաշարժով մեկ մասն աւերելով եւ բնակչացը Ռուսաստան գաղթելովն այժմ ընկած : Այս քաղաքիս մօտերն է *Աւարայրի դաշտն* Տղմուտ գետոյն քով , յորում 451-ին նահատակեցան Վարդանանք :

ԽՈՅ (25,000 բն.) որ է հին շե՛ր քաղաքն , ընդարձակ եւ գեղեցիկ տներով ու պարտեզներով զարդարած :

ՄԱՐԱՆԴ կամ ՄԷՐԷՆՏ (5,000 բն.) Որմեայ ծովուն հիւսիսային արեւելակողմը , ունի բերդ մի . ըստ աւանդութեան Հայոց եւ քաղաքին բնակչացը , Նոյի կինն այստեղ բաղուած է . նմանապէս այստեղ բաղուած են Ալիարսլան եւ Մելիքշահ :

ՏԻԼԻՄԱՆ կամ ՍԱԼՄԱՍՏ (4,000 բն.) հին *Զարեւանդ* գաւառին մեջ վաճառաշահ քաղաք :

ՈՐՄԻԱ կամ ՈՐՄԻ (20,000 բն.) համանուն լճին մօտ

հին եւ անուանի քաղաք, այժմ նշանաւոր է վաճառականութեամբը :

Որմեայ ծովուն մեջ ուրը կղզիներէ ձեւացած խումբ մի կայ որ վանայ ծովուն կղզիներէն մեծ են :

ԳԱՎՐԷԺ կամ ԹԷՊՐԻՉ (100,000 բն.) Մեծին Խոսրովու շինած քաղաքը, ամուր սլարխսպներով պատած է. վաճառականութեան կողմանէ բոլոր Պարսկաստանի առաջինն եւ արեւմտեան Ասիոյ առաջիններէն մեկն է. բայց գետնաշարժն անպակաս է մեջը, որ մեծամեծ վնասներ կպատճառէ :

ՄԱՐԱՂԱ (15,000 բն.) *Սոհուռն* լեռանց հարաւակողմը նշանաւոր քաղաք :

ՄԻԱՆԷ (3,500 բն.) այս քաղաքիս մօտ է *Թիւրքմէնչայ* ամուր գիւղաքաղաքն, յորում եղաւ 1827-ին դաշնադրութիւնը Ռուսաց եւ Պարսից մեջ :

ԱՐՏԱԻԻԼ կամ ԷՐՏԷՊԻԼ (4,000 բն.) *Սեւեջան* բարձր լեռանց արեւելակողմը, երեւելի քաղաք էր, այժմ ընկած . այստեղ բաղուած է Շեյխ Սեֆի՛ Պարսից այժմու բազաւորաց նահապետն, եւ Շահ-Իսմայէլ՛ նոյն ցեղին առաջին բազաւորը :

ԱՀԱՐ կամ ԷՀԷՐ (3,500 բն.) մօտերը լեռանց մեջ երկարի հանքեր ունի :



Ա Ր Ա Ռ Ի Ա.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ : — Արարացիք ըստ մեծի մասին սերունդ են Արրահամու Իսմայել որդւոյն, որով եւ երբեմն *Հագարացիք* կկոչուին՝ յանուն Իսմայելի Ազար մօրը. կկոչուին նաեւ *Սարակիւնուք* ըստ Եւրոպացւոց : Հին ժամանակներն Արարացիք աննուաճելի ազգ համարուած էին, եւ երբեք ո՛ր եւ իցէ հզօր տերութեան իշխանութեան տակ չընկան ուրիշ ազգաց նման : Եօթներորդ դարուն մեջ Մահմետ նոր հաւատք հաստատեց Արարիոյ մեջ, անով այլ եւ այլ ինքիշխան մանր ցեղերը միանալով՝ հզօր տերութիւն մի ձեւացուցին : Մահմետի մահուանէն ութսուն տարի յետոյ *ամիրապետաց* կամ *Խաշիֆաշից* ժամանակ, որ Մահմետի յաջորդներն էին, Արարացւոց տերութիւնը կտարածուէր Ասիոյ մեջ ինդոս գետէն մինչեւ Ափրիկէի Ատլաս լեռանց արեւմտակողմը, Եւրոպայի մեջ եւս Սպանիան ունէին : Այս ինքնակալութեանս ամենէն փառասօր ժամանակն, եւ մանաւանդ Հարուն-էլ-Ռաշիտ ամիրապետին օրերը (800-ին) Արարացիք շատ յառաջ գնացած էին բանաստեղծութեան, բրժկութեան, աստղարաշխութեան եւ չափաբերական գիտութեանց մեջ . Եւրոպայի մեջ այժմ գործածուած բուսնշաններն Արարացիք բերին Հնդկաստանէն : Բայց այնուհետեւ այս մեծագօր եւ ընդարձակ տերութիւնս ներքին երկապառակութեամբք տկարանալ սկսաւ, միւս կողմանէ

եւս Մոզուք ու այլեւայլ Թարար ցեղեր զօրանալով՝ վերջին հարուածը տուին ինքնակայութեանս ժԳ դարուն մեջ : Արարացի ազգն այժմ իւր բուն երկրէն զատ կզրտնուի նաեւ Ափրիկէի հիւսիսակողմն եւ Սսիոյ շատ երկիրներուն մեջ : Այժմ Արարիան առաջուան նման ցեղապետներու ձեռքով կկտուավարուի , որ շէյխ կամ իմամ կկոչուին . սոցա մեջէն շատերը Օսմանեանց իշխանութեան տակն են :

Արարիոյ սահմանն է հիւսիսէն՝ Սսիոյ Տաճկաստան , արեւելքէն՝ Սսիոյ Տաճկաստան եւ Պարսկային ծոց , հարաւէն՝ Էօմէնի ծով եւ Ատենի ծոց , արեւմտքէն՝ Կարմիր ծով :

Տարածութիւնն է 29,000 բիւրմերը քառակուսի :

Արարիան եօրը զլիաւոր մասն կբաժանուի , որ են .
Անասպատն Սինայի , Հիւսազ , Եմէն , Հատրամաուր , Էօմէն , Էսհսս եւ Նեհտ :

Արարիոյ բերակողին ընդարձակ բարձրաւանդակ մի է , որոյ արեւմտակողմը Կարմիր ծովուն եզերքը լերանց գօտիով մի փակած է . այս գօտին մինչեւ Սինա կհասնի , եւ անով Ասորեոց երկրին լերանց հետ կմիանայ : Այս բարձրաւանդակս , որ Կարմիր ծովէն դեպ ի Պարսկային ծոցը կխոնարհի , հիւսիսային կողմը քարոտ է , որով եւ *Ապառամ Արարիա* կկոչուի , մեջտեղերն աւազուտ , իսկ հարաւային կողմը՝ մանաւանդ Եմէնի գաւառը՝ սաստիկ բարեբեր , ուստի եւ *Երջանիկ Արարիա* կկոչուի :

Արաբիան ընդհանրապէս անջրղի է. միայն եմեն գաւա-
որ քանի մի փոքրիկ գետեր կան. գլխաւոր լեռներն են
էլ-Արեւո՝ մեջտեղերը, եւ *Սիւնա* ու *Քորեյ* հիւսիսային
կողմերը: Արաբիոյ մեջ տեղ տեղ սաստիկ անձրեւներ
կուգան, եւ անապատին մեջ *սեմնուշմ* խորշակը կփչէ որ
սոսկալի կոտորածներ կպատճառէ: Արաբիոյ օդն ընդ-
հանրապէս տաք է եւ չոր. միայն տեղ տեղ, մանաւանդ
ծովեզերքը, բարեխառն:

Գլխաւոր բերքն է խահուէ, արմաւ, քոքոյ, տեսակ տե-
սակ խունկեր եւ անուշահոտ բոյսեր, ինչպէս բալասան,
զմուռս, հալուէ, եւ այլն. այնպէս որ Ատենի ծոցին եզերքի
օդն անգամ անուշահոտ է կասեն: Կենդանեաց մեջ ունի ձի՝
որ բոլոր աշխարհիս առաջին ազնիւն է, էշ, ուղտ, առիւծ,
ջայլամ եւ այլն: Հանքերու մեջ ունի հանքային աղ, եւ
տեսակ տեսակ քարեր. Պարսկային ծոցէն առատ մար-
գարիտ կելնէ, Կարմիր ծովուն եզերքէն ալ շատ բուստ
(*մեղճակ*):

Բնակիչն է իբր 12,000,000 Արաբացիք, որ խրեանց
հիւրասիրութեամբն անուանի են: Սոքա երկու մասն կը-
բաժանուին. ոմանք հաստատուն բնակութիւն ունին, եւ
կրնակին լեռները, քաղաքներն եւ ծովեզերքը. միւսները
որ *Պետեշի* կկոչուին, վրանարնակ են եւ անապատնե-
րու մեջ բափառական կպտրտին:

Կրօնքն է մահմետականութիւն, մեծագոյն մասը սիւն-
նի, մեկ փոքրիկ մասը միայն շիի. Արաբիոյ մեջ կգրտ-

նուին նաեւ սակաւաթիւ կուսապաշտ Հնդիկք, եւ 60,000-ի՝
չափ վրանարնակ Հրեայք, որ կկոչուին *որդիք Հոնքա-
րայ* :

Լեզուն է հին արաբերենի աշխարհաբան, որ աշ-
խարհիս շատ հարուստ լեզուներէն մէկն է :

Հաստատուն բնակութիւն ունեցող Արաբացոց երկիր-
ներն այլ եւ այլ մանր տեքութիւնք կրածանուին, որոց
գլխաւորքն են *Մէքքէ*, որոյ իշխանը *շէրիֆ* կկոչուի, եւ
Օսմանեան ինքնակալին հպատակ է, եմենի եւ Մաշկա-
րի իշխանքն որ *իմամ* կկոչուին. իսկ վրանարնակ Արա-
բացիք բազմաթիւ եւ իրարմէ անկախ ցեղեր կրածանուին,
որոց ցեղապետքը *շէյխ* կկոչուին :

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՔ .

ՄԷՔՔԷ (35,000 բն.) Արաբիոյ գլխաւոր քաղաքը կհա-
մարուի, Մահմետի հայրենիքն է, եւ մահմետականաց
մեծ ուխտատեղի : — Այս քաղաքս մահմետականք միայն
կարող են մտնել, որք պարտական են գէթ միանգամ
իւրեանց կենաց մէջ ուխտի գալ այստեղ. մեջը անուանի
մզկիթ մի կայ՝ յորում կպահուի *քեապէն*, որ ըստ Արա-
բացոց Աբրահամ եւ Իսմայել շինած են Գաբրիել հրեշտա-
կապետին օգնութեամբը :

ՃԻՏՏԷ (25,000 բն.) Կարմիր ծովուն վերայ Մէքքէի
մօտ, վաճառաշահ նաւահանգիստ, բայց օղն անառողջ :

ՄԵՏԻՆԷ (6,000 բն.) այս քաղաքս փախաւ Մահմետ
Մէքքէէն 622-ին, ուսկից սկսաւ մահմետականաց *հինրէք*

քուականը՝ որ *փաստուտ* կնշանակէ : Այստեղ քաղուեցաւ Մահմեա, եւ գերեզմանին վերայ մզկիթ մի շինուեցաւ, որով սա եւս մեծ ուխտատեղի է մահմետականաց :

ԱԼԻՆԷ (40,000 ըն.) Եմենի իմամին արոտանիստն, գեղեցիկ քաղաք, բազմաթիւ պալատներ եւ մզկիթներ ունի :

ՄՈՒԱ (5,000 ըն.) Շատ վաճառաշահ եւ ամուր քաղաք. սորա խահուէն աշխարհիս ամենէն լաւ տեսակը կհամարուի :

ԱՏԷՆ (40,000 ըն.) համանուն ծոցոյն վերայ լաւ նահանգիստ. երբեմն մեծ եւ վաճառաշահ քաղաք էր, յետոյ ընկաւ. իսկ այժմ 1839-էն ի վեր Անգղիացւոց ձեռքըն անցաւ եւ օրէ օր կծաղկի :

ՄԱՇԿԱԹ (60,000 ըն.) Արարիոյ ամենէն վաճառաշահ քաղաքն է. երկար ժամանակ Փորթուգալցւոց ձեռքն էր, այժմ ինքնագլուխ իմամ մի կիշխէ այնտեղ, որ Արարիոյ ամենէն զօրաւոր իշխանն է, եւ Անգղիացւոց հետ մեծ վաճառականութիւն ունի :

Արարիոյ հիւսիսակողմն են հոջակաւոր *Պետրա* (*ասպանաժ*) քաղաքին աւերակներն, յորմէ երկիրն եւս *Ասպանաժ Արարիա* կոչուեցաւ :

Սիւեզի ծոցոյն մօտ է գերահոջակ *Սիւսա* լեռն, ուր Աստուած Իսրայելացւոց օրէնք տուաւ : Սինայէն անդին է մեծ անապատն ուր Իսրայելացիք 40 տարի մոլորեցան :

Արարացւոց ձեռքն են եւ Պահրէյն կղզիները Պարսկային ծոցին մեջ՝ Անգղիացւոց պաշտպանութեան տակ, ուստի առատ եւ պատուական մարգարիտ եւ բուստ կելնէ :

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — Հին ժամանակները Պարսիկք՝ Ասիոյ միւս շատ ազգերուն նման, աննշան տերութիւն մի ունէին . Քրիստոսէ 560 տարի յառաջ մեծն Կիւրոս Պարսից հզօր ինքնակալութիւնը հիմնեց, եւ Ասիոյ շատ տեղերուն տիրեց, մինչեւ Միջերկրական եւ Սեաս ծովերը . Մեծն Աղեքսանդր Քրիստոսէ յառաջ, 323-ին կործանեց այս թագաւորութիւնս, եւ նորա մահուանէն յետոյ Պարսկաստանն Ասորւոց տերութեան մէկ մասն եղաւ, մինչեւ որ Պարթեւք զօրանալով՝ առին զայն Ասորւոց ձեռքէն : Քրիստոսէ յետոյ 226-ին Արտաշիր Սասանեան Պարսիկը Պարթեւաց Արտաւան թագաւորին յաղթելով՝ Արշակունեաց թագաւորութիւնը վերուց, եւ Սասանեան ինքնակալութիւնը հիմնեց :

Մահմտի քարոզութենէն յետոյ 640-ին Արարացիք Պարսից թագաւորութիւնը կործանեցին, յետոյ Պարսկաստանը ժԳ դարուն մեջ Մողոլաց ձեռքն անցաւ, ժԵ դարուն մեջ Թուրքաց ազգէն ոտնակոխ եղաւ, ժԸ դարուն մեջ ալ Աֆղաններէն :

Այժմու թագաւորութեան հիմնադիրն է Իսմայիլ Սեֆի որ 1505-ին շահ անունն առաւ, եւ ինքզինքն Ալիի ցե-

դէն կհամարէր : Նորանէ յետոյ Պարսից երեսնչի բազաւորք նստան Շահ Աբբաս (1585—1629), եւ Նատիր-շահ կամ Գահմաս գուլի-խան (1736—1747) : Այս դարուս սկիզբներն եւ 1827-ին Ռուսք ընդարձակ գաւառներ առին Պարսից ձեռքէն, յորս եւ Հայաստանի մեկ մասը :

Պարսկաստանը շատ անգամ անիշխանութեան մեջ ընկնելով եւ մօտակայ՝ քշնամի ազգերէն մեծամեծ հարուածներ ընդունելով՝ սոսկալի եւ արիւնահեղ խռովութեամբք լի էր մինչեւ մեր օրերը :

Պարսկաստանի սահմանն է հիւսիսէն Ռուսաստան, Կասպից ծով եւ Թուրքաստան, արեւելքէն՝ Պելուճիստան եւ Աֆղանիստան, հարաւէն՝ Պարսից ծոց եւ Հիւրմիւզի նեղուցը, արեւմտքէն՝ Տաճկաստան :

Տարածութիւնն է 11,590 բիւրմերը քառակուսի :

Երկիրը ընդարձակ լեռնադաշտակ մի է. հիւսիսէն Հայաստանի լեռներով եւ արեւմտքէն *Էրուհնտ* լեռներով պատած, եւ կերկրնայ կերբայ մինչեւ Պելուճիստան եւ Աֆղանիստան : Այս բարձրաւանդակս տեղ տեղ բլուրներ ունի, եւ տեղ տեղ ընդարձակ աւազուտ եւ անբեր դաշտեր. այս անբեր դաշտաց մեջ ամենէն ընդարձակն է *Մեծ անապատն աղի*, Թեհրանի եւ Ջերրէ լճին մեջտեղ : Քանի մի ովասիսներ, հովիտներն եւ հիւսիսակողմն Հայաստանի մասը շատ բարեբեր են :

Օդն ամառը սաստիկ տաք է, եւ Պարսկային ծոցոյն եղիբքն անտանելի. ձմեռը մեջտեղի լեռնադաշտակին վե-

րայ սաստիկ է, իսկ հիւսիսային գաւառաց օղբ բարեխա-
ռքն եւ գուարճալի :

Պարսկաստանը շատ գետեր չունի . ունեցածներն եւս
ըստ մեծի մասին փոքր գետեր են միայն . գլխաւորներն
են *Շուդիւշ-Արեւ* եւ *Տիգրիս*՝ արեւմտեան սահմանը *Ե-
րասխ* հիւսիսային սահմանը՝ որ Կուր գետը կբափի .
Գրգըշ Էօզէն եւ *Արրուզ*, որ Կասպից ծով կբափին .
իսկ միւս աւելի մանր գետերն այլ եւ այլ լճեր կբափին
կամ աւազի մեջ կկորսուին :

Գլխաւոր լճերն են, *Որմէւայ լիճն*՝ որ ամենէն մեծն է՝
Հայաստանի մեջ, *Պախրէկեան* եւ *Զերրէ* :

Գլխաւոր բերքն է բուսոց մեջ ցորեն , բրինձ , բրբուռ ,
կանեփ , վուշ , ծխախոտ , տեսակ տեսակ պտուղներ ազ-
նիւ եւ առատ , շաքարենի , բամբակ , մանանայ , գխտոր ,
բրենի , նարինջ , բուգ, իւղային բոյսեր , պատուական
խաղող եւ այլն . կենդանեաց մեջ ունի ձի՝ որ ուժի եւ
գեղեցկութեան կողմանէ Արարիոյ ձիերէն վար չեն մնար .
ուղտ , գոմէշ , պարարտադմակ ոջխարներ , ազնիւ տե-
սակ այծ եւ այլ ընտանի կենդանիք . իսկ վայրի կամ
վնասակար կենդանեաց մեջ ունի առիւծ , յովազ , ընձա-
ռիւծ , բորենի , աղուես , կարիճ , սպիտակ մրջիւն եւ
այլն . մարախը երբեմն բոլոր երկիրն անապատ կդարձը-
նէ : Զուկ միայն Կասպից ծովէն կելնէ . Պարսկային ծո-
ցէն ալ պատուական մարգարիտ կհանուի : Հանքերու մեջ
ամենէն առատն աղն է . ունի նաեւ պղնձի , երկաթի եւ

կապարի հարուստ՝ քայց անգործ մնացած հանքեր, նմանապէս եւ շատ տեսակ պատուական քարեր :

Բնակիչն է 10,000,000, մեծ մասը Պարսիկ, մնացածը Թուրք, Արաբացի, Հայ, Քիւրտ եւ Հրեայ : Լեզունին պարսկերէն է, որ հին պարսկերենին ուսմկօրէնն է . կրօնքըն է մահմետականութիւն՝ Ալլի աղանդը, որ եւ շիի կկոչուի :

Ուսման եւ գիտութեանց կողմանէ շատ ետ մնացած են Պարսիկք . ճարտարութեան մեջ փոքր ինչ լառաջ գրնացած են, մանաւանդ մետաքսեայ գործուածքներու կողմանէ . իսկ վաճառականութիւնը ծաղկած է՝ դրիցը պատճառաւ, թէ եւ լառ ճանապարհներ ջունի եւ կարաւաններով կքայեն :

Տերութեան կառավարութիւնն է միապետութիւն, եւ թագաւորը կկոչուի շահ :

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔԻՔ .

ԴԵՀԲԱՆ (14,000 բն. ձմեռք) Պարսկաստանի այժմու մայրաքաղաքն է . ամառը սաստիկ տաքութեան պատճառաւ բնակչաց մեծագոյն մասն ուրիշ տեղեր կերբան . ամուր եւ աշտարակազարդ պարսպով պատած է . նշանաւոր են թագաւորին պալատն ու սքանչելի պարտեզները :

ԱՍՊԱՀԱՆ (60,000 բն.) Պարսկաստանի հին մայրաքաղաքն, լառաջ շատ աւելի ըզգմամարդ եւ ծաղկած

եր . այժմ նշանաւոր ե վաճառականութեամբն ու ճարտարութեամբը : — Այս քաղաքիս մեկ արուարձանը կհամարուի ՆՈՐ ԶՈՒՂԱՅ (3,000 բն .) զոր հին Զուղայէն եկած Հայք շինեցին ու ծաղկեցուցին . 34 կամարով երեսելի կամուրջ մի ունի :

ՄԷՇԷՏ (40,000 բն .) Խորասանի գլխաւոր քաղաքն է՝ շատ վաճառաշահ . նշանաւոր է մեջը Ռիզա խմամին գեղեցիկ շիրիմը :

ՌԷՇՏ (60,000 բն .) Կասպից ծովուն մօտ , անուանի գործարաններ ունի մետաքսեղենի եւ *զէնքի* :

ԱՍՏԷՐԱՊԱՏ (30,000 բն .) Կասպից ծովուն մօտ մեծ քաղաք , բայց օդին անառողջութեանը պատճառաւ ամառը սակաւամարդ :

ՊԱԼՅԻՐՈՒՇ (120,000 բն .) Պարսկաստանի առաջին վաճառաշահ քաղաքներէն մեկն է :

ՆԻՇԱՊՈՒՐ կամ ՆԻՒՇԱՊՈՒՀ (15,000 բն .) հին եւ ծաղկած քաղաք էր , այժմ ընկած . քովերը պատուական քարեր կգտնուին :

ԿՐՄԱՆ (30,000 բն .) ցփսիի , գորգի , գէնքի գործարաններ ունի :

ՀԻՐՄԻԻԶ կամ ՈՐՄՈՒԶ , Պարսկային ծոցոյն համանուն կղզւոյն մեջ , Անգղիացւոց ձեռքը բանուկ նաւահանգիստ եւ վաճառաշահ քաղաք :

ՇԻՐԱԶ (20,000 բն .) սքանչելի հովտի մի մեջ՝ մեծ եւ երեսելի քաղաք էր , 1853-ին զրեթէ բոլորովին կործանե-

ցաւ գետնաշարժով . անուանի է զինին : Հայրենիք Սատի
եւ Հաֆրզ բանաստեղծներուն : Սորա քովն են Ստահր
կամ Պերսեպոլիս քաղաքին աներակները :

ԵԶՏ (50,000 ըն .) ճարտար եւ շատ վաճառաշահ քա-
ղաք , բնակչացը մեջ կրակապաշտք եւս կգտնուին :

ՊՈՒՇԵՐ կամ ԱՊՈՒՇԷՐ (20, 000 ըն .) Պարսկային ծո-
ցոյն վերայ շատ վաճառաշահ նաւահանգիստ :

ԿՐՄԱՆՇԱՀ (40,000 ըն .) ճարտար եւ վաճառաշահ
քաղաք :

ՀԱՄԱՏԱՆ (30,000 ըն .) հին *Եկրատան* քաղաքին տե-
ղը վաճառաշահ քաղաք :

ԳԱԶՊԻՆ (50,000 ըն .) ճարտար եւ վաճառաշահ քա-
ղաք , անուանի է զինին :

ՔԱՇԱՆ (30,000 ըն .) ճարտար , ծաղկած եւ վաճա-
ռաշահ քաղաք . երեսէի է ազնիւ պտուղներովը :



ԹՈՒՐՔԱՍՏԱՆ.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — Շատ հին ժամանակներն այս երկիրս անձանօք էր, եւ Սկիւթիոյ մեկ մասը կհամարուէր . միայն Բակտրիա գաւառը փոքր ինչ ծանօթ էր, եւ Նինոսի ժամանակներէն ի վեր առանձին թագաւոր ունէր : — Ասորեստանցիք տիրեցին բոլոր այս երկրիս, նոցանէ յետոյ ալ Պարսիկք . Արաբացիք Պարսկաստանի տիրելէն յետոյ Թուրքաստան մտան եւ քանի մի տերութիւնք հաստատեցին մեզը, զորս յետոյ Մողոլք կործանեցին : 1400-ին ժամանակները Լենկթիմուր մեծ տերութիւն մի հիմնեց Թուրքաստանի մեջ եւ աթոռը Սմրղանդ դրաւ . բայց այս մեծ աշխարհակալին մահուանէն յետոյ Թուրքաստանի մեջ բնակող այլ եւ այլ ազգերը կամ ցեղերը հետ զհետէ ինքնազլուխ եղան, եւ այժմ քանի մի ազատ խաներու ձեռքով կկառավարուին : — 1854-ին Ռուսք Խըրղըզաց երկրին տիրեցին, որ Թուրքաստանի մասն էր :

Թուրքաստանի սահմանն է հիւսիսէն Ասիական Ռուսիա, արեւելքէն Չին, հարաւէն Պարսկաստան եւ Հերաթ, եւ արեւմտքէն Կասպից ծով :

Տարածութիւնն է իբր 16,000 բիւրմեքր քառակուսի :

Երկիրը արեւմտակողմն ընդհանրապէս դաշտային է, իսկ հարաւակողմն եւ արեւելակողմը լեռնոտ : — Հողը

լերանց հովիտներուն մէջ եւ գետեզերքը բարերեր է, միւս տեղերն ընդհանրապէս անբեր աւազուտ :

Օդը տաք է սովորաբար, մանաւանդ դաշտային երկիրները . բայց եւ ձմեռը սաստիկ ցուրտ է շատ անգամ :

Գլխաւոր գետերն են *Սըրտէրեա* եւ *Ամուտէրեա*, որ Արալ լիճը կրափին :

Թուրքաստանն ունի ազնիւ ընտանի կենդանիք . ինչպէս ձի, պարարտադմակ ոջխարներ, ուղտ, եւ այլն . իսկ վայրի կենդանեաց մէջ ունի արջ, աղուես, բորենի, եւ այլն : Բուսոց մէջ ունի բրինձ, վուշ, բամբակ, եւ ամեն հասարակ պտուղները . հանքերու մէջ ունի պատուական քարեր, հանքային ածուխ . իսկ երկաթ, պղինձ եւ ուրիշ մետաղներ սակաւ ունի : Թուրքաստանի նշանաւոր բերքերէն մեկն է նաեւ առատ մետաքսն եւ անով շինուած կերպասները :

Բնակիչն է իբր 6,000,000 այլ եւ այլ ազգեր ու ցեղեր, բայց ընդհանուր անուամբ *Թարար* կկոչուին, թէ եւ քանի մի ազգեր *Թարարաց* ցեղէն չեն . Թուրքաստանի զըլխաւոր ազգերն են *Իւզդէքք*՝ վրանարնակ, փոքրահասակ եւ քաջ մարդիկ . *Թուրքք*, ժամանեանց նախահարքրն . սոցա ցեղէն կհամարուին եւ *Թիւրքմէնք* . *Խըրդըքք*՝ որ վրանարնակ եւ աւազակարարոյ՝ մարդիկ են . *Պուշխարքք*՝ որ ուրիշ ցեղերու նման կորովի չեն, քաղաքաց մէջ կբնակին եւ արուեստից ու վաճառականութեան կպարապին :

կրօնքն է մահմետականութիւն : Լեզուն է բուրքերէն :
Գիտութիւն չկայ Թուրքասանի մեջ . արուեստները
փոքր ինչ ծաղկեալ են , իսկ վաճառականութիւնը բա-
նուկ է :

Թեպէտ իւրաքանչիւր ցեղ իւր առանձին *խանը* կամ
ցեղապետն ունի , սակայն Թուրքաստանը սովորաբար
երեք ազատ խանութիւն կրածանուի , որ են *Պոխարայի* ,
Խորասանի եւ *Խիւսայի* խանութիւնները . սոցա մեջ գլխա-
ւոր խանութիւն Պոխարայինը կհամարուի :

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔԻՔ.

ՊՈՒԽԱՐԱ (150,000 բն.) համանուն խանութեան մայ-
րաքաղաքը , ճարտար եւ շատ վաճառաշահ ունի բազմա-
թիւ մզկիթներ եւ երեսելի ուսումնարաններ , յորս Ասիոյ
ամեն կողմերէն աշակերտք կգտնուին : Պարսպապատ
միջնաբերդին մեջն է խանին բնակարանը :

ՊԱԼԽ (3,000 բն.) որ է հին *Բահլ* , *Բակտրիա* կամ
Զարիասայ հռչակաւոր քաղաքը , բարեբեր դաշտի մեջ ,
այժմ մեծագոյն մասն աւերակ : Հայրենիք է քաղաքս Զը-
րաղաշտ մոզին , եւ այս քաղաքիս անուամբը կոչուեցաւ
Պահլաւունեաց գերահռչակ ցեղն , յորմէ շատ երեսելի մար-
դիկ ունեցաւ մեր ազգը :

ՍՄՐՂԱՆՏ (20,000 բն.) բարեբեր հովտի մեջ , Լենկ թի
մուրի տիեզերական իշխանութեան մայրաքաղաքն , որոյ
ժամանակ շատ մեծցաւ ու ծաղկեցաւ . այժմ ընկած է , ունի
բազմաթիւ մզկիթներ եւ երեսելի դպրոցներ :

ԽՈՔԱՆՏ (125,000 ըն.) Սըրտերեա գետոյն մօտ, համանուն խանութեան մայրաքաղաքը եւ ճարտարութեան մեջ շատ յառաջադեմ : Ճինկիզխանի գլխաւոր արհեստիւտըն էր, յորում կատարեց իւր բոռանց փառաւոր հարսանիքը :

ԹԱՇՔԷՆՏ (20,000 ըն.) Սըրտերեա գետոյն վերայ շատ վաճառաշահ քաղաք. ունի ամուր միջնաբերդ. օգը շատ գուարճալի է եւ երկիրը բարեբեր :

ԽՈԶԷՆՏ (50,000 ըն.) Սըրտերեա գետոյն վերայ մեծ եւ վաճառաշահ քաղաք :

ԽԻՎԱ (12,000 ըն.) համանուն խանութեան մայրաքաղաքն էւ շատ ամուր բերդաքաղաք. գերեաց մեծ վաճառականութիւն ունի :

ՈՒՐՔԷՆՃ (12,000 ըն.) Խիվայի խանութեան ամենեւն վաճառաշահ քաղաքը :



ԱՖՂԱՆԻՍՏԱՆ.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — Աֆղանիստանը Պարբե-
ւաց տերութեան մէկ մասն էր, յետոյ Սասանեանց ձեռքն
անցաւ, նոցանէ յետոյ ալ Արաբացոց : ԺՂ դարուն ըս-
կիզբները Մողոլաց Պապեր խանը տիրեց Աֆղանաց երկ-
րին . 1710-ին ապստամբեցան Աֆղանք, բայց Նատիր
Պարսից շահն հնազանդեցուց զիրենք . սորա մահուանէն
յետոյ Աֆղանք առանձին քաղաքոր դրին իւրեանց վերայ,
որոյ յաջորդաց ժամանակ խռովութիւններ ծագեցան .
այն պատճառաւ 1839-ին Անգղիացոց հետ ալ պատերազ-
մեցան, եւ այժմ երկիրը շատ մանր տերութիւններ
բաժանուած է, եւ տակաւին խռովութեան մեջ է :

Աֆղանիստանի սահմանն է հիւսիսէն Պարսկաստան եւ
Թուրքաստան, արեւելքէն Հնդկաստան, հարաւէն Պէլու-
ջիստան, իսկ արեւմտքէն Պարսկաստան :

Տարածութիւնն է իրր 4,500 բիւրմերը քառակուսի :

Երկիրը միայն մեջտեղերը դաշտային է, իսկ միւս կող-
մերը մեծամեծ եւ բարձր լեռներ ունի . հիւսիսակողմը
կտարածուին Հիմալայա լեռինք :

Հողը բարեբեր է, միայն արեւմտեան կողմերն անբեր
անապատ :

Օղն ընդհանրապէս տաք է, միայն հիւսիսակողմերը
բարեխառն եւ զուարճալի :

Գլխաւոր գետերն են *Ինդոս* կամ *Սինտ* եւ *Ամու-տերեա* :

Բերքն ընդհանրապէս Պարսկաստանի բերքերուն նման է :

Բնակիչն է իբր 10,000,000 մեծագոյն մասն Աֆղան՝ ազատասէր, քաջ եւ պատերազմասէր ազգ. մնացածը Հնդիկ, Պարսիկ, Իւգպէք, Թիւրքմէն եւ այլն : — Կրօնքն է մահմետականութիւն : — Լեզուն աֆղաներէն, որ հին հնդկերէն ու պարսկերէն լեզուներէ ձեւացած է :

Արուեստից եւ գիտութեանց մեջ շատ ետ մնացած է Աֆղանիստանը. վաճառականութիւնը բանուկ է :

Աֆղանիստանը գլխաւորապէս երկու տերութիւն բաժանուած է. *Քապուշի* կամ *քուշ* Աֆղանիստանի եւ *Հերաթի* քաղաւորութիւնքն. իսկ քաղաւորները *շահ* կկոչուին :

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՂԱՔՔ.

ՔԱՊՈՒԼ (70,000 բն.) համանուն գետակի վերայ որ Ինդոսի մէկ ճիւղն է, համանուն տերութեան եւ բոլոր Աֆղանիստանի մայրաքաղաքն է, գեղեցիկ, բարեբեր եւ զուարճալի դաշտի մեջ շինած. վաճառականութեան կողմանէ Ասիոյ երեսելի քաղաքներէն մէկն էր : Մօտակայ բլրի մի վերայ էր *Պաշահիսար* ամուր բերդն զոր 1842-ին Անգղիացիք կործանեցին եւ բոլոր քաղաքն այրեցին :

ՂԱԶՆԷ կամ ՂԻԶՆԷ, Քապուլի հարաւակողմը, Ղազնեւեան ցեղին մայրաքաղաքն էր, այժմ ընկած :

ԳԱՆՏԱՀԱՐ (60,000 բն.) Աֆղանիստանի ամենէն ճարտար, մեծ եւ գեղեցիկ քաղաքն է. նշանաւոր է մզկիթն

յորում րադուած է Անճեռ շահ : Անգղիացիք 1842-ին՝ քաղաքիս բոլոր բերդերն ու պարիսպները քանդեցին :

ՀԵՐԱԹ (60,000 բն.) համանուն քաղաւորութեան մայրաքաղաքը՝ զուարճալի հովտի մէջ շինած. ճարտարութեան եւ վաճառականութեան մէջ շատ լատաջադեմ է. անուանի են զենքերն եւ վարդեջութը : Անգղիացիք շատ ամրացուցին այս քաղաքս, այնպէս որ այժմ Ասիոյ ամենէն ամուրներէն մէկն է, եւ Պարսիկք շատ անգամ, ինչպէս նաեւ 1864-ին, ջանացին տիրել քաղաքիս :



ՊԵՂՈՒՉԻՍՏԱՆ.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԹԻՒՆ. — Պելուջիստանն ինն մասնակները Աֆղանիստանի մասն էր, եւ նորա անցքերն ունեցաւ մինչեւ անցեալ դարուն մէջերը . նատրրշահին մեռնելէն յետոյ Աֆղանաց ձեռքն անցաւ, բայց 1756-ին ապստամբելով՝ առանձին քաղաւորութիւն ձեւացաւ :

Պելուջիստանի սահմանն է հիւսիսէն Աֆղանիստան, արեւելքէն Հնդկաստան, հարաւէն Արաբիոյ ծով, արեւմտքէն Պարսկաստան :

Տարածութիւնն է իբր 3,700 բիւրմերը քառակուսի :

Երկիրն հարաւակողմն եւ արեւելակողմը դաշտային է, իսկ մեջտեղերը բարձրաւանդակ մի է : Հողը տեղ տեղ անբեր է, եւ տեղ տեղ շատ բարեբեր՝ մանաւանդ հովիտներուն մէջ :

Յոգը ծովեզերքն եւ Ինդոսի ափունքը տաք է եւ խոնաւ, իսկ հիւսիսակողմերը բարեխառն :

Գլխաւոր գետն է *Ինդոս*՝ արեւելեան սահմանը, ունի եւ այլ բազմաթիւ գետակներ ու վտակներ որ սովորաբար ամառը կցամաքին :

Բերքն Աֆղանիստանի բերքերուն նման է, բայց տեղ տեղ Հնդկաստանի բերքերն եւս ունի :

Բնակիչն է իբր 2,000,000 այլ եւ այլ ցեղեր, որոց գլխաւորքն են *Պէշուշիք* կամ *Պաշուշք* եւ *Պրահուշիք*. սոքա ըստ մեծի մասին բաժնաւական ժողովուրդներ են եւ ազակարարոյ, բայց եւ հիւրընկալ : Կրօնքն է մահմետականութիւն. լեզուն հնդկերենի մէկ տեսակը :

Արուեստից եւ գիտութեանց մեջ ետ մնացած է Պելուզիստանն, իսկ վաճառականութիւնը բանուկ :

Պելուզիստանը քանի մի ցեղապետներու ձեռքով կրկառավարուի որ *խաւն* կկոչուին : Վերջի տարիներս Անգղիացիք քանի մի արեւելեան գաւառներուն տիրեցին, եւ կերպով մի բոլոր երկրին վերայ եւս իշխանութիւն ունին :

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՂԱՔԻՔ .

ՔԵԼԱԹ (20,000 բն.) դիրքը բարձր եղածէն՝ ձմեռը օդը ցուրտ. արոռանիստ է Պելուզիստանի գլխաւոր խանին որ Անգղիացւոց հարկատու է : Վաճառականութիւնը ծաղկած է Հնդիկներու ձեռքով :

ՊԵԼԱ (16,000 բն.) ծովու մօտ, վաճառաշահ քաղաք :



Չ Ի Ն.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — Չինը կամ Չինաստանը, որ բնակիչներեն *երկնային ինքնակաշուրքիւն* կկոչուի, շատ հին ժամանակներէ ի վեր քաղաքակիրթ եւ ծաղկեալ տերութիւն էր. բայց որովհետեւ Չինք ուրիշ ազգաց հետ երբեւեկութիւն չունէին, անոր համար անելի յառաջադիմութիւն չկարողացան անել արուեստից եւ գիտութեանց մէջ: Քրիստոսէ յառաջ Գ դարու մէջ Թաքարաց արշաւանաց ղեմն առնելու մտքով՝ հիւսիսային սահմանները մեծ եւ աշտարակազարդ պարիսպ մի քաշեցին, որոյ երկայնութիւնն է 240 բիւրմեքր (զրեքէ 2400 վերսք), բարձրութիւնն 8 մեքր եւ լայնութիւնը 5 մեքր, եւ որ մինչեւ ցայժմ կանգուն կեցած է: Մողոլք 1260 - ին Չինաստան արշաւեցին, եւ մինչեւ 1368 տիրեցին երկրին այն տարիէն Չինք Մողոլաց քշուելովը դարձեալ ազգային թագաւորներ ունեցան, մինչեւ որ 1644-ին Մանչու Թաքարները տիրեցին Չինաստանի, եւ նոցա թագաւորական ցեղն է որ մինչեւ ցայժմ կիշխէ Չինու վերայ:

Քրիստոնէութիւնը ժՁ դարուն մէջ մտաւ Չինաստան յիսուսեան կրօնաւորաց ձեռքով, որ ժԸ դարու մէջ քշուեցան Չինու երկրէն. այն ժամանակէն եւրոպացւոց արգելք դրուեցաւ Չինաստան մտնելու, բայց հրաման տրուեցաւ նոցա որ միայն Քանթոն քաղաքն երբան վաճառականութեան համար: Անգղիացիք 1842-ին Նանքինի հաշտութեամբ Քանթոնի ծոցոյն *Հոնկըսնկ* կղզւոյն տէր եղան,

եւ հրաման ունեցան ուրիշ քանի մի քաղաքներ վաճառականութիւն անելու: Քանթոնի Չինացւոց գրգռութեամբը Անգղիացիք Գաղղիացւոց հետ 1856-ին Չինու դեմ պատերազմի ելան, 1857-ին վերջերը տիրեցին Քանթոնի, եւ անտի ալ դեպ ի հիւսիս երբալով՝ 1858-ին հասան մինչեւ *Քիկնցիկ* քաղաքը. Չինու տերութիւնը սարսափած զիջաւ առանձին հաշտութիւններ անելու Անգղիացւոց, Գաղղիացւոց, Ռուսաց եւ Միացեալ Նահանգաց հետ, եւ հրաման տալ ամեն Եւրոպացւոց ազատօրէն Չինաստան երբալու: Բայց Չինացիք 1859-ին մատնութեամբ վանեցին այն նաւերը՝ որոց մեջ էին Գաղղիոյ եւ Անգղիոյ տերութեանց Փէքին զնացող ղեսպաններն որ հաշտութեան պայմաններն ստորագրել տան. Անգղիացիք եւ Գաղղիացիք 1860-ին այս նախատանաց վրեժն առին՝ Փէքինու տիրելով, եւ ստիպելով կայսրն որ առաջուան հաշտութիւնն ստորագրէ: Այս նորաձեւութեան պատճառաւ Չինու շատ զաւառներն ապստամբեցան կայսրէն, եւ մինչեւ ցայժմ դեռ բոլորովին նուաճուած չէ այն ապստամբութիւնը:

Չինու սահմանն է հիւսիսէն Սիպիր, արեւելքէն Ճափոնի ծովը, Դեղին եւ Արեւելեան ծովերը, հարաւէն Չինաց ծով, Հնդկաչին եւ Հնդկաստան, եւ արեւմտքէն թ ուրբաստան:

Տարածութիւնն է իբր 130, 000 բիւրմերը քառակուսի, ամբողջ Եւրոպայի զրեքէ մեկ ու կեսին չափ:

Չինաստանը ինն մաս կրածանուի, որ են *Քուկ Չին*, *Քորէայի քաղաւորութիւն*, *Մակչուրիա*, *Մողոլաց աշ-*

խարհ, Սոնդար, Փոքր Պոռխարա կամ Չինաց Թուրքաստան, Թիպեր, Երկիր Խոռխուռնուրի, եւ Կղզիք : Բաց ի բուն Չինեն եւ կղզիներեն՝ միւս գաւառները հարկատու են միայն Չինաց :

Չինու երկիրն ընդհանրապէս լեռնոտ է, մանաւանդ հարաւակողմն եւ արեւմտակողմը : Չինու երկրին մեջ լեռանց զլխաւոր շարքերն են . *Սինխան*, որ կտարածուի Հնդկաչինու սահմաններէն մինչեւ Եանցեքեանկ գետոյն մօտերը, *Նանցիկնկ*՝ Եանցեքեանկի հարաւակողմը, *Եուսկչիկնկ*՝ Եանցեքեանկ եւ Հօանկհօ գետերու մեջտեղ, *Քիկնկխան*՝ Ամուրի հարաւակողմը, *Ալքայ*՝ հիւսիսակողմը, *Հիւմաչայա*՝ Հնդկաստանի սահմանները, *Պոչուր*, Թուրքաստանի սահմանը, *Սրանուօյ*՝ հիւսիսային արեւելակողմը, եւ *Թիանշան* ու *Քուէկուռն* լեռինք : Այս լեռանց մեջ մընացած ընդարձակ երկիրը մեծ բարձրաւանդակ մի է : — Հողը բարեբեր է, միայն հիւսիսակողմերը մեծամեծ անապատներ ունի, որոց ամենէն ընդարձակն է *Կուպի* անապատը :

Օղը՝ տարածութեանը նայելով՝ տեսակ տեսակ է . բայց ընդհանրապէս տաք քան թէ ցօրտ, եւ առողջարար :

Բազմաթիւ գետոցը մեջ զլխաւորներն են *Հօանկհօ* կամ *Դեղիկ գետ* եւ *Քեանկ* կամ *Եանցեքեանկ* կամ *Կասոյոյտ գետ*՝ որ ամենէն մեծերն են եւ Դեղին ծովը կրափին : *Սիքեանկ*՝ Չինաց ծովը կրափի . *Ամուր*, *Պրահմափուրրա*, *Ինդոս*, *Քիկչաքեանկ*, եւ այլն, որ այլ եւ այլ ծովեր կրափին :

Թե եւ Չինաստանը տակաւին բոլորովին ծանօթ չէ, սակայն այս երկրիս մեջ մինչեւ ցայժմ Եւրոպացւոց ծանօթ եղած բերքերն են, բունսոց մեջ՝ Եւրոպայի ամեն հասարակ տունկերն ու պտուղները. բաց յայնմանէ մեխակ, քափուր, գիհի, եղի ծառ, չայ՝ որ բուն Չինու բոյս է, եւ շատ տեսակ բժշկական բոյսեր: Կենդանեաց մեջ ունի փիղ, ունգեղջիւր, վագր, ինձ, գոմէշ, եւ այլն, եւ ամեն տեսակ ընտանի կենդանիք, յորս նշանաւոր են Թիպէքի այծերն որ բարակ ու գեղեցիկ մազ ունին. նշանաւոր են նաեւ շերամը, կարմրախայտ ձուկը, ոսկեգոյն փասիանը, եւ այլն: Չինու ծովերէն եւ գետերէն առատ եւ բազմատեսակ ձուկ կելնէ: Հանքերու մեջ կերեւի բէ ունի առատ ոսկի, արծաթ, պղինձ, երկաթ, եւ այլ մետաղներ ու տեսակ տեսակ քարեր, բայց տակաւին անծանօթ են:

Բնակիչն է իբր 430,000,000, որով աշխարհիս վերայ ամենէն բազմամարդ տերութիւնը կլինի Չինաստան. սոցա մեծագոյն մասը Չին են՝ մողոլեան կամ դեղին ցեղէ. մընացածը Մանչու. Թաթարք, Մողոլք, Ռուսք, Հրեայք, Եւրոպացի ազգեր, եւ այլն:

Չինք չորս դաս բաժանուած են. *գիտնականք, երկրագործք, արուեստաւորք* եւ *վանատականք*: Չինու մեջ կրթութիւնը միայն աղբիւր է ամեն պատուոյ եւ մեծարանաց. անոր համար առաջին դասի մեջ են գիտնականք, որոց մեջէն կընտրուին տերութեան ամեն պաշտօնեաները, զորս Եւրոպացիք *մանտարիւն* կկոչեն: Հաստ ու գեր մարդիկը յարգի են Չինաց մեջ, որովհետեւ նոքա կարծեն բէ

ըստ մարմնոյն մեծութեան եւ մարդուս խելքն ու հանճարը մեծ կլինի . կանանց գեղեցկութիւնը փոքր ոտք ունենայն է : Հայրերն իշխանութիւն ունին զաւակները գերի ծախելու : Գլխաւոր կերակուրներն են բրինձ եւ այլ եւ այլ կենդանեաց միսեր . իսկ գլխաւոր ըմպելիքներն են ջայ , ափիոն եւ բրինձի օղի : Միլիոնաւոր Չինացիք ծովերու եւ գետերու վերայ կրնակին նաւակներով :

Լեզուն է չիներէն՝ որ օտարազգիի համար շատ դժուարին է սովորիլ , վասն զի մի եւ նոյն բառն ըստ հնչման եղանակին կրնայ մինչեւ ութսուն իրարու աննման նշանակութիւններ ունենայ . Չինաց լեզուն 36 բաղաձայն տառեր ունի եւ 108 ձայնաւոր . բառերն ըստ մեծի մասին երկավանկ են , բայց կգտնուին մեջերը նաեւ մինչեւ հնգավանկ բառեր . ուստի բոլորովին ծուռ եւ անհիմն է շատերուն այն կարծիքը թէ Չինաց լեզուն միայն միավանկ բառերէ ձեւացած է : Չինք իւրաքանչիւր բառի կամ վանկի համար զատ զիր կամ նշանագիր ունին , որով ըստ ոմանց մինչեւ 80 հազար գիր ունին , եւ ըստ այլոց միայն 40 կամ 20 հազար . բայց այժմ հասարակ ժողովուրդը 3000 նշանագրով միայն կարող է ձր եւ իցէ իմաստ բացատրել . եւ նոցա զրերը կգրուին վերէն վար :

Չինու երկրին մեջ երեք կրօնք տիրած է . Կոնփուկիոսի կամ Քոնֆուցեի կրօնքը՝ որ գիտնականաց կրօնքն է , եւ սորա գլուխն է կայսրը . Փոյի կրօնքը որ պոպոտականութեան մեկ ճիւղն է . եւ Թաօցկօի կրօնքը կամ ոգեպաշտութիւն : Թիպեքի մեջ պոպոտականութեան քուրմերը շամա

կկոչուին, եւ նոցա գլխաւորն է *Տաշաշրամա*՝ զոր իբրեւ
աստուած կալաշտեն սրտտականք :

Ուսմունքն եւ զիտութիւնը տկար է Չինաց մեջ . միայն
չափաբերական զիտութիւնքը, մանաւանդ աստղաբաշ-
խութիւնը փոքր ինչ ծաղկած է . բայց այն եւս, թէ եւ
հազարաւոր տարիներէ սկսած է մեջերը, սակայն մեծ յա-
ռաջադիմութիւն արած չէ : — Ճարտարութեան կողմանէ
երեսելի են Չինացիք . թէ եւ Եւրոպացւոց շատ արուեստ-
ները տակաւին անձանօք են նոցա, սակայն քանի մի
արուեստից մեջ Եւրոպացւոցմէ եւս վեր են, ինչպէս ներ-
կեր շինելու եւ մանաւանդ յախճապակ գործելու մեջ : Նը-
շանաւոր են Չինաց մեջ նաեւ մետաքսէ գործուածքները,
բամբակէ կտաններն որ *Նանքիւն* կկոչուին, փղոսկրէ բա-
նուածքները, Չինու բանաքը, Չինու թուղթն, եւ այլն :
Եւրոպացւոցմէ շատ աւելի յառաջ ծանօթ էր նոցա կողմ-
նացոյցը, տպագրութիւնն ու վառօդը . բայց ամենեւին
կատարելագործած չեն իւրեանց գիւտերը : Երկրագործու-
թիւնը շատ յարգի է Չինաց մեջ, եւ կայսրը մեծ քաջա-
լերութիւն կուտայ երկրագործաց՝ ամեն տարի նախ ինքը
ակօս մի բանալով : — Վաճառականութիւնը, մանաւանդ
ծովայինը, շատ բանուկ է, եւ հետզհետեւ եւս առաւել
կծաղկի : — Բազմաթիւ ջրանցքներ կան Չինու երկրին
ներսերը, որոց մեջ ամենէն երեսելին է *կայսերական ջը-
բանցքն* որ Փեքինէն Նանքին կերբայ :

Տերութեան կառավարութիւնն է միապետութիւն . կայս-
րը *Քայրուսն կամ Երկնից որդի* կկոչուի, եւ զրեթէ աս-

տուածական պատիւ ունի, սակաւ անգամ պալատէն դուրս կելնէ, եւ այն ժամանակ բոլոր ժողովուրդն առջեւն ընկած երկրպագութիւն կանէ նորա :

Բ Ո Ւ Ն Չ Ի Ն .

ՓԼԻՔԻՆ (1,500,000 ըն. եւ ըստ ոմանց 3 կամ 4 միլիոն) ընդարձակ դաշտի վերայ շինած՝ Չինու ինքնակալութեան մայրաքաղաքն է Փեչիլի գաւառին մէջ, եւ 35 վերսք շրջապատ ունեցող պարսպով պատած . ընդարձակութեան եւ բազմամարդութեան կողմանէ բոլոր աշխարհիս առաջիններէն մէկն է : Փեքինը երկու մեծամեծ մասերէ ձեւացած է . *Քիւնկչիւնկ*՝ հիւսիսակողմը, Թաբարաց քաղաքն, յորում կրնակի եւ կայսրը, եւ *Վայրոյիւնկ* կամ Չինաց քաղաք՝ հարաւակողմը : Ունի բազմաքիւ մեծամեծ պալատներ, յորս երեւելի է կայսերական պալատն, որոյ շրջապատն է 4 վերսք, մեծամեծ կռատուններ՝ գորս *փակտ* կանուանեն, աստղաբաշխական դիտարան, հարուստ մատենադարան, կայսերական տպարան, բազմաքիւ ուսումնարաններ, եւ այլն : Գովերը բազմաքիւ գեղեցիկ եւ ընդարձակ պարտեզներ ունի :

ԹԻՆՅԻՆ (200,000 ըն.) Փեքինի մօտ, շատ վաճառաշահ քաղաք :

ՆԱՆՔԻՆ (600,000 ըն.) Եանցեքեանկի վերայ, ծաղկած, ճարտար, վաճառաշահ եւ շատ ամուր բերդաքաղաք. ունի բազմաքիւ մատենադարաններ ու տպարաններ, որով կայսերութեանս ուսումնական քաղաքն հա-

մարուած է. ունի նաեւ մեծակառուցց պալատներ եւ շէնքեր, յորս նշանաւոր է յախճապակով պատած ուրանկիւնի բարձր աշտարակը : Երեսելի են քաղաքիս բամբակէ դեղին կտաւներն որ *նակըին* կկոչուին :

ՔԱՆԹՈՆ (1,000,000 բն .) համանուն խորշին վերայ շատ ամուր բերդաքաղաք եւ Չինու առաջին վաճառաշահ նաւահանգիստը . երկար ժամանակ Եւրոպացիք միայն այս քաղաքս կրնային գալ վաճառականութեան համար : Բնակչաց մեծագոյն մասը նաւակներով ծովու վերայ կրնակին :

ՍԻԱՆ (300,000 բն .) երբեմն Չինաց մայրաքաղաքն , այժմ մեծ եւ նշանաւոր քաղաք , եւ հին յիշատակարաններովն անուանի :

ՖՈՒՉԷՈՒ (600,000 բն .) Ֆուքեանկ գաւառի գլխաւոր քաղաքն , եւ Չինու ճարտար եւ վաճառաշահ քաղաքներէն մեկն է :

ՀԱՆԿՉԷՈՒ (800,000 բն . եւ ըստ ոմանց 1 միլիոն) Չինու շատ վաճառաշահ , մեծ եւ բազմամարդ քաղաքներէն մեկն է . նշանաւոր են մեջը չորս բարձր աշտարակներն , որոց իւրաքանչիւրն ինը կարգ բաժանուած է :

ՍՈՒՉԷՈՒ (600,000 բն .) կայսերական ջրանցքին վերայ , օդոյն քաղցրութեանը եւ վայրացը գեղեցկութեանը համար Չինացիք *փափկութեան դրախտ* կկոչեն գայն եւ շատ հարուստներ այս տեղ կրնակին . իսկ Եւրոպացիք *Չինու վեներտիկ* կանուանեն քաղաքս՝ մեջը բազմաքիւ ջրանցք-

ներ ունեցածին համար : Ունի զեղեցիկ տաճարներ եւ կամուրջներ . ճարտարութեան կողմանէ եւս երեսելի է :

ՇԱՆԿՀԱՅ (700,000 ըն .) շատ վաճառաշահ նաւահանգիստ . անուանի եղաւ քաղաքս 1862-ին ապստամբութեամբը :

ՆԻՆԿՓՈՅ (400,000 ըն .) վաճառաշահ նաւահանգիստ, յորում միայն հրաման ունին ձափոնք գալ վաճառականութեան համար :

ԹԱՅ ՈՒԷՆ, Փեքինի հարաւային արեւմտակողմը, Չինաց ինքնակալութեան մեկ ցեղին մայրաքաղաքն էր :

ՉԻՆԿԹՈՒ, հին յիշատակարաններովն անուանի :

ՔՈՒԷՅԼԻՆ, Չինու Հնդկաչինու հետ ունեցած վաճառականութեան զլիաւոր տեղն է :

ՑԻՆԱՆ, վաճառաշահ քաղաք :

ԽԱՅՖՈՒՆԿ (250,000 ըն .) Հօանկնոյի մօտ, նշանաւոր է մեջի Հրէից ժողովրդանոցը՝ որ Քրիստոսէ 200 տարի յառաջ հաստատուած է այստեղ :

ՎՈՒՉԱՆԿ (400,000 ըն .) Եանցեքեանկի վերայ, ընդարձակ եւ վաճառաշահ քաղաք . քովերն ազնիւ տեսակ չայ կրուսնի :

ԹԱԳԱԻ ՈՐՈՒԹԻՒՆ ՔՈՐԷԱՅԻ .

Քորէա կամ ըստ Չինաց Քաօլիլի բերակղզին տակաւին անձանօր մնացած է . կերելի բէ շատ բազմամարդ տերութիւն է . մեջը լերանց գօտիներ ունի . օղն ընդհանրապէս

ցուրտ է, մանաւանդ հիւսիսակողմն, բայց հողը շատ բարեբեր :

Մովեզերքը բազմաթիւ ծոցեր ու խորշեր ունի, եւ քովերը շատ կղզիներ ու կղզեաց խուարեր կան :

Բնակիչն է իբր 8,000,000 Մանչուներու ցեղէն, բայց լեզուով եւ սովորութեամբք Չինաց մօտ են. կրօնքերն է պուտտակաւորիւն եւ Ֆօյի կրօնը : — Քորեայի բազաւորը Չինաց եւ ճափոնաց հարկատու է : Երկու մայրաքաղաք ունի թերակղզիս. *Հանեանկ* կամ *Քիւնկըիբաօ* եւ *Յիւնկէչուէն* :

ՄԱՆՉՈՒՐԻԱ.

Այս երկիրս Ամուր գետոյն քովերը կրնկնի. 1858-ին Ռուսք մեծագոյն մասին տիրեցին, այնպէս որ այժմ միայն Ամուրի հարաւակողմը մնաց Չինաց ձեռքը : Բնակիչքն են Մանչու Թաբարք, որ այլ եւ այլ ցեղեր բաժանուած են, եւ 1644-ին Չինու երկրին տիրեցին. կրօնքն է պուտտակաւորիւն : Երկիրը շատ բարեբեր չէ, եւ բազմաթիւ լեռներ ունի : Նշանաւոր քաղաք չունի :

ՄՈՂՈՒՅ ԱՇԽԱՐՀ.

Մողոյաց աշխարհը կամ Մեծ Թաբարստանը, որ Սիպիրի հարաւակողմը կտարածուի, Չինու մեծ բարձրաւանդակին մեկ մասն է. այս երկրիս մեջ է *Կուպի* կամ *Շամոյ* մեծ անապատը. օղն ընդհանրապէս ցուրտ է : Հիւսիսակողմէն Սիպիրի քանի մի գետերը կրղխին՝ ինչպէս *Իրքիշ*, *Սեչենկա* եւ *Ենիսէյ* : Բնակիչն է իբր

3,000,000 Մողոլ կամ Մոնկոլ, ամենքը վրանարնակ, զորս պետք չէ թաքարաց հետ շփոթել. սոքա այլ եւ այլ ցեղեր կրածանուին, եւ կրօնքով պուտտական են: Սոցա մեզէն ելաւ ճինկիգխան՝ որ մինչեւ Բրուսիոյ երկիրը տիրապետած էր: Նշանաւոր գիւղաքաղաքները, մանաւանդ թէ *փրանաքաղաքներն* են:

ՈՒՐՂԱ, Մողոլաց երկրին մայրաքաղաքը կհամարուի. վեց հազարի չափ վրաններէ ձեւացած է, ունի տաճարներ եւ դպրոց:

Զոհոլ, կայսեր ամարանոցն է:

Մայմաչին, Քեահրայի դիմաց, Ռուսաց հետ մեծ վաճառականութիւն ունի:

ՍՈՆՂԱՐ.

Սոնղարն, որ եւ *Ծուսկարիա* եւ ըստ Չինաց *Թիանշանիեշու* կամ երկիր ի հիւսիսակողմն թիանշան լեւրանց, Թուրքաստանի հիւսիսային արեւելակողմն է՝ Սիպիրի սահմանը. երկիրը զրեթէ ամեն կողմերէն լեռներով պատած է. մեծամեծ լճեր ունի, յորս նշանաւոր են *Ծայգակ* եւ *Պալքաչի*: Զինք 1760-ին տիրեցին այս երկրիս, եւ այժմ այստեղ կաքսորեն իւրեանց յանցաւորները:

ԻԼԻ կամ ՎՈՒԼՃԱ, համանուն գետոյն վերայ որ Պալքաչի լիճը կրափի, գաւառիս գլխաւոր քաղաքն է. վաճառաշահ եւ արոռանիստ չինացի զօրապետի որ երկիրս կկառավարէ:

ՓՈՒՔԻ ՊՈՒԽԱՐԱ:

Այս երկիրս, որ կկոչուի եւ *Զինաց Թուրքաստան*, եւ ըստ *Զինաց Թիանշաննահու* կամ երկիր ի հարաւակողմն Թիանշան լեռանց, Բաքարստանի արեւելակողմը կընկնի. երկիրը արեւմտակողմը լեռնոտ է եւ բարեբեր, իսկ արեւելակողմն անրեր եւ դաշտային. օդը ձմեռը շատ ցուրտ է եւ ամառը շատ տաք: Բնակիչքը Թաքար են՝ Պուխար ցեղէ, որոց խանը հարիւր տարիէ ի վեր հարկատու է *Զինաց*: Կրօնքն է մահմետականութիւն:

ԵԱՐԽԱՆՏ (80,000 բն. եւ ըստ ոմանց 250,000) համանուն գետոյն վերայ որ *Լոս* լիճը կթափի, շատ ճարտար եւ վաճառաշահ քաղաք. գլխաւոր վաճառքն է մետաքսէ՝ բամբակէ եւ բրդէ գեղեցիկ գործուածներ:

ՔԱՇԿԱՐ (40,000 բն.) համանուն գետակի վերայ շատ վաճառաշահ եւ ճարտար քաղաք, եւ երբեմն համանուն խանութեան մայրաքաղաքն էր:

ԹԻՊԷԹ.

Թիպէքը *Զինու* ինքնակալութեան հարաւային արեւմտակողմը կտարածուի. երկիրը բարձր լեռնադաշտակ մի է՝ որոյ մեջ առանձին լեռներ կբարձրանան. հիւսիսակողմը կտարածուին *Քուէնու* լեռինք, եւ հարաւակողմը *Հիւսաշաշա* լեռինք որ աշխարհիս ամենէն բարձր լեռներն են, եւ որոց ամենաբարձր ծայրերը Թիպէթի մեջ են:

Նշանաւոր զետերն են *Ինդու*, *Պրահմափուշրու* եւ *Քին-
շաքեակն* որ Եանցեքեանկի մեկ բազուկն է : Ունի
բազմաբիւ լճեր, որոց աւելի նշանաւորքն են *Փաշրէ*, *Պու-
քանուր*, *Թէնգրիկուր* եւ *Մանասարուփար* որ աշխար-
հիս ամենէն բարձր լիճն է :

Հողն ընդհանրապէս քարուտ է, բայց բարեբեր կը-
տորները լաւ մշակուած . օղբ բարձրութեանը պատճառա-
ւմեռը սաստիկ ցուրտ, իսկ ամառը բարեխառն : — Կեն-
դանեաց մեջ նշանաւորքն են ձիու պոչով եզը, մեկ եղ-
ջիւրով ձին, եւ մանաւանդ այծերը որ բարակ եւ ազնի-
մազ ունին, որով կշինուին ամենէն բանկազին ցփսինե-
րը : Բնակիչքն, որ մոզուեան ցեղէ են եւ վրանարնակ,
առանձին լեզու եւ գիր ունին. կրօքն է պոտտականու-
րիւն, որոյ գլխաւորը *Տաշայլամա*՝ միանգամայն եւ երկ-
րին կառավարողն է :

ՀԼԱՍԱ (80,000 բն.) Թիպէրի մայրաքաղաքն եւ արո՞
Տալայլամայի եւ չինացի փոխարքայի . Չինաստանի, Պու-
խարայի եւ Հնդկաստանի հետ մեծ վաճառականութիւն
ունի քաղաքս : Նշանաւոր շէնքերն են տաճարները եւ մա-
նաւանդ Տալայլամայի պալատն որ 10,000 սենեակ բա-
ժանուած է :

ԼԱՏԱՔ, Փոքր Թիպէրի գլխաւոր քաղաքն է, Բաշմիրի
հետ վաճառականութիւն կանէ :

ՇԻՔԱՅԷ (200,000 բն.) *Պակտարամայի* արո՞անխտն
է որ Տալայլամայի երկրորդն է :

ԵՐԿԻՐ ԽՈՒՅՈՒՆՈՒՐԻ.

Այս երկիրս կրնկնի Բուսն Զինու., Մողուլաց երկրին, Փոքր Պուխարայի եւ Թիպէթի մեջտեղերը. բնակիչքը մողուլեան ցեղէ են եւ Զինաց հարկատու. այս երկրիս մեջ է *Խուխուշուշը* կամ *Կասպոյտ* լիճը :

ԿՂԶԻՔ.

ՀԱՅՆԱՆ, Զինաց ծովուն մեջ հանանուն նեղ նեղուցով ցամաքէն զատուած, բարեբեր, հարուստ եւ բազմամարդ կղզի, որ Զինաց իշխանութեան տակ կհամարուի, բայց բնակչաց մեծագոյն մասն ինքնիշխան են եւ բարբարոս :

ՅՈՐՄՈՋԱ, ըստ Զինաց ԹԱՅՈՒԱՆ, Զինաց եւ Արեւելեան ծովերու մեջտեղ, բարեբեր, լեռնոտ եւ հարուստ կղզի, որոյ արեւմտակողմը միայն Զինաց ձեռքն է, իսկ արեւելակողմը ազատ ժողովուրդներ կբնակին : Այս կղզուոյս մեջ շատ կգտնուի գոյնզգոյն փասիաններ եւ դրախտահար : Գլխաւոր քաղաքն է *Թայուշան* :

ՀՈՆԿՔՈՆԿ, Քանթոնի դիմաց, 1842-էն ի վեր Անգղիացւոց ձեռքը. գլխաւոր քաղաքն է *Հոնկըունկ*, ամուր եւ վաճառաշահ :

ՄԱՔԱՑ, փոքրիկ կղզի, որոյ համանուն քաղաքը Փորթուգալցւոց ձեռքն է 300 տարիէ ի վեր, եւ մեծ վաճառականութիւն ունի :

ԼԻԵՒՔԻԵՒ կղզիք, որ ճափոնի եւ Ֆորմոզա կղզեաց մեջտեղերը կրնկնին, առանձին բազառորութիւն մի կկազմեն որ Զինաց եւ ճափոնաց հարկատու եւ մայրաքաղաքըն ե Շեուշի. իսկ ամենէն նշանաւոր նաւահանգիստն ե Նախաքեանկ :



Ճ Ա Փ Ո Ն .

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ . — Փորթուգալցիք 1542-ին գտան ճափոնի երկիրն, եւ նոցա քարոզիչներն սկսան մեջը քրիստոնէութիւնը տարածել. բայց ժէ դարուն մեջ սաստիկ եւ երկարատեւ հալածանքե յետոյ քրիստոնէութեան հետքն անգամ չմնաց ճափոնի մեջ : 1637-ին Փորթուգալցիք բոլորովին վռնտուեցան ճափոնէն, եւ այնուհետեւ միայն Զինք իշխանութիւն ունէին այս երկիրըս գալու : Եւրոպացի ազգաց մեջէն միայն Հոլանտացիք կարողացան Նանկասաքի քաղաքը գալու արտօնութիւնը պահել, այն ալ միայն վաճառականութեան համար քանի մի օր կենալու : 1854-էն մինչեւ 1858 Նանկասաքիէն գատ Քաճակուլա եւ Հաքոտատ նաւահանգիստներն ալ բացուեցան Հոլանտացւոց, նմանապէս եւ Ամերիկացւոց, Անգղիացւոց, Ռուսաց եւ Գաղղիացւոց : Անգղիացիք 1863-ին վերջերը ճափոնի մեջ Քաճակուլա բազմամարդ քաղաքն այրեցին իւրեանց քանի մի ազգակցաց վրէժն

առնելու համար, զորս ձափոնք անիրաւութեամբ սպան-
նած էին :

ձափոնք կրնկնի Զինու արեւելակողմը Մեծ ովկիանոսի
մէջ, եւ ձեւացած է վեց կղզիներէ, որ են *Նիֆոն*, *Սի-
քոֆ*, *Քիւսիւ*, *Եսոյ*, *Թարաքայի* հարաւակողմն եւ հա-
րաւային *Քուրիլեանք* :

Տարածութիւնն է իբր 6,100 բիւրմերը քառակուսի :

Երկիրն ընդհանրապէս լեռնոտ է, եւ բազմաբիւ հրա-
բուխներ ունի . հողը շատ տեղ անբեր է, բայց եւ բարե-
բեր մասերը շատ լաւ մշակուած են : Օղը հիւսիսակողմե-
րըն եւ լեռնային զաւառներն ընդհանրապէս ցուրտ է,
մնացած տեղերը բարեխառն եւ առողջարար :

ձափոնք բազմաբիւ գետեր ու գետակներ ունի, որ
երկայն ընթացք չունին :

Բուսոց մէջ առատութեամբ կգտնուի այս երկրիս մէջ
ցորեն, բրինձ, ծխախոտ, ափիոն, չայ, քափուր, բամ-
բակ, եւ այլն : Հանքերու մէջ ունի առատ ոսկի, պղինձ,
անագ, երկաթ եւ սլատուական քարեր : Կենդանիք,
մանաւանդ վայրիները, սակաւ են ձափոնի մէջ :

Բնակիչն է իբր 38,000,000 մոդուլեան ցեղէ, միջահա-
սակ, աշխատասէր, քաջ, ճարտարամիտ՝ բայց եւ ան-
գոնք մարդիկ : Երեք կրօնք տիրած են ձափոնի մէջ . *Սիւ-
քոյի* կրօնը, *Կոնֆուչիոսի* կրօնն եւ *սուչուտականու-
րիւնը* : Լեզուան է ձափոններէն, որ ջիներենի հետ նմանու-
թիւն չունի, բայց սովորաբար Զինաց գրերը կգործածեն :

Ֆիտութեանց մեջ յառաջացեալ չեն ճափոնք, իսկ ճարտարութեան կողմանէ շատ երեւելի են. անուանի են մանաանդ մետաքսէ եւ բամբակէ կտաւներն եւ յախճապակէ գործուածները. նշանաւոր են ճափոնք նաեւ գծագրութեան եւ փորագրութեան կողմանէ: Ներքին վաճառականութիւնը միշտ բանուկ եղած է, բայց ծովային վաճառականութիւնը շատ տկար էր մինչեւ վերջի տարիներս՝ որքիշ ազգաց հետ երբեւեկութիւն ջունկցածներուն պատճառաւ. իսկ 1863-ին ճափոնի այժմու կայսրն Եւրոպայի տերութեանց ղեսպաններ յուզարկեց, հրաւիրելով զիրենք որ ազատօրէն երբան ճափոն վաճառականութիւն անեն. անով ծովային վաճառականութիւնն ալ շատ կձաղկի:

Տերութեան կառավարութիւնն է ազատ եւ բռնաւորական միապետութիւն. ճափոնք երկու կայսր ունին. մեկուն ձեռքն է աշխարհական իշխանութիւնն, եւ կկոչուի *Սայկուէ* կամ *Քուսոյ*, իսկ միւսը՝ որ *Տայիբի* կկոչուի՝ կրօնական իշխանութիւնն ունի:

ԳԼԽԱԻՈՐ ՔԱՂԱՔՔ.

ԵՏՈՅ (1,000,000 բն.) Նիֆոն կղզւոյն մեջ, արտուանիստ Սայկուն ինքնակալին, Ասիոյ շատ ընդարձակ եւ բազմամարդ քաղաքներէն մեկը. բայց տներն ըստ մեծի մասին փայտակերտ լինելով՝ հրդեհներն անպակաս են մեջը: Շէնքերուն մեջ նշանաւոր է կայսեր պալատն որ երկուրիւրմեքը շրջապատ ունի. երեւելի է նաեւ կայսերական

հարուստ գրատուներ : Վաճառականութիւնն ու ճարտարութիւնը շատ ծաղկած են քաղաքիս մէջ :

ՄԻԱՔՈՅ (800,000 քն .) Նիֆոն կղզւոյն հարաակողմն , արոճ. Տայիրիի, արուեստից ու գիտութեանց կողմանէ ճափոնի առաջին քաղաքն է . ունի բազմաթիւ գործարաններ , երեսելի ուսումնական տեղեր , հարուստ մատենադարան եւ մեծամեծ տաճարներ . նշանաւոր է նաեւ Տայիրիին պալատը : Վաճառականութիւնը շատ բանուկ է : 1864-ին Սալկունն այստեղ փոխադրեր էր իւր արոճը :

ՈՍԱՔԱ (150,000 քն .) Նիֆոնի հարաւային արեւմտակողմը , վաճառաշահ եւ երեսելի քաղաք :

ՆԱՆՎԱՍԱՔԻ (100,000 քն .) Բիւսիւ կղզւոյն մէջ մինչեւ 1854 միայն հուլանաացի եւ չինացի նաւերու հրաման կար սորա նաւահանգիստը մտնելու :

ՄԱՅՄԱՅ (50,000 քն .) Եսոյ կղզւոյն մէջ վաճառաշահ քաղաք :



ՀՆԴԿԱՍՏԱՆ.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — Հնդկաստանը շատ հին ժամանակներից ի վեր քաղաքակիրթ եւ ծաղկեալ երկիր մի էր, եւ շատ մանր քաղաւորութիւններ կրածանուէր : Եւ քակտ պատմութեան մեջ յիշուած է թէ Շամիրամ, Գարեն եւ Մեծն Աղեքսանդր մինչեւ Հնդկաստանի ներսերը հասան, բայց այս աշխարհակալներս Հնդկաստանի վերայ ճիշդ տեղեկութիւն չտուին : ԺԱ. դարուն մեջ մահմետականք Հնդկաստան մտան, եւ երկրին մեկ մասին տիրեցին. Լենկթիմուր մողոյ աշխարհակալը 1398-ին Հընդկաստանն ոտնակոխ արաւ :

Հարիւր տարի յետոյ երբոր Փորթուգալցիք Բարեյուսոյ զլխէն Հնդկաստան հասան եւ Կոա կղզին կհաստատուէին, Լերկթիմուրի բոռը Մուհամմեա Պապերշահ մողոյեան ինքնակալութիւնն հիմնեց, որոյ մայրաքաղաքն եղաւ Տելիի : Հետզհետեւ բոլոր Հնդկաստանը մողոյեան ինքնակալութեան ձեռքն անցաւ, միայն քանի մի գաւառք իւրեանց քաղաւորին իշխանութեան տակ մնացին. սակայն սոցա մեջէն ալ ոմանք Մողոյաց հարկատու էին : Մողոյաց իշխանութեան տակ եղած գաւառաց կուսակալները *սուպաս* եւ *նասպաս* կկոչուէին : Սյս ինքնակալութեան ամենէն զօրաւոր ժամանակն էր Աւրենկգէյալի օրերն որ մեռաւ 1707-ին. այս ժամանակներս Գաղղիացիք եւ Անգ-

ղիացիք արդէն հաստատուած էին Հնդկաստանի քանի մի տեղերը :

Աւրենկզեյպէն յետոյ Մողոլաց ինքնակալութիւնն ընկաւ . Պարսից Նատըր շահը 1738-ին Տէլհիի տիրեց եւ մեջի հարուստ գանձերը վերուց : Սուպապները , նապապներն եւ *ռանաները* կամ ինքնագլուխ բազաւորները ոտք ելան . Հնդկաց ցեղէն *Մահրար* կոչուած պատերազմական ժողովուրդն ետեւե եղաւ բոլոր Հնդկաստանի տիրապետելու : Անգղիացիք այս շփոթութիւններէս օգուտ քաղելու մտքով՝ Մողոլաց ինքնակալութեան պաշտպան ելան , եւ իւրեանց ծառայութեանցը փոխարէն ընդարձակ գաւառներու տէր եղան : Բայց բերակղզւոյս հարաւակողմը շատ պատերազմներ ունեցան Մայսուրի Հայտերաչի նապապին եւ նորա որդւոյն դէմ , որ 1799-ին մեռաւ՝ Սերինկապիւրամ քաղաքը պաշտպանելով նոցա դէմ :

Այնուհետեւ Անգղիացիք ամեն բշնամիտ ազատած՝ Մողոլաց ինքնակալը իւր պալատին մեջ փակեցին , Մահրարները նուաճեցին 1818-ին , եւ ամեն պատերազմաց մեջ յաղթող ելնելով՝ բոլոր Հնդկաստանի վերայ տարածեցին իւրեանց իշխանութիւնը . բաց յայնմանէ Ինդոսի եզերքներն եւ Հնդկաչինու արեւմտեան ծովեզերքն Անգղիացւոց ձեռքն անցան . միայն քանի մի գաւառք ազատ մնացին Անգղիացւոց տիրապետութենէն , բայց եւ նոցա բազաւորներն հարկատու են , եւ հետզհետե բոլորովին կնուստուին Անգղիացւոցմէ :

Այս հսկայագոր պետութիւնս քիչ մնաց որ պիտի ոչըն-
ջանար 1857-ին սոսկալի ապստամբութեամբը. բայց վեր-
ջապէս Անգղիացիք յաղթող ելան, եւ բոլորովին նուաճե-
ցին Հնդիկները :

Անգղիացւոց Հնդկաստանի մեջ ունեցած երկիրները
ընկերութեան մի ձեռքով կկառավարուէր, որ Անգղիոյ քա-
ղաւորութեան իշխանութեանը տակն էր. 1858-ին ընկե-
րութիւնը վերցաւ եւ Հնդկաստանն ուղղակի քաղաւորին
իշխանութեան տակն անցաւ :

Հնդկաստանի սահմանն է հիւսիսէն Չինաստան, արե-
ւելքէն Հնդկաչին եւ Պենկալայի ծով, հարաւէն Հնդկաց
ովկիանոս, արեւմտքէն Արաբիոյ ծով, Պելուճիստան եւ
Աֆղանիստան :

Տարածութիւնն է իբր 37,500 բիւրմեքր քառակուսի :

Հնդկաստանն աշխարհագրօրէն երկու մեծամեծ մասեր
կրածանուի, որ են *Բուռն Հնդկաստան*՝ վիտնոսիա լերանց
հիւսիսակողմը մնացած կտորն, եւ *Տէքրան*՝ Հնդկաստանի
միւս կտորը : Տէքրանի արեւմտեան ծովեզերքին մէկ կը-
տորը *Մաշապար* կկոչուի. իսկ արեւելեան ծովեզերքը
Բորոմուսուտէլ : Հնդկաստանի ներսերը իւրաքանչիւր գա-
ւառ առանձին անուն ունի, զոր քաղաքաց վերայ խօսած
ժամանակներս կնշանակեմք : Իսկ ըստ կառավարութեան,
կարելի է Հնդկաստանը չորս մասն բաժանել. այսինքն
Անգղիացւոց Հնդկաստան, *Ազառ Հնդկաստան*, *Անգ-
ղիացւոց հարկատու գաւառք*, եւ *Եւրոպացի այլ եւ
այլ ազգաց ձեռքն եղած երկիրները* :

Հնդկաստանի երկիրն ընդհանրապէս լեռնոտ է. հիւսիսակողմը կտարածուին աշխարհիս ամենարարձր լեռինքրն *Հիմալայա*. մեջտեղերն արեւելքէն արեւմուտք կձգուին *Վիւտհիա* լեռինք՝ որ Տեքանը Հնդկաստանի հիւսիսային մասէն կզատեն. այս երկու լեռանց շարքերու մեջ մնացած կտորը տափարակ բարձրաւանդակ մի է, որոյ մեծագոյն մասն անապատ է: Տեքանի մեջ հիւսիսէն հարաւ կձգուին *Կար* լեռինք՝ մինչեւ *Քումորիւ* գլուխը. սոցա բարձրագոյն ծայրերը արեւմտեան ծովեզերքին մօտ են, անոր համար Հնդկաստանի մեծամեծ գետերը Պենկալայի ծովը կբափին:

Հողն ամենայն տեղ շատ բարեբեր է. միայն Հիմալայա լեռանց հարաւակողմի դաշտերն անբեր աւազուտ են:

Օդը հարաւակողմը շատ տաք է, իսկ հիւսիսակողմը Հիմալայա լեռանց մօտերը բարեխառն է. տեղ տեղ ցուրտ: Հնդկաստանը երկու եղանակ ունի. չոր եւ անձրեւային. Հնդկաց ծովուն վերայ կանոնաւոր հողմեր կփչեն որ *մուսոն* կկոչուին. հիւսիսային արեւելեան մուսոնը կփչէ հոկտեմբերէն մինչեւ ապրիլ, իսկ հարաւային արեւմտեան մուսոնը՝ ապրիլէն մինչեւ հոկտեմբեր. բաց յայսմանէ մեծամեծ փոթորիկներ եւս կպատահին Հնդկային ովկիանոսի վերայ: Քորումանտելի ծովեզերքը անձրեւային եղանակն է հոկտեմբերէն մինչեւ ապրիլ, իսկ Մալապարի ծովեզերքը՝ ապրիլէն հոկտեմբեր:

Հողոյն բարեբերութեանը, օդոյն տաքութեանը եւ անձրեւաց առատութեանը պատճառաւ Հնդկաստանը աշխար-

հիս ամենէն պտղաբեր երկիրներէն մէկը , գուցէ եւ առաջինն է :

Գլխաւոր գետերն են . *Ինդոս*՝ հիւսիսային արեւմտակողմը , *Ներպուշտա* եւ *Քափրի*՝ որ Արաբիոյ ծովը կրթափին . *Քափերի* , *Քիստնա* , *Կոտաւերի* , *Գանգես*՝ որոյ եզերքը սաստիկ բարեբեր են , եւ *Պրահմափուշքա* որ Պենկալայի ծովը կրթափին :

Բուսոց մէջ Հնդկաստանն ունի առատ բրինձ , որ տարին երկու , երեք եւ մինչեւ չորս անգամ կհնձուի , ցորեն , եգիպտացորեն , գարի , քրքում , պանան , շաքարենի , բամբակ , լեղակ , պէթէլ՝ որ պղպեղի մէկ տեսակն է , եւ ամենէն ընտիր ափիոնն՝ որ մեծ աղբիւր է վաճառականութեան : Մեծամեծ եւ բազմաթիւ անտառացր մէջ ունի բարձրաբերձ եւ պատուական ծառեր որ նաւ շինելու կը գործածուին , ինչպէս բէք կամ երկաթի ծառն՝ որոյ փայտը կաղնիէն աւելի կարծր է , ոպնիազ , սանտալ՝ յորմէ կարմիր ներկ կշինուի , պամպու , հացի ծառ , քոքոյ՝ որոյ տերեւները , պտուղն եւ փայտը կերպ կերպ գործածութիւններ ունին : Եւրոպայի պտուղներէն միայն լեմոնն եւ նարինջը լաւ յատուց կուզան : Բաց յայսցանէ Հնդկաստանն ունի բազմատեսակ ներկաբեր եւ հոտաւետ տունկեր եւ համեմներ :


Վայրի կենդանեաց մէջ ունի վագր , առիւծ , ընձառիւծ , գայլ , եղջերու , վարազ , տեսակ տեսակ կապիկներ եւ փիղ . ընտանի կենդանեաց մէջ ունի եզ , ձի , էջ ,

շատ տեսակ ոչխարներ եւ. ուղտ : Թռչնոց մեջ նշանաւոր են փասխանր, սիրամարգը, աղանին, բուրակն, հնդկահաւն, եւ այլն, որոց գեղեցիկ փետուրները շատ յարգի են : Վնասակար կենդանեաց մեջ կգտնուի կոկորդիլոս, պօսօձն եւ ուրիշ շատ տեսակ բունաւոր օձեր, կարիճ եւ բազմատեսակ վնասակար միջատներ : Մեղուն եւ մանաւանդ շերամը՝ որ ազնիւ մետաքս կշինէ՝ Հնդկաստանի հարստութիւններէն մէկն է . Սեյլան կոզուոյն քովերէն առատ մարգարիտ կելնէ . ծովերէն եւ գետերէն ալ շատ ձուկ կհանուի :

Հանքերու կողմանէ ալ շատ հարուստ է Հնդկաստանն, եւ լերանց մեջ ունի առատ արծաթ, պղինձ, կապար, երկաթ, բիւրեղ, աղ, բազմատեսակ քարեր, եւ մանաւանդ առատ պատրուական քարեր, ինչպէս աղամանդ, գլխաւորապէս Բիստնա գետոյն մեջ, ալատ, տպագիւն, յակինթ, եւ այլն :

Բնակիչն է իբր 175,000,000 մեծագոյն մասն Հնդիկ . որ բեպտ թխագոյն են՝ այլ սպիտակ ցեղէ կհամարուին, եւ հին ժամանակներէ իվեր չորս դաս բաժանուած են . *պրահմանք* կամ *քուշմերը*, *պատերագմողք*, *վանառականք* եւ *արուհատաւորք* : Հնդիկ մի ջկրնար իւր դասը լքանել եւ ուրիշ դաս անցնիլ . անոր համար գիտութիւնք եւ արուեստք շատ սակաւ յառաջադիմութիւն արած են մեջերը : Այս չորս դասերէս զատ կայ նաեւ *իւարիականերու* դասն՝ որ միւս դասերէն արտաքսեալ մարդիկներով ձեւացած է, եւ սորա Հնդկաց առջեւ անպատիւ

և գարշելի մարդիկ կհամարուին : Հնդկաստանի ժողովուրդներն ընդհանրապես մեզկ են և անելորդապաշտ . սոցա մեջ ամենեկն պատերազմասերքն են *Մահրաքները* որ ներպուտուտայի քովերը կրնակին , և *Շեխներն*՝ որ հնդոսի եզերքը կրնակին : Բաց ի Հնդկաց ազգն՝ այս երկրիս մեջ կգտնուին Արաբացիք , Աֆղանք , Պարսիկք , իբր 100,000 Հրեայք , 1,500,000 քրիստոնեայք՝ այսինքն Փորթուգալցիք , Գաղղիացիք , Հայք , և ամենեկն բազմաքիւր Անգղիացիք :



Հ ն դ ի կ ք .

Հնդիկներուն լեզուն է հնդկերեն , որ սանսքրիթ լեզուէն և արաբերէն ու պարսկերէն լեզուներէ ձեւացած է . այս լեզուն միայն մեծամեծ քաղաքները կխօսուի . իսկ ուրիշ տեղեր իւրաքանչիւր ժողովուրդ կամ գաւառ .

իւր առանձին բարբառն ունի, որ նոյնպէս սանսքրիք լեզուէն ձեւացած են :

Հնդկաց մեծագոյն մասին կրօնն է պրահմականութիւն. սոքա հոգեփոխութեան հաւատալով՝ սովորաբար կենդանեաց միս չեն ուտեր, եւ իրենց մէջ եզն ու փիղը սրբազան կենդանիք համարուած են. ոմանք օրէնք ունին որ կնոջ մի այրն որ մեռնի, ինքն եւս նորա հետ միատեղ քաղուի կամ այրուի : Քսան միլիոնի չափ մահմետական ժողովուրդներ կան Հնդկաստանի մէջ. Պոմպայի եւ Սուրաթ քաղաքներու մէջ կրակապաշտք կգտնուին . Սեյլան կղզւոյն, Նեփալի եւ Պութանի մէջ պուտտականութիւնը տիրած է : *Շեխսնէքուռն* կրօնը պրահմականութենէ եւ մահմետականութենէ ձեւացած կրօնք մի է :

Քիտութեանց եւ դպրութեանց մէջ հին ժամանակները Հնդիկք շատ յառաջացեալ էին, բայց այժմ Եւրոպացւոց զիտութիւնքը ծաւալած չեն տակաւին մեջերը : Երկրագործութիւնն ու արուեստները շատ ծաղկած են Հնդկաստանի մէջ, եւ հետզհետէ ալ կծաղկին Անգղիացւոց ջանքովը . երեսելի են գլխաւորապէս բամբակէ կտաները, մուսլինը, մետաքսէ կերպասները, ցփսիները, գորգերը, եւ այլն : Հնդկաց մէջ ճարտարապետութիւնը ծաղկած է, որոյ ապացոյց են մեծամեծ եւ ամրակառոյց *Վիակրտները* կամ տաճարները : Հնդկաստանի ծովային վաճառականութիւնը շատ բանուկ է, իսկ ցամաքայիներ տկար է տակաւին ճանապարհներու զեշութեանը պատճառաւ :

ԱՆՊՂԻԱԿԱՆ ՀՆԳԿԱՍՏԱՆ.

Անգղիացւոց Հնդկաստանի մեջ ունեցած երկիրներն երկու տեսակ են . ոմանք բոլորովին Անգղիացւոց ձեռքն են, եւ ոմանք միայն հարկատու կամ նիզակակից Անգղիացւոց եւ կամ նոցա սլաշտպանութեան տակ են : Բոլորովին Անգղիացւոց ձեռքը չեղած երկիրները տեղացի իշխաններու ձեռքով կկառավարուին՝ որ Սինտի երկրին մեջ *Կմիր* կկոչուին, Տեքանի մեկ մասին մեջ՝ *Նիզամ*, եւ Հնդկաստանի մնացած տեղերը, *ռանա* կամ *Նասրայ* : Այս իշխաններուս քով Անգղիացի իշխան մի կհատի, եւ իրօք այս անգղիացի կուսակալներու ձեռքն է բոլոր իշխանութիւնը :

Անգղիացւոց երեք գլխաւոր քաղաքներն, որ են *Կալկաթա*, *Մատրաս* եւ *Պոմպայ*, իւրեանց առանձին բանակըն ունին . Կալկաթայի բանակն ամենէն մեծն է : Զօրքերը բոլոր երկրին մեջ ցրուած չեն, այլ մասնաւոր զօրանիստներու մեջ կրնակին : Յետին ապստամբութենէն յառաջ Անգղիացւոց զօրքերուն երրորդ մասը միայն Անգղիացի զինուորներէ բաղկացեալ էր, մնացեալը Հնդիկ էին : Հարկատու կամ նիզակակից տերութիւնները զօրքով օգնութիւն կանեն Անգղիացւոց :

ԿԱԼԿԱԹԱ (700,000 բն.) Պենկալայի երկրին մեջ Հուկլիի վերայ, որ Գանգեսի մեկ ճիւղն է, Անգղիացւոց Հրնդկաստանի մայրաքաղաքն, եւ արուեստից, գիտութեանց,

մանաւանդ վաճառականութեան կողմանէ բոլոր Հնդկաստանի առաջինն է, եւ Ասիոյ առաջիններէն մէկը: Կալկաթան երկու մաս բաժանուած է. *հիւսիսային* կամ *Հընդկաց քաղաք*՝ որ գեղեցկաշէն չէ, եւ *հարաւային* կամ *Եւրոպացոց քաղաք*՝ որ գեղեցիկ շէնքերով եւ լայնարձակ փողոցներով ու կրանիթեայ գետափունքներով զարդարուած է: Բազմաթիւ հոյակապ շինուածոցը մեջ նշանաւոր է կուսակալին պալատն եւ *Ֆորք Վիլիամ* միջնաբերդը: Ունի բազմաթիւ ուսումնարաններ եւ ուսումնական ընկերութիւններ՝ յորս շատ երեսելի է Ասիական Ընկերութիւնն եւ բուսարանական պարտեզը: Հուկլիի վերայ մեծ է բանուկ նաւահանգիստ ունի, ուր մեծամեծ նաւեր եւս կարող են մտնել: — Մինչեւ ցայժմ հայազգի հարուստ վաճառականք կան քաղաքիս մեջ որ ունին *Մարդասիրական* կոչուած ձեմարան մի հանդերձ տպարանաւ:

ՍԷՐԱՄՓՈՒՐ, Հուկլիի աջակողմը, երբեմն Տանիմարքացոց ձեռքն էր, եւ այժմ մկրտական քարոզիչներու գլխաւոր տեղն է այս կողմերս:

ՀՈՒԿԼԻ, համանուն գետոյն վերայ, Մողոլաց ժամանակ երեսելի քաղաք. ունի նշանաւոր տաճար մի:

ԳԱՍԸՄՊԱԶԱՐ, մետաքսէ եւ բամբակէ գործուածներու մեծ վաճառականութիւն ունի, եւ Մուրշիտապատի նաւահանգիստը կհամարուի:

ՄՈՒՐՇԻՏԱՊԱՏ (200,000 բն.) Անգղիացոց տիրապետութենէն յառաջ Պենկալայի մայրաքաղաքն էր. այժմ երեսել-

լի է քամբակեղէն եւ մետաքսեղէն կերպասներու մեծ վաճառականութեամբը :

ՏԱԿՔԱ (250,000 րն.) նշանաւոր է մուսլիմի եւ ուրիշ կտաւեղէններու բազմաթիւ գործարաններովը : Երբեմն շատ աւելի մեծ եւ նշանաւոր էր քաղաքս :

ՓԱԹՆԱ (300,000 րն.) Գանգեսի վերայ հին Պեհար գաւառին մէջ, քամբակեղէն եւ մետաքսեղէն գործուածներու, եւ լեղակի, շաքարի ու ծխախոտի երեսելի գործարաններ ունի :

ՄՈՆԿԻՐ, գէնքի բազմաթիւ գործարաններովն անուանի :

ՊԷՆԱՐԷՍ (400,000 րն.) Ալլահապատ գաւառի մէջ ճարտար եւ հարուստ քաղաք Գանգեսի վերայ, Հնդկաց սրբազան քաղաքն եւ ամենէն յառաջադէմն է ուսմանց մէջ. ունի շատ երեսելի ուսումնարաններ, հին դիտարան, բազմաթիւ փակոտներ, եւ մեծ վաճառականութիւն :

ԱԼԼԱՀԱՊԱՏ (50,000 րն.) Ճումնայի եւ Գանգեսի գետախառնունքը, շատ ամուր քաղաք, վաճառաշահ, եւ մեծ ուխտատեղի Հնդկաց :

ՔԱՆՓՈՒՐ, Գանգեսի վերայ, զլխաւոր զօրանիստ էր Անգղիացւոց. օղը շատ տաք է ամառը :

ԼՈՒՔՆՕ (300,000 րն.) բարեբեր երկրի մէջ վաճառաշահ քաղաք, եւ Ուտ գաւառին բազաւորութեան մայրաքաղաքն որ 1856-ին Անգղիացւոց ձեռքն անցաւ :

ԱԿՐԱ (100,000 րն.) համանուն գաւառի մէջ Ճումնայի վերայ, մինչեւ 1647 Մողոլաց ինքնակալութեան մայրա-

քաղաքն էր, եւ մեծ ու գեղեցիկ քաղաք էր, որոյ կր-
վկայեն եւ բազմաթիւ գեղեցիկ շէնքերն ու մեծակառոյց
շինուածոց աւերակները: Նշանաւոր է *Ռամմահալ* կոչուած
սպիտակ մարմարիոնէ գեղեցկաշէն մեծ շիրիմն որ ճինան
Շահին կանգնել տուածն է՝ իւր բազուհւոյն գերեզմանին
վերայ. երեսելի է նաեւ Ճումնայի մզկիթը՝ նոյնպէս սպի-
տակ մարմարիոնէ շինած: Ունի քանի մի երեսելի ուսում-
նարաններ, եւ օրէ օր ծաղկելու հետ է:

ՏԵԼԷԻ (200,000 քն.) համանուն գաւառին մեջ Ճումնա-
յի մօտ, Մողոլաց ինքնակալութեան յետին մայրաքաղա-
քը, գոր 1739-ին Նատիրշահ կողոպտեց եւ աւերեց.
այժմ քէ եւ առաջուան պայծառութիւնը չունի, սակայն
դարձեալ մեծ, ծաղկած եւ հարուստ քաղաք է: Շէնքե-
րուն մեջ նշանաւոր են Մողոլեան կայսեր ընդարձակ պա-
լատը, Ճումնայի մզկիթն՝ որ Հնդկաց ամենէն գեղեցիկ
մզկիթը կհամարուի, սեաւ մզկիթը, *Շահյիևար* կոչուած
պարտեզին մէկ մասը, եւ այլն: — Քաղաքիս հարա-
ւակողմն են հին Տելիի մեծակառոյց եւ գեղեցիկ շէնքե-
րուն մնացորդներն ու աւերակները:

ՄԱԹՈՒՐԱ, Ճումնայի վերայ, մեծ ուխտատեղի Հնդկաց:

ԱՃՄԻՐ (50,000 քն.) համանուն գաւառին մեջ գեղեցիկ
եւ ամուր բերդաքաղաք, եւ մահմետականաց մեծ ուխ-
տատեղի:

ՈՒՃԷՅՆ (100,000 քն.) Մայուա գաւառին մեջ, ուստի
շատ ազնիւ ամրոն եւ ծխախոտ կելնէ, ծաղկած եւ շատ
վաճառաշահ քաղաք:

ԱԶՄԷՏԱՊԱՏ (100,000 ըն.) Անգղիացւոց Գիւճրաքի գաւառին մեջ ունեցած երկիրներուն գլխաւոր քաղաքը:

ՀԱՅՏԷՐԱՊԱՏ (80,000 ըն.) Սինաի գաւառին գլխաւոր քաղաքը, ամուր բերդ ունի եւ զենքի երեսելի զործարաններ:

ՄՈՒԼԹԱՆ (80,000 ըն.) Փենճապի մեջ Զենապի վերայ, որ Ինդոսի մեկ ճիւղն է, շատ վաճառաշահ քաղաք, եւ մահմետականաց համալսարանովն անուանի:

ՓԷՅՇԱԻԷՐ (70,000 ըն.) Աֆղանիստանի մեջ. երբեմն մեծ, ծաղկած եւ նշանաւոր քաղաք, եւ Աֆղանաց արուանիստն էր:

ԱՄՐԷՅԻՐ (100,000 ըն.) ամուր, մեծ եւ վաճառաշահ քաղաք, եւ Շէիխներուն մեծ ուխտատեղի:

ԼԱՀՈՒ (100,000 ըն.) երբեմն համանուն քաղաքորութեան մայրաքաղաքն, այժմ մեծ մասն աւերակ է, բայց անուանի է ոչխարներուն ազնիւ բրդովն եւ անտի շինուած ցփսիներովը:

ՄԱՏՐԱՍ (700,000 ըն.) Քորոմանտէլի ծովեզերքը, Հրնդկաստանի երկրորդ մեծ եւ վաճառաշահ քաղաքը. Կալկարայի նման երկու մաս բաժանուած է քաղաքս. ունի երեսելի վարժարան մի, դիտանոց, ասիական ընկերութիւն եւ Սուքր Գեորգ կոչուած շատ ամուր միջնաբերդ. ճարտարութեան կողմանէ եւս շատ երեսելի է քաղաքս: Բազմաքիւ հայազգի հարուստ վաճառականք կան քաղաքիս մեջ:

ԹՐԱՆՔԷՊԱՐ (15,000 ըն.) Քորոմանտէլի ծովեզերքը

լաւ նաւահանգիստ, երկար ժամանակ Տանիմարքացոց ձեռքն էր, 1845-ին Անգղիացիք գնեցին զայն:

ԱՐՔԱԹ (40,000 րն.) ամուր բերդաքաղաք:

ԹԱՆՃՈՐ (30,000 րն.) Քաւերիի վերայ ամուր բերդաքաղաք, որ երբեմն համանուն բազաւորութեան մայրաքաղաքն էր. ունի շատ գեղեցիկ եւ մեծակառոյց փակոտ մի:

ՄԱՆԿԱԼՈՐ (50,000 րն.) Քանարայի գաւառին մէջ, Էօմենի ծոցոյն վերայ շատ վաճառաշահ նաւահանգիստ ունի:

ՍԷՐԻՆԿԱՓԱԹԱՄ (20,000 րն.) Քաւերիի վերայ, երբեմն Մայսուրի մայրաքաղաքն էր՝ մեծ, ծաղկած, հարուստ եւ գեղեցիկ. այժմ ընկած է եւ մեծ մասն աւերակ: Անգղիացիք միայն այս քաղաքս ունին Մայսուրի մէջ:

ՔՈՉԻՆ (80,000 րն.) Մալապարի երկրին մէջ, լաւ եւ շատ վաճառաշահ նաւահանգիստ:

ՔԱԼԻՔՈՒԹ (20,000 րն.) Էօմենի ծոցոյն վերայ վաճառաշահ նաւահանգիստ. վասքոյ տէ կամա ամենեւն առաջ այս քաղաքս էլաւ. Հնդկաստանի մէջ:

ՊՈՄՊԱՅ կամ ՊՈՄՊԱՅԻ (600,000 րն.) համանուն կղզոյն մէջ Հնդկաստանի երրորդ քաղաքն է բազմամարդութեան կողմանէ. ունի մեծ, ապահով եւ շատ վաճառաշահ նաւահանգիստ եւ մեծ նաւարան: Բնակիչքն ըստ մեծի մասին մահմետականք են եւ կրակապաշտք:

ՍՈՒՐԱԹ (160,000 րն.) երբեմն շատ մեծ եւ երեսիի քաղաք էր, այժմ Պոմպայի ծաղկելովն օր ըստ օրէ կրնկնի, այսու ամենայնիւ մեծ վաճառականութիւն ունի:

ԱՌՐԷՆԿԱՊԱՏ (40,000 ըն.) Աւրենկզկյալի մայրաքաղաքըն, այժմ ընկած է :

ՓՈՒՆԱ (75,000 ըն.) Մահրաբաց մայրաքաղաքն էր :

ՆԱՂՓՈՒՐ (100,000 ըն.) համանուն բազառութեան մայրաքաղաքն էր, որոյ Անգղիացիք տիրեցին մօտ տարիներս. աղամանդի հանքեր ունի :

ՔԱԹԹԱՔ (40,000 ըն.) Օրիսսա գաւառին գլխաւոր քաղաքն է. վաճառաշահ :

ՓՈՒՐԻ կամ ՃԱԿՈՆԱԹ, Հնդկաց մեծ ուխտատեղի. երեսելի է ճակոնաք կուռքին փակուտը, ուր միլիոնէն աւելի Հնդիկք իւրաքանչիւր տարի ուխտի կերթան :

ՄԱՏԱՓՈԼԼԱՄ, բամբակեղէն երեսելի գործուածներովն անուանի է՝ որ քաղաքին անուամբը կկոչուին :

ՄԱԶՈՒԼԻՓԱԹԱՄ (80,000 ըն.) շատ վաճառաշահ նաւահանգիստ, բամբակե գործուածներն անուանի են :

ԱՆԳՂԻԱՅԻՈՅ ՀԱՐԿԱՏՈՒ ԵՐԿԻՐՆԵՐ.

ՔԱՇՄԻՐ (50,000 ըն.) գեղեցիկ հովտի մի մեջ, երբեմն առանձին բազառութիւն էր, յետոյ Լահորի հետ միացած. այժմ անուանի է այժու ազնիւ մազերէ շինուած երեսելի ցփսիներովը :

ՊԱՐՈՏԱ (100,000 ըն.) Քիւճրաթի մեջ համանուն բազառութեան մայրաքաղաքն. երբեմն շատ աւելի մեծ է երեսելի էր, այժմ անուանի է վաճառականութեամբը :

ՀԱՅՏԵՐԱՊԱՏ (200,000 ըն.) Նիզամի բազաւորութեան մայրաքաղաքը, մեծ եւ վաճառաշահ :

ԿՈԼՔՈՆՏ, անուանի եւ աղամանդի գործուածներովը :

ՍԱԹԱՐԱ, Մահրաբաց համանուն բազաւորութեան մայրաքաղաքը :

ՄԱՅՍՈՒՐ (80,000 ըն.) համանուն բազաւորութեան մայրաքաղաքը :

ՊԱՆԿԱԼՈՐ (60,000 ըն.) Մայսուրի ամենէն նշանաւոր քաղաքը. ամուր, ճարտար եւ վաճառաշահ :

ԹՐԱԽԱՆՏԵՐԱՄ, Թրաւանքորի բազաւորութեան մայրաքաղաքը :

ՀՆԴԿԱՅ ԱԶԱՏ ԵՐԿԻՐՆԵՐ.

ՔԱԹՄԱՆՏՈՒ (25,000 ըն.) Նեփալի բազաւորութեան մայրաքաղաքը. նշանաւոր եւ բազմաթիւ փակոտներովն, որոց մեծ մասը փայտակերտ են : — Նեփալի երկրին մեջ եւ Տաւաշակիւրի բարձր լեռը :

ԹԱՍԻՍՈՒՏՈՆ, Պուրանի մայրաքաղաքն եւ Թիպերի սահմանակից. այս երկրիս մեջ եւ Զամուշար բարձր լեռը :

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ԱԶԳԱՅ ԵՐԿԻՐՆԵՐ.

ՓՈՆՏԻՇԵՐԻ (50,000 ըն.) Գաղղիացւոց ձեռքը Բորոմանտիլի ծովեզերքը, վաճառաշահ քաղաք, եւ բամբակեղենի գործարաններ ունի :

ՉԱՆՏԷՌԵԱԿՈՐ (30,000 ըն.) Հուկլիի վերայ Կալկաթայի հիսիսակողմը, նոյնպէս Քաղղիացւոց ձեռքը. երբեմն մեծ, վաճառաշահ եւ ամուր քաղաք էր, բայց յետոյ Կալկաթայի ծաղկելովն անշքացաւ :

ԿՕԱ (20,000 ըն.) Փորթուգալցւոց ձեռքը հին Կօայի մօտ կղզեկի մի վերայ, վաճառաշահ նաւահանգիստ :

ՏԻՈՒ (4,000 ըն.) նոյնպէս Փորթուգալցւոց ձեռքը, Քիւնդրաթի հարաւակողմը կղզեկի մի մեջ, ամուր եւ վաճառաշահ քաղաք :

ԿՂԶԻՔ.

ՍԷՅԼԱՆ (Տապրորանիա) շատ բարեբեր կղզի, ունի առատ խահուէ եւ մեխակ, հարուստ հանքեր ու պատուական քարեր, Մանասարի ծոցէն ալ առատ մարգարիտ կելնէ. բնակիչն է 1,500,000: Քլիսաւոր քաղաքներն են Քոչումպոյ (50,000 ըն.) որ վաճառաշահ նաւահանգիստ ունի, եւ Թրունքումալի, որ կղզւոյս ամենէն լաւ նաւահանգիստն է :

ՄԱԼՏԻԻԵԱՆՔ, քանի մի հազար կղզիներէ ու ժայռերէ ձեւացած խումբ մի է, որոց մեջէն միայն յիսունի չափը մարդարնակ են. սոցա բազաւորը, որ սուշիյան կկոչուի, Մալէ կղզւոյն համանուն քաղաքը կնստի :

ԼԱՔԵՏԻԻԵԱՆՔ, նոյնպէս հազարաւոր կղզիներէ ու ժայռերէ ձեւացած՝ յորոց միայն քսան հատը մարդարնակ են :



ՀՆԴԿԱԶԻՆ.

Հնդկաչինու կամ Հնդկաստանի յայնկոյս Գանգեսի սահմաններն են հիւսիսէն Չին , արեւելքէն Չին եւ Չինաց ծով , հարաւէն նոյն ծովը , Մալաքքայի նեղուցն եւ Պենկալայի ծով , արեւմտքէն Պենկալայի ծով եւ Հնդկաստան :

Տարածութիւնն է իբր 20,000 բիւրմէրը քառակուսի :

Երկիրը տեղ տեղ սաստիկ լեռնոտ է , եւ տեղ տեղ դաշտային :

Օդը եւ բերքն ընդհանրապէս Հնդկաստանի օդոյն եւ բերքերուն նման է :

Բազմաքիւ գետոցը մեջ աւելի մեծերն ու նշանաւորներն են Պրահմաիտրա , Արաքսն , Իրաւատտի , Սալուէն , Չիքրանկ , որ Պենկալայի ծովը կթափին . Մէյքանկ եւ Մէյնամ՝ որ Չինաց ծովը կթափին :

Բնակիչն է իբր 40,000,000 այլ եւ այլ ազգեր ու ցեղեր . կրօնքն ընդհանրապէս պոտտականութիւնն է :

Հնդկաչինը կարելի է վեց մասն բաժանել , այսինքն . Անգղիացոց Հնդկաչին , Պիրմանի ինքնակարտրիւն , Սիւանայ քաղաւորութիւն , Մալաքքայի ազատ տերութիւնք , Աննամի քաղաւորութիւն , եւ Կղզիք :

ԱՆԳՂԻՍԱԿԱՆ ՀՆԴԿԱԶԻՆ.

Անգղիացիք 1826-ին Պիրմանաց ձեռքէն առին Իրաւատտի արեւմտակողմն եղած երկիրները , եւ այնուհե-

տես ալ մինչեւ ցայժմ Հնդկաչինու ուրիշ կողմերուն վերայ եւս կտարածեն իւրեանց իշխանութիւնը :

Անգղիացւոց Հնդկաչինու մեջ ունեցած քաղաքներուն նշանաւորներն են .

ՃՈՐՀԱԹ, Պրահմափոքրայի մօտ, երբեմն Ասսամի երկրին մայրաքաղաքն էր. քովերը առատ ջայ, հանքային ածուխ եւ քառւչուռ ունի :

ԱՐԱՔԱՆ (15,000 բն.) ծովու մօտ համանուն գետոյն վերայ, ընկած քաղաք. երբեմն համանուն գաւառին գլխաւոր քաղաքն էր :

ՌԱՆՎՈՒՆ (25,000 բն.) Իրաւատտի մեկ ճիւղին վերայ, թէք կոչուած փայտին մեծ առուտուր ունի, եւ շատ վաճառաշահ նաւահանգիստ է :

ՓԷՎՈՒ (7,000 բն.) երբեմն համանուն քաղաքութեան մայրաքաղաքն էր, զոր Պիրմանք կործանեցին 1756-ին. այժմ ընկած է եւ անբնակ :

ՄՈՒԼՄԷՅՆ, (30,000 բն.) Սալուէն գետոյն ձախակողմը, շատ վաճառաշահ քաղաք :

ՃՈՐՃԹԱՌԻՆ, (10,000 բն.) Փուշուփինակ կամ Կալլեսի իշխանի կղզւոյն մեջ, շատ վաճառաշահ քաղաք :

ՄԱԼԱՔՔԱ (5,000 բն.) համանուն նեղուցին վերայ վաճառաշահ նաւահանգիստ. երբեմն համանուն ազատ քաղաքութեան մայրաքաղաքն էր, յետոյ հետզհետեւ անցաւ Փորթուգալցւոց, Հոլանտացւոց եւ Անգղիացւոց ձեռքը. բայց առաջուան մեծութենէն ընկած է այժմ :

ՍԻՆԿԱՓՈՒՐ (50,000 ըն.) Մալաքքայի նեղուցին մեջ փոքրիկ կղզիի մի վերայ շինած, շատ բանուկ նաւահանգիստ եւ հարաւային Ասիոյ առաջին վաճառաշահ քաղաքներէն մէկը :

ԻՆՔՆԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՊԻՐՄԱՆԻ.

Պիրմանը Հնդկաչինոս հիւսիսային արեւմտակողմը կրնկնի. երկիրն ընդհանրապէս լեռնոտ է, եւ այն լեռանց մեջտեղերը ձեւացած ընդարձակ ու բարեբեր հովիտներէն կանցնին Սաշուէն, Չիքրակնկ եւ Իրաւատտի գետերը, եւ որք շատ անգամ բարձրանալով՝ երկրին մեծ մասը կողողեն. օդը տաք է, բայց ոչ վնասակար. հարաւակողմը գետնաշարժն անպակաս է : Պիրմանն ունի ամեն տեսակ մետաղներ, որ երեսն ձգած են. անտառաց մեջ կգտնուին պատուական փայտեր, եւ ամենայն տեսակ վայրի կենդանիք. ունի նաեւ ջայ, բրինձ, եւ սովորաբար Միջին Հնդկաստանի ամեն բոյսերը : Բնակիչն է իբր 4,500,000, մեծ մասը պոտտականք : Տերութեան կառավարութիւնն է կայսերութիւն :


ԱՄԱՐԱՓՈՒՐԱ, Իրաւատտի ձախակողմը՝ տերութեանս մայրաքաղաքն էր, բայց մեծ գետնաշարժով մի կործանելով՝ այժմ գրեթէ աներակ է :

ԱԻԱ (50,000 ըն.) Իրաւատտի ձախակողմը, Ամարափութայէն յետոյ մայրաքաղաքն էր, բայց 1837-ին մեծ գետնաշարժէն յետոյ այս ալ բողուեցաւ. ունի բազմաբիւտաճարներ եւ նշանաւոր սլալատ մի :

ՄՈՆԶՈՊՈՅ կամ ՄՈՆՇԱՊՈՒ, Առաջի մօտ փոքրիկ քաղաք, 1837-են յետոյ ինքնակալն այս տեղ կնստեր :

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՍԻՍՄԱՅ.

Սիամը Պիրմանի արեւելակողմը կրնկնի . երկիրն երկու կողմէն լեռներով պատած է, եւ մեջտեղերն ընդարձակ ու բարեբեր հովիտ մի է, որոյ մեջէն կանցնի Մեյնամ գետը . հողը շատ բարեբեր է, բայց մշակուած չէ .



Սիամացիք.

բերքն է Հնդկաստանի ամէն բոյսերը, եւ ունի մեծամեծ անտառներ որ լի են սպիտակ փիղերով, որոց աստուածական պատիւ կուտան Սիամացիք : Բնակիչն է իբր 5,000,000, կամ աւելի եւս, պուտտականք : Վաճառականութիւնը շատ ծաղկած է Չինացւոց ձեռքով :

ՊԱՆՔՈՒՔ (100,000 ըն.) Մեյնամի վերայ տերութեան մայրաքաղաքն է, եւ վաճառականութիւնը շատ բանուկ է. բնակչաց մեծ մասը նաւակներով գետոյն վերայ կրթնակին :

ՍԻԱՄ, տերութեան հին մայրաքաղաքը, զոր Պիրմանք աւերեցին :

ՄՍ.ԼՍ.Ք.ՔԱ.

Այս բերակղզիս Սիամայ հարաւակողմը կրնկնի. երկիրը շատ լեռնոտ է եւ օդը բարեխառն. բնակիչքը մալայեցի ցեղէն են, եւ կրօնքերն է մահմետականութիւն : Մալաքքան քանի մի մանր տերութիւններ բաժանուած է, յորոց հիւսիսակողմն եղածները այժմ Սիամի բազաւորին հարկատու են, եւ միայն հարաւայիններն ազատ են : Եւրոպացիք քիչ տեղեկութիւն ունին բերակղզոյս վերայ, ինչպէս նաեւ բոլոր Հնդկաչինու վերայ : Նշանաւոր քաղաքն է *Մալաքքա* որ Անգղիացոց ձեռքն է :

ԹԱԳԱԻՈՐՈՒԹԻԻՆ ԱՆՆԱՄԻ.

Աննամը Սիամայ արեւելակողմը կրնկնի եւ երեք մաս կրածանի, որ են *Քուչինչին*՝ արեւելակողմը, *Թունկըիկ*՝ հիւսիսակողմն, եւ *Քամպուն*՝ հարաւակողմը. երկիրը շատ տեղ լեռնոտ է, եւ մեջտեղէն կանցնի *Մէյքանկ* կամ *Քամպուն* գետը. հողը շատ բարեբեր է, ունի բազմաթիւ մեծամեծ անտառներ՝ յորս կգտնուին ամեն տեսակ վայրի կենդանիք եւ անազին օձեր : Բնակիչն է իբր 12 միլիոն

կամ անկի եւս, որ Չինաց ազգէն յառաջ եկած կերեւին, եւ նոցա շատ սովորութիւններն ունին. նմանապէս Չինաց գրերը կգործածեն՝ քեւ առանձին լեզու ունին: Մեծամեծաց եւ գիտնականաց կրօնքը Կոնփուկիոսի աղանդն է. իսկ հասարակ ժողովուրդը պոետական է: Ուսման մեջ Չինաց հաւասար են Աննամացիք:

ՀՈՒԷ (100,000 բն.) Քոչինչինի ծովափունքը, տերութեան մայրաքաղաքն է, եւ բոլոր Ասիոյ ամենէն ամուր բերդաքաղաքը. շէնքերուն մեջ նշանաւոր են բազաւորական պալատն ու միջնաբերդը:

ԹՈՒՐԱՆ, Հուէի հարաւակողմը, շատ գեղեցիկ եւ լաւ նաւահանգիստ:

ՔԷՉՈՅ (80,000 բն.) Թոնկքինկ գաւառին գլխաւոր քաղաքն է, եւ երբեմն բոլոր երկրին մայրաքաղաքը. ընդարձակ եւ շատ վաճառաշահ է:

ՍԱՅՎՈՆ (100,000 բն.) Քամպոն գաւառին գլխաւոր քաղաքն է, եւ շատ ամուր բերդաքաղաք. 1862-էն ի վեր Գաղղիացւոց ձեռքն է:

ԿՂՁԻՔ.

ԱՆՏԱՄԱՆ (3,000 բն.) Պենկալայի ծովուն մեջ վեց կղզիներէ եւ բազմաթիւ կղզեակներէ ձեւացած խումբ մի է, լեռնոտ եւ անտառներով ծածկուած:

ՆԻՔՈՊԱՐ (10,000 քն.) Անտաման կղզեաց նման լեռ-
նոտ եւ անտառներով ծածկուած . բայց բնակիչքը Ան-
տամանի բնակչաց նման անգութ եւ վայրենարարոյ չեն ,
եւ երկրագործութեան կալարապին :

Իսկ Մեծ Ովկիանոսի քանի մի կղզիները , գորս ոմանք
Յսիոյ մասն կհամարին , Ովկիանիոյ մեջ կղննմք :



ԵՐՐՈՐԴ ՄԱՍՆ ԱՇԽԱՐՀԻ.

Ա Փ Ր Ի Կ Է.

ԸՆԳՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ.

Հին ժամանակներէն մինչեւ ժեղարուն սկիզբներն Ափրիկէի միայն մեկ մասը ծանօթ էր, այսինքն Եգիպտոս, եւ Կարմիր ու Միջերկրական ծովերուն եզերքը: Միջին դարուց մեջ, մինչդեռ Վենետկեցիք եւ Ճենովացիք Հնդկաստանի հետ ցամաքով վաճառականութիւն կանէին, Փորթուգալցիք մտածեցին ծովով ճանապարհ մի գտնել ի Հնդկաստան, եւ 1433-ին անցան Պոչատոր հրուանդանէն անդին, եւ ետեւեւ ետեւ հասան ի Սենեկալ, Գալարի գրիտոյ կղզիներն, Կուիւնեա, Քոնկոյ եւ Զայիրէ գետոյն բերանը. 1486-ին *Բարրուդիմեոս Տիագ* Ափրիկէի հարաւային ծայրն հասաւ, բայց չկարողացաւ անդին անցնիլ փոքորիկներու պատճառաւ: Վասքոյտէ Կամա 1498-ին առաջին անգամ Ափրիկէի հարաւային ծայրէն անցաւ դեպ ի

արեւելք, եւ հասաւ Հնդկաստան : Սակաւ ժամանակէն Փորթուգալցիք Ափրիկէի արեւելակողմը գաղթականութիւններ հաստատեցին, եւ այնուհետեւ բոլոր Ափրիկէի սահմաններն իմացուեցան . բայց ներսի երկիրները տակաւին անձանօք մնացած են մինչեւ ցայժմ, օղին անառողջութեանը եւ բնակչաց վայրենութեանը պատճառաւ :

Ափրիկէի սահմանն է հիւսիսէն Միջերկրական ծով եւ Ճիպրալթար նեղուցն, արեւելքէն Սիւեզի պարանոց՝ որով Ասիոյ հետ միացած է, Կարմիր ծովն եւ Հնդկաց Ովկիանոս . հարաւէն հարաւային ովկիանոս, արեւմտքէն Ատլանտեան ովկիանոս :

Տարածութիւնն է 291,900 բիւրմեքր քառակուսի, ամբողջ եւրոպայի երեքին չափ :

Ափրիկէն տասնեւվեց աշխարհ կրածանոսի . երկուքն հիւսիսակողմն՝ որ են *Եգիպտոս* եւ *Պերպերիտան* . չորսն Ատլանտեան Ովկիանոսին եզերքը, *Սահրա* կամ *Մեծ Անապատ*, *Սեւեկարմայիա*, *Հիւսիսային Կուշեկա*, եւ *Հարաւային Կուշեկա* կամ *Քոնկոյ* . երեքն հարաւակողմը, *Օրենքացւոց երկիր*, *Գաղթականութիւն Գլխոյ*, եւ *Քաֆրաստան* . չորսն Հնդկաց Ովկիանոսին եզերքը՝ *Մոնոմորափա*, *Մոզամպիք*, *Զանկէպար*, եւ *Այան* . երկուքը Կարմիր ծովուն եզերքն, *Երովպիա* կամ *Հապէշիտան*, եւ *Նուպիա* . մեկը մեջտեղերը՝ *Սուտան* կամ *Նիկրիտիա* :

Ափրիկէն եռանկիւնաձեւ բերակղզի մի է . որ աշխարհիս ամենամեծ բերակղզին է, ներքին ծովեր կամ ծոցեր

սակաւ ունի : Երկիրը տեղ տեղ լեռնոտ է , տեղ տեղ դաշտային . անապատներ շատ կան Ափրիկէի մէջ , բայց եւ այնպէս շատ տեղ , մանաւանդ գետերու եզերքը , հողը սաստիկ բարեբեր է . անապատներու մէջերը շատ տեղ բարեբեր եւ ջրաբրի կտորներ կգտնուին , որ *սիւսիւ* կամ *իստէյ* կկոչուին :

Ափրիկէն հասարակածին երկու կողմերը տարածուած լինելուն , օդը սաստիկ տաք է , եւ ընդհանրապէս երկու եղանակ ունի , չոր եւ անձրեային . հասարակածին հիւսիսակողմն անձրեային եղանակն է ապրիլէն մինչեւ սեպտեմբեր , իսկ հարաւակողմն՝ հոկտեմբերէն մինչեւ մարտ :

ԾՈՎՔ . — Ափրիկէն հինգ ծով ունի միայն՝ մեծ եւ փոքր , որ են . *Միջերկրական ծով*՝ հիւսիսակողմը , *Հնդկաց Ռակիական* եւ անտի ձեւացած *Կարմիր ծովն*՝ արեւելակողմը , *Մեծ Ռակիական*՝ հարաւակողմն , եւ *Ատլանտեան Ռակիական*՝ արեւմտակողմը :

ՆԵՂՈՒՑՔ . — Ափրիկէն երեք նեղուց միայն ունի , որ են . *Ճիպրապար*՝ որ Ատլանտեան Ռակիանուր Միջերկրական ծովուն հետ կմիացրնէ , *Սպանիոյ* եւ *Պերպերիտանի* մէջտեղ . *Մոզամպիքի անցքն* , *Մատակասքար* կղզւոյն եւ *Մոզամպիքի* երկրին մէջտեղ . *Պապիւշնանտէպի* նեղուցն՝ որ *Կարմիր ծովն* Ատենի ծոցոյն հետ կմիացրնէ , *Արաբիոյ* եւ *Հապէշիտանի* մէջտեղ :

ԾՈՅՔ. — Ափրիկէի գլխաւոր ծոցերն են. *Սիրրա* եւ *Քապու*, որ Միջերկրականն կձեանան. *Կուխնէոյ ծոց*՝ որ Ատլանտեան Ովկիանոսէն կձեանայ, հիւսիսային Կուխնէոյ եզերքը. *Պենին* եւ *Պիաֆրա* որ Կուխնէոյ ծոցէն կձեանան. *Լալոա* եւ *Սոֆալայի ծոց*՝ որ Հնդկաց Ովկիանոսէն կձեանան, Քաֆրաստանի արեւելակողմը. *Սիւէզի ծոց*՝ որ Կարմիր ծովէն կձեանայ, Եգիպտոսի արեւելակողմն. *Ատլենի ծոց*՝ որ Հնդկաց Ովկիանոսէն կրձեանայ, Ալանի հիւսիսակողմը:

ԿՂՋԻՔ. — Ափրիկէի երեւելի կղզիներն եւ կղզեաց խումբերն են. *Ճերայի*՝ Քապուի ծոցոյն մէջ. Ատլանտեան Ովկիանոսի մէջ՝ *Ասորեանք*, *Մատերա*, *Քանարեանք*, *Դարարի Գլխոյ կղզիք*, *Կորեա*, *Պիասկոս* խումբը, *Ֆլուանտոյ Փոյ*, *Իշխանի կղզի*, *Սուրբ Թովմաս*, *Անենպոն*, *Համքարձման կղզի*, եւ *Սուրբ Հեղինէ*. Հնդկաց Ովկիանոսի մէջ՝ *Ռուտրիկեզ*, *Դադդիոյ կղզի* կամ *Մորիկ*, *Միուրեան կղզի* (երբեմն *Պուրպոն* կղզի), *Սուրբ Մարիամ*, *Մատակասքար*՝ որ աշխարհիս երրորդ կղզին է մեծութեան կողմանէ, *Քամորեանք*՝ *Զանգիպար*, *Զանկեպարի* ծովեզերքն, *Սեյլէլեան* կղզիք եւ *Սոքոթորա*:

ՀՐՈՒԱՆԴԱՆՔ. — Ափրիկէն բազմաթիւ հրուանդաններ ունի, որոց գլխաւորներն են. *Պոն* կամ *Բարի*՝ Թունուզի տերութեան հիւսիսային արեւելակողմն, *Մարիֆու*՝ Ալճերիի արեւելակողմը, *Սեպտէ*՝ ճիպրաւբարի նեղուցը, *Չոյատոր* եւ *Գուլի Սպիտակ*՝ Սահրայի մէջ, *Դարարի*

Գրուխ՝ Սենեկամպիոյ մեջ, *Փաշմաս* կամ *Գրուխ Արմա*
շենեաց՝ հիւսիսային Կուինեոյ մեջ, *Լոփեա* եւ *Նեկրոյ*՝
հարաւային Կուինեոյ մեջ, *Գրուխ Բարեյուշոյ* եւ *Գրուխ*
Ասդանց՝ Գլխոյ գաղթականութեան մեջ, *Ամպրա*՝ Մա-
տակասքարի հիւսիսակողմը, *Տէշիասոյ*՝ Մոզամպիքի
հիւսիսակողմն, եւ *Կուարտաֆուխ*՝ Այանի հիւսիսակողմը :

ԼԵՐԻՆՔ. — Ափրիկէի լեռները դեռ բոլորովին ծանօթ
չեն. գլխաւոր գօտիներն են, *Ատլաս* լեռինք՝ Ափրիկէի
հիւսիսակողմը, Պերպերիստանի եւ Սահրայի մեջտեղերն .
Քոնկ՝ որ Սուտանի եւ Կուինեոյ մեջտեղ կտարածուին .
Լուսնի լեռները կամ *Ճեպէլ իշլ Գամէր*՝ Նիկրիտիոյ եւ
Հապէշիստանի հարաւակողմը. *Լուսիարա*՝ Մոզամպիքի ա-
րեւմտակողմը. *Նիւշիլոտ*՝ Ափրիկէի հարաւակողմը . *Թե-*
նեքիֆֆա եւ *Մատակասքար*՝ համանուն կղզեաց մեջ :

ՀՐԱԲՈՒԹՔ. — Ափրիկէի ցամաքը միայն մեկ հրաբուխ
կայ. իսկ կղզիներու մեջ շատ են՝ մանաւանդ Գալարի
Գլխոյ եւ Քանարեան կղզեաց մեջ :

ԼԻՃՔ. — Ափրիկէի գլխաւոր լճերն են. *Տեմպէա*՝ Հապէ-
շիստանի մեջ . *Քերուէ* եւ *Մենգալէ*՝ Եգիպտոսի մեջ.
Չատ՝ Նիկրիտիոյ մեջ . *Նիասսի*, *Նկամի* եւ *Ուքերեւէ*՝
հարաւային Ափրիկէի ներսերը : *Ուքերեւէ լիճն*, որ նոր
գտնուեցաւ, կասեն թէ Կասպից ծովուն բնդարձակու-
թիւնն ունի :

ԳԵՏՔ. — Ափրիկէի գլխաւոր գետերն են. *Նեղոս*՝ որոյ աղբիւրը հասարակածին մօտ է, կձեռանայ *Պահրիւշ Ազրէք* կամ *Կասրոյտ* գետով, եւ *Պահրիւշ Էսկատ* կամ *Սպիտակ* գետով, Հապէշիստանը, Նոպիան եւ Եգիպտոսը կոռոզէ, եւ զանազան բերաններով Միջերկրական ծով կթափի: Ատլանտեան Ովկիանոս թափողներն են. *Սեկեկաշ* եւ *Կամպիա*՝ որ Սենեկամպիայէն կանցնին. *Նիկէր* կամ *Քուշարա*՝ որ Քոնկ լեռներէն կրղխի, Նիկրիտիան եւ հիւսիսային Կոնինեան կոռոզէ. *Քոնկոյ* կամ *Զայիրէ*՝ հարաւային Կոնինեայէն կանցնի. *Յրանկոյ* կամ *Յրանժ*՝ որ Օբենթացոց երկրէն կանցնի: Հնդկաց Ովկիանոսը կրթափի *Զամպէզ* կամ *Քուշանա*, որ Մոնոմորափայէն կանցնի:

ԲԵՐՔ. — Հանքերու մէջ Ափրիկէն ունի ոսկի, պղինձ, երկար, եւ պատուական քարեր: Բուսոց կողմանէ Ափրիկէն շատ երեսելի է. բէս երկրին մեծ մասը անբեր անապատ է, բայց շատ տեղ ծովեզերքն եւ մանաւանդ գետերուն եզերքը զարմանալի կերպով կաճին զանազան բոյսեր ու ծառեր, ինչպէս քոքենի, արմաւենի, աղամարգենի՝ որոց պտուղը բնակչաց գլխաւոր կերակուրն է. ցորեն, եգիպտացորեն, շաքար, պղպեղ, եղջերենի, ակակիա՝ որ *արարացի խէժ* կոչուած խէժը կուտայ, արանոս, պաօպապ՝ որ աշխարհիս ամենամեծ ծառն է, եւ ուրիշ շատ սակաւագիւտ ծառեր ու բոյսեր: Կենդանեաց մէջ ունի առիւծ, վագր, յովազ, ինձ, փիղ, կոկորդիլոս, օձ՝ մանաւանդ

պօա օձր, ձիագետի, ունգեղջիւր, ուղտ, տեսակ տեսակ կապիկներ՝ յորս երեսելի է շիմփանգեն, եւ այլն : Թրոջնոց մեջ նշանաւոր են ջայլամն՝ որոյ փետուրները շատ յարգի են, բուքակ, արագիլ, եւ այլն . վնասակար միջատներ խիստ շատ են Ափրիկէի մեջ, ինչպէս կարիճ, սպիտակ մրջիւն, եւ բազմաթիւ մարախներ որ երբեմն ամբողջ գաւառներ անապատ կղարձրնեն . ընտանի կենդանեաց մեջ ունի ազնիւ տեսակ էշ, եւ ուղտ :

ԲՆԱԿԻՉ. — Ափրիկէի բնակչաց ճիշդ թիւը մինչեւ ցայժմ կարելի չեղաւ իմանալ . հաւանական է թէ 200 միլիոնի չափ մարդ լինի մեջը, թէն շատ աշխարհագիրք շատ ա-



Չիւ գգեստուց Ափրիկեցոց.

ւելի պակաս կհամարին: Հիւսիսային Ափրիկէի բնակիչքն թեպէտ բոլորովին սպիտակ ջեն, սակայն կովկասային ցեղէ կհամարուին. այս ցեղէն զլիսաւոր ազգերն են *Մաւրիտանացիք* կամ *Մուղրիք*, *Պերպերք*, *Ղփտիք*՝ որ հին եգիպտացւոցմէ յառաջ եկած են, *Նուպիացիք* եւ *Հապէշք*: Ափրիկէի միւս երկիրներուն բնակիչքը սեաւ ցեղէ են. սոքա ընդհանրապէս տակաւին բարբարոսութեան մէջ են, եւ մեջերնէն շատ քիչ ցեղեր կենաց ամենահարկաւոր արուեստները զիտեն. ցեղեր կան որ դեռ մարդակեր են: Գերեվաճառութիւնը շատ է մեջերը, եւ նոքա ձեռնտու կլինէին Եւրոպացւոց՝ իւրեանց ազգակիցներն Ամերիկա գերի ծախելու:

ԼԵԶՈՒՅ. — Ափրիկէի հիւսիսակողմն արարերէնը շատ տարածուած է. Ատլաս լեռանց մէջ եւ Սահրա անապատը Պերպերներուն լեզուն կխօսուի. Ափրիկէի միւս երկիրներն իւրաքանչիւր ցեղ իւր առանձին լեզուն կամ բարբառն ունի:

ԿՐՕՆՅ. — Մահմետականութիւնը բոլոր հիւսիսային Ափրիկէն տարածուած է, եւ նաեւ Ափրիկէի ներսերը շատ տեղ. Ղփտիք՝ եգիպտոսի մէջ, եւ Հապէշք քրիստոնեայ են, բայց այս վերջիններս շատ աւելորդապաշտական արարողութիւններ եւս ունին. Ափրիկէի Սեւերը տակաւին կռապաշտ են:



Վայրենի Ափրիկեցիք.

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ. — Ափրիկէի գրեթէ ամէն իշխանքն եւ քաղաւորները մեկմեկ անգուր բռնաւորներ են, որ իւրեանց հպատակներուն ստացուածքն եւ շատ անգամ կեանքն եւս, ըստ հաճոյից անձանց կյափշտակեն:


Ուսմունքը, գիտութիւնն ու ճարտարութիւնը հին ժամանակները շատ ծաղկած էին Ափրիկէի հիւսիսակողմը, մանաւանդ Եգիպտոսի մէջ. այժմ բոլորովին ընկած են. միայն Երոսպացոց ձեռքն եղած երկիրները եւ Եգիպտոսը օրէ օր յառաջ կերբան:

ԵԳԻՊՏՈՍ .

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ . — Եգիպտոսն , որ հին ժամանակները գիտութեանց եւ քաղաքակրթութեան իսանձարուրքըն եղաւ , Փարաւոնեանց ժամանակ շատ ծաղկած ինքնակալութիւն մի էր . յետոյ երկու հարիւր տարիի չափ (525-332 նախ քան զՔրիստոս) Պարսից մեծագօր տերութեան գաւառներէն մէկն եղաւ : Մեծն Աղեքսանդր առանց դժուարութեան տիրեց Եգիպտոսի , եւ նորա մահուանէն յետոյ , Եգիպտոսի մեջ Պտղոմեանց թագաւորութիւնն սկսաւ , որ երեք հարիւր տարի դիմացաւ , եւ Քրիստոսէ յառաջ 29 թուականին Հռոմայ գաւառ եղաւ :

Երբոր Մեծին Թեոդոսի մահուանէն յետոյ (395-ին) Հռոմայ ինքնակալութիւնն երկու թաժանուեցաւ , Եգիպտոսն Արեւելեան կայսերութեան մասն եղաւ . եօրներորդ դարուն մեջ մահմետական Արաբացիք եկան տիրեցին այս երկրիս : Հետզհետէ Պաղտատու ամերապետաց , Ֆարիմեանց , Էյուպեանց եւ Մեմլուքներու ձեռքն անցաւ Եգիպտոս . այս Մեմլուքներն Էյուպեան ցեղի սուլդանաց պահապան զօրքն էին , որ 1254-ին սուլդանն սպաննեցին եւ Եգիպտոսի տիրեցին :

Սէլիմ Ա Օսմանեանց թագաւորը 1517-ին յաղթեց Մեմլուքներուն եւ Եգիպտոսն Օսմանեան ինքնակալութեան հետ միացուց . բայց առաջուան պէս այն երկրին կառա-



Եգիպտոս.

վարութիւնը Մեմլուքներու պէյերուն կամ իշխաններուն ձեռքը բողոք: Անով դարձեալ զօրացան Մեմլուքները, մինչեւ որ Գաղղիացիք 1798-ին Պոնափարթի առաջնորդութեամբ տիրեցին Եգիպտոսի, եւ արեւմուտքի գիտութիւններն ու արուեստները տարածեցին մեջը:

Յամանցիք Անգղիացւոց օգնութեամբն առին Եգիպտոսը Գաղղիացւոց ձեռքէն 1801-ին: Մեհեմմետ Ալի փաշան 1806-ին Եգիպտոսի կուսակալ յուղարկուեցաւ, որ 1811-ին բուլորովին ջնջեց Մեմլուքներուն գունդն, եւ ըսկաւ երկիրը ծաղկեցընել գիտութեամբ, արուեստիւք եւ վաճառականութեամբ. յետոյ Յամանեան ինքնակալութեան դէմ պատերազմելով՝ 1839-ին Եգիպտոսն անկախ փոխարքայութիւն մի ձեւացուց ժառանգական, միայն

Օսմանեան ինքնակալութեան հարկատու : Այժմու փոխար-
քան է Իսմայիլ փաշա , որ արողը նստաւ 1863-ին :

Եզիպտոսի սահմանն է հիւսիսէն Միջերկրական ծով ,
արեւելքէն Սիւեզի պարանոցն եւ Կարմիր ծով , հարաւէն
Նուպիա , արեւմտքէն Լիբիոյ անապատն եւ Պերպերիստան :

Տարածութիւնն է 5,000 բիւրմերը քառակուսի :

Եզիպտոսի երկիրը արեւելքէն , հարաւէն եւ արեւմտքէն
լեռներով պատած է . իսկ մեջտեղը լայնածառայ դաշտ մի
է՛ ընդհանրապէս անբեր . զերահուջակ Նեղոս զետն ամեն
տարի բարձրանալով , բոլոր երկիրը կծածկէ , եւ քա-
շուած ժամանակը պտղաբեր հող մի կձգէ , որով բոյսե-
րըն առատութեամբ յառաջ կուգան : Եզիպտոսի մեջ անձ-
րեւ սակաւ կուգայ . բայց Երովպիոյ լեռները սաստիկ
անձրեւներ կուգան , եւ ձիւնն ալ հալելով՝ Նեղոս զետը
կբարձրանայ մայիսէն մինչեւ հոկտեմբեր :

Եզիպտոսի մեջ բազմաբիւ լճեր ու ջրանցքներ կան՝
Նեղոսի ջրերը երկրին ամեն կողմերը հաղորդելու համար :

Օղը տաք է եւ կանոնաւոր . ամենէն տաք ժամանակն
է ապրիլ ամիսը : Անապատէն փջած քամի մի եւ ժան-
տախտը մեծ կոտորածներ կանեն Եզիպտոսի մեջ . նմանա-
պէս աչքերու ցաւն անպակաս է՝ օդին չորութեանը պատ-
ճառաւ :

Եզիպտոսի մեջ շատ տեսակ բոյսեր չկան , բայց ընդ-
հանրապէս Եւրոպայի հարաւակողման բոյսերն ունի , ինչ-
պէս բամբակ , շաքար , բրինձ , ցորեն , եզիպտացորեն ,
եւ այլն : Բուն Եզիպտոսի բուսոց մեջ երեւելի է պապի-

շուշու, որոյ տերեւները թղթի տեղ կգործածէին հին ժամանակները : Կենդանեաց մեջ ունի ուղտ, երկայնաղմակ ոջխարներ, եշ եւ ուրիշ ընտանի կենդանիներ, լեռներու մեջ այ առիւծ եւ ուրիշ գազաններ, կոկորդիլոս, հիշու կամ Փարաւոնի մուկն եւ մեծամեծ օձեր : Հանքեր չկան Եգիպտոսի մեջ, միայն տեսակ տեսակ քարեր կը գտնուին, մանաւանդ կրանիք եւ մարմարիոն :

Բնակիչն է իբր 5 միլիոն, մեծ մասն Արաբացի, մնացածը Ղփաի՝ հին Եգիպտացւոց ցեղէն, Օսմանցի, Հայ, Հրեայ, եւ Եւրոպացի ազգեր : Կրօնքն է մահմետականութիւն. Ղփաիք քրիստոնեայ են, սակայն կասեն թէ հեթանոսական ու մահմետական արարողութիւններ եւս ունին : Լեզուին արարերէն է :

Ոսման, ճարտարութեան եւ գիտութեանց կողմանէ հին ժամանակը շատ անուանի էր Եգիպտոս, բայց յետոյ ընկաւ : Այս դարուս սկիզբները նորէն սկսաւ ծաղկիլ Մեհեմմետ Ալի փաշային ջանքովը : Վաճառականութիւնը հետզհետէ ծաղկելու վերայ է, մանաւանդ այս վերջին տարիներս, որ Եւրոպացիք Սիեզի պարանոցը կկտրեն՝ Հնդկաստանի նոր եւ դիւրագոյն ճանապարհ մի բանալու համար :

Տերութեան կառավարութիւնն է փոխարքայութիւն, Օսմանեան ինքնակալութեան հարկատու :

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔԲ.

ԳԱՀԻՐԷ կամ ՄԸՍԸՐ (300,000 ըն.) Եզիպտոսի այժմու մայրաքաղաքն է՝ Նեղոսի աջակողմեան ավազանքը, մեծ, հոյակապ եւ վաճառաշահ: Այս քաղաքիս մեջ նշանաւոր է Նեղոսաջափն, որ Նեղոսէն ձեւացած կղզիի մեջ սիւն մի է, եւ կցուցընէ գետոյն բարձրութեան աստիճանը: Այս քաղաքիս մօտ են հռչակաւոր մեծակառոյց բուրգերը՝ որ աշխարհիս ամենէն բարձր շէնքերն են: Նմանապէս այս քաղաքէս հեռու չէր եւ *Մեմփիս* Փարաւոնեանց յետին մայրաքաղաքն, որ աշխարհիս ամենէն հարուստ, մեծ եւ ծաղկած քաղաքներէն մէկն էր. իսկ այժմ տեղն անգամ յայտնի չէ: Գահիրէի մօտ Գազղղիացիք մեծ յաղթութիւն արին Մեմփոսներու դէմ 1798-ին:

ԱՂԵՔՍԱՆԴԻԱ (400,000 ըն.) Մեծին Աղեքսանդրի շինած քաղաքն է. Միջերկրական ծովու վերայ երկու ընդարձակ նաւահանգիստ ունի, որով հին ժամանակներէ ի վեր երեւելի է վաճառականութեամբ: Անուանի էին այս քաղաքիս մեջ Փարոսն եւ զրատունը: Օգոստոս կայսեր ժամանակ ընակիչն էր 700,000. յետոյ փոքր ինչ անշքացաւ, բայց այժմ դարձեալ օրէ օր կծաղկի, եւ ամուր պարսպով ու բերդերով պատեցաւ: Այս քաղաքիս արեւմտեան կողմը կուգայ *Ապուլլիո* գիւղն, ուր ննչսրն անգղիացին յաղթեց Գաղղիացւոց նաւական պատերազմով 1798-ին:

ՌԷՇԻՏ կամ ՌՈՁԷԹԹԱ (15,000 րն.) եւ ՏԱՄԻԱԹ (20,000 րն.) նեղոս գետոյն բերանները բանուկ նաւահանգիստներ են, եւ պատմութեան մեջ անուանի :

Սիւեզի պարանոցին կողմերը երկու հռչակաւոր քաղաքաց աներակները կան, որ են *Պերուսիս* եւ *Հեղիուս* կամ *Արեգ քաղաք* :

ՍԻՌԻԹ (15,000 րն.) Ափրիկէի ներսերը գնացող կարաւաններն այս տեղէն ճանապարհ կելնեն :

Եգիպտոսի հարաւային կողմերն ընդարձակ դաշտի մի մեջ տարածուած են *Թերե* քաղաքին աներակներն որ Մեմփիսէն յառաջ Եգիպտոսի մայրաքաղաքն էր, եւ աշխարհիս առաջին կարգիներէն մեկը, մանաւանդ մեծակառոյց շէնքերուն եւ ամբոթեանը կողմանէ :

ՍԻԻԷՁ, անբեր անապատի մեջ, բայց Կարմիր ծովուն ծայրը լինելուն՝ շատ վաճառաշահ քաղաք. եւս առաւել պիտի ծաղկի վաճառաշահութեամբ, երբ Կարմիր ծովը Միջերկրականին հետ միացընող ջրանցքին շինութիւնն աւարտի :

Եգիպտոսի Փոխարքային իշխանութեան տակ են *Նուսիա*, *Նիկրիտիա*, *Քորտոփան* ու *Տարֆուշ* տերութիւնները, եւ Հապեշիստանի մեկ մասը :



ՊԵՐՊԵՐԻՍՏԱՆ .

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ . — Ափրիկէի հիւսիսակողմը, որ այժմ *Պերպերիտան* կամ *Պարպարիա* կկոչուի՝ Պերպեր ազգին անուամբը, հին ժամանակները Մաւրիտանացիք, Նումիդացիք, եւ այն հռչակաւոր Կարքեդոնացիքը կրնակին որ այնչափ ժամանակ Հռոմայեցւոց հետ մեծամեծ ու սոսկալի պատերազմներ ունեցան : Կարքեդոնի ընկնելէն յետոյ, այս երկիրս Հռոմայ տերութեան ծաղկեալ գաւառներէն մէկն եղաւ : Բարբարոսաց արշաւանաց ժամանակ հարիւր տարիի չափ (427-էն մինչեւ 534) Վանդալաց ձեռքն անցաւ . յետոյ արևելեան կայսերութեան հետ միացաւ, մինչեւ որ եօթներորդ դարուն մեջտեղերն Արաբացիք կամ Սարակինոսք եկան տիրեցին եւ քանի մի մահմետական տերութիւններ հաստատեցին մեջը :

Մետասաներորդ դարուն մեջ Մորաւեանք Մարոքի տերութիւնը հիմնեցին, որ ժՁ դարուն սկիզբները շերիֆներու ձեռքն անցաւ : Նոյն միջոցին Սպանիացիք, որ Մաւրիտանացիքը իւրեանց երկրէն հանել էին, կջանային Ափրիկէի ծովեզերքին տիրել Սեպտէէն մինչեւ Քարապլուս : Ալմերացիք Սպանիացւոց դէմ օգնութեան կանչեցին *Պարպարոսա* անունով երկու եղբարքն որ նոյն ժամանակներն անուանի հենք էին . եկան երկու եղբարքն եւ

Ալճերիի ու շրջակայ երկիրներուն տիրեցին, եւ որպէս զի իւրեանց իշխանութեան մէջ ապահով մնան՝ Օսմանեանց հարկատու եղան. նոյն դարուն մէջ Քարապլուսի եւ Թունուզի տերութիւններն եւս Ալճերի օրինակին հետեւեցան : Այն երեք տերութիւններն, Ալճերի, Քարապլուս եւ Թունուզ, Մարոքի հետ միատեղ Պերպերիստանը կազմեցին, եւ այնուհետեւ ծովու աւազակներով լեցունեցան, որ շատ արգելք կանէին Միջերկրական ծովու վաճառականութեանը :

Ալճերին 1830-էն ի վեր Գաղղիացոց ձեռքն է. Քարապլուսի եւ Թունուզի տերութիւններն հարկատու են Օսմանեանց. առաջնոյն իշխանը փաշա մի է, երկրորդինը պէյ մի : Մարոքն անկախ տերութիւն է, եւ կառավարողն է մահմետական սուլդան մի կամ կայսր :

Պերպերիստանի սահմանն է հիւսիսէն Միջերկրական ծով, արեւելքէն Եգիպտոս, հարաւէն Սահրա անապատ, արեւմտքէն Ատլանտեան ովկիանոս :

Տարածութիւնն է 15,900 բիւրմերք քառակուսի :

Երկիրը հարաւային կողմերը լեռնոտ է, հիւսիսային կողմերը դաշտային եւ բարեբեր, թէ եւ տեղ տեղ ընդարձակ անապատներ ունի :

Օղը բարեխառն է, երբեմն ալ տաք : Պերպերիստանը բուսոց եւ կենդանեաց կողմանէ Եւրոպայի հարաւային երկիրներուն նման է. իսկ հանքերու կողմանէ միայն պղինձը նշանաւոր է Մարոքի տերութեան մէջ :

Պերպերիստանի մեջ մեծ գետ ամենևին չկայ :
Բնակիչն է Պերպեր կամ Բարբարոս , Մուղրի կամ
Մարիտանացի , Արարացի , Հրեայ , եւ սակաւ Գաղղիա-
ցիք : Կրօնքն է , բաց ի Գաղղիացոց , մահմետական . լե-
զունին ըստ մեծի մասին արաբերէն է :

Պերպերիստանը չորս տերութիւն կրածանոյի . *Թրիպո-
շի* կամ *Թարասպրուսի* եւ *Թուևուզի* ինամակալութիւն-
ները , *Ճեզաշիր* , եւ *Մարոքի* կայսերութիւնը :

Ս. ԹԱՐԱՊՈՒՍ .

Թարապլուսը , որ Պերպերիստանի արեւելակողմը կրնկ-
նի Եգիպտոսի սահմանակից , ժառանգական պէյութիւն
կամ իշխանութիւն է Օսմանեան ինքնակալութեան հար-
կատու . երկրին ծովեզերքը սաստիկ բարեբեր է , իսկ հա-
րաւային կողմը անբեր աւազուտ : Թարապլուսը երեք
մաս կրածանոյի . *Թուև* Թարասպրուս' արեւմտակողմը , *Պար-
քա* երկիրն արեւելակողմը , եւ *Ֆեզզան*' հարաւակողմը
Սահրայի ովասիսներուն մեջ : Թարապլուսը գետ կամ գե-
տակ չունի : Բնակիչն է մեկ միլիոն Մուղրիք եւ վրա-
նարնակ Արարացիք :

ԹԱՐԱՊՈՒՍ կամ ԹԵԲՈՒԼԻ (*Տրասպոլիս*) (70,000 բն.)
Պէյութեան մայրաքաղաքը , բանուկ նաւահանգիստ եւ վա-
ճառաշահ :

ՏԵՌՆԷ , Պարքայի գլխաւոր քաղաքն է :

ՄՈՒՐՉՈՒՅ , Ֆեզզանի մայրաքաղաքն է , եւ ներքին
Ափրիկէի հետ մեծ վաճառականութիւն ունի : Օղը սաս-

տիկ տաք կլինի : Թարապուսի երկրին մեջ Սիրբա ծոցոյն եզերքը հոռմայեցի շէնքերու շատ աւերակներ կան , յորս երեսելի են հռչակաւոր *Կուշերենէ* քաղաքին աւերակները , Տեռնէի մօտ :

Բ. ԹՈՒՆՈՒՉ.

Թունուզը (Թունիզ) որ Թարապուսի արեւմտակողմը կրնկնի , պէյութիւն է Օսմանեանց հարկատու . երկիրը հիւսիսային կողմը շատ բարեբեր է , հարաւակողմն անբեր աւազուտ : Բնակիչն է 1,500,000 մահմետականք ըստ մեծի մասին :

ԹՈՒՆՈՒՉ , (100,000 բն.) մեծ եւ ամուր քաղաք , արուեստից եւ վաճառականութեան կողմանէ ծաղկած :

Կուշերու , Թունուզի նաւահանգիստն է , ապահով եւ բանուկ : Այս քաղաքիս մօտ են գերահռչակ Կարքեղոն քաղաքին աւերակները : Նմանապէս ուրիշ շատ հոռմայեցի շէնքերու եւ քաղաքներու աւերակներ կգտնուին Թունուզի երկրին մեջ :

Գ. ԱԼՃԷՐԻ .

Ճեզայիրը կամ Ալճերին , որ Թունուզի արեւմտակողմը կրնկնի , պէյութիւն էր Օսմանեանց հարկատու . 1830-էն ի վեր Գաղղիացիք տիրեցին բոլոր երկրին , եւ օրէ օր ծաղկեցրնելու հետ են քաղաքականութեամբ եւ ճարտարութեամբ : Երկիրն ըստ մեծի մասին շատ բարեբեր է . հա-

րաւային կողմը լեռնոտ է, եւ անտառներուն ու անապատներուն մեջ կգտնուին առիւծ, վագր, ինձ, եւ ուրիշ գազաններ:

Բնակիչն է 3,000,000, որոց միայն 200,000ը եւրոպացիք են, մնացածները Մուղլիք, Արաբացիք, եւ ուրիշ Ափրիկեցի ազգեր:

ՃԷԶԱՅԻՐ կամ ԱԼՃԵՐԻ (*Ալժեր*) (72,000 բն.) Միջերկրական ծովուն վերայ բանուկ նաւահանգիստ, ամուրքադաք, եւ օրե օր ծաղկելու հետ է:

ՅՐԱՆ (29,000 բն.) ամուրքադաք. յառաջ մեծ էր, պատերազմներով աներեցաւ:



Ճեզայիր.

ԿՈՍՏԱՆԴԻՆԱ (37 000 բն.) Ամուր բերդաքաղաք եւ
երեսկի, որոյ տիրեցին Գաղղիացիք 1837-ին: Հին ժամա-
նակ Նումիդիոյ մայրաքաղաքն էր, եւ կկոչուէր *Կիրրա*:

Գ. ՄԱՐՈՔ.

Մարոքի ինքնակալութիւնը ճեզայիրի արեւմտեան կող-
մը կտարածուի մինչեւ Ովկիանոս. երկիրը տեղ տեղ ա-
նապատ է, տեղ տեղ ալ սաստիկ բարեբեր. լեռներուն մեջ
կգտնուին ոսկի, արծաթ, երկաթ, եւ մանաւանդ պղինձ:
Բնակիչն է 8,000,000 Մուղրիք եւ Արաբացիք՝ որ վաճա-
ռականութեան կպարապին, եւ Պերպերք՝ որ վայրենի
եւ անազակարարոյ ժողովուրդներ են:

ՄԱՐՈՔ կամ ՄԷՐԱՔԷՇ (100,000 բն.) բարեբեր դաշտի
մեջ շինած Ատլաս լեռանց ստորոտը, մեծ եւ վաճառաշահ,
եւ Մարոքի ինքնակալութեան մայրաքաղաքը: Անուանի
են այս քաղաքիս կաշիի գործարաններն, որ քաղաքին ա-
նուամբը *Մարոքիկ* կկոչուի:

ՖԷՍ (100,000 բն.) Մարոքի տերութեան ամենէն մեծ,
զեղեցիկ եւ ծաղկած քաղաքն է: Ատենով զիտութիւններն
շատ ծաղկած էին մեջը: Վաճառականութիւնն ալ շատ
բանուկ է:

ՄԷՔԻՆԷՁ (50,000 բն.) մեծ եւ անուանի քաղաք.
կայսրն անկի այս քաղաքս կրնակի, ուր եւ մեծակառոյց
պալատ ունի, որոյ պարտեզներուն մեջ է Գանձա-
տունն՝ երեք կարգ պարսպով պատած:

ԷԼ ԱՐԻՇ, բանուկ նաւահանգիստ:

ՍԱԼԷ, (25,000 ըն.) Ատլանտեան Ռվկիանոսի վերայ,
Մարոքի առաջին պատերազմական նաւահանգիստը:

ԹԱՆՃԵՐ (10,000 ըն.) Ճիպրայքար նեղուցին վերայ քա-
նուկ նաւահանգիստ: Եւրոպացի տերութեանց հիւպատոս-
ներն այս քաղաքս կնստին:

ԹԷԹՈՒԱՆ (16,000 ըն.) Ամուր քաղաք զոր Սպանիա-
ցիք առին պատերազմով 1860-ին եւ ետ դարձուցին 1862-
ին, երբոր Մարոքի կայսրն Սպանիացեոց ունեցած 100
միլիոն ֆրանք պարտքը հատուց:

ՍԵՊՏԷ կամ ՅԵԻԹԱ (15,000 ըն.) Ճիպրայքար բերդին
դիմաց, Սպանիացեոց ձեռքը ամուր բերդ:



ՍՍՀՐԱ ԿԱՄ ՄԵԾ ԱՆԱՊԱՏ.

Սահրա անապատին սահմաններն են հիւսիսէն Պերպէրիտան, արեւելքէն Եգիպտոս եւ Նուպիա, հարաւէն Սուտան եւ Սենեկամպիա, արեւմտքէն Ատլանտեան ովկիանոս:

Տարածութիւնն է իբր 37,000 բիւրմերր քառակուսի:

Երկիրը դաշտային, անբեր ու անազուտ է. միայն տեղ տեղ շատ բարեբեր ովասիսներ ունի:

Օդը աշխարհիս ամենէն տաքն է:

Սահրայի անապատին քովերը, եւս եւ ներսերը, շատ գազաններ կգտնուին, ինչպէս առիւծ, վագր, ինձ, յովազ եւ այլն:

Բնակիչն է իբր 1,000,000 Պերպէր եւ Արաբացի. վրանարնակ եւ կիսամերկ կապրին, եւ քաղցի ու ծարաւոյ երկար ժամանակ կհամբերեն: Գլխաւոր քաղաքներն են Ակապուլի, Հուտէն, Ակատէս, եւ այլն:



ՍԵՆԵԿԱՄՊԻԱ .

Սենեկամպիոյ սահմաններն են հիւսիսէն Սահրա անապատն , արեւելքէն Սուտան , հարաւէն հիւսիսային Կուինեա , արեւմտքէն Ատլանտեան Ովկիանոս :

Տարածութիւնն է իբր 6,600 ըիւրմերը քառակուսի :

Երկիրն ընդհանրապէս աւազուտ անրեր է : Գլխաւոր բերքն է ոսկի, մանաւանդ գետերուն մէջ, արծաթ , երկաթ , եւ ուրիշ մետաղներ եւ սաք . բուսոց մէջ նշանաւոր է պաօպապ ծառը որ աշխարհիս ամենէն մեծ ծառն է արանոս , բամբակ , պղպեղ . կենդանեաց մէջ ալ տաք երկրի ամեն գազաններն ունի , մանաւանդ առիւծ , որ աշխարհիս ամենէն կատաղիներն են . բռնոց մէջ նշանաւոր է ջայլամն , որոյ փետուրները շատ յարգի են :

Յղը տաք է , յուլիսէն մինչեւ հոկտեմբեր միակերպ անձրեւ կուգայ :

Բնակիչն է 12,000,000 Ֆուլլան , Մանտինկ , Եօլոֆ , եւ ուրիշ սեւ , վայրենի եւ տգետ ազգեր . կրօնքն է մահմետականութիւն եւ կռապաշտութիւն :



Մենեկամպաչիք.

Գլխաւոր զեւերն են *Մենեկաչ* եւ *Կամպիա*, որոց ա-
նուամբն երկիրը Մենեկամպիա կոչուեցաւ. :

Մենեկամպիոյ մեծ մասն ինքնիշխան է, եւ Սեւերն ա-
ռանձին տերութիւններ ունին. մեկ մասն ալ Գաղղիացւոց,
Անգղիացւոց եւ Փորրուգալցւոց ձեռքն է :

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔԻՔ.

ՍՈՒՐԲ ԼՈՒԴՈՎԻԿՈՍ կամ ՍԷՆ ԼՈՒԻ (12,000 ըն.) Մե-
նեկալին բերանը կղզիի մեջ, վաճառաշահն եւ զեղեցիկ-
Գաղղիացւոց զլխաւոր քաղաքն է :

ՍԷՆՃԷՅՄՍ (*Սուրբ Յակոբ*) Կամպիայի վերայ Անգ-
ղիացւոց զլխաւոր վաճառատեղին :


ՊԱՄՊՈՒՔ, Մանտինկաց բազառութեան մայրաքաղաքը, մեծ ոսկեհանք ունի :

ԹԻՄՊՈՅ, Ֆուլլահաց տերութեան մայրաքաղաքը :

Սենեկամալիոյ ծովեզերքին մօտ են *Պիսակու* կոչուած բարերեր կղզիները :

ԼԻՊԵՐԻՍ.

Սենեկամալիոյ հարաւային կողմը Կուինեայի ծովեզերքն է *Լիպերիս* կամ *Ազատաց երկիր* կոչուած փոքրիկ հասարակապետութիւնը, զոր 1820-ին հիմնեցին Ամերիկացիք : Այս տերութեան վախճանն է Ափրիկեցի Սեւերուն մեջ կրթութիւն մտցընել և գերեվաճառութիւնն արգիլել : Արդէն սկսած է ըստ բաւականին ծաղկիլ ու զօրանալ, և բնակիչն է 300,000 ափրիկեցի Սեւեր : Գլխաւոր քաղաքն է *Մանրուլիս* որ 10,000 բնակիչ ունի :



ՀԻՒՍԻՍՍՅԻՆ ԿՈՒՒՆԵՒՄ .

Հիւսիսային Կուինեայի սահմանն է հիւսիսէն Սենեկամպիա եւ Մուտան , արեւելքէն՝ Քաֆրաստան կամ Անժանօր երկիր , հարաւէն՝ հարաւային Կուինեա եւ համանուն ծոցը , արեւմտքէն՝ Ատլանտեան Ռվկիանոս :

Տարածութիւնն է իբր 24,700 բիւրմերը քառակուսի : Երկիրն ընդհանրապէս դաշտային է եւ անբեր . ծովեզերքը՝ թէ եւ աւազուտ՝ բայց բարեբեր է : Յզը տաք է եւ խոնա :

Գլխաւոր բերքն է ոսկի՝ մանաւանդ գետերուն մէջ , լեռակ , պղպեղ , բամբակ , շաքարենի , փիղ , վագր , առիւծ , ոնգեղջիւր եւ սոսկավիթխար օձեր :

Բնակիչն է 10,000,000 Ափրիկեցի Սեւեր , վայրենի , անգութ եւ տգետ : Կրօնքը կռապաշտութիւն , եւ մարդագոհութիւն եւս կանեն :

Հիւսիսային Կուինեան չորս ազատ թագաւորութիւն կրածանուի . ծովեզերքին մեծ մասն Անգղիացւոց , Հոլանտացւոց եւ Ամերիկացւոց ձեռքն է :

ՔՈՒՄԱՍՍԻԱ կամ ՔՈՄԱՂԻ (20,000 բն.) Աշանբիի թագաւորութեան մայրաքաղաքն է , շատ վաճառաշահ :

ԱՊՈՄԷՅ (25,000 բն.) Տահոմէի թագաւորութեան մայրաքաղաքն է , եւ Կուինեայի ամենէն մեծ քաղաքը :

ԳԼԽԱԽՈՐ ՔԱՂԱՔՔ .

ՊԵՆԻՆ (20,000 քմ.) համանուն բազառորութեան մայրաքաղաքը :

ՈՒԱՐԻ, համանուն բազառորութեան մայրաքաղաքը :

Հիւսիսային Կուինեոյ ծովեզերքը մեկ մեկ մասնաւոր անուն ունի, ինչպէս *Ծովեզր Պղպեղի*՝ յորում է Լիպերիոյ հասարակապետութիւնը . *Ծովեզր Ատամանց*, այսպէս կոչուեցաւ՝ մեջը փղի ատամն կամ փղոսկրը շատ եղածին համար . *Ծովեզր Ոսկւոյ*՝ մեջն ոսկի շատ գտնուածին համար : Եւրոպացիք շատ գաղթականութիւններ ունին այս տեղ, ինչպէս *Միւս*՝ Հոլանտացւոց ձեռքը, *Քալի Քորս*՝ Անգղիացւոց ձեռքն, եւ *Քրիստիանսպուրկ*՝ Տանիմարքացւոց ձեռքն էր, յետոյ 1850-ին Անգղիացւոց ծախեցին . *Ծովեզր Ստրկաց*, այսպէս կկոչուի մեջը գերեվաճառութիւն շատ եղածին համար, քակտ Եւրոպացիք ամենայն շանք կանեն որ այս գարշելի սովորութիւնը վերանայ. այս երկիրս Տահոմեյի բազառորին իշխանութեան տակ է :



ՀԱՐԱԻԱՅԻՆ ԿՈՒԻՆԵՄ.

Հարաւային Կուինեոյ կամ Քոնկոյի սահմաններն են հիւսիսէն հիւսիսային Կուինեա, արեւելքէն եւ հարաւէն Անժանօք երկիր, արեւմտքէն Ատլանտեան Ովկիանոս :

Տարածութիւնն է 18,500 քիւրմեքր քառակուսի :

Երկիրը տեղ տեղ դաշտային եւ անբեր է, տեղ տեղ ալ լեռնոտ եւ բարեբեր : Օղբ տաք է, որով Եւրոպացւոց դժուարին կլինի մեջը բնակութիւն հաստատելը :

Բնակիչն է 5,000,000 Ափրիկեցի Սեւեր . կրօնքն է կուսպաշտութիւն :

Հարաւային Կուինեան այլեւայլ մանր բազաւորութիւններ կբաժանուի, իրարմէ անկախ, որոց գլխաւորներն են . Քոնկոյի բազաւորութիւնը, որոյ մայրաքաղաքն է Պակուա Քոնկոյ (ըստ Փորթուգալցւոց Սան Սալվատոր) (25,000 բն.), եւ Լօանկոյ, որոյ մայրաքաղաքն է Լօանկոյ կամ Պուալի (15,000 բն.) : Այս երկրիս մեկ մասն եւս Փորթուգալցւոց հպատակ է, որոց գլխաւոր քաղաքներն են Լօանտա (10,000 բն.), Անկոլայի բազաւորութեան մայրաքաղաքը, եւ Պենկէլա, ուր Փորթուգալցիք յանցաւորները կաքսորեն :



ՕՐԵՆՔԱՅԻՈՅ ԵՐԿԻՐ.

Օրենքացոց երկրին սահմաններն են հիւսիսէն Քոնկոյ, արեւելքէն Քաֆրաստան, հարաւէն Գլխոյ գաղթականութիւն, արեւմտքէն Սալյանտեան ուվկիանոս :

Այս երկրին բնակիչն է իբր 400,000 Օրենքացիք վայրենի, կռապաշտ, եւ այն աստիճանի տգետ, որ երկիրն անգամ գործել չգիտեն. երկայնահասակ եւ արագընթաց մարդիկ են, աւագակութեամբ կապրին, եւ բունաւոր նետեր կգործածեն. սոքա մասնաւոր կառավարութիւն չունին, եւ խեղճ հիւղերու մեջ կրնակին խումբ խումբ :



ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԳԼԽՈՅ.

Գլխոյ Գաղթականութեան սահմաններն են հիւսիսէն Օրենքացոց երկիր, արեւելքէն Քաֆրաստան, հարաւէն Մեծ ովկիանոս, եւ արեւմտքէն Ատլանտեան ովկիանոս :

Տարածութիւնն է 3,700 բիւրմերք քառակուսի :

Երկիրը բարեբեր է եւ լաւ մշակուած . օդը բարեխառն :

Գլխաւոր բերքն է գինի եւ ընտանի կենդանիներ :

Բնակիչն է իբր 300,000. մեկ մասը Օրենքացիք եւ Քաֆրաստանցիք, մնացածները Անգղիացիք, Գաղղիացիք եւ Հոլանտացիք :

Այս երկիրս նախ Փորթուգալցիք գտան 1486-ին . յետոյ Հոլանտացիք եւ Գաղղիացիք գաղթականութիւններ հաստատեցին, այգի տնկեցին եւ ծաղկեցուցին . 1815-ին այս գաղթականութիւնները Անգղիացոց ձեռքն անցան :

Գլխաւոր քաղաքն է ԳԼՈՒԽ կամ ՔԱՓ (20,000 բն.) . ունի ամուր բերդ, ուսումնարաններ, տնկարանութեան պարտեզ, թէատրոն, եւ այլն : Նաւահանգիստը շատ բանուկ է եւ վաճառականութիւնը շատ ծաղկած :

ՀԱՍՍՐԱԿԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԹՐԱՆՍՖԱԼԻ.

Այս երկիրս Ֆալ գետոյն անուամբն՝ որ մեջէն կանցնի՝ Թրանսֆալ կամ Յայնկոյս Ֆաշայ հասարակապետութիւն կոչուեցաւ : Բնակիչքն են Հոլանտացիք, Գաղղիացիք,

Անգղիացիք, եւ Գերմանացիք. սորա յառաջ Գլխոյ կուսակալին իշխանութեան տակն էին. 1836-ին Ափրիկէի ներսերը քաշուելով՝ Անգղիացեացմէ ապստամբեցան, եւ երկար ժամանակ կռուելէն յետոյ, վերջապէս 1850-ին անկախ հասարակապետութիւն կազմեցին :

ՔԱՅՐԱՍՏԱՆ.

ՔԱՅՐԱՍՏԱՆԻ կամ *Աեծանօր Երկրի* սահմաններն են հիւսիսէն Սուտան, արեւելքէն Մոնոմորափա, Մոզամպիք, Չանկեպար եւ Այան, հարաւէն Օթենրացեաց երկիր, արեւմտքէն հիւսիսային եւ հարաւային Կուինեա :

Այս ընդարձակ երկրիս բնակիչն է ըստ ոմանց միայն 2,000,000 սեւ եւ կռապաշտ, որոց վերայ դեռ ճիշդ տեղեկութիւններ չկան : Այս երկրիս արեւելակողմը որ *Նարաշի ծովեզր* կկոչուի, Անգղիացիք գաղթականութիւն ունին՝ որոյ գլխաւոր վաճառատելին է *Փոքր Նարաշ* :



ՄՈՆՈՄՈՐԱՓԱ.

Մոնոմորափայի սահմանն է հիւսիսէն , արեւմտքէն եւ հարաւէն Բաֆրաստան , արեւելքէն Սոֆալայի երկիրը :

Մոնոմորափայի մեջէն երեք լեռներու զօտի կանցնի հիւսիսէն դեպ ի հարաւ , որ Լուփաթա լեռանց մեկ մեկ ճիւղերն են . *Ջամպեզ* զետն եւ ուրիշ շատ զետակներ երկիրը կոռոզեն : Օղբ բարեխառն է եւ առողջարար : Լեռանց մեջ կգտնուի ոսկի , արծաթ եւ ուրիշ մետաղներ :

Հողը բարեբեր է , եւ առատութեամբ կգտնուին այս տեղ շաքարենի , խոտաւետ դաշտեր , եւ մեծամեծ անտառներ՝ լի փղերով եւ ուրիշ զազաններով :

Այս երկիրս յառաջ հզօր պետութիւն մի էր . բայց յետոյ պատերազմներով տկարացաւ , եւ զանազան մանր իշխանութիւններ բաժանուեցաւ : Ծովեզերքին ալ , որ է *Սոֆալայի* երկիրը , Փորթուգալցիք տիրած են , որք միայն իշխանութիւն ռանին վաճառականութիւն անել այս տեղ :

Բնակիչն է 1,400,000 Ափրիկեցի կռապաշտ Սեւեր :

Գլխաւոր քաղաքներն են . *ՋԻՄՊԱՍԻ* , Մարաւի ցեղին բազաւորութեան մայրաքաղաքը . *ՇԻՔՈՎԱ* , ոսկւոյ եւ արծաթի հանքերովն անուանի :

ՄՈՂՍ.ՄՊԻՔ.

Մոզամպիքի սահմանն է հիւսիսէն Չանկկար , արեւելքէն համանուն ջրանցքը , հարաւէն Մոնոմորափա , արեւմտքէն անձանօք երկիր :

Տարածութիւնն է իբր 1,000 քիւրմերը քառակուսի :

Երկիրը բարեբեր է , բայց անմշակ : Յզը տաք է :

Բնակիչն է 3,000,000 սեւ եւ կոպալաշտ :

Մոզամպիքը Սոֆալայի երկրին հետ միատեղ Փորթուգալցոց զաղրականութեան ձեռքն է , եւ եօթը կուսակալութիւն բաժանուած է :



— Երևանի քաղաքի քաղաքապետարանի կողմից հասցված ԶԱՆԿԵՊԱՐ՝

Զանկեպարի սահմանն է հիսսիսեն Այան, արեւելքէն
Հնդկաց Ովկիանոս, հարաւէն Մոզամպիբ, արեւմտքէն
Քաֆրաստան :

Տարածութիւնն է 1,000 քառակուսի բիւրմերրէն աւելի :

Բնակիչն է 2,000,000 Արաբացի մահմետականք, եւ
Ափրիկեցի կռապաշտք :

Զանկեպարը ճախճախուտ է եւ ողն անատողջ . մեծա-
մեծ անտառներ ունի, որոց մեջ շատ փիղ կգտնուի, եւ
փղոսկրի մեծ վաճառականութիւն կանէ :

Այս երկիրս քանի մի մանր տերութիւններ կբաժանուի,
որոց իւրաքանչիւրը մայրաքաղաքին անուամբը կկոչուին,
եւ շատերը Մաշկաբի Իմամին իշխանութեան տակն են :
Գլխաւոր տերութիւններն են .

Քիլոս, որ Ափրիկեցի թագաւոր մի ունի, եւ մայրա-
քաղաքն է ՔԻԼՕՍ, ցամաքի մօտ կղզիի մի մեջ :

Զանգիպար, մայրաքաղաքն է ԶԱՆԶԻՊԱՐ՝ համանուն
կղզւոյն մեջ, որ այն կողմերուն ամենէն մեծ, բազմա-
մարդ եւ վաճառաշահ կղզին է : Երկիրը կառավարողն է
շէյխ մի Մաշկաբի Իմամին իշխանութեան տակ :

Մանպազա, մայրաքաղաքն է ՄՈՄՊԱԶԱ, փոքր կղզիի
մեջ . երկար ժամանակ Անգղիացւոց ձեռքն էր :

Մեղինուա, մայրաքաղաքն է ՄԵԼԻՆՏԱ՝ որ Փորթուգալ-
ցոց ձեռքն եղած ժամանակ շատ ծաղկած էր եւ վաճա-
ռաշահ, այժմ ընկած :

Պրաչա, մայրաքաղաքն է ՊԲԱԻԱ, վաճառաշահ քա-
ղաք, տեսակ մի ազնուապետական կառավարութիւն
ունի :

Մակատոքսոյ, մայրաքաղաքն է ՄԱԿԱՏՈՒՔՍՈՅ, մեծ եւ
շատ վաճառաշահ քաղաք :



ԱՅՍՆ .

Այանի սահմաններն են հիսիսեկն Ատենի ծոցը , արեւելքէն Հնդկաց ովկիանոս , հարաւէն Չանկեպար , արեւմտքէն Երովպիա եւ Քաֆրաստան :

Երկիրն , որ ղեռ. լաւ ծանօթ չէ , ըստ մեծի մասին անբեր անապատ է . օդը տաք . ծովեզերքն ալ փոքորիկներու պատճառաւ անմատչելի : Հիւսիսային կողմը լեռնոտ է :


Բնակիչն է իբր 300,000 կամ աւելի եւս , այլ եւ այլ Ափրիկեցի ազգեր , որոց մեծ մասին կրօնքն է կռապաշտութիւն . իսկ *Սոմալիք* — որ Հնդկաց ծովուն եզերքը կրբնակին — մահմետական են , ճարտար , եւ վաճառականութեան կպարապին :

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔԻՔ .

ՊԷՐՊԷՐԱ կամ ՊԱՐՊՈՐԱ , երկրին առաջին նաւահանգիստն է :

ՁԷՅԱ , Պապիւմանտեպի նեղուցին վերայ , մայրաքաղաք էր Ատելի բազաւորութեան , որ այժմ վերցուած է :

ՀՈՒՐՈՒՐ կամ ԱՐԱՐ , համանուն մահմետական բազաւորութեան մայրաքաղաքն է :



ԵԹՈՎՊԻՍ. ԿՍՄ ՀԱՊԷՇԻՍՏԱՆ.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — Հապեշիստանն, որ մասն է հնոյն Եթովպիոյ, կերեւի թէ հին ժամանակները շատ ծաղկած տերութիւն էր. չորրորդ դարուն մեջ Եթովպացիք կամ Խափշիկք քրիստոնէութիւնն ընդունեցան. բայց այժմ առաջուան զօրութիւնն եւ արուեստից մեջ արած յառաջադիմութիւնը չունին: Մեկ կողմանէ Թուրքերն, եւ միւս կողմանէ *Կաշաւ* կոչուած վայրենի Ափրիկեցիները Հապեշիստան յարձակելով՝ Եթովպացոց ուրիշ ազգաց հետ ունեցած երթեւեկութիւնը կտրեցին, եւ նոցա տերութիւնը տկարացուցին: Եթովպացիք հզօր թագաւորութիւն ունէին, եւ իւրեանց ինքնիշխան թագաւորը, որ *Նեկուս* կկոչուէր, Սողոմոն իմաստնոյն ցեղէն կկարծէին: Իսկ այժմ փոքրիկ եւ տկար տերութիւն մի ունին, մանաւանդ այժմ որ Կալաս ազգն Ափրիկէի ներսերէն գալով Հապեշիստանի մեծագոյն մասին վերայ բռնացաւ:


Եթովպիոյ սահմանն է հիւսիսէն Նուպիա, արեւելքէն Կարմիր ծով եւ Պապիւլմանտեպ նեղուցը, հարաւէն Ալյան, արեւմտքէն Սուտան:

Տարածութիւնն է իբր 7,800 թիւրմէրը քառակուսի:

Երկիրը սաստիկ լեռնոտ է, եւ լեռներուն մեծ մասը ձիւնով ծածկուած է ձմեռը. իսկ ապրիլ ամսոյն մեջ այն ձիւնը կհալի, եւ սաստիկ անձրեւներ կուգան բոլոր ա-

մառը մինչեւ հոկտեմբեր : Անով Նեղոս գետն ալ կրարձ-
րանայ , եւ Երովպիոյ մեջ շատ գետակներ ու լճեր կը-
ձեւանան : Հողը շատ բարեբեր չէ , վասն զի լեռանց ստո-
րտը աւազուտ է , հիւսիսային կողմերն ալ ճախճախուտ :
Օղը տաք է :

Գլխաւոր բերքն է տաք երկիրներու ամեն բոյսերը :
Կենդանեաց մեջ ամեն վայրի կենդանիներն ունի , ինչ-
պէս առիւծ , փիղ , ունգեղջիւր , պօա օձ , կոկորդիլոս , եւ
ուրիշ գազաններ . մարախն այնպէս շատ է որ երբեմն
ամբողջ գաւառներ կապականէ : Հանքերու մեջ ունի ոս-
կի , արծաթ եւ մանաւանդ աղ . որով Երովպիան Ափրի-
կէի երեսիլի աշխարհներէն մեկն է :



Երովպացիք .

Բնակիչն է 4,000,000 Երովպացիք կամ Խափշիկ (Հապեշ). կրօնքն է քրիստոնեութիւն, բայց խառն հրեական եւ հեթանոսական արարողութեամբք : Լեզունին է արարերենին մեկ տեսակը :

Հապեշիստանը շատ մանր տէրութիւններ կրածանոսի, որ մեկգմեկ տկարացրնելու հետ են. գլխաւորներն այս երեք բազաւորութիւններս են . *Անքուպեր, Թիկրէ* եւ *Ամհարա* :

Գլխաւոր քաղաքներն են .

ՇԵԼԻՔՈՒԹ, Թիկրէի բազաւորութեան մայրաքաղաքը, որ Հապեշիստանի ամենէն ծաղկած տէրութիւնն է, եւ միայն սա կարողացաւ բնակչաց քաջութեամբը կալսաներուն ձեռքէն ազատ մնալ :

ԱՏՈՒԷ, Հապեշիստանի ամենէն վաճառաշահ քաղաքը :

ԱՔՍՈՒՄ, Երովպիոյ ծաղկած ժամանակները մայրաքաղաքն այս էր :

ԿԷՅՆՏԷՐ (6,000 բն.) Ամհարայի բազաւորութեան մայրաքաղաքն է, որ երբեմն շատ հզօր տէրութիւն էր :

ԱՆՔՈՊԷՐ, մայրաքաղաք *Էֆա* եւ *Քօս* կոչուած դաշնակից գաւառաց, որ հարուստ եւ բազմամարդ երկիրներ են :



ՆՈՒՊԻՍ.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — Հին ժամանակները Նուպիան *Վերին Եգիպտոս* կկոչուէր եւ Եգիպտացի բազաւորաց ձեռքն էր, որոյ կվկայեն եւ մեջի գեղեցիկ տաճարներու եւ սիւներու աւերակները. յետոյ առանձին հզօր բազաւորութիւններ բաժանուեցաւ, մինչեւ որ 1820-ին Մեհեմեթ Ալի փաշան ուրբ տարի պատերազմելէն յետոյ բոլոր երկրին տիրեց, եւ այժմ Եգիպտոսի փոխարքային իշխանութեան տակն է:

Նուպիոյ սահմանն է հիւսիսէն Եգիպտոս, արեւելքէն Կարմիր ծով, հարաւէն Երովպիա, արեւմուքէն Սուտան եւ Սահրա անապատ:



Նուպիա.

Տարածութիւնն է 9,600 բիւրմերը քառակուսի :

Երկիրն ընդհանրապէս լեռնոտ է, բայց մեծ մասը աւազուտ եւ անբեր . միայն Նեղոսի եզերքը պտղաբեր է, որ այս երկրիս մեջտեղէն կանցնի շատ մի ջրվեժներ յօրինելով :

Օդը ընդհանրապէս տաք է, բայց ոչ վնասակար :

Կենդանեաց մեջ Նուպիան ունի ամեն տեսակ ընտանի եւ վայրի կենդանիք, յորս նշանաւոր են ձին՝ որ աշխարհիս ամենէն ազնիւ տեսակն է, առիւծ, կոկորդիլոս, մեծամեծ օձեր, եւ այլն : Բուսոց կողմանէ Նուպիան նշանաւոր չէ՝ երկրին անպտղաբերութեանը պատճառաւ : Բանքերու մեջ ալ աղը երեսելի է :

Բնակիչն է 2,000,000 Նուպիացիք կամ Նուպասք որ Պերպերներէն յառաջ եկած կերեւին : Կրօնքն է մահմետականութիւն :

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔԻՔ .

ՍԵՆՆԱՐ, (9,000 բն.) Պահրիւլ Ազրեքի կամ Կապոյտ Նեղոսի վերայ, Նուպիոյ մայրաքաղաքն է եւ վաճառաշահ :

ՍՈՒԱՔԷՄ (6,000 բն.) Կարմիր ծովու վերայ բանուկ նաւահանգիստ :

ՏԷՐ, Նեղոսի վերայ ստորին Նուպիոյ զլխաւոր քաղաք է, եւ արմաւի ու գերեաց մեծ վաճառականութիւն ունի :

ՏՈՆԿՈՂԱ, Նեղոսի վերայ, համանուն երկրին զլխաւոր քաղաքը :

ՇԷՆՏԻ, Նեղոսի վերայ շատ վաճառաշահ քաղաք :



ՍՈՒՏԱՆ ԿԱՄ ՆԻԿՐԻՏԻԱ.

Սուտանի սահմանն է հիւսիսէն Սահրա անապատ, արեւելքէն Նուպիա, արեւմտքէն Սենեկամպիա, հարաւէն Քաֆրաստան :

Տարածութիւնն է 25,000 ըւրմերը քառակուսի :

Յղը սաստիկ տաք է : Երկիրը դաշտային է, մեծ մասը բարեբեր՝ բայց անմշակ. հարաւային կողմը կերելի բէլերանց գօտի մի կայ, որ Բոնկոյի լեռները Լուսնի լեռանց հետ կմիացրնէ : Բերքն է ոսկի, արծաթ եւ ուրիշ մետաղներ. կենդանեաց մեջ ալ ամեն տեսակ վայրի գազաններն ունի :

Բնակիչն է 20 միլիոն, սեւ եւ կոապաշտ. մեկ մասն ալ Պերպեր եւ Արաբացի, որոց կրօնքն է մահմետականութիւն :

Նիկրիտիան շատ մանր բազաւորութիւններ կրածանուի, որ միշտ իրարու հետ պատերազմի մեջ են : Արուեստ եւ գիտութիւն չկայ Նիկրիտիոյ մեջ, բայց վաճառականութիւնը շատ բանուկ է Պերպերիստանի եւ Եգիպտոսի հետ :

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔԻ.

ԹՈՄՊՈՒՔԹՈՒ, (12,000 բն.) Նիկեր գետոյն քով համանուն բազաւորութեան մայրաքաղաքն է. Ափրիկէի ցամաքային աճառականութեան կեդրոնը :

ՍԷԿՈՅ (20,000 ըն.) Նիկեր գետոյն մեկ ճիւղին վերայ վաճառաշահ, Պամպարայի բազաւորութեան մայրաքաղաքը :

ՍԱՔԱԹՈՒՆ (80,000 ըն.) Ֆելլայի բազաւորութեան մայրաքաղաքը, որ Սուտանի ամենէն հզօր տերութիւնն է :

ՔԱՆՈՅ, վաճառաշահ քաղաք Հստաւա երկրին մեջ՝ որ Ֆելլահաց ձեռքն է :

ՆՈՐ ՊՈՌՆՈՒ ԿԱՄ ՊԵՌՆԻԱ (50,000 ըն.) Պոռնուի բազաւորութեան մայրաքաղաքը :

ՔՈՒՔԱ, Չատ լճին մօտ, Պոռնուի բազաւորը այս քաղաքս կնստի :

ՔՈՊԷ (6,000 ըն.) Տարֆուրի բազաւորութեան մայրաքաղաքն է, որ Նիկրիտիոյ արեւելակողմը կրնկնի, եւ երբեմն հզօր տերութիւն էր եւ Քորտոֆանի վերայ ալ կիշխեր. այժմ Եգիպտոսի փոխարքային հարկատու է :

Սուտանի արեւելեան ծայրն է Քորտոֆանի բազաւորութիւնն որ Տարֆուրի եւ Նուպիոյ հետ միատեղ անցաւ Եգիպտոսի փոխարքային ձեռքը : Գլխաւոր քաղաքն էր ԻՒՊԷՅԻՏ, որ պատերազմներու պատճառաւ աներեցաւ եւ անշքացաւ. այժմու գլխաւոր քաղաքն է ՄՈՒՀԱՄՄԷՏ ԱԼԻՊՈԼԻՍ, զոր հիմնեց Մեհեմմետ Ալի փաշան 1838-ին :



Կ Ղ Զ Ի Ք.

ՄԱՏԱԿԱՍՔԱՐ. — Մատակասքարը որ աշխարհիս ամենէն մեծ կողմներէն մեկն է, Ափրիկէի արեւելեան կողմն է Հնդկաց Ովկիանոսին մեջ, եւ Մոզամպիքի նեղուցով ցամաքէն զատուած է:

Տարածութիւնն է զրեքէ ամբողջ Գաղղիոյ չափ:

Երկիրը սաստիկ բարեբեր է, եւ մետաղներու առատ հանքեր ունի. օղբ ծովեզերքը տաք, խոնաւ եւ վնասակար է, իսկ մեջտեղերը բարեխառն եւ առողջ:

Մատակասքարը դեռ բոլորովին ծանօթ չէ. միայն այսչափս յայտնի է որ հիւսիսային ծայրէն մինչեւ հարաւային ծայրը լեռներու զօտի մի ունի, *Ամպոսքիամէն* կոչուած՝ որ սովորաբար *Մատակասքարի շեռնէր* կասուին, եւ ազնիւ փայտերու ընդարձակ անտառներով ծածկուած են:

Բնակիչն է իբր 4,000,000 կամ աւելի եւս, *Մատեքաս* կամ *Մաղկաշ* կոչուած Ափրիկեցի կռապաշտ սեւեր, որ մալայեցի ցեղէն լառաջ եկած կերելին:

Մատակասքարի երկիրը այլ եւ այլ թագաւորութիւններ կային, որոց մեջէն *Հալայի* թագաւորը վերջի ասրիներս շատ զօրացաւ, եւ շատերուն տիրելով՝ ետեւէ կլինէր որ ազգը վայրենութենէ հանէ: Նոր թագաւորն, որ 1861-ին նստաւ արո՛ր, Նափոլէոն կայսեր հետ մտերմանալով՝ ազատութիւն տուեր էր Եւրոպացւոց՝ համարձակ գալ վաճառականութիւն անել կղզւոյս մեջ: Բայց 1863-ին թա-

գունին հպատակաց խորհրդովը եւրոպասեր բազաւորը խեղդել տուաւ, եւ իշխանութիւնը ձեռք առնելով՝ իւր նախորդին եւրոպացւոց տուած ազատութիւնները վերուց: Այս կողմոյն ծովեզերքը Գաղղիացիք շատ գաղթականութիւններ հաստատած են:

ՔՈՄՈՐԵԱՆ ԿՂԶԻՔ. — Այս կողմներս Մոզամպիքի նեղուցին հիւսիսային կողմն են. երկիրը բարեբեր է, օղն ալ բարեխառն. բնակիչքը սակաւաբիւ են եւ մեկ սուլդանի կհնազանդին:

ՄԱՍՔԱՐԻՆԵԱՆ ԿՂԶԻՔ, որ Մատակասքարի արեւելեան կողմը կընկնին, երբեմն Գաղղիացւոց իշխանութեան տակն էին, որոց ձեռքը միայն Պուրպուրն կողմն մնաց որ այժմ Միուրեան կղզի կկոչուի, եւ 160,000 բնակիչ ունի: Այս կղզիներս շատ բարեբեր են, օղն ալ բարեխառն է: Գլխաւոր բերքն է ազնիւ խահուէ, բուստ եւ սաք:

ԳԱՂՂԻՈՅ ԿՂԶԻ ԿԱՄ ՄՕՐԻԿ (238,000 բն.), որ այժմ Անգղիացւոց ձեռքն է. գլխաւոր քաղաքն է Փուր Լուի, ուր որ հանդիպեցաւ Պօղ եւ Վիրգինի պատմութիւնը: Գրլխաւոր բերքն է շաքար, լեղակ, եւ այլն:

ՍԷՅՉԵԼԵԱՆ ԿՂԶԻՔ. Մատակասքարի հիւսիսային կողմը, Անգղիացւոց ձեռքն են, եւ երկու խումբ կը բաժանուին, Մահէ եւ Ամիրանրէս:

ՍՈՒՐԲ ՄԱՐԻԱՄ, Մատակասքարի արեւելեան ծովեզերքը, Գաղղիացւոց ձեռքն է, եւ ունի Սուրբ Լուդովիկոս կոչուած ամրոց մի:

ՔԱՆԱՐԵԱՆ ԿՂԶԻՔ (234,000 ըն.), որ հին ժամանակները *Երանելեաց կղզիք* կկոչուէին, Սահրայի արեւմտակողմը կրնկնին, եօրը մեծ եւ շատ մանր կղզիներէ ձեւացած խումբ մի են Սպանիացեոց ձեռքը : Հողը շատ բարերէր է, եւ ազնիւ գինի ունի : Գլխաւոր կղզիներն են . *Թենելրիֆա*, Քանարեան կղզեաց ամենէն մեծն, բազմամարդ, հարուստ եւ վաճառաշահ . այս կղզւոյս մէջ նշանաւոր է համանուն մեծ հրաբուխը : *Լակուչա*, կղզւոյն մայրաքաղաքն է, եւ *Սանրա Ֆրուչ*, ամենէն բանուկ նաւանգիստը : *Բանարիա* կղզին, որոյ մայրաքաղաքն է *Փարմա* . սորա անուամբը բոլոր խումբն ալ Քանարեան կոչուեցաւ : *Ֆէրոյ* կամ *Երկարի* կղզի, յառաջ ամէն ազգ այս տեղէն կանցըներ գլխաւոր միջօրեականը :

ԴԱԼԱՐԻ ԳԼԽՈՅ ԿՂԶԻՔ. — Սենեկամպիոյ դիմաց, Փորթուգալցեոց ձեռքը, անբեր են եւ օդը վնասակար : Սոքա քսանի ջափ են, 45,000 ընակիջ ունին, եւ ամենէն երեսելին է *Սանրիակոյ*, համանուն մայրաքաղաքով :

ՖԵՌԵԱՆՏՈՅ ՓՈՅ, Կուիլնեայի ծոցոյն մէջ, Անգղիացեոց ձեռքը : ԱՆՆՈՊՈՆ, Սպանիացեոց ձեռքը : ԿՂԶԻ ԻՇԻԱՆԻ եւ ՍՈՒՐԲ ԹՈՎՄԱՍ, Փորթուգալցեոց ձեռքը . սոցա հողը բարերէր է, բայց օդը սաստիկ տաք : ՍՈՒՐԲ ՄԱՏԹԷՈՍ . ՀԱՄԲԱՐՉՈՒՄՆ (7,000 ըն.), որ անբեր ապառաժ մի է, Անգղիացեոց ձեռքն են :

ՄԱՏԵՐԱ (98,000 ըն.) Մարոքի դիմաց, Փորթուգալցեոց ձեռքը՝ լեռնոտ եւ շատ բարերէր կղզի մի է . անուանի է

զինին , որոյ որթը Կիպրոս կղզիէն բերուած է : Այս կղզիս *Մատերա* կոչուեցաւ Փորթուգալցւոց *մատէշրա* բառէն , որ փայտ կնշանակէ . վասն զի 1419-ին երբ առաջին անգամ գտնուեցաւ , բոլոր կղզին ընդարձակ անտառ մի էր , որ յետոյ այրեցաւ :

ԱՍՈՐԵԱՆ ԿՂԶԻՔ (241,000 բն.), Եւրոպայի արեւմտեան կողմը , Փորթուգալցւոց ձեռքը բարերեր կղզիներ : Գլխաւոր բերքն է ցորեն , ազնիւ զինի եւ նարինջ . բայց զետնաշարժ շատ Կլինի մեջերը :

ՍՈՒՐԲ ԼԵՂԻՆԷ (7,000 բն.) փոքրիկ կղզի մի Ափրիկէի ցամաքէն հեռու . անուանի է Մեծին Նափուկոնի այն տեղ վեց տարի աքսորեալ ապրելուն համար , ուր եւ մեռաւ 1821-ին մայիսի 5-ին :

ՍՈՔՈԹՈՐԱ կղզին , յառաջ Մաշկաքի իմամին ձեռքն էր , այժմ Անգղիացիք առին :



ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍՆ ԱՇԽԱՐՀԻ.

Ա Մ Ե Ր Ի Կ Ա .

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ .

Ամերիկան, որ եւ նոր աշխարհ կկոչուի, հին ժամանակներն անժանօք մնացած էր. եւ քեպետ ժԴ դարումեջ շատ ճանապարհորդք ընկան այս երկիրս այնպիսիքեամբ, սակայն բուն գտնողն եղաւ Քրիստափոր Բոլոմպոս ճենովացին 1492-ին:

Ամերիկան եւրոպայի եւ Ափրիկէի արեւմտեան կողմը կրնկնի, եւ սահմաններն են. հիւսիսէն՝ Արջային Սառուցեալ ովկիանոս, արեւելքէն՝ Ատլանտեան ովկիանոս, հարաւէն եւ արեւմտքէն՝ Մեծ ովկիանոս:

Տարածութիւնն է 386,700 քիւրմերք քառակուսի:

Ամերիկան երկայնանիստ ցամաք մի է որ հիւսիսային

բեւեռեն մինչեւ գրեթէ հարաւայինը կտարածուի, եւ երկու մեծամեծ բերակղզիներ կբաժանուի. *Հիւսիսային Ամերիկա*, եւ *Հարաւային Ամերիկա*: Այս երկու բերակղզիներս իրարու հետ միացած են *Փակամայի* պարանոցով, որ աշխարհիս ամենամեծ պարանոցն է:

Ամերիկան 19 աշխարհ կբաժանուի, որոց վեցը հիւսիսային Ամերիկայի մեջ են, եւ 13-ը հարաւայինին մեջ: *Հիւսիսայիններն են. Ռուսիոյ Ամերիկա, Կրեօկանտիա, Նոր Բրիտանիա, Միացեալ Նահանգք, Մեխիքոյ եւ Կուարեմալա*: Հարաւայիններն են, *Նոր Կրանատա* կամ *Միացեալ Նահանգք Բորուձայիոյ, Վենեցուէրա, Հասարակած, Կուլանա, Պրագիլ, Փերու, Պոլիվիա* կամ *Վերին Փերու, Ուրուկուայ, Փարակուայ, Լատիարա, Զիլի* կամ *Բիլի, Փարակուսիա եւ Անրիլեան կղզիք*:

ԾՈՎՔ. — Ամերիկան 3 մեծ ծովեր ունի, որ են. *Սառուցեալ ովկիանոս հիւսիսային, Ատլանտեան ովկիանոս* եւ *Մեծ ովկիանոս*: Սոցանէ ձեւացած փոքրագոյն ծովերն են. *Բեւեռային ծով՝ Սառուցեալ ովկիանոսէն ձեւացած: Ատլանտեան, ովկիանոսէն սինգ ծով կձեւանայ, որ են. Պաֆիևի ծով, Հուտարևի ծով կամ ծոց, Եսքիմացոց ծով, Անրիլեան ծով եւ Մեխիքոյի (Մեքսիկոյի) ծով*: Խաղաղական ովկիանոսէն կձեւանայ *Պերիկայ ծովը*:

ԾՈՅՔ. — Ամերիկայի մեջ գլխաւոր 11 ծոց կայ, երկուքը մեծ, եւ ինը փոքրագոյն. երկու մեծերն են *Սուրբ Լաւրենտիոսի ծոց* որ Ատլանտեան ովկիանոսէն

կձեանայ, Նոր Բրիտանիոյ արեւելակողմը. *Քաշիֆուսնիոյ* ծոց՝ որ Մեծ ովկիանոսէն կձեանայ՝ Մեխիքոյի արեւելակողմը: Փոքրներն են. *Ֆրենտի* ծոց՝ Սուրբ Լաւրենտիոսի ծոցոյն հարաւակողմը. *Տէլաւար* եւ *Չիզաւիք*՝ Միացեալ Նահանգաց արեւելակողմը. *Հոնտուրաս*՝ Կոստաճայայի հիւսիսակողմը՝ Անրիլեան ծովէն ձեացած. *Տարիէն*, *Մարաքայիպօ* եւ *Փարիա*՝ Անրիլեան ծովէն կձեանան՝ հարաւային Ամերիկոյ հիւսիսակողմը. *Կուլայաքիլ*՝ Հասարակածի երկրին արեւմտակողմը. *Փանարմայի* ծոց, Նոր Կրանատայի արեւմտակողմը:

ՆԵՂՈՒՑՔ. — Ամերիկան գլխաւոր 7 նեղուց ունի, որ են. *Պերիկայ* նեղուցն՝ Ասիոյ եւ Ամերիկայի մեջտեղ, որ Մեծ ովկիանոսն Հիւսիսային ովկիանոսի հետ կմիացընէ. *Լէնքասըր*՝ որ Սառուցեալ ովկիանոսը Պաֆինի ծովուն հետ կմիացընէ. *Տէլա*՝ որ Պաֆինի ծովն Ատլանտեան ովկիանոսի հետ կմիացընէ. *Քըմպըրլէնտ* եւ *Հուտսըն*, որ Հուտսընի ծովն Ատլանտեան ովկիանոսի հետ կմիացընեն՝ Նոր Բրիտանիոյ հիւսիսակողմը. *Պէլիլ* (Գեղեցիկ կղզի), Նոր Բրիտանիոյ արեւելակողմը. *Պանարմայի* ջրանցքը, որ Մեխիքոյի ծովն ովկիանոսին հետ կմիացընէ՝ Միացեալ Նահանգաց հարաւային կողմը. Մակելլան՝ որ Ատլանտեան ովկիանոսը Մեծ ովկիանոսին հետ կմիացընէ՝ Փարակոնիոյ հարաւակողմը:

ԿՂԶԻՔ. — Ամերիկայի գլխաւոր կղզիներն ու կղզեաց խումբերն են. հիւսիսային Սառուցեալ ովկիանոսի մեջ՝

Փարրի կղզիները . Հուտսրնի ծովուն մեջ՝ Սաւր/իեմփրոն
կղզին . Սուրբ Լաւրենտիոսի ծոցին մեջ՝ Նոր Երկիր ,
կամ Նիւֆաունլենտ , Պրըրոն գլխոյ կղզի , Սուրբ Յով-
հաննէս կամ կղզի Եդուարդ իշխանի , Անթիքոսթի . Ատ-
լանտեան ովկիանոսի մեջ՝ Պերմուտեանք , Լոնկ Այլլենա
կամ Երկայն կղզի . Ատլանտեան ովկիանոսի եւ Անթի-
լեան ծովու մեջտեղ՝ Լուքայեանք , որոց մեկն է Կուա
նահանի կամ Սան Սարխատոր (Սուրբ Փրկիչ) կղզի ,
որ առաջին անգամ ելա . Քոլոմպոս Ամերիկան գտած
ժամանակը . Մեծ Անթիլեանք , որ են Քուպա , Եամայի-
քա , Հայիթի եւ Փորթոյ Ռիքոյ . Փոքր Անթիլեանք , ո-
րոց գլխաւորներն են Կուաաարուփիա , Ս . Դամիսիկոս ,
Մարթինիկէ : Հարաւային Ամերիկայի մեջ՝ Ֆալլենա
կամ Մարտինեան կղզիք , Նոր Գեորգիա , Մակելլանեան
կղզիք կամ Երկիր Հրոյ , եւ Ատառաձամօր կղզիք : Մեծ
ովկիանոսի մեջ՝ Չիլօէ կղզիք , Կալլափակոս , Ռիփկա
ձինեոյ , Քուաարայի եւ Վանքոփերի կղզին , եւ կղզի
Դիսոյիս Շարքթի , կղզիք Կալէսի իշխանի , Սիքքա ,
Քուեաք եւ Ալեուքեան կղզիք :

ԼԻՃՔ . — Ամերիկան բազմաթիւ լճեր ունի , որոց զըլ-
խաւորներն են . Լիճն Գերեաց , լիճն Մեծ Արչ , Վիլնի-
փեկ կամ Պուրպոն , եւ Ծովագալլ , Նոր Բրիտանիոյ մեջ .
Վերին լիճ , Միչիկան , Հուրոն , Էրիէ եւ Օնթարիոյ ,
Միացեալ Նահանգաց հիւսիսային կողմը . Նիքարակուա ,
Կուաթեմալայի մեջ . Մարաքայիոյօ , Վենեցուեկայի մեջ .

Թիրիքաքա, *Փերուի մեջ*, լինն *Փարոսի* (Լակունա Տե-
լոս Փարոս) Պրագիլի հարաւային կողմը :

ԳԵՏՔ. — Աշխարհիս ամենամեծ գետերն Ամերիկայի մեջ
են, եւ մեծագոյն մասն Ատլանտեան ովկիանոսը կթա-
փին. վասն զի արեւմտակողմը հիւսիսէն մինչեւ հարաւ-
կտարածուին Քորտիլեան լեռանց մեծ գօտիները, յորմե-
բղխեալ գետերը Ամերիկայի ընդարձակածաւալ դաշտե-
րըն ոռոգելէն, եւ բազմաթիւ լճերէ անցնելէն յետոյ, ով-
կիանոս կթափին : Սոցա գլխաւորներն են. *Մաքեկզի* որ
Գերեաց լճէն կբղխի եւ Սառուցեալ ովկիանոսը կթափի .
Նե'չարե, եւ *Միսկոն* որ վիննիփեկ լճէն կելնեն եւ Հուտ-
սընի ծովը կթափին . *Սուրբ Լաւրենտիոս*, որ Յնթարիոյ
լճէն կբղխի եւ Լաւրենտիոսի ծոցը կթափի . *Տելաւար*
որ համանուն ծոցը կթափի . *Մեաքասեպե* (Միսիսիփի)
որ աշխարհիս ամենէն մեծ գետերէն մեկն է, բազ-
մաթիւ գետակներ մեջն ընդունելով, Միացեալ Նա-
հանգներէն կանցնի, եւ Քալիֆոռնիոյ ծոցը կթափի .
Մագդաղիէկ գետն եւ *Օրենոք* մեծ գետը վենեցուէլան
կոռոգեն, եւ առաջինը Անթիլեան ծովը կթափի, միւսը
Ատլանտեան ովկիանոսը . *Անազունաց* գետն որ աշխարհիս
ամենէն մեծ գետն է, Հասարակածը, Փերուն եւ Պրագիլը
կոռոգէ . *Թոքաւերիւ*, *Սուրբ Ֆրանչիսկոս*, Պրագիլէն
կանցնին . *Փլարա* կամ *Ռիոյ տեյա Փլարա*, համանուն
երկրէն կանցնի. սոքա ամենքն Ատլանտեան ովկիանոսը
կթափին :

ԹԵՐԱԿՂԶԻՔ. — Ամերիկայի գլխաւոր բերակողներն են. *Լապրատոր* եւ *Նոր Սկոտիա*, Նոր Նրիտանիոյ արեւելակողմն. *Ֆլորիտա*, Միացեալ Նահանգաց հարաւային արեւելակողմն. *Հին Քալիֆոռնիա*, Մեխիքոյի արեւմտակողմը եւ *Ալաշքա*, Ռուսաց Ամերիկայի հարաւակողմը :

ԳՆՈՒԽՔ. — Ամերիկայի գլխաւոր հրուանդաններն են. Ատլանտեան ովկիանոսի մեջ՝ *Ֆերուէշ*, Կրեոնլանտիոյ հարաւակողմը. *Չիտչի* եւ *Կրիմիկըրն*, Լապրատորի հիւսիսային արեւելակողմը. *Քոտ* եւ *Հարրերաս*, Միացեալ Նահանգաց արեւելակողմը. *Քարոյ*, Եուրասիանի հիւսիսակողմը. *Գլուխ Կրացիաս ա Տիոս*, Կուարեմալայի հիւսիսային արեւելակողմը. *Սուրբ Հոռքոս* (Սեն-Ռոք), Պրագիլի արեւելակողմը. *Հոռն*, Մակեյլանեան կղզեաց հարաւակողմը : Մեծ ովկիանոսի մեջ՝ *Գլուխ Պրանքոյ* կամ *Սայիտակ*, Փերուի հիւսիսային արեւմտակողմը. *Գլուխ Քորիէնրէս*, Մեխիքոյին հարաւակողմը. *Գլուխ Սուրբ Դուկաս*, հին Քալիֆոռնիոյ հարաւային ծայրը : Պերինկայ նեղուցին մեջ՝ *Գլուխ արեւմտեան*, Ասիոյ արեւելեան գլխոյն դիմացը :

ԼԵՐԻՆՔ. — Մեծ ովկիանոսի մօտ Ամերիկայի հիւսիսային կողմէն մինչեւ հարաւային ծայրը լերանց երկայն գօտի մի ձգուած է, որոյ այլեւայլ անուանքն են. *Ապառաժուտ* լերինք, *Մեխիքոյի Քորտիլեանք*, *Կուարեմալայի Քորտիլեանք* եւ *Անտեան Քորտիլեանք* : Միւս երեւելի լերանց գօտիներն են. *Ալլէկանի*, Միացեալ Նահանգաց մեջ. *Սե-*

րա ու իսթիկնեաւոյ եւ Սերա տու վերքերէս, Պրագիլի մեջ : Ամերիկայի ամենաբարձր լեռներն են . նեւա-տոյ տէ Սորաբա , նեւաւոյ Տիլլիմանի՝ Պոլիվիոյ մեջ , եւ Չիւսոյրաւոյ՝ Հասարակածի հասարակապետութեան մեջ :

ՀՐԱԲՈՒԹՅՈՒՆ . — Ամերիկայի մեջ բազմաթիւ հրաբուխներ կան , որոց երեւելիներն են . Սուրբ Նիլա՝ Ռուսիոյ Ամերիկայի մեջ , Փոլոքարսիէրլ՝ Մեխիքոյի մեջ , Բորոֆաքսի , Փիշինքա եւ Անրիզանա՝ Հասարակածի հասարակապետութեան մեջ , Արեքիֆա՝ Փերուի մեջ , Աքունքալուա , որ աշխարհիս ամենաբարձր հրաբուխն է՝ Չիլիի մեջ :

ՕԴ . — Ամերիկան որ գրեթէ մինչեւ երկու բեւեռները կտարածուի , աշխարհիս ամենայն տեսակ եղանակն ունի . բայց որովհետեւ հասարակածին տակը լեռնոտ է , այն պատճառաւ . Ափրիկէի եւ Ասիոյ տաքութիւնն ընդհանրապէս չունի : Արեւադարձի երկիրներն երկու եղանակ ունին . չոր եւ անձրեւային . անձրեւային ժամանակներուն շատ լճեր ու գետեր կբարձրանան եւ քովի երկիրները կողողեն , եւ այնու հողը շատ պտղաբեր կլինի : Այսու ամենայնիս սոսկալի հիւանդութիւններն անպակաս են տաքութեան ժամանակները Մեխիքոյի ծովուն եզերքն եւ Անրիզեան կղզեաց մեջ :

ԲԵՐՔ . — Ամերիկայի մեջ կգտնուին առատութեամբ ոսկի , արծաթ , պղինձ , երկաթ , փլաթին , սնդիկ եւ հանքային

ածուխ : Ամերիկայի բուսաբերութիւնը շատ զարմանալի է հիւսիսային կողմի ճոզած բուսերէն սկսեալ մինչեւ երկնաբերձ ծառերու մեծամեծ անտառներ կգտնուին մեջը : Բուն Ամերիկայի բոյսերն են զեռեախնձորը , եգիպտացորեանը , բամբակենին , քաքասո բոյսը , քինքինան , վանիլիան , ծխախոտը , Քամփեշի եւ Պրագիլի փայտերն՝ որ ներկեցու կգործածուին , աքածուան , խեժենին , եւ այլն : Հին աշխարհէն այն տեղ տարուեցան եւ յառաջ եկան շաքարենին , խահուենին , լեղակ , եւ այլ օգտակար բոյսեր . միայն խաղողը լաւ յառաջ չեկաւ : Բուն Ամերիկայի կենդանիներ են չորքոտանեաց մեջ , կաստորը , սիսոնը , բափիրը , սարիկը , լաման , եւ այլն . բոջնոց մեջ՝ քոնտորը , շատ տեսակ բութակներ , քոլիպրին , ճանճաբոջուան . սողնոց մեջ՝ պօա օձն , բոժոժաւոր օձն , եւ այլն : Եւրոպացիք տարին Ամերիկա ամենայն տեսակ ընտանի կենդանիներ :

ԲՆԱԿԻԶ. — Ամերիկայի բնակչաց թիւն է 73,000,000. սոքա չորս դաս կբաժնուին . Ա , Եւրոպացի սպիտակք կամ ծնունդք Եւրոպացւոց . Բ , Հնդիկք կամ բնիկք Ամերիկոյ , որ պղնձագոյն են . Գ , Ափրիկեցի սեւեր , ոմանք գերի եւ ոմանք ազատեալ . Դ , խառն ցեղեր :

ԿՐԾՆՔ. — Ամերիկայի լուսաւորեալ ազինքն քրիստոնեայ են . հարաւային Ամերիկայի բնակչաց մեծագոյն մասը հրեոմեկադաւան են , եւ հիւսիսային Ամերիկայի մեջ բողոքական : Բնիկ Ամերիկացւոց վայրենիներն հերանոս են :

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ . — Ամերիկայի ամեն տերութիւններն հասարակապետական կառավարութիւն ունին. միայն Պրագիլը եւ Մեխիքոն սահմանադրական միապետութիւն են:



ՌՌԻՍԱՅ ԱՄԵՐԻԿԱ.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ . — Իրքուցք քաղաքէն վաճառականաց ընկերութիւն մի հրաման առին Պօղոս Ա. կայսրէն որ Ալեուքեան կղզիներու մեջ եւ մերձակայ տեղերը մորթերու վաճառականութիւն անեն . այսպեսով հաստատուեցան Ռուսք Ամերիկայի հիւսիսային արեւմրտեան ծայրը :

Այս երկրիս սահմաններն են հիւսիսէն հիւսիսային Սառուցեալ ովկիանոս , արեւելքէն Նոր Բրիտանիա , հարաւէն Մեծ ովկիանոս , արեւմտքէն Պերինկայ ծով եւ նեղուց :

Բնակիչն է իբր 100,000 :

Այս երկրիս միայն ծովեզերքը ծանօթ է մինչեւ ցայժմ :

Օղը սաստիկ ցուրտ եղածէն , մշակութիւնն անկարելի է մեջը : Եսքիմացի կոչուած ցեղերն որ ծովեզերքը կբնակին՝ Ռուսաց հետ մորթի առուտուր կանեն :

Բաց ի ցամաքային երկրէն , Ռուսաց ձեռքն են նաև Ալեուքեան կղզիները , Կալլեաի իշխանիկ կղզիները , Սիքրա եւ Քոտեաք կղզիները : Կուսակալութեան զլխաւոր քաղաքն է Նոր Արխանկէլ՝ Սիքրա կղզւոյն մեջ :

ԿՐԷՅՆԼԱՆՏԻԱ.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — Տասներորդ դարուն Իսլանտայի մեջ հաստատուած Տանիմարքացիք ալեկոծութեամբ այս կղզւոյս արեւմտեան կողմը մեծ ցամաք մի գտան զոր *Կրէնլանտ*՝ այսինքն *Կանաչ երկիր* կոչեցին . յետոյ բոլորովին մոռցուել էր այս զիւտս , եւ Ամերիկայի գտնուելէն շատ ժամանակ յետոյ նորէն գտնուեցաւ : Այժմ Կրէսնլանտիան Տանիմարքացոց ձեռքն է , միայն հիւսիսային ծայրն Անգղիացոց ձեռքը :

Այս երկիրս կրնկնի Պաֆինի ծովուն եւ Սառուցեալ ովկիանոսի մեջտեղը . լեռնոտ եւ ապառաժոտ է , եւ տարուան ինն ամիսը սառույցներով ու ձիւնով ծածկած է , երեք ամիս ալ սաստիկ տաք կլինի . Կրէսնլանտիայի միայն հարաւային արեւմտեան ծովեզերքը ծանօթ է . արեւելեան եզերքն անմատչելի է :

Առաջ կկարծուէր թէ այս երկիրս մեծ թերակղզի մի է՝ Ամերիկայի ցամաքին հետ միացած . բայց վերջի տարիներս եղած ուղեւորութիւններով ստուգուեցաւ որ երկու երեք մեծամեծ կղզիներէ ձեւացած է :

Կրեօնյանտիոյ մէջ կգտնուին կարմիր եւ սպիտակ աղուես , սպիտակ նապաստակք ու արջեր , եւ ահագին մեծութեամբ քոնտորներ :

Բնակիչն է 25,000 , որոց 2% հազարը կարճահասակ Եսքիմացիք , մնացածը Տանիմարքացիք : Սոցակերակուրն է ծովու հորթի միսն , որոյ կաշիէն ալ հագուատ եւ վրաններ կշինեն . իրենց գլխաւոր պարապմունքն է ձկնորսութիւն , մանաւանդ կէտ ձկան :

Գլխաւոր քաղաքն է *Կորհասայ* (Բարի յոյս) :



ՆՈՐ ԲՐԻՏԱՆԻԱ.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ . — Ֆրանսուա Առաջնոյն ժամանակ Գաղղիացիք տիրեցին այս երկրին *Քաւաւա* կոչուած մասին , իսկ 1763-ին Լուդովիկոս ԺԵ բողոսց զայն Անգղիացւոց , որ մինչեւ Ամերիկայի հիւսիսային ծայրերը տիրելով՝ անունը դրին *Նոր Բրիտանիա* , եւ բաժանեցին զայն ի *Վերիւն* եւ ի *Ստորին Քաւաւա* . ստորին Քաւաւայի բնակիչք մինչեւ ցայժմ պահած են Գաղղիացւոց

լեզուն եւ սովորութիւններն , եւ ըստ մեծի մասին հռոմեական են :

Նոր Բրիտանիոյ սահմաններն են հիւսիսէն՝ Հուտարնի ծովն եւ Սառուցեալ ովկիանոս , արեւելքէն՝ Ատլանտեան ովկիանոս , հարաւէն Միացեալ Նահանգք , արեւմտքէն՝ Ռուսաց Ամերիկան եւ Մեծ ովկիանոս :

Տարածութիւնն է 43,700 բիւրմերք քառակուսի :


Երկիրն արեւմտեան կողմը լեռնոտ է , արեւելեան եւ հիւսիսային կողմերը դաշտային , եւ բազմաթիւ լճեր ու գետեր ունի . գլխաւոր գետերն են *Մաքկեկի* , *Նելսըն* , *Սիվեոն* եւ *Սուրբ Լաւրենտիոս* :

Այս երկրիս հիւսիսային կողմն եւ Լապրատոր բերակղզին անմշակելի են ցրտութեան պատճառաւ : Նոր Սկովտիոյ արեւմտակողմը մեծամեծ ծառեր կան . Քանատան անտառախիտ է եւ բարերեր :

Բնակիչն է իբր 2,500,000, ըստ մեծի մասին Գաղղիացի . կան նաեւ քանի մի բնիկ Ամերիկացի ցեղեր որ մինչեւ ցայժմ ազատ են Անգղիացւոցմէ : Բնակչաց գլխաւոր զբաղմունքն է մորթերու առուտուր :

Գլխաւոր քաղաքներն են .

Քէթլբ (40,000 բն.) Սուրբ Լաւրենտիոս գետոյն ձախակողմն , արքու է ընդհանուր կուսակալին Նորոյն Բրիտանիոյ , եւ շատ ամուր ու վաճառաշահ քաղաք :



Ֆրեայթ.

ՄՈՆՐԷԱԼ (70,000 բն.) Մուրբ Լաւրենտիոս զետոյն մեջ կղզիի մի վերայ, մորթի վաճառականութեան կողմանէ Ամերիկայի առաջին քաղաքն է, եւ Նոր Բրիտանիոյ ամենէն բազմամարդը :

ԹՈՌՈՆԹՈՅ (20,000 բն.) Յնթարիոյ լճին վերայ բանուկ նաւահանգիստ :

ՀԷԼԵՆԱՔՍ (15,000 բն.) Ատլանտեան ովկիանոսի վերայ, Նոր Սկոտիոյ զլիսաւոր քաղաքն է. վաճառաշահ, եւ Ամերիկայի ապահով ու ամուր նաւահանգիստներէն մեկը :

Նիակարա, փոքրիկ քաղաք, որոյ մօտ է նամանուն զետոյն նոջակաւոր ջրվեժն որ Էրիէ լճէն Յնթարիոյ լիճը կրափի :

Գլխաւոր կղզիներն են . *Նոր Երկիր* (Թեո.-նեով) եւ
Պրըրոն գլխոյ կղզին . Նոր Երկրի շները շատ անուանի են
իւրեանց մեծութեան , բարակ մազերուն , ուժին եւ լողայու
վարպետութեան համար : Այս կղզւոյս մօտ են *Սուրբ Պետրոս*
եւ *Միքէլոն* փոքրիկ կղզիները ' Գաղղիացւոց ձեռքը : Մեծ
ովկիանոսի մեջ ' *Քուստրայի* եւ *Վանքովրի* կղզին , եւ
Շարքոյ դշտոյի կղզին . հիւսիսային կողմը *Սաւրհեմիքըն*,
Քրմպրրիկետ , *Մեյուիլ* , եւ *Պուրիա* բերակղզիներ , *Փար-*
րի կղզիներն , եւ ուրիշ հիւսիսային երկիրներ որ տակաւին
անձանօք են :



ՄԻՍՅԵԱԼ ԿԱԶՄՆԻՔ.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — Միացեալ Նահանգներն յատաջ Անգղիացոց ձեռքն էին . 1776-ին ապստամբեցան նոցա դեմ , եւ 1783-ին տասներեք տերութիւններէ դաշնակցութիւն մի կազմեցին *Միացեալ Նահանգք* անուամբ . յետոյ հտեւեւ ետեւ 24 տերութիւնք եւս մտան այն դաշնակցութեան մեջ , այնպէս որ այժմ Միացեալ Նահանգաց տարածութիւնն է Եւրոպայի կեսն անելի : 1861-ին հարաւային տասնեւմէկ գաւառները գերեաց պատերազմն սկսան դաշնակցութեան հետ , որ մինչեւ տարւոյս վերջերը երկարեցաւ սարսափելի կոտորածներով :

Միացեալ Նահանգաց սահմաններն են հիւսիսէն՝ Նոր Բրիտանիա , արեւելքէն Ատլանտեան ովկիանոս , հարաւսէն Մեխիքոյի ծով , արեւմտքէն Մեխիքոյ եւ Մեծ ովկիանոս :

Տարածութիւնն է 58,120 բիւրմերը քառակուսի :

Երկիրն ընդհանրապէս լեռնոտ է . գլխաւոր լեռանց գօտիներն են *Քորտիլլեանք*՝ արեւմտակողմն , եւ *Ալլեկանի* արեւելակողմն . այս լեռիները զանազան անտաններ ալ ունին տեղ տեղ , ինչպէս *Կապոյտ լեռիք* , *Սպիտակ լեռիք* եւ այլն :

Հողն արեւելեան եւ արեւմտեան կողմերը բարերեր է . միայն Ապառաժ եւ Ալլեկանի լեռանց մեջտեղը շատ տեղ աւազուտ անապատ է :

Օղը հիւսիսային կողմը ցուրտ է . մեջտեղերը ձմեռը սաստիկ ցուրտ եւ ամառը սաստիկ տաք . իսկ հարաւային կողմերն երբեմն Ափրիկէի տաքութիւնները կունենան :

Գլխաւոր բերքն է երկաթ , կապար , պղինձ , հանքային ածուխ , եւ Քալիֆոռնիոյ մեջ առատ ոսկի : Բուսոց մեջ՝ ցորեն , գետնախնձոր , բրինձ , շաքարենի , ծխախոտ եւ մանաւանդ բամբակենի : Կենդանեաց մեջ ալ խիստ շատ կգտնուի *պիսուն* կոչուածն որ տեսակ մի ցուլ է :

Գլխաւոր գետերն են . *Սաքրամենթոյ* , *Քոլոււմպիա* կամ *Որեկոն* , *Սուրբ Լաւրենտիոս* , *Տեխասար* , *Փորումար* , *Սահաւան* եւ *Մեքսուսեպե*՝ կամ *Միսիսսիփի* , որոյ գլխաւոր գետակն է *Միսուրի* :

Գլխաւոր լճերն են . *Միչիկան* , *Վերիլե շիւն* , *Հուրոն* , *Էրիէ* եւ *Ուրարիոյ* :

Բնակիչն է 26,000,000, որոց մեջեն 23 միլիոնին մեծագոյն մասն Անգլիացի , մնացածը Գաղղիացի , Գերմանացի եւ Սպանիացի . եւ երեք միլիոնը Ափրիկեցի սևեր ու բնիկ Ամերիկացիք : Լեզուսն է անգլիարէն , եւ կրօնքն ըստ մեծի մասին բողոքական :

Միացեալ Նահանգներն 35 իրարմէ անկախ հասարակապետութիւններէ ձեւացած դաշնակցութիւն մի է , զոր կկառավարեն զաներեց մի , որ չորս տարին մէկ մը կըն-

տրուի, եւ երկու խորհրդարան. ձերակոյտ կամ *սենար*, եւ խորհրդարան երեսփոխանաց :


Միացեալ Նահանգաց մեջ երկրագործութիւնը, ճարտարութիւնն ու ծովային վաճառականութիւնը շատ ծաղկած են . ներքին վաճառականութիւնն եւս կղիւրացընեն բազմաբիւ գետերը, ջրանցքներն ու երկաթուղիները : Ուսման եւ գիտութեանց կողմանէ եւս շատ յառաջ գնացած են Միացեալ Նահանգաց բնակիչքը :

ԳԼԽԱԽՈՐ ՔԱՂԱՔԻՔ .

ՎՈՇԻՆԿԹԸՆ (40,000 բն.) Փորումաքի վերայ Բոլոմպիա գաւառին գլխաւոր քաղաքն եւ բոլոր Միացեալ նահանգաց մայրաքաղաքը . շինուեցաւ յամի 1792-ին ի յաւերժական յիշատակ մեծանուն Վոշինկըրն զօրապետին որ ազատեց այս երկիրս Անգղիացւոց ձեռքէն :

ՊՈՍԹՈՆ (180,000 բն.) Մասաչուսեք գաւառին գլխաւոր քաղաքը, եւ Ամերիկայի շատ վաճառաշահներէն մեկը ունի ապահով նաւահանգիստ, գեղեցիկ շէնքեր եւ բազմաբիւ ուսումնական տեղեր : Հայրենիք է քաղաքս Բենիամին Ֆրանքլինի :

ՆՈՐ-ԵՕՐԻ (450,000 բն.) համանուն գաւառին գլխաւոր քաղաքը, մեծութեան, վաճառականութեան եւ ուսումնական տեղերուն կողմանէ՝ Միացեալ Նահանգաց առաջին քաղաքն է . բանուկ նաւահանգիստ ունի Հուտսըն գետոյն բերանը :



Նոր-Եօրք.

ՊԱԼԹԻՄՈՐ (200,000 բն.) մեծ նաւահանգիստ ունի Զի-
գափիք խորշին վերայ, եւ շատ վաճառաշահ քաղաք է :

ՓԻԼԱԴԵՂՓԻԱ կամ ՖԻԼԱՏԵԼՅԻԱ (250,000 բն.) Տեյաւար գե-
տոյն վերայ Փենսիլուանիոյ գլխաւոր քաղաքը, Ամերիկայի
գեղեցիկ եւ շատ ծաղկած քաղաքներէն մէկը . ճարտարու-
քեան կողմանէ ալ Միացեալ Նահանգաց առաջինն է :

ՆՈՐ ՕՌԼԷԱՆ (135,000 բն.) գոր Գաղղիացիք շինեցին
Մեքսսեպէ գետոյն վերայ, շատ վաճառաշահ, եւ Լուի-
զիանա կոչուած բնդարձակ գաւառին գլխաւոր քաղաքն
է : Այս գաւառս Գաղղիացիք Ամերիկացոց ծախեցին
1803-ին :

ՌԻՉՄԸՆՏ (230,000 բն.) Վիրճինիա գաւառին գլխաւոր

քաղաքն է, եւ 1861-էն ի վեր հարաւային ապստամբաց
մայրաքաղաքն : Այս քաղաքիս քովի գեղերէն մեկը ծնաւ
Վոշինկըն :

ՍՈՒՐԲ ԶՐԱՆԶԻՍԿՈՄ (80,000 քն.) Սաքրամենթոյ գետոյն
բերանը քանուկ նաւահանգիստ ունի, եւ վաճառաշահ .
այս քաղաքս 1848-ին հազիւ թէ քանի մի խրճիթներէ կը-
ձեւանար :

ՓՈՐԹՆԸՆՏ եւ ՓՈՐԹՍՄՈՒԹ, քանուկ նաւահանգիստ-
ներ են :

ԶԻՆԶԻՆՆԱԹԻ (120,000 քն.) Յիիոյ գետոյն վերայ ծաղ-
կած եւ վաճառաշահ :



Մ Ե Խ Ի Ք Ո Յ .

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ . — Այս երկրիս մեջ հին ժամանակներն *Ազրէք* կոչուած գորաւոր եւ քաղաքակիրք ազգը կրնակեր . 1521-ին Ֆերնանտոյ Քորտովացին տիրեց Մեխիքոյ զլիսաւոր քաղաքին , որով եւ բոլոր երկիրն անցաւ Սպանիացոց ձեռքն , որ փոխարքայից ձեռքով կկառավարէին զայն , եւ անունը դրած էին *Նոր Սպանիա* : Մեխիքոյի Սպանիացիք 1810-ին ապստամբեցան Սպանիոյ քաղաւորութենէն , եւ 1824-ին Միացեալ Նահանգաց նման 24 հասարակապետութենէ դաշնակցութիւն մի կազմեցին . բայց այն ժամանակէն Մեխիքոն շատ տկարացաւ եւ աղքատացաւ խռովութեամբք եւ անիշխանութեամբ : 1862-ին Գաղղիացիք , Անգղիացիք եւ Սպանիացիք պատերազմի ելան Մեխիքացոց վերայ . բայց երբ Անգղիացիք եւ Սպանիացիք ետ կանչեցին իւրեանց զօրքերը , Գաղղիացիք մինակ յառաջ տարին պատերազմն եւ 1863-ին ամառը բոլորովին տիրեցին Մեխիքոյի երկրին : Այժմ միապետական կառավարութիւն հաստատուեցաւ այն տեղ , եւ կայսր դրուեցաւ Ասատրիոյ կայսեր Մաքսիմիլիանոս եղբայրը :

Մեխիքոյի սահմաններն են հիւսիսէն Միացեալ Նահանգք , արեւելքէն Մեխիքոյի ծով , հարաւէն եւ արեւմտքէն Մեծ ովկիանոս :

Տարածութիւնն է 24,000 բիւրմերը քառակուսի :

Երկիրը լեռնոտ է եւ շատ հրաբուխներ ու մեծամեծ քարձրաւանդակներ ունի :

Հողը բարեբեր է, միայն Մեխիքոյի ծովուն եզերքը տեղ տեղ անբեր անապատ :

Օդը լեռներու վերայ ցուրտ է, քարձրաւանդակները բարեխառն, եւ հովիտներուն մեջ սաստիկ տաք :

Գլխաւոր գետերն են Ռիոյ տէլ Նորրէ, Ռիոյ տէ Սան-րիակոյ (գետ Սրբոյն Յակոբայ) եւ Քոչոքատոյ :

Գլխաւոր բերքն է ոսկի, արծաթ, բամբակ, շաքարենի, ծխախոտ, լեղակ, քաքաոյ, վանիլիա, եւ այլն :

Բնակիչն է 6,000,000 . լեզունին Սպանիացոց լեզուն, կրօնքը հռոմեակաւան :

Տերութեան կառավարութիւնն է սահմանադրական միապետութիւն :

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔԻՔ .

ՄԵԽԻՔՈՅ կամ ՄԵՔՍԻԿՈՅ (200,000 բն.) լճերու մեջ շինած, տերութեան մայրաքաղաքն է եւ Ամերիկայի գեղեցիկ քաղաքներէն մէկը . երեսելի է մայր եկեղեցին որ Ամերիկայի ամենէն գեղեցիկն է, եւ աշխարհիս ամենէն հարուստը՝ քանկազին զարդերուն համար : Ունի համալսարան եւ ուրիշ ուսումնական տեղեր :

ԿՈՒԱՏԱԼԱԽԱՐԱ (80,000 բն.) երեսելի է ոսկւոյ եւ արծաթի հանքերովը :

ՓՈՒԷՊԼԱ կամ ՓՈՒԷՊԼԱ ՏԷ ԼՈՍ ԱՆՃԵԼԷՍ (70,000 րն.)
Մեխիքոյէն յետոյ ամենէն երեսնի քաղաքն է. ունի զե-
ղեցիկ մայր եկեղեցի : Այս տեղ Գաղղիացիք 1862-ին յաղ-
քուեցան, եւ 1863-ին տիրեցին քաղաքիս :

ԿՈՒԱՆԱԽՈՒԱԹՈՅ (40,000 րն.) սորա քովն է աշխարհիս
ամենէն մեծ արծարահանքը :

ՎԵՐԱՔՐՈՒԶ (10,000 րն.) Մեխիքոյի ծովուն վերայ այս
երկրիս առաջին բանուկ նաւահանգիստը . օդը վնասա-
կար է . Եւրոպացւոց հետ մեծ վաճառականութիւն ունի :

ՄԵՐԻՏԱ (36,000 րն.) Եուքարան բերակղզւոյն մայրա-
քաղաքն է, որ 1841-ին զատուեցաւ դաշնակցութենէն :

ՔԱՄՓԷՇ (20,000 րն.) վաճառաշահ նաւահանգիստ . ա-
նուանի է սորա *քամփէշ* անունով ներկի փայտը (տճ.
պագամ ադանը) :

Մեխիքացւոց իշխանութեան տակ են *Ռեպիլլա ճինեաոյ*
եւ ուրիշ շատ մանր կղզիներ :



Կ Ա Ի Ա թ Է Մ Ա Լ Ա

ԿԱՄ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ ՄԻՋԻՆ ԱՄԵՐԻԿՈՅ .

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ . — Մինչև 1821 այս երկիրս Սպանիացւոց ձեռքն էր . այն տարին բնակիչքն ապստամբեցան նոցանէ, եւ 1824-ին դաշնակցութիւն մի կազմեցին . բայց 1839-ին բաժնուեցան իրարմէ եւ հինգ հասարակապետութիւն ձեւացան , որ են *յուսթէճա* , *Սան Մարիաուոր* , *Հոնտուրաս* , *Նիքարակուա* եւ *Քոստա Ռիքա* :

Այս երկիրներուս սահմաններն են հիւսիսէն՝ Եուրասիան եւ Անթիլեան ծով , արեւելքէն՝ Անթիլեան ծովն եւ Փանամայի պարանոցը , հարաւէն եւ արեւմտքէն՝ Մեծ ռվկիանոս :

Տարածութիւնն է 16,700 ըիւրմէքը քառակուսի :

Երկիրը լեռնոտ է , եւ գետնաշարժ շատ կպատանի մեջը . հողը սաստիկ բարեբեր է , օդն ալ տաք :

Բնակիչն է իբր 2,200,000 :

ԳԼԽԱԽՈՐ ՔԱՂԱՔԻՔ .

ՆՈՐ ԿՈՒԱԹԷՄԱԼԱ (50,000 բն.) համանուն տերութեան մայրաքաղաքը, հին Կուարեմալայի մօտ որ 1774-ին մեծ երկրաշարժով կործաներ է. ունի համալսարան եւ ուրիշ ուսումնարաններ :

ՍԱՆ ՍԱԼՎԱՏՈՐ (25,000 բն.) համանուն տերութեան մայրաքաղաքը, ճարտար եւ վաճառաշահ . 1839-ին մերձակայ հրաբուխի մի բռնկելովը վնասուեցաւ, եւ 1854-ին երկրաշարժով մեծ մասը կործանեցաւ :

ՔՈՄԱՅԱԿՈՒԱ (20,000 բն.) Հոնտուրասի մայրաքաղաքը :

ԼԷՈՆ (30,000 բն.) Նիքարակուայի մայրաքաղաքը :

ՍԱՆ ՍԹԵ (20,000 բն.) Քոսթա Ռիքայի մայրաքաղաքը, նաւահանգիստ :

Այս երկրիս հիւսիսային կողմն Անգղիացիք գաղթականութիւն մի ունին, որոց գլխաւոր քաղաքն է Պալիզ, բաՆուկ նաւահանգիստ եւ վաճառաշահ :

Հոնտուրասի արեւելեան ծովեզերքը Մոսքիթ կոչուած Ամերիկացի ազգը կրնակի որ ինքնագլուխ է :



ՄԻՍՅԵԱԼ ԵՍՂԱՆԳԻ ՔՈԼՈՒՄՊԻՈՅ .

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ . — Նոր Կրանատան , Վենեցուէյան եւ Հասարակածի տերութիւնն Սպանիացոց իշխանութեան տակ էին՝ Նոր քաղաւորութիւնն Կրանատայ անուամբ . 1811-ին ապստամբեցան Սպանիացոցմէ , եւ 1821-ին ինքնագլուխ ճանաչուեցան : Յետոջ այս երեք տերութիւններս հասարակապետութիւն մի կազմեցին Քորուճիա անուամբ ի պատիւ Քոլումպոսի : Քոլումպիան 1831-ին երեք առանձին հասարակապետութիւն բաժանուեցաւ . Նոր Կրանատա , Վենեցուէյա եւ Հասարակածի հասարակապետութիւն : Նոր Կրանատան 1861-ին Միացեալ Նահանգք Քորուճիոյ անունն առաւ :

Քոլումպիոյ միացեալ նահանգաց սահմաններն են . հիւսիսէն Անրիլեան ծով , արեւելքէն Վենեցուէյա , հարաւէն Հասարակածի հասարակապետութիւնն եւ արեւմտքէն Մեծ ովկիանոս եւ Կուարեմալա :

Տարածութիւնն է 7,400 բիւրմերը քառակուսի :

Երկիրը լեռնոտ է եւ շատ բարեբեր : Օղբ բարձր տեղերը բարեխառն եւ առողջ , ծովեզերքն եւ դաշտերու մեջ տաք եւ խոնաւ : Երկրաշարժ շատ կլինի այս երկրիս մեջ :

Գլխաւոր գետերն են . Մագդաղիէնէ , Պոկորա , Օրենոք եւ Սուրբ Յովնակէնէ :

Գլխաւոր բերքն է քաքառոյ, խահուէ, ծխախոտ, լնդակ, քինքինա, խեժ եւ այլն, եւ ընդարձակ անտառներ ունի : Հանքերու մեջ ալ ունի ոսկի, արծաթ, փլաքին, պղինձ, երկաթ, կապար, զմբուխտ եւ ուրիշ պատուական քարեր :

Բնակիչն է 2,200,000 . լեզուսին սպանիերէն է, իսկ կրօնքն հռոմեակաւան :


ԳՂՍԱԽՈՐ ՔԱՂԱՔՔ .

ՍԱՆԹԱՅԷ ՏԷ ՊՈԿՈԹԱ (35,000 բն.) բարձր տեղ մի շինած Պոկոթա գետոյն վերայ, տերութեան մայրաքաղաքն է :

ԿԱՐԹԱՔԻՆԷ կամ ՔԱՐԹԱՂԷՆԱ (16,000 բն.) ամառը օղբ վնասակար, Անթիլեան ծովուն մօտ ապահով նաւահանգիստ :

ՓԱՆԱՄԱ (10,000 բն.) համանուն պարանոցի վերայ, քանուկ նաւահանգիստ ունի Մեծ ովկիանոսի եզերքը :

ՄԱՐԻՆԻԹԱ, ոսկւոյ եւ արծաթի հանքերովն անուանի :



Վ Ե Ն Ե Յ Ո Ի Է Լ Ա .

Վենեցուեյայի սահմանն է հիւսիսէն՝ Անթիլեան ծով եւ Ատլանտեան ովկիանոս , արեւելքէն՝ Ատլանտեան ովկիանոս եւ Կույանա , հարաւէն՝ Պրագիլ եւ արեւմտքէն՝ Նոր Կրանատա :

Տարածութիւնն է 7,000 բիւրմերը քառակուսի :

Երկիրն , օղն եւ բերքը Նոր Կրանատային նման է :

Գլխաւոր գետն է Օրենոք :

Բնակիչն է 1,300,000 :


Գ Լ Խ Ա Ի Ո Ր Բ Ա Ղ Ա Բ Բ .

ԲԱՐԱԲԱՍ (50,000 բն.) գեղեցիկ հովտի մի մեջ՝ տերութեան մայրաքաղաքն է : Անուանի է այս քաղաքիս քաքան :

Կուլայիրա , Բարաքասի նաւահանգիստը կհամարուի :

ՄԱՐԱԲԱՅԻՊԹ (20,000 բն.) համանուն լճին եւ խորշին մեջտեղը բանուկ նաւահանգիստ . օղն անառողջ :

Վարինաս , փոքրիկ քաղաք , ծխախոտը շատ ազնիւ է :



ՀԱՍՍՐԱԿԱԾԻ ՀԱՍՍՐԱԿԱՊԵՏՈՒԹԻՒՆ.

Այս երկրիս սահմանն է հիւսիսէն՝ Բոլոմպիա, արեւելքէն՝ Պրագիլ, հարաւէն՝ Փերու, արեւմտքէն՝ Մեծ Ովկիանոս :

Տարածութիւնն է 8,600 բիւրմերը քառակուսի :

Երկիրն, օգն է բերքը Բոլոմպիային նման է :

Գլխաւոր լեռներն են *Չիմպորասոյ* եւ *Փիչինքա* հրաբուխը :

Բնակիչն է 700,000 . լեզուին սպանիերէն, կրօնքը հռոմեական :

ԳԼԽՍԻՈՐ ՔԱՂԱՔՔ.

ՔՈՒԻԹՅՈ կամ *Քիբոյ* (70,000 բն.) Փիչինքա հրաբուխին արեւելակողմն, բարձր դիրք ունի, որով եւ օգն զուարճալի է թէ եւ զրեթէ հասարակածի տակն է. ճարտար եւ վաճառաշահ քաղաք :

ԿՈՒԱՅԱՔԻԼ (24,000 բն.) Մեծ Ովկիանոսի վերայ զին ուորական նաւահանգիստ, եւ Սմերիկայի ամենէն բնգարձակ եւ ամենէն ապահովներէն մեկը :



ԿՈՒՅԱՆԱ.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — Նախ Գաղղիացիք հաստատուեցան այս երկրիս մեջ 1626-ին, եւ կոչեցին զայն *Գիշերահաւասարի Գաղղիա*. անկէ դեպ ի հիւսիս Հոլանտացիք հաստատուեցան. բայց Գաղղիոյ լեղափոխութեան ժամանակ Անգղիացիք տիրեցին բոլոր հոլանտական Կոլյանայի, եւ 1814-ին մեկ մասն իւրեանց պահեցին: Այս երկրիս միայն ծովեզերքն Եւրոպացոց ձեռքն են, իսկ ներսերը բնիկ Ամերիկացիք եւ փախստական Սեւեր կրքնակին անտառներու մեջ:

Կոլյանայի սահմանն է հիւսիսէն եւ արեւելքէն՝ Ատլանտեան ովկիանոս, հարաւէն՝ Պրագիլ, եւ արեւմտքէն՝ Վենեցուեյա:

Տարածութիւնն է 4,600 բիւրմերք քառակուսի:

Երկիրը հարաւային եւ արեւմտեան կողմը լեռնոտ է, ծովեզերքը դաշտային եւ ճախճախուտ: Հողը սաստիկ բարերեր է, եւ առատութեամբ կրօսցընէ խահուէ, շաքար, քաքաոյ, լեղակ, եւ ուրիշ տաք երկիրներու բոյսեր: Յողը տաք եւ անառողջ: Տարին ութ ամիս միակերպ անձրեւ կուգայ:

Բնակիչն է 200,000 այլ եւ այլ Եւրոպացի ազգեր; Ամերիկացիք եւ Ափրիկեցի Սեւեր:

Կույանան երեք մասն կրածանուի . Անգղիացւոց , Գաղղիացւոց եւ Հոլանտացւոց Կույանա :

Անգղիացւոց Կույանային գլխաւոր քաղաքն է ձՅՐՃ-ԹԱԽՆ , երբեմն *Սրասպրոք* (20,000 բն.) Տեմերարա գետոյն բերանը , վաճառաշահ քաղաք :

Հոլանտացւոց Կույանային գլխաւոր քաղաքն է ՓԱՐԱՄԱՐԻՊԹ (20,000 բն.) , Սուրինամ գետոյն վերայ վաճառաշահ նաւահանգիստ :

Գաղղիացւոց Կույանային գլխաւոր քաղաքն է ՔԱՅԵՆՆԱ , համանուն գետոյն բերանը կղզիի մի վերայ . այս աեղ կաքսորեն Գաղղիացիք իբրեանց յանցաւորները :



Պ Ր Ա Ձ Ի Լ .

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ . — Պրագիյն յառաջ Փորթուգալցւոց ձեռքն էր . 1822-ին ինքնագլուխ եղաւ եւ սահմանադրական միապետութիւն հաստատուեցաւ մեջը , որոյ կայսրը Փորթուգալի քագաւորական ցեղէն է :

Պրագիլի կայսերութեան սահմաններն են հիւսիսէն ' Կույանա , Վենեցուէյա եւ Ատլանտեան ովկիանոս . արեւելքէն ' Ատլանտեան ովկիանոս , հարաւէն ' Ատլանտեան ովկիանոս , Ուրակուայ , Փարակուայ եւ Պոլիվիա . արեւմտքէն ' Պոլիվիա , Փերու եւ Հասարակած :

Տարածութիւնն է 78,000 քիւրմերը քառակուսի , ամբողջ Եւրոպայի երեք քառորդէն աւելի :

Երկիրն արեւելեան եւ հարաւային կողմերը լեռնոտ է . գլխաւոր լեռանց գօտիներն են *Սերա տօ Մար* , որ Ուրակուայէն մինչեւ Ատլանտեան ովկիանոս կերթայ , *Սերա տօ Էսիլիկեսայ* եւ *Սերա տոս Վերրէնրէս* որ Պրագիլի մեջտեղէն կանցնի :

Հողը շատ բարեբեր է եւ առատութեամբ կրօսցընէ պրագիլի փայտը , բրինձ , բամբակ , ծխախոտ , շաքար , քաքաոյ , վանիլիա , եւ այլն . ունի նաեւ առատ հանքեր ոսկւոյ , արծաթի եւ աղամանղի :

Յղը տաք է , բայց առողջարար :

Գլխաւոր գեաւերն են Ամազոնաց գետն՝ իւր ճիւղերովը , Թոքանքին եւ Սաւն Ֆրանչիսքոյ :

Բնակիչն է 7,000,000 Փորթուգալցիք , Ափրիկեցի Սեւեր , իստոն ցեղեր , եւ քանի մի Ամերիկացի ազգեր որ ինքնազուխ են Պրագիլի ներսերը :

Ճարտարութեան եւ գիտութեանց կողմանէ տակաւին ետ մնացած է . վաճառականութիւնն եւս տկար է , մանաւանդ ցամաքայինը :


ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔԻՔ .

ՌԻՈՅ ԽԱՆԷՅՐՑ (300,000 բն .) համանուն խորշի վերայ շատ բանուկ եւ ապահով նաւահանգիստ ունի , տերութեան մայրաքաղաքն է . աշխարհիս առաջին վաճառաշահ քաղաքներէն մէկն է , եւ հարաւային Ամերիկայի ամենէն երեսելին :

ՊԱՀԻԱ կամ ՍԱՆ ՍԱԼՎԱՏՈՐ (180,000 բն .) Պրագիլի հին մայրաքաղաքն , ամուր եւ շատ վաճառաշահ քաղաք . զեղեցիկ նաւահանգիստ ունի :

ՓԵՌՆԱՄՊՈՒԲՈՅ կամ ՌԷՅԻՅ (65,000 բն .) բանուկ նաւահանգիստ եւ վաճառաշահ :

ՊԵԼԷՄ կամ ՓԱՐԱ (25,000 բն .) նաւահանգիստ :



ՓԵՐՈՒ.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — Փերուն հին ժամանակն հզօր եւ քաղաքակիրք ինքնակալութիւն էր. Սպանիացիք Փիզարրոյի առաջնորդութեամբը տիրեցին այս երկրիս 1532-ին, որ եւ նոցա ձեռքը մնաց մինչեւ 1822. այն տարին Փերուցիք ապստամբեցան Սպանիացւոցմէ եւ առանձին հասարակապետութիւն կազմեցին :

Փերուի սանձանն է հիւսիսէն՝ Հասարակած, արեւելքէն՝ Պրագիչ, հարաւէն՝ Պոլիվիա, արեւմտքէն Մեծ ովկիանոս :

Տարածութիւնն է 14,000 բիւրմերք քառակուսի :

Երկիրը լեռնոտ է, Ամերիկայի ամենարարձր լեռներն այս տեղ են : Ծովեզերքը բարձր է եւ հազիւ թէ քանի մի լաւ նաւահանգիստներ ունի. հարաւային կողմն անազին լեռներ կան, որոց մեջ նշանաւոր է *Քուչարոյ*, որոյ վերայ է *Թիրիքաքա* լիճը՝ ծովու երեսէն 4,000 մերք բարձր :

Արեւելեան կողմն անձանօր է տակաւին եւ ընդարձակ անտառներով ծածկած : Հողը բարեբեր է : Օդը բարեխառըն, տեղ տեղ ալ տաք. երկրաշարժը անպակաս է Փերուի մեջ :

Գլխաւոր բերքն է ոսկի, արծաթ, փլաքին, պղինձ, երկաթ, հանքային ածուխ եւ աղ :

Բնակիչն է 1,400,000 :

ԳԼԽԱԻՈՐ ՔԱՂԱՔԻՔ .

ԼԻՄԱ (70,000 ըն.) տերութեան մայրաքաղաքը . օղև առողջարար է, բայց երկրաշարժ շատ կպատահի մեջը . ունի բազմաթիւ գեղեցիկ եւ հարուստ եկեղեցիներ : Այս քաղաքս հարաւային Ամերիկոյ ամենէն հարուստը կհամարուի :

Քաղաօ, Լիմայի նաւահանգիստն է :

ՔՈՒՍՔՈՅ (40,000 ըն.) Թիբիքաքա լճին վերի կողմը , երբեմն ինքայից մայրաքաղաքն էր . նշանաւոր էր մեջը Արեգական տաճարը : Այժմ տերութեան երկրորդ քաղաքն է , ծաղկած եւ վաճառաշահ :

ԱՐԵՔԻՓԱ (36,000 ըն.) համանուն հրաբուխին քով , ճարտար քաղաք . գետնաշարժն անպակաս է մեջը :

Արիքա , Փերուի ամենալաւ նաւահանգիստն է , բայց օղև անառողջ :



ՊՈԼԻՎԻԱ.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — Այս երկիրս, որ մասն էր Փերուի, Սպանիացւոց միւս գաղթականութեանց նման ապստամբեցաւ 1810-ին, եւ 1825-ին անկախ հասարակապետութիւն ձեւացաւ եւ կոչուեցաւ Պոլիվիա, յանուն ազատարարին իւրոյ Պոլիվար գօրագլխի:

Պոլիվիոյ սահմաններն են՝ հիւսիսէն Փերու, արեւելքէն Պրագիլ եւ Փարակուայ, հարաւէն՝ Լափլարա, արեւմուտքէն՝ Փերու եւ Մեծ ովկիանոս:

Տարածութիւնն է 13,000 քիւրմէրր քառակուսի:

Երկիրն արեւմտեան կողմը սաստիկ լեռնոտ է. հողը շատ բարեբեր է, միայն ծովեզերքն աւազուտ անապատ է: Օղն ընդհանրապէս վնասակար է, եւ ցած տեղերը տաք: Ոսկւոյ եւ արծաթի հանքերը շատ են, նմանապէս առատ փայտ ունի:

Բնակիչն է 1,500,000, մեծագոյն մասն Ամերիկացի ազգեր, մնացածն Եւրոպացիք եւ իսպան ցեղեր:

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՔ.

ԼԱՓԼԱԹԱ կամ ՉՈՒՔԵԶԱՔԱ (13,000 քն.) տէրութեան մայրաքաղաքն է, քովերը մեծ արծաթահանք սանի:

ՓՈԹՈՍԻ (12,000 րն .) անուանի է իւր առատ արծաթա-
հանքովն որ աշխարհիս երկրորդն է :

ԼԱՓԱԶ (40,000 րն .) ոսկւոյ առատ հանքեր ունի , եւ
Պոլիվիոյ ամենէն ծաղկած քաղաքն է :



ԼԱՓԼԱԹԱ .

ՊԵՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ . — Վեշտասաներորդ դարուն
մեջտեղերը Սպանիացիք Պուենոս Այրես քաղաքը շինեցին
Ռիոյ տէ լա Փլաթայի ձախակողմն , եւ կամաց կամաց իւ-
րեանց իշխանութիւնը տարածեցին մինչեւ Փերուի եւ Չի-
լիի երկիրները . այնպէս որ հարաւային Ամերիկան ' Պրա-
զիլէն զատ ' նոցա ձեռքն էր : 1810-ին այս երկիրներուն
բնակիչքն ապստամբեցան Սպանիացւոցմէ եւ սկսան ինք-
նազուխ կառավարուիլ . բայց մինչեւ ցայժմ միայն Չի-
լին կանոնաւոր կառավարութիւն ունի : Պուենոս Այրեսի
փոխարքայութեան երկիրը չորս հասարակապետութիւն
ձեւացաւ , որ են . Վերին Փերու կամ Պոլիվիա , Փարա-
կուայ , Ուրուկուայ եւ Արծաթի կամ Լափլարայի դաշ-
նակցութիւնն : Այս դաշնակցութիւնս եւս 1853-ին երկու ո-
րոշ հասարակապետութիւնք բաժանուեցան . Լափլարա եւ
Պուենոս Այրես :

Լափլարայի սահմանն է հիւսիսէն՝ Պոլիվիա եւ Փարակուայ, արեւելքէն՝ Պրագիլ, Ռարուկուայ եւ Ատլանտեան օվկիանոս, հարաւէն՝ Փաթակոնիա, արեւմտքէն Չիլի :

Տարածութիւնն է 20,000 բիւրմերք քառակուսի :

Երկիրը դաշտային է եւ ճախճախուտ, միայն արեւմըտեան կողմը լեռնոտ :

Հողը շատ բարեբեր է, բայց մշակութիւնը սակաւ :

Օդն ընդհանրապէս տաք է եւ տեղ տեղ խոնաւ՝ բայց ոչ վնասակար :

Լափլարան ամենայն տեսակ մետաղի հանքեր ունի, մանաւանդ արծաթի, բայց երեսէ ձգուած են . ունի նաեւ բազմաթիւ ընտանի կենդանիներ՝ զորս Եւրոպայէն բերին եւ բազմացուցին :

Բնակիչն է 1,500,000, կեսէն աւելին Եւրոպացի սպիտակք, մնացածը Ամերիկացի այլ եւ այլ ազգեր եւ խառնըն ցեղեր :

ԳԼՍԻՈՐ ՔՍՂԱՔՔ.

ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ (100,000 բն.) Լափլարա գետոյն վերայ բարեբեր դաշտի մի մեջ, համանուն տէրութեան մայրաքաղաքն է, շատ վաճառաշահ, եւ օդը շատ առողջարար :

ՔՈՐՏՈՎԱ (6,000 բն.) ճարտար քաղաք, չուխայի գործարաններ ունի :

ԹՈՒՔՈՒՄԱՆ (12,000 բն.) այս քաղաքս սկսաւ Սպանիացի գաղթականաց ապստամբութիւնն :

ՄԷՆՏՈՍԱ (8,000 րն.) օրէ օր կժաղկի վաճառաշահութեամբ, երեւելի է զինին :

Ուրիշ անուանի քաղաքներն են Սանթա Զէ՛ Փարանա զետոյն վերայ եւ Պաշսատա կամ Փարանա, որ այժմ Լափլարայի հասարակապետութեան մայրաքաղաքն է՝ Փարանայի վերայ :



ՓԱՐԱԿՈՒԱՅ .

Փարակուայի սահմանն է հիւսիսէն եւ արեւելքէն Պրազիլ, հարաւէն Պուենոս Այրես, արեւմտքէն Լափլարա եւ Պոլիվիա :

Տարածութիւնն է 2,300 քիւրմերք քառակուսի :

Երկիրն հիւսիսային կողմերը լեռնոտ է, միւս տեղերը դաշտային :

Հողը բարեբեր է, օղն ալ տաք : Այս երկրիս մեջ բազմաքիւ վայրի գազաններ կգտնուին եւ վնասակար օձեր ու միջատներ : Բուսաբերութիւնը շատ առատ է :

Բնակիչն է 300,000 հոռմեաղաւան :

Մայրաքաղաքն է ՎԵՐԱՓՈՒՈՒՄԵՆ (12,000 րն.) Փարակուայ զետոյն վերայ, վաճառաշահ քաղաք :

Ուրիշ երեւելի քաղաքն է Վիլա Ռիքա, ջայն առատ է :



ՈՒՐԱԿՈՒՍՅ ԿՍՄ ՈՒՐՈՒԿՈՒՍՅ .

Ուրուկուայի սահմանն է հիւսիսէն՝ Պրազիլ, արեւելքէն՝ Ատլանտեան օվկիանոս, հարաւէն եւ արեւմտքէն Լափլարա :

Տարածութիւնն է 2,600 բիւրմերը քառակուսի :

Հողը բարեբեր է, բայց անմշակ : Օղը բարեխառն :

Գլխաւոր գետերն են, *Ուրակուայ, Ռիոյ Նեկրոյ կամ Սեաւ գետ*, եւ *Լափլարա* :

Բնակիչն է 250,000 հո.ոմեադաւան :

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔԻՔ .

ՄՈՆԹԷՎԻՏԷՈՅ (10,000 բն.) Տերութեան մայրաքաղաքը, Լափլարա գետոյն վերայ, հարաւային Ամերիկայի ապահով եւ բանուկ նաւահանգիստներէն մէկը :

ՍԱՔՐԱՄԵՆԹՈՅ, Լափլարա գետոյն վերայ, ամուր քաղաք եւ բանուկ նաւահանգիստ :



ԶԻԼԻ ԿԱՄ ՔԻԼԻ.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ . — Սպանիացիք մեծ դժուարութեամբ կարողացան հնազանդեցընել այս երկրիս բնակիչքն . իսկ հարաւային կողմերը բնակող Արաւքան ազգն երբեք չհնազանդեցաւ նոցա : Զիլին ալ 1810-ին ապստամբեցաւ Սպանիացւոցմէ , եւ 1818-էն ի վեր առանձին հասարակապետութիւն է :

Զիլիի սահմանն է հիւսիսէն՝ Պուլիվիա , արեւելքէն Լափլարա եւ Փարակոնիա , հարաւէն եւ արեւմտքէն Մեծ ովկիանոս :

Տարածութիւնն է 2,600 քիւրմերը քառակուսի :

Երկիրը լեռնոտ է եւ հողը շատ բարեբեր : Յզը բարեխառն է եւ առողջարար : Գլխաւոր բերքն է ոսկի , արծաթ , պղինձ , սնդիկ , ծծումբ , հանքային ածուխ եւ պատուական քարեր : Բուսոց կողմանէ ալ Եւրոպայի եւ Ամերիկայի բոյսերն ունի :

Տասնեւչորս հրաբուխ կայ այս երկրիս մէջ , որով գետնաշարժն անպակաս է :

Բնակիչն է 1,600,000 , մեծագոյն մասը հռոմեադասան :

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՔ .

ՍԱՆԹ ԻԱԿՈՅ (100,000 բն .) Բոլոր Զիլիի մայրաքաղաքն է , ողն առողջ , բայց գետնաշարժ շատ կպատահի մե-

ջր : 1863-ին դեկտեմբերի 8-ին սորա մայր եկեղեցին այս-
րեցաւ . մեջը 2000 հոգւով :

ՎԱԼՓԱՐԱՅԻԶՈՅ (30,000 ըն .) Զիլիի ամենէն բանուկ
նաւահանգիստն , եւ շատ վաճառաշահ քաղաք :

ՆՈՐ ՔՈՅՆԵՓՅԻՈՆ կամ ՅՂՈՒԹԻՒՆ (10,000 ըն .) Քիլիի
երկրորդ նշանաւոր քաղաքն է :

ՎԱԼՏԻՎԻԱ (10,000 ըն .) ամուր քաղաք եւ Հարաւային
Սմերիկայի մեծ եւ ապահով նաւահանգիստներէն մեկը :

ՔԻԼՈԹԱ , մեծ պղնձահանք ունի :

ՓԵԹՈՐԻԱ եւ ՔՈՔԻՄՊՈՅ , ոսկւոյ առատ հանքեր ունին :

ՍԱՆ ՔԱՐԼՈՍ եւ ՔԱՍԹՐՕ , Զիլոյ կղզւոյն գլխաւոր քա-
ղաքներն են :

Ծովեզերքէն 70 բիւրմերը հետոս *Խուան Ֆենուսուեզ*
կոչուած կղզեաց խումբը կայ , ուր Սկովտիացի Սըլքիբք
նաւավարը բաղուեցաւ , որոյ պատահած արկածները *Ռո-
պէկուսն Քրիւզոկ* հռչակաւոր վիպասանութեան նիւթ
ենդած են :



ՓԱՐԱԿՈՆԻԱ,

Փարակոնիոյ սահմանն է հիւսիսէն՝ Լափլարա, արեւելքէն՝ Ատլանտեան ովկիանոս, հարաւէն եւ արեւմտքէն Մեծ ովկիանոս :

Տարածութիւնն է 10,000 քիւրմերք քառակուսի :

Երկիրն արեւմտեան կողմերը լեռնոտ է, արեւելեան կողմը դաշտային :

Օդը սաստիկ ցուրտ է, մանաւանդ հարաւային երկիրները : Հողն անբեր եւ անմշակ :

Փարակոնիան տակաւին լաւ ծանօթ չէ Եւրոպացւոց : Բնակիչքն են *Փարակոնք* եւ ուրիշ Ամերիկացի անկիրք եւ քափառական ժողովուրդներ, իբր 120 հազար հոգի : Սոցա համար ճանապարհորդք կատէին քէ հսկայ մարդիկ են, եւ երկու մեքրէն աւելի բարձրութիւն ունին . բայց այժմ ստուգուեցաւ որ Եւրոպացւոցմէ բարձրահասակ չեն :

Գլխաւոր կղզիներն են *Ֆաքլլետ* կամ *Մարտինեանք*, որոց մեջ Եւրոպացիք բնակութիւն հաստատեր էին, յետոյ բողոքին :

Երկիր Հրոյ, որ Մակելլանի նեղուցով ցամաքէն զատուած է . քանի մի իրարու խիստ մօտիկ կղզիներէ կը ձեւանայ . օդը սաստիկ ցուրտ է : Մօտ տարիներս Անգղիացիք հաստատուեցան այս կղզւոյս մեջ՝ կէտ ձուկն որսալու համար, որ առատ է այս կողմերս :

Նոր Գեորգիա, Հրոյ Երկրին արեւելակողմն, 1675-ին Քոք նաւապետը գտաւ. բայց օղին սաստիկ ցրտութենէն անբնակելի է:

ԱՆԹԻԼԵԱՆ ԿՂԶԻՔ.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. — Անթիլեան կոչուած կղզիներն, որ եւ *Արեւմտեան Հնդկաստան*, Քրիստափոր Քոլումպոս գտաւ 1492-ին եւ յաջորդ տարիները: Երկար ժամանակ Սպանիացոց ձեռքը մնացին, բայց յետոյ ուրիշ Եւրոպացի ազգաց ձեռքն անցան. միայն Մեծ Անթիլեանց երեքն այժմ Սպանիացոց ձեռքն են: Անթիլեանց նախնի բնակիչքն Սպանիացիք ջնջեցին բոլորովին, յետոյ Ափրիկեցի Սեւերով լեցուցին երկիրը:

Այս կղզիներս հիւսիսային եւ հարաւային Ամերիկաներուն մեջտեղը կընկնին՝ Անթիլեան ծովուն մեջ: Տարածութիւնն է 2,500 բիւրմերը քառակուսի:

Երկիրն ընդհանրապէս լեռնոտ է, լաւ նաւահանգիստներ ունի, եւ բազմաբիւ գետակներով կոռոզուի: Հողը շատ բարեբեր է, եւ աշխարհիս տաք երկիրներու բերքերն ունի: Օղը տաք եւ խոնաւ է, եւ ջերմախտն անպակաս է մեջը:

Այս կղզիներս տարուան մեջ երկու եղանակ ունին, չոր եւ անձրեւային. սոսկալի փոքորիկներ ու գետնաշարժ կպատահին մեջերը:

Բնակիչն է 3,000,000 Եւրոպացի այլ եւ այլ ազգեր եւ
Ափրիկեցի Սեւեր :

Անբիւեան կղզիները չորս մաս կրածանուին . Ա , Մեծ
Անրիլեանք , Բ , Լուքայեանք կամ Պահամա կղզիք . Գ ,
Փոքր Անրիլեանք կամ Հողմային կղզիք , եւ Դ , Ստորա-
հողմային կղզիք :

Ա , Մեծ ԱՆԹԻԼԵԱՆԲ .

Մեծ Անբիւեանք չորս մեծ կղզիների բաղկացած են
որ են . Ա , ՔՈՒՊԱ , 1,400,000 բնակիչ ունի , Սպանիա-
ցւոց ձեռքը , Անբիւեանց ամենէն մեծն է , եւ ծխախոտը
շատ երեւելի է : Մայրաքաղաքն է ՀԱԻԱՆԱ (130,000 բն .)
ամուր քաղաք եւ շատ վաճառաշահ . նաւահանգիստը բո-
լոր աշխարհիս ամենէն զեղեցիկներէն մեկն է , եւ կարող
է մեջը 1000 մեծամեծ նաւեր առնուի : Սանրիակոյ տէ
Քուպա (26,000 բն .) յառաջ կղզւոյն մայրաքաղաքն էր ,
ամուր նաւահանգիստ ունի եւ պղնձահանքն անուանի է :

Բ . ԵԱՄԱՅԻՔԱ , 280,000 բնակիչ ունի , Անգղիացւոց ձեռ-
քը , ուստի շատ շաքար եւ ազնիւ ուսմ կելնէ : Գլխաւոր
քաղաքներն են ՔԻՆԿՍԹՈՆ (30,000 բն .) խորշի մի վերայ
նաւահանգիստ , երկու ամբողջով պատսպարուած : ՍՓԱ-
ՆԻՇԹԱՍԻՆ , կղզւոյն գլխաւոր քաղաքն է :

Գ . ՀԱՅԻԹԻ կամ ՍՊԱՆԻՈՂԱ կամ ՍՈՒՐԵ ԴՈՄԻՆԻԿՈՍ ,
Անբիւեանց ամենէն բարեբերը , 760,000 բնակիչ ունի :
1820-էն յետոյ անկախ հասարակապետութիւն ձեւացել էր :

1844-ին երկու տերութիւն բաժանուեցաւ, յորոց արեւելեան կողմինը 1861-ին Սպանիացւոց իշխանութեան տակ մտաւ: Իւր բարերերութեանը համար *Դշխոյ Անրիշեանց* կկոչուի: Գլխաւոր քաղաքներն են ՓՈՐԹՈՅ ՓՐԷՆՍ (16,000 բն.) գլխաւոր քաղաքն է, բանուկ նաւահանգիստ ունի եւ վաճառաշահ: ՀԱՅԻԹԵԱՆ ԳԼՈՒԽ (10,000 բն.) 1842-ին երկրաշարժով մեծ մասն աւերեցաւ. անուանի է շաքարը: ՍԱՆ ՏՈՄԻՆԿՈՅ, կղզւոյս հին մայրաքաղաքն, եւ Եւրոպացւոց առաջին շինած քաղաքն է Ամերիկայի մեջ. 1861-ին վերստին Սպանիացւոց ձեռքն անցաւ:

Գ. Փորթոյ Ռիքոյ, 380,000 բնակիչ ունի, Սպանիացւոց ձեռքը: Գլխաւոր քաղաքն է ՓՈՐԹՈՅ ՌԻԲՈՅ կամ ՍԱՆՌՈՒԱՆ ՏԷ ՓՈՐԹՈՅ ՌԻԲՈՅ (30,000 բն.) ամուր նաւահանգիստ ունի:

Բ. ԼՈՒՔՍԵՆՔ.

Լուքսայեանք կամ Պահամա կղզիք, 270,000 բնակիչ ունին, եւ 500 մանր կղզիներէ ձեւացած են, որոցմէ միայն 20 հատը մարդաբնակ է. այս կղզիներս Անգղիացւոց ձեռքն են: Լուքսայեան կղզիներէն մեկն է *Կուլանահանի* կամ *Սան Սարվատոր*, որ Քոլումպոսի առաջին գտած ցամաքն է Ամերիկայի մեջ:

Գ. ՓՈՔՐ ԱՆԹԻԼԵԱՆՔ.

Փոքր Անրիշեանք կամ *Հողմայիկ կղզիք* հինգ Եւրոպացի ազգաց ձեռքն են, եւ գլխաւորներն են .

ՍՈՒՐԲ ԲԱՐԹՈՒՂԻՄԷՆՍ, 100,000 բնակիչ ունի, Շուետաց
ձեռքն է: ՍՈՒՐԲ ԵՒՍՏԱՔԷՆՍ, ՍԱՊԱ ԵՎ ՍՈՒՐԲ ՄԱՐՏԻՆՈՍԻ
մեկ մասն Հոլանտացւոց ձեռքը:

ՍՈՒՐԲ ԽԱԶ, ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՎ ՍՈՒՐԲ ԹՈՎՄԱՍ,
Տանիմարքացւոց ձեռքը:

ՄԱՐԹԻՆԻԿԷ, 120,000 բնակիչ ունի, Գաղղիացւոց ձեռքն
է. անուանի է խահուեն:

ԿՈՒԱՏԱԼԱԻՓ կամ ԿՈՒԱՏԱԼՈՒՓԱ, նոյնպէս Գաղղիացւոց
ձեռքը:

Փոքր Անրիլեանց միւս կղզիներն Անգղիացւոց ձեռքն
են, եւ գլխաւորներն են. կղզի *Կուսիւն*, *Պարպուտա*,
Սուրբ Քրիստափոր, *Անրիկոս*, *Դամիսիկէ*, *Սուրբ Լու-*
չիա, *Սուրբ Վիլհելմիոս*, *Երրորդուրիւն* եւ այլն:

Գ. ՍՏՈՐԱՀՈՂՄԱՅԻՆ ԿՂԶԻՔ.

Ստորահողմային կղզիքն Անրիլեան ծովուն հարաւա-
յին արեւելեան կողմերը կրնկնին, Հոլանտացւոց եւ Վե-
նեցուկյայի տերութեան ձեռքն են: Հոլանտացւոց ձեռքն
են արեւմտեան կողմիներն. իսկ Վենեցուկյայի իշխա-
նութեան տակն են արեւելեան կողմիներն, որոց գլխա-
ւորն է *Մարգարիտա*, եւ սորա մարզարիտն առատ է:



կամ անհայտը որով և մտանայ մտքայնն յոյժանկից
այս կողմիցով սկսանայ մնկում այդ զո անհայտ
այս քննիրարացի և զիցն ճննանն ցարքման և ճոտ
զինչպիսի և ճիզանայ յոյժն և ճոտ մտանայն զոր յոյժ
մի՞ ճոտման անհայտը որով և ճոտ մտանայն զոր յոյժ
զոր յոյժն մնկանց յոյժն և ճոտ մտանայն զոր յոյժ
այս մեծ և ճիզանայ յոյժն և ճոտ մտանայն զոր յոյժ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍՆ ԱՇԽԱՐՀԻ .

այս և ճիզանայ յոյժն և ճոտ մտանայն զոր յոյժ

ՈՎԿԻՍՆԻԱ .

մնկում միտանայն յոյժն և ճոտ մտանայն զոր յոյժ
յոյժման մտանայն յոյժն և ճոտ մտանայն զոր յոյժ
զոր յոյժն մնկանց մնկանց յոյժն և ճոտ մտանայն զոր յոյժ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ .

այս և ճիզանայ յոյժն և ճոտ մտանայն զոր յոյժ

Վեշտասաներորդ դարուն սկիզբներն երբոր Սպա-
նիացիք Ամերիկայի այլ եւ այլ մասերուն տիրելու հետ էին ,
Փորթուգալցիք , որ Հնդկաստանի ճանապարհը նոր գտած
էին , սկսան Ովկիանիոյ կղզիներն եւս գտնել . նոցանկ
յետոյ Հոլանտացիք , Գաղղիացիք եւ Անգղիացիք երկարա-
մեայ ճանապարհորդութիւններով գտան վերջապէս Մեծ
Ովկիանոսի մեջ եղած ցամաքներն ու կղզիները :

Ովկիանիան ձեւացած է մեկ ցամաքէ եւ բազմաթիւ
կղզիներէ ու կղզեաց խումբերէ , Ասիոյ հարաւային արե-
ւելակողմէն՝ սկսեալ մինչեւ Ամերիկայի արեւմտեան կող-
մերը , Մեծ ովկիանոսի մեջ :

Տարածութիւնն է 106,000 քիւրմերը քառակուսի :

Ովկիանիոյ մեծագոյն ցամաքն է *Նոր Հոլանտա* կամ *Աւստրալիա*, որ չորս կողմէն բազմաթիւ կղզիներով պատած է. ծովեզերքը մեծամեծ ծոցեր ու բերակղզիներ չունի : Նոր Հոլանտան մօտ է Ասիոյ ցամաքին, եւ կարծիք կայ թէ ժամանակով այս երկու ցամաքներս միացած էին պարանոցով մի . եւ յիբաւի, Ասիոյ ցամաքէն մինչեւ Նոր Հոլանտա՝ կղզեաց սար մի կայ : Այս կղզիներէս մեկ քանին Ասիոյ մասն կհամարին շատ աշխարհագիրք :

ԼԵՐԻՆՔ. — Ովկիանիոյ լերանց գլխաւորներն են . *Կապոյտ լերիկք*, որ Նոր Հոլանտայի հիւսիսային կողմէն մինչեւ հարաւակողմը կտարածուին արեւելեան ծովեզերքին մօտ . *Արժաք* որ Ովկիանիոյ ամենէն բարձրն է՝ Նոր Կուինեոյ մէջ . *Պուշկենիլի*՝ Արշակունեաց արշիպեղազոսին մէջ . *Մոնա Ռօս*, Հաւայի կղզւոյն մէջ :

ԾՈՅՔ. — Գլխաւոր ծոցերն կամ խորշերն են . *Քարտիկերալիա*՝ Նոր Հոլանտայի հիւսիսակողմը . *Ծովաշանց խորշ*՝ արեւմտակողմն . *Սիիկուեր* եւ *Սուրք* *Վիլլելցիոս*, հարաւակողմն . *Կերվիկքայ ծոց*՝ Նոր Կուինեոյ հիւսիսային արեւմտակողմն :

ՆԵՂՈՒՑՔ. — Ովկիանիոյ գլխաւոր նեղուցներն են *Թորրէս*՝ Նոր Կուինեոյ եւ Նոր Հոլանտայի մէջտեղը . *Պաս*՝ Նոր Հոլանտայի եւ Տիեմենի մէջտեղը . *Սուկոտ*՝ Սումատրա եւ Ճաւա կղզիներու մէջտեղ . *Մալաքքա*, համանուն բերակղզւոյն եւ Սումատրայի մէջտեղ . *Մաքասար*՝ Չէկպեանց կղզւոյն եւ Պոունեոյի մէջտեղ, եւ *Քուրի* նեղուցն որով Նոր Զելանտան երկու կրածանուի :

ԲՆԱԿԻՉՔ . — Ովկիանիոյ բնակիչն է իբր 35,000,000 :
Սոքա երեք ցեղ կրածանուին . Ա, *Մալայեցիք*՝ բուխ կամ
կարմրագոյն . Բ, *Փոլինեզիացիք*՝ բաց դեղին գունով . Ե,
Գ, Ովկիանիոյ *Սեւերն* : Մալայեցիք սրամիտ մարդիկ են ,
բայց եւ անգութ . Փոլինեզիացիք կերեւի թէ Մալայեցոց
մեկ ցեղն են . սոքա բարձրահասակ մարդիկ են եւ ուժով,
սովորութիւն ունին մարմիններուն վերայ տեսակ տե-
սակ նկարներ քաշել : Ովկիանիոյ Սեւերն , մանաւանդ
Սասորալիոյ մեջ բնակողներն , աշխարհիս ամենէն վայ-
րենարարոյ եւ բրամիտ մարդիկն են . սոցա մեջէն շատե-
րը մարդակեր են :

ԿՐՕՆՔ . — Ովկիանիոյ կղզեաց բնակիչքն հերանոս են ,
ոմանք մարդագոն եւս կանեն աստուածներուն : Մալե-
զիայի բնակչաց մեծագոյն մասն մահմետական են : Գրիս-
տոնեութիւնը տակաւին քանի մի կղզեաց մեջ տարա-
ծուած է , գլխաւորապէս Թայիբի , Գուքի կղզիներն եւ
Սենաուիջ կղզիները :

Ովկիանիան երեք մասն կրածանուի . *Մալեզիա* , *Մե-
ջակեզիա* , եւ *Փոլինեզիա* կամ *Բազմակղզիք* :



ՄԱԼԵՂԻԱ .

Մալեգիոյ կղզիները լեռնոտ են եւ շատ հրաբուխներ ունին . ծովեզերքն ընդհանրապէս ճախճախուտ է եւ անառողջ . ծովու հովերն ու լեռները կզովացրնեն փոքր ինչ օդն որ ընդհանրապէս տաք է :

Մալեգիան ունի Հնդկաստանի բոլոր բոյսերն , եւ առատութեամբ կրուսցրնէ պղպեղ , քափուր (քեաֆիրի) , խահուէ , բամբակ , շաքար , լեղակ , եւ բրինձ ' որ բնակչաց գլխաւոր կերակուրն է : Անտառներուն մեջ ալ տեսակ տեսակ պատուական ծառեր ունի : Կենդանեաց մեջ Մալեգիան ունի ինձ , վագր , վարազ , տեսակ տեսակ եզներ , գոմէշ , եղջերու , փիղ , ոնգեղջիւր , եւ շատ տեսակ կապիկ , որոց մեջ նշանաւոր է Սրանկ — ուրանկ . գետերու մեջ ունի բազմաթիւ ձիազեաի եւ կոկորդիլոս . ճանիճներու մեջ ալ պօս օձը կգտնուի :

Գլխաւոր կղզիներն են . *Սուհուի կղզիներն* , *Պոունեոյ* , *Չեղեպեանց կղզիք* , *Մոլուքեանք* եւ *Փիլիպպեանք* :

Ա. ՍՈՒՆՏԻ ԿՂԶԻՔ .

Սուանաի կղզեաց գլխաւորներն են .

ՃԱԻԱ , Հոլանտացւոց ձեռքը , 6,000,000 բնակիչ ունի . Սուանաի կղզեաց մեջ առաջինն է ճարտարութեան եւ վաճառականութեան կողմանէ : Գլխաւոր քաղաքն է ՊԵՅԱԻԻԱ .

(120,000 րն.) Հոյանտացւոց Ովկիանիոյ մեջ ունեցած երկիրներուն մայրաքաղաքն է. մեծ եւ ապահով նաւահանգիստ ունի :

ՍՈՒՄԱԹՐԱ, 6,000,000 րնակիջ ունի. մեջէն երկայն երարձր լերանց գօտի մի կանցնի, այս կղզւոյս մեջ առատութեամբ կգտնուի *կուրրափեքչայի* ծառը : Սումաթրան քանի մի բազաւորութիւն կրածնուի, որոց ոմանք Հոյանտացւոց ձեռքն են, եւ ոմանք ինքնագլուխ : Գլխաւոր քաղաքներն են ԱՇԷՄ (36,000 րն.) եւ ՓԱՏԱՆԿ :

Պաւերա, փոքր կղզի Սումաթրայի արեւելակողմն. անուանի են անագի հանքերն :

Ուրիշ անուանի կղզիներն են, *Պիլիբուն*, *Մատուրա*, *Պաշի*, *Լուկուք*, *Սոււկաւա*, *Ֆլուտեա*, եւ *Թիմոր* : Սումապաա եւ Թիմոր Հոյանտացւոց ձեռքն են :

Բ. ՊՈՌՆԷՈՅ .

Այս կղզիս, որ Գաղղիոյ երկուսին չափ մեծ է, 4,000,000-ի չափ րնակիջ ունի. ներսերը տակաւին անձանօր է, վասն զի րնակիջքը վայրենի եւ օղն անառողջ լինելուն՝ երոպացիք չեն կարող հաստատուիլ մեջը :

Գլխաւոր բերքն է աղամանդ : Գլխաւոր քաղաքն է ՊՈՌՆԷՈՅ (15,000 րն.) :

Այս կղզւոյս մեկ մասն Հոյանտացւոց ձեռքն է :

Գ. ՉԵԼԵՊԵՍՆՅ ԿՂԶԻՆ .

Այս կղզիս Պոռնեոյի արեւելակողմը կրնկնի, եւ բազմաքիւ բերակղզիներ բաժանուած է : Բնակիչն է իբր

2,500,000 : Ունի ոսկիի հանքեր : Ձեւեպեանց կղզին շատ տերութիւններ բաժանուած է , որոց գլխաւորն եւ ամենէն զօրաւորն է *Մաքսաարի* տերութիւնը՝ համանուն մայրաքաղաքով , Հոլանտացւոց հարկատու :

Գ . ՄՈԼՈՒՔԵԱՆՔ .

Մոլութեան կղզիները շատ տերութիւններ կրածանուին , ամենքը Հոլանտացւոց հարկատու : Գլխաւոր կղզիներն են , *Կիլոլոյ* , *Սերաւ* , *Անյոյնա* , եւ *Պանտա* :

Ե . ՓԻԼԻՊՊԵԱՆՔ .

Փիլիպպեան կղզիները Մակելլան Փորթուգալցին գտաւ 1521-ին , եւ 1560-ին Սպանիացւոց ձեռքն անցան , որ Փիլիպպոս Բ քաղաքին անուամբը *Փիլիպպեան* կոչեցին այս կղզիներս : Բնակիչն է 3,800,000 : Երկիրը շատ բարեբեր է , ողն ալ բարեխառն . բայց գետնաշարժ շատ կպատահի մեջն եւ սարսափելի փոթորիկներ կլինին : Գլխաւոր կղզիներն են . *Լուսան* , որոյ գլխաւոր քաղաքն է ՄԱՆԻԼԱ , եւ *Միկտաւետոյ* կղզին՝ համանուն մայրաքաղաքով :

ՄԵԼԱՆԵՂԻԱ .

Մելանեզիա կամ *Սեւոց կղզիք* կկոչուին նոր Հոլանտան եւ քովի կղզեաց խումբերը : Կերեւի թէ նոր Հոլանտայի ներսերը Ափրիկէի նման անբեր աւազուտ երկիր մի է . ողբ բարեխառն է . մեր բնակած երկիրներուն նմանտարին չորս եղանակ ունի , միայն թէ մեր եղանակն

բուն միշտ հակառակ եղանանակն ունին Նոր Հոլանտայի
բնակիչք : Նոր Հոլանտայի մեջ են *Կապոյա լերինք* . միւս
կղզիներու մեջ եւս խիստ բարձր լեռներ կգտնուին : Հրա-
բուխներն եւս շատ են Մելանեզիոյ մեջ :

Մելանեզիան Ասիոյ պտուղներուն մեծ մասն ունի .
բաց յայնցանէ՛ ունի նաեւ հացի ծառն որ Ովկիանիոյ
ամեն կղզիներն եւս կգտնուի : Բնակչաց գլխաւոր կերա-
կութն է հացի ծառին եւ ուրիշ ծառոց պտուղներն որ
սեփական են Ովկիանիոյ : Մելանեզիոյ մեջ մեծամեծ կեն-
դանիներ ամենեւին ջկան . եղածներն են խոզ , շուն ,
կատու , մուկ , աղանի եւ հաւ : Մելանեզիոյ , ինչպէս
նաեւ բոլոր Ովկիանիոյ , բռնուններն անուանի են իւ-
րեանց փետուրներուն գեղեցկութեանը համար : Բուն Նոր
Հոլանտայի կենդանիներն հին աշխարհի կենդանեաց հետ
ամենեւին նմանութիւն չունին . սոցա գլխաւորներն են
քանկուրու չորքոտանին՝ որ ցատքելու համար ազիին
վերայ կլենու . *վամպար* մսակեր կենդանին՝ որ համեղ
միս կունենայ . տեսակ մի շուն որ երբէք չհաջեր , սեւա-
կարապ եւ այլն :

ԱՌՏՏԲԱԼԻԱՆ կամ ՆՈՐ ՀՈՒԱՆՏԱՆ գրեթէ Եւրոպայի ջափ
մեծ է . մեջի գլխաւոր գետերն են *Մըրրէ*՝ հարաւակողմն ,
եւ *Կարապի* գետն՝ արեւմտակողմն : Այս երկրիս մեջ Սն-
գղիացիք չորս գաղբականութիւն ունին , որ են . Նոր *Կալ-
շեա հարաւային* , *Վիկտորիա* , *հարաւային Աւստրա-
լիա* , եւ *արեւմտեան Աւստրալիա* :

Հարաւային Նոր Կալչեան 260,000 բնակիչ ունի . օղն

առողջ է, եւ Եւրոպայի գրեթէ ամենայն տեսակ օգտակար բոյսերը տարած են այն տեղ Անգղիացիք . հանքերու մեջ ունի երկաթ , պղինձ , կապար , հանքային ածուխ , եւ առատ ոսկի : Գլխաւոր քաղաքն է ՍԵՏԵՅ (60,000 բն.) որոյ նաաահանգիստը կհամարուի *Փորք-ձեքսըն* , որ աշխարհիս ամենամեծ եւ ամենայա նաաահանգիստներէն մեկն է :

Վիկտորիա գաաառին գլխաւոր քաղաքն է ՄԷԼՊՌՈՒՆ (90,000 բն .) վաճառաշահ նաաահանգիստ : Հարաւային Աստրալիոյ գլխաւոր քաղաքն է ԱՏԵԼԱՅԻՏԷ : Արեւմրտեան Աստրալիոյ գլխաւոր քաղաքն է ՓԷՐԹ' Կարապի գետոյն վերայ :

ԹԱՍՄԱՆԻԱ կղզին (60,000 բն .), ըստ Հոլանտացոց *Վաւե Տեմէն* (Տեմենի երկիր) նոր Հոլանտայի հարաւակողմը կընկնի . հողը բարեբեր է եւ Եւրոպայի ամեն բերքերն ունի : Գլխաւոր քաղաքն է ՀՈՊԸՐԹ ԹԱՌԵՆ , լա նաաահանգիստ ունի : Այս կղզին Անգղիացոց ձեռքն է, ուր իւրեանց ջարագործները կաքսորեն :

ՆՈՐ ԿՈՒԻՆԷՒԱ (300,000 բն .) կամ *Փախուախա* , որ աշխարհիս ամենամեծ կղզիներէն մեկն է . հողը շատ բարեբեր է . դրախտահաւն այս կղզիես կելնէ :

Մելանեզիոյ միւս կղզեաց խումբերն են .

Ծովապետի կղզիք , Կուինեոյ հիւսիսակողմը :

Արշիպելագոս նոր Բրիտանիոյ , որոց գլխաւորներն են նոր Բրիտանիա (65,000 բն .) , նոր Իոլանտա եւ նոր Հանկոյիք :

Արշիպեղագոս *Սաղումունի*, կամ *Արշակունեաց* կղզիք
(100,000 բն.) որոց երկիրն ընդհանրապէս սաստիկ բարե-
քեր է եւ լեռնոտ :

Արշիպեղագոս *Լուիզիատ* կամ *Լուչոսվիկեանք*, զոր
Գաղղիացիք գտան :

Արշիպեղագոս *Հոգւոյն Սրբոյ* կամ *Նոր Հերթիդեանք*
(150,000 բն.)

Նոր Կաշեդունիա. 1853-էն ի վեր Գաղղիացւոց ձեռքն է:
Սանթաքրուզ կամ *Շարլոր դճիսոյի* կղզիք (50,000 բն.):

ՓՈՒԽՆԵՂԻԱ.

Փոլինեզիա կամ *Բազմակղզիք* կկոչուին Մեծ ովկիա-
նոսի մեջ ցրուած մանր կղզիներն ու կղզեաց խումբերն :
Այս երկիրներուս բերքն եւ օղբ Մելանեզիոյ օղին եւ բեր-
քերուն նման է :

Գլխաւոր կղզիներն ու խումբերն են .

Մակեղլանի արշիպեղագոս, ճափոնի հարաւային ա-
բեւեղեան կողմը . շատ հրաբուխներ ունին :

Մարիանեանք կամ *Աւազակաց կղզիք*, Սպանիացւոց
ձեռքը :

Քարոլինեանք, 50,000 բնակիչ ունին :

ՍԷՆՏՈՒԻԶ (150,000 բն.) զորս գտան Քոք 1778-ին .
սոցա գլխաւորն է *Հաւայի* ուր սպանուեցաւ Քոք . այս
կղզիներս մեծ յառաջադիմութիւն արած են քաղաքակր-
թութեան մեջ: Չինու երկիրը գնացող Միացեալ Նահան-

զաց նաւերն այս տեղ կնանգջին :

ՆՈՐ ԶԵԼԱՆՏԱ (250,000 ըն.) որ երկու մեծամեծ կղզիներէ ձեւացած է, Սնգղիացոց ձեռքն անցաւ 1839-ին : Բնակիչքն ըստ մեծի մասին մարդակեր էին, այժմ օրէ օր վայրենութենէ ելնելու հետ են, եւ շատերը քրիստոնեայ եղած են : Նոր Զեյանտան Գաղղիոյ հակոտնեայ է :

Թունկա կամ *Բարեկամաց* կղզիք, 200,000 բնակիչ ունին :

Հաւօա կամ *Նաւորդաց* կղզիք, կամ *Պուկենվիլ*. 160,000 բնակիչ ունին, բազմամարդ եւ բարեբեր :

Մաննիա կամ *Քրոքի կղզիք* :

Թայիքի կամ *Ընկերուչեան կղզիք*, երեսելի են երկրին բարեբերութեամբն եւ բնակչաց քաղաքակրթութեամբը : Գլխաւոր կղզին է *Թայիքի* կամ *Օրայիքի* : Գաղղիացիք պաշտպան են կղզիներուս :

Փոմորու կամ *Ստորին կղզիք* :

Մինտանա կամ *Մարգիզեանք*, Գաղղիացոց ձեռքն, որոց գլխաւոր կղզին է *Նուքասիվա* :

Յ Ա Ն Կ.



	<u>Էջ.</u>
Նախագիտելիք	1
Ընդհանուր գիտելիք	15

Ե Ի Ր Ո Պ Ա.

Ընդհանուր գիտելիք.	18	Բրուսիա	137
Եւրոպական Ռուսիա	27	Աստորիա	144
Շուևտ	81	Գերմանական Գաշնակցութիւն	158
Տանիմարքա	86	Փորրոգալ	177
Բրիտանական կղզիք.	89	Սպանիա	182
Գաղղիա	100	Իտալիա	193
Պելճիա	124	Եւրոպական Տաճկաստան.	218
Հոլանտա	127	Յունաստան	234
Զուիցերի.	132		

Ա Ս Ի Ա.

Ընդհանուր գիտելիք.	243	Թուրքաստան	337
Ասիական Ռուսիա.	253	Աֆղանիստան	341
Ասիական Տաճկաստան.	273	Պելուքիստան	343
Հայաստան.	289	Զին.	345
Արարիա	326	Ճափոն.	359
Պարսկաստան	331	Հնդկաստան	363
		Հնդկաչին	380

Ա Փ Ր Ի Կ Է.

Ընդհանուր գիտելիք.	387	Քաֆրաստան	418
Եգիպտոս	396	Մոնոմորափա	419
Պերպերիստան	402	Մոզամպիք	420
Սանրա կամ Մեծ Ս- նապատ	409	Չանկեպար	421
Սենեկամպիա	410	Սյան	423
Հիւսիսային Կուի- նեա	413	Երովպիա կամ Հա- պեշիստան	424
Հարաւային Կուինեա.	415	Նուպիա	427
Օրենրացոց երկիր	416	Սուտան կամ Նիկրի- տիա	429
Գաղղական. Գլխոյ	417	Կղզիք Ափրիկէի.	431

Ա Մ Ե Ր Ի Կ Ա.

Ընդհանուր գիտելիք.	435	Կուլանա.	463
Ռուսաց Ամերիկա.	443	Պրագիլ.	465
Կրեոնյանտիա	444	Փերու	467
Նոր Բրիտանիա	445	Պոլիվիա	469
Միացեալ Նահանգք.	449	Լափլարա	470
Մեխիքոյ	454	Փարակուայ	472
Կուարէմալա	457	Ուրակուայ	473
Միաց. Նահ. Բոլոււմ.	459	Չիլի կամ Բիլի	474
Վենեցուէլա	461	Փարակոնիա	476
Հասարակածի հաս.	462	Անրիլեան կղզիք	477

Ո Վ Կ Ի Ա Ն Ի Ա.

Ընդհանուր գիտելիք.	481	Մելանեզիա	486
Մալեզիա	484	Փոլինեզիա	489



485	486
487	488
489	490
491	492
493	494
495	496

